Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բուհական դասագիրք

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 94(560)(075.8)
ԳՄԴ 63.3(5Թու)g73
Թ 988

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես բուհական դասագիրք

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի և ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Սաֆրաստյան

Հեղինակային խումբ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Սաֆրաստյան,
բ.գ.թ., դոցենտ Ռուբեն Մելքոնյան,
պ.գ.թ., դոցենտ Արթուր Դումանյան,
պ.գ.թ. Վահրամ Տեր-Մաթևոսյան,
պ.գ.թ. Հակոբ Չաքրյան,
Անուշ Հովհաննիսյան,

Գրախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր Ալբերտ Խառատյան

Հրատարակչական խմբագիր՝ պ.գ.թ. Արամ Նազարյան

Թուրքիայի Հանրապետության պատմություն: Բուհական դասագիրք/
Թ 988 Ռ. Սաֆրաստյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2014.- 396 էջ:

Դասագրքում ներկայացված են Թուրքիայի Հանրապետության ծագումնաբանության ու ձևավորման առանցքային փուլերը: Քննության են ենթարկված Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններն ու դրվագները, հիմնական գաղափարախոսական հոսանքները, ազդեցիկ կուսակցությունների պատմությունը: Ներկայացված են նաև ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ իրականացված հալածանքի և ճնշումների քաղաքականության հիմնական փուլերն ու հետևանքները:

ՀՏԴ 94(560)(075.8)
ԳՄԴ 63.3(5Թու) g73

ISBN 978-5-8084-1891-2

© Հեղ. խումբ, 2014
© ԵՊՀ հրատ., 2014

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԵՎ ԶՈՀԵՐԻ ԱՆՄԱՐ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Դասագիրքը տպագրվում է «Ժիրայր Նիշանյան հիմնադրամի» - "Jerair Nishanian Foundation" (ԱՄՆ) մեկենասությամբ

Հեղինակները իրենց երախտագիտությունն են հայտնում մեծ հայրենասեր, հարգարժան Ժիրայր Նիշանյանին և «Ժիրայր Նիշանյան հիմնադրամին»՝ սույն դասագրքի մեկենասությունը ստանձնելու համար:

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 9

Գլուխ Ա

Օսմանյան կայսրության փլուզումը և ազգայնամոլական շարժման հաղթանակը (1918-1922թթ.) - Ռ. Սաֆրաստյան

1. Օսմանյան կայսրության պարտությունն Առաջին աշխարհամարտում. Մուդրոսի զինադադարը և երիտթուրքերի դատավարությունները 12

2. Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականությունը. Սևրի պայմանագիրը 17

3. Քեմալական շարժման մեկնարկը 24

4. Քեմալականների պատերազմները 31

5. Քեմալականների արտաքին քաղաքականությունը 42

Գլուխ Բ

Քեմալական հանրապետության ձևավորումը (1923-1938թթ.) - Ա. Հովհաննիսյան

1. 1920-1930-ական թթ. բարեփոխումները 48

2. Ավտորիտար վարչակարգի հաստատումը 61

3. Ազգային քաղաքականությունը 76

4. Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 91

Գլուխ Գ

Թուրքիան երկրորդ աշխարհամարտի շրջանում. հետպատերազմյան զարգացումներ (1939-1950թթ.) - Ռ. Մելքոնյան

1. Թուրքիայի ներքին քաղաքական իրավիճակը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին 101

2. Թուրքիայի արտաքին քաղաքականությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին 108

3. Ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականությունը 116

4. Ներքաղաքական զարգացումները երկրորդ աշխարհամարտից հետո 127

5. Թուրքիայի արտաքին քաղաքականությունը երկրորդ աշխարհամարտից հետո. Հայկական հարցի վերադարձը միջազգային քաղաքական օրակարգ 136

Գլուխ Դ

Ժողովրդավարական կուսակցության կառավարման տարիները (1950-1960թթ.) - Ռ. Մելքոնյան

1. Ժողովրդավարական կուսակցության իշխանության հաստատումը. ներքաղաքական իրավիճակը 148

2. Արտաքին քաղաքականությունը 157

3. Ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականությունը 163

4. Իսլամի դերի բարձրացումը և քաղաքականացումը 174

5. Ներքաղաքական իրավիճակը 1950-ական թթ. երկրորդ կեսին. քաղաքական ճգնաժամը 177

Գլուխ Ե

Քաղաքական պայքարի սրումը. ռազմական հեղաշրջումներ (1960-1980թթ.) - Ա. Դումանյան

1. 1960թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումը 186

2. ԺԿ անդամների դատավարությունը 191

3. 1961թ. սահմանադրությունը և անցումը քաղաքացիական կառավարման 192

4. Ներքաղաքական իրադրությունը 1960-ական թթ. երկրորդ կեսին և նոր քաղաքական-գաղափարական հոսանքների ձևավորումը 199

5. 1971թ. մարտի 12-ի ռազմական միջամտությունը 206

6. Անցում քաղաքացիական կառավարման 209

7. «Գորշ գայլերի» ահաբեկչական գործունեությունը 1970-ական թթ. ..211
8. Ձախակողմյան ծայրահեղական կազմակերպությունների ահաբեկչական գործունեությունը 215
9. Ներքաղաքական ճգնաժամը 217
10. Արտաքին քաղաքականությունը 221
11. Թուրքիայի քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների նկատմամբ – Ռ. Մելքոնյան 233

Գլուխ Զ

Ռազմական հեղաշրջում. բարեփոխումներ (1980-1995թթ.) - Վ. Տեր-Մաթևոսյան

1. 1980թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը 237
2. Ձանգվածային պատժամիջոցներ 241
3. Անցում քաղաքացիական կառավարման 246
4. Թուրքիայի երրորդ սահմանադրության ընդունումը և անցումը քաղաքացիական իշխանությանը 248
5. Թուրգութ Օզալի կառավարման տարիները 255
6. 1980-1990-ական թթ. սոցիալ-տնտեսական բարեփոխումների առանձնահատկությունները 257
7. «Թյուրք-իսլամական համադրություն» ծրագիրը 266
8. Քրդական հիմնահարցը 270
9. Ներքաղաքական զարգացումները 1990-ական թթ. առաջին կեսին 272
10. Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 1980-1995թթ. - Ա. Հովհաննիսյան, Հ. Ձաքրյան 278

Գլուխ Է

Քաղաքական համակարգի ճգնաժամը. «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման շրջանը (1996-2011թթ.) - Վ. Տեր-Մաթևոսյան

1. «Բարօրություն» կուսակցության քաղաքական վերելքը 294

2. 1997թ. փետրվարի 28-ի ռազմական միջամտությունը 299
3. «Ազգային տեսակետի» (Milli Görüş) պառակտումը 301
4. «Կորսված տասնամյակի» ավարտը 305
5. «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման առաջին շրջանը (2002-2007թթ.) 308
6. Ձարգացումներ Քրդական հարցի շուրջ 313
7. Քննարկումներ Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ 316
8. «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման երկրորդ փուլը (2007-2011թթ.) 319
9. 2010թ. սեպտեմբերի 12-ի սահմանադրական հանրաքվեն 325
10. Քաղաքական համակարգի հիմնախնդիրները և արդիականացման հեռանկարները 327
11. Արտաքին քաղաքականությունը 334

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Առանցքային քաղաքական կուսակցությունները – Հ. Ձաքրյան 355
2. Ազդեցիկ քաղաքական գործիչները – Ա. Հովհաննիսյան, Ռ. Մելքոնյան, Ա. Դումանյան, Վ. Տեր-Մաթևոսյան 370
3. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ – Կազմեց՝ Վ. Գեղամյանը 390

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում կես դարից ավելի դասավանդվում է Թուրքիայի Հանրապետության պատմությունը, սակայն մինչև այսօր բացակայում է հայաստանցի մասնագետների կողմից նախապատրաստված բուհական դասագիրք: Որպես դասագիրք օգտագործվում են սովորաբար խորհրդային թուրքագետների կողմից հրատարակված ընդհանրացնող աշխատությունները: Այսպես, օրինակ, ուսանողների և դասախոսների մի քանի սերունդ լավ է հիշում Արևելագիտության ֆակուլտետի երկարամյա դասախոս, երջանկահիշատակ Հակոբ Մարտիրոսյանի թարգմանած և ԵՊՀ հրատարակչությունում հրատարակված գիրքը, որի երրորդ բաժինը նվիրված էր Թուրքիայի պատմության նորագույն շրջանին[1]: Կարելի է նշել նաև Մոսկվայում հրատարակված մեկ այլ գիրք, որը տողերիս հեղինակի սերնդի ուսանողներին հանձնարարվում էր որպես դասագիրք[2]:

Այս աշխատություններին հատուկ էր ոչ միայն մարքսիզմ-լենինիզմի տեսական հիմնադրույթների տեսանկյունից Թուրքիայի նորագույն շրջանի պատմության մեկնաբանումը, ինչը հանգեցնում էր նրա հոլովույթի առանձնահատկությունների և բարդ շրջադարձային երևույթների չափազանց պարզեցված բացատրությանը՝ դասակարգային պայքարի օրինաչափություններով, այլև դրա մի շարք կարևոր հատվածների խիստ

1 Հասրաթյան Մ.Ա., Օրեշկովա Ս.Ֆ., Պետրոսյան Յու. Ա., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986 (թարգմանություն ռուսերենից): Այս գրքի հեղինակները խորհրդային ճանաչված թուրքագետներ էին:

2 Новейшая история Турции, Москва, 1968.

քաղաքականացված և իրականությունն աղավաղող բնութագրումների օգտագործումը:

Այսպես, օրինակ, 1919-1922թթ. Մուսթաֆա Քեմալի ղեկավարությամբ ծավալված ազգայնամոլական շարժումը բնութագրվում էր որպես թուրք ժողովրդի ազգային-ազատագրական պայքար արևմտյան իմպերիալիզմի և նրա կամակատարների դեմ: Ընդ որում, վերջիններիս մեջ էր ներառվում նաև Հայաստանի Հանրապետությունը: Այս գնահատականները կոպտորեն աղավաղում են պատմական իրականությունը և անընդունելի են:

Անտարակույս, հայաստանյան բուհերի համար նախատեսված Թուրքիայի նորագույն շրջանի պատմության դասագրքի անհրաժեշտությունը գիտակցվում էր արդեն խորհրդային շրջանում: Մանավանդ որ դրա ստեղծման համար առկա էին անհրաժեշտ նախադրյալներ, քանի որ նույնիսկ այդ շրջանում հայ թուրքագետներին հաջողվել էր հանդես գալ մի շարք հիմնարար աշխատություններով, որոնք չէին ենթարկվում խորհրդային գաղափարական ու քաղաքական պարտադրանքներին և փաստերը ներկայացնում ու մեկնաբանում էին իրականությունից չշեղվելով: Սակայն դասագրքի հրատարակումը հնարավոր չէր, քանի որ բուհական ծրագրերը և դասագրքերը հաստատվում էին Մոսկվայում:

Այդ կարևոր բացը լրացվում է սույն հրատարակությամբ: Սեղանի վրա է առաջին անգամ Հայաստանում հեղինակված Թուրքիայի Հանրապետության պատմության դասագիրք՝ նախատեսված բուհերի համար:

Հեղինակները ձգտել են ներկայացնել հանրապետական Թուրքիայի պատմության ընդհանրական հոլովույթը և նրա առանձին շրջափուլերը՝ հնարավորինս օգտագործելով սկզբնաղբյուրները և զերծ մնալով գերքաղաքականացված մեկնաբանություններից ու գնահատականներից, ինչը հատուկ էր խորհրդային դասագրքերին: Այդ մոտեցումը հնարավորություն է ընձեռել պատմական փաստերի վրա հիմնվելով՝ անաչառ քննության առնել այնպիսի թեմաներ, որոնք միտումնավոր աղճատված տեսքով էին ներկայացվում, օրինակ՝ քեմալական ազգայնամոլական շարժումը կամ էլ ազգային հարցը հանրապետական Թուրքիայում:

Դասագրքի հեղինակները հետևում են հայաստանյան թուրքագիտական դպրոցի ավանդույթներին՝ լայնորեն օգտագործելով հայ մասնագետների աշխատությունները: Հաշվի են առնվել նաև արտերկրում հրատարակված նորագույն աշխատությունները: Քննադատական մոտեցում է ցուցաբերվել թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչների աշխատություններում մեր ժողովրդի պատմությունն աղավաղող դրույթների նկատմամբ:

Հեղինակները խորապես շնորհակալ են Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ, գերաշնորհ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանին՝ սույն դասագրքի գաղափարի և հայեցակարգի մտահղացման, ինչպես նաև հրատարակչական գործընթացի բոլոր փուլերում եռանդուն մասնակցության և իմաստուն խորհրդատվության համար: Հեղինակները նաև իրենց երախտագիտությունն են հայտնում Եկեղեցիների Համաշխարհային խորհրդում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ և Վաշինգտոնում ԱՄՆ Արևելյան թեմի պատվիրակ Գերաշնորհ Տեր Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանին՝ գրքի տպագրման աշխատանքներին ցուցաբերած աջակցության համար:

Ռուբեն Սաֆրաստյան

ԳԼՈՒԽ Ա

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՓԼՈՒՋՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅՆԱՄՈԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ (1918-1922ԹԹ.)

1. Օսմանյան կայսրության պարտությունն Առաջին աշխարհամարտում. Մուդրոսի զինադադարը և երիտթուրքերի դատավարությունները

Օսմանյան կայսրության մասնակցությունն Առաջին աշխարհամարտին (1914-1918թթ.)՝ որպես կայսերական Գերմանիայի կողմից ղեկավարվող Քառյակ միության անդամ, պայմանավորված էր ամենից առաջ երիտթուրքերի պանթյուրքական ծրագրերն իրականացնելու նպատակով: Այդ ծրագրերն առաջ էին քաշել երկրում իրենց միանձնյա իշխանությունը հաստատած «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարները: Նրանք նախատեսում էին հարձակում Ռուսաստանի և Իրանի վրա ու նրանց կազմում գտնվող թյուրքալեզու ժողովուրդներով և ցեղերով բնակեցված տարածքների նվաճում: Հայերը դիտարկվում էին որպես սեպ, որը բաժանում էր Օսմանյան Թուրքիան Կովկասի թյուրքալեզու ժողովուրդներից և խանգարում էր պանթյուրքական ծրագրերի իրականացմանը: Այդ խոչընդոտը վերացնելու նպատակով Օսմանյան կայսրությունը մշակեց երկրի հայ ազգաբնակչության ցեղասպանության և նրա բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանի հայաթափման ծրագիր, որն էլ իրականացրեց աշխարհամարտի տարիներին: 1918թ. ներխուժելով Անդրկովկաս՝ Օսմանյան Թուրքիան այնտեղ ևս շարունակեց իր հայաջինջ քաղաքականությունը: Ցեղասպանության այդ հրեշավոր քաղաքականության զոհ գնացին 1,5 միլիոնից ավելի հայեր Արևմտյան Հայաստանում, Օսմանյան կայսրության մյուս վայրերում, ինչպես նաև Անդրկովկասում:

1918թ. սեպտեմբերի կեսերին Բալկաններում հակառակորդ Անտանտի երկրների բանակները ձեռք բերեցին որոշիչ առավելություն և ճանապարհ հարթեցին դեպի Կոստանդնուպոլիս: Թուրքական զորքերը ծանր պարտություններ կրեցին Միջագետքում, Սիրիայում և Պաղեստինում: Օսմանյան կայսրության վիճակը կտրուկ վատթարացավ: Երկիրը հայտնվեց ռազմական աղետի եզրին: Երիտթուրքական կուսակցության փաստացի ղեկավար և սադրազամ (կառավարության նախագահ) Թալեաթ փաշան ստիպված էր հայտարարել. «Մեր քաղաքականությունը պարտություն կրեց»: Հոկտեմբերի 8-ին երիտթուրքերի կառավարությունը՝ Թալեաթի ղեկավարությամբ, հրաժարական տվեց: Կազմվեց նոր կառավարություն, որը զինադադարի խնդրանքով դիմեց Անտանտին: Զինադադարը կնքվեց 1918թ. հոկտեմբերի 30-ին Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստի մատույցներում խարիսխ գցած անգլիական «Ագամեմնոն» ռազմանավի վրա: Այն ազդարարեց Օսմանյան կայսրության պարտությունն Առաջին աշխարհամարտում և պատմության մեջ է մտել որպես Մուդրոսի զինադադար (Mondros Mütarekesi):

Զինադադարի տեքստը բաղկացած էր 25 կետից, որոնք նախատեսում էին Բոսֆորի և Դարդանելի նեղուցների, ինչպես նաև Տավրոսի թունելների համակարգի և մի շարք կարևոր նավահանգիստների անցում Անտանտի դաշնակից երկրների անմիջական հսկողության տակ: Անհրաժեշտության դեպքում՝ եթե վտանգ էր սպառնում դաշնակիցներին, նրանք իրավունք էին ստանում գրավելու կայսրության տարածքում գտնվող բոլոր ռազմավարական նշանակություն ունեցող շրջանները:

Զինադադարի պայմանները թուրքերին թելադրվել էին բրիտանացիների կողմից: Վերջիններս էլ, նպատակ ունենալով հերթական անգամ օգտագործել թուրքական զորքը ռուսների դեմ, որոշեցին չպահանջել օսմանյան

բանակի ամբողջական զորացրում: Զինադադարը նախատեսում էր, որ կպահպանվեն այն ստորաբաժանումները, որոնք անհրաժեշտ են «սահմանների և ներքին կարգուկանոնի» պահպանման համար: Այս կետն ունեցավ ճակատագրական նշանակություն, քանի որ հետագայում հնարավորություն տվեց թուրք ազգայնականներին օգտագործել այդ ստորաբաժանումները զինված պայքար ծավալելու համար:

Մուդրոսի զինադադարի մի քանի կետեր (4, 11, 15, 16, 24) ուղղակիորեն առնչվում էին Հայաստանի շահերին: Այսպես, օրինակ, նախատեսվում էր, որ թուրքերի կողմից գերեվարված և բռնագաղթեցված բոլոր հայերը պետք է տեղափոխվեին մայրաքաղաք Կոստանդնուպոլիս և հանձնվեին դաշնակիցներին: Թուրքական զորքերը դուրս էին բերվում Անդրկովկասի որոշ շրջաններից և Հայոց Կիլիկիայից: Հայկական վիլայեթներից որևէ մեկում անկարգությունների դեպքում դաշնակիցներն իրավունք էին ստանում անհապաղ գրավելու այն:

Վերը նշված կետերը նպաստավոր էին հայ ժողովրդի համար: Սակայն այն հանգամանքը, որ զինաթափ չարվեցին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասի մի շարք շրջաններում տեղակայված օսմանյան կանոնավոր բանակի ստորաբաժանումները, նշանակում էր, որ Հայոց անկախ պետականությունը լրջորեն վտանգված էր և ցեղասպանությունից փրկված հայության մնացորդները կանգնած էին նոր կոտորածների վտանգի առջև: Հիշեցնենք, որ դրանք այն ստորաբաժանումներն էին, որոնք մասնակցել էին հայ ժողովրդի բնաջնջմանը 1915-1916թթ. Արևմտյան Հայաստանում և 1918թ.՝ Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասի այլ հայաշատ վայրերում:

Այսպիսով՝ Մուդրոսի զինադադարը փաստեց, որ Անտանտի անդամ պետությունները, առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիան, հերթական անգամ զոհաբերեցին հայ ժողովրդի կենսական շահերը հանուն իրենց աշխարհաքաղաքական հաշվարկների:

Զինադադարն ուժի մեջ մտավ հոկտեմբերի 31-ին, ինչից հետո իրադարձությունները Կոստանդնուպոլսում սկսեցին արագ զարգանալ: Արդեն հաջորդ օրը, նոյեմբերի 1-ին, երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը պաշտոնապես հայտարարեց, որ դադարում է գոյություն ունենալ: Նույն օրվա գիշերը Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և երիտթուրքերի 4 այլ պարագլուխներ գերմանական ռազմանավով գաղտնաբար լքեցին երկիրը: Նոյեմբերի 6-ին զինաթափվեցին օսմանյան բանակի նեղուցները պաշտպանող ստորաբաժանումները՝ դաշնակիցների նավերի համար ճանապարհ բացելով դեպի մայրաքաղաք: Արդեն հաջորդ օրը նրանք մտան Բոսֆոր և խարիսխ նետեցին մայրաքաղաքում: Մեկ շաբաթ անց՝ 1918թ. նոյեմբերի 13-ին, Անտանտի երկրների նավերից ափ իջեցվեց 3500 զինվոր, որոնք հսկողություն հաստատեցին մայրաքաղաքի կարևոր կետերի վրա:

Այսպես սկիզբ առավ Օսմանյան կայսրության պատմության վերջին շրջանը: Թուրքական պաշտոնական պատմագրության մեջ իրադարձությունները, որոնք տեղի էին ունենում Անտանտի երկրների կողմից գրավված մայրաքաղաքում և որոնց մասնակցում էին սուլթանը և նրա կողմից ստեղծված կառավարությունները, ընդունված է անվանել «զինադադարի շրջան» (Mütareke Devri):

Այդ շրջանի կարևոր իրադարձություններից էին Օսմանյան կայսրության երիտթուրքերի կառավարման շրջանի, մասնավորապես՝ պատերազմի տարիների ղեկավար պետական, կուսակցական, ռազմական գործիչների դատավարությունները: Արդեն հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երիտթուրքերի կառավարության հրաժարականից հետո, օսմանյան խորհրդարանում առանձին պատգամավորներ սկսեցին առաջ քաշել երիտթուրքերի պարագլուխներին պատասխանատվության ենթարկելու հարցը: Նրանք հիմնականում մեղադրվում էին երկիրն անօրինական կերպով պատերազմի մեջ ներքաշելու և այն վարելու, ինչպես նաև ավազակախմբեր (չեթեներ) ստեղծելով՝ հայերի, այդ թվում նաև կանանց ու երեխաների սպանություններ կազմակերպելու համար: Թալեաթի և մյուսների գիշերային փախուստից անմիջապես հետո այդ հարցին ընթացք տրվեց: Ստեղծվեց խորհրդարանի հանձնախումբ, որի առջև խնդիր դրվեց հետաքննել վերը նշված մեղադրանքները: Նմանատիպ գործընթաց տեղի ունեցավ նաև խորհրդարանի վերին պալատում՝ սենատում: Խորհրդարանական երկու հանձնախմբերի աշխատանքները մնացին անավարտ, քանի որ դեկտեմբերի 21-ին սուլթանը ցրեց խորհրդարանը:

Համապատասխան հետաքննություն սկսել էր նաև գործադիր իշխանությունը: Նոյեմբերին սուլթան Մեհմեթ VI Վահիդեդինի հրամանով ստեղծվել էր պաշտոնյաների զեղծարարությունները հետաքննող հանձնա-

խումբ, որն իր նախագահի անունով հայտնի դարձավ որպես «Մազիարի հանձնախումբ»: Այն կատարեց մեծ աշխատանք՝ արդեն 1919թ. հունվարի կեսերին նազմելով 130 պաշտոնյայի մեղադրական գործերը: Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ հավաքված փաստերը հնարավորություն են տալիս նրանց դեմ սկսել քրեական հետապնդում:

Իրականացված հանցագործությունները դատական հետաքննության ենթարկելու նպատակով 1918թ. դեկտեմբերի 16-ին սուլթանի հրամանով ստեղծվեց Ռազմական ատյան, իսկ 1919թ. հունվարի 8-ին՝ Ռազմական արտակարգ ատյաններ: Երկրի տարածքը բաժանվեց 10 դատաքննչական շրջանի, համապատասխանաբար ստեղծվեցին 10 փաստահավաք հանձնախմբեր: Ռազմական արտակարգ ատյանների դատախազներին փոխանցվեցին նաև խորհրդարանի հանձնախմբերի և Մազիարի հանձնախմբի հավաքած մեղադրական նյութերը:

Դատական նիստերի ընթացքում քննվեց պատերազմի շրջանի Սայիդ Հալիմ փաշայի և Թալեաթ փաշայի կառավարությունների, երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների և վիլայեթներում նրա ներկայացուցիչների ու երիտթուրքական կուսակցական տեղական կազմակերպությունների ղեկավարների, կենտրոնական կոմիտեի ենթակայության տակ գտնված և հիմնականում բանտերից ազատ արձակված հանցագործներից կազմված Հատուկ կազմակերպության հանցավոր գործունեությունը՝ հայ ժողովրդի զանգվածային կոտորածները կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ: Քննության առնվեցին նաև վիլայեթների իշխանությունների հանցանքները:

1919-1921թթ. ընթացքում տեղի ունեցած բազմաթիվ դատավարություններից աչքի է ընկնում պատերազմի տարիների երկու կառավարությունների անդամների ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների, ընդհանուր առմամբ՝ 31 մեղադրյալի դատավարությունը: Այն տեղի է ունեցել 1919թ. ապրիլ-հունիս ամիսներին: Մեղադրվողներից 4-ը՝ Թալեաթ փաշան, Էնվեր փաշան, Ջեմալ փաշան և դոկտոր Նազիմը, որոնք դիմել էին փախուստի, դատապարտվեցին մահապատժի, իսկ մնացածները՝ տարբեր տարիների ազատազրկման, կամ էլ արդարացվեցին հանցակազմի բացակայության պատճառով: Մի շարք հանցագործներ, օգտվելով դատաքննության կողմնակալ մոտեցումից, կարողացան խուսափել արժանի պատժից:

Անտարակույս, զինադադարի տարիներին օսմանյան իշխանությունների կողմից ստեղծված Ռազմական հատուկ ատյանների գործունեությունը և արձակած դատավճիռները համաչափ չէին ահավոր ոճրագործությանը՝ Հայոց ցեղասպանությանը: Այնուամենայնիվ, դատավարություններն անժխտելիորեն փաստեցին, որ այդ հանցագործությունը նախապատրաստված և իրականացված էր Օսմանյան Թուրքիայի պետական կառավարման բարձրագույն մարմինների կողմից՝ տեղական կառավարման և երիտթուրքական կուսակցական մարմինների, ինչպես նաև կանոնավոր զինուժի ու հատուկ հրոսակային ջոկատների ներգրավմամբ և օգտագործմամբ: Ժամանակակից Թուրքիայի իշխանությունները և պաշտոնական պատմագրությունը, ժխտելով Հայոց ցեղասպանության փաստը, ըստ էության, անտեսում են թուրքական դատարանների կողմից հաստատված փաստերը:

2. Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականությունը. Սևրի պայմանագիրը

Մուդրոսի զինադադարի ստորագրումից հետո Կոստանդնուպոլսի սուլթանական կառավարությունների արտաքին քաղաքականության հիմնական նպատակն էր հնարավորինս մեղմել Անտանտի երկրների և Օսմանյան կայսրության միջև նախապատրաստվող խաղաղության պայմանագրի դրույթները և պահպանել առավելագույնս շատ տարածքներ կայսրության կազմում: Արտաքուստ այդ քաղաքականությունը պասիվ էր, շատ դեպքերում՝ նաև կրավորական, սակայն գտնվելով դաշնակիցների, գլխավորապես բրիտանացիների ուժեղ ճնշման ներքո՝ սուլթանական իշխանությունները, այդուհանդերձ, չէին հրաժարվում այդ նպատակը հետապնդելուց:

1919թ. հունվարի 18-ին բացվեց Փարիզի խաղաղության վեհաժողովը (աշխատանքները շարունակվեցին մինչև 1920թ. հունվարի 21-ը):

Օսմանյան կայսրության մասնատման և նրա տիրապետության տակ դարեր շարունակ գտնված ժողովուրդներին անկախ պետականություն ստեղծելու հնարավորություն տալու խնդիրը վեհաժողովում քննարկված առաջնային հարցերից էր: Արդյունքում՝ արդեն 1919թ. հունվարի վերջին Անտանտի Գերագույն խորհուրդը սկզբունքային որոշում ընդունեց Հայաստանը, Սիրիան, Պաղեստինը, Արաբիան և Միջագետքն Օսմանյան կայսրությունից անջատելու վերաբերյալ:

Օսմանյան կայսրության պատվիրակությանը, որպես պարտված երկրի ներկայացուցիչ, թույլ տրվեց մասնակցել Խաղաղության վեհաժողովի աշխատանքներին միայն այն բանից հետո, երբ Անտանտի երկրները քննարկումներ անցկացրեցին օսմանյան ժառանգության հետագա ճակատագրի վերաբերյալ: 1919թ. հունիսի 17-ին պատվիրակության ղեկավար Դամադ Ֆերիդ փաշան ներկայացրեց թուրքական մոտեցումը՝ առաջարկելով պահպանել կայսրության ամբողջականությունը: Նա քրիստոնյաների նկատմամբ իրականացված հանցագործությունները, առաջին հերթին՝ Հայոց ցեղասպանությունը, հավասարեցնում էր պատերազմի ընթացքում մուսուլմաններին բաժին ընկած «աղետներին»: Նույնիսկ ներողության խոսք չինչեց նրա շուրթերից: Հետագայում թուրքերը հանդես եկան նաև համապատասխան հուշագրով, որտեղ մանրամասնում էին իրենց տեսակետը: Անտանտի երկրները կտրուկ մերժեցին թուրքական պատվիրակության այդ հանդուգն մոտեցումը: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը հայտարարեց, որ թուրքերը կարծում են, թե համաժողովը լիովին անտեղյակ է պատմությանը և պատրաստ է կուլ տալ աներևակայելի սուտը: Ֆրանսիայի վարչապետ Կլեմանսոն ավելի հստակ էր՝ ընդգծելով. «Ոչ Եվրոպայում, ոչ Ասիայում, ոչ էլ Աֆրիկայում Թուրքիայի ղեկավարության ներքո գտնված ոչ մի տեղ չկա, որտեղ նյութական արժեքները չվերանային, մշակութային մակարդակը անկում չապրեր»: Օսմանյան պատվիրակությանը տեղեկացվում է, որ վեհաժողովը դեռևս մտադրություն չունի զբաղվելու օսմանյան ժառանգության բաժանման հարցերով, և պատվիրակները ստորացված վերադառնում են Կոստանդնուպոլիս:

Պաշտոնապես Հայաստանը չէր հրավիրված մասնակցելու վեհաժողովին, սակայն Փարիզում էին գտնվում երկու հայկական պատվիրակություններ, Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի և Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի ղեկավարությամբ: Հայկական պատվիրակությունները 1919թ. փետրվարի 12-ին հանդես եկան համատեղ հուշագրով, որտեղ պահանջ էր ներկայացվում ճանաչել Հայաստանի անկախությունը՝ ներառելով նրա կազմում Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթները, Կիլիկիան և Արևելյան Հայաստանի տարածքի վրա հռչակված Հայաստանի Հանրապետությունը:

Փարիզի Խաղաղության վեհաժողովում Օսմանյան կայսրության հետագա ճակատագիրը որոշելու ուղիների վերաբերյալ Անտանտի անդամ երկրների միջև միասնություն չկար: Ավելին, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի միջև ծավալվեց լուրջ դիվանագիտական պայքար Թուրքիայի տարածքի առանձին հատվածներին տիրանալու կամ նրանց վրա ազդեցություն հաստատելու համար: Այդ պայքարում մեծ ակտիվություն ցուցաբերեց ԱՄՆ-ը: Վերջինիս պատվիրակության ղեկավար, նախագահ Վուդրո Վիլսոնը կողմնակից էր Օսմանյան կայսրության վրա միասնական մանդատ հաստատելու գաղափարին: Նա մեծապես կարևորում էր ամերիկյան մանդատի ներքո կենսունակ Հայաստանի ստեղծման անհրաժեշտությունը: Համապատասխան հնարավորությունները քննելու նպատակով երկու հանձնաժողով ուղարկվեց տարածաշրջան: Նրանցից առաջինը՝ **Քինգ-Քրեյնի հանձնաժողովը**, կողմ արտահայտվեց, որ ԱՄՆ-ը ստանձնի Թուրքիայի, Հայաստանի (ներառյալ Կիլիկիան) և Սիրիայի միասնական մանդատը: Երկրորդը՝ գեներալ **Հարբորդի ղեկավարած հանձնաժողովը**, նույնպես կողմ արտահայտվեց միասնական մանդատին՝ առաջարկելով նրա մեջ ընդգրկել նաև Անդրկովկասը:

Վեհաժողովի աշխատանքների ընթացքում նախագահ Վիլսոնի քաղաքական դիրքերն իր հայրենիքում՝ Միացյալ Նահանգներում, հետզհետե լրջորեն թուլացան: Ուժեղացան մեկուսացման քաղաքականության կողմնակիցների դիրքերը, աճեց ընդդիմությունը նրա արտաքին քաղաքականության նկատմամբ, որը հասարակական կարծիքի և կառավարող վերնախավի ազդեցիկ ուժերի կողմից գնահատվում էր որպես

ծախսատար, թանկ և քիչ արդյունավետ: Ամերիկյան պատվիրակությունը՝ Վիլսոնի ղեկավարությամբ, ստիպված լքեց Փարիզը և վերադարձավ ԱՄՆ:

Օսմանյան կայսրության բաժանման հարցը մանրամասն քննարկվեց 1920թ. ապրիլին Սան Ռեմոյի (Իտալիա) խորհրդաժողովում: Մասնակցում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի վարչապետերը, Անտանտի մի շարք այլ երկրների ներկայացուցիչներ, ԱՄՆ-ը չէր մասնակցում: Սան Ռեմոյի խորհրդաժողովում Օսմանյան կայսրության բաժանման հարցի վերաբերյալ քննարկումների հիմքում դրվեցին դեռևս 1916թ. Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև ձեռք բերված գաղտնի համաձայնությունները, որոնք հայտնի են որպես Սայքս-Պիկոյի համաձայնագիր: Դաշնակիցները մշակեցին Օսմանյան կայսրության հետ Անտանտի երկրների խաղաղության պայմանագրի տեքստը, որը և հետագայում հիմք ծառայեց Սևրի պայմանագրի համար:

Հայկական պատվիրակությունների ղեկավարներ Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբարը մասնակցեցին Հայկական հարցի լուծման վերաբերյալ Սան Ռեմոյում ծավալված քննարկումներին: Խորհրդաժողովը ձեռնամուխ եղավ Հայկական հարցի լուծմանը և Հայաստանի հետագա ճակատագրի հստակեցմանը, ինչը և արտահայտվեց Սևրի պայմանագրի տեքստում: Միաժամանակ, խորհրդաժողովի որոշմամբ, Անտանտի Գերագույն խորհուրդը 1920թ. ապրիլի 26-ին պաշտոնապես դիմեց ԱՄՆ-ին՝ խնդրելով, որ այդ երկիրն ստանձնի Հայաստանի մանդատը և նրա նախագահը իրավարարությամբ վճռի Հայաստանի սահմանները:

Օսմանյան պատվիրակությունը Սան Ռեմո չէր հրավիրվել: Նրան արտոնվեց միայն մայիսին ժամանել Փարիզ և ստանալ արդեն համաձայնեցված պայմանագրի տեքստը՝ ծանոթանալու համար: Պատվիրակությունը սկզբում մերժեց պայմանագիրը, սակայն 1920թ. հուլիսին Կոստանդնուպոլսում սուլթան Մեհմեթ Վահիդեդին VI-ը և սադրազամ Դամադ Ֆերիդ փաշայի նախագահությամբ կայացած սուլթանության արտակարգ խորհուրդը, որին մասնակցեց երկրի բարձրագույն ղեկավարությունը, համարյա միաձայն (ձեռնպահ էր միայն մեկը) ընդունեցին Անտանտի առաջարկած պայմանները: Խորհրդակցության սկզբում կարդացվել էր կառավարության հայտարարությունը, որտեղ նշվում էր, որ պայմանագրի մերժումը կնշանակի պատերազմի շարունակում և Օսմանյան կայսրության լիովին վերացում, մինչդեռ նրա սկզբունքորեն ընդունումը հնարավորություն կտա պահպանել պետությունը և սակարկությունների մեջ մտնել որոշ կետերի վերաբերյալ: Ըստ երևույթին, այս մոտեցումն ընդունելի եղավ մասնակիցների համար: Այդպիսով, ճանապարհ բացվեց Սևրում խաղաղության պայմանագրի ստորագրման համար:

Դրանից հետո երեք հոգուց բաղկացած օսմանյան պատվիրակությունը մեկնեց Փարիզ: Այստեղ, հանդիպելով ֆրանսիական իշխանությունների ներկայացուցիչների հետ, պատվիրակության անդամները փորձեցին վերջին պահին զիջումներ կորզել նեղուցների և մի շարք այլ հարցերում, սակայն ապարդյուն:

Օսմանյան կայսրության և Անտանտի երկրների միջև խաղաղության պայմանագրի ստորագրումը տեղի ունեցավ Փարիզի մերձակայքում գտնվող Սևր քաղաքում: Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի պետություններից այն ստորագրեցին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Հունաստանը, Հայաստանը և մի շարք այլ պետություններ: Հայաստանի անունից պայմանագիրը ստորագրեց երկրի խորհրդարանի նախագահ և պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը:

Պայմանագիրը բաղկացած էր 97 մասից և 578 հոդվածից, որոնք վերաբերում էին տարածքային, քաղաքական, ռազմական, տնտեսական, ֆինանսական, գերիների, պատիժների, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և մի շարք այլ հարցերի:

Բոլոր այդ հարցերից ամենակարևորը, անտարակույս, տարածքային հարցերն էին: Համաձայն պայմանագրի՝ Թուրքիայի տարածքը պետք է սահմանափակվեր միայն Կոստանդնուպոլսով և շրջակայքով, ինչպես նաև Փոքր Ասիայի արևմտյան հատվածով: Նեղուցները դուրս էին բերվում թուրքական իշխանությունից և դրվում էին միջազգային կառավարման ներքո: Թուրքիան կորցնում էր իր եվրոպական և արաբական տիրույթները: Զմյուռնիան անցնում էր Հունաստանի կառավարման ներքո: Հեջազը անկախություն էր ստանում, իսկ մի շարք այլ՝ նախկինում օսմանյան գերիշխանության տակ գտնվող արաբական շրջաններ, որպես ենթամանդատային տարածքներ, հանձնվում էին Մեծ Բրիտանիային ու

Ֆրանսիային: Ըստ էության, Սևրի խաղաղության պայմանագիրը մահվան դատավճիռ էր Օսմանյան կայսրության համար:

Սևրի պայմանագիրը կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Հայաստանի կողմից պայմանագրի ստորագրումը նշանակում էր, որ նա ճանաչվում էր դաշնակիցների կողմից որպես ինքնիշխան պետություն: Դաշնագրի 83-րդ հոդվածում նշվում էր. «Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն»:

Առավել կարևոր էին պայմանագրի այն հոդվածները, որոնք վերաբերում էին հայությանը հուզող տարածքային խնդիրներին: 89-րդ հոդվածով ընդգծվում էր, որ «Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել... նրա որոշումը»: Ուշագրավ է, որ հատուկ նշվում էր Հայաստանին դեպի ծով ելք ապահովելու անհրաժեշտությունը: Պայմանագրի տեքստի հեղինակները, Անտանտի դաշնակից տերությունները, լավ գիտակցելով, թե որքան վտանգավոր կարող է լինել Թուրքիան Հայաստանի համար ապագայում, ներգրավել էին դրույթներ առ այն, որ «Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից» (հոդված 90) և որ հայ-թուրքական նոր սահմանագծին «հարող օսմանյան բոլոր տարածքները» ապառազմականացվելու են (հոդված 89):

Սևրի պայմանագրի ստորագրումից մոտ երեք ամիս անց, 1920թ. նոյեմբերի 22-ին, հրապարակվեց ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը հայ-թուրքական սահմանի վերաբերյալ (Arbitral award of the president of the United States of America Woodraw Wilson): Համաձայն այդ որոշման՝ Հայաստանին էին անցնում Կարինի (Էրզրումի) վիլայեթը գրեթե ամբողջությամբ, Վանի և Բիթլիսի վիլայեթների երկու երրորդը, ինչպես նաև Տրապիզոնի վիլայեթի մեծ մասը՝ ապահովելով ելք դեպի Սև ծով՝ ռազմավարական նշանակություն ունեցող Տրապիզոնի նավահանգստի միջոցով: Տարածքը, որը կորցնում էր Թուրքիան հօգուտ Հայաստանի Հանրապետության, ընդհանուր առմամբ կազմում էր մոտ 90 հազար քառակուսի կիլոմետր:

Սևրի պայմանագիրն անդրադարձավ Հայաստանի սահմաններին նաև Վրաստանի և Ադրբեջանի հետ: 92-րդ հոդվածում ասված էր. «Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն, ըստ պատկանելության, կորոշվեն շահագրգիռ պետությունների ընդհանուր համաձայնությամբ: Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի և եթե դրանից հետո այս կամ այն շահագրգիռ պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն Գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանազատումը տեղում գծանշելու մասին»:

Դաշնագիրը պարունակում էր դրույթներ, որոնց նպատակն էր Առաջին աշխարհամարտի տարիներին «Թուրքիայում մարդկանց նկատմամբ իրականացված կոտորածների չարիքն առավելագույն չափով քավելը» (հոդված 142): Թուրքիայում իշխած երիտթուրքական կառավարման համակարգը բնութագրվում էր որպես «ահաբեկչական» (հոդված 142): Թուրքիայից պահանջվում էր «ցույց տալ ամեն տեսակ աջակցություն՝ 1914թ. նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առևանգված, ներկալված և ազատազրկված ամեն ազգի և ամեն կրոնի մարդկանց որոնելու և ազատելու համար» (հոդված 142):

Անօրինական և ուժը կորցրած էր հայտարարվում Էքյալ գույքի մասին 1915թ. օրենքը (հոդված 144): Նույն հոդվածը նախատեսում էր, որ «Օսմանյան կառավարությունը հանդիսավոր կերպով պարտավորվում է հնարավորության սահմաններում նպաստել, որպեսզի իրենց օջախները վերադառնան և իրենց գործերը վերսկսեն օսմանյան այլազգի այն քաղաքացիները, որոնք 1914թ. հունվարի 1-ից հետո գաղթել են գազանությունների հանդեպ ունեցած վախից դրդված կամ արտաքսվել են բռնադատման որևէ այլ եղանակով: Օսմանյան կառավարությունն ընդունում է, որ օսմանյան հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող այն անշարժ և շարժական գույքերը, որոնք կարող են որոնելով գտնվել, ում ձեռքում էլ դրանք լինեն, պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվեն իրենց տերերին»:

Պայմանագրի «Պատիժներ» բաժնում օսմանյան կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքը՝ ռազմական ատյանին հանձնելու պատերազմի օրենքներն ու կանոնները խախտած մեղավոր անձանց, համաձայնում էր հանձնել նաև նրանց կատարած ոճրագործությունների վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր (հոդված 226):

Սևրի պայմանագրի ոչ բոլոր դրույթներն էին բարենպաստ հայ ժողովրդի համար: Այսպես, օրինակ, Օսմանյան կայսրության կազմում գտնվող երեք հայկական վիլայեթ դուրս մնաց Հայաստանի Հանրապետության սահմաններից: Նրանց տարածքների մի մասը մնաց Թուրքիայի կազմում, իսկ մյուս մասը, Եփրատ գետից դեպի արևելք, ճանաչվեց Քուրդիստանին պատկանող (հոդված 62):

Միաժամանակ, պայմանագիրը, Հայաստանին հանձնելով մի շարք տարածքներ, անտեսում էր այն փաստը, որ դրանք գտնվում էին թուրքերի հսկողության տակ և չէր նախատեսում ուղիները, թե ինչպես են հայերը ստանալու թղթի վրա իրենց տրված հողերը:

Սևրի պայմանագիրը, ցավոք, չվավերացվեց և չկիրարկվեց: Սակայն նույնիսկ այսօր, երբ նրա ստորագրումից անցել են տասնամյակներ, այն չի կորցրել իր գաղափարական, բարոյական, ինչպես նաև իրավական ներուժը: Այդ է վկայում թեկուզ այն հանգամանքը, որ ժամանակակից Թուրքիայում հասարակական ընկալումների մակարդակով առկա է վախը, որ մեր օրերում՝ որոշակի պայմաններում այն կարող է կյանքի կոչվել: Այդ վախն ընդունված է անվանել «Սևրի սինդրոմ»:

3. Քեմալական շարժման մեկնարկը

Երիտթուրքական վարչակարգի պարագլուխները, չնայած փախուստի էին դիմել, սակայն նախապես ստեղծած գաղտնի կազմակերպությունների միջոցով շարունակում էին որոշիչ ազդեցություն ունենալ երկրի քաղաքական կյանքի վրա: Դրանցից էին Հատուկ կազմակերպությունը (Teşkilât-ı Mahsusa), որի անդամները դեռևս Հայոց ցեղասպանության ժամանակ աչքի էին ընկել որպես ամենադաժան մարդասպաններ, ինչպես նաև հատկապես «Քարաքոլը», որն առանձնապես ակտիվացել էր քեմալական շարժման ընթացքում: Նրանք մեծ դեր ունեցան կայսրության ասիական շրջաններում ազգայնամոլական շարժման առաջացման և նրա զինված ջոկատներին զենքով ապահովելու գործում: Այդ շարժման ղեկավար ուժը հիմնականում թուրքական բանակի սպայակույտի ներկայացուցիչներն էին, մեծ էր նաև երիտթուրքական կուսակցության նախկին անդամների դերը:

«Քարաքոլը» ստեղծել էր գաղտնի գործակալների մի լայն ցանց, որը հավաքագրում էր մայրաքաղաքում գտնվող թուրք սպաների և նրանց գաղտնի փոխադրում Փոքր Ասիա՝ այնտեղ զինված պայքար կազմակերպելու նպատակով: «Քարաքոլը» կապ հաստատեց նաև նոյեմբերից մայրաքաղաքում գտնվող Մուսթաֆա Քեմալ փաշայի հետ, որն, ինչպես օսմանյան բանակի շատ սպաներ, ժամանակին անդամակցել էր երիտթուրքական կուսակցությանը: Նրա վերջին ռազմական պաշտոնն օսմանյան բանակում «Յըլդըրըմ» (Կայծակ) բանակային խմբի հրամանատարությունն էր: Լինելով չափազանց փառասեր անձնավորություն՝ Մուսթաֆա Քեմալը ցանք չէր խնայում հետպատերազմյան Օսմանյան կայսրությունում ավելի բարձր ղեկավար պաշտոն ստանալու համար և ակտիվորեն ներգրավվել էր մայրաքաղաքային քաղաքական ինտրիգների մեջ: «Քարաքոլի» օգնությամբ նրան հաջողվեց ստանալ կայսրության փոքրասիական տարածաշրջանում տեղակայված 9-րդ բանակի տեսուչի պաշտոնը: Պաշտոնապես նրա առջև խնդիր էր դրվել ապահովել զինապահեստների անվտանգությունը, ճնշել Անտանտի դեմ ընդհատակում ձևավորվող դիմադրության խմբերը, վերակազմավորել այդ բանակի քայքայված ստորաբաժանումները և նպաստել այդ տարածաշրջանում կարգուկանոնի հաստատմանը: Սակայն իրականում Քեմալ փաշան պատրաստվում էր ղեկավարել այնտեղ արդեն սկիզբ առնող զինված պայքարը հանուն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման:

1919թ. մայիսի 19-ին Մուսթաֆա Քեմալը ծովային ուղիով հասավ Սամսուն: Այդ օրը թուրքական պաշտոնական պատմագրությունը համարում է քեմալական շարժման սկիզբն ազդարարող ամսաթիվ և նշվում է որպես

ազգային տոն: Քեմալական շարժումը երիտթուրքերի նախապատրաստած ազգայնամոլական շարժում էր, որի նպատակն էր պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը և թուրքերի իշխանությունը հպատակ ժողովուրդների նկատմամբ:

Ժամանելուն պես և տեղում իրադրությունն ուսումնասիրելուց հետո՝ Քեմալ փաշան արագ մշակեց հետագա գործողությունների ծրագիր: Արդեն մեկ ամիս հետո Ամասիայում նա հրավիրեց մի քանի բանակային հրամանատարների գաղտնի խորհրդակցություն-ժողով, որը շրջաբերականով դիմեց զինվորական և քաղաքացիական իշխանությունների ներկայացուցիչներին: Այդ շրջաբերականում նշված էր, որ սուլթանի կառավարությունը չի կարողանում պատշաճ կերպով պաշտպանել կայսրության տարածքային ամբողջականությունը, և այդ պատճառով անհրաժեշտ է, որ «ազգն» իր ձեռքը վերցնի իր անկախության և տարածքի պաշտպանությունը: Շրջաբերականը կարևոր քայլ էր քեմալական շարժման առաջացման ուղղությամբ: Այն հիմք դրեց նաև քեմալականների հռետորաբանությանը:

Նպատակ դրվեց համախմբել արդեն գործող «իրավունքների պաշտպանության» զանազան ընկերությունները: Դրանց թվում էին «Արևելյան Թրակիայի պաշտպանության օսմանյան ընկերությունը», «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերությունը», «Իզմիրի (Զմյուռնիայի) իրավունքների պաշտպանության օսմանյան ընկերությունը» և այլն: Նրանք ստեղծվել էին ընդհատակ անցած երիտթուրքերի և նրանց վերը նշված գաղտնի կազմակերպությունների կողմից:

Այդ նպատակների իրականացման ուղղությամբ առաջին քայլը կատարվեց 1919թ. հունիս-օգոստոս ամիսներին: Առաջին ժողովը տեղի ունեցավ հունիսին Ամասիայում: Ապա հուլիսի 23-ին, 1908թ. սահմանադրության վերականգնման տարեդարձի օրը, Էրզրումում (Կարինում) բացվեց «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերության» համաժողովը, որը տևեց երկու շաբաթ: Մասնակցում էր 62 պատգամավոր, ինչպես թուրքեր, այնպես էլ քրդեր, Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներից՝ Բիթլիս (Բաղեշ), Էրզրում (Կարին), Սվաս (Սեբաստիա) և այլն: Համաժողովի նախաձեռնությամբ հանդես էր եկել Էրզրումում տեղակայված օսմանյան բանակի աջքի ընկնող հրամանատարներից Քյազիմ Քարաբեքիր փաշան: Գաղտնի քվեարկության արդյունքներով Մուսթաֆա Քեմալն ընտրվեց համաժողովի նախագահ, որը դարձավ նրա առաջին քաղաքացիական պաշտոնը: Մինչ համաժողովը նա, իր զինակիցների հորդորով, զորացրվել էր զինվորական ծառայությունից[3]:

Համաժողովի ընդունած բանաձևի առաջին կետը նշում էր, թե «Փոքր Ասիայի արևելյան վիլայեթները, Տրապիզոնի վիլայեթը և Ջանիկի սանջակը» կազմում են Օսմանյան կայսրության անքակտելի մաս, և այդպիսով ընդգծվում էր կայսրության տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտությունը: Նշվում էր, որ պետք է ստեղծել ժամանակավոր «ազգային կառավարություն», որի գլխավոր խնդիրը կլինի պայքարը հայերի և հույների դեմ: Այդ բանաձևն իր էությամբ խորապես հակահայկական էր, քանի որ չէր ճանաչում Հայաստանի Հանրապետության գոյությունը և Արևմտյան Հայաստանի իրավունքը՝ անջատվելու Օսմանյան կայսրությունից:

Համաժողովն ընտրեց 9 հոգուց կազմված ներկայացուցչական մարմին՝ Մուսթաֆա Քեմալի գլխավորությամբ: Այն դարձավ Փոքր Ասիայում նոր իշխանության ձևավորման գործընթացի կորիզը:

Հարկ է նշել, որ այդ համաժողովն անցկացվեց Կարնո (Էրզրումի) հայտնի Հայկական Սանասարյան վարժարանի շենքում: Վարժարանի աշակերտները և ուսուցիչները զոհ էին գնացել Հայոց ցեղասպանությանը, իսկ նրա շինությունն էլ բռնազավթվել էր իշխանությունների կողմից:

Քեմալական շարժման հետագա համախմբման և հեղինակության բարձրացման տեսակետից կարևոր հանգրվան հանդիսացավ 1919թ. սեպտեմբերին Սվասում (Սեբաստիայում) կայացած «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների» համաժողովը: Այն վերահաստատեց Կարինի համաժողովի որոշումները և դրանք տարածեց կայսրության ամբողջ տարածքի վրա: Սակայն կար նաև տարբերություն. Սեբաստիայի համաժողովում շատ ավելի սուր և ընդգծված

3 Բրիտանացիների պահանջով օսմանյան կառավարությունը հունիսի 8-ին Քեմալին հետ է կանչում Ստամբուլ, սակայն վերջինս հրաժարվում է ենթարկվել իր վերադասի պահանջին: 1920թ. ապրիլի 11-ին շեյխ-ուլ-իսլամի կոնդակով (ֆեթվա) նա մահվան դատապարտվեց, իսկ մեկ ամիս անց՝ մայիսի 11-ին, մահապատժի վճիռ կայացրեց թուրքական ռազմական դատարանը, որը մայիսի 24-ին վավերացվեց սուլթան Մեհմեթ VI-ի կողմից:

էին արտահայտվում հակահայկական և հակահունական տրամադրությունները: Այսպես, ընդունված բանաձևում նշվում էր, որ համաժողովի պատգամավորները պատրաստ են «մինչև արյան վերջին կաթիլը» պայքարել հունական կամ հայկական պետությունների դեմ:

Միաժամանակ, համաժողովի մասնակիցները հայտարարեցին, որ հավատարիմ են սուլթանին, սակայն դժգոհ են Դամադ Ֆերիդ փաշայի կառավարության գործունեությունից և պահանջեցին նրա հրաժարականը: Որոշվեց նաև նախապատրաստել խորհրդարանական ընտրություններ:

Համաժողովն ընտրեց նոր ներկայացուցչական մարմին՝ 16 հոգուց կազմված, որոնցից 9-ը Կարինի համաժողովի կողմից ընտրվածներն էին: Ինչպես և Կարինում, նրա նախագահ ընտրվեց Մուսթաֆա Քեմալը: Այդ մարմինը փաստորեն իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը քեմալականների հսկողության տակ գտնվող տարածքներում: Քեմալի հեղինակությունը՝ որպես ծավալվող շարժման առաջնորդ, այլևս անժխտելի էր:

Մուսթաֆա Քեմալը համաժողովի աշխատանքների ավարտին ներկայացուցչական մարմնի անունից նամակով դիմեց սուլթանին: Այստեղ, ակնհայտորեն կեղծելով իրականությունը, 3-3,5 անգամ ուռճացնելով թուրքերի թիվը[4] և փաստորեն արդարացնելով Հայոց ցեղասպանությունը, նա հայտարարեց, թե այն տարածքների բնակչությունը, որոնք պետք է հանձնվեն «նորաստեղծ պետություններին», այսինքն՝ Հայաստանին, 75-90 տոկոսով կազմում են թուրքերը: Ուղերձում մեկ անգամ ևս ամենայն վճռականությամբ ու հստակ ընդգծվում էր՝ բացառվում է նույնիսկ մեկ թիզ հողի հանձնումը Հայաստանին կամ որևէ այլ պետության:

Այսպիսով, քեմալական շարժման ձևավորման արդեն սկզբնական փուլում ակնհայտ էր նրա հակահայկական բնույթը: Փաստորեն, քեմալականների հայտարարությունները վկայում էին, որ նրանց հարձակումը Հայաստանի Հանրապետության վրա անխուսափելի էր:

Քեմալականների վճռականությունը և Սվասի (Սեբաստիայի) համաժողովից հետո անշեղորեն աճող հեղինակությունը ստիպեցին Կոստանդնուպոլսի իշխանություններին հաշվի նստել քեմալականների հետ:

4 Համաձայն Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից 1912թ. հրապարակված տվյալների՝ Արևմտյան Հայաստանում թուրքերի թիվը կազմում էր 25,4 տոկոս:

1919թ. հոկտեմբերի 2-ին սուլթանը ստիպված եղավ, հետևելով Սեբաստիայում քեմալականների հնչեցրած պահանջին, հեռացնել սադրազամ (վարչապետ) Դամադ Ֆերիդ փաշային, նոր վարչապետ նշանակել և հաստատել նոր կառավարության կազմը: Նոր վարչապետի առջև խնդիր էր դրվել, մասնավորապես, նախապատրաստել խորհրդարանական ընտրություններ՝ այս դեպքում ևս հետևելով քեմալականների պահանջներին:

Հետևելով քեմալականների հետ համաձայնության գալու գծին՝ մայրաքաղաքի կառավարությունը նրանց մոտ ուղարկեց իր ներկայացուցչին՝ բանակցություններ վարելու նպատակով: Բանակցություններն այդ ներկայացուցչի և Մուսթաֆա Քեմալի միջև տեղի ունեցան Ամասիայում: Համաձայնություն ձեռք բերվեց, որ դեկտեմբերին պետք է անցկացվեն խորհրդարանական ընտրություններ: Արևելյան նահանգներում այդ ընտրությունները նախապատրաստելու նպատակով Սեբաստիայում ընտրված ներկայացուցչական մարմինը՝ Քեմալի ղեկավարությամբ, 1919թ. դեկտեմբերի վերջին տեղափոխվեց Անկարա:

Խորհրդարանն (Meclis-i Mebusan) իր աշխատանքներն սկսեց 1920թ. հունվարի 12-ին Կոստանդնուպոլսում: Նրան վիճակված էր լինելու միաժամանակ և վերջին օսմանյան խորհրդարանը, և առաջին թուրքական խորհրդարանը: Հունվարի 28-ին այն ընդունեց «Ազգային ուխտը» (Misak-ı Milli): Այդ փաստաթղթի հիմնական դրույթները խտացված տեսքով ներկայացնում էին քեմալական ազգայնամոլական շարժման հիմնական քաղաքական նպատակները տարածքային հարցերում:

«Ազգային ուխտը» բաղկացած էր նախաբանից և 6 կետից: Առաջին կետը նշում էր, որ «Օսմանյան կայսրության այն տարածքների ճակատագիրը, որոնք բնակեցված են բացառապես արաբական մեծամասնությամբ և որոնք 1918թ. հոկտեմբերի 30-ի զինադադարի կնքման պահին գրավված են եղել թշնամական բանակների կողմից, պետք է որոշել տեղական ազգաբնակչության ազատ արտահայտված կամքի համաձայն», այսինքն՝ ճանաչվում էր օսմանյան տիրապետության ներքո հարյուրամյակներ գտնված արաբների ինքնորոշման իրավունքը: Արաբ ժողովրդի նկատմամբ քեմալականների՝ արտաքուստ «բարի» կամքն արտահայտող այս դրույթի հիմքում ընկած էր մի շատ պարզ իրողություն. արաբները պատերազմի տարիներին բարձրացրել էին

զինված ապստամբություն, հաղթել էին, արդեն դուրս էին եկել թուրքերի իշխանությունից և գտնվում էին հաղթական բրիտանական բանակի պաշտպանության ներքո: Այլ խոսքերով՝ թուրքերը կորցրել էին արաբական երկրները և հնարավորություն չունեին դրանք վերանվաճել: Այս պայմաններում նրանց մնում էր միայն «ճանաչել» արաբ ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Հայ ժողովրդի համար կարևոր նշանակություն ուներ 2-րդ կետը: Այն վերաբերում էր Կարսի, Արդահանի և Բաթումի լիվաներին (գավառներին): Նշվում էր, թե նրանց բնակչությունը հանրաքվեի արդյունքում արդեն որոշել է միանալ «մայր հայրենիքին», և պատրաստակամություն էր հայտնվում մեկ անգամ ևս այնտեղ անցկացնել հանրաքվե: Իրականում հանրաքվեի մասին դրույթով քեմալականները քողարկում էին այս կետի բացահայտ հակահայկական էությունը, քանի որ այն ուղղված էր հայ ժողովրդի պատմական անառարկելի իրավունքի դեմ: Փաստաթղթում հիշատակված հանրաքվեն ժամանակին անց էր կացվել Մեծ եղեռնի հեղինակներից մեկի՝ Էնվեր փաշայի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ՝ բազմաթիվ աղաղակող խախտումներով:

Փաստաթղթի մյուս կետերը վերաբերում էին Թրակիայի, նեղուցների, օսմանյան պարտքի խնդիրներին, ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքներին: Ընդհանուր առմամբ՝ «Ազգային ուխտն» աչքի էր ընկնում իր ազգայնամոլական բնույթով՝ լիովին համապատասխանելով քեմալական շարժման գաղափարական և քաղաքական հիմնադրույթներին:

«Ազգային ուխտի» ընդունումն օսմանյան խորհրդարանի կողմից վկայում էր, որ այն գտնվում է քեմալականների ազդեցության ներքո, ինչը վտանգում էր Անտանտի հետ խաղաղության պայմանագրի ստորագրումը: Դաշնակիցները և սուլթանը որոշեցին վերջ դնել նրա գործունեությանը, ինչպես նաև ավելի խիստ հսկողության տակ վերցնել մայրաքաղաքը, որտեղ հետզհետե ուժեղանում էր քեմալականների կողմնակիցների թիվը: Սուլթանի համաձայնությամբ 1920թ. մարտի 16-ին Կոստանդնուպոլիսը պաշտոնապես հայտարարվեց գրավված դաշնակիցների կողմից: Նրանց զինված ստորաբաժանումների թվաքանակը մայրաքաղաքում ու շրջակայքում հասցվեց 60 հազարի: Հայտարարվեց ռազմական դրություն, դաշնակիցները ցրեցին խորհրդարանը, ձերբակալեցին պատգամավորների մի մասին, ինչպես նաև աչքի ընկնող քաղաքական այն գործիչներին, որոնք պաշտպանում էին քեմալականներին: Կառավարական հիմնարկները, տպարանները, թերթերը, հանդեսները դրվում էին դաշնակցային իշխանությունների խիստ վերահսկողության տակ, իսկ «կարգուկանոնն ու հանգստությունը» պահպանում էին դաշնակիցների ոստիկանությունը և ժանդարմերիան:

Քեմալականները, ի պատասխան, կոչ արեցին ազատության մեջ մնացած պատգամավորներին լքել մայրաքաղաքը և հավաքվել Անկարայում, որտեղ գտնվում էր Սեբաստիայի համաժողովի կողմից ընտրված խորհրդակցական մարմնի նստավայրը: Հավաքվելով Անկարայում՝ այդ պատգամավորները 1920թ. ապրիլի 23-ին գումարեցին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) անդրանիկ նիստը: ԹԱՄԺ-ը հռչակվեց թուրք ժողովրդի օրենսդիր և գործադիր իշխանության գերագույն ներկայացուցիչ, իսկ Մուսթաֆա Քեմալն ընտրվեց նախագահ: Դրանով ստեղծվեց Կոստանդնուպոլսում մնացած սուլթանական կառավարությանն իշխանական այլընտրանքային կենտրոն: Հետագայում, 1921թ. հունվարի 20-ին, ԹԱՄԺ-ը ընդունեց «Հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը (Teşkilât-ı Esasiye Kanunu), որով իրավաբանորեն ամրագրվում էր ԹԱՄԺ-ի՝ որպես երկրի օրենսդրական ու գործադիր իշխանության գերագույն մարմնի դիրքը, հռչակվում էր ազգի գերիշխանության սկզբունքը, իսկ երկիրն առաջին անգամ կոչվում էր «Թուրքիայի պետություն»: Այսպիսով, սկիզբ էր դրվում քեմալական շարժման փոխակերպման համար:

4. Քեմալականների պատերազմները

Քեմալականների և Թուրքիայի ապագան որոշվում էր ռազմի դաշտերում: Միայն զենքի ուժով, դարեր շարունակ օսմանյան լծի ներքո բազմաթիվ տառապանքներ, կոտորածներ և ցեղասպանություն տեսած քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի ու հույների դեմ պատերազմներ

մղելով, ինչպես նաև ապստամբական այլ շարժումները ճնշելով էր հնարավոր վերահաստատել թուրքերի իրավունքը՝ շարունակել իշխել լայնածավալ տարածքների վրա: Քեմալականները հայերի և հույների դեմ մղած պատերազմներում ցուցաբերեցին անասելի դաժանություն խաղաղ ազգաբնակչության դեմ՝ ֆիզիկապես ոչնչացնելով տասնյակ հազարավոր մարդկանց:

Թուրք-հունական պատերազմը: Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի առաջատար երկրների՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի համաձայնությամբ Հունաստանը հնարավորություն էր ստացել վերամիավորվելու ժամանակին պատմական Հունաստանի մաս կազմած Փոքր Ասիայի արևմտյան շրջանների և Բալկանյան թերակղզում գտնվող Արևելյան Թրակիայի հետ: Այդ հնարավորությունն իրականություն դարձնելու նպատակով հունական բանակը 1919թ. մայիսին ազատագրեց խոշոր և զարգացած նավահանգստային քաղաք Զմյուռնիան (Իզմիր), որի բնակչության զգալի մասը կազմում էին քրիստոնյաները՝ հույները և հայերը: Ավելի ուշ, արդեն 1920թ. հունիսին, հունական զորքերը սկսեցին լայնածավալ հարձակում մի քանի ուղղությամբ. դեպի Փոքր Ասիայի խորքերը և գրավեցին Բուրսան, դեպի Արևելյան Թրակիայի կենտրոնը հանդիսացող Ադրիանուպոլիսը (Էդիրնե) և գրավեցին նաև այդ քաղաքը: Հաջորդ տարի, 1921թ. հունական բանակը, չնայած քեմալականներից կրած մի շարք պարտություններին, հաջողությամբ շարունակեց առաջխաղացումը Կենտրոնական Փոքր Ասիայում և ամռանը հասավ Անկարայի մատույցները: Քեմալականների համար ստեղծվել էր ծանր իրադրություն: Հույների դեմ գործող Արևմտյան ճակատի հրամանատար Իսմեթ փաշան (հետագայում՝ Իսմեթ Ինյոնյու, Թուրքիայի Հանրապետության երկրորդ նախագահը) այսպես էր նկարագրում այն. «Արևմուտքում մեր դրությունը ծանր է... Զինամթերքի պակաս, անիշխանություն, ինտրիգներ, ամենակարևորը, իհարկե, զինամթերքն է...»:

Այս ծանր պայմաններում, երբ թվում էր, թե օրեր են բաժանում հույներին Անկարայի գրավումից, Մուսթաֆա Քեմալն իր վրա վերցրեց թուրքական զորքերի միանձնյա ղեկավարումը: Նա ԹԱՄԺ-ի կողմից նշանակվեց Գերագույն հրամանատար՝ ստանալով անսահմանափակ լիազորություններ:

Հունական և թուրքական բանակների վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1921թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում Սաքարյա գետի մոտակայքում: Այն տևեց 22 օր և ավարտվեց սեպտեմբերի 13-ին քեմալականների հաղթանակով, ինչը հնարավորություն տվեց նրանց Անկարան պահել իրենց ձեռքում: Ի նշանավորումն Մուսթաֆա Քեմալի բացառիկ վաստակի՝ ԹԱՄԺ որոշմամբ նրան շնորհվեց թուրքական բանակի մարշալի բարձրագույն զինվորական աստիճան:

Սաքարյայի ճակատամարտից հետո հաջողությունը սկսեց ուղեկցել թուրքերին: Երկարատև նախապատրաստումից հետո նրանք 1922թ. օգոստոսի 26-ին անցան հարձակման: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Դումլուփընարի մոտ: Հունական բանակը ծանր պարտություն կրեց, նրա գլխավոր շտաբը գերեվարվեց: Պատերազմի ելքն արդեն որոշված էր:

Կրնկակոխ հետապնդելով արագ նահանջող հակառակորդին՝ թուրքական բանակը սեպտեմբերի 9-ին սրընթաց ներխուժեց Իզմիր (Զմյուռնիա): Քաղաքի հույն և հայ բնակչությունը չհաջողեց ինքնապաշտպանություն կազմակերպել և դաժան կոտորածի ենթարկվեց: Քաղաքը հրկիզվեց թուրքերի կողմից: Բնութագրելով խաղաղ քրիստոնյա ազգաբնակչության ջարդը՝ ամերիկյան գրականության խոշորագույն ներկայացուցիչներից Էռնեստ Հեմինգուեյն իր պատմվածքներից մեկի հերոսի անունից ասում է. «Այո..., սարսափելի տեսարան էր: Ազնիվ խոսք՝ սարսափելի տեսարան»: Ամերիկյան պաշտոնական տվյալների համաձայն՝ ժամում կատարվում էր շուրջ 2000 քրիստոնյայի սպանություն: Ընդհանուր առմամբ, քեմալականների վայրագություններին զոհ գնացին 100 հազար հայ և հույն: Ավելորդ չէ նշել, որ կոտորածի օրերին Զմյուռնիայում էր գտնվում Մուսթաֆա Քեմալը և, ըստ ամենայնի, անձամբ էր ղեկավարում կոտորածները և վայրագությունները:

Զմյուռնիայի անկումից մի քանի օր հետո հունական զորքերը լիովին դուրս բերվեցին Փոքր Ասիայից: Քեմալականների հաղթանակի արդյունքները վավերացվեցին 1922թ. հոկտեմբերի 11-ին Մուդանիա քաղաքում Անտանտի տերությունների ներկայացուցիչների հետ ստորագրված զինադադարով: Քեմալականներն իրենց ձեռքում պահեցին Անտանտի կողմից հույներին խոստացված և Փոքր Ասիայի արևմուտքը, և Արևելյան

Թրակիան: Հետագայում Մուդանիայի զինադադարի համապատասխան կետերը վերահաստատվեցին Լոզանի վեհաժողովի կողմից:

Հույն ժողովրդին չհաջողվեց իրականացնել իր վաղեմի երազանքը տեսնել Բալկանյան Հունաստանը վերամիավորված փոքրասիական Հունաստանի հետ: Կարևոր է ընդգծել, որ քեմալականների հաղթանակը թուրք-հունական պատերազմում և նրանց իրականացրած զանգվածային կոտորածները հանգեցրին 1,5 միլիոն փոքրասիական հույն ազգաբնակչության փախուստին: Այդպիսով վերջ տրվեց Փոքր Ասիայում հազարամյակների հարուստ պատմություն ունեցող հունական քաղաքակրթությանը:

Պատերազմ Հայոց Կիլիկիայի դեմ: Քեմալականները հասկանում էին, որ Էրզրումի (Կարինի) ու Սվասի (Սեբաստիա) համաժողովներում ընդունված ազգայնամոլական ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է ռազմական որևէ հաղթանակով ոգևորել թուրք ազգաբնակչությանը: Այդ նպատակով 1919թ. աշնանը որոշվեց պատերազմ սկսել Հայոց Կիլիկիայի դեմ: Նման ընտրությունը պայմանավորված էր առաջին հերթին այն մտավախությամբ, որ Կիլիկիայում բարենպաստ պայմաններ են ստեղծվում երկրորդ հայկական պետության կազմավորման համար: Այդ մտավախություններն անհիմն չէին: Ինչպես հայտնի է, նախքան Առաջին աշխարհամարտը Հայոց Կիլիկիայում, որն ընդգրկում էր Ադանայի վիլայեթը և Մարաշի սանջակը, բնակվում էր շուրջ 400 հազար հայ: Նրանց թիվը գերազանցում էր ոչ միայն թուրքերի, այլ նաև բոլոր մուսուլմանների թիվը: Ցեղասպանության ժամանակ Կիլիկիայի հայ ազգաբնակչության մեծ մասը ոչնչացվել էր:

Ըստ դեռևս 1916թ. Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև կնքված գաղտնի Սայքս-Պիկոյի համաձայնագրի՝ Թուրքիայի պարտությունից հետո Կիլիկիան պետք է անցներ Ֆրանսիային: Մուդրոսի զինադադարի կնքումից հետո ցեղասպանությունը վերապրած հայերը սկսեցին վերադառնալ Կիլիկիա: 1920թ. նրանց թիվն արդեն հասավ 160 հազարի: 1919թ. նոյեմբերից, Մուդրոսի զինադադարի համաձայն, Կիլիկիայում տեղակայվել էին ֆրանսիական զինված ստորաբաժանումները: Սակայն այդ հանգամանքը չկանգնեցրեց քեմալականներին: Նրանք շտապում էին իրականացնել իրենց հակահայկական ծրագրերը: Այդ նպատակով Մարաշ ուղարկվեցին մի խումբ սպաներ՝ Մուսթաֆա Քեմալի մտերիմ զինակիցներից Քըլըչ Ալիի ղեկավարությամբ, որն էլ առաջնորդեց քեմալական զինված ջոկատները: Նրանք սերտ համագործակցություն հաստատեցին քաղաքում ընդհատակյա գործող երիտթուրքական կազմակերպության հետ և սկսեցին գինել տեղի մուսուլմաններին: Միաժամանակ, նրանք տարածում էին բազմաթիվ թռուցիկներ, որոնցով բորբոքում էին տեղի մուսուլմանների մոլեռանդությունը և կոչ անում հաշվեհարդար տեսնել հայերի հետ:

Արդյունքում՝ 1919թ. դեկտեմբերի 27-ին Մարաշում տեղի ունեցավ հայերի և ֆրանսիացիների դեմ ուղղված առաջին զինված ելույթը, որն ուներ ավելի շատ հետախուզական նպատակներ: Հետագայում քեմալականները սկսեցին գործել ավելի նպատակասլաց: Նրանց դրդմամբ տեղի թուրք ազգաբնակչությունը պահանջեց ֆրանսիացիներից, որ նրանք վտարեն Մարաշում տեղակայված հայ ազատամարտիկների զինված ջոկատը: Ֆրանսիացիները տեղի տվեցին այդ պահանջին: 500 զինված մարտիկից բաղկացած ջոկատը ստիպված լքեց քաղաքը: Մարաշցի հայերը մնացին անպաշտպան, և 1920թ. հունվարի 21-ին քեմալականները սկսեցին ապստամբությունը ֆրանսիացիների դեմ ու հայերի կոտորածը, որը տևեց շուրջ երեք շաբաթ: Ըստ ականատեսների՝ ֆրանսիական զորքերի հրամանատարները հրաժարվում էին օգնության գալ հայերին: Մարաշցի հայերը ստիպված էին սեփական միջոցներով կազմակերպել իրենց ինքնապաշտպանությունը և հերոսաբար կռվել թուրք հրոսակների դեմ: Սակայն, երբ 1920թ. փետրվարի 11-ին ֆրանսիական զորքերն անսպասելի, առանց զգուշացնելու հայերին, լքեցին քաղաքը, հայ ազատամարտիկների պայքարը դարձավ անհույս: Քաղաքը հաջորդ օրն անցավ քեմալականների ձեռքը: Մարաշում մնացին մոտ 7 հազար հայեր, որոնք մի քանի ամիս հետո նույնպես ստիպված էին լքել քաղաքը: Այսպիսով՝ Մարաշի հայերի կորուստները կազմեցին շուրջ 12 հազար մարդ:

Այնուհետև քեմալականներն իրենց ջանքերը կենտրոնացրին Հայոց Կիլիկիայի մեկ այլ քաղաքի՝ Հաճընի վրա: Նախքան աշխարհամարտը այն ուներ բացառապես հայ ազգաբնակչություն, որի թիվը հասնում էր 35 հազարի: Ցեղասպանության ժամանակ նրանք ենթարկվեցին կոտորածների և տեղահանության: Մուդրոսի զինադադարից հետո կենդանի մնացածները սկսեցին վերադառնալ հայրենի քաղաք, և շուտով

նրանց թիվը հասավ 6 հազարի: Չնայած դաշնակիցների խոստումներին՝ ապահովել աքսորից վերադարձող հայերի անվտանգությունը, իրականում ոչինչ չարվեց: Այստեղ չտեղակայվեցին ոչ ֆրանսիական, ոչ բրիտանական զորքեր, և հաճընցիները ստիպված էին իրենք ապահովել սեփական անվտանգությունը:

1920թ. մարտի 15-ին քեմալականները շրջապատեցին քաղաքը: Ապրիլի 1-ին սկսվեց թուրքական հարձակումը: Այդպես սկիզբ առավ Հաճընի հերոսամարտը, որը տևեց շուրջ 8 ամիս: Թուրքերին ոչ մի կերպ չէր հաջողվում ընկճել արիաբար կռվող հաճընցիներին: Մուսթաֆա Քեմալը ստիպված էր անձամբ միջամտել. նրա հրամանով թուրքական զորքերը խոշոր համալրում ստացան և հոկտեմբերի 14-ին անցան վճռական հարձակման: Հաջորդ օրը նրանց հաջողվեց գրավել Հաճընը: Քաղաքը համարյա լիովին հրկիզվեց, բարբարոսաբար կոտորվեց 6000 հայ: Միայն 365 հոգու հաջողվեց փրկվել: Այդպես ավարտվեց քեմալականների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի հերոսական էջերից մեկը:

Որոշ դեպքերում հայ ժողովրդի հերոսական ինքնապաշտպանական պայքարը արդյունք էր տալիս: Այդպես եղավ այնթափցիների պարագայում: 1920թ. մայիսին շուրջ երկու շաբաթ տևած հերոսական դիմադրության միջոցով նրանք կարողացան փրկել քաղաքը: 18 հազար այնթափցիներ խուսափեցին կոտորածից: Հետագայում, չցանկանալով ապրել քեմալականների ստեղծած Թուրքիայում, նրանք 1921թ. վերջերից սկսեցին արտագաղթել հարևան Սիրիա:

1920թ. քեմալականներին հաջողվեց գրավել նաև Զեյթունը և կոտորածի ենթարկել հայ ազգաբնակչությանը: Այդ նույն տարում հայերը ստիպված էին լքել Ուրֆան, քանի որ ֆրանսիական զորքերն այդտեղից նույնպես դուրս բերվեցին:

Կիլիկիայի հայերի հերոսական պայքարը քեմալականների դեմ ավարտվեց պարտությամբ: Քեմալականներին հաջողվեց գրավել Կիլիկիան և ավարտին հասցնել երիտթուրքերի սկսած հայաջինջ քաղաքականությունը: Հայերի պարտության պատճառներից էր այն, որ չհաջողվեց ստեղծել միասնական ճակատ: Կարևոր դեր խաղաց նաև չհիմնավորված վստահությունը ֆրանսիացիների նկատմամբ:

Պատերազմ Հայաստանի Հանրապետության դեմ: Պատերազմը Հայաստանի առաջին Հանրապետության դեմ նախանշված էր Կարինի և Սեբաստիայի համաժողովների որոշումներով, որոնք բացառում էին իր բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում պետականությունը վերականգնելու հայ ժողովրդի իրավունքը: Այդ պատերազմի գլխավոր նախաձեռնողը և կատաղի կողմնակիցը Մուսթաֆա Քեմալն էր: Նա հետապնդում էր նաև պանթուրքիստական նպատակներ՝ անմիջական կապ հաստատել կովկասյան թաթարների հետ: Հայտնի է նրա պահանջը. «կովկասյան պատը», այսինքն՝ Հայաստանը, պիտի քանդվի:

Արդեն 1919թ. վերջին – 1920թ. սկզբին Քեմալը երկու անգամ հրամայում է Հայաստանի սահմանին տեղակայված թուրքական բանակի հրամանատար Քյազըմ Քարաբեքիր փաշային սկսել նախապատրաստվել պատերազմի: Սակայն վերջինս, պատճառաբանելով անբարենպաստ եղանակային պայմանները, հրաժարվում է կատարել հրամանը և առաջարկում է սպասել եղանակի տաքացմանը և ձնհալին:

Ավելի ուշ, 1920թ. մայիսին, Քարաբեքիրը հանգում է եզրակացության, որ արդեն ժամանակն է սկսել հարձակումը Հայաստանի վրա, սակայն այս անգամ դեմ է լինում Քեմալը: Նա նամակագրական կապ էր հաստատել Ռուսաստանում իշխանության եկած բոլշևիկների ղեկավարների, մասնավորապես Վլադիմիր Լենինի հետ, նրանց առաջարկել էր համատեղ գործողություններ Հայաստանի դեմ և սպասում էր պատասխանի:

1920թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրի ստորագրումը ստիպում է քեմալականներին արագացնել Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստական աշխատանքները: Կարևոր նշանակություն ունեցան Մոսկվայում գտնվող թուրքական պատվիրակության բանակցությունները Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների հետ, որոնք համաձայնեցին օգնություն ցույց տալ քեմալական Թուրքիային «արևմտյան իմպերիալիստների» դեմ նրա պայքարում, վերջինների դաշնակիցն էր Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանի սահմանին կենտրոնացնելով 50 հազարանոց բանակ, որի կազմի մեջ մտնում էին նաև խաղաղ ազգաբնակչության դեմ թալանի և վայրագությունների պատրաստ անկանոն զինված ջոկատները, 1920թ. սեպտեմբերի 23-ին Ք. Քարաբեքիրը հարձակվեց Հայաստանի վրա:

Սկսվեց նվաճողական պատերազմը ՀՀ-ի դեմ: Հայկական բանակը, որը կազմալուծված էր քեմալականների և բոլշևիկների «հակաիմպերիալիստական» քարոզչությամբ, չկարողացավ հակահարված կազմակերպել և ստիպված էր նահանջել: ՀՀ կառավարությունը դիմեց դաշնակիցներին՝ ակնկալելով նրանց օգնությունը, սակայն մերժում ստացավ: Շարունակելով հարձակումը՝ թուրքական զորքերը սեպտեմբերի 29-ին գրավեցին կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Սարիղամիշ քաղաքը: Դրանից հետո նրանք մոտ մեկ ամսով դադար տվեցին զավթմանը՝ սպասելով Անտանտի և Ռուսաստանի հակազդեցությանը:

Անկարայի կառավարության զգուշավոր դիրքորոշման պատճառն արտաքին գործոնն էր: Ըստ էության, քեմալականների ղեկավարները հաշվի էին առնում երեք երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Խորհրդային Ռուսաստանի և Վրաստանի դիրքորոշումը: Նրանցից ամենակարևորը, անտարակույս, երկուսն էին՝ Մեծ Բրիտանիան և Խորհրդային Ռուսաստանը: Համոզվելով, որ նրանց մոտեցումը բարենպաստ է, Քարաբեքիրը շարունակեց առաջխաղացումը դեպի Հայաստանի խորքերը, և հոկտեմբերի 30-ին թուրքական բանակը գրավեց Կարսը՝ կանխորոշելով հայկական կողմի ռազմական պարտությունը թուրք-հայկական պատերազմում: Չնայած հայկական զորքերը սկսեցին կատաղի դիմադրություն ցուցաբերել, բայց այնուամենայնիվ դրան հետևեց Ալեքսանդրապոլի գրավումը:

Պայքարի ծանրությունը տեղափոխվեց դիվանագիտական ոլորտ: Մոտ մեկ ամիս տևած լարված բանակցությունների արդյունքում դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում ստորագրվեց պայմանագիր Թուրքիայի հետ, որը, սակայն, հետագայում չվավերացվեց:

Թուրքիայի գերագույն նպատակը պատերազմի վերջին փուլում եղել է Հայաստանի ոչնչացումը: Այսպես, համաձայն ԹԱՄԺ կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեթ Մուհթարի՝ նոյեմբերի 8-ին Քարաբեքիրին ուղարկված ծածկագրի՝ «բացարձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյութապես վերացվի»:

Ցավոք, հայ քաղաքական ընտրանին ի զորու չեղավ ժամանակին բացահայտել այդ նպատակադրվածությունը, ինչը զգալի չափով պայմանավորեց Հայաստանի պարտությունը նաև դիվանագիտական ճակատում: Թուրքիայի հետ խաղաղության մասին բանակցություններ վարելու նպատակով կազմված պատվիրակության ղեկավար, նախկին վարչապետ և արտգործնախարար Ալեքսանդր Խատիսյանը հետագայում իր հուշագրություններում խոստովանելու էր. «...Մեր պատվիրակությունը կը կարծեր, որ թուրքերը կը ցանկանան կենսունակ Հայաստանի մը ստեղծումը, որը օգտակար էր իրենց պետական շահերու տեսակետեն, ինչպես որ այդ մասին շարունակ կը հայտարարեին թուրք պետական գործիչները»:

Հայաստանի դեմ պատերազմում քեմալականների տարած հաղթանակը արդյունք էր նաև Անտանտի և Մոսկվայի հետ նրանց վարած քաղաքական շփումների: Սկսած 1920թ. ամռանից և մանավանդ թուրք-հայկական պատերազմի սկզբնական փուլում քեմալականների ձեռք բերած հաջողություններից հետո Անկարայի և Լոնդոնի միջև ի հայտ էին եկել որոշ ընդհանուր եզրեր: Սկիզբ էր դրվել գաղտնի շփումների դիվանագիտությանը, իսկ մինչ այդ Անկարայի սերտ հարաբերությունները Մոսկվայի հետ սկսել էին որոշ չափով սառել, և շփումներն ընդունել էին անկանոն բնույթ: Թուրքական աղբյուրները նշում են, թե քեմալականները կարողացան ճիշտ գնահատել նոր ձևավորվող իրադրությունը և ճարպկորեն օգտվել դրանից: Հոկտեմբերի 21-ին Կոստանդնուպոլսում անգլիացիների հավանությամբ իշխանության էր եկել հիմնականում Մուսթաֆա Քեմալի կողմնակիցներից կազմված նոր կառավարություն, որը ցանկություն էր հայտնել պատվիրակություն ուղարկել Անկարա և բանակցություններ սկսել ազգայնականների կառավարության հետ: Քեմալականները ռուսների մոտ ստեղծեցին այն կարծիքը, որ այդ կառավարությունը, կատարելով անգլիացիների առաջադրանքը, պետք է ձգտի «Անատոլիայի շարժումը քաշել անգլիացիների կողմը՝ նրան կտրելով բոլշևիկյան ու իսլամական աշխարհներից»: Քեմալականների այդ քայլը հասավ իր նպատակին. բոլշևիկները սկսեցին ավելի «նրբանկատորեն» հարաբերվել իրենց դաշնակցի հետ և զիջումների գնալու ավելի մեծ պատրաստակամություն դրսևորեցին: Միաժամանակ, ԹԱՄԺ կառավարությունը ջանք չէր խնայում գաղտնի շփումների միջոցով և բոլշևիկյան Ռուսաստանի հետ իր դաշնակցային հարաբերությունների փաստը խաղարկելով՝

համաձայնության եզրեր գտնել անգլիացիների հետ: 1920թ. օգոստոսի կեսերից սկսած, այսինքն՝ Սևրի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո, Մուսթաֆա Քեմալն իր գաղտնի ներկայացուցիչների միջոցով փորձ է արել համաձայնության գալ անգլիացիների հետ՝ նույնիսկ խոստանալով նրանց հրամանատարության տակ դնել Քարաբեքիրի Կովկասյան բանակը և օգտագործել այն բոլշևիկների դեմ: Նշենք, որ Քեմալը փորձում էր ներազդել անգլիացիների վրա նաև Իտալիայի միջոցով, որի ներկայացուցիչների հետ նույնպես հաստատել էր գաղտնի կապեր: 1920թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին դրանք իրականացվում էին Քեմալի ոչ պաշտոնական ներկայացուցչի միջոցով: Սակայն արդեն նոյեմբերին նա Հռոմ ուղարկեց իր պաշտոնական ներկայացուցչին՝ ներքին գործերի նախարարին: Հռոմում սուլթանական կառավարության դեսպանորդ Ֆերուի բեյը հայտնում էր մայրաքաղաք, որ իտալական կառավարական շրջանակների կողմից այդ այցին տրվում է մեծ նշանակություն: Այդպիսով, Հայաստանի դեմ պատերազմում ապահովվեց առավել բարենպաստ դիվանագիտական մթնոլորտ ռազմավարական նշանակության նպատակներին հասնելու համար: Օգտագործելով այդ հանգամանքը՝ քեմալականները հրաժարվեցին հայ-թուրքական բանակցություններում Ռուսաստանի միջնորդությունից, ինչի համաձայնությունը նրանք նախօրոք տվել էին: Սակայն երբ պարզ դարձավ, որ Ռուսաստանն ավելի վճռական դիրքորոշում է որդեգրել և զորք է մտցնում Հայաստան, անմիջական շփման մեջ մտնելով Քարաբեքիրի բանակի հետ, այդ հնարքը ժամանակավորապես կորցրեց իր նշանակությունը և նույնիսկ սկսեց դիտարկվել որպես վտանգավոր հետևանքներով հղի:

Քեմալականներն օգտագործում էին նաև թուրք կոմունիստների առաջնորդ Մուսթաֆա Սուբհիին: Նա լիովին կիսում էր քեմալականների մոտեցումները Հայաստանի նկատմամբ, և Թուրքիայի նորաստեղծ կոմկուսը՝ Մուսթաֆա Սուբհիի ղեկավարությամբ, իրականում գործում էր որպես Հայաստանի դեմ քեմալականների ռազմական գործողություններին սատարող քարոզչական, լրահավաք և հետախուզական կառույց: Միաժամանակ, Մուսթաֆա Սուբհին միջնորդի դեր էր ստանձնել Բաքվում գտնվող ռուս բոլշևիկների ղեկավարների և քեմալականների ներկայացուցիչների միջև: Նա ոչ միայն կազմակերպել էր ԹԱՄԺ կառավարության՝ Բաքու ժամանած ներկայացուցիչ Մեմդուհ Շևքեթի հանդիպումը Ի. Ստալինի հետ, այլ նաև հնարավորություն էր ստացել ներկա լինել նրանց զրույցին:

Բնութագրելով թուրք-հայկական պատերազմի ժամանակ քեմալական ռազմական գործիչ Քյազիմ Քարաբեքիրի գործունեությունը՝ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նա, ըստ էության, խաղում էր երկակի խաղ: Ցուցադրելով հավատարմություն Մուսթաֆա Քեմալին՝ նա միաժամանակ չէր խզում կապերն այդ շրջանում ակտիվ գործունեություն ծավալած տխրահռչակ Էնվեր փաշայի հետ և նույնիսկ որոշ դեպքերում գործում էր համաձայն վերջինիս ցուցումների: Էնվերն իր հերթին ամեն կերպ աջակցում էր Քարաբեքիրին: Մասնավորապես, հայտնի երիտթուրք գործիչ Ֆուաթ Սաբիթը (Աղաջը) գործում էր որպես Քարաբեքիրի կապավոր և նրան զեկուցագրեր էր ուղարկում:

Հայաստանի դեմ պատերազմելու նպատակով ստեղծված Արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Քարաբեքիր փաշայի ղեկավարած բանակը, որին միացել էին բազմաթիվ զինված ավազակախմբեր, ներխուժեց Հայաստան՝ ամենուրեք տարածելով մահ ու ավերածություն: Այդ «հերոսությունների» համար Քարաբեքիրին շնորհվեց ֆերիքի (գեներալ-լեյտենանտի) զինվորական կոչում, իսկ պատերազմի ավարտից հետո նա պարգևատրվեց «Կանաչ և կարմիր ժապավեններով Անկախության մեդալով» և հանրապետական Թուրքիայի պաշտոնական պատմության տարեգրության մեջ մտավ որպես «Արևելքի նվաճող»: Անկախ հայացքներով աչքի ընկնող թուրք պատմաբան Ջեմալ Քութային ժամանակին Քարաբեքիրի գործունեությանը տվել է ավելի իրական գնահատական՝ այն բնութագրելով որպես «Հայաստանի ոչնչացում»:

Ամփոփելով նշենք, որ քեմալականները թուրք-հայկական պատերազմի ընթացքում ծավալել էին լայն ու բազմաբնույթ գործունեություն, որը, բացի ռազմական ոլորտից, ընդգրկում էր նաև դիվանագիտական և քարոզչական ոլորտները: Նրանց հաջողվել էր համախմբել ոչ միայն քեմալականների, այլ նաև երիտթուրքերի ու այլ քաղաքական-հասարակական շարժումների ներուժը և ուղղել այն Հայաստանի դեմ՝ միաժամանակ մեկուսացնելով նրան: Դրանով էր պայմանավորված նրանց հաղթանակը: Պատերազմի ընթացքում, ինչպես նաև հետագայում,

օկուպացնելով Հայաստանի Հանրապետության տարածքի մի զգալի հատվածը, քեմալականները սրի քաշեցին և Թուրքիա գերության տարան տասնյակ հազարավոր հայորդիների, մեծ վնաս հասցրեցին Հայաստանի տնտեսությանը:

5. Քեմալականների արտաքին քաղաքականությունը

Մուսթաֆա Քեմալի ղեկավարության ներքո ծավալվող շարժման հաղթանակն առաջին հերթին պայմանավորված էր ռազմի դաշտում արձանագրված հաջողություններով: Սակայն իր ուրույն տեղն ուներ նաև քեմալականների բազմակողմ արտաքին քաղաքականությունը: Ներկայացնելով պարտված երկրի ընդդիմադիր շարժումը, այսինքն՝ չունենալով արտաքին հարաբերություններ իրականացնելու համար անհրաժեշտ օրինականություն՝ նրանք կարողացան հմտորեն օգտագործել գոյություն ունեցող հակասությունները և շահերի բախումներն ինչպես Անտանտի երկրների և բոլշևիկյան Ռուսաստանի, այնպես էլ Անտանտի առանձին առաջատար անդամ պետությունների միջև: Դիվանագիտական այդ հնարների շնորհիվ նրանց հաջողվեց հասնել երեք կարևոր նպատակների.

1. ի տարբերություն Գերմանիայի, որն աշխարհամարտում նույնպես պարտված պետություն էր, Թուրքիային հաջողվեց խուսափել միջազգային մեկուսացումից,
2. ռազմի դաշտերում ձեռք բերված հաղթանակներն «օրինականացնել» պայմանագրերի տեսքով,
3. հասնել Սևրի պայմանագրի վավերացման գործընթացի վիժեցմանը:

Քեմալական շարժման ծավալման սկզբնական շրջանում օտար պետությունները նրան դեռ լուրջ չէին ընդունում և նախընտրում էին հարաբերություններ ունենալ միայն Օսմանյան կայսրության օրինական իշխանությունների հետ: Քեմալականներին մնում էր միայն հետևել միջազգային թատերաբեմում ծավալվող իրադարձություններին, խորհուրդներ տալ և քննադատել Կոստանդնուպոլսի կառավարությանը Անտանտի պահանջներին ենթարկվելու և կայսրության շահերին դավաճանելու համար:

Այսպես, օրինակ, մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշայի ղեկավարությամբ օսմանյան պատվիրակությանը, որը մասնակցում էր Փարիզի խաղաղության վեհաժողովին, Մուսթաֆա Քեմալը խորհուրդ էր տալիս պաշտպանել «ազգի շահերը» և պայքարել երկրի լրիվ անկախության համար, ինչպես նաև թույլ չտալ, որ թուրքերի շահերը «զոհաբերվեն» փոքրամասնությունների շահերին:

Քեմալականների արտաքին քաղաքականության ռազմավարության հիմքում դրվեց 1920թ. հունվարին ընդունված «Ազգային ուխտը», որը նրանց գործունեության գերագույն նպատակն էր ճանաչում բոլոր հնարավոր միջոցներով Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանումը, բացառությամբ արաբական շրջանների: Այդ նպատակին հասնելու համար հնարավոր էին դաշինքները ցանկացած երկրի, նույնիսկ վաղեմի թշնամիների հետ:

Ելնելով այդ մոտեցումից և հաշվի առնելով, որ Մեծ Բրիտանիան 1920թ. մարտի 16-ին գրավել էր մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը (հետագայում նրան միացավ նաև Ֆրանսիան), Մուսթաֆա Քեմալը նորաստեղծ ԹԱՄԺ կառավարության անունից նույն թվականի ապրիլի 26-ին նամակով դիմեց Խորհրդային Ռուսաստանի առաջնորդ Վլադիմիր Լենինին՝ խնդրելով դիվանագիտական հարաբերություններ հաստատել և օգնություն ցույց տալ, փոխարենը պարտավորվելով համագործակցել արևմտյան «իմպերիալիստական կառավարությունների» դեմ պայքարում: Այդ նամակը քեմալականների կառավարության առաջին պաշտոնական քայլն էր արտաքին հարաբերությունների թատերաբեմում: Արդեն մայիսին ԹԱՄԺ կառավարության ներկայացուցիչների պատվիրակությունը մեկնեց Մոսկվա, և սկսվեցին երկկողմանի բանակցությունները:

Քեմալականների և բոլշևիկների միջև հաստատված հարաբերություններն անհանգստացրին Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքար մղող Անտանտի երկրներին, առաջին հերթին Մեծ Բրիտանիային, որն սկսեց Անկարայի իշխանությունների հետ հարաբերություններ հաստատելու ուղիներ որոնել: Թուրքական դիվանագիտությունը՝ Մուսթաֆա Քեմալի ղեկավարությամբ, կարողացավ ճիշտ գնահատել նոր ձևավորվող իրադրությունը և ճարպկորեն օգտվել դրանից:

Սկսած 1920թ. ամռանից և մանավանդ հայ-թուրքական պատերազմի

սկզբնական փուլում քեմալականների ձեռք բերած հաջողություններից հետո Անկարայի և Լոնդոնի միջև սկիզբ դրվեց գաղտնի շփումների դիվանագիտությանը:

Քեմալականների և Ֆրանսիայի միջև նույնպես գաղտնի դիվանագիտությունը սկիզբ էր առել ավելի վաղ, դեռևս 1920թ. մայիսին, ինչը պայմանավորված էր Կիլիկիայում տեղակայված ֆրանսիական զինված ստորաբաժանումների ծանր դրությամբ: Արդյունքում՝ ֆրանսիացիները ստիպված էին զինադադար ստորագրել, որը դարձավ քեմալականների առաջին խոշոր դիվանագիտական հաջողությունը:

1920թ. դեկտեմբերի 2-ին քեմալականները ստորագրեցին Ալեքսանդրապոլի խաղաղության պայմանագիրը, որը նրանց առաջին միջազգային պայմանագիրն էր: Քեմալական դիվանագիտությունը 1921թ. էլ ավելի ակտիվացրեց իր գործունեությունը: Նրան հաջողվեց իր նպատակների համար օգտագործել ոչ միայն հակամարտությունն Անտանտի և Խորհրդային Ռուսաստանի միջև, այլ նաև հակասություններն Անտանտի ներսում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև: Խորամանկորեն օգտագործելով այդ հակասությունները՝ Անկարան ձգտում էր «օրինականացնել» ԹԱՄԺ կառավարությունը որպես Թուրքիայի միակ իշխանություն և հասնել Սևրի պայմանագրի վերանայմանը կամ էլ դրանից հրաժարմանը:

Գաղտնի բանակցությունների արդյունքում 1921թ. մարտին քեմալականները Ֆրանսիայի հետ ստորագրեցին միակողմանի քաղաքական, ռազմական ու տնտեսական լայնածավալ համաձայնագիր, որը սկիզբ դրեց Սևրի պայմանագրի վերանայմանը: Հետագայում, 1921թ. հոկտեմբերին, երկու կողմերի միջև ստորագրվեց Անկարայի պայմանագիրը, որով Ֆրանսիան ոչ միայն ճանաչեց ԹԱՄԺ կառավարությունը, ընդունեց իր ռազմական պարտությունը Կիլիկիայում և հրաժարվեց Թուրքիայի դեմ հետագա զինված պայքարից, այլ նաև համաձայնեց, որ պայմանագրի մեջ մտցվի հիշատակում քեմալականների «Ազգային ուխտի» վերաբերյալ՝ փաստացի անվավեր ճանաչելով Սևրի պայմանագիրը: Ավելին, պայմանագիրն ուներ գաղտնի կետեր, որոնք նախատեսում էին ֆրանսիական զենքի վաճառք թուրքերին: Անկարայի պայմանագիրը Մեծ Բրիտանիայի կողմից բնութագրվեց որպես դավաճանական արարք մերձավոր դաշնակից Ֆրանսիայի կողմից: Իսկ քեմալականների տեսակետից այն կարևոր դիվանագիտական հաղթանակ էր:

1921թ. քեմալական Թուրքիայի դիվանագիտությանը հաջողվեց լուրջ հաղթանակներ արձանագրել նաև ռուսների հետ հարաբերություններում՝ դրա համար խորամանկորեն օգտագործելով Խորհրդային Ռուսաստանի և Արևմուտքի միջև գոյություն ունեցող լարվածությունը: Ամենակարևորը, անտարակույս, մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված «բարեկամության և եղբայրության» պայմանագիրն էր Խորհրդային Ռուսաստանի հետ: Այն արդյունք էր շուրջ երեք շաբաթ տևած թուրք-ռուսական լարված բանակցությունների:

Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր արտաքին գործերի նախարար Յուսուֆ Քեմալը, ռուսականը՝ արտաքին գործերի նախարար Գեորգի Չիչերինը: Քանի որ բանակցություններում քննարկման կարևորագույն առարկան տարածքային հարցերն էին, որոնք անմիջականորեն առնչվում էին Խորհրդային Հայաստանին, ռուսական կողմը դրանց մասնակցելու նպատակով Մոսկվա էր հրավիրել նաև Խորհրդային Հայաստանի պատվիրակությանը՝ արտաքին գործերի նախարար Ալ. Բեկզադյանի ղեկավարությամբ: Սակայն թուրքական պատվիրակությանը հաջողվեց հասնել այն բանին, որ ռուսները հրաժարվեն իրենց նախնական գաղափարից և ընդունեն թուրքերի պահանջը՝ հայկական պատվիրակությանը թույլ չտալ մասնակցելու բանակցություններին: Այսպիսով՝ Հայաստանի տարածքային հարցերը քննարկվեցին և լուծվեցին առանց հայկական կողմի մասնակցության:

Բանակցությունների ընթացքում Ռուսաստանն ընդունեց որպես սկզբունք, որ Թուրքիայի սահմանները պետք է որոշվեն համաձայն «Ազգային ուխտի»: Դա նշանակում էր, որ տարածքային կորուստները Հայաստանի համար անխուսափելի էին:

Պայմանագիրը կազմված էր 16 հոդվածից և 3 հավելվածից: Կարևոր տեղ էին զբաղեցնում տարածքային խնդիրներին նվիրված հոդվածները, որոնցով, փաստորեն, որոշվում էին Թուրքիայի նոր սահմանները Հայաստանի ու Վրաստանի հետ: Խորհրդային Ռուսաստանն, ի հաշիվ վերջիններիս, առաջին հերթին, իհարկե, Հայաստանի, գնաց մեծ տարածքային զիջումների հօգուտ Թուրքիայի: Թուրքիային էին

անցնում Բաթումի մարզի հարավային մասը, Արդվինը, Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Թուրքիան նպաստեց նաև Ադրբեջանի տարածքի ընդլայնմանը՝ նույնպես ի հաշիվ Հայաստանի: Վերջինից անջատվում և որպես ինքնավար տարածք Ադրբեջանի իշխանության տակ էին անցնում Նախիջևանի գավառը, Շարուր-Դարալագյազի գավառի մեծ մասը, ինչպես նաև Երևանի գավառից մեկ հատված:

Այսպիսով, Հայաստանը, ըստ Մոսկովյան պայմանագրի, կորցնում էր իր տարածքի համարյա կեսը: Եվ դա՝ այն դեպքում, երբ նրա ներկայացուցիչները չէին մասնակցել բանակցություններին և չէին ստորագրել պայմանագիրը:

Թուրքական կողմը հասավ նաև այն բանին, որ Ռուսաստանը պարտավորություն վերցնի «դիմել քայլերի», որպեսզի անդրկովկասյան հանրապետությունները հետագայում Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրով ճանաչեն Մոսկովյան պայմանագիրը:

Այդ «քայլերի» արդյունքում Կարսում 1921թ. հոկտեմբերի 13-ին կնքվեց պայմանագիր Թուրքիայի և Անդրկովկասի երեք խորհրդային հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Պայմանագրի ստորագրմանը նախորդած բանակցություններին ակտիվ մասնակցում էր նաև Խորհրդային Ռուսաստանը, և նրա ներկայացուցիչը նույնպես ստորագրել էր պայմանագիրը:

Կարսի պայմանագիրը համարյա նույնությամբ կրկնում էր Մոսկովյան պայմանագրի դրույթները: Այն, ըստ էության, ամրագրեց քեմալական Թուրքիայի ծավալապաշտական զավթողական քաղաքականության արդյունքները, ինչպես նաև դիվանագիտական ոլորտում նրա հաջողությունների վկայությունն էր:

Ժամանակակից Թուրքիայում Մոսկվայի և Կարսի պայմանագրերը գնահատվում են որպես կարևոր դիվանագիտական հաղթանակ: Հայաստանում Կարսի պայմանագիրն ընկալվում է որպես անարդարացի և անօրինական, քանի որ այն արդյունք էր Մոսկովյան պայմանագրով հաստատված տարածքային խոշոր կորուստների, իսկ վերջինիս տակ Հայաստանի ստորագրությունը չկա:

Գրականություն լրացուցիչ ընթերցանության համար

1. Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002:
2. Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ. Երևան, 1970:
3. Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918թթ., Երևան, 1964:
4. Սաֆրաստյան Ռ., Թուրք-հայկական պատերազմի շրջանի թուրքական վավերագրեր (1920թ. նոյեմբեր). - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXV, Երևան, 2006, էջ 412-442:
5. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Երևան, 2009:
6. Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
7. Göze A., Türk Kurtuluş Savaşi ve Devrim Tarihi, İstanbul, 2006.
8. Zürcher E., The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement (1905-1926), Leiden, 1984.

ԳԼՈՒԽ Բ

ՔԵՄԱԼԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ (1923-1938ԹԹ.)

1. 1920-1930-ական թթ. բարեփոխումները

Մուսթաֆա Քեմալը որդեգրել էր արևմտյան քաղաքական հայեցակարգ, որի առանցքում ազգի գերիշխանության գաղափարն էր: Այն պետք է փոխարիներ օսմանյան շրջանի սուլթան-խալիֆի միապետական-աստվածապետական հայեցակարգին: Այսուհետ ոչ թե սուլթանն էր լինելու պետության տարածքների և հպատակների տերը, այլ ազգը:

Պետական և քաղաքական համակարգի փոփոխությունը Թուրքիայում սկսվել էր 1920թ. ապրիլի 23-ին, երբ Անկարայում գումարվեց Ազգային մեծ ժողովը: Ձևականորեն միապետությունը պահպանում էր իր գոյությունը. շարժման ղեկավարությունը չէր կարող բացահայտ հանդես գալ սուլթանի իշխանության դեմ: Քեմալական շարժման ավարտից հետո սուլթանության կարիքն այլևս չէր զգացվում: Այդ ինստիտուտի հետագա գոյությունն ուղղակիորեն սպառնում էր Մուսթաֆա Քեմալի իշխանությանը, որը նա ձեռք էր բերել շարժման ընթացքում և չէր պատրաստվում զիջել: Պետական իշխանության երկու կենտրոններից մեկը պետք է վերանար: 1922թ. նոյեմբերի 1-ին ընդունված որոշմամբ այդուհետև միակ գերագույն իշխանությունը երկրում հանդիսանում էին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը և նրա կառավարությունը: Վերջին սուլթան Մեհմեթ VI-ը անգլիական հածանավով լքեց երկիրը, սուլթանությունը հայտարարվեց վերացված, սակայն խալիֆայությունը դեռ պահպանվում էր՝ պատկանելով Օսմանյան սուլթանական տոհմին և խալիֆ դարձավ օսմանյան գահաժառանգ Աբդուլ Մեջիդը:

Քեմալը միանգամից չգնաց խալիֆայության վերացմանը՝ հաշվի նստելով այն հանգամանքի հետ, որ Լոզանի կոնֆերանսի ընթացքում Թուրքիան կարող էր օգտագործել իսլամական աշխարհի կենտրոն լինելու հանգամանքը Անգլիայի ու Ֆրանսիայի վրա ճնշման լծակներ ունենալու համար, քանզի նրանց գաղութների բնակչության մեծամասնությունը դավանում էր իսլամ: Բացի այդ, թուրքերի մեծամասնությունը դեռևս պատրաստ չէր նման քայլի:

1923թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիան հռչակվեց հանրապետություն: Այդ օրը Մուսթաֆա Քեմալը մեջլիսին ներկայացրել էր երեք կետից բաղկացած մի օրինագիծ. 1) թուրքական պետության կառավարման ձևը հանրապետությունն է, 2) թուրքական պետությունը ղեկավարվում է ԹԱՄԺ-ի կողմից, 3) ԹԱՄԺ իշխանությունն իրականացվում է հանրապետության նախագահի և նախարարների խորհրդի միջոցով: Թուրքիայի Հանրապետության հռչակումը և մեջլիսի կողմից Մուսթաֆա Քեմալին հանրապետության առաջին նախագահ ընտրելը թուրքական ազգային պետության հիմքերի ձևավորման կարևոր շրջափուլ դարձան: Չնայած մեջլիսի նախագահի պաշտոնում էլ Քեմալը հանդիսանում էր Թուրքիայի իրական ղեկավարը, սակայն հանրապետության նախագահի պաշտոնը թույլ էր տալիս նրան ստանալ ավելի մեծ իշխանություն, լեգիտիմություն և քաղաքական ու հասարակական աջակցություն: Կազմվեց նաև հանրապետության կառավարությունը՝ նախագահի հավատարիմ զինակից Իսմեթ փաշայի գլխավորությամբ:

Հանրապետության հռչակումը բացահայտ դարձրեց երկրում երկու գլխավոր քաղաքական խմբերի դիրքորոշումներն ու բախումը՝ խալիֆայության (իսլամականության) գաղափարի շուրջ համախմբվող պահպանողականների և իշխանությունը վերահսկող արմատականների կամ հանրապետականների միջև: Ու թեև սուլթանության վերացումից հետո էլ խալիֆայության պահպանման կողմնակիցները երկրում բավական ազդեցիկ ուժ էին, սակայն այդ պետական ինստիտուտի ճակատագիրն արդեն վճռված էր:

Մուսթաֆա Քեմալը նշում էր, որ «խալիֆայությունն այլևս որևէ այլ բան

չի կարող լինել, քան թե քաղաքակիրթ աշխարհի աչքերում մի ծաղրանք»: Իսկ Իսմեթ փաշան հիմնավորում էր խալիֆայության վերացումն այն հանգամանքով, որ չի կարելի թույլ տալ պետության մեջ պետության գոյությունը: 1924թ. մարտի 3-ին մեջլիսն ընդունեց օրենք խալիֆայության վերացման մասին, որով խալիֆ Աբդուլ Մեջիդ 2-րդը գահընկեց հայտարարվեց, իսկ Օսմանների ամբողջ ընտանիքը արտաքսվեց երկրից:

Խալիֆայության վերացման հետ միասին սկսվեց պետական և մշակութա-կրթական համակարգի աշխարհիկացման գործընթացը, քանի որ մյուս հայեցակարգային գաղափարը, որով ղեկավարվում էին քեմալականները, աշխարհիկ պետության դրույթն էր:

Աշխարհիկությունը (լայիցիզմը) համարվեց առաջընթացի չափանիշ: Թուրքիայում քաղաքական արդիականացման հիմնական խթաններն էին արտաքին մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությունը և արևմտյան գաղափարախոսական ու մշակութային տարածևի տարածումը: 1924թ. մարտի 3-ին մեջլիսն օրենք ընդունեց շարիաթի և վաքֆների նախարարությունը վերացնելու և դրա փոխարեն կրոնական գործերի վարչություն ստեղծելու մասին: Վարչության պետին նշանակում էր հանրապետության նախագահը: Նույն օրն ընդունված հաջորդ օրենքով բոլոր հոգևոր դպրոցները՝ «մեդրեսեներն» անցան կրթության նախարարության ենթակայության տակ: Արգելվեցին նաև դերվիշական եղբայրությունները, փակվեցին թեքեները (մուսուլմանական սրբավայրերը և դամբարանները), վաքֆները՝ կրոնական հողային կալվածքները, պետականացվեցին: Այս քայլերով Մ. Քեմալը հետևողականորեն քանդում էր պետության կրոնական հիմքը: Իսկ արդեն 1928թ. մեջլիսը սահմանադրությունից հանում է իսլամի՝ որպես Թուրքիայի պետական կրոնի վերաբերյալ կետը:

1924թ. ապրիլի 20-ին ընդունվեց հանրապետության առաջին սահմանադրությունը, որը բաղկացած էր վեց գլխից և 105 հոդվածից: Առաջին գլուխն ընդգրկում էր սահմանադրության ընդհանուր դրույթները: Դրանցում, մասնավորապես, իրենց արտացոլումը գտան քեմալական պետական հայեցակարգի հիմնական դրույթները՝ ազգի գերիշխանության և իշխանությունների միասնականության սկզբունքները: Հայտարարվում էր, որ գերիշխանությունն անվերապահորեն պատկանում է ազգին, որն իրականացվում է ազգի միակ ներկայացուցիչ հանդիսացող ԹԱՄԺ-ի կողմից, հռչակվում էր, որ օրենսդիր և գործադիր իշխանությունը մարմնավորված և կենտրոնացած է խորհրդարանում, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը, իսկ գործադիր իշխանությունը՝ իր կողմից հանրապետության նախագահի և նրա կողմից նշանակվող նախարարների խորհրդի միջոցով: Քեմալականները մերժեցին արևմտյան պետական կարգերի մեջ կիրառվող իշխանությունների տարանջատման սկզբունքը: Մուսթաֆա Քեմալի կարծիքով, «այն իշխանությունը և այն ուժը, որը մենք անվանում ենք «ազգային կամք», չի կարող բաժանվել կամ բաշխվել»: Քեմալը, ըստ էության, գիտակցում էր, որ Թուրքիայում իշխանությունների տարանջատման սկզբունքը կարող է առաջացնել բազում բարդություններ և չաշխատել: Ժողովրդավարական ավանդույթների ու նորմերի լիակատար բացակայության պայմաններում հնարավոր չէր ձևավորել իշխանության ճյուղերի բաժանում, որոնք ներդաշնակորեն կաշխատեին իրար հետ: Թերևս, այս դրույթն արձագանք էր իշխող վերնախավի այն մտավախությանը, որ իշխանությունների տարանջատման արևմտյան սկզբունքի կիրառումը Թուրքիայում կհանգեցներ պետական իշխանության ամբողջականության խախտմանը և երկրում քաղաքական ապակայունացմանը:

Սահմանադրության երկրորդ գլխում խոսվում էր ԹԱՄԺ դերի և լիազորությունների մասին: Այն ընտրվում էր ժողովրդի կողմից չորս տարին մեկ անգամ: Մինչև 1939թ. անց են կացվել վեց խորհրդարանական ընտրություններ: Դրանցից վաղաժամկետ են հանդիսացել միայն 1923թ. ընտրությունները: Այս փաստը վկայում է, որ թուրքական քաղաքական համակարգը ղեկավարվում էր քաղաքական կայունության պահպանման և որոշակի ավանդույթների արմատավորման սկզբունքներով: Թեև, իհարկե, էական դեր էր կատարում միակուսակցական համակարգի գործոնը, ինչը թույլ էր տալիս խուսափել խորհրդարանական ճգնաժամերից: Ազգային մեծ ժողովի լիազորությունների մեջ էին մտնում «օրենքների ընդունումը, հրապարակումը, փոփոխությունները, մեկնությունը և չեղյալ հայտարարելը, արտասահմանյան պետությունների հետ պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը, պատերազմ հայտարարելը և խաղաղության կնքումը, պետական բյուջեի մասին օրենքների քննարկումը և ընդունումը, մենատիրությունների և կոնցեսիաների մասին պայմա-

նագրերի հաստատումը և չեղյալ հայտարարելը, դատավճիռների գործողության կասեցումը, դատարանների կողմից ընդունված մահավճիռների հաստատումը» և այլն: Խորհրդարանն իրոք օժտված էր լայն լիազորություններով: Մուսթաֆա Քեմալի կարծիքով, այն պետք է պահեր ամբողջ իշխանությունն իր ձեռքում և թույլ չտար սեփական լիազորությունների որևէ սահմանափակում: Նա նաև դեմ էր, որպեսզի հանրապետության նախագահը կամ կառավարությունն ունենա մեջլիսը ցրելու իրավասություն. «Ոչ ոք չունի ձեզ արձակելու իրավունք»: Իհարկե, սա զուտ հռչակագրային հայտարարություն էր, քանի որ նույն հանրապետության նախագահը լիովին վերահսկում էր խորհրդարանն իր կողմից ղեկավարվող կուսակցական մեծամասնության միջոցով, հետևաբար, նա կարող էր այնտեղ անցկացնել ցանկացած որոշում, այդ թվում և ինքնալուծարման մասին:

Վերոհիշյալ հանգամանքով էլ պայմանավորված էր նաև այն, որ մեջլիսը, որը կոչված էր վերահսկելու կառավարության գործունեությունը և քննարկելու նրա գործողությունները, սահմանափակվում էր դրանց հավանություն տալով: Եթե առաջին մեջլիսում գոյություն ունեին մի քանի խմբավորումներ, ընթանում էին լուրջ բանավեճեր և քննարկումներ, ապա երկրորդ գումարման մեջլիսն արդեն ավելի վերահսկելի էր նախագահի կողմից՝ այնտեղ ճնշող մեծամասնություն կազմող Հանրապետական-ժողովրդական կուսակցության խմբակցության միջոցով: Փաստորեն, 1920-1930-ական թթ. Թուրքիայի Ազգային մեծ ժողովը գործադիր իշխանությանը կից մարմին էր, որը միաձայն հաստատում էր պետության ղեկավարության և կուսակցական ապարատի կողմից պատրաստված որոշումները: Հանրապետության նախագահն ընտրվում էր ԹԱՄԺ-ի կողմից՝ չորսամյա ժամկետով: Սահմանադրությամբ հանրապետության նախագահին տրվող լիազորություններն այնքան էլ լայն չէին: Պետության ղեկավարը չուներ այն իրավունքները, որոնք սովորաբար գոյություն ունեն նախագահական կառավարման համակարգում: Նախագահին վերապահված էին վարչապետի նշանակումը և վերջինիս ներկայացմամբ՝ նախարարների նշանակումն ու ներկայացումը մեջլիսի հաստատմանը, ինչպես նաև կառավարության ընդհանուր գործունեության ղեկավարումը, երկրին սպառնացող որևէ վտանգի դեպքում արտակարգ դրության հայտարարումը, դեսպանների նշանակումը: Սակայն այս դրույթները չեն վկայում քննարկվող ժամանակաշրջանում նախագահի իրական դերի և կշռի մասին: Հենց Քեմալն էր իշխանական ամբողջ բուրգի գագաթը: Կառավարության կազմի մեջ մտնում էին միայն նախագահին հավատարիմ մարդիկ, իսկ եթե նրանցից որևէ մեկը համարձակվում էր դժգոհություն հայտնել, նա անմիջապես հեռացվում էր իր պաշտոնից: Հանրապետության նախագահն ամենևին էլ չէր կատարում պետության ղեկավարի զուտ ձևական գործառույթները, ինչպես դա ընդունված է խորհրդարանական պետական համակարգ ունեցող երկրներում:

Հանրապետության կառավարությունը՝ նախարարների խորհուրդը, նշանակվում էր նախագահի կողմից մեջլիսի անդամների կազմից, ինչից հետո այն մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնում էր իր գործունեության ծրագիրն Ազգային մեծ ժողովին՝ վստահության քվե ստանալու համար:

Սահմանադրության չորրորդ գլուխը վերաբերում էր դատական իշխանությանը: Դատարանը Թուրքիայի Հանրապետությունում հռչակվում էր անկախ, դատական որոշումներն ու վճիռները ոչ մեջլիսը, ոչ էլ կառավարությունն իրավասու չէին փոխել: Սակայն իրականում դատարանները ևս ենթակա էին հանրապետության քաղաքական ղեկավարության կամքին, ինչի օրինակ կարող են ծառայել 1926թ. տեղի ունեցած Իզմիրի դավադրության գործի հետ կապված դատավարությունները, որոնք կրում էին որոշակի պատվերի բնույթ և անցան արդարադատության կարգի խախտմամբ:

Հինգերորդ գլուխն անդրադառնում է Թուրքիայի քաղաքացիների իրավունքներին: Հռչակվեցին բոլոր թուրքերի հավասարությունն օրենքի առաջ, անհատի անձեռնմխելիությունը, խղճի, մտքի, խոսքի, մամուլի, տեղաշարժման, աշխատանքի, սեփականության, հանրահավաքների, միավորումներ ստեղծելու իրավունքներն ու ազատությունները: Սակայն կառավարությունը հարկ եղած դեպքում, օրինակ՝ պատերազմի կամ դրա սպառնալիքի, խռովության, հայրենիքի կամ հանրապետության դեմ դավադրության կազմակերպման դեպքերում վերապահում էր իրեն անհատի անձեռնմխելիությունը, իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու կամ ժամանակավորապես դադարեցնելու լիազորությունը: Այս կետի կիրառումը դարձավ քեմալական ժամանակաշրջանի համար

ոչ թե բացառություն, այլ՝ օրինաչափություն: Մասնավորապես, սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման օրինակ կարող է ծառայել 1925թ. մարտի 4-ին մեջլիսում ընդունված «Կարգուկանոնի պահպանման մասին» օրենքը, որով իշխանությունները լայն և բացառիկ լիազորություններ էին ստանում: Օրենքը գործեց իր ընդունումից հետո մոտ երկու տարի և փաստորեն հիմք ծառայեց ամբողջ քաղաքական ընդդիմության ճնշման և ջախջախման համար:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ձևականորեն Թուրքիան խորհրդարանական հանրապետություն էր, սակայն իրականում թե՛ սահմանադրության, թե՛ գլխավոր ինստիտուտների դերը, տեղը և կշիռը մեծ մասամբ պայմանավորված էին երկրի առաջնորդի անձով և իշխող կուսակցության դիրքով:

Դրա հետ մեկտեղ՝ 1924թ. սահմանադրությունն ունակ եղավ գործելու և միակուսակցական համակարգի պայմաններում (մինչև 1946թ.), և պառլամենտական ժողովրդավարությանն անցման փուլում (1946թ. հետո):

Ինչ վերաբերում է ևս մեկ կարևոր քաղաքական ինստիտուտին՝ ընտրությունների համակարգին, ապա այն մինչև 1946թ. գործում էր 1877թ. ընդունված ընտրական կանոնադրության հիման վրա, իհարկե՝ որոշ փոփոխություններով: Ընտրությունները տեղի էին ունենում երկաստիճան փուլով. սկզբից հանրապետության քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիներն ընտրում էին 50.000 պատվիրակ, որոնք այնուհետև արդեն ընտրում էին ԹԱՄԺ պատգամավորներին: Մեջլիսի պատգամավորներն ընտրվում էին մեկ ընտրատարածքից, այսինքն՝ գործում էր մեծամասնական ընտրական համակարգ:

Մինչև 1930թ. ընտրական իրավունք ունեին միայն թուրք տղամարդիկ՝ սկսած 18 տարեկան հասակից, 1930թ. ընտրելու իրավունք է տրվում նաև կանանց՝ սկզբում ՏԻՄ, իսկ 1934-ից՝ նաև խորհրդարանական ընտրություններում: Ընտրվելու իրավունք ունեին 30 տարեկան տղամարդիկ, եթե չեն եղել դատված, չեն գտնվել օտարերկրյա ծառայության մեջ և անգրագետ չէին: 1934թ. նույն իրավունքները տարածվեցին նաև թուրք կանանց վրա: 1920-1930-ական թթ. Թուրքիայում ընտրական համակարգն ամենևին էլ չէր հանդիսանում քաղաքական իշխանության ձևավորման մեխանիզմ: Մինչև 1950թ. Թուրքիայում կիրառվող ընտրությունների պրակտիկան, ըստ էության, զրոյի էր հավասարեցնում հանրապետության սահմանադրության մեջ հռչակված ժողովրդական իշխանության գաղափարը: Ընտրողներն էլ, պատվիրակներն էլ միայն հաստատում էին պատգամավորության թեկնածուների այն ցուցակը, որն իրենց ներկայացնում էր Հանրապետական-ժողովրդական կուսակցության ղեկավարությունը: 1927 թվականից մինչև 1946 թվականն ընկած ժամանակահատվածում մեջլիսի պատգամավորների մոտ 2/3-ն անընդհատ վերընտրվել է: Հետևաբար, այդ տարիներին հաստատված միակուսակցական համակարգի պայմաններում ընտրություններն ավելի շատ նման էին նշանակումների, քան թե իսկական ընտրությունների: Իշխող կուսակցության հաղթանակն այդպիսի ընտրություններում կանխորոշված էր, իշխանությունը փաստորեն ընտրում էր ինքն իրեն:

Փոփոխություններ տեղի ունեցան նաև իրավական համակարգում: 1926թ. Թուրքիան ընդունեց նոր, շվեյցարականի օրինակով մշակված քաղաքացիական օրենսգիրք, որը վերացնում էր բազմակնությունը: Քաղաքացիական օրենսգրքին հետևեց իտալականի վրա հիմնված քրեական նոր օրենսգիրքը: Առևտրական օրենսգրքի համար էլ օրինակ էր ծառայել գերմանականը:

Օրենսդրական բնագավառում արված փոփոխությունները նպատակ ունեին երկիրը վերջնականապես դուրս բերել շարիաթական իրավական ավանդույթներից և ուղի հարթել Թուրքիայի արևմտյան զարգացման համար: Երկրի արևմտականացման ճանապարհին կարևոր քայլերից էր մուսուլմանական հիջրայի օրացույցի փոխարինումը գրիգորյան օրացույցով: Դրա հետ միաժամանակ, մտցվում էր նաև ժամանակի միջազգային համակարգը, իսկ մուսուլմանների համար սրբազան ուրբաթ օրվա փոխարեն պարտադիր հանգստյան օր ընդունվեց կիրակին: Մտցվեց նաև թվերի և չափումների միջազգային համակարգը (1925-1931թթ.):

Մի շարք բարեփոխումներ կիրառվեցին կենցաղի բնագավառում, մասնավորապես հատուկ օրենք ընդունվեց ֆեսի արգելման, դրա փոխարեն՝ եվրոպական գլխարկ և հագուստ կրելու վերաբերյալ (Şapka Kanunu - 25 նոյեմբերի 1925թ.): Ինչ վերաբերում էր կանանց հագուստին, ապա կրոնական գլխաշորն օրենքով չէր արգելվում, սակայն Քեմալն իր ընտանիքի անձնական հագուկապի օրինակով, ինչպես նաև կանանց հավասար

իրավունքներ տալով (1926-1934թթ.) ջանում էր խրախուսել թրքուհիների «ազատականացումը» ևս՝ որպես հասարակության զարգացման և արդիականացման անհրաժեշտ պայման:

1934թ. հունիսի 21-ին ընդունվեց ազգանունների մասին օրենք: Մինչ այդ թուրքերն ունեին միայն անուն, ինչն անչափ դժվարացնում էր որևէ հաշվառումի իրականացումը: Այժմ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր էր իր համար ընտրել ազգանուն: Օրինակ, Իսմեթ փաշան, ի նշան հույների դեմ Ինյոնյու բնակավայրում տարած հաղթանակի, ստացավ այդ ազգանունը: ԹԱՄԺ հատուկ օրենքով (24 նոյեմբերի 1934թ.) Մուսթաֆա Քեմալին շնորհվեց Աթաթյուրք՝ «թուրքերի հայր» պատվավոր ազգանունը: Նշենք, որ նույն օրենքով արգելվեց որևէ մեկին ևս կրել այդ ազգանունը: Բոլոր այս բարեփոխումները կրոնական-համայնական համակեցությունից աշխարհիկ-ազգային համակեցության անցում կատարելու կարևորագույն քայլերից էին և ազդարարում էին, որ ազգաշինության գործում հնարավորինս լռեցվում է նախկինում գերակայող կրոնի գործոնը: Բայց, միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ քեմալական վարչակարգի համար լայիցիզմը մերժում էր իսլամի՝ որպես «պետական կրոնի» կարգավիճակը:

Աթաթյուրքը պնդում էր, որ «ժամանակակից Թուրքիան ասիական պետություն չէ» և որ «ազգերի համաշխարհային ասպարեզում տեղ զբաղեցնելու հավակնող պետությունը չի կարող այլևս հենվել կրոնական հիմքերի ու օրենքների վրա»: Դրա հետ մեկտեղ, Թուրքիայում աշխարհիկ բարեփոխումներն ուղղված էին ավելի շատ ոչ թե պետությունից կրոնի անջատմանը, այլ պետական համակարգի կողմից կրոնական կյանքի վրա վերահսկողության սահմանմանը:

Սակայն, ի հեճուկս բոլոր բարեփոխումների, իսլամը մնում էր Թուրքիայի քաղաքական կյանքի կարևորագույն գործոններից մեկը: Թուրքիայի Հանրապետության պատմության սկզբնական փուլում իսլամի՝ որպես պետական կրոնի մերժման հանգամանքը դարձավ պետության և հասարակության զգալի, եթե ոչ գերակշիռ մասի միջև ճեղքվածքի առաջացման պատճառ: Քաղաքային և առավել ևս գյուղական բնակչության մեծամասնությունը շարունակում էր ընկալել իսլամը որպես հասարակական-քաղաքական և անձնական կյանքի գերակայող ուժ: Հետևաբար, արմատավորված քաղաքական ավանդույթների բացակայության պայմաններում որևէ քաղաքական բողոք կամ զայրույթ վերևից փաթաթվող բարենորոգումների դեմ արտահայտվում էր կրոնական պահպանողականության բառապաշարով՝ միակ լեզվով, որը հասու էր ժողովրդի մեծամասնությանը: Այդ դիմադրության վկայություն կարող են հանդիսանալ Ռիզեում (1925թ.), Իզմիրում և Մենեմենում (1930թ.), Բուրսայում (1933թ.) տեղի ունեցած հակակառավարական ելույթները: Կրոնը փաստորեն դարձավ քաղաքական ուժերի միջև այն բաժանարար գիծը, որը բնորոշում էր քաղաքական պայքարի առանձնահատկությունները Թուրքիայում նաև հետագա տասնամյակներում:

Նոր սերնդի ձևավորման, ինչպես նաև հասարակության ազգային, մշակութային և սոցիալ-քաղաքական միասնության ապահովման ճանապարհին ընկած կարևորագույն խնդիրներից էր ազգային պատմության՝ որպես միասնության գիտակցման կարևորագույն բաղադրատարրի, վերանայման անհրաժեշտությունը: Այդ ուղղությամբ արված առաջին քայլը 1927թ. հոկտեմբերին տեղի ունեցած ՀԺԿ համագումարում Մուսթաֆա Քեմալի ելույթն էր, որը հայտնի է «Ճառ» (Nutuk) անվամբ: Այն ներկայացնելու համար պահանջվեց վեց օր, իսկ Քեմալն ընդհանուր առմամբ խոսեց 36 ժամ 31 րոպե: Այդ ելույթի առաջին նախադասությունը («1919թ. մայիսի 19-ին ես ափ իջա Սամսունում») դարձավ քեմալական պատմագրության մեկնակետը: Այդ տարեթիվը ներկայացվեց որպես ջրբաժան հնի և նորի միջև: «Ճառ»-ում ներկայացվեցին նաև 1919 թվականից հետո տեղի ունեցած մի շարք իրադարձությունների, անձանց ու ներքաղաքական գործընթացների այնպիսի մեկնաբանություններ, որոնք կամ կեղծում էին պատմությունը, կամ այն ներկայացնում էին ձևախեղված և միակողմանի: «Ճառ»-ում ներկայացված դրույթները և պատմական փաստերի մեկնաբանությունները հետագա տասնամյակների ընթացքում դարձան թուրքական պատմագրության հիմնասյունը: Գրվեցին մի շարք այլընտրանքային պատմություններ և ինքնակենսագրություններ (օրինակ՝ Քարաբեքիրի, Ջեբեսոյի, Ադըվարի և այլոց կողմից), սակայն դրանց հրատարակումն արգելվեց, և միայն 1960-ական թթ. հետո թույլատրվեց դրանք տպագրել:

Քեմալը 1931-1932թթ. նախաձեռնեց Թուրքական պատմագիտական ընկերության (Türk Tarih Kurumu) և Թուրքական լեզվաբանական ընկերության (Türk Dil Kurumu) հիմնումը: Դրանց խնդիրն էր Թուրքիայի վերաբերյալ պատմագիտական, լեզվաբանական և գրականագիտական բոլոր հետազոտությունների համախմբում-վերամշակումը՝ որպես ազգային ինքնության կառուցակազմման գլխավոր գրավականներ: Քեմալ Աթաթյուրքի նոր թուրքական ազգային ինքնության կառուցակազմման ճանապարհին արված կրթական բարեփոխումների շարքում կարևոր միջոցառումներից էր այբուբենի բարեփոխումը՝ նախկին արաբագրությունից անցումը լատինագրի: Այբուբենի հետ կապված որոշակի բարեփոխումներ անցկացնելու փորձեր ձեռնարկվել էին նախկինում ևս: Լատինագիր այբուբենին անցնելու համար վճռորոշ նշանակություն ունեցավ Մուսթաֆա Քեմալի 1928թ. օգոստոսի 9-ի ելույթը Գյուլհանեում, որում նա մասնավորապես շեշտադրեց. «Քաղաքացիներ, մենք պետք է նոր այբուբենն ընդունենք հանուն մեր սքանչելի, հարուստ լեզվի: Մենք պետք է ձերբազատվենք անհասկանալի նշաններից, որոնց երկարյա մամլակների ներքո ճզմվել է մեր միտքը հընթացս դարերի... Քաղաքացիներ, անմիջապես ձեռնամուխ եղեք նոր թուրքերեն տառերը սովորելուն: Համարեք այն որպես հայրենասիրական ազգային պարտականություն»: Արդեն 1933թ. լատինագիր թուրքերեն է թարգմանվում Ղուրանը: Շուտով բարձրանում է բնակչության գրագիտության հարցը, ուստի ընդլայնվում են ուսումնական հաստատությունների ցանցերը, բացվում նոր բարձրագույն հաստատություններ: Ամենուրեք հիմնվում են ուսուցչական դասընթացներ, բացվում են «ազգային դպրոցներ»՝ նոր այբուբենը և քերականությունը սովորելու և յուրացնելու նպատակով: Նշենք, որ Թուրքիայում ոչ մուսուլման բնակչության շրջանում գրագետների թիվն ավանդաբար ավելի բարձր էր: Լեզվական բարեփոխումներն ընդգրկում էին նաև «լեզվի վերաթուրքացումը»՝ մաքրումը փոխառնված արաբա-պարսկական ծագում ունեցող բառերից և դրանց փոխարինումը թուրքական արմատներ ունեցողներով: Բառերի նոր գրության, ինչպես նաև լեզվի ընդհանուր բարեփոխման համար հիմք հանդիսացավ Ստամբուլի բարբառը: Թուրքական լեզվաբանական ընկերությունը պետք է զբաղվեր թուրքերենի վերաթուրքացման և ժամանակակից դարձնելու հարցերով: Թուրքական

լեզվաբանական ընկերության գլխավոր մասնագետ և առաջին գլխավոր քարտուղար է եղել Հակոբ Դիլաչարը (Հակոբ Մարթայան): 1934թ., երբ ընդունվել է ազգանունների մասին օրենքը, թուրքերենի ուսումնասիրությունների մեջ ունեցած նշանակալի ավանդի համար Աթաթյուրքը նրան շնորհել է «Դիլաչար» («Լեզու բացող») ազգանունը: Պետք է նշել, սակայն, որ Դիլաչարն իր «Թուրքական պատմության թեզ», «Արևային լեզվի տեսություն» և այլ աշխատություններով նպաստել է թուրք պատմագրության և լեզվաբանության մեջ ազգայնական ուղղության կայացմանը: Համարվում է, որ հենց նա է Թուրքիայի Ազգային մեծ ժողովին առաջարկել Մուսթաֆա Քեմալին տալ «Աթաթյուրք» ազգանունը և որ նա է հեղինակել Աթաթյուրքի ստորագրությունը:

Ստեղծվում է նաև «նոր պատմական հայեցակարգը», որի գլխավոր դրույթներն ընկնում են «Պատմություն» («Tarih») քառահատոր գրքի հիմքում: Հետագայում այն վերածվում է պատմության դասագրքի: Թուրքական ազգային ինքնության վերիմաստավորումը քեմալական վերնախավի առջև ծառացած առավել դժվար խնդիրներից մեկն էր: Եվ քանի որ այն իրականացվում էր քեմալական «ազգայնականության» համատեքստում՝ աստիճանաբար ուռճանալով վերածվեց ազգայնամոլության, ըստ որի և դիտարկվում էր թուրքերի ողջ պատմությունը: Պաշտոնական քառահատոր «Պատմության» մեջ հայտարարվում էր, որ մարդկային քաղաքակրթության «սկզբնավորողն ու ջահակիրն» է թուրքը, գիտակցաբար կեղծվում և չափազանցվում էր թուրքերի դերը համաշխարհային պատմության և քաղաքակրթության մեջ, ասվում էր, որ թուրքերն են ստեղծել առաջին քաղաքները, առաջին գրերը և այլն: Անշուշտ, այս իրողությունն իր բացասական ազդեցությունը թողեց թուրք ազգի ինքնության կառուցակազմման վրա: Թուրք ազգային ինքնության քեմալական տարբերակը Թուրքիայի Հանրապետության ողջ տարածքով մեկ բոլորին հասանելի դարձնելու համար օգտագործվում էին դեռևս երիտթուրքերի ժամանակներում գործող «թուրքական օջախների» («Türk Ocaklari») ցանցի հիման վրա ստեղծված «ժողովրդական տները» («Halk Evleri»): «Ժողովրդական տների» գլխավոր նպատակն էր արդիականացումը տարածել բոլոր բնագավառների վրա: Ըստ Քեմալ Աթաթյուրքի՝ «այս օջախների միջոցով մշակույթի, գիտության և տեխնիկայի ոլորտներում

գիտելիքների քարոզչությունը նպաստելու է Թուրքիայի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի հետագա բարելավմանը»: Այսպիսով, քանի որ Մուսթաֆա Քեմալի առաջնահերթ խնդիրներից էր օսմանյան և մուսուլմանական անցյալից պոկված նոր հասարակության կազմավորումը, ուստի կրթության բնագավառում իրականացված միջոցառումների շարքը, այն է՝ կրթության կրոնական մենաշնորհի վերացումը, թուրքերենի լատինատառ այբուբենին անցումը, պատմության հետնախորքի վրա ազգային հիշողության վերակազմակերպումը և այս ամենի սոցիալականացումը կոչված էին հաղթահարելու անցյալի հետ «քաղաքակրթական ճեղքվածքը»:

Քեմալի նախաձեռնությամբ հրատարակված «Թուրքական պատմության հիմնական ուղղությունները» աշխատությունը պարունակում էր ծայրահեղ ազգայնամոլական, ազգային բացառիկություն սերմանող և պատմական իրականությունը խեղաթյուրող բազմաթիվ օրինակներ: Հետևյալ մեջբերումը դրանցից մեկն է. «Մեր նախնիները, որ մեծ տերություններ են ստեղծել, դարձան նաև մեծ քաղաքակրթությունների ստեղծողներ: Մեր պարտքն է հետազոտել, ուսումնասիրել և թուրք ժողովրդին ու ողջ աշխարհին պատմել այդ մասին: Եթե թուրք երեխաներն իմանան իրենց նախնիների մեծագործությունները, նրանք իրենց մեջ ուժ կգտնեն ավելի կարևորագույն գործեր իրականացնելու համար»:

Նշված երկու ընկերությունները ստեղծված էին իրագործելու հետևյալ երեք նպատակները.

1. Անատոլիայի և Արևմտյան Հայաստանի տարածքում Թուրքիայի Հանրապետության օրինականացում,
2. իսլամի զատման և նոր ազգային ինքնության ձևավորում, կառուցակազմում,
3. Անատոլիայում և Արևմտյան Հայաստանում թուրքերի բնիկ և հնագույն քաղաքակրթությունների հիմնադիրներ լինելու գաղափարի ամրագրում:

Հետպատերազմյան անհաղթահարելի թվացող սոցիալ-տնտեսական իրողությունները քեմալական առաջնորդներին ստիպում էին պետական կապիտալն ուղղել տնտեսության վերակենդանացման համար խիստ հրատապ խնդիրների լուծմանը: Քեմալականների կառավարությունը թե անմիջականորեն էր մասնակցում արդյունաբերական և բանկային ոչ լայնածավալ շինարարությանը, թե հովանավորչական օրենսդրական միջոցներ ձեռնարկում, ձգտում մենաշնորհ սահմանել արտադրության կարևոր ճյուղերի և որոշ ապրանքների ներմուծման նկատմամբ: Խնդիրների լուծմանն էին ուղղված արդյունաբերության զարգացման պետական երկու ծրագրերը (1933-1937թթ.): Այս առումով հատկանշական է Իսմեթ Ինյոնյուի պնդումն այն մասին, թե կառուցողական էտատիզմը նշված ժամանակահատվածում Թուրքիայում կյանքը վերականգնելու միակ միջոցն էր: Ազգային-կրոնական փոքրամասնությունների և նրանցից սերած գործարարների դեմ թուրքական այլատյաց իշխանությունների իրականացրած «արտակարգ միջոցառումները» (կոտորած, տեղահանություն, բռնագրավում, կանխամտածված ունեզրկմանը նպատակաուղղված հարկեր և այլն) հիրավի ընթացել են տնտեսության «թուրքացման» ծիրում, ինչն անքակտելիորեն կապված է պետականորեն կազմակերպված ցեղասպանական քաղաքականությանը:

2. Ավտորիտար վարչակարգի հաստատումը

Ազգայնամոլական շարժման առաջին օրերից ի վեր Մուսթաֆա Քեմալը ձգտում էր մեջլիսում ունենալ համախմբված մեծամասնություն՝ հենարան ի դեմս քաղաքական կուսակցության: Դեռևս 1920թ. փետրվարի 2-ին Թալեաթ փաշային Բեռլին ուղարկած իր նամակում Քեմալը գրում էր, որ աշխատելու է ստեղծել մեջլիսում ուժեղ մի կուսակցություն, որը կդեկավարի կառավարության գործունեությունը: Բանն այն է, որ Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության կրած պարտությունից հետո իթթիհադականները բաժանվել էին մի շարք խմբավորումների: Մի խումբը համագործակցում էր սուլթանական իշխանությունների հետ, երիտթուրք պարագլուխներից բաղկացած մյուս խումբը փախել էր արտասահման, իսկ երրորդը կազմել էր ազգայնամոլական շարժման կորիզը: Վերջինն էլ, իր հերթին, բաժանվում էր ենթախմբավորումների, որոնցից մեկը նպատակ ուներ պահպանել սահմանադրական միապետությունը, այնինչ Մուսթաֆա Քեմալն ու իր համախոհները հանրապետության կողմնակից էին:

1923թ. ապրիլի 8-ին Մուսթաֆա Քեմալը հրապարակեց նորաստեղծ

Ժողովրդական կուսակցության (Halk Fırkası) 9 սկզբունքները, որոնք դարձան այս կուսակցության նախընտրական ծրագրի հիմքը: Դրանց մեջ խոսվում էր ազգի գերիշխանության սկզբունքի, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ որպես ազգի իշխանության միակ ներկայացուցչի, երկրի անվտանգության և խաղաղության ապահովման պարտականության, դատական ու ֆինանսական համակարգերի բարեփոխման, գյուղատնտեսության վերակառուցման, զինվորականության նյութական վիճակի բարելավման, պետական հիմնարկությունների աշխատանքի կատարելագործման, մասնավոր ձեռնարկատիրության խրախուսման մասին:

ԹԱՄԺ-ում առաջին քաղաքական խմբավորման կազմավորումը սկսվել էր դեռևս 1921թ. մայիսին «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության խմբի» ստեղծման ժամանակ: Մուսթաֆա Քեմալի ղեկավարության տակ գտնվող այս խումբը ստացել էր «Առաջին խումբ» անվանումը, որը, սակայն, բավարար ամուր դիրքեր և ուժ չուներ Քեմալի ծրագրերի իրագործման համար: Ավելին, շուտով ԹԱՄԺ-ում ձևավորվեց «Իրավունքների պաշտպանության երկրորդ խումբը»՝ որպես Մուսթաֆա Քեմալի ընդդիմություն: 1923թ. հունվարի 6-ին Քեմալը հրապարակեց վերոհիշյալ ընկերությունների հիմքի վրա Ժողովրդական կուսակցության (1924-ից այն վերանվանվեց Հանրապետական ժողովրդական կուսակցություն) ստեղծման մասին հռչակագիրը: 1923թ. գարնանը և ամռանը Մուսթաֆա Քեմալը շրջում էր երկրում ու բացատրում նորաստեղծ կուսակցության անդամներին, որ Ժողովրդական կուսակցությունը Թուրքիան ժամանակակից աշխարհի մեջ մտցնելու և այնտեղ նրա վերելքն ապահովելու առաքելությունն ունի և որ Ժողովրդական կուսակցությանը բացառիկ դեր էր վերապահվում երկրի քաղաքական համակարգում: Մուսթաֆա Քեմալի համոզմամբ՝ ԺԿ ստեղծումը կառավարելի և հնազանդ մեջլիս ձևավորելու, մեջլիսի վրա լիակատար վերահսկողություն հաստատելու համար անհրաժեշտ քայլ էր: 1923թ. հուլիս-օգոստոսին կայացած Թուրքիայի Ազգային մեծ ժողովի երկրորդ ընտրություններում խորհրդարանական 283 մանդատից ԺԿ-ն ստացավ 263-ը, ընդ որում, ընտրություններից առաջ Քեմալի կողմից հաստատված բոլոր թեկնածուները պարտավոր էին ստորագրել ԺԿ «Ինը սկզբունքների» տակ: Այդ ընտրությունների միջոցով քեմալականները քաղաքական ասպարեզից դուրս մղեցին ընդդիմադիր «Իրավունքների պաշտպանության ընկերությունների երկրորդ խմբին» և ամրապնդեցին իրենց դիրքերը: Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) բավական բարդ կառուցվածք և ապարատ ուներ, ինչը պայմանավորված էր ՀԺԿ ինչպես զանգվածային կազմակերպություն լինելու, այնպես էլ նրա կողմից պետական փաստացի կառավարումն իրականացնելու հանգամանքներով: ՀԺԿ նախագահը միաժամանակ համագումարի, կուսակցական խորհրդի, գլխավոր վարչության և մեջլիսում կուսակցական խմբակցության նախագահն էր: Իշխանության այսպիսի կենտրոնացումն արտացոլում էր Մուսթաֆա Քեմալի ուժեղ իշխանական համակարգի մասին պատկերացումները և բացառում էր նրա համար որևէ մրցակցի կամ այլընտրանքային ուժի առաջացման հնարավորությունը: Նա իրավասու էր ներկայացնել ամբողջ ՀԺԿ-ն և խոսել կուսակցության անունից: Այսպիսով, ՀԺԿ կառուցվածքը կրում էր խիստ կենտրոնացված և ավտորիտար բնույթ, դրանից էլ բխում էր կուսակցական ղեկավարության ձեռքերում քաղաքական և պետական հսկայական իշխանության կենտրոնացումը: Կուսակցության մեջ նախագահից հետո կարևոր դեր էին կատարում ՀԺԿ նախագահի տեղակալը և գլխավոր քարտուղարը, որոնք նշանակվում էին նախագահի կողմից: Դրանք, բնականաբար, վերջինիս հավատարիմ մարդիկ էին, ինչպես, օրինակ, Իսմեթ Ինյոնյուն կամ Ռեջեփ Փեքերը:

Երբ ՀԺԿ կազմավորման շրջանում Մուսթաֆա Քեմալի որոշ նախկին զինակիցների կողմից բարձրացվեց հանրապետության նախագահի և ՀԺԿ նախագահի պաշտոնների բաժանման հարցը, նա պատասխանել էր. «Ժողովրդական կուսակցությունն ընդգրկում է իր մեջ ամբողջ ազգը, նրա ծրագիրն ամբողջ ազգի ծրագիրն է: Ես կտրուկ ձևով հայտարարում եմ, որ ինձ համար պատվի հարց է մնալ միաժամանակ նրա առաջնորդը և պետության նախագահը»: Նա հայտարարում էր, որ «Ժողովրդական կուսակցությունը միակ քաղաքական կուսակցությունն է երկրում: Մրցակից կուսակցություններ կամ տեսություններ գոյություն ունենալ չեն կարող»: Այդ պատճառով էլ տրամաբանական էր ՀԺԿ ղեկավարության անհանդուրժողական վերաբերմունքը ցանկացած ընդդիմության նկատմամբ՝ պետության և կուսակցության միասնականացման պայմաններում:

Նման քաղաքական մոդելը, սակայն, հանդիպեց դիմադրության: 1924թ. նոյեմբերին կազմավորվում է առաջին ընդդիմադիր՝ Առաջադիմական-հանրապետական կուսակցությունը (Terakkiperver Cumhuriya Firkasi): ԺԿ որոշ անդամներ տեղյակ չէին պահվել հանրապետություն հռչակելու Քեմալի մտադրության մասին: Այդ որոշումը, ինչպես նաև Մուսթաֆա Քեմալի՝ հանրապետության նախագահ ընտրվելու փաստը նրանք դիտում էին որպես վերջինիս կողմից իշխանության հանդեպ մենատիրական հավակնությունների դրսևորում: Առաջացած հակասությունների պատճառով մի շարք գործիչներ լքեցին կուսակցությունը և որոշեցին ստեղծել նոր կուսակցություն: Առաջադիմական-հանրապետական կուսակցությունը (ԱՀԿ) մեջլիսում ուներ մոտ երեսուն հոգանոց ընդդիմադիր խմբակցություն: Կրոնական պահպանողականության և ազատականության հողի վրա հավաքված Մուսթաֆա Քեմալի ընդդիմախոսները՝ «Իթթիհադի» մնացորդներ, առաջին մեջլիսում «Իրավունքների պաշտպանության ընկերությունների» երկրորդ խումբը կազմած նախկին պատգամավորներ, կրոնականներ, պահպանողականներ, ազատականներ, Ստամբուլի մամուլի ներկայացուցիչներ, որոշ զինվորականներ, համախմբվեցին Առաջադիմական-հանրապետական կուսակցության շուրջ և մշակեցին 9 հոդվածներից բաղկացած մի նախագիծ, որի գլխավոր պահանջն էր սուլթանության ու խալիֆայության վերականգնումը: Կուսակցության ծրագիրը մշակվել էր Քարա Քեմալի կողմից, կուսակցության նախագահ էր ընտրվել Քյազըմ Քարաբեքիրը, իսկ տեղակալներ՝ Հյուսեյն Ռաուֆ Օրբայը և Ալի Ֆուատ Ջեբեսոյը: Կուսակցության հիմնադիրների մեջ էին նաև «Իթթիհադի» այնպիսի ղեկավարներ, ինչպիսիք էին կրթության նախկին նախարար Շյուքրյու Բլեդան, ներքին գործերի նախկին նախարար Իսմայիլ Ջանֆոլադը և այլք:

Առաջադիմականներն իրենց մոտեցումներով առանձնապես չէին տարբերվում հանրապետականներից: Նախ, հարկ է նշել, որ ԱՀԿ ղեկավարությունը նույնպես կազմում էր ազգայնամոլական շարժման այն կորիզը, որը համախմբվել էր Քեմալի շուրջը: Առաջադիմական կուսակցության ստեղծման մեջ որոշակի դեր ունեցան անձերի հակադրությունները, մասնավորապես՝ Ռաուֆի և Իսմեթի, ինչպես նաև Քարաբեքիրի և Մուսթաֆա Քեմալի միջև, բացի այդ, առկա էին նաև արմատական սկզբունքային տարաձայնություններ: Առաջադիմականները հակված էին դեպի սահմանադրական միապետության և ուժեղ խորհրդարանական համակարգի հաստատումը, ինչպես նաև քաղաքական իշխանության ավելի մեծ բաշխումը կուսակցությունների միջև: Նրանց հռչակագրում նշվում էր, որ ստեղծված իշխանական համակարգը «հնարավորություն է տալիս բռնապետության ձևավորման համար», այդ պատճառով «անհրաժեշտ է մեջլիսում հակակշիռների և վերահսկող խմբերի, տարբեր կուսակցությունների ստեղծումը»: Առաջադիմականների ծրագիրը պարունակում էր ազատական ժողովրդավարությանը բնորոշ այնպիսի հայտարարություններ, ինչպիսիք էին իշխանությունների տարանջատումը, քաղաքացիական ազատությունների անձեռնմխելիությունը, ձեռնարկատիրության նախաձեռնության ազատությունը, ինչպես նաև ավելի հարգալից վերաբերմունքը կրոնական համոզմունքների ու դավանանքի նկատմամբ: Իհարկե, առաջադիմականները չէին կարող բացահայտ հանդես գալ «հայրենիքի փրկչի» փառքն ունեցող Քեմալի դեմ: Սակայն կուսակցական ծրագրի 12-րդ կետն անուղղակիորեն ակնարկում էր Մուսթաֆա Քեմալին. «Հանրապետության նախագահ ընտրված անձը պետք է թողնի իր տեղը մեջլիսում և չեզոք լինի կուսակցական քաղաքականությունից»: Այսպիսով, ԱՀԿ ստեղծումը հնարավորություն էր ընձեռում Թուրքիայում երկրորդ կուսակցության միջոցով ձևավորել իրական խորհրդարանական համակարգ և հակակշիռ՝ ընդդեմ պետական իշխանության կենտրոնացմանը մեկ անհատի ձեռքում: Քեմալը սկզբից ևեթ թշնամաբար էր տրամադրված նոր կուսակցությանը՝ համարելով, որ իրեն շատ բանով պարտական ընդդիմության ղեկավարները «երախտամոռ դուրս եկան»: Բացահայտ առճակատումից խուսափելով՝ Քեմալը գնաց որոշ մարտավարական փոխզիջումների: Առողջական խնդիրների պատրվակով նա Ի. Ինյոնյուին ազատեց վարչապետի պաշտոնից և նրա տեղը նշանակեց չափավոր հայացքներով հայտնի և ԱՀԿ ղեկավարների հետ մոտ հարաբերություններ ունեցող Ալի Ֆեթհիին:

Չնայած իր կարճ գոյատևման ընթացքում ԱՀԿ-ն մնում էր համեմատաբար փոքր կուսակցություն, սակայն նրան հաջողվեց դառնալ բավական ազդեցիկ ուժ՝ իր առաջնորդների հեղինակության ու ժողովրդա-

կանության, ինչպես նաև ստամբուլյան մամուլի աջակցության շնորհիվ: Նման ուժի հետ նախագահը ստիպված էր հաշվի նստել, քանի դեռ ընդդիմությունը վերացնելու համար նրան հարմար առիթ չէր ընծեռվել: Նման առիթ հանդիսացավ 1925թ. գարնանը արևելյան նահանգներում բռնկված քրդական ապստամբությունը՝ Շեյխ Սայիդի գլխավորությամբ: Մուսթաֆա Քեմալը հայտարարում էր, որ քրդական խռովության պատճառներից մեկն այն էր, որ «ԱՀԿ-ն առաջ էր քաշում կրոնական կարգախոսներ և արևելյան վիլայեթներ ուղարկում իր պատվիրակներին»: Քեմալը մեղադրում էր առաջադիմականներին այն բանում, որ նրանք նորից բարձրացնելով իսլամի դրոշը և կրոնական մոլեռանդությունը խրախուսելով՝ ազգն ու հանրապետությունն առաջընթացի և նորացման դեմ էին հանում: ԹԱՄԺ-ում ելույթ ունենալով՝ Քեմալը հայտարարում էր, որ ԱՀԿ-ն «հայրենիքում հետադիմականների ապաստանն ու հենարանն» էր դարձել և «օգնում էր արտաքին թշնամիներին կենսագործել նորաստեղծ թուրքական պետությունը, մանուկ հանրապետությունը քայքայելուն ուղղված պլանները»: Իրականում Քեմալի պնդումներն իրականությանն այնքան էլ չէին համապատասխանում: ԱՀԿ-ն, իհարկե, առիթը բաց չէր թողնում այս կամ այն սխալի համար քննադատել կառավարությանը, սակայն քրդական ապստամբության ընթացքում լիովին աջակցում էր իշխանություններին՝ այն ճնշելու ջանքերում: Քյազըմ Քարաբեքիրը, օրինակ, հայտարարեց, որ քաղաքական նպատակներով կրոնն օգտագործողները դավաճաններ են, և վտանգի առջև «բոլոր թուրքերը պետք է պատրաստ լինեն մեկ մարդու պես պաշտպանելու երկիրը»: Այսպիսով, չնայած գաղափարական տարաձայնություններին, ոչ թուրք ազգային, փոքրամասնությունների իրավունքների ճնշման հարցում թե՛ հանրապետականները, թե՛ առաջադիմականները նույն դիրքերում էին կանգնած: 1925թ. փետրվարին ԱՀԿ ղեկավարությունը վարչապետ Այ Ֆեթհիի կողմից նախազգուշացվեց, որ կուսակցությունը պետք է լուծարվի, քանի որ հակառակ դեպքում կարող է «արյուն թափվել»: Երբ Իսմեթ փաշան վերադարձավ Անկարա, որպեսզի կրկին զբաղեցնի վարչապետի պաշտոնը, նա հեռացող Ֆեթհիին հայտարարեց, որ «այլևս ընդդիմության գոյության որևէ կարիք չկա»:

ԱՀԿ-ն արգելվեց 1925թ. հունիսի 3-ի կառավարության որոշմամբ՝ «Կարգուկանոնի պահպանման մասին» օրենքի հիման վրա: Փակվեցին նաև ԱՀԿ թերթերը, մոտ 150 առաջադիմական ձերբակալվեց, որոշ ղեկավարներ՝ Ռաուֆը, Ադնանը, արտաքսվեցին երկրից: Ինչպես այսօրինակ ցանկացած որոշում, իշխող վարչակարգն իր այդ քայլը քողարկեց երկրում անվտանգության և կարգուկանոնի պահպանման մղումով, մինչդեռ ԱՀԿ-ն, ըստ էության, օրենքի որևէ լուրջ խախտում չէր կատարել, իսկ ԱՀԿ առաջնորդների մեղսակցությունը քրդական ապստամբության հրահրման մեջ հիմնավոր կերպով այդպես էլ չապացուցվեց:

Թուրքիայի Հանրապետության կայացման պատմության մեջ Առաջադիմական կուսակցության հետ կապված իրադարձությունները բեկումնային պահ հանդիսացան՝ իշխանության համար մղվող պայքարի և երկրի զարգացման ուղիների ընտրության առումով: Իշխանության համար պայքարն իր վերջնական լուծումը գտավ 1926թ. դեպքերի ժամանակ: 1926թ. հունիսին Իզմիրում բացահայտվեց Մուսթաֆա Քեմալի դեմ մահափորձ նախապատրաստող խումբ, որի գլուխ կանգնած էին երիտթուրքական կուսակցության որոշ նախկին անդամներ: Ուշագրավ է, որ նախապատրաստվող դավադրության մասին Քեմալն ավելի վաղ գիտեր, սակայն անմիջապես միջոցներ չէր ձեռնարկել, քանի որ որոշել էր օգտագործել այդ մահափորձը՝ ամբողջ ընդդիմության հետ վերջնական հաշվեհարդար տեսնելու համար: Վերակազմավորվեցին դեռևս ազգայնամոլական շարժման տարիներին գործող Անկախության դատարաններն (İstiklal Mahkemeleri) Անկարայում և շրջիկ դատարանն Իզմիրում: Անկախության դատարաններն օժտվեցին արտակարգ իրավասություններով: 1925-1927թթ. ընթացքում այդ դատարանները մոտ 130 մահվան դատավճիռ կայացրին: Իզմիրի և Անկարայի դատավարությունների արդյունքում մոտ երեք տասնյակ երիտթուրքական գործիչ հանրապետության սահմանադրական կարգերի և Ազգային մեծ ժողովի կառավարության դեմ դավադրություն կազմակերպելու մեղադրանքով դատապարտվեցին մահապատժի կախաղանի միջոցով, այդ թվում՝ դոկտոր Նազիմը, Խուրշիդը, Ջանֆոլադը, Քարա Քեմալը (որն ընկնելով շրջափակման մեջ՝ ինքնասպանություն գործեց), Արիֆը (որը

Քեմալի համհարզն էր պատերազմի տարիներին), Ջավիդը, Հիլմին և ուրիշներ: Ռաուֆ բեյը հեռակա կարգով ազատագրկվեց տասը տարով, մյուս առաջադիմականներն ազատ արձակվեցին: Ուշագրավ է այն փաստը, որ Անկախության դատարանի կողմից ներկայացված մեղադրանքների մի մասը, ինչպես, օրինակ, առանց հիմնավոր պատճառի երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, Առաջին աշխարհամարտի տարիներին տնտեսական չարաշահումներ և այլ հանցագործություններ կատարելու խնդիրները, կրկնում էին 1919թ. երիտթուրք պարագլուխների դատավարությունների ժամանակ Ռազմական արտակարգ ատյանների կողմից բարձրացված հարցերը: Օրինակ, դոկտոր Նազըմի՝ Անկարայի դատավարության շրջանակներում կատարված հարցաքննության ժամանակ վերջինս խոստովանեց, որ «Իթթիհադի» պարագլուխների փախուստի պատճառ են եղել Հայկական հարցը՝ քրիստոնյաների ոչնչացումն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, և այդ հարցի համար պատասխանատվությունից խուսափելու ցանկությունը: Սակայն այդ հարցերը տեղ չգտան մեղադրական դատավճիռների մեջ, ինչը մեկ անգամ ևս ապացուցում է քեմալական վարչակարգի ժխտողական վերաբերմունքը հայկական խնդիրների նկատմամբ:

1926թ. դատավարություններն ու նրանց հաջորդած մահապատիժները, անշուշտ, կրում էին քաղաքական հետապնդումների բնույթ, որով վերացվեցին երկրի քաղաքական վերնախավում գոյություն ունեցող ինչպես բոլոր մրցակից խմբերը, այնպես էլ ընդդիմության գործունեության համար անհրաժեշտ բոլոր մեխանիզմները:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ հանրապետական Թուրքիայի քաղաքական համակարգի ձևավորման և զարգացման մեջ զգալի դեր կատարեց նախորդ՝ երիտթուրքական ժամանակաշրջանը, որի հետ 1919-1922թթ. ազգայնամոլական շարժումն ու հանրապետությունն ունեին թե՛ քաղաքական, թե՛ կադրային, թե՛ գաղափարախոսական կապ: Երիտթուրքերի գաղափարախոսական ազդեցությունը զգացվում էր հատկապես ազգայնականության (կամ թյուրքիզմի) սկզբունքների որդեգրման մեջ, իսկ քաղաքական ընդհանրությունը միակուսակցական բյուրոկրատական-զինվորական վարչակարգի հաստատումն էր: Եվ հենց երիտթուրքական շրջանում հրապարակ եկավ զինվորական բյուրոկրատական-մտավորական այն վերնախավը, որի մտածելակերպն ու մեթոդների կիրառումն իրենց շարունակությունը գտան քեմալական շրջանում: 1919-1922թթ. ազգայնամոլական շարժման և 1923թ. հռչակված Թուրքիայի Հանրապետության համար հողը նախապատրաստվել էր հենց երիտթուրքական շրջանում, և ինչպես արդարացիորեն նշում են շատ հետազոտողներ՝ «քեմալիզմի պատմական ծագումը հարկավոր է փնտրել երիտթուրքական կուսակցության ընդերքում...»: Դրա վկայությունն այն էր, որ մինչև 1960-ական թթ. երկիրը ղեկավարել են երիտթուրքական շարժման հետ կապված երեք նախագահ, հինգ վարչապետ, մեջլիսի մի քանի նախագահներ, արտաքին և ներքին գործերի նախարարներ: 1923թ. «Հաքիմիեթի Միլլիյե» թերթին տված հարցազրույցում Քեմալը նշում էր. «Մենք բոլորս էլ եղել ենք «Իթթիհադի» անդամներ»: Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքը և նրա զինակիցները՝ Իսմեթ Ինյոնյուն, Ալի Ֆուաադ Ջեբեսոյը, Քյազըմ Քարաբեքիրը, Ալի Ֆեթհի Օքյարը, Ռաուֆ Օրբայը, Ֆևզի Չաքմաքը, Ջելալ Բայարը և ուրիշները, հանդիսանում էին «Իթթիհադի» զինվորական վերնախավի երկրորդ էշելոնի ներկայացուցիչներ: Բազմաթիվ երիտթուրքական գաղափարախոսներ՝ Զիյա Գյոքալփը, Թեքին Ալփը, Յուսուֆ Աքչուրան, Ահմեդ Աղաօղլուն, Յունուս Նադին, Ֆուաադ Քյոփրյուլյուն, քեմալական շրջանում ևս նշանակալի դեր էին կատարում երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Թեև Քեմալ Աթաթյուրքը խուսափում էր նման կապի հիշատակումներից՝ հայտարարելով, թե «ոչ մեր գործունեությունը, ոչ էլ մեր ազգային շարժումը չունեն որևէ ընդհանրություն իթթիհադականության հետ», մյուս կողմից՝ նա գտնում էր, որ ոչ բոլոր իթթիհադականներն էին պատասխանատու Առաջին աշխարհամարտում կատարվածի համար, այլ միայն նրանց «փոքր մի խումբ, որն իր վատ կառավարմամբ ու չարաշահումներով երկիրը հասցրեց կործանման եզրին»:

Երիտթուրքական և քեմալական ժամանակաշրջանների միջև ժառանգական կապը ոչ միայն կադրային էր, այլև, ինչպես նշվեց, գաղափարախոսական: Հիշատակության արժանի է այն կարծիքը, որ «իր քաղաքական գաղափարներով Քեմալ Աթաթյուրքը եղել է երիտթուրքերի, հատկապես նրանց ազգայնամոլական, պոզիտիվիստական և արևմտականացված թևի ժառանգորդը»: Պատահական չէ, որ քեմալական շրջա-

նում, օրինակ, կյանքի կոչվեցին ազգային միատարրության հիմքի վրա քաղաքական և պետական համակարգի ստեղծման երիտթուրքական ազգայնամոլական գաղափարները, ինչպես նաև երկրում բնակվող այլազգիներին ճնշող և հետապնդող ռեժիմ հաստատվեց:

Քեմալական վարչակարգը որոշ իմաստով իթթիհադականի շարունակությունը դարձավ նաև քաղաքական համակարգի տարածևի առումով: 1908թ. մինչև 1918թ. Թուրքիայում գերիշխող էր մեկ՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը: Այն, որ միակուսակցական համակարգի ավանդույթը հանրապետական Թուրքիայում ժառանգվել էր երիտթուրքական շրջանից, հաստատվում է այնպիսի երևույթներով, ինչպիսիք էին կուսակցական մարմիններում իշխանության կենտրոնացումը, քաղաքացիական ազատությունների արհամարհումը կամ խիստ հսկողության տակ ընտրությունների անցկացումը, որոնք իրենց տեղն էին գտել «Իթթիհադի» կառավարման օրոք: Ինչպես «Իթթիհադի», այնպես էլ ՀԺԿ իշխանության շրջաններում Թուրքիայում տեսականորեն գոյություն ուներ խորհրդարանական կառավարման համակարգ, թեև գործնականում ստեղծվել էր միակուսակցական բռնապետություն: Որպես քեմալական քաղաքական արդիականացման գաղափարական կողմնորոշիչ կարելի է բերել վարչապետ Իսմեթ Ինյոնյուի 1930թ. հայտնած այն կարծիքը, թե «Թուրքիայում ազատական ժողովրդավարությունը կվերջանար կամ սուլթանական-խալիֆայական վարչակարգի վերականգնմամբ, կամ անիշխանությամբ և քաղաքացիական պատերազմով»: Այսինքն՝ քաղաքական արդիականացման ոլորտում քեմալականները նախընտրեցին գնալ ոչ թե ազատական ժողովրդավարության, այլ, ելնելով երիտթուրքական փորձից, կուսակցապետական նմուշաձևի հաստատման ճանապարհով:

Բացի այդ, «Իթթիհադի» իշխանական առանցքը կազմում էին բանակի բարձրաստիճան սպաները, և այդ ավանդույթը պահպանվեց նաև հանրապետական Թուրքիայի քաղաքական կյանքում: 1920-1930-ական թթ. քաղաքական և պետական իշխանությունը Թուրքիայում փաստորեն պատկանում էր գեներալիտետի ներկայացուցիչներին, որոնց շարքում, Քեմալ Աթաթյուրքից բացի, կարելի է հիշատակել մարշալ Ֆևզի Չաքմաքին, գեներալներ Իսմեթ Ինյոնյուին, Ռեջեփ Փեքերին, Ֆեթհի Օքյարին: Մինչև 1950թ. զինվորականները մշտապես կազմում էին մեջլիսի

պատգամավորների 15-20 տոկոսը: Ավելին, Աթաթյուրքը փաստորեն բանակի վրա դրեց հանրապետության «սկզբունքների և իդեալների» պահապանի ու դրանց կենսագործման երաշխավորի դերը: Զինվորական ու քաղաքական ոլորտների բաժանումը հանրապետությունում այդպես էլ չդարձավ լիարժեք, ինչը հետագա ժամանակաշրջանում արտահայտվեց ռազմական հեղաշրջումներով և քաղաքական գործընթացներին զինվորականների պարբերական միջամտություններով:

1920-ական թթ. վերջին իրավիճակն իշխանությունների համար այնքան էլ բարենպաստ չէր՝ տնտեսական ճգնաժամը և իշխող կուսակցության չարաշահումները, ինչպես նաև ժողովրդի կրած զրկանքները պարարտ հող էին ստեղծում նոր ընդդիմության ձևավորման համար: Այդ պայմաններում Քեմալը որոշեց կառավարելի ընդդիմության կազմավորման միջոցով թուլացնել կուտակված լարվածությունը: 1930թ. օգոստոսին նախկին վարչապետ և Մուսթաֆա Քեմալի մտերիմ ընկեր Ալի Ֆեթհին նամակ հղեց հանրապետության նախագահին, որտեղ քննադատում էր կառավարության տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը՝ նշելով, որ խորհրդարանում բացակայում է ազատ քննադատության մթնոլորտը և առաջարկում էր ստեղծել նոր՝ Ազատական-հանրապետական կուսակցություն (Serbest Cumhuriyet Firkasi) (ԱզՀԿ), որը կնպաստեր այդ մթնոլորտի ձևավորմանը: Նրա կարծիքով, դա կօգներ նաև երկրում որոշ չափով ազատության մթնոլորտի ձևավորմանը: Ֆեթհին հատկապես շեշտում էր, որ թեև ստեղծվող կուսակցությունը ՀԺԿ-ի հետ տարաձայնություններ ունի ֆինանսատնտեսական, ներքին ու արտաքին քաղաքականության որոշ կետերում և պատրաստ է դրանցում քաղաքական պայքարի մեջ մտնել, բայց այն լիովին հանրապետական ու աշխարհիկ է լինելու: Բնական է, որ նոր կուսակցությունը ստեղծվում էր Մուսթաֆա Քեմալի ցանկությամբ և համաձայնությամբ: Ավելին, Ազատական-հանրապետական կուսակցությունը կազմավորվում էր Քեմալի անդրկուլիսյան մասնակցությամբ: Բացի այդ, Մուսթաֆա Քեմալը Ֆեթհիին 70-80 մանդատ էր խոստացել ապագա մեջլիսում:

Բայց իրադարձությունները զարգացան չնախատեսված հունով: Սոցիալական իրավիճակը երկրում բավական ծանր էր, և դժգոհությունն իշխող վարչակարգից այնքան մեծ էր, որ Ազատական-հանրապետական

կուսակցության ստեղծումն ազգաբնակչության մեջ մեծ աշխուժություն և ոգևորություն էր առաջ բերել: ՏԻՄ ընտրություններից առաջ երկրում Ալի Ֆեթհիի շրջագայության ժամանակ նրան ամենուրեք դիմավորում էին կանաչ իսլամական դրոշներով, ընդունում որպես «անաստված հանրապետության» դեմ հավատքի պաշտպանի, հռչակում էին «չար հանրապետությունից ժողովրդի ազատարար»: Փաստորեն, որոշակի համախմբում տեղի ունեցավ նորաստեղծ կուսակցության շուրջը՝ այն դարձնելով բողոքական տրամադրությունների և իշխող վարչակազմի դեմ դժգոհությունների խորհրդանիշ: Բացի այդ, նոր կուսակցությունն առաջ էր քաշում բնակչության համար գրավիչ մի քանի գաղափարներ: 1930թ. սեպտեմբերին հրապարակված ԱզՀԿ ծրագրի առանցքային կետերն էին տնտեսական ոլորտի նկատմամբ պետական վերահսկողության թուլացման, կաշառակերության և իշխանական չարաշահումների դեմ պայքարի, մամուլի և խոսքի ազատության գաղափարները: Իշխող վարչակարգի՝ ԱզՀԿ-ի նկատմամբ դիրքորոշման կոշտացումն արտահայտվեց 1930թ. հոկտեմբերին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, որոնք պետք է դառնային ՀԺԿ-ի և ԱզՀԿ-ի միջև առաջին լուրջ քաղաքական մենամարտը: Սակայն ներքին գործերի նախարար և ՀԺԿ գլխավոր քարտուղար Ռեջեփի՝ վիլայեթական մարմիններին ուղղված «ամեն գնով ՀԺԿ հաղթանակն ապահովելու» կարգադրությունն ընդդիմության համար բացառում էր որևէ հաջողություն: Արդյունքում՝ ընտրություններն անցան ՀԺԿ և ոստիկանության բիրտ ճնշման և հսկողության տակ, ինչից հետո Ֆեթհին իշխող վարչակարգը բնութագրեց որպես «օլիգարխիկ» և «ամբողջատիրական»:

1930թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նորաստեղծ կուսակցությունն իր ցուցակում ընդգրկեց փոքրամասնությունների 13 ներկայացուցչի Ստամբուլից, որոնցից 6-ը հույն էր, 4-ը՝ հայ, 3-ը՝ հրեա: Ուշագրավ է, որ սա դարձավ ներքաղաքական բուռն քննարկումների առարկա, և իշխող ՀԺԿ-ն իր հակաքարոզչության մեջ մեծ տեղ հատկացրեց այդ հանգամանքին՝ էլ ավելի բորբոքելով առանց այդ էլ ազգայնամոլական տրամադրություններ ունեցող թուրքական հասարակությանը: Մասնավորապես՝ ըստ իշխանությունների կողմից տարվող հակաքարոզչության, եթե Ազատական-հանրապետական կուսակցությունը հաղթի, ապա ի հայտ է գալու Հայոց ցեղասպանությունից (իրենց բնորոշմամբ՝ 1915թ. հայերի տեղահանությունից) և 1923թ. հույների փոխանակումից հետո մնացած և այդ փոքրամասնություններին պատկանող լքյալ գույքերի վերադարձի հարցը: Այսինքն՝ Հայոց ցեղասպանության ընթացքում և դրանից հետո պետականորեն իրականացված թալանի հարցը կրկին դարձավ թուրքական քաղաքական վերնախավի ու հասարակության անհանգստության առարկա:

Քեմալի դիրքորոշումը ճշտելուց հետո Ֆեթհին հայտարարեց, որ ստեղծված իրավիճակում «լավագույն ելքն» է լուծարել կուսակցությունը: Այսպիսով, երկրորդ ընդդիմադիր կուսակցությունը ևս կարճ կյանք ունեցավ: ԱզՀԿ լուծարումից հետո ՀԺԿ մենիշխանությունը 15 տարվա ընթացքում մնում էր անսասան՝ չունենալով որևէ մրցակից ուժ կամ այլընտրանք: Սակայն Ազատական-հանրապետական կուսակցությունը կարելի է որոշ չափով համարել տասնհինգ տարի անց կազմավորված նոր ընդդիմադիր ուժի՝ ժողովրդավարական կուսակցության նախադեպը:

1931թ. ամռանը տեղի ունեցավ ՀԺԿ 3-րդ համագումարը, որն ազդարարեց Թուրքիայի պետական և քաղաքական կյանքի նոր փուլի սկիզբը: Կուսակցությունը հայտարարեց, որ իր վրա է վերցնում ազգի անունից իշխելու իրավունքն ու պարտականությունը, ինչը բացահայտ էր դարձնում իշխող վարչակարգի ավտորիտար, անգամ տոտալիտար հակումները: Որոշ հետազոտողների վկայությամբ, այդ տարիներին Աթաթյուրքի վրա մեծ ազդեցություն էին թողել եվրոպական ֆաշիզմի, մասամբ էլ ռուսական կոմունիզմի տարածները, որտեղ ամեն մի նախաձեռնություն իրականացվում էր կուսակցության հովանու տակ: Ժամանակաշրջանի պետական քաղաքականության ձևակերպում կարելի է համարել «մեկ կուսակցություն, մեկ ազգ, մեկ առաջնորդ» կարգախոսը:

ՀԺԿ 3-րդ համագումարն ընդունում է կուսակցության նոր ծրագիրը, որի հիմքում դրվում են քեմալիզմի հենասյուները՝ Հայրենիքը, Հանրապետությունը և Ազգը, ու վեց «նետերը»՝ սկզբունքային դրույթները. հանրապետականությունը (cumhuriyetçilik), ժողովրդականությունը (halkçilik), ազգայնականությունը (milliyetçilik), լայիցիզմը (laiklik), էտատիզմը (etatism/devletçilik) և հեղափոխականությունը (devrimcilik):

Հանրապետականության հիմնարար սկզբունքը մերժում էր սուլթա-

նական միապետության իշխանության ձևը: Ըստ այդ սկզբունքի՝ ժողովրդի գերիշխանության իրականացման իրավունքը կարող է պատկանել միայն կառավարման հանրապետական ձևին:

Ժողովրդականության սկզբունքը հոչակում էր, որ Թուրքիայի Հանրապետության ժողովուրդը բաղկացած չէ առանձին դասակարգերից, այլ բաժանվում էր տարբեր մասնագիտությունների պատկանող անձանց: Այս սկզբունքի մեջ Ք. Աթաթյուրքը տեղադրում էր ազգային համերաշխության և իրար հակադրվող դասակարգային շահերի բախման բացակայության հասկացությունները, ինչը կարելի է դիտարկել որպես տվյալ ժամանակաշրջանում տարածված դասակարգային պայքարին հակազդելու փորձ:

Ազգայնականության սկզբունքն էական դեր կատարեց Թուրքիայի քաղաքական կյանքում: Այն հնարավոր է դիտարկել որպես ազգային պետության գաղափարախոսություն, սակայն Թուրքիայի պայմաններում այն կիրառվեց այդ գաղափարախոսության ամենաագրեսիվ՝ ազգայնամոլության ձևով: Նորաստեղծ հանրապետության ղեկավարության որդեգրած տեսակետի համաձայն՝ ազգը սոցիալական և քաղաքական կազմավորում է, որը բաղկացած է իրար հետ լեզվի, մշակույթի ու գաղափարի ընդհանրությամբ կապված քաղաքացիներից: Այս տեսակետը Թուրքիայում շրջանառության մեջ է դրել Զիյա Գյոքալփը: Առաջին հայացքից, ազգայնականությունն իր ազգային սահմանների մեջ ապրող թուրքական հասարակության անդամների՝ ազգային պետություն ստեղծելու և նրա ամբողջականությունն ապահովելու հայեցակարգ էր: Սակայն հանրապետության ղեկավարությունը որդեգրեց բռնի միջոցներով Թուրքիայի բազմազգ բնակչության միատարրության, լեզվի, մշակույթի և մտածելակերպի միասնականացումը: Քեմալական ազգայնականությունը խարսխվում էր այն համոզման վրա, որ երկրում բնակվող յուրաքանչյուր մարդ, ով չի պատկանում թուրք ազգին, լինի քուրդ, հայ, թե հրեա, պարտավոր էր դառնալ թուրք: Ժառանգելով իթթիհադականներից ազգային փոքրամասնությունների հանդեպ տարվող քաղաքականությունը քեմալիզմը «Թուրքիան թուրքերինն է» կարգախոսը դարձրեց տիրապետող թուրքերի ազգային մտածելակերպում: Այսպիսով, ազգային ինքնության իմաստավորումը Թուրքիայում փաստորեն վերաճեց ազգայնամոլության:

Լայիցիզմը կամ աշխարհիկ իշխանության գերակայությունը քեմալականները դիտում էին իբրև գլխավոր պայման՝ Թուրքիան արդիական արևմտյան քաղաքակրթության մակարդակին հասցնելու համար: Ըստ էության, թուրքական լայիցիզմը սեկուլյարիզացիայի (աշխարհիկացում) ֆրանսիական տարբերակն էր, որի նպատակը ոչ միայն կրոնական և պետական գործերը սահմանազատելն ու կրոնի դերը հասարակական կյանքում նվազեցնելն էր, այլ նաև կրոնը պետական վերահսկողության տակ պահելը:

Էտատիզմը (ֆրանսերեն՝ l'etat - պետություն) պետության բացարձակ դերն է քաղաքականության կամ տնտեսության ոլորտում: Թուրքական էտատիզմը պետական հսկողությունն էր տնտեսության նկատմամբ, որն ուներ նաև անհատական նախաձեռնության խրախուսման տարրեր: Էտատիզմի քաղաքականությունը թելադրվում էր երկրում զարգացած տնտեսական համակարգի գրեթե լրիվ բացակայությամբ և քաղաքական համակարգում էտատիստական (հովանավորչական) հայացքներ դավանող վերնախավի առկայությամբ: Էտատիզմը չէր հանդիսանում բոլոր տնտեսական միջոցների կոլեկտիվացման և մասնավոր սեփականության մերժման հայեցակարգ, այլ առաջ էր տանում այն դրույթը, որ պետությունը կոչված է ղեկավարել և կարգավորել տնտեսական գործունեությունը երկրում:

Եվ վերջապես, հեղափոխականության սկզբունքն արտահայտում էր Թուրքիայի քաղաքական, հասարակական ու տնտեսական կառույցների և թուրք ժողովրդի մտածելակերպի ու կենսակերպի մեջ մշտական, դինամիկ և համալիր փոփոխությունների, արդիականացման ապահովման գաղափարը:

Քանի որ երկրում հաստատվել էր ՀԺԿ մենիշխանությունը, որը հավակնում էր լինել «ողջ ազգի ներկայացուցիչն ու շահերի արտահայտողը», կուսակցական դրույթներն էլ ամրագրվել էին երկրի սահմանադրության մեջ, ուստի քեմալիզմը նաև պետության զարգացման երկարաժամկետ ռազմավարությունն էր: Թուրքիան դասական իմաստով վերաճեց «կուսակցապետության»: ՀԺԿ-ն էր վերահսկում խորհրդարանը, կառավարական հաստատությունները, հասարակական կազմակերպությունները, ոստիկանությունը, դատարանները և շարժման մեջ դնում

ամբողջ պետական-հասարակական մեխանիզմը: Քաղաքական ու պետական կառույցները վերածվեցին բացառապես հանրապետականների մենաշնորհի: Կուսակցությունից դուրս որևէ հասարակական, մշակութային կամ քաղաքական գործունեության մասին այլևս խոսք չկար: Քաղաքական կյանքում ՀԺԿ բացարձակ մենատիրությունն օրինաչափորեն հանգեցրեց կուսակցական ու պետական ապարատների սերտաճմանը: Այս գործընթացի վերջնական ամրագրումը տեղի ունեցավ 1937թ., երբ քեմալականության 6 սկզբունքները ներառվեցին սահմանադրության մեջ:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. Թուրքիայի քաղաքական համակարգը ձեռք բերեց ավտորիտար-ամբողջատիրական համակարգերին բնորոշ գծեր. 1) միակուսակցական վարչակարգի հաստատում, 2) իշխող կուսակցության սերտաճում պետական ապարատի հետ, 3) ամբողջ հասարակական կյանքի միասնականացում և վերահսկում, 4) մտածողության ավտորիտար եղանակ և ազգային առաջնորդի պաշտամունք:

3. Ազգային քաղաքականությունը

Քեմալական Թուրքիան հավատարիմ մնաց ազգային փոքրամասնությունների նկատմամբ Օսմանյան կայսրության հետևողականորեն իրականացրած ձուլման և ոչնչացման քաղաքականությանը: Թեև թուրքական ազգային պետության ստեղծումն ուղեկցվում էր Արևմտյան Հայաստանի և Անատոլիայի հայ, հույն, ասորի բնակչության կոտորածներով և վերջնական տեղահանությամբ, բայցևայնպես հանրապետության հռչակման պահին էլ Թուրքիան բնակեցված էր բազմաթիվ ազգային, էթնիկ, լեզվական և կրոնական փոքրամասնություններով: Փոքրամասնությունների հարցը բարձրացվել էր 1923թ. Լոզանի համաժողովում: Թուրքիան, սակայն, ճանաչում էր միայն երեք ազգային-կրոնական փոքրամասնությունների, այն էլ որպես «ոչ մուսուլմաններ» կարգավիճակով՝ հայերին, հույներին և հրեաներին:

Լոզանի պայմանագրի երրորդ բաժինը վերաբերում է Թուրքիայում ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը: Համաձայն 38-44-րդ հոդվածների՝ «Թուրքիայի կառավարությունը պարտավորվում է ապահովել Թուրքիայի բոլոր քաղաքացիների կյանքի և ազատության լիարժեք պաշտպանությունը՝ անկախ ազգային, լեզվական, ռասայական և կրոնական պատկանելությունից»: Հոդված 39-ի համաձայն՝ պաշտոնական լեզու համարվող թուրքերենին զուգահեռ թույլատրելի է նաև ազգային փոքրամասնությունների լեզուների կիրառումը: «Ոչ մի սահմանափակում և արգելք չդնել, որպեսզի ցանկացած թուրքական քաղաքացի օգտվի որևէ լեզվից»:

Հոդված 40-ի համաձայն՝ ոչ մուսուլմանական փոքրամասնությունները հավասարապես իրավունք ունեն իրենց հաշվին ստեղծելու և տնօրինելու բարեգործական, կրոնական, հասարակական հաստատություններ, դպրոցներ, ուսումնական և դաստիարակչական այլ հաստատություններ՝ իրավունք ունենալով այդ հաստատություններում ազատ օգտագործելու իրենց մայրենի լեզուն և ազատ դավանելու իրենց կրոնը: Հոդված 42-ի համաձայն՝ Թուրքիայի կառավարությունը լիակատար պաշտպանության տակ էր առնում եկեղեցիները, սինագոգները, գերեզմանոցները և փոքրամասնություններին պատկանող այլ կրոնական հաստատությունները: Լոզանի պայմանագրի նշված հոդվածներում փոքրամասնությունների իրավունքների իրավական երաշխիքների վերաբերյալ կետերում խոսքը վերաբերում է բացառապես ոչ մուսուլմանական փոքրամասնություններին (Լոզանի պայմանագիրը չէր ճանաչում ոչ թուրք մուսուլմանների, այդ թվում և քրդերի, ալևիների՝ փոքրամասնություն լինելու կարգավիճակը): Սակայն այս բոլոր կետերը մնացին թղթի վրա: Շարունակվեցին փոքրամասնությունների հանդեպ հալածանքներն ու հետապնդումները, ինչպես նաև նրանց ձուլման քաղաքականությունը:

Նախ՝ քեմալական կառավարությունը մի շարք օրենսդրական ակտերի և միջոցառումների կիրառմամբ ձգտում էր ավարտին հասցնել հայերի, ինչպես նաև հույների և այլ քրիստոնյաների՝ դեռևս ցեղասպանության տարիներին սկսված ունեզրկման գործընթացը: Լայնածավալ այդ գործընթացը, ըստ էության, կապիտալի բռնի փոխանցում էր ոչ մուսուլմաններից մուսուլմաններին, ինչը պետք է հիմք հանդիսանար Թուրքիայի ապագա տնտեսական զարգացման համար: Այսպես, օրինակ, դեռևս 1921թ. օգոստոսի 7-ին Մ. Քեմալը, որպես «ազգային» բանակի գլխավոր հրամա-

նատար, իր մոտ հրավիրված գաղտնի ժողովի որոշմամբ հրամայում է «թշնամու դեմ պայքարը ֆինանսապես ապահովելու նպատակով» երկիրը թողած անձերի գանձարան անցած գույքը բռնագրավել՝ «բանակի կարիքների համար»: Նախքան Լոզանի պայմանագրի ստորագրումը, 1923թ. ապրիլի 15-ին, թուրքական մեջլիսն օրենք ընդունեց «Լքյալ գույքի» մասին, որով բռնագրավման էր ենթարկվում այն հայերի գույքը, որոնք չէին ապրում Թուրքիայում, անկախ այն պարագայից, թե ինչ հանգամանքներում էին թողել երկիրը: 1923թ. սեպտեմբերին փոփոխություն մտցվեց «Հաշվառման մասին» օրենքի («Mahsub-i Umumi kanunu») 2-րդ կետում, որի համաձայն՝ Կիլիկիայի և արևելյան վիլայեթների հայերին, որոնք «արտագաղթել» էին, արգելվեց վերադառնալ Թուրքիա: 1926թ. փետրվարի 2-ին օրենք ընդունվեց առ այն, որ վերադարձի ենթակա չէ Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելուց առաջ (1924թ. օգոստոսի 19) բռնագրավված գույքը:

1927թ. մայիսին հրապարակվեց կառավարության օրենքը, համաձայն որի՝ Թուրքիայի քաղաքացիություն չէին ստանում բոլոր նրանք, ովքեր չեն եղել երկրի տարածքում «ազատագրական պայքարի» տարիներին, ինչպես նաև արտասահմանում եղածները՝ 1923-ից (Լոզան) մինչև սույն օրենքի (1927թ. մայիս) ընդունումը: Այս որոշումներն իրավական առումով չեզոքացրին հայերի պահանջները սեփականության նկատմամբ: Հայ փախստականների Կենտրոնական կոմիտեի միջոցով Ազգերի լիգային ուղղված բողոքներն անարդյունք էին, դրանք մերժվում էին Թուրքիայի կողմից: 1925թ. կառավարության որոշմամբ հայ վրիժառուների կողմից սպանված Էնվերի, Թալեաթի, Ջեմալի և Բեհաէդդին Շաքիրի ընտանիքներին պետական թոշակ նշանակվեց, որը վճարվում էր հայկական գույքից ստացած գումարների հաշվին, ինչպես նաև հատկացվեցին բնակարաններ ու հողատարածքներ՝ կրկին բռնագրավված հայկական գույքի հաշվին: 1927թ. «milli şehit» («ազգային հերոս՝ մարտիրոս») հայտարարվեցին նաև Բողազլյանի գավառապետ Քեմալ-բեյը և դոկտոր Ռեշադը, որոնք դատապարտվել էին երիտթուրքերի դեմ իրականացված դատավարությունների ընթացքում:

Հայերի և հույների գույքի հետագա բռնագանձումն իրականացվեց մի քանի փուլերով, որոնցից մեկը հայտնի է «1936 Beyannamesi» անունով: 1935թ. հունիսի 13-ին ընդունված վաքֆների՝ կալվածքների մասին թիվ 2762 օրենքի հիման վրա 1936թ. ընդունվեց մի հայտարարագիր («1936 Beyannamesi»), որի համաձայն՝ Թուրքիայի բոլոր վաքֆներից պահանջվում էր գույքի մասին ծանուցում: Իսլամական և ոչ իսլամական բոլոր վաքֆները, այդ պահանջին ենթարկվելով, իրենց պատկանող գույքերի ցուցակը հանձնում էին Վաքֆների գլխավոր տնօրինությանը: 1936թ. հայտարարագիրը բաղկացած էր մի ցուցակից, որը ցույց էր տալիս այն ունեցվածքը, որը պատկանել է ոչ մուսուլման փոքրամասնությունների համայնքի վաքֆներին: Սակայն հետագայում՝ 1970-ական թթ., կիպրոսյան ճգնաժամի սրման հետևանքով, վաքֆների մասին նախկին օրենքի ուժի մեջ մտնելուց ուղիղ 38 տարի անց, վճռաբեկ դատարանի իրավական խորհուրդը որոշում կայացրեց, ըստ որի՝ «ապօրինի» էր ճանաչվում և պետությանն անցնում համայնքների ձեռք բերած այն գույքը, որը նշված չէր 1936թ. հայտարարագրում: Թուրքական կառավարությունը հետևողականորեն օգտագործում էր խճճված կանոնակարգեր՝ համայնքների և անհատների գույքն առգրավելու նպատակով:

Եթե օսմանյան մեջլիսում կամ կառավարությունում եղել էին հայ, հույն, հրեա և այլ ազգության պատգամավորներ, ապա Մուսթաֆա Քեմալի իշխանության շրջանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար խորհրդարան կամ կառավարություն մուտք գործելուն արգելք դրվեց: ՀԺԿ անդամ չէին կարող դառնալ ազգությամբ ոչ թուրքերը՝ համարվում էր, որ միայն թուրքերը և ՀԺԿ անդամները կարող են զբաղվել Թուրքիայի համար օգտակար գործունեությամբ: ՀԺԿ գլխավոր քարտուղար Ռեջեփ Փեքերն ընդգծում էր, որ թուրք կարող են համարվել Թուրքիայի այն բոլոր բնակիչները, այդ թվում և քրիստոնյա ու հրեա փոքրամասնությունները, որոնք խոսում են թուրքերեն լեզվով և դավանում են «թուրքական իդեալները»: Մինչև 1935թ. թուրքական խորհրդարանում եղել է հայկական ծագում ունեցող մեկ պատգամավոր՝ Մյունիփ Բոյան, որն ավելի վաղ իսլամ էր ընդունել և խզել կապը հայկականության հետ:

Թուրքիայի խորհրդարանական համակարգում ազգային-կրոնական փոքրամասնությունների ներգրավվածության առումով մակերեսային փոփոխություն է նկատվում Ազգային ժողովի 1935թ. ընտրությունների ժամանակ, երբ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքը որոշում է խորհրդարանում

տեսնել նաև փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Իշխող կուսակցության ցուցակին կից ձևավորվում է, այսպես կոչված, «Անկախների» ցուցակ, որում ընդգրկվում են ազգային-կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Հարկ է նկատել, որ «Անկախների» ցուցակ ստեղծելու մեջ ևս դրսևորվեցին քեմալականների վարած ծայրահեղ ազգայնամոլական քաղաքականությունն ու քարոզչությունը, քանի որ նրանց մեկնաբանմամբ՝ այս քայլն արվել է, որպեսզի «ազգային փոքրամասնություններով չպղծեին ՀԺԿ «սուրբ» ցուցակները»: «Անկախների» ցուցակով ընտրվում են ազգային-կրոնական փոքրամասնությունների չորս ներկայացուցիչ՝ հայ Պերճ Քերեսթեջյանը, հրեա Աբրևայա Մարմարալը, հույն Նիկոլա Թափթասը, ուղղափառ թուրք (քարամանլի) Իսթամաթ Զիհնի Օզդամարը:

Պերճ Քերեսթեջյանը *(1870-1949թթ.) ծնվել է Սկամբուլում, սովորել է նախ Գալաթասարայի լիցեյում, այնուհետև՝ Ռոբերտ քոլեջում: Ուսումն ավարտելուց հետո աշխատել է ֆինանսական ոլորտում նախ Օսմանյան կայսրության ֆինանսների նախարարությունում, իսկ 1890-ից՝ Օսմանյան բանկում: Նրա կենսագրության և պատգամավորական մանդատ ստանալու հարցում առանձնանում են հատկապես հետևյալ դրվագները: 1919թ. Քերեսթեջյանը, տեղեկություն ստանալով, որ Մուսթաֆա Քեմալի դեմ հարձակում է պատրաստվում, տեղյակ է պահել վերջինիս և այդպիսով փրկել նրա կյանքը: Բացի այդ, քեմալական շարժման ժամանակ իր անձնական միջոցներից բավական մեծ գումար է հատկացրել քեմալական զորքին՝ ռազմամթերք գնելու համար: Եվ վերջապես, 1923թ. Լոզանում բանակցությունների ժամանակ Քերեսթեջյանը սատարել է թուրքական պատվիրակությանը և անգլիական «Morning Post» թերթում բաց նամակ է հղել Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Քուրզոնին՝ պահանջելով, որպեսզի անգլիացիները հրաժարվեն Թուրքիայում բնակվող հայերի հովանավորությունից: Ի դեպ, ավելորդ չէ նշել, որ Լոզանի կոնֆերանսի օրերին նույն Պերճ Քերեսթեջյանը, որը նաև 1922թ. վերջերին Սկամբուլում հիմնված «հայ-թուրքական բարեկամության միության պատվավոր նախագահն էր, հեռագիր է հղում Իսմեթ փաշային՝ որտեղ, նշելով իրենց աջակցությունը թուրքական պատվիրակությանը, տեղեկացնում է, որ գալիք խորհրդարանական ընտրություններում հայերն էլ են ցանկանում մասնակցել Մուսթաֆա Քեմալի «Ազգային պաշտպանության կուսակցության» (հետագայում՝ «Հանրապետական-ժողովրդական կուսակցություն») ցուցակով, սակայն Անկարայի իշխանությունն այդ դիմումն անարձագանք է թողնում:*

Թուրքիային և նրա իշխանություններին Քերեսթեջյանի մատուցած վերոնշյալ ծառայությունները 1935թ. վարձատրվեցին պատգամավորական մանդատով, իսկ ավելի վաղ՝ 1934թ., Թուրքիայում ազգանվան մասին օրենքի հռչակումից հետո անձամբ Աթաթուրքը նրան «շնորհել» է Թյուրքեր (Türker) (թարգմանաբար՝ թուրք զինվոր) ազգանունը, որը նա գոհունակությամբ ընդունել և կիրառել է իր հայկական ազգանվան փոխարեն: Պատգամավորական աշխատանքի ժամանակ Քերեսթեջյանի հայկական ծագումը երբևէ առաջնային չի եղել, ավելին՝ նա իր գործունեությամբ և հայտարարություններով բացարձակ չի զիջել թուրք ազգայնամոլներին: Այսպես, նա խորհրդարանական ամբիոնից քննադատել է ազգային փոքրամասնություններին իրենց մայրենի լեզուների կիրառման համար և Թուրքիան նմանեցրել Բաբելոնյան աշտարակին՝ պահանջելով, որպեսզի կառավարությունը միջոցներ ձեռնարկի, որ Թուրքիայում բնակվողները խոսեն միայն թուրքերեն: Հիշարժան է նրա ելույթը 1930-ականների վերջերին Ալեքսանդրեթի սանջաքը Թուրքիային բռնակցելու որոշման վերաբերյալ, որտեղ նա՝ ի թիվս թուրք ազգայնամոլների, պաշտպանել է թուրքական ագրեսիան:

Փոքրամասնությունների մուտքն արգելված էր ոչ միայն քաղաքական, այլ նաև հանրային ոլորտ: Այսպես, 1926թ. մարտի 18-ի «Պետական ծառայողների մասին» թիվ 788 օրենքով հանրային ոլորտներում ծառայություններ մատուցելու իրավունքը վերապահվում էր միայն «թուրք-մուսուլմաններին կամ նրանց, ովքեր կարող էին թրքանալ»: Այդ օրենքի հետևանքով բազմաթիվ ոչ մուսուլման փաստաբաններ և այլ ծառայողներ զրկվեցին աշխատանքից:

Եթե օսմանյան շրջանի բանակի սպայական կազմում կարելի էր հանդիպել ազգությամբ հայ զինվորականների, ապա քեմալական շրջանում զինվորական դպրոցների դռները նրանց առջև փակ էին: Ավելին, որպես «անհուսալի տարր» նրանք բանակ չէին զորակոչվում: Միայն 1939թ. պետությունը փոքրամասնությունների համար գործածության է դնում

անգեն ծառայության մասին օրենքը, որով վերջիններիս զինվորական ծառայությունը տևում էր մեկուկես տարի, որպես «սպասարկու զինվոր» (emir eri): Կարելի էր նաև գումար վճարելով ծառայության ժամկետը կրճատել մինչև վեց ամիս:

Հանրապետության առաջին տարիներին իշխանություններն ամեն կերպ սահմանափակում էին հայերի ազատ տեղաշարժի իրավունքը: Դա հատկապես դժվարացնում էր ոչ մեծաթիվ հայ վաճառականների գործունեությունը, որոնք զբաղվում էին միայն ներքին առևտրով: Երկրից դուրս գալու պարագայում նրանց վերադարձը կարող էր արգելվել: Բացի դրանից, դուրս մեկնելու դեպքում նրանք պարտավոր էին ոստիկանությունում հատուկ փաստաթուղթ ստորագրել, որ պետությունից պարտք ու պահանջ չունեն:

Տարբեր տարիներին ընդունված հարկադիր վերաբնակեցման մասին օրենքների կիրառման նպատակներից էր ծանր ճնշումների ու հարստահարումների միջոցով ստեղծել այնպիսի սոցիալական ծանր պայմաններ, որ կրոնական փոքրամասնություններն «ինքնակամ» թողնեն իրենց գույքը և հեռանան Թուրքիայից: Այս քաղաքականությունն իր արդյունքներին երկար սպասել չտվեց: Եթե 1923թ. միայն Ստամբուլում ապրում էր 148.998 հայ, ապա 1927թ.՝ 67.754, իսկ 1935թ.՝ արդեն 57.599: Սովորական բան էր դարձել աքսորը՝ 1929թ. ամռանը և դրան հաջորդող ամիսներին 30.000 հայ է աքսորվել Խարբերդի, Դիարբեքիրի և Մարդինի նահանգներից: Իսկ 1934թ. սկզբներին, օրինակ, հայերին արևելյան «ըմբոստ» գավառներից սկսում են աքսորել Ստամբուլ՝ հավանաբար նրանց «պետության աչքի տակ պահելու» նպատակով: Քեմալական ժամանակաշրջանից սկսած՝ Թուրքիայի Հանրապետությունում նաև ավանդույթ է դառնում ազգային և կրոնական փոքրամասնությունների դեմ ջարդարարությունների կիրառումը: Դրանցից առաջինը 1934թ. Արևելյան Թրակիայում հրեա բնակչության դեմ իրականացված հալածանքներն էին, որոնք ստացան «Թրակիայի դեպքեր» անվանումը: Այդ գործընթացի հետևանքով շուրջ 15.000 մարդ տեղահանվեց:

Պետությունն ամեն ինչ՝ անում էր, որպեսզի մեծացնի փոքրամասնությունների ինստիտուցիոնալ կառույցների վերահսկողությունը: Դա հատկապես վերաբերում էր փոքրամասնությունների դպրոցներին: Տնօրենի տեղակալներից մեկին, որը պետք է անպայման թուրք լիներ, նշանակում էր կրթության նախարարությունը՝ «աշակերտներին թուրքական մշակույթին համապատասխան» դաստիարակելու համար, բացի այդ, պետությունը պարտադիր կարգով Թուրքիայի պատմության, գրականության, ռազմագիտության, թուրքերեն լեզվի և աշխարհագրության ուսուցիչներ էր տրամադրում դպրոցին: Այդ մասնագետների աշխատավարձերը վճարում էր պետությունը, մինչդեռ դպրոցի մնացյալ ծախսերն ընկնում էին համայնքի վրա: Եթե մինչև 1915 թվականը Թուրքիայում 2000-ից ավելի հայկական դպրոց էր գործում, ապա հանրապետության ձևավորման առաջին տարիներին Ստամբուլում կար ընդամենը 47 հայկական դպրոց:

Լեզվական ձուլման քաղաքականության դրսևորումներից էին 1930-ական թվականներից սկսած և Թուրքիայի Հանրապետության պատմության տարբեր տարիներին անցկացվող, այսպես կոչված, «Հայրենակից, թուրքերեն խոսիր» (Vatandaş, Türkçe Konuş) արշավները, որոնց գլխավոր թիրախը կրկին փոքրամասնություններն էին: Համաձայն այդ նախաձեռնության՝ հասարակական վայրերում արգելվում էր թուրքերենից բացի այլ լեզուներով խոսելը: Ստեղծվել էին ազգայնամոլ երիտասարդներից, ինչպես նաև ուսանողներից ձևավորված խմբեր, որոնք շրջում էին հատկապես փոքրամասնություններով բնակեցված թաղամասերում և բռնություններ կիրառում մայրենիով խոսող քաղաքացիների նկատմամբ:

Եվ վերջապես, Անատոլիայի և Արևմտյան Հայաստանի տարածքներից հույների, հայերի «հետքը ջնջելու» նպատակով 1928-ից թուրքական կառավարությունը սկսեց վարել տեղանունները թրքացնելու քաղաքականություն: Հրատարակվեցին նոր քարտեզներ, գրքեր, որտեղ տեղանունները ստուգաբանվում էին թուրքական ծագմամբ, ինչով էլ փորձ էր արվում ապացուցել, որ թուրքերը հանդիսանում են այդ տարածաշրջանի բնիկ ժողովուրդը: Պետականորեն իրագործվում էր և քաջալերվում հայկական ու հունական եկեղեցիների, վանքերի, պատմական հնություն ներկայացնող կառույցների ոչնչացումը:

Լոզանի պայմանագրի ստորագրումից հետո շատ շուտով Թուրքիան սկսեց իրավական առումով անտեսել փոքրամասնություններին, ինչն իր արտացոլումը գտավ Թուրքիայի Հանրապետության 1924թ. ապրիլի 20-ի առաջին Սահմանադրության մեջ, որի 88-րդ հոդվածում

ասվում էր. «Թուրքիայի բոլոր քաղաքացիները, անկախ կրոնական և ազգային պատկանելությունից, համարվում են թուրքեր»: 1925թ. մայիսին վարչապետ Իսմեթ Ինյոնյուն Անկարայում հայտարարեց. «Մենք բացահայտ ազգայնականներ ենք: Ազգայնականությունը մեր գործունեության հիմնաքարն է, և մենք ամեն գնով պետք է թուրքացնենք բոլոր նրանց, ովքեր ապրում են մեր երկրում»:

Լոզանի կոնֆերանսում քեմալական կառավարությունը կտրականապես պահանջեց քրդական հարցը չընդգրկել օրակարգում՝ այն հիմնավորելով, որ Թուրքիայի մուսուլման բոլոր փոքրամասնությունները, լինեն դրանք քրդեր, արաբներ, լազեր, չերքեզներ և այլն, Թուրքիայի քաղաքացիներ են, հետևաբար՝ նրանց խնդիրը ներքին հարց է: Ազգային-փոքրամասնությունների վերաբերյալ հարցի քննարկումների ժամանակ թուրքական պատվիրակությունը քրդական հարցի կապակցությամբ ընդունեց հետևյալ որոշումը. «քրդերը Թուրքիայում օգտվում են բոլոր իրավունքներից և չեն ցանկանում առանձնանալ»:

Մինչդեռ քեմալական ազգայնամոլական շարժման ընթացքում դեռևս Սվասի (Սեբաստիա) համաժողովում պայմանավորվածություն էր ձեռք բերվել որոշ քուրդ առաջնորդների հետ, ի պատասխան Արևմտյան Հայաստանում հայկական պետության ստեղծման դեմ պայքարում նրանց օժանդակության՝ հետագայում թուրք-քրդական դաշնային պետություն ստեղծել: Լոզանից հետո, սակայն, քեմալականները քրդական հարցում կտրուկ շրջադարձ կատարեցին համագործակցության քաղաքականությունից դեպի իրենց իսկ տված խոստումների դրժում: Ի պատասխան հետևողականորեն իրականացվող ուծացման քաղաքականության՝ 1920-1930-ական թվականներին տեղի ունեցան քրդական մի շարք զանգվածային ապստամբություններ:

1925թ. փետրվարի 8-ին արևելյան վիլայեթներում բռնկվեց քրդական մի հուժկու ապստամբություն՝ շեյխ Սայիդի գլխավորությամբ, որն իր թափով և կազմակերպվածությամբ տարբերվում էր նախորդ բոլոր քրդական շարժումներից: Կարճ ժամանակամիջոցում այն ընդգրկեց Թուրքիայի համարյա ողջ քրդաբնակ շրջանները՝ 14 վիլայեթ: Ապստամբների թիվը հասավ մոտավորապես 40 հազար մարդու: Նրանք մտադիր էին ստեղծել անկախ քրդական պետություն՝ Դիարբեքիր մայրաքաղաքով

Ապստամբության հիմնական օջախը գտնվում էր Վանա լճից արևմուտք ընկած շրջանում: Թուրքական կառավարությունն ապստամբների դեմ նետեց 70 հազարանոց բանակ: Անկարան շեյխ Սայիդի ապստամբությունը որակեց «քրդերի կրոնական մոլեռանդության պայթյուն»՝ միաժամանակ քարոզելով, որ քրդերն ապստամբել են օտարերկրյա տերության (իմա՝ անգլիացիների) սադրանքների հետևանքով: Ապստամբությունը ճնշելու նպատակով ԹԱՄԺ-ը ընդունեց համալիր մի ծրագիր, որը թույլ էր տալիս կառավարությանն ապստամբների նկատմամբ կիրառել զանգվածային ճնշման մարտավարություն, անխնա կրակի մատնել քրդական բնակավայրերը, հիմնովին զինաթափել քրդերին, քուրդ բնակչությանը տեղահանել իրենց բնակավայրերից դեպի երկրի տարբեր շրջաններ:

1925թ. ապրիլի վերջին կառավարական զորքերին հաջողվեց շրջապատել ու ջախջախել ապստամբներին: Շարժման 53 ղեկավար, այդ թվում նաև շեյխ Սայիդը, Դիարբեքիրում կախաղան բարձրացվեցին: 1925-1926թթ. ընթացքում թուրքական զորքերն ավերեցին 206 քրդական գյուղ, այրեցին 8758 տուն, սպանեցին 150 հազարից ավելի խաղաղ բնակիչ: Վանի, Դիարբեքիրի, Էլյազիգի (Խարբերդ), Մուշի, Բիթլիսի և այլ վայրերի քուրդ բնակչության մի զգալի մասը տարագրվեց երկրի խորքերը: Այդ ընթացքում ճանապարհներին սովից, հիվանդություններից ու հոգնածությունից մեծ թվով քուրդ երեխաներ մահացան, իսկ շատերին պարզապես սպանեցին: Ըստ որոշ աղբյուրների՝ շեյխ Սայիդի ապստամբությանը մասնակցել են նաև Հայոց ցեղասպանությունից փրկված որոշ թվով հայեր, ինչպես նաև ասորիներ և չերքեզներ: Ընդ որում, «Հաքիմիեթ-ի միլլիե» թերթը գրում էր, որ հայ և ասորի կամավորները միանում էին ապստամբներին՝ ապագայում անկախ Հայաստան ստեղծելու համար:

Շեյխ Սայիդի ապստամբությունից հետո թուրքերի և քրդերի միջև խոր անդունդ առաջացավ: 1920-ական թթ. երկրորդ կեսին Թուրքիայի ողջ քրդաբնակ շրջաններում ընթանում էին պարտիզանական թեժ կռիվներ: 1925թ. հունիս-հուլիսին իրանա-իրաքյան սահմանի հարևանությամբ՝ Հաքյարիում, քրդերը պարզեցին ապստամբության դրոշ: Վանի և Բիթլիսի շրջաններում ծավալվեցին թեժ մարտեր քրդական ապստամբների և կառավարական զորքերի միջև: 1926թ. աշնանը

ջելալի, հասանան, ջիբրան և հայդարան ցեղերը, նահանջելով դեպի Արարատ լեռը, բարձրացրին նոր ապստամբություն, որը ստացավ Արարատի ապստամբություն անվանումը: Մեծ և Փոքր Արարատների միջև ընկած թամբարդը, որը թուրքերն անվանում են Քիրե, դարձավ քրդական ապստամբական նոր շարժման գլխավոր օջախը և հենակետը: Այստեղ սկսեցին կենտրոնանալ մեծ թվով քրդական ջոկատներ: 1926-1927թթ. ընթացքում այդ ջոկատները հանդուգն մարտարշավներ էին կազմակերպում դեպի Խնուսի, Վարդոյի, Մուշի, Սոլիանի, Ճապաղջրի, Գենջի, Լիջեի և այլ շրջաններ: Թուրքական կառավարությունն ապստամբների դեմ հանեց խոշոր ռազմական ուժեր, այդ թվում նաև մեծ քանակությամբ ինքնաթիռներ, որոնք գործում էին Արարատի, Իգդիրի և Բայազետի (Դողուբայազետ) ուղղություններով:

Կատաղի մարտերի հետևանքով թուրքերը տվեցին 2 հազար սպանված: Ապստամբությունն ընդգրկեց նաև Վանի, Մանազկերտի, Մուշի, Բիթլիսի և Սղերդի շրջանները: Ապստամբների դեմ հսկայական ռազմական ուժեր օգտագործելուց զատ՝ թուրքական իշխանությունները սկսեցին լայնորեն կիրառել նաև վարչական միջոցառումներ: Այսպես, 1927թ. հունիսի 19-ին ԹԱՄԺ-ը ընդունեց օրենք քրդերին երկրի արևելյան վիլայեթներից արևմտյան վիլայեթներ տեղահանելու վերաբերյալ: Ընդ որում, այդ բռնի տեղահանությունն իրագործվում էր ճիշտ նույն մեթոդներով, ինչպես և հայերինն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Արարատի շրջանում քրդական ապստամբական շարժումը նախապատրաստել էր «Հոյբուն» («Անկախություն») ռազմաքաղաքական կոմիտեն, որը ստեղծվել էր 1927թ. օգոստոսին Սիրիայում և Լիբանանում տեղի ունեցած քրդական կազմակերպությունների համագումարում: Այստեղ ձևակերպվեց «Հոյբունի» քաղաքական ուղեգիծը և մշակվեց նրա կանոնադրությունը: «Հոյբունը», ըստ էության, վերածվեց քաղաքական կուսակցության: Այն նպատակ էր հռչակում անկախությունը: Քրդական հարցի վերաբերյալ Թուրքիայի սահմաններից դուրս քարոզչություն ծավալելու նպատակով «Հոյբունը» արտասահմանում՝ Սիրիայում, Լիբանանում, Եվրոպայի մի շարք երկրներում և ԱՄՆ-ում, ստեղծեց մասնաճյուղեր: «Հոյբունի» գործունեությանը որոշ աջակցություն է ցուցաբերել նաև Հայ յեղափոխական դաշնակցություն կուսակցությունը: «Հոյբունը» հանդես եկավ մի հայտարարությամբ, որտեղ ասվում էր, որ Հայաստանը և Քրդստանը, ուր դարերով բնակվում են հայ և քուրդ ժողովուրդները, մերժում են ենթարկվել որևէ օտար իշխանության՝ ձգտելով իրենց անկախությանը, և որ այդ երկու երկրները պատկանում են միայն հայ և քուրդ ժողովուրդներին:

Իսկ Անկարան ավելի ու ավելի էր կոշտացնում իր ազգայնամոլական քաղաքականությունը: 1930թ. ԹԱՄԺ-ը ընդունեց օրենք, որը կառավարությանն իրավունք էր տալիս ոչ թուրքերին բնակեցնել թուրք բնակչության մեջ, որպեսզի «նրանք յուրացնեն թուրքերենը և թուրքական մշակույթը»: 1930թ. օգոստոսի 30-ին ելույթ ունենալով Սվասում (Սեբաստիա) երկաթուղու բացման արարողության ժամանակ՝ Իսմեթ Ինյոնյուն հայտարարեց. «Այս երկրում միայն թուրք ազգը կարող է ներկայացնել էթնիկական և ռասսայական իրավունքների վերաբերյալ պահանջներ: Ոչ մի այլ տարր նման իրավունքներ չունի»:

1931թ. թուրքական կառավարությանը հաջողվեց մեծ դժվարությամբ ճնշել Արարատի շրջանի քրդական ապստամբությունը: Ապստամբությունը ճնշելուն հետևեց դաժան հաշվեհարդարը ոչ միայն ապստամբների, այլև առհասարակ քրդերի նկատմամբ: Թուրքական պատժիչ զորամասերը կազմակերպում էին զանգվածային կոտորածներ, տեղահանություններ: «Հոյբունի» տվյալներով՝ սպանված ապստամբների թիվը հասնում էր 10-15 հազար մարդու, ավերվել էր 660 գյուղ: Քրդերենը պաշտոնապես արգելվեց, քրդական հրատարակությունները բռնագրավվեցին ու այրվեցին: Դասագրքերից իսպառ հանվեցին «քուրդ», «Քուրդիստան» բառերը: Այնուհետ, արևելյան նահանգները մեկուսացվեցին մնացած աշխարհից, և օտարերկրացիների մուտքն այնտեղ խստիվ արգելվեց:

1932թ. ընթացքում ԹԱՄԺ-ն ընդունեց օրենքների մի ամբողջ փաթեթ, որն անմիջականորեն ուղղված էր քրդերի դեմ: Այսպես, բնակչության նստակեցության վերաբերյալ օրենքը սահմանափակում էր քրդերի ազատ տեղաշարժվելու իրավունքը: 1932թ. մայիսի 5-ին ընդունված մեկ այլ օրենքի համաձայն՝ երկրի արևելյան և հարավարևելյան քրդաբնակ շրջաններում ստեղծվում էր հատուկ գոտի, որի կազմի մեջ էին մտնելու Էրզրումի, Կարսի, Ռիզեի, Տրապիզոնի, Գյումուշհանեի, Էրզինջանի (Երզնկա) և Աղրիի (Արարատ) վիլայեթները: Նշված նահանգների բնակչությունը «սանիտարական, նյութական, մշակութային, քաղաքական

և ռազմավարական նկատառումներով, ինչպես նաև այդ վայրերում կարգ ու կանոնը պահպանելու շահախնդրությամբ ենթակա էր էվակուացման (տարհանման) և տարաբնակեցման այլ վայրերում»: «Երրորդ գլխավոր տեսչության» այդ շրջանը հայտարարվեց փակ գոտի, այսինքն՝ ոչ ոք չէր կարող այնտեղ բնակություն հաստատել առանց զինվորական իշխանությունների թույլտվության: Նշված օրենքի երկրորդ կետում ասվում էր, որ այլ վայրեր տեղափոխված քրդերը պետք է բնակեցվեին թուրք բնակչության շրջանում այն հաշվով, որ թվաքանակով չգերազանցեին տեղական թուրք բնակչության 10%-ը:

1932թ. նշված օրենքի 6-րդ և 7-րդ կետերը քրդերին զրկում էին իրենց լեզվից օգտվելու իրավունքից, սեփական մշակութային, քաղաքական, կրթական կազմակերպություններ ունենալուց: Այդ օրենքը քրդերին պաշտոնապես առաջին անգամ անվանում էր «լեռնային թուրքեր»: Քրդերին արգելվում էր կրել ազգային տարազ, արգելք էր դրվում քրդական բանահյուսության վրա և այլն: Տեղահանված և տարագրված քուրդ գյուղացիներին արգելվում էր բնակվել գյուղական վայրերում: Նրանք պարտավոր էին բնակություն հաստատել քաղաքներում և քաղաքատիպ ավաններում՝ իշխանությունների խուզարկու աչքի ներքո:

Ի լրումն 1932թ. օրենքի՝ 1934թ. հունիսի 21-ին ԹԱՄԺ-ն ընդունեց օրենք բնակչության վերաբնակեցման վերաբերյալ: Այդ օրենքի առաջին կետն ազդարարում էր, որ կառավարությունը ներքին գործերի նախարարությանն իրավունք է վերապահում այս կամ այն էթնիկական խմբի բնակավայրի նպատակահարմարության հարցը լուծելիս առաջնորդվել թուրքական մշակույթի հետ նրանց «կապվածությունն ամրապնդելու սկզբունքով»: Կասկածից վեր է, որ այդ օրենքը երկրի ազգային փոքրամասնություններին բացահայտ ու դաժանաբար ձուլելու և թրքացնելու ծրագիր էր:

XX դարի 30-ական թթ. կեսերին թուրքական կառավարությունը որոշեց կատարելապես հնազանդեցնել ու իրեն ենթարկել Դերսիմի կիսանկախ զազա ցեղերին: Դերսիմի նահանգն ընկած է Բարձր Հայքի արևմտյան մասում՝ Էրզրումի, Խարբերդի և Տիգրանակերտի միջև: Ըստ վիճակագրական աղբյուրների՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին բնակչության թիվը հասել է 200 հազարի, որի 45%-ը կազմել են հայերը, իսկ մնացածը՝ ալևի քրդերը և զազաները, որոնք հայերի հետ ապրում էին հաշտ ու խաղաղ: Պետք է նշել, որ Դերսիմի ընտրությունը պատահական չէր. Դերսիմն այն եզակի շրջաններից էր, որ 1915թ. ցեղասպանության ժամանակ ապաստան տվեց թուրքական յաթաղանից մազապուրծ հազարավոր հայերի: Այնպես որ, Դերսիմի հարցը թուրքական կառավարության համար նաև «հայկական բաղադրիչ» ուներ: Դեռևս 1921թ. գարնանը թուրքական կառավարությանը հաջողվեց ճնշել առաջին խռովությունը Քոչքիրի-Դերսիմ շրջանում, սակայն այն չկարողացավ ամբողջովին իրեն ենթարկել Դերսիմի ցեղերին: 1930-ական թթ. սկզբներին դերսիմցիներին վերջնականապես հպատակեցնելու նպատակով թուրքական իշխանությունները որոշեցին օգտագործել վերաբնակեցման մասին օրենքը: Դերսիմցիները պետք է տեղահանվեին և վերաբնակեցվեին Փոքր Ասիայի արևմտյան տարբեր շրջաններում, իսկ «քրդաթափ» շրջաններում բնակություն էր հաստատելու Բալկաններից ներգաղթած թուրքական տարրը: Բացի դրանից, ցեղերի ողջ անշարժ գույքը բռնագրավվելու և բաժանվելու էր Բալկաններից ներգաղթած թուրքերին: Այս քայլով կառավարությունը ջանում էր, մի կողմից՝ երկրի արևելյան շրջանները բնակեցնել «հուսալի թուրքական տարրով», իսկ մյուս կողմից՝ կանխել քրդական նոր հնարավոր ապստամբությունները: Այդ ծրագիրը Դերսիմում կամ, ինչպես քեմալականներն էին վերանվանել՝ Թունջելիում, մեծ հուզումների տեղիք տվեց: Շուտով ողջ Դերսիմը հայտնվեց ապստամբության կրակի մեջ: Այն ղեկավարում էր Սեյիդ Ռըզան, ով տարածաշրջանի մեծ հեղինակություն ունեցող ալևի ցեղապետերից էր: 1936թ. Քեմալ Աթաթյուրքի առաջարկությամբ Դերսիմի հարցը մտցվում է ԹԱՄԺ փակ նիստի օրակարգ: 1936թ. նոյեմբերի 1-ին ԹԱՄԺ բացման ժամանակ Աթաթյուրքը Դերսիմի վերաբերյալ իր զեկույցում ասել է. «Մեր ներքին գործերի մեջ ամենակարևորը Դերսիմի խնդիրն է: Անհրաժեշտ է ամեն գնով արմատախիլ անել այդ սարսափելի թարախապալարը: Այս հարցի վերաբերյալ շտապ միջոցներ ձեռնարկելու համար կառավարությունն օժտված է լայն իրավասություններով»:

1936թ. ընթացքում թուրքական բանակի հրամանատարությունը Դերսիմի, Էլյազիգի (Խարբերդ), Ճապաղջրի և Բինգյոլի (Բյուրակն) շրջաններում զորք էր կենտրոնացնում: 1937թ. ամռան սկզբին թուրքերը ռազմական գործողություններ սկսեցին «Դերսիմի խռովարարների»

դեմ՝ օգտագործելով նաև ավիացիա[5], տանկեր և նույնիսկ թունավոր գազ: Թուրքական բանակն անխնա ոչնչացնում էր ոչ միայն զինված բնակչությանը, այլև խաղաղ գյուղացիներին: Որպեսզի ապստամբներին ստիպեն դուրս գալ իրենց լեռնային թաքստոցներից, թուրքական հրամանատարությունը հրամայեց կրակի ճարակ դարձնել Դերսիմի շրջակայքի անտառները: Թուրքիայի վարչապետ Իսմեթ Ինյոնյուն և ներքին գործերի նախարար Շյուքրու Քայան ներկա էին գտնվել ռազմական գործողությունների ընթացքին: 1937թ. մեջլիսն օրենք ընդունեց, ըստ որի՝ Դերսիմի ապստամբների ողջ ունեցվածքը բռնագրավվում էր հօգուտ պետության:

Դերսիմի ապստամբությունը 1938թ. ճնշվեց անողոք դաժանությամբ: Ապստամբության ղեկավարները խաբեությամբ հրավիրվեցին Խարբերդ և ձերբակալվեցին ու կախաղան բարձրացվեցին: Սկսվեց արյունոտ հաշվեհարդարը: 1938թ. վարչապետի պաշտոնը ստանձնած Ջելալ Բայարը հայտարարեց, որ «Թուրքիայում քրդական հարց այլևս գոյություն չունի»:

Այսպիսով, ազգային քաղաքականությունը Թուրքիայում հանդես էր գալիս որպես «պետական ազգայնականության» դրսևորում, որը, անտեսելով երկրի էթնիկ և կրոնական բազմազանությունն ու փոքրամասնությունների նկատմամբ հետևողականորեն կիրառելով պետական հալածանքի և բռնականության, տեղահանությունների և զտման, լեզվական միաձուլականացման և մշակութային ձուլման մեթոդները, փորձում էր կերտել նոր, միատարր ազգային ինքնություն: Այդ քաղաքականությունը կարելի է բնութագրել նաև որպես շովինիստական ուժեղ հնչեղություն ունեցող ազգային բացառիկության մի հայեցակարգ, որն ամփոփված էր Աթաթուրքի «Երջանիկ է նա, ով իրեն թուրք է կոչում» (Ne Mutlu Türküm Diyene) կարգախոսի մեջ:

Քեմալ Աթաթուրքի մահից հետո (1938թ. նոյեմբերի 10) նրա անձի աստվածությունը դարձավ Թուրքիայի քաղաքական կյանքի անբաժանելի հատկանիշը: Ամենուրեք կարելի էր տեսնել նրա դիմանկարները, արձանները: Առաջին նախագահին վերագրվում են Թուրքիայի բոլոր

5 Դերսիմցիների ոչնչացումը հատկապես ակտիվ ընթացավ Աթաթուրքի դստերը՝ Թուրքիայի առաջին կին օդաչու Սաբիհա Գոկչենը, ով հետագայում ամուսնացավ, էր որ Հայոց ցեղասպանության որերից էր հանուն Մեռելյան անվանը

նվաճումները, նրան տրվում են «ժողովրդի հայր», «ազգի հայր», «Հանրապետության ճարտարապետ» կոչումները[6]: Գրեթե բոլոր քաղաքական ղեկավարները, կուսակցությունները, բանակը, մամուլը այս կամ այն կերպով փորձում են հիմնավորել և արդարացնել իրենց գործողությունները Քեմալ Աթաթուրքի քաղաքական գծի և սկզբունքների պահպանման ու կենսագործման անհրաժեշտությամբ:

1937-ից սկսած՝ Աթաթուրքի հիվանդության (լյարդի ցիրոզ) պատճառով երկրում փաստացի իշխանությունը կենտրոնանում էր Իսմեթ Ինյոնյուի ձեռքերում: Աթաթուրքի հիվանդությունը Թուրքիայի իշխող վերնախավում առաջացրել էր որոշակի ժառանգականության ճգնաժամ, որն արտահայտվեց նրա ամենահավակնոտ զինակիցների միջև իշխանության համար պայքարով:

Այսպիսով, ավարտվեց մի ժամանակահատված, որը կարելի է բնութագրել որպես Թուրքիայի Հանրապետության ստեղծման ու կայացման, արդիականացման քեմալական մոդելի ներդրման ժամանակաշրջան:

4. *Թուրքիայի արտաքին քաղաքականությունը*

Թուրքիայի արտաքին քաղաքականության ուսումնասիրությամբ զբաղվող թե թուրք, թե օտար մասնագետների շրջանում ձևավորվել է ընդհանրական մի կարծիք, համաձայն որի՝ Թուրքիայի Հանրապետությունն Աթաթուրքի կառավարման օրոք, իբր, ամբողջությամբ հրաժարվել էր երիտթուրքերի՝ «արտաքին թյուրքերին» միացնելու ծրագրերից: Պետք է նշել, սակայն, որ ծավալապաշտական ծրագրերի, մասնավորապես պանթյուրքիզմի՝ որպես պետական քաղաքականության, մերժումը պայմանավորված էր ոչ այնքան հանրապետական Թուրքիայի առաջնորդների քաղաքական մտածելակերպով և համոզմունքներով, որքան ստեղծված պատմական պայմաններով՝ միջազգային իրադրությամբ և Թուրքիայի Հանրապետության ներքին ռազմաքաղաքական հնարավորություններով:

6 Մահվանից 15 տարի անց՝ 1953թ., Աթաթուրքի դին ամփոփվեց Անկարայում կառուցված «Anıtkabir» դամբարանում:

Պանթյուրքիստական արտաքին քաղաքական հայեցակարգը, հարմարվելով նոր պայմաններին, միայն քողարկվել էր և պարբերաբար՝ հարմար պահերին, դուրս էր գալիս այդ քողարկված վիճակից ու գործի էր դրվում: Չպետք է մոռանալ, որ հենց Մուսթաֆա Քեմալը և նրա ղեկավարած շարժումը մերժեցին հայերի բոլոր իրավունքներն իրենց հողերը վերադարձնելու հարցում, ձեռնարկեցին Հայաստանի առաջին Հանրապետության դեմ 1920թ. ռազմական արշավանքը՝ նպատակ ունենալով կապ հաստատել Անդրկովկասի թաթարների հետ:

Այն, որ քեմալական Թուրքիան հնարավորության դեպքում վարում էր բացահայտ կամ քողարկված ծավալապաշտական քաղաքականություն, կարելի է եզրակացնել Հայաստանից տարածքներ նվաճելու, Մոսուլի վիլայեթն ու Ալեքսանդրեթի սանջաքը հետ բերելու, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ սահման ձեռք բերելու հետևողական քայլերից: Պատահական չէ, որ որոշ թուրք հեղինակներ նշում են. «Աթաթյուրքը հոգու խորքում միշտ էլ պանթյուրքիստ է եղել»: Այն, որ Աթաթյուրքը «հոգու խորքում» միշտ էլ պանթյուրքիստ է եղել, խոստովանել էր հենց ինքը՝ Քեմալը, երբ 1933թ. Թուրքիայի Հանրապետության հիմնադրման 10-րդ տարելիցի ժամանակ ընկերական շրջապատում ասել էր. «Այսօր Ռուսաստանը մեր բարեկամն է, հարևանն ու դաշնակիցը: Մենք այդ բարեկամության կարիքն ունենք: Բայց ոչ ոք չգիտի, թե վաղն ինչ է լինելու: Ռուսաստանը նույնպես կարող է մի օր փլուզվել, ինչպես դա եղավ այլ կայսրությունների հետ: Մեր բարեկամի իշխանության տակ են հիմա մեր եղբայրները, որոնց հետ մենք լեզու և կրոն ենք կիսում: Մենք պետք է պատրաստ լինենք այդ օրվան, պետք է հոգևոր կամուրջներ ստեղծենք: Հոգևոր կամուրջներ են լեզուն, կրոնը, մշակույթը: Այսօր կառուցելով նոր Թուրքիան՝ մենք վաղվա Մեծ Թուրքիայի հիմքն ենք դնում»:

Հանրապետության հիմնումից հետո Թուրքիան մտահոգված էր նախ պետության ներսում բարենորոգումներ անցկացնելու, նոր հասարակության կերտման, քրդական ապստամբությունների ճնշման հարցերով: Ինչպես նշվեց, «Միություն և առաջադիմություն» կուսակցության պանթյուրքիստական արկածախնդրության հետևանքով Օսմանյան կայսրության կործանումից հետո Թուրքիան զգուշանում էր նման ծավալապաշտական նկրտումներից: Այդ ժամանակաշրջանում Աթաթյուրքի կողմից շրջանառության մեջ դրվեց Թուրքիայի արտաքին քաղաքականության կարգախոսը համարվող «Խաղաղություն հայրենիքում, խաղաղություն աշխարհում» («Yurtta sulh, cihanda sulh») մոտեցումը:

Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության սկզբունքների ձևավորման վրա ազդեցություն գործեցին աշխարհաքաղաքական նոր իրողությունները: Այդ սկզբունքները զգալի չափով պայմանավորված էին նաև միջազգային հարաբերություններում ու տարածաշրջանում նոր դերակատարների (օրինակ՝ ԽՍՀՄ) ի հայտ գալով ու հների հեռացումով: Հաճախ այդ քաղաքականությունը կրում էր ոչ այնքան սկզբունքային, որքան պրագմատիկ բնույթ: Նմանատիպ պրագմատիկ քաղաքական մոտեցման օրինակներից է քեմալական Թուրքիայի մերձեցումը բոլշևիկյան Ռուսաստանի հետ, չնայած գաղափարական ընդհանրությունների բացակայությանը:

Թուրքիայի արտաքին քաղաքականության նպատակը բարենպաստ միջազգային պայմանների ստեղծումն էր՝ անկախության ամրապնդման և տնտեսական զարգացման համար: Անկարային հաջողվեց դիվանագիտական ճանապարհով կարգավորել վիճելի հարցերը հարևանների հետ:

Չնայած 1926թ. կնքված թուրք-իրանական պայմանագրին՝ երկու երկրների միջև հարաբերությունները տարիներ շարունակ մնում էին լարված, ինչը պայմանավորված էր սահմանամերձ տարածքներում ծավալվող քրդական շարժումների առկայությամբ և, որպես հետևանք, սահմանային վեճերով: 1929թ. ապրիլի 9-ին կնքվեց թուրք-իրանական սահմանների կայունացման մասին նոր համաձայնագիր: Սակայն 1930թ. հունիս-հուլիսին Թուրքիայի գրաված հայկական տարածքների՝ Իրանի սահմանամերձ շրջանի քրդերն ապստամբեցին: Թուրքիան հայտարարեց, որ քրդերի ապստամբության ճնշումը և երկու երկրների սահմանների անվտանգությունը կապահովի այն դեպքում, եթե քրդաբնակ ողջ հատվածը Թուրքիայի վերահսկողության տակ լինի, և ըստ այդմ էլ առաջարկում է տարածքների փոխանակում՝ Իրանի հյուսիսարևմտյան սահմանամերձ, ռազմավարական հույժ կարևոր նշանակությամբ քրդաբնակ տարածքների (որոնց մեջ ընդգրկվում էին Փոքր Մասիսի ստորոտը և Արաքսի առափնյա շրջանից մի հատված) փոխարեն առաջարկելով Ուրմիա լճի արևելյան հատվածում թուրքական երկու, թերևս ոչնչով աչքի

չընկնող հողատարածքներ: Այս գործարքի շնորհիվ Թուրքիան Նախիջևանի հետ ընդհանուր սահման ունեցավ: 1932թ. հունվարի 23-ին Թեհրանում ստորագրվեց Իրան-Թուրքիա պայմանագիրը՝ երկու երկրների սահմանագծերի փոփոխության վերաբերյալ, որը գաղտնազերծված չէ և գործում է առ այսօր: 1932թ. նոյեմբերի 5-ին Անկարայում կողմերը ստորագրեցին բարեկամության համաձայնագիր, որտեղ նշվում է, որ երկու երկրների միջև հաստատվում են «անսասան հաշտություն և ջերմ բարեկամություն»: 1937թ. հուլիսին Թուրքիան, Իրանը և Իրաքը կնքեցին Սաադաբադի պայմանագիրը, որը, բացի սահմանների ճշգրտման մասին դրույթներից, ուղղված էր նաև քրդերի դեմ: Կողմերը պարտավորվում էին իրենց տարածքներում արգելել այն զինված խմբերի, կազմակերպությունների գործունեությունը, որոնք ուղղված էին պայմանագրի մյուս անդամ պետությունների դեմ:

Մոսուլի պատկանելության վիճահարույց խնդիրը, որը չէր լուծվել Լոզանի կոնֆերանսի ընթացքում և գտնվում էր Ազգերի լիգայի քննարկման ներքո, հանգուցալուծվեց 1926թ. անգլո-թուրք-իրաքյան պայմանագրի կնքմամբ: Շրջանը ճանաչվում էր որպես Անգլիայի մանդատի տակ գտնվող Իրաքի մաս, սակայն Բաղդադը պետք է քսան տարվա ընթացքում իր նավթային եկամուտների 10%-ը հատկացներ Թուրքիային:

1930 և 1933թթ. կնքված թուրք-հունական պայմանագրերը, որոնցից վերջինը Թուրքիայում ստացավ «Samimi misak» («անկեղծության ուխտ») անվանումը, կոչված էին «մեղմել» երկու երկրների միջև հարաբերությունների լարվածությունը: Լոզանի պայմանագրի համաձայն՝ 1923թ. Հունաստանը և Թուրքիան իրականացրին բնակչության փոխանակման առաջին փուլը, որը շարունակվեց նաև 1930 և 1933թթ. կնքված պայմանագրերի համաձայն: Նշված ժամանակահատվածում տեղի ունեցած բնակչության փոխանակման արդյունքում՝ Հունաստանից շուրջ 500 հազ. մուսուլման թուրք գյուղական բնակիչների փոխարեն Թուրքիայից Հունաստան տեղափոխվեցին 1 մլն-ից ավելի հույն արհեստավորներ և առևտրականներ: Հարկ է նշել, որ ի թիվս այլ հանգամանքների, նման կերպ նոր կայացող թուրք ազգային բուրժուազիան նաև ազատվում էր այլազգի բուրժուազիայի մրցակցությունից:

ԽՍՀՄ-ի հետ խնդիրներն Անկարան լուծել էր դեռ քեմալա-բոլշևիկյան 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի միջոցով՝ Մոսկվայի համաձայնությամբ ստանալով Կարսը, Արդահանը և Արդվինը: 1925թ. Թուրքիայի և ԽՍՀՄ-ի միջև կնքվեց Բարեկամության, համագործակցության և չեզոքության մասին պայմանագիրը՝ 10 տարի ժամկետով և երկարաձգման պայմանով: Այդ պայմանագիրը երկարաձգվեց 1935-ին, սակայն արդեն 1945-ին ԽՍՀՄ նախաձեռնությամբ չերկարաձգվեց, քանի որ Թուրքիան Երկրորդ աշխարհամարտի տարիներին խախտել էր չեզոքության սկզբունքը: 1932թ. Թուրքիան ԽՍՀՄ-ից 8 մլն ոսկե ռուբլու վարկ ստացավ՝ խորհրդային արտադրության արդյունաբերական սարքավորումներ և հաստոցներ ձեռք բերելու պայմանով: Խորհրդա-թուրքական տնտեսական համագործակցության շրջանակներում կառուցվեցին մի քանի տեքստիլ և ապակեգործական գործարաններ Կայսերիում (Կեսարիա), Նազիլիում և այլ քաղաքներում: 1933թ. Մոսկվայից Թուրքիա էր այցելել մեծ պատվիրակություն՝ խորհրդային զորավար Կ. Վորոշիլովի ղեկավարությամբ, որը Քեմալ Աթաթյուրքի, Իսմեթ Ինյոնյուի և Ֆևզի Չաքմաքի հետ միասին ընդունում էր Թուրքիայի Հանրապետության տասնամյա հոբելյանին նվիրված զորահանդեսը: Այդ տարիներին Խորհրդային Միությունն աջակցում էր նաև թուրքական ավիացիայի կայացմանը: Մոսկվայում սովորած թուրք ավիատորների շարքում էր նաև Թուրքիայի առաջին կին օդաչու, Աթաթյուրքի հոգեզավակ Սաբիհա Գյոքչենը: Ուշագրավ է, որ ռուսական պատմագրությունը նշված տարիները բնութագրում է որպես խորհրդա-թուրքական/ռուս-թուրքական հարաբերությունների «ոսկե դար»:

Առավել խնդրահարույց էին հարաբերություններն արևմտյան պետությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի հետ, հիմնականում օսմանյան պարտքի մարումների հետ կապված: Լոզանի համաժողովի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Թուրքիան, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ, պարտավորվել էր մարել օսմանյան շրջանից առաջացած այդ պարտքը, որի մեծ մասը բաժին էր ընկնում Ֆրանսիային հասանելիք գումարներին: Անգլիան կարողացավ արագ կարգավորել իր ֆինանսական խնդիրները, իսկ Թուրքիան, վերջինիս օգնությամբ, կարողացավ նվազեցնել Ֆրանսիային իր պարտքի չափաբաժինը: Այնուհետև, նույն Անգլիայի աջակցությամբ, Անկարան Ֆրանսիայի հետ հասավ

համաձայնության առ այն, որ ոսկե ֆրանկի փոխարեն պարտքը կարելի կլիներ մարել նաև թղթե ֆրանկով: Երբ Երկրորդ աշխարհամարտի տարիներին ֆրանսիական ֆրանկը զգալիորեն արժեզրկվեց, Թուրքիան, ճարպկորեն օգտվելով այդ հանգամանքից, արագ ամբողջությամբ փակեց իր պարտքը:

Այսպիսով, մինչև 1930-ական թթ. Թուրքիան կարողացավ դիմակայել Արևմուտքի հետ ոչ այնքան բարենպաստ հարաբերություններին՝ օգտագործելով ԽՍՀՄ օժանդակությունը և տերությունների միջև եղած հակասությունները: Սակայն 1930-ական թթ. կեսերից Անկարան աստիճանաբար հրաժարվում է Մոսկվայի հետ դաշինքից՝ հօգուտ արևմտյան կողմնորոշման: Ըստ էության, 1930-ական թթ. կեսերից, Երկրորդ աշխարհամարտի նախօրեին անգլո-ֆրանսիական և գերմանա-իտալական դաշինքների միջև պայքար էր ընթանում աշխարհագրական կարևոր դիրք ունեցող Թուրքիայի վրա ազդեցություն ձեռք բերելու համար: Ֆաշիստական Իտալիան ձգտում էր վերականգնել Հռոմեական կայսրության երբեմնի հզորությունը Միջերկրական ծովում: Դա հիմք էր հանդիսանում Թուրքիայի և Ֆրանսիայի մերձեցման համար: 1932թ. Թուրքիան Ֆրանսիայի աջակցությամբ դառնում է Ազգերի լիգայի անդամ, իսկ 1933թ. երկկողմանի պայմանագրեր է կնքում մի շարք բալկանյան պետությունների՝ սեպտեմբերի 14-ին՝ Հունաստանի, հոկտեմբերի 18-ին՝ Ռումինիայի, նոյեմբերի 27-ին՝ Հարավսլավիայի հետ: Դրանով իսկ Թուրքիան դառնում է Բալկանյան Անտանտայի անդամ: Անմիջապես դրանից հետո Թուրքիան նախաձեռնեց նեղուցների հարցով կոնֆերանսի անցկացումը շվեյցարական Մոնտրյո քաղաքում: 1936 թվականին ԽՍՀՄ-ի, Թուրքիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հարավսլավիայի և մի քանի այլ երկրների մասնակցությամբ կնքվեց Մոնտրյոյի կոնվենցիան, որը կանոնակարգում էր սևծովյան Բոսֆոր ու Դարդանել նեղուցներով նավարկությունը և որը, որոշ լրացումներով, գործում է նաև այսօր: Ըստ Մոնտրյոյի համաձայնագրի՝ բոլոր տիպի առևտրական բեռնատար նավերը, առանց որևէ արգելքի կամ վճարի, կարող են անցնել Դարդանելի և Բոսֆորի նեղուցներով դեպի Սև ծով և հակառակը:

Համաձայնագրով նախատեսված է, որ Սև ծովի հետ ափեր ունեցող

երկրներին պատկանող ռազմանավերը խաղաղ պայմաններում ազատ անցնում են նեղուցներով, սակայն Թուրքիային տեղեկացնում են անցնելուց մեկ շաբաթ առաջ, իսկ Սև ծովի հետ ափ չունեցող երկրներին պատկանող ռազմանավերը պետք է զգուշացնեն Թուրքիային 2 շաբաթ առաջ: Սև ծովում ափ չունեցող երկրներին պատկանող ռազմանավերը Սև ծովում կարող են մնալ առավելագույնը 21 օր, որից հետո ստիպված են լքել Սև ծովը: Սև ծովի հետ ափ ունեցող երկրների ռազմանավերը Սև ծովում գտնվելու ժամկետի սահմանափակում չունեն: Սև ծովում ափ չունեցող երկրների նավերն ունեն նաև տարողության սահմանափակում: Պատերազմի ժամանակ Թուրքիան իր հայեցողությամբ կարող է թույլ տալ կամ արգելել որևէ երկրի ռազմանավի անցումը նեղուցներով, իսկ եթե Թուրքիան պատերազմի մեջ չի գտնվում, պարտավոր է փակել նեղուցները բոլորի առաջ: Թուրքական կողմն այս համաձայնագիրն իր համար շահեկան էր համարում, քանզի այն վերականգնում էր Թուրքիայի ինքնիշխանությունը նեղուցների հարցում: ԽՍՀՄ ղեկավարներն, իրենց հերթին, գտնում էին, որ դրանում անտեսվում էին Մոսկվայի շահերը և այդ հարցը դառնալու էր ԽՍՀՄ-ի հետպատերազմյան (1945թ.) արտաքին քաղաքականության առաջնահերթություններից:

1936թ. Թուրքիան Ազգերի լիգայում բարձրացնում է «Հաթայի հարցը»՝ պահանջելով իրեն փոխանցել Ալեքսանդրեթի սանջաքը, որը հանդիսանում էր Ֆրանսիայի մանդատի ներքո գտնվող Սիրիայի անբաժանելի մասը: Թուրքիան այդ տարածքի նկատմամբ իր հավակնություններն էր ներկայացնում դեռևս 1923թ. թուրք-ֆրանսիական համաձայնագրի կնքումից սկսած: Ազգերի լիգայի ճնշման ներքո և Անգլիայի գործուն աջակցությամբ Ֆրանսիան ստիպված եղավ համաձայնվել սանջաքի ինքնավարությանը: 1938թ. Ալեքսանդրեթի սանջաքի օրենսդիր մարմնի ընտրությունների արդյունքում, որոնք անցան թուրքական կողմի բազմաթիվ կեղծիքներով, հռչակվեց «Հաթայի պետությունը»՝ թուրք-ֆրանսիական համատեղ վերահսկողության ներքո: 1938թ. հուլիսի 5-ին ֆրանսիական իշխանությունների համաձայնությամբ թուրքական զորքերը մտան Ալեքսանդրեթի սանջաք: Իսկ 1939թ. հունիսի 23-ին Ալեքսանդրեթի սանջաքը («Հաթայի պետությունը») պաշտոնապես լուծարվեց և բռնակցվեց Թուրքիային՝ ստանալով Հաթայի վիլայեթ անվանումը: Այդ բռնակց-

ման հետևանքով հուլիսի 16-23-ը ընկած ժամանակահատվածում տեղաբնակ շուրջ 40.000 հայ լքեց իր բնակավայրը և հաստատվեց Սիրիայի այլ շրջաններում ու Լիբանանում: Թուրքիային անցած տարածքում միայն մեկ հայկական գյուղ մնաց՝ Վաքըֆլըն (Vakıflı), որը մինչ օրս էլ Թուրքիայի՝ 780 հազար քկմ տարածքի միակ հայկական գյուղն է՝ իր շուրջ 150 բնակչով:

Նշենք նաև, որ 1938-1939թթ. շուրջ տասն ամիս հայկական Քեսաբը գտնվել է Թուրքիայի իշխանության ներքո, երբ այն օրերի ֆրանսիական իշխանությունը, հաշվի առնելով Եվրոպայում հասունացող պատերազմի անխուսափելիությունը և այդ պատճառով ցանկանալով հաճոյանալ Թուրքիային, այդ տարածքները հանձնեց նրա գերիշխանությանը: Քեսաբահայերը, սակայն, չհամաձայնեցին բռնակցման հետ ու բազմաթիվ բողոքի նամակներ գրեցին ֆրանսիացիներին: «Հաթայի պետության» ժամանակաշրջանում թուրքական զորքերի ու պաշտոնյաների կողմից կազմակերպվեցին բռնություններ և զինված բախումներ: Մեծ թվով քեսաբցիներ գաղթեցին Բեյրութ կամ հանգրվանեցին լեռներում: Նշված շրջանում Քեսաբ այցելեցին հայ և ֆրանսիացի բազմաթիվ գործիչներ, այդ թվում և պապական նվիրակ արքեպիսկոպոս Ռեմի Լըփրեթրը: Տեսնելով քեսաբահայերի կացությունն ու գոյամարտը՝ Լըփրեթրը կարեկցում է հայ ժողովրդին և ուղղակիորեն դիմում է Հռոմի պապին և ֆրանսիական կառավարությանը խնդրանքով՝ միացնել Քեսաբի շրջանը Սիրիային: Այսպիսով, Քեսաբի շրջանի բնակելի մասն (Քեսաբի տարածքի 2/3-ը) անջատվում է Հաթայից և վերադարձվում Սիրիային: Այս առնչությամբ մեծ դերակատարություն ունեցավ նաև կարդինալ Գրիգոր Աղաջանյանը: Այնուամենայնիվ, Թուրքիային անցավ Կասիոս լեռը, որի լանջերին էին գտնվում բազմաթիվ քեսաբցիների պատկանող արտեր, պարտեզներ, դափնու անտառներ ու արոտավայրեր: Պետք է նշել, որ Սիրիան երբեք էլ չհաշտվեց Ալեքսանդրեթի սանջաքի կորստի հետ և մինչև 2000-ական թթ. քարտեզներում շարունակում էր այն ներկայացնել որպես Սիրիայի անբաժանելի մաս:

1938թ. նացիստական Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յոահիմ Ռիբենտրոպը պաշտոնական Անկարային առաջարկել էր միանալ «Առանցքի երկրների» դաշինքին, ինչին Թուրքիայի արտգործնախարար Ռյուշթու Արասը պատասխանել էր, որ իրենք չեն

պատրաստվում վերականգնել «Օսմանյան կայսրությունը»: Սակայն հետագայում, պատերազմի տարիներին Թուրքիայում աշխուժացած պանթյուրքիստական տրամադրություններն ու երկրի ամենևին էլ ոչ չեզոք պահվածքը հակառակի մասին էին վկայում: 1939թ. Իտալիայի կողմից Ալբանիայի բռնակցումից հետո Մեծ Բրիտանիան դիվանագիտական հանդիպումներ նախաձեռնեց՝ անգլո-ֆրանս-թուրքական եռակողմ համաձայնագիր կնքելու նպատակով: Հենց այդ ժամանակ Թուրքիան որպես նախապայման առաջ քաշեց Ալեքսանդրեթի սանջաքի վերջնական բռնակցման հարցը: Այսպիսով, Թուրքիայի այդ նախապայմանն այն «գինն» էր, որով Անգլիան և Ֆրանսիան փորձում էին ստանալ Անկարայի չեզոքությունը գալիք պատերազմում: Եվրոպայում սրվող իրավիճակը ստիպեց նաև խորհրդային իշխանություններին ակտիվություն ցուցաբերել Թուրքիայի նկատմամբ:

Այսպիսով, Երկրորդ աշխարհամարտի նախօրեին տարբեր ուժային կենտրոնների միջև պայքար էր ընթանում Թուրքիային իրենց ազդեցության ոլորտը բերելու ողղությամբ՝ այդ երկրի կարևոր աշխարհագրական դիրքը հաշվի առնելով: Իր հերթին, Թուրքիան փորձում էր առավելագույնս օգտվել ստեղծված իրավիճակից: Այդ պայքարն իր արտացոլումը գտավ նաև Անկարայի արտաքին քաղաքականության ոլորագծերում՝ մեծ պատերազմի նախօրեին և ընթացքում:

Գրականություն լրացուցիչ ընթերցանության համար

1. Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Երևան, 2001:
2. Հովհաննիսյան Ա., Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը (Թուրքական փաստաթղթերի և հրապարակումների լուսաբանմամբ), Վեմ համահայկական հանդես, 2011, 1(33), էջ 168-182:
3. Киреев Н., История Турции: XX век, Москва, 2007.

4. Оганесян А., Становление Турецкой Республики и выработка "новой исторической концепции" (1920-1930-ые гг. XXв.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXV, Երևան, 2006, էջ 104-115:
5. Berkes N., Türkiye'de Çağdaşlaşma, Ankara, 1973.
6. Kinross L., Ataturk. The Rebirth of a Nation, London, 1965.
7. Lewis B., The Emergence of Modern Turkey, Oxford, 2002.

ԳԼՈՒԽ Գ

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ. ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ (1939-1950ԹԹ.)

1. Թուրքիայի ներքին քաղաքական իրավիճակը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին

1938թ. նոյեմբերի 11-ին՝ Աթաթյուրքի մահից մեկ օր անց, նախագահի ժամանակավոր պաշտոնակատար, ԹԱՄԺ նախագահ Աբդուլհաք Ռենդան հրավիրում է խորհրդարանի նիստ, որը պետք է ընտրեր երկրի նոր նախագահին: Շրջանառվում էին նախագահի հետևյալ թեկնածուների անունները՝ նախկին վարչապետ Իսմեթ Ինյոնյու, վարչապետ Ջելալ Բայար, Թուրքիայի Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, մարշալ Ֆևզի Չաքմաք, իշխող ՀԺԿ քարտուղար և ներքին գործերի նախարար Շյուքրյու Քայա:

Նկատենք, որ արդեն 1930-ականների կեսերից քաղաքական դաշտում սկսվել էր պայքար իշխանության համար, որտեղ հիմնական մրցակիցներն էին Իսմեթ Ինյոնյուն և Ջելալ Բայարը: Դեռևս 1937թ. սեպտեմբերին այն ժամանակ վարչապետ Իսմեթ Ինյոնյուի և նախագահ Աթաթյուրքի միջև ծագել էր լուրջ խնդիր, որի հետևանքով Ինյոնյուն թողել էր վարչապետի պաշտոնը: Պաշտոնանկությունից հետո Աթաթյուրքի և Ինյոնյուի հարաբերությունները սառն են եղել, վերջինս պահպանել է ԹԱՄԺ պատգամավորի կարգավիճակը, սակայն ակտիվ մասնակցություն չի ունեցել պետական կառավարման գործերին, չի շփվել Աթաթյուրքի հետ՝ անգամ

նրա հիվանդության ժամանակ, սակայն, միևնույն է, իշխանական և կուսակցական շրջանակներում պահպանել էր իր հեղինակությունը և մեծամասնության կողմից ընկալվել է նախագահի պաշտոնի թերևս միակ իրավահաջորդը: Նկատենք նաև, որ Աթաթյուրքն իր կտակում իրավահաջորդի անուն չէր նշել, սակայն հատուկ կետով առանձնացրել էր միայն Ինյոնյուի անունը՝ հանձնարարելով ֆինանսական և այլ աջակցություն ցույց տալ նրա երեխաներին կրթություն ստանալու համար: Այս հանգամանքը ոմանք և հատկապես գլխավոր շտաբի պետ Ֆևզի Չաքմաքն ընկալել էին որպես Աթաթյուրքի կողմից իր իրավահաջորդի անուղղակի մատնանշում: Չնայած ինքը՝ Ֆևզի Չաքմաքը համարվում էր նախագահի հավանական թեկնածու, կար նաև իրավական խոչընդոտ նրա թեկնածության առաջադրման համար. Չաքմաքը պատգամավոր չէր, իսկ նախագահ ընտրվելու համար թեկնածուն անպայման պետք է ունենար պատգամավորի կարգավիճակ: Ճիշտ է, այդ խնդիրը հեշտ լուծելի էր, այնուամենայնիվ, Չաքմաքը բացահայտ պաշտպանեց Իսմեթ Ինյոնյուի թեկնածությունը, իսկ դա Թուրքիայի պարագայում նշանակում էր նաև բանակի աջակցություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Հենց այդ հանգամանքն էլ հաշվի առնելով՝ մյուս թեկնածուն՝ վարչապետ Ջելալ Բայարը, չմտավ պայքարի մեջ, և ՀԺԿ խմբակցության նիստում ներկաների բացարձակ մեծամասնությունը կողմ արտահայտվեց Ինյոնյուի թեկնածությանը: 1938թ. նոյեմբերի 11-ին ԹԱՄԺ նիստում Իսմեթ Ինյոնյուն, ստանալով 348 ձայն, ընտրվեց Թուրքիայի Հանրապետության նախագահ: Նրա նախագահությամբ սկսվեց մի նոր շրջան, որն ընդունված է անվանել «ազգային շեֆի» շրջան՝ լի ներքին և արտաքին բարդ քաղաքական խնդիրներով, ազգային փոքրամասնությունների հալածանքի սրացմամբ, ազգայնամոլության աճով:

Ձևավորվեց նոր կառավարություն՝ Ջելալ Բայարի գլխավորությամբ. արտաքին գործերի նախարարի պաշտոնում Թեֆիք Ռյուշթու Արասին փոխարինեց Շուքրյու Սարաջօղլուն, Գլխավոր շտաբը շարունակեց գլխավորել Ֆևզի Չաքմաքը: Սակայն Ջելալ Բայարն ընդամենը երկու ամիս ղեկավարեց կառավարությունը՝ իր տեղը զիջելով Ռեֆիք Սայդամին, որը վարչապետի պաշտոնում մնաց մինչև իր մահը՝ 1942թ. ապրիլի 1-ը:

Իսմեթ Ինյոնյուն որոշ հարցերի նկատմամբ Աթաթյուրքից բավական տարբեր դիրքորոշում է ունեցել. օրինակ՝ թուրք հայտնի պատմաբան Իլբեր Օրթայլիի փոխանցմամբ՝ նա դեմ է եղել անգամ լեզվական բարեփոխմանը՝ արաբատառ այբուբենի փոփոխմանը: Նախագահ դառնալուց հետո Իսմեթ Ինյոնյուն քայլեր է անում Աթաթյուրքի ժամանակ և անձամբ նրա հետ կոնֆլիկտ ունեցած մի շարք քաղաքական գործիչների հետ հարաբերությունները կարգավորելու և նրանց քաղաքական ասպարեզ վերադարձնելու ուղղությամբ: Քյազըմ Քարաբեքիրը, Հուսեյին Ջահիդ Յալչընը, Հուսեյին Ռաուֆ Օրբայը, Ալի Ֆուադ Ջեբեսոյը և այլք պաշտոններ ստացան խորհրդարանում ու պետական կառավարման այլ օղակներում: Օրինակ՝ Աթաթյուրքի ժամանակ ակտիվ քաղաքական գործընթացներից մեկուսացված գեներալ Քյազըմ Քարաբեքիրի կարիերան էական փոփոխության է ենթարկվում. 1939թ. հունվարի 26-ին նա ընտրվում է պատգամավոր Ստամբուլից, 1943թ. վերընտրվում է, իսկ 1946թ. օգոստոսի 5-ին դառնում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ:

Աթաթյուրքի մահից հետո որոշ փոփոխություններ են արվում նաև ՀԺԿ կանոնադրության և ղեկավար կազմի մեջ: Կուսակցության գլխավոր քարտուղար Շյուքրյու Քայային փոխարինում է Ռեֆիք Սայդամը, որի առաջարկով կանոնադրության 2-րդ և 3-րդ կետերում փոփոխություններ են արվում: 2-րդ կետում որպես «կուսակցության անփոփոխ նախագահ» նշված էր Քեմալ Աթաթյուրքի անունը, որը կանոնադրության վերափոխված տարբերակում ստանում է «հավերժ նախագահ» ձևակերպումը, իսկ արդեն 3-րդ կետում տեղ է գտնում «կուսակցության անփոփոխ նախագահը Իսմեթ Ինյոնյուն է» ձևակերպումը: Նոր նախագահին փոխանցվեցին նաև անձի պաշտամունքի որոշակի տարրեր, որոնք ձևավորվել էին թուրքական քաղաքական համակարգում դեռևս Աթաթյուրքի իշխանության տարիներին. այսպես, եթե Աթաթյուրքն ուներ «թուրքերի հայր» կոչումը, ապա Իսմեթ Ինյոնյուին 1938թ. դեկտեմբերի 26-ին ՀԺԿ արտահերթ համագումարում տրվեց «ազգային շեֆ» (Milli Şef) կոչումը: Հետագայում անձի պաշտամունքը շարունակվեց և ավելի խորացավ. 1940-ական թթ. տպագրվում էին Ինյոնյուի նկարով դրոշմանիշներ, թղթադրամներ, հրատարակվում էր «Ինյոնյուի հանրագիտարան», նրա անունով սահմանվել էր պետական մրցանակ, կառուցվեց Ինյոնյուի անվան մարզադաշտ և այլն:

Ինյոնյուի նախագահության սկզբնական շրջանը համընկավ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Հետապնդելով ագրեսիվ և ռասիստական նպատակներ՝ Թուրքիան սկսեց ակտիվորեն զինվել և ավելացնել բանակի թիվը, որն էլ պահանջում էր ռազմական ծախսերի շեշտակի աճ: Այսպես, 1938-1939թթ. ուղղակի ռազմական հատկացումները կազմել են բյուջեի ծախսային մասի 30 տոկոսը, իսկ 1943-44թթ.՝ 58,2 տոկոսը: 1942թ. Թուրքիայի բանակի թիվը հասել էր 1 միլիոնի: 1940թ. վերջին ԹԱՄԺ-ը ընդունեց օրենք, համաձայն որի՝ զինվորական ծառայության ենթակա չէին միայն 15 տարեկանը չբոլորած պատանիները և 65-ն անց տղամարդիկ: Օրենքում շեշտված էր, որ ծառայությունից ազատվում էին նաև հղի կանայք, և սա հիմք է տվել մասնագետներին կարծելու, որ թուրքական իշխանությունները ծրագրել էին անհրաժեշտության դեպքում բանակ զորակոչել նաև կանանց: Պատերազմի տարիներին Թուրքիայում ակտիվորեն ծավալվել է նաև ճանապարհների, երկաթուղու շինարարություն, հատկապես ԽՍՀՄ սահմանների ուղղությամբ. օրինակ՝ Սեբաստիա - Էրզրում ճանապարհը, Էրզրում - Սարիղամիշ և Երզնկա - Մուշ - Դատվան երկաթուղագծերը: Սրանք, անշուշտ, կարող էին կարևոր նշանակություն ունենալ նաև պատերազմի դեպքում: Ակտիվորեն ընթացել են նաև նոր օդանավակայանների շինարարությունը և հների վերանորոգումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի ակտիվ ռազմականացումը կարելի է պայմանականորեն բաժանել երեք փուլի. առաջին, երբ Խորհրդային Միության և Ֆինլանդիայի միջև պատերազմի ժամանակ Թուրքիան ծրագրում էր Անգլիայի և Ֆրանսիայի հետ մասնակցել ԽՍՀՄ-ի դեմ պատերազմին, երկրորդ՝ արդեն ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումից հետո Թուրքիան ակնհայտ ռազմական և քաղաքական նախապատրաստություններ էր անում ընդդեմ ԽՍՀՄ-ի պատերազմի մեջ մտնելու համար, երրորդը, որն առավելապես կեղծ բնույթ ուներ, սկսվում է Թեհրանի կոնֆերանսից հետո, երբ Թուրքիան իբր պատրաստվում էր պատերազմի մեջ մտնել Գերմանիայի դեմ: Այսինքն՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի ռազմականացումն ուներ առավելապես ագրեսիվ հակախորհրդային բնույթ:

Բնականաբար, ռազմական ծախսերը լուրջ խնդիրներ առաջացրին երկրի տնտեսության համար և հարկերի բարձրացման կամ հին հարկատեսակների վերակիրառման պատճառ դարձան: Արդեն 1940թ. սկզբին պետության ցորենի պահուստային ֆոնդը սպառվել էր, ինչի հետևանքով երկրում սկսվեց հացի դեֆիցիտ, արձանագրվեց նաև գնաճ:

1940թ. հունվարի 18-ին ԹԱՄԺ-ը ընդունում է «Ազգային պաշտպանության մասին» օրենք, որը կառավարությանը տալիս էր արտակարգ իրավասություններ տնտեսական կյանքի վրա ազդելու և այն կարգավորելու համար: Այդ օրենքի տված լիազորություններով կառավարությունն սկսեց վերահսկել արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, ֆինանսները, արտաքին և ներքին առևտուրը, մտցրեց աշխատանքային պարհակ և գիշերային հերթափոխ, ավելացրեց աշխատանքային օրվա տևողությունը, արտոնեց արդյունաբերության մեջ կիրառել նաև մանկական աշխատուժը:

1940-ական թթ. ներքին քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր հողային բարեփոխումը, որով նախատեսվում էր հողազուրկ կամ քիչ հող ունեցող գյուղացիներին տալ հողեր և սահմանափակել մեծ հողատերերին, որոնք, ըստ օրենքի, 5000 դյոնումից (մոտ 5000 հա) ավելի հող չպետք է ունենային:

Պատերազմի տարիներին Թուրքիայի արտաքին առևտուրը բավական շահեկան վիճակում էր գտնվում, երկիրը շարունակում էր առևտրային հարաբերություններ պահպանել ինչպես ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, այնպես էլ պատերազմին չմասնակցող չեզոք պետությունների հետ: Սակայն հատկապես զգալի էին Գերմանիայի հետ նրա առևտրի ծավալները. բավական է նշել, որ Թուրքիայի արտաքին առևտրի մեջ Գերմանիան զբաղեցնում էր առաջին տեղը: Պատերազմի տարիներին Թուրքիան Գերմանիային էր վաճառում քրոմ, պղինձ, բամբակ, բուրդ, կաշի, ծխախոտ և այլ ապրանքներ:

Տվյալ ժամանակաշրջանում և ավելի ուշ Թուրքիայի Հանրապետության կարևոր խնդիրներից էր բնակչության գրագիտության մակարդակի բարձրացումը: Ըստ պաշտոնական տվյալների՝ 1935թ. Թուրքիայում բնակչության միայն 19,3 տոկոսն էր տառաճանաչ: Ստորև ներկայացվող աղյուսակում տրված է բնակչության գրագիտություն ունեցող շերտի տոկոսային պատկերը՝ նաև ըստ սեռային բաժանման.

Տարի	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
1935	29.4	9.8	19.3
1940	36.2	12.9	24.6
1945	43.7	16.8	30.2
1950	45.3	19.4	32.4
1955	55.8	25.5	40.9
1960	53.6	24.8	39.5

Փաստորեն, 1960թ. բնակչության գրագետ շերտը չէր մոտենում անգամ 50 տոկոսին, և միայն 1970 թվականին է Թուրքիայի բնակչության կեսից ավելին՝ 54.2 տոկոսը, դարձել գրագետ:

Անգրագիտության խնդիրը լուծելու համար թուրքական իշխանությունները ոլորտակի քայլեր էին կատարում. Ինյոնյուի կառավարման տարիներին կրթական ոլորտին վերաբերող և անգրագիտությունը վերացնելուն միտված կարևոր նախաձեռնություններից էր «գյուղական ինստիտուտների» (Köy enstitüleri) հիմնումը: Կառավարությունը հայտարարեց Թուրքիայի բոլոր գյուղերը դպրոցներով և ուսուցիչներով ապահովելու մասին: 1940 թվականին ստեղծվեցին «գյուղական ինստիտուտներ», որոնք իրենց բնույթով մանկավարժական [illegible] էին, որ ընդունում էին գյուղական տարրական դպրոցներ ավարտած գյուղացի տղաներին: [illegible] դրանք տարի տարի ստանալ ընդունում [illegible] էին գյուղական դպրոցներ: [illegible] գյուղերում [illegible] ինստիտուտներ [illegible] Թուրքիան [illegible] ակնկալում [illegible] հանձնաժողովներ [illegible] ինստիտուտներ [illegible] գյուղերում [illegible] ինստիտուտներ [illegible] դրանց [illegible] գյուղերում [illegible]

հիմնվեցին Թուրքիայի պետական կոնսերվատորիան, օպերան և թատրոնը, սիմֆոնիկ նվագախումբը:

1942թ. օգոստոսին մահացած վարչապետ Ռեֆիք Սայդամին փոխարինեց արտաքին գործերի նախարար Շուքրյու Սարաջօղլուն[7]: Վարչապետ նշանակվելուց հետո մեջլիսում իր առաջին ելույթի ժամանակ Սարաջօղլուն շեշտել է իր ազգայնամոլական ուղղվածությունը՝ հայտարարելով. «Մենք թուրք ենք, թյուրքիստ (türkçü) ենք և միշտ թյուրքիստ ենք մնալու: Մեզ համար թյուրքականությունն ինչքան որ արյան, այնքան էլ խղճի և մշակույթի հարց է»:

Փաստերը ցույց են տալիս, որ այդ շրջանում հասարակության տարբեր խավերում ձևավորվել և ավելանում էին դժգոհություններն իշխանություններից: Այսպես, օրինակ՝ հողային բարեփոխումը լուրջ դժգոհություն էր առաջացրել խոշոր հողատերերի շրջանում, իսկ գների թանկացումը, հարկերի աճը, սոցիալական վիճակի վատացումը՝ հասարակության գրեթե բոլոր խավերում:

Հասարակության տարբեր խավերում առկա դժգոհություններին զուգահեռ՝ հենց իշխող ՀԺԿ-ում և մասնավորապես նրա խորհրդարանական խմբակցությունում կառավարության քաղաքականությունից դժգոհ անձանց ու խմբերի առավել հրապարակային և կազմակերպված դրսևորումներ սկսեցին նկատվել արդեն 1944թ. սկզբին: Այդ պատճառով վարչապետ Սարաջօղլուն 1944թ. մարտին քվեարկության էր ներկայացրել իր գլխավորած կառավարության վստահության հարցը: Քվեարկության արդյունքում պատգամավորների մեծ մասը վստահություն հայտնեց կառավարությանը, իսկ 57 պատգամավոր անվստահություն հայտնեց: Սա միակուսակցական ռեժիմի պարագայում առաջին և եզակի դեպքերից էր, երբ իշխող կուսակցության շարքերում նմանատիպ երևույթ էր արձանագրվում:

Այդ տրամադրություններն աստիճանաբար խորանում էին: 1945թ. կեսերին պատգամավոր Ադնան Մենդերեսը, ելույթ ունենալով ՀԺԿ խորհրդարանական խմբակցության նիստում, նշել է, որ քաղաքական

7 Շ. Սարաջօղլուն 1927-1930թթ. եղել է Թուրքիայի ֆինանսների նախարարը, 1932-1938թթ.՝ արդարադատության նախարարը, 1938-42թթ.՝ արտաքին գործերի նախարարը, 1942-1946թթ.՝ վարչապետը, 1948-1950թթ.՝ ԹԱՄԺ նախագահը:

դրությունն ավելի է վատթարանալու, քանի դեռ կա միակուսակցական համակարգ: Նա կարծիք է հայտնել, որ երկրում չի կարող լինել միայն մեկ կուսակցություն: Սրանք առաջին և կարևոր նախանշաններն էին, որոնք կարճ ժամանակ անց հանգեցնելու էին Թուրքիայում միակուսակցական համակարգի փլուզմանը և քաղաքական նոր զարգացումների:

2. Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի արտաքին քաղաքականությունն առավելապես բնութագրվում է որպես անվստահելի և երկդիմի: Այդ շրջանում արտաքին քաղաքականության մեջ հատկապես կարևոր է առանձնացնել երեք ուղղություն. առաջին՝ Թուրքիայի հարաբերություններն Արևմուտքի հետ, երկրորդ՝ թուրք-գերմանական հարաբերություններն առանձին վերցված և երրորդ՝ Թուրքիայի հարաբերությունները Խորհրդային Միության հետ:

Արդեն 1930-ական թթ. վերջին Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ նկատվում է Արևմուտքի հետ առավել ջերմ հարաբերություններ հաստատելու միտում: 1939թ. մայիսի 12-ին ստորագրվում է անգլո-թուրքական նախնական համաձայնագիրը, որը ենթադրում էր «Միջերկրական ծովում ագրեսիայի դեպքում փոխադարձ օգնություն և համագործակցություն»: Նույն թվականի հունիսին նմանատիպ համաձայնագիր է ստորագրվում նաև Ֆրանսիայի հետ: Իսկ արդեն 1939թ. հոկտեմբերի 19-ին Անկարայում Թուրքիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև կնքվում է փոխադարձ օգնության պայմանագիր, որով Թուրքիան պարտավորվում էր օգնություն ցուցաբերել Ֆրանսիային և Մեծ Բրիտանիային այն դեպքում, եթե «եվրոպական տերության կողմից կիրառվի ագրեսիա, որը կհանգեցնի Միջերկրական ծովի ավազանում պատերազմի և որում ներգրավված կլինեն Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան»: Պայմանագրի գործողության ժամկետը 15 տարի էր:

Սակայն Թուրքիայի համար հատկապես կարևոր էին Գերմանիայի հետ հարաբերությունները, որոնք ունեցան ոչ միայն երկկողմ, այլև աշխարհաքաղաքական նշանակություն և դեր: 1941թ. հունիսի 18-ին, այսինքն՝ ԽՍՀՄ-ի վրա նացիստական Գերմանիայի հարձակվելուց չորս օր առաջ, Գերմանիան Թուրքիայի հետ կնքում է «Բարեկամության և չհարձակման մասին» պայմանագիր:

Խոսելով Թուրքիա-ԽՍՀՄ հարաբերությունների մասին՝ պետք է նշել, որ դրանցում կարևոր նշանակություն ունի 1925թ. դեկտեմբերի 17-ին Փարիզում ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև կնքված «Բարեկամության և չեզոքության մասին» պայմանագիրը, որով նախատեսվում էր պահպանել չեզոքություն կողմերից մեկի՝ այլ պետությունների հետ պատերազմի մասնակցելու դեպքում: Այդ պայմանագիրը 1935թ. երկարաձգվել էր 10 տարով: Սակայն արդեն 1941թ. հունիսի 18-ին Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքված «Բարեկամության և չհարձակման մասին» պայմանագիրը համարվում էր վերոհիշյալ թուրք-խորհրդային պայմանագրի՝ 1929թ. դեկտեմբերի 17-ին ստորագրված կից արձանագրության խախտում, քանի որ, ըստ պայմանագրի, Թուրքիան պարտավոր էր նախօրոք այդ մասին տեղեկացնել Խորհրդային Միությանը:

Ընդհանրապես պետք է նշել, որ Թուրքիան իր ստանձնած միջազգային պարտավորությունները և պայմանագրերը խախտելու լուրջ ավանդույթ ունի, և դա սուր կերպով դրսևորվեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Ասվածի ապացույցներից է այն, որ համաձայն 1939թ. կնքված անգլո-ֆրանս-թուրքական պայմանագրի՝ Թուրքիան պարտավոր էր օգնություն ցուցաբերել իր դաշնակից Ֆրանսիային, որը մտել էր պատերազմի մեջ ընդդեմ Գերմանիայի: Սակայն Թուրքիան, փաստորեն, խախտեց նաև այս պայմանագիրը՝ չաջակցելով ոչ Ֆրանսիային, ոչ էլ Մեծ Բրիտանիային, չնայած այդ երկու երկրներն էլ 1940թ. հունիսին նման պահանջով դիմել էին իրենց դաշնակցին: Թուրքիայի վարչապետ Ռեֆիք Սայդամը խորհրդարանին ներկայացրեց իր գլխավորած կառավարության որոշումը՝ ձեռնպահ մնալ դաշնակիցներին ըստ պայմանագրի ռազմական աջակցություն ցույց տալուց և դրա համար ոչ համոզիչ ու անհիմն փաստարկներ ներկայացրեց:

ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակվելուց երեք օր անց՝ 1941թ. հունիսի 25-ին, Թուրքիան հռչակեց չեզոքություն, սակայն, ինչպես ցույց

տվեցին հետագա դեպքերը, դա իրականում սոսկ հայտարարություն էր, քանի որ Թուրքիան, հայտարարելով իր «չեզոքության» մասին, ակտիվ գործունեություններ էր իրականացնում և փաստացի դարձել էր ֆաշիստական Գերմանիայի չպատերազմող դաշնակիցը:

Այդ «տարօրինակ չեզոքությունն» ուներ տնտեսական, քաղաքական և ռազմական բաղադրիչներ, որոնք հստակորեն սպասարկում էին գերմանական շահերը: Այսպես, գերմանական ռազմական արդյունաբերությունը քրոմի սուր կարիք էր զգում, հատկապես պատերազմի տարիներին: Անգամ պաշտոնական տվյալներով միայն 1943թ. և 1944թ. առաջին երկու ամիսներին Թուրքիայից Գերմանիա է արտահանվել 62.000 տոննա քրոմ: Այդ արտահանումը դադարել է միայն 1944թ. ապրիլին՝ հակագերմանական դաշինքի երկրների կողմից Թուրքիային խիստ նախազգուշացումից հետո:

Թուրքիան որոշակի ակտիվություն էր ցուցաբերում նաև ռազմական ասպարեզում: Այսպես, 1941թ. աշնանը նախագահ Ինյոնյուի հանձնարարությամբ պատերազմական ճակատ են գործուղվել Թուրքիայի ռազմական ակադեմիայի ղեկավար Յըլդըզ Ալի Ֆուադ Էրդենը և պաշտոնաթող գեներալ Էրքիլեթը: Նրանք հանդիպել են գերմանական զինվորական պաշտոնյաների հետ, այցելել ռազմագերիների ճամբարներ, եղել են գերմանացիների կողմից գրավված ԽՍՀՄ տարածքներում, հանդիպել են Հիտլերի հետ: Իրենց այցից ստացած տպավորությունների մասին, որոնք մեծ մասամբ հիացական էին, նրանք զեկուցել են Ինյոնյուին: Սա ցույց է տալիս, որ Թուրքիան ոչ միայն «տարօրինակ չեզոքություն» էր պահպանում, այլև ռեալ նախապատրաստական քայլեր էր անում պատերազմի մեջ հնարավոր ներքաշման համար: 1942թ. աշնանը Թուրքիան մեծ թվով զորքեր էր կուտակել խորհրդա-թուրքական սահմանին՝ դրանով էական վնաս հասցնելով ԽՍՀՄ-ին, քանի որ վերջինս ստիպված էր որոշ ուժեր պահել սահմանի այդ մասում, մինչդեռ դրանք կարող էին օգտագործվել խորհրդա-գերմանական ռազմաճակատի այլ վայրերում: Ինչպես պարզվել է հետագայում գերմանական դրվանագիտական փաստաթղթերից, թուրքական զորքերի նման տեղաբաշխումը նաև գերմանական կողմի ցանկությունն է եղել. դեռ 1942թ. հունվարին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ֆոն Պապենը նախագահ Ինյոնյուի հետ հանդիպման ժամանակ ասել է «Գերմանիայի համար շատ արժեքավոր կլիներ թուրքական ռազմական ուժերի կենտրոնացումը ռուսական (խորհրդային) սահմանին»: Փաստորեն, Թուրքիան իր այդօրինակ «չեզոքությամբ» Գերմանիային ցուցաբերել էր անուղղակի ռազմական օգնություն:

1942թ. սեպտեմբերին խորհրդա-թուրքական սահմանի ողջ երկայնքով տեսչական այց է կատարում նաև Թուրքիայի վարչապետ Շուքրյու Սարաջօղլուն, այդ շրջաններում տեղակայված բանակային զորամիավորումների (26 դիվիզիա) հրամանատարները ստանում են «Ռազմական պատրաստություն № 1» գաղտնի հրամանը:

1942թ. վերջին արդեն բավական իրական էր դարձել Թուրքիայի մասնակցությունը պատերազմին ֆաշիստական բլոկի կազմում: Այսպես, պատերազմից հետո ի հայտ եկած փաստերը ցույց են տալիս, որ Թուրքիան ծրագրել էր պատերազմի մեջ մտնել և հարձակվել ԽՍՀՄ-ի վրա 1942թ. նոյեմբերին, ավելի կոնկրետ՝ Ստալինգրադի ճակատամարտից հետո: Իսմեթ Ինյոնյուն անգամ զանգահարել է Գերմանիայի դեսպան Ֆոն Պապենին, որպեսզի հայտնի, որ շուտով Թուրքիան մտնելու է պատերազմի մեջ, սակայն գերմանացի դեսպանը մինչ այդ հայտնել է, որ Ստալինգրադում գերմանական զորքերն անհաջողություն են կրել, ինչից հետո Թուրքիայի նախագահն անմիջապես փոխել է մտադրությունը և, բնականաբար, չի հայտնել իրենց որոշման մասին:

Գերմանիային որոշակի և լուրջ ռազմական օգնություն էր նաև այն, որ Թուրքիան 1941, 1942, 1944 թվականներին, բազմիցս խախտելով Մոնտրյոյի սևծովյան նեղուցների ռեժիմի մասին կոնվենցիան, թույլ է տվել գերմանական և իտալական ռազմանավերին մուտք գործել Սև ծով: Այս խնդրի վերաբերյալ ԽՍՀՄ իշխանությունները Թուրքիային են հղել պաշտոնական բողոքի մի քանի նոտա, որոնցից առաջինը 1941թ. հուլիսին էր:

ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակվելու լուրը Թուրքիայում ընդունվել էր խանդավառությամբ, և թուրքական քաղաքական համակարգում տիրել է, կարելի է ասել, համընդհանուր ուրախություն: Այդ անսահման ոգևորությունը փաստող տարրերից է, օրինակ, այն, որ արտաքին գործերի նախարար Սարաջօղլուն ստիպված է եղել հունիսի 22-ին անջատել իր հեռախոսը, որպեսզի ազատվի անվերջանալի շնորհավորանքների տարափից: Թուրքական քաղաքական վերնախավն այդ օրվա առթիվ

անգամ խրախճանք է կազմակերպել: Ոգևորության պատճառները մի քանիսն են. նախ՝ ավանդական հակառուսականությունը, որը բխում էր, մի կողմից, ռազմավարական շահերի բախումից, մյուս կողմից՝ ռուս-թուրքական պատերազմներում կրած պարտություններից: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ պատերազմն ակտիվացրել էր թուրքական իշխանությունների պանթյուրքիստական տրամադրությունները և քաղաքական ու անգամ տարածքային ագրեսիվ նկրտումները:

Պատերազմի տարիներին, հատկապես սկզբնական շրջանում, գերմանական զորքերի առաջխաղացմանը զուգահեռ՝ Թուրքիայում ոչ պատահականորեն ակտիվացան պանթյուրքիստական շրջանակները և քաղաքական, և հասարակական ոլորտներում: Այդ ծայրահեղ ազգայնամոլները համակողմանի աջակցություն և քաջալերանք էին ստանում ինչպես թուրքական իշխանությունների, այնպես էլ ֆաշիստական Գերմանիայի կողմից: Թուրքական իշխանությունների կամքով և թույլտվությամբ սկսեցին ձևավորվել ազգայնամոլական կազմակերպություններ, հրատարակվել պանթյուրքիստական ուղղվածություն ունեցող մի շարք գրքեր, թերթեր, ամսագրեր, ինչպիսիք էին, օրինակ, «Բոզքուրթը», «Օրհոնը», «Էրգենեքոնը» և այլն: Հիշյալ պարբերականներում պանթյուրքիզմի տեսաբանները ներկայացնում և քարոզում էին ծայրահեղ ազգայնամոլական այդ գաղափարախոսությունը և դրա առանձին դրույթները: Այդ տեսաբանների մեջ հատկապես ակտիվ էր հայտնի պանթյուրքիստ Նիհալ Աթսըզը (1905-1975թթ.): Հարկ է նշել նաև, որ հենց այդ շրջանում՝ 1943թ. Թուրքիայի կառավարության ընդունած որոշման համաձայն, Գերմանիայից Թուրքիա տեղափոխվեց երիտթուրք պարագլուխ և ոճրագործ Թալեաթ փաշայի աճյունը, որը պաշտոնական հատուկ արարողակարգով վերահուղարկավորվեց Ստամբուլի Շիշլի թաղամասում գտնվող «Ազատության հուշարձանի» (Abide-i Hürriyet) կողքին գտնվող պանթեոնում: Հուղարկավորությանը մասնակցում էր պետական վերնախավը՝ նախագահ Իսմեթ Ինյոնյուի գլխավորությամբ:

Եթե պանթյուրքիզմի ակտիվացմամբ Թուրքիան ագրեսիվ ծավալապաշտական նպատակներ էր հետապնդում, ապա Գերմանիան ձգտում էր Թուրքիայի միջոցով ԽՍՀՄ տարածքում բնակվող թյուրքալեզու ժողովուրդներին օգտագործել հակախորհրդային պայքարում: Այդ նույն նպատակով հիշյալ ժամանակաշրջանում թուրքական իշխանությունների աջակցությամբ, կամքով և թույլտվությամբ ակտիվացավ նաև Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասյան և իր բնույթով հակառուսական էմիգրացիան:

Այդ տարիներին Թուրքիայում նորից աշխուժացան ԽՍՀՄ կազմի մեջ գտնվող թյուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքների և Կովկասի նկատմամբ թուրքական հավակնությունները: Թուրքական բարձրագույն իշխանությունները գերմանական կողմին հայտնել էին խորհրդային որոշ տարածքների հանդեպ իրենց հետաքրքրության մասին, ինչպես նաև տեղեկացրել էին, որ պատրաստակամ են առավել ակտիվ մասնակցություն ունենալ գործողություններին այդ նպատակների իրագործման համար:

Բացահայտ պանթյուրքիստական բնույթի հայտարարությունները սկսեցին բավական հաճախ տեղ գտնել թուրք բարձրաստիճան պաշտոնյաների հռետորաբանության մեջ: Օրինակ, Թուրքիայի ազգայնամոլ վարչապետ Սարաջօղլուն 1942թ. իր ելույթներից մեկում բազմանշանակ հայտարարել էր. «Բնական է, որ Թուրքիան անտարբեր չի մնա այն 40 միլիոն թյուրքերի նկատմամբ, որոնք ԽՍՀՄ քաղաքացիներ են»:

Իսկ ոչ հրապարակային ելույթներում թուրքական իշխանություններն ավելի բացահայտ և իրենց բնույթով հակամարդկային ու ցեղասպան մտքեր էին արտահայտում և խորհուրդներ տալիս գերմանական կողմին: Գերմանիայի արտաքին գործերի նախարարության՝ Թուրքիային վերաբերող 1941-43թթ. փաստաթղթերից մեկում ներկայացված է Թուրքիայում այդ տարիներին դեսպան ֆոն Պապենի ուղարկած գաղտնի հաշվետվությունը, որտեղ դեսպանը պատմում է Թուրքիայի նորանշանակ վարչապետ Շուքրյու Սարաջօղլուի հետ իր հանդիպման մասին: Հանդիպման ժամանակ Սարաջօղլուն դեսպանին հայտնել էր, որ «որպես թուրք նա փափագում է Ռուսաստանի ոչնչացումը»: Այնուհետև թուրք վարչապետը խորհուրդ էր տվել գերմանացիներին հաղթանակի հասնելու համար «կոտորել Ռուսաստանում ապրող ռուսների առնվազն կեսին»:

Պատերազմի տարիներին խորհրդա-թուրքական հարաբերություններում արձանագրվեց մեկ աղմկահարույց զարգացում ևս. 1942թ. ձերբակալվեցին խորհրդային երկու քաղաքացիներ՝ ԽՍՀՄ դեսպանատան աշխատակից Գեորգի Պավլովը և ԽՍՀՄ առևտրական ներկայացուցչության աշխա-

տակից Լեոնիդ Կոռնիլովը, որոնք մեղադրվեցին Գերմանիայի դեսպան Պապենի դեմ մահափորձ կազմակերպելու մեջ: Սա բավական լուրջ դիվանագիտական սկանդալի վերածվեց, քանի որ թուրքական իշխանությունները բացահայտ խախտել էին նաև դիվանագիտական անձեռնմխելիության որոշակի կետեր և ձերբակալել նրանց (օրինակ՝ Ստամբուլում գտնվող ԽՍՀՄ հյուպատոսությունը մի քանի օր շարունակ ուղղակի շրջափակվել էր թուրքական ոստիկանության կողմից): Չնայած պաշտոնական Մոսկվայի դիվանագիտական կոշտ հայտարարություններին՝ ԽՍՀՄ երկու քաղաքացիներն էլ դատապարտվեցին 20-ական տարվա ազատազրկման:

Պատերազմի տարիներին, չնայած Թուրքիայի բացահայտ գերմանամետ պահվածքին, Մեծ Բրիտանիան որոշակի ջանքեր էր գործադրում Թուրքիային հակաֆաշիստական երկրների խմբավորման մեջ ներառելու համար: Այդ նպատակով 1943թ. հունվարին Ադանայում տեղի ունեցավ Իսմեթ Ինյոնյուի և Չերչիլի հանդիպումը, իսկ նույն թվականի վերջին Չերչիլը, Ռուզվելտը և Ինյոնյուն հանդիպեցին Կահիրեում, սակայն այս հանդիպումներն անարդյունք մնացին, և Թուրքիան շարունակեց «չեզոքության» քաղաքականությունը:

Արդեն 1944թ. պատերազմում ուժերի հարաբերակցության փոփոխությունը, դաշնակիցների զորքերի հաջողությունները Թուրքիային կանգնեցրին բարդ իրավիճակի առջև, և վերջինս ստիպված եղավ ակտիվ սրբագրումներ անել իր գերմանամետ քաղաքականության մեջ: Հարկ է նկատել նաև, որ Թուրքիայի բոլոր քայլերը բխում էին ստեղծված իրավիճակից և կրում էին իմիտացիոն բնույթ: Այսպես, Թուրքիան նախ սկսեց պաշտոններից հեռացնել իրենց բացահայտ նացիստամետ պահվածքով հայտնի մի շարք պաշտոնյաների, որոնց գործունեությունը դարձել էր նաև միջպետական հարաբերությունների թեմա Թուրքիայի և հակաֆաշիստական խմբավորման պետությունների միջև: Այդ պաշտոնյաներից էին, օրինակ, գլխավոր շտաբի պետ Ֆևզի Չաքմաքը, արտաքին գործերի նախարար Նուման Մենեմենջիօղլուն, որին ազատելով պաշտոնից՝ թուրքական իշխանությունները փորձում էին համոզել դաշնակիցներին, թե արտաքին գործերի նախարարն անձնական նախաձեռնությամբ է վարել նացիստամետ քաղաքականություն: Այդ-

ինակ մեկնաբանությունն առնվազն անլուրջ էր, քանի որ արտաքին քաղաքականության իրական պատասխանատուն երկրի նախագահն է: Հակաֆաշիստական երկրներին և հատկապես ԽՍՀՄ-ին քաղաքական ժեստ անելու նպատակով թուրքական իշխանությունները նաև սկսեցին արգելել պանթյուրքիստական կազմակերպությունների գործունեությունը, փակեցին պանթյուրքիստական պարբերականները և ձերբակալեցին այդ շարժման մի շարք ակտիվ գործիչների: Պանթյուրքիստների նկատմամբ անգամ դատական գործընթացներ սկսվեցին, որոնց շուրջ մեծ աղմուկ բարձրացավ, նրանցից 23-ի վերաբերյալ դատարաններն ընդունեցին տարբեր պատժաչափեր նախատեսող որոշումներ: Դատարանի առաջ կանգնեցին նաև պանթյուրքիստական շարժման ամենահայտնի դեմքերը՝ Նիհալ Աթսըզը, սպա Ալփարսլան Թյուրքեշը, որը հետագայում զգալի դեր էր խաղալու շարժման զարգացման գործում և դառնալու էր Թուրքիայում պանթյուրքիզմի ընդգծված առաջնորդը: Թուրքիայի նախագահ Իսմեթ Ինյոնյուն 1944թ. մայիսի 19-ին հանդես եկավ պանթյուրքիզմի բացահայտ քննադատությամբ և հայտարարեց անգամ, որ Խորհրդային Միությունը քեմալական շարժման տարիներին Թուրքիայի միակ բարեկամն է եղել: Թուրքական իշխանությունները ԽՍՀՄ-ի հանդեպ ևս մեկ քաղաքական ժեստ արեցին և բանտից ազատեցին 20 տարվա ազատազրկման դատապարտված խորհրդային երկու քաղաքացիներ Կոռնիլովին ու Պավլովին:

Արդեն 1944թ. օգոստոսի 2-ին Թուրքիան ստեղծված միջազգային իրադրության պայմաններում ստիպված էր պաշտոնապես խզել դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ: Թուրքիայի այդ քայլը ևս ընկալվեց որպես պարտադրված և ձևական, իսկ միջազգային լրատվամիջոցների դիպուկ գնահատմամբ՝ «դիվանագիտական հարաբերությունների խզումը կրում էր բարեկամական բնույթ»: Թուրքիայում գտնվող օտարերկրյա լրագրողները գրում էին, որ թուրքերը գերմանացի դիվանագետներին ճանապարհում էին հանդիսավոր պայմաններում, անգամ ծաղկեփնջերով: Ավելորդ չէ նշել նաև, որ գերմանացիներին հնարավորություն ընձեռվեց պահպանել Թուրքիայում ստեղծած իրենց գործակալական ցանցը:

Այդ շրջանում թուրքական իշխանություններն իրենց պահվածքը բնութագրելու համար շրջանառության մեջ գցեցին ևս մեկ անտրամաբա-

նական տերմին՝ «ակտիվ չեզոքություն»: Ստեղծված միջազգային դրությունը, պատերազմի արդեն ակնհայտ ելքը, ինչպես նաև արևմտյան որոշ երկրների խորհուրդները և ոչ հեռավոր ապագայում Թուրքիայի հետ կապված նրանց հաշվարկներն ուղղակի ստիպեցին Թուրքիային 1945թ. փետրվարի 23-ին պատերազմ հայտարարել Գերմանիային և Ճապոնիային: Թուրքիայի այս քայլն առավել քան ձևական էր և համաշխարհային քաղաքական ու քաղաքագիտական շրջանակներում ստացավ «թանաքային պատերազմ» անվանումը: Թուրքիայի մասնակցությունը պատերազմին կրում էր լոկ փաստաթղթային բնույթ, թուրքական բանակը մեկ փամփուշտ անգամ չկրակեց իր «հոչակած պատերազմում»[8]: Խորհրդային դիվանագետների և մասնագետների գնահատականն ավելի կտրուկ էր. նրանք Թուրքիայի հոչակած պատերազմը որակեցին որպես «դիվանագիտական ծաղր»: Իրականում պարզ էր, որ Թուրքիային այդ քայլին դրդող հիմնական հանգամանքն այն էր, որ այդ երկիրը ցանկանում էր տեղ զբաղեցնել Միավորված Ազգերի Կազմակերպությունում, որի անդամ դառնալու համար պայման էր ֆաշիստական խմբավորմանը պատերազմ հայտարարելը:

Ինչևէ, Թուրքիան Երկրորդ աշխարհամարտի տարիներին վարած նացիստամետ և անվստահելի քաղաքականության պատճառով հայտնվեց բավական դժվար կացության առջև: Ստեղծված նոր իրավիճակը և դրանից բխող վտանգներն ու հավանական զարգացումները կարճ ժամանակ անց վճռորոշ դեր ունեցան Թուրքիայի արտաքին քաղաքականության կողմնորոշումների վրա:

3. Ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականությունը

Չնայած հանրապետական Թուրքիայի պատմության գրեթե բոլոր ժամանակահատվածներում են արձանագրվել ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ պետականորեն հաստատված և կիրառվող կրոնական, էթնիկ բնույթի հալածանքներ, խտրականություններ, սակայն դրանք 1940-1950-ական թթ. որոշակիորեն առանձնանում են իրենց ծավալներով և ունեցած հետևանքներով: Ազգային-կրոնական փոքրամասնությունների հալածանքները կապված էին նաև այն հանգամանքի հետ, որ հանրապետական Թուրքիայում մինչև 1950-ականները շարունակում էին իշխել երիտթուրքական կուսակցության նախկին գործիչները, որոնք էլ առաջնորդվում էին ազգայնամոլական և այլամերժ մտածողությամբ: Օրինակ, Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինյոնյուն հայ, արևմտյան, խորհրդային և այսօր անգամ թուրք որոշ ուսումնասիրողների կողմից բնութագրվում է որպես «ծայրահեղ ազգայնամոլ», «էթնիկ զտման ճարտարապետ», և պատահական չէ, որ հենց նրա նախագահության տարիներին է մեծ ծավալներ ընդգրկել ոչ մուսուլման փոքրամասնությունների հալածանքի պետական քաղաքականությունը: Այն հանգեցրեց այդ փոքրամասնությունների համար մի շարք բացասական հետևանքների՝ արտագաղթի, տնտեսական կյանքից բռնի հեռացման, հոգեկան, բարոյական խեղումների և, ի վերջո՝ ֆիզիկական ոչնչացման:

1940-ական թթ. արձանագրվել են ազգային-կրոնական փոքրամասնությունների հալածանքի ինչպես առանձին դեպքեր, այնպես էլ մշակված և հանգամանալից ու հետևողականորեն կիրառվող պետական ծրագրեր: Առանձին դեպքերից կարող ենք համարել, օրինակ, այն, որ 1942թ. Թուրքիայի վարչապետ Ռեֆիք Սայդամը պահանջեց, որպեսզի պետական լրատվական գործակալություններում, հյուրանոցներում և ճաշարաններում աշխատող հրեաներն ազատվեն աշխատանքից: Պատերազմական տարիների թուրքական մամուլին թույլ տրվեց կամ, ավելի ճիշտ, հանձնարարվեց Թուրքիայում բնակվող ոչ մուսուլմանների նկատմամբ բացասական տրամադրություններ տարածել և առանց այն էլ մեծապես ազգայնամոլ մուսուլման հասարակությանն էլ ավելի տրամադրել նրանց դեմ:

Պատերազմի տարիներին Թուրքիայի ազգային-կրոնական փոքրամասնությունների դեմ պետականորեն մշակված ու կիրառված ծրագրերից իրենց ծավալներով և ունեցած բացասական հետևանքներով առանձնանում են հատկապես «20 դասակարգի զորակոչը» (1941-1942թթ.) և «Ունեցվածքի հարկը» (1942-1944թթ.):

8 Անգամ այդ պարագայում Թուրքիայում որոշակի շրջանակներ կտրուկ դեմ էին արտահայտվում Գերմանիային պատերազմ հայտարարելուն:

«20 դասակարգի զորակոչ». Երկրորդ աշխարհամարտի թեժ շրջանում թուրքական իշխանությունները երկրի ոչ մուսուլման քաղաքացիների՝ հայերի, հույների, հրեաների շրջանում հապճեպ հայտարարեցին զորակոչ՝ ըստ 20 դասակարգի, իսկ այդ դասակարգումն էլ ընթացել է, մեծ մասամբ, տարիքային սկզբունքի հիման վրա: Աղբյուրները փաստում են, որ զորակոչի է ենթարկվել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ չափահաս տղամարդկանց մեծամասնությունը: Ըստ որոշ տվյալների՝ զորակոչվել են 18-48, 26-45, 18-60 տարիքային խմբերին պատկանող տղամարդիկ: Ավելին՝ զորակոչվել են նաև զինծառայություն անցած տղամարդիկ և պահեստազորայինները, ծառայությունից նոր վերադարձածները, անգամ հոգեկան հիվանդներն ու հաշմանդամները: Ոչ մուսուլման փոքրամասնությունների հետ միասին «զինծառայության» են տարել նաև Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայերին: Այս հետաքրքիր փաստը ևս մեկ անգամ ապացուցում է, որ «20 դասակարգի զորակոչն» ուղղված էր որոշակի էթնիկ խմբերի դեմ:

Ոչ մուսուլմանների զորակոչի որոշումն ընդունվել էր հույժ գաղտնիության պայմաններում: Այսպես՝ Թուրքիայի կառավարությունը 1941թ. ապրիլի 22-ի նիստում որոշում է ընդունում բանակ զորակոչել ազգային փոքրամասնությունների համայնքների չափահաս տղամարդկանց՝ ընդհանուր առմամբ շուրջ 12.000 մարդու: Նույն օրը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նիստում քննարկվել և ընդունվել է պաշտպանության նախարարության առաջարկը 1896-1913թթ. ծնված ոչ մուսուլման տղամարդկանց զորակոչել, սակայն հանձնել հասարակական աշխատանքների նախարարության ենթակայությանը:

«20 դասակարգի զորակոչի» գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ կիրառվում էր բացառապես ոչ մուսուլման քաղաքացիների նկատմամբ: Թուրքական որոշ աղբյուրներ փաստում են, որ հատուկ ջանքեր են գործադրվել, որպեսզի այդ որոշման մասին տեղեկացվեն միայն համապատասխան ատյանները և տեղեկության արտահոսք չլինի: Զորակոչի մասին նախօրոք չի հայտարարվել, այն կատարվել է հապճեպ, ընդամենը մի քանի ժամվա ընթացքում: Ոստիկանները փողոցներում, աշխատավայրերում, տներում ստուգել են անձնագրերը, և երբ հաստատվել է, որ տվյալ անձը պատկանում է ազգային փոքրամասնությունների համայնքներից որևէ մեկին, նրան անմիջապես զորակոչել են՝ անգամ թույլ չտալով տեղյակ պահել հարազատներին:

Զորակոչված ոչ մուսուլմանները, ենթարկվելով Թուրքիայի հասարակական աշխատանքների նախարարությանը, ընդգրկվում էին տարատեսակ շինարարական աշխատանքներում: Զորակոչվածներն, ըստ էության, զինվոր չէին, այլ, ինչպես ցույց տվեցին զարգացումները, պետության կողմից պատանդ վերցված անվստահելի քաղաքացիներ: Նրանց տրվել էին յուրահատուկ համազգեստներ, որոնց օգնությամբ հասարակությունը ևս տարբերակում էր զորակոչված ոչ մուսուլմաններին: Նրանց կոչում էին «գյավուր զինվորներ»:

Մի կարևոր հանգամանք ևս. երբեք ոչ մուսուլման փոքրամասնություններին թուրքական պետությունը նույն վերաբերմունքը ցույց չէր տալիս, և դա վկայված է տարբեր աղբյուրներում: Այսպես, եթե հույները և հրեաներն իրենց «ծառայությունն» անցկացնում էին բանակի ծառայողական գումարտակներում, օդանավակայանների շինարարությունում որպես բանվոր, ապա հայերն ընդգրկված էին գերազանցապես հասարակական աշխատանքների գումարտակում, այսինքն՝ հայերի նկատմամբ կար ավելի մեծ անվստահություն:

Զորակոչված ոչ մուսուլմաններին հիմնականում ուղարկել են Թուրքիայի արևելյան շրջաններ: «Զինվորների» աշխատանքային ճամբարներում պայմանները եղել են ծայրահեղ վատ, ինչի հետևանքով տարածվել են հիվանդություններ՝ հաշմանդամության և մահվան պատճառ դառնալով: Չնայած պաշտոնական թվեր չկան այդ «զինծառայության» ընթացքում արձանագրված մահվան դեպքերի մասին, սակայն ականատես վերապրողների և որոշ աղբյուրների համաձայն՝ դրանք բավական շատ են եղել:

Խոսելով «20 դասակարգի զորակոչի» պատճառների և նպատակների մասին՝ վստահ կարելի է պնդել, որ դա էթնիկ զտում էր: Ճիշտ է, Թուրքիայի կառավարությունը զորակոչի անցկացման անհրաժեշտությունը պաշտոնապես «հիմնավորել» է այն անհեթեթ փաստարկով, թե իբր ֆաշիստական Գերմանիան նպատակ ուներ հարձակվել Թուրքիայի վրա, սակայն այդ վարկածը որևէ քննադատության չի դիմանում, և ակնհայտ է, որ կեղծիք է: Առավել իրատեսական է այն կարծիքը, համաձայն որի՝ թուրքական իշխանությունները, պատրաստվելով ԽՍՀՄ-ի դեմ հնարավոր

պատերազմին, նախօրոք հավաքել և չեզոքացրել են «5-րդ շարասյուն» համարվող ազգային փոքրամասնություններին: Ավելին՝ թուրքական իշխանությունները նպատակ են ունեցել անհրաժեշտության պարագայում ուղղակի ֆիզիկապես ոչնչացնել ոչ մուսուլման «զինվորներին»: Շատ ուսումնասիրողներ այդ առումով հատուկ կարևորում են Ստալինգրադի ճակատամարտի ելքը. եթե գերմանական բանակը հաղթեր ճակատամարտում, թուրքական իշխանությունները կիրականացնեին ոչ մուսուլման «զինվորների» կոտորած:

Ոչ մուսուլման տղամարդկանց ֆիզիկական ոչնչացումից բացի, թուրքական իշխանություններն ունեցել են նաև տնտեսական կյանքից նրանց մեկուսացնելու և հեռացնելու նպատակ, քանի որ փաստորեն աշխատունակ տղամարդկանց մեծագույն մասը կտրվել էր աշխատանքից, ինչը երբեմն հանգեցրել էր նրանց խանութների, արհեստանոցների, մի խոսքով՝ աշխատավայրերի փակմանը: Տնտեսական կյանքից ազգային փոքրամասնություններին այս կերպ հեռացնելու միտումն իրատեսական է, որովհետև «20 դասակարգի զորակոչի» ավարտից կարճ ժամանակ հետո նրանց նկատմամբ սկսվեց տնտեսական հալածանքի լայնամասշտաբ ծրագրի կիրառումը:

«Ունեցվածքի հարկ» (Varlık Vergisi). Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական իշխանությունները և բուրժուազիան իրենց թիրախը դարձրին մեծ կորուստներ կրած, սակայն դեռ գոյությունը պահպանած ոչ թուրքական բուրժուազիայի վերջին բեկորներին: Իշխանությունները, բորբոքելով ազգայնամոլական տրամադրություններ, նպատակ էին հետապնդում նաև, օգտվելով հարմար առիթից, վերացնել կամ կործանարար հարված հասցնել հայ, հույն և հրեա բուրժուազիային, ինչպես նաև երկրում առկա սոցիալական ծանր վիճակի ու խնդիրների հիմնական մեղավոր հռչակել ազգային-կրոնական փոքրամասնություններին:

«Ունեցվածքի հարկը» հանրապետական Թուրքիայի պատմության ընթացքում տնտեսական ոլորտում ազգային-կրոնական փոքրամասնությունների դեմ գործադրված ամենախոշոր և ծանր հետևանքներ առաջացրած քայլն էր: Հայտնի է, որ դարեր շարունակ Օսմանյան կայսրությունում տնտեսության մեջ գերիշխող դիրք էին գրավում ոչ մուսուլմանները: XXդ. առաջին կեսին ևս, չնայած հայերի, հույների և ասորիների ցեղասպանությանը, Թուրքիայի Հանրապետությունում, այնուամենայնիվ, մնացել էին ազգային փոքրամասնությունների որոշ բեկորներ, որոնք տնտեսական ոլորտում շարունակում էին գրավել որոշակի դիրք, և դա տեսանելի էր հատկապես Ստամբուլում: Այդ տարիներին ազգային փոքրամասնություններին իրենց ունեցվածքից և գործից զրկելը դարձավ պետության տնտեսական քաղաքականության անկյունաքարը, սկսվեց պետականորեն ու «օրենքներով» ամրագրված տնտեսական ահաբեկչություն կամ ուղղակի պետական մասշտաբի թալան, որոնց զոհ դարձան Թուրքիայում ապրող ոչ մուսուլմանները: Վարչապետ Շուքրյու Սարաջօղլուի կառավարությունը ԹԱՄԺ հաստատմանը ներկայացրեց, այսպես կոչված, «Ունեցվածքի հարկի» մասին օրենքը, որն ընդունվեց 1942թ. նոյեմբերի 11-ին: Օրենքի ընդունումից առաջ՝ 1942թ. սեպտեմբերին, ֆինանսների նախարարությունը սկսել էր նահանգների ֆինանսական վարչություններից, բանկերից, անվտանգության ծառայությունից պահանջել փոքրամասնությունների նյութական վիճակի մասին տվյալներ:

Ակնհայտ է, որ «օրենքը» բացահայտորեն ուղղված էր ազգային և կրոնական փոքրամասնությունների դեմ: Նախ՝ կարևոր է նշել, որ դա իրականում չի կարելի որակել որպես օրենք, քանի որ դրանում բացակայում էին մի շարք օրենսդրական կարևոր սկզբունքներ, ոտնահարվում էին մարդու իրավունքների հիմնարար արժեքները: Այսպես, «Ունեցվածքի հարկը» հարկատուներին բաժանում էր 4 խմբի, այն էլ՝ ըստ կրոնական պատկանելության.

1. մուսուլմաններ
2. ոչ մուսուլմաններ
3. կրոնափոխներ
4. օտարահպատակներ:

Փաստորեն, խախտվում էր սահմանադրական այն դրույթը, որի համաձայն՝ բոլորը, այդ թվում և ոչ մուսուլմանները, Թուրքիայի իրավահավասար քաղաքացիներ էին, և սա ավելի շատ հիշեցնում էր օսմանյան տիրապետության շրջանը, երբ ոչ մուսուլմանները վճարում էին մուսուլմաններից տարբերվող հարկեր: Իսկ կրոնափոխներին չընդգրկելով մուսուլմանների խմբի մեջ՝ թուրքական պետությունը ևս մեկ

անգամ բացահայտ ցույց տվեց, որ այդ խավի հանդեպ վստահություն չի տածում և նրանց որպես «իսկական մուսուլմաններ» չի ընկալում: Հարկաչափը սահմանելու և հավաքելու նպատակով ստեղծվեցին հատուկ հանձնաժողովներ, որոնք բաղկացած էին 6 հոգուց: «Օրենքի» ամենամեծ հակահիրավական դրույթներից էր այն, որ հանձնաժողովը կամայական էր հարկի չափը որոշելու հարցում, այսինքն՝ չկար հստակ որևէ չափանիշ: Սակայն հակահիրավական կետերն այսքանով չէին սահմանափակվում. մարդու իրավունքները կոպտորեն ոտնահարող հաջորդ նորմն այն էր, որ հարկատուն իրավունք չուներ որևէ տեղ բողոքարկել հարկաչափը, այսինքն՝ հանձնաժողովի կամայական սահմանած որոշումը բեկանման ենթակա չէր և վերջնական էր: Իսկ հանձնաժողովները հարկաչափը որոշելիս հաշվի չէին առնում հարկատուի իրական եկամուտներն ու հնարավորությունները և հարկում էին նրան մոտավորապես, ըստ ցանկության և տրամադրության: Հարկահավաքության գործընթացում թուրքական իշխանությունները նաև տարբերակում էին դնում ոչ մուսուլմանների մեջ. հայերն, օրինակ, մյուս ոչ մուսուլմանների համեմատ, հարկվում էին ամենաբարձր տոկոսներով և ամենաշատը: Այսպես, օրինակ, թուրք առևտրականը պետք է վճարեր իր տարեկան եկամուտի 4.7 տոկոսը, հույնը՝ 156 տոկոսը, հրեան՝ 179 տոկոսը, իսկ հայը՝ 232 տոկոսը, և փաստորեն հույն առևտրականը թուրքի համեմատ վճարում էր 31, հրեան՝ 36, իսկ հայը՝ 47 անգամ ավելի գումար: Հարկերի վճարման համար սահմանված էր 15-օրյա ժամկետ, որը հետո երկարացվեց մինչև 30 օր: Այդ ընթացքում նրանց շարժական ու անշարժ գույքը, ովքեր չէին կարողանում վճարել հարկը, պետականացվում և աճուրդով վաճառվում էր, մինչ այդ հենց իրենք՝ հարկատուներն էին փորձում էժան գներով վաճառել իրենց ունեցվածքը: Իսկ եթե այդ ձևով ձեռք բերված գումարն էլ չէր բավարարում հարկի վճարմանը, ապա հարկատուներն աքսորվում էին տաժանակրության, որպեսզի աշխատելով վճարեին իրենց «պարտքը» պետությանը: Տաժանակրության հիմնական վայրը ցրտաշունչ կլիմայով հայտնի Էրզրումի նահանգի Աշքալե գավառն էր, որն անվանում են նաև «թուրքական Սիբիր»:

Առաջինն աշխատանքային ճամբարներ գնալու էին ընդհանրապես հարկ չվճարածները, այնուհետև՝ մասնակի վճարածները: Նախատեսվում

էր տաժանակիրներին վճարել որոշակի աշխատավարձ, որը կազմելու էր օրական 250 քուրուշ, որից 60-ը պահվելու էր սննդի, կացության և այլ ծախսերի համար, իսկ մնացածը պետք է հատկացվեր «Ունեցվածքի հարկի» պարտքի մարմանը: Հարկատուները պետք է աշխատեին մինչև «Ունեցվածքի հարկի» լրիվ մարումը: Սակայն այս կետը շատ դեպքերում ոչ տրամաբանական պատկեր էր ստեղծում, և կարելի է ասել, որ դա նախատեսում էր ցմահ տաժանակրություն: Այսպես, օրինակ, այն հարկատուները, որոնց պարտքը 400-500 հազար լիրա էր և ավելի, իրենց ստացած աշխատավարձից պարտքն ամբողջովին մուծելու համար պետք է աշխատեին մոտավորապես 1600 տարի: Արդեն 1943թ. սկզբներին հարկ չվճարածները սկսեցին ձերբակալվել՝ տաժանակրության ճամբարներ ուղարկվելու համար: Տաժանակիրները հիմնականում զբաղվում էին ձյուն մաքրելով, սառույց կոտրելով ու ճանապարհ բացելով, ընդ որում՝ եղանակային անբարենպաստ պայմաններում, երբ օդի ջերմաստիճանը -30 էր: Պատահական չէ, որ նման պայմաններում շատ տաժանակիրներ մահանում էին:

«Ունեցվածքի հարկի» ընդունման պաշտոնական պատճառաբանությունը, ըստ վարչապետ Սարաջօղլուի, այն էր, որ դա ուղղված էր թուրքական լիրայի արժևորմանը, շրջանառության մեջ եղած դրամի նվազեցմանը, սև շուկայի, գների աճի և վերավաճառողների դեմ: Սակայն օրենքի ընդունումից կարճ ժամանակ անց՝ 1943թ. հունվարի 21-ին, վարչապետի՝ «Ջումհուրիյեթ» թերթում տպագրված մտքերը շատ ավելի անկեղծ էին և բացահայտում էին հարկի իրական նպատակը. «Օրենքն իր ողջ խստությամբ կիրառվելու է այն մարդկանց նկատմամբ, ովքեր, օգտվելով այս երկրի հյուրընկալությունից, հարստացել են, բայց չնայած դրան՝ այս դժվարին պահին խուսափում են կատարել իրենց պարտականությունները»: Իսկ ոչ հրապարակային ելույթներում Սարաջօղլուն հայտարարել էր, որ այդ հարկն ուղղված է հիմնականում ազգային փոքրամասնությունների դեմ, և սնանկացնելով շուկայում գերակա դիրքեր ունեցող օտարներին՝ պետությունը նպատակ ունի նրանց այնտեղից հեռացնել ու թուրքական շուկան տալ թուրքերի ձեռքը: Որոշ ժամանակ անց արդեն Սարաջօղլուն ինքնագովեստով հայտարարել է, որ այդ հարկատեսակի շնորհիվ Թուրքիայի Կենտրոնական բանկում

ոսկու պաշարը կարճ ժամանակահատվածում ավելացել է՝ դառնալով 35 տոննա: ՀԺԿ տեսակետի համաձայն՝ «Ունեցվածքի հարկի մասին» օրենքը «սոցիալական անարդարությունը վերացնելուն միտված քայլ էր»:

«Ունեցվածքի հարկը» չվճարած հարկատուների շարժական և անշարժ գույքի բռնագրավումից հետո հերթը հասնում էր նաև նրանց անձնական իրերին, մինչև անգամ հագուստներին: Այդ ժամանակ հաճախ կազմակերպվում էին աճուրդներ, որտեղ վաճառվում էր փոքրամասնություններից բռնագրավված գույքը: Այս ապրանքների հիմնական գնորդներն արևելյան նահանգներից եկած նոր հարուստներն էին:

«Ունեցվածքի հարկի» հետևանքները բազմաշերտ են և չեն սահմանափակվել միայն տնտեսության թուրքացմամբ, դրա պատճառով, փաստորեն, վերացել են թուրքահայ բուրժուազիան և այդ բուրժուազիայի մաս կազմող մտավորական դասը: Որոշ հետազոտողներ, այդ թվում և թուրք, «Ունեցվածքի հարկը» որակում են որպես «փոքրամասնությունների տնտեսական ցեղասպանություն»: Այսօր անգամ թուրք «պաշտոնական» պատմաբաններից ոմանք, փորձելով գտնել այդ հարկի արդարացման կամ մեղմման հիմնավորումներ, այնուամենայնիվ, «Ունեցվածքի հարկը» համարում են «բռնակալական հարկատեսակ», որից հնարավոր չէր «ֆինանսական արդարություն» ակնկալել:

«Ունեցվածքի հարկը» կիրառությունից հանվել է 1944թ. մարտի 15-ին. այն շրջանառության մեջ է եղել շուրջ 16 ամիս, և մինչ այդ չհավաքված հարկերը ներվում էին: «Ունեցվածքի հարկը» փաստորեն, կարելի է ասել, ծառայեց իր հիմնական նպատակին. ազգային-կրոնական փոքրամասնությունները լիովին սնանկացան, ոչնչացավ ոչ մուսուլման փոքրամասնություններից կազմված բուրժուազիայի մեծ մասը, գրեթե լիովին թուրքացվեց տնտեսությունը, էլ ավելի խորացավ վախի և անպաշտպանության մթնոլորտը, որը ստիպեց շատերին «կամովին» թողնել Թուրքիան: Այս ամենից հետո թուրքական իշխանությունները, նաև տեղի տալով արտաքին գործոններին, տարբեր երկրների հորդորներին, ինչպես նաև հաշվի առնելով երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքից բխող փոփոխությունները, որպես «բարի կամքի» դրսևորում՝ կասեցրին «Ունեցվածքի հարկի» կիրառումը:

Ինչպես տարբեր ժամանակներում, այնպես էլ այդ տարիներին

թուրքական բացահայտ և «խորքային» պետությունն իր ողջ լծակներով պայքարել է ներքին թշնամու, այն է՝ փոքրամասնությունների դեմ: Դա է վկայում 1947թ. ՀԺԿ 9-րդ բյուրոյի (որը պատասխանատու էր փոքրամասնությունների հարցերով) պատրաստած մի զեկույցը, որտեղ պարզորոշ երևում է պետության վերաբերմունքը ոչ մուսուլմանների նկատմամբ: Զեկույցում մասնավորապես հայերի մասին տեղ են գտել հետևյալ տեսակետները. «Հայեր. Անատոլիայում վերածվել են կամաց-կամաց սակավացող փոքր համայնքի և քաղաքական ինչ-որ եղանակով ձգտում են ավելացնել իրենց թվաքանակը: Հայերին նախ և առաջ Անատոլիայից «մաքրելով» պետք է տեղափոխել Ստամբուլ, այսպիսով հնարավոր կլինի վերահսկողության տակ վերցնել նաև բնակչության աճը»: Զեկույցում, հենվելով պատմական փորձի վրա, նշվում է հայերին Ստամբուլ տեղափոխելու համար մի հիմնավորում ևս. «Այս եղանակով և նրանց թվաքանակի աճը կկանխվի, և վաղը, անհրաժեշտության դեպքում, նրանք ավելի հավաքական ձևով կլինեն պետության աչքի առաջ և ձեռքի տակ»: Ըստ այդ զեկույցի՝ հայերը մի խումբ են, որ չեն ձուլվում, ուստի առաջարկվում է նրանց թվաքանակը պակասեցնել կամ բնակչության փոխանակման, կամ էլ այլ երկրներ նրանց գաղթը դյուրացնելու միջոցով: Իսկ հույների համար նշվում է, որ նրանք արդեն իրենցից վտանգ չեն ներկայացնում և հիմնական կարևոր խնդիրը մինչև Կոստանդնուպոլսի գրավման 500-ամյակը՝ 1953թ., Ստամբուլում ոչ մի հույն չթողնելն է:

Հանրապետական շրջանում փոքրամասնությունների նկատմամբ կիրառված հալածանքի վերոհիշյալ և այլ ծրագրերը հանգեցրին արտագաղթի ծավալների ընդլայնմանը, որը, փաստորեն, թուրքական քաղաքականության անկյունաքարային կետերից էր: Քրիստոնյա փոքրամասնությունները, մասնավորապես՝ հայերը, գավառներից տեղափոխվում էին Ստամբուլ, իսկ այնտեղից էլ՝ արտասահմանյան որևէ երկիր (առավելապես ԱՄՆ կամ եվրոպական երկրներ): Սրանով թուրքական իշխանություններն ազատվում էին իրենց համար անցանկալի բնակչությունից:

Ստորև մեջբերվող մարդահամարների արդյունքները, որոնք անցկացվել են Թուրքիայում տարբեր տարիներին, լավագույնս ցույց են տալիս հայ բնակչության նվազման պատկերը.

Բնակավայրը	1927թ.	1935թ.	1965թ.
Յոզղաթ	1801	889	118
Սեբաստիա	4122	2094	117
Դիարբեքիր	955	582	132
Երզնկա	2399	707	2
Էրզրում	14	37	13
Կեսարիա	435	845	9
Մալաթիա	2625	1614	148
Ստամբուլ	45255	39831	29479
Ընդհանուրը	64745	57599	33094

Փաստենք նաև, որ հայերի նկատմամբ կիրառվող հալածանքի բիրտ քաղաքականությունից անմասն չէին մնում նաև Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը և նրա գահակալները: Թուրքիայի Հանրապետությունում առաջին անգամ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքի ընտրություններ տեղի են ունեցել 1927թ., և պատրիարք է ընտրվել Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյանը (1927-1944թթ.): Սակայն ընտրությունից հետո թուրքական իշխանությունները հինգ տարի դե-յուրե չեն ճանաչել Նարոյան պատրիարքին: Նրա գահակալության տարիները համընկել են քեմալական ազգայնամոլության ծավալման հետ. հենց այդ ժամանակաշրջանում տեղի ունեցան Թուրքիայի փոքրամասնությունների կյանքում բախտորոշ մի քանի իրադարձություններ, գավառահայերի պարտադրված արտագաղթեր: Հայոց պատրիարքությունը փորձում էր ելք գտնել և որևէ կերպ աջակցել հալածյալ հայությանը, սակայն այդ փորձերը մեծ մասամբ չէին հաջողվում կամ քիչ արդյունավետ էին լինում, քանի որ պատրիարքությունն ինքը գտնվում էր թուրքական հալածանքների կիզակետում:

1944թ. Մեսրոպ պատրիարքը վախճանվում է, և Թուրքիայում օրեցօր ծավալվող ծայրահեղ ազգայնամոլության և պանթյուրքիզմի պայմաններում թուրքական իշխանություններն անորոշ ժամանակով արգելում են հայ համայնքին պատրիարք ընտրել, և հոգևորականներից մեկը՝ Գևորգ եպիսկոպոս Արսլանյանը, նշանակվում է տեղապահ (1944-1950թթ.):

Ինչպես տեսնում ենք, հանրապետական Թուրքիայում ոչ մուսուլման քաղաքացիների նկատմամբ դրսևորվել է ծայրահեղ խտրական վերաբերմունք: Անգամ զորակոչն ու հարկային համակարգն են ունեցել էթնիկ-

կրոնական բնույթ: Թուրքական պետական մեքենան իր բոլոր կառույցներով լծված է եղել միայն մեկ՝ միատարր թուրքական պետություն ստեղծելու գաղափարի իրականացման գործին, որի ճանապարհին ազգային փոքրամասնությունների դեռևս պահպանված բեկորները դարձել են առաջնային թիրախներ:

4. Ներքաղաքական զարգացումները Երկրորդ աշխարհամարտից հետո

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին Թուրքիայում սկսվել էր և՛ քաղաքական, և՛ սոցիալ-տնտեսական ճգնաժամ: Եթե քաղաքական ճգնաժամի պատճառը մեծ մասամբ միակուսակցական համակարգն էր, ապա սոցիալ-տնտեսականի կարևոր պատճառներից էին ռազմական ծախսերի աճը և թուրքական լիրայի արժեզրկումը, գնաճը և այլն:

Պատերազմի տարիներին Թուրքիայի բանակի թվի աճը, ռազմական ծախսերի ավելացումը տնտեսության մեջ խնդիրներ առաջացրին, որոնք առավել ցայտուն զգացվեցին գյուղացիության վիճակի վրա, իսկ եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակվա Թուրքիայի բնակչության մեծամասնությունը գյուղաբնակ էր, ապա պարզ է դառնում, որ այդ ամենն ազդեցություն էր թողել հասարակության մի զգալի մասի վրա, ինչը բացասաբար էր անդրադարձել իշխող ՀԺԿ հեղինակության վրա: Բացի դրանից, իշխանություններից դժգոհ էին նաև խոշոր կալվածատերերը, քաղաքային գործարար շրջանակները: 1945թ. սկսել էր փլուզվել մինչ այդ եղած բյուրոկրատներին - մտավորականներին - առևտրականներին - կալվածատերերին միացնող վերնախավերի կոալիցիան, որը ՀԺԿ քաղաքական հենարանն էր: Մյուս կողմից՝ Իսմեթ Ինյոնյուն չուներ Քեմալ Աթաթյուրքի հեղինակությունը և խարիզման, ինչի շնորհիվ վերջինիս հաջողվել էր ստեղծել միակուսակցական բռնապետական ռեժիմ՝ նույնականացնելով կուսակցությունն ու պետությունը:

Թուրքիայի քաղաքական դաշտում հաճախակի դարձան բազմակուսակցական համակարգին անցնելու անհրաժեշտության մասին կոչերը,

որոնք, ի դեպ, ունեին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պատճառներ: Երկրորդ համաշխարհայինից հետո արևմտյան տերությունների հետ մերձեցմանը զուգահեռ, Թուրքիայի առջև դրվեցին որոշ պահանջներ՝ կապված ժողովրդավարական որոշակի նորմերի հետ, որոնցից էին միակուսակցական համակարգի վերացումը և քաղաքականության մեջ այլընտրանքի հնարավորության ստեղծումը: Բացի այդ, բազմակուսակցական համակարգի անցումը նաև որոշակի պայման էր ՄԱԿ-ին անդամակցելու համար:

Բռնապետական հակումներ ունեցող Ինյոնյուն հասկացել էր, որ այլևս չի կարող դեմ գնալ արտաքին ճնշումներին և գերադասել էր այդ պահանջները ներկայացնել որպես իր նախաձեռնություն: Այսինքն՝ բազմակուսակցական համակարգի ձևավորման շարժառիթներից է համարվում նաև Արևմուտքին դուր գալու և նրա չափանիշներին համապատասխանելու Թուրքիայի ձգտումը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Թուրքիայի քաղաքական դաշտում կայացվել էր բազմակուսակցական համակարգին անցնելու որոշում, սկսվել էր այդ անցումը «ժողովրդավարական մեթոդներով» ներկայացնելու գործընթացը:

Թուրքիայում 1945-1946թթ. մեկը մյուսի հետևից ստեղծվում էին նոր կուսակցություններ, որոնց մի մասը շատ արագ դուրս էր մնում քաղաքական դաշտից, մի մասն ունենում էր խորհրդանշական ներկայություն, և միայն մեկը կարողացավ իրոք գործոն դառնալ քաղաքական դաշտում: Բազմակուսակցական համակարգի ներդրումից հետո առաջին հինգ տարիներին՝ 1945-1950թթ., Թուրքիայում ընդհանուր առմամբ ստեղծվեց տարբեր ուղղվածության 27 կուսակցություն: Այդ շրջանում ստեղծված սոցիալիստական ուղղվածության երկու կուսակցություն 1946թ. դեկտեմբերին փակվեց իշխանությունների հրահանգով, դրանց ղեկավարները դատապարտվեցին կոմունիստական քարոզչության համար: Հետաքրքիր է, որ այդ կուսակցությունների փակման մեջ կար նաև արտաքին քաղաքականության ազդեցություն. մասնավորապես՝ սոցիալիստական կուսակցությունները համարվում էին ԽՍՀՄ գաղափարախոսական դաշտում գտնվողներ և աջակիցներ, դրանց փակումը կապվում էր ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերություններում առկա լարվածության հետ:

Հետագա քաղաքական գործընթացները ցույց տվեցին, որ նորաստեղծ կուսակցություններից մրցունակ էր միայն Ժողովրդավարական կուսակ-

ցությունը (Demokrat Parti), որի ստեղծման և արագ հաջողության հասնելու նախադրյալները, ըստ էության, բխում էին ստեղծված ընդհանուր քաղաքական իրավիճակից: Արդեն 1945թ. քաղաքական և հասարակական դաշտում եղած դժգոհություններն ավելի ցայտուն դրսևորվում էին հենց իշխող ՀԺԿ ներսում՝ նրա խորհրդարանական խմբակցությունում: Այսպես, 1945թ. մայիսի 14-ին ԹԱՄԺ-ում հողային վերափոխման հարցի քննարկման ժամանակ ՀԺԿ անդամ չորս պատգամավոր դեմ հանդես եկավ այդ նախաձեռնությանը: Այդ չորս պատգամավորներն էին երիտթուրք գործիչ, քեմալական շարժման հայտնի ներկայացուցիչ, նախկին նախարար և վարչապետ Ջելալ Բայարը, որը հայտնի էր տնտեսության մեջ իր ազատական մոտեցումներով, խոշոր հողատեր Ադնան Մենդերեսը, հայտնի գրականագետ, պատմաբան Ֆուաթ Քյուփրուլյուն և Ռեֆիք Քորալթանը: Նրանք հունիսի 12-ին կուսակցության խորհրդարանական խմբակցությանը ներկայացրին հետագայում «չորսի առաջարկություն» անվանումը ստացած փաստաթուղթը, որի քննարկումն իշխող կուսակցության խորհրդարանական խմբակցության կողմից չընդունվեց: Դա պատճառ դարձավ, որպեսզի Ադնան Մենդերեսը և Ֆուադ Քյուփրուլյուն մամուլում (մասնավորապես՝ «Վաթան» թերթում) հանդես գան կառավարության և ՀԺԿ բացահայտ քննադատությամբ: Ներկայացված «առաջարկությունում» կոչ էր արվում փոփոխության ենթարկել ՀԺԿ կանոնադրությունը և ազատականացնել այն: Կուսակցական կարգապահությունը խախտելու պատճառաբանությամբ 1945թ. սեպտեմբերի 21-ին Մենդերեսը և Քյուփրուլյուն, մի քանի օր անց՝ նաև Քորալթանը, հեռացվեցին կուսակցությունից: Դրանից հետո՝ սեպտեմբերի 26-ին, ի նշան բողոքի՝ պատգամավորական լիազորությունները վայր դրեց Ջելալ Բայարը, իսկ նույն թվականի դեկտեմբերի 3-ին դուրս եկավ ՀԺԿ-ից: Մինչ այդ, սակայն, նա հանդես էր եկել մամուլի ազատությունը և իրավունքներն ավելացնելուն, գրաքննությունը սահմանափակելուն միտված օրենսդրական նախաձեռնությամբ, որը նույնպես չէր ընդունվել, և նաև դա էր նա համարել պատրվակ կուսակցությունը լքելու համար:

Այս չորս քաղաքական գործիչները հայտարարեցին, որ մտադիր են ձևավորել նոր կուսակցություն: 1946թ. հունվարի 7-ին տեղի ունեցավ Ժողովրդավարական կուսակցության (ԺԿ) հիմնադիր համագումարը:

Քաղաքական ասպարեզ մտավ մի նոր ուժ, որը հաջորդ տարիների ընթացքում կարևոր դեր խաղաց Թուրքիայի քաղաքականության մեջ, էապես փոխեց ներքաղաքական զարգացումների ընթացքը և շուտով վերջ տվեց ՀԺԿ միակուսակցական իշխանությանը:

Հետաքրքիր է փաստել, որ սկզբնական շրջանում իշխող ՀԺԿ-ն շահագրգիռ էր, անգամ օգնում էր նորաստեղծ ԺԿ կայացմանը. ավելին՝ մինչ կուսակցություն հիմնելը Ջելալ Բայարը հանդիպել էր նախագահ Իսմեթ Ինյոնյուի հետ և քննարկել այդ հարցը: ԺԿ առաջին համագումարի ժամանակ կուսակցության նախագահ Ջելալ Բայարը, անդրադառնալով իշխող կուսակցության հետ իրենց հարաբերություններին, հայտարարել է. «Կուսակցության հիմնադրման պահից սկսած՝ մենք իշխող կուսակցությունից ստացել ենք լայն աջակցություն և քաջալերանք»: Սկզբնական շրջանում նաև իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ ԺԿ-ն կարողացավ 16 նահանգում և 36 գավառում ստեղծել կուսակցական կազմակերպություններ: Կուսակցական կառույցներ հիմնվեցին նաև գյուղերում, ինչին լուրջ նպաստ բերեցին ԺԿ շարքերում ընդգրկված խոշոր հողատերերը: Այս հանգամանքը մեծ դեր խաղաց, որպեսզի գյուղացիների շրջանում կարճ ժամանակում ԺԿ-ն ճանաչում ձեռք բերի, իսկ դա առանձնահատուկ կարևորվում էր հիմնականում գյուղաբնակ ազգաբնակչություն ունենալու պարագայով:

ՀԺԿ և ԺԿ կուսակցական ծրագրերը բազմաթիվ նմանություններ ունեին. ԺԿ-ն իր ծրագրում ներառել էր անգամ քեմալիզմի վեց նետերը: Եվ այնուամենայնիվ, ԺԿ ծրագիրը ՀԺԿ ծրագրի համեմատ ավելի ազատական էր համարվում: Ժողովրդավարական կուսակցության ծրագրում ընդգրկված էին բազմաթիվ խոստումներ տարբեր ոլորտների վերաբերյալ, սակայն ազգային փոքրամասնությունների վերաբերյալ իրենց դիրքորոշումներում «ժողովրդավարներն» ամենևին չէին տարբերվում քեմալականներից: Այսպես, կուսակցության ծրագրի 13-րդ կետում նշված էր. «Մեր կուսակցությունը թուրք է համարում բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց ցեղային պատկանելությունից ու դավանանքից»: Ծրագրային նմանությունների, քաղաքական ավանդույթի հետ կապված տարբեր հանգամանքների, ինչպես նաև քաղաքական դաշտում տիրող ընդհանուր կարծիքի պատճառով սկզբնական շրջանում մամուլի որոշ միջոցներում

ԺԿ-ն անգամ անվանվում էր «ՀԺԿ № 2», սակայն շուտով պարզ դարձավ, որ այդ բնութագրումն այդքան էլ չէր արտացոլում իրականությունը:

Կարճ ժամանակում ԺԿ-ն լայն տարածում գտավ հասարակության տարբեր խավերում, օրեցօր ակնհայտորեն աճում էր նրա հեղինակությունը: Բազմակուսակցական համակարգի ներդրումն ու ԺԿ ստեղծումը ՀԺԿ-ից դժգոհներին այլընտրանքի հնարավորություն տվեցին: Նոր կուսակցության շուրջ համախմբվեցին գործող իշխանություններից դժգոհ տարբեր շրջանակներ. գյուղացիներ, որոնք դժգոհ էին բարձր հարկերից, խոշոր կալվածատերեր, որոնք անհանգստացած էին ՀԺԿ նախաձեռնած հողային բարեփոխումից, գործարարներ, որոնց կարծիքով՝ էտատիզմը որոշակիորեն խոչընդոտում էր իրենց աճին, աշխատավորներ և ծառայողներ, որոնց եկամուտներն ու աշխատավարձերն իջել էին պատերազմի տարիներին, մտավորականներ, որոնք դժգոհ էին ՀԺԿ և նրա ղեկավարի բռնապետական կառավարումից, ինչպես նաև ազգային-կրոնական փոքրամասնություններ, որոնց համար ՀԺԿ կառավարումը չէր տարբերվում երիտթուրքական կառավարումից, և որոնք հույս ունեին, որ ԺԿ-ն վերջ կդնի իրենց հալածանքներին: ԺԿ-ում հավաքվել էին տարբեր կողմնորոշումների, հայացքների տեր մարդիկ, որոնց միակ միավորիչ հանգամանքը ՀԺԿ-ին դեմ լինելն էր: ԺԿ-ին անդամագրվել էին և՛ հակաքեմալիստներ, և՛ սուլթանության ու խալիֆայության վերականգնման կողմնակիցներ, և՛ կրոնամետներ, և՛ պահպանողականներ, և՛ պանթուրքիստներ: ԺԿ-ն աչքի էր ընկնում նաև շռայլ խոստումներով, որոնք ոգևորում էին վերոնշյալ խմբերին և ընդունվում էին հավատով:

Որոշ ժամանակ անց ԺԿ սրընթաց զարգացումը սկսեց մտահոգել ՀԺԿ-ին. սկսվեցին որոշակի սահմանափակումներ ԺԿ-ի նկատմամբ, քանի որ նրա հեղինակության աճը կարող էր իրավիճակը դուրս բերել վերահսկողությունից և նրան վերածել լուրջ մրցակցի իշխող կուսակցության համար, ինչն էլ եղավ ի վերջո: Երկու կուսակցությունների միջև պայքարն սկսեց հրապարակային բնույթ ստանալ, և նույն Ջելալ Բայարը, որը 1946թ. հունվարին երախտիքի խոսքեր էր հղում ՀԺԿ-ին, ընդամենը 4 ամիս անց մեղադրում էր վերջինիս այլ կուսակցությունների գործունեությանը խոչընդոտելու համար:

ՀԺԿ-ի համար առաջին «մրցակցային» ընտրությունները պետք է լինեին

1946թ. մայիսին նախանշված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, որին, սակայն, ոչ ԺԿ-ն, ոչ էլ մյուս կուսակցությունները չմասնակցեցին: Սա կարելի է մեկնաբանել նաև որպես, ինչ-որ տեղ, քաղաքական բողոքի նշան: Չնայած ՀԺԿ-ն փաստորեն միայնակ և առանց մրցակիցների էր մասնակցում ընտրություններին, այնուամենայնիվ, իշխող կուսակցությունն ստիպված էր կիրառել վարչական մեթոդներ, հայածանքներ, սպառնալիքներ, և կարելի է ասել, որ այդ ընտրությունները ժողովրդի մեջ լրջորեն սասանեցին ՀԺԿ հեղինակությունը, որն արտացոլվեց նաև ընտրություններին ցածր մասնակցության ցուցանիշով (որոշ նահանգներում ընտրություններին մասնակիցների թիվը չէր գերազանցել 30 տոկոսը):

Հասարակական դժգոհության այս դրսևորումը, ինչպես նաև ԺԿ աճող հեղինակությունն արդեն լուրջ անհանգստություն էր պատճառում ՀԺԿ-ին, որը ստիպված էր որոշակի մարտավարական փոփոխություններ անել: ՀԺԿ-ն նախ սկսեց նույնպես հանդես գալ շռայլ խոստումներով, բացի այդ, քաղաքական որոշում ընդունվեց 1947թ. նախատեսված խորհրդարանական ընտրություններն անցկացնել մեկ տարի շուտ, որպեսզի ԺԿ-ն անպատրաստ լինի նման լուրջ ընտրությանը մասնակցելու համար:

Ընտրությունների նախաշեմին ԺԿ-ն իր շուրջը համախմբեց ՀԺԿ-ի դեմ հանդես եկող բոլոր ուժերին և քաղաքական գործիչներին, ինչը նորաստեղծ կուսակցության համար լուրջ մեկնարկային պայմաններ ապահովեց: Բազմակուսակցական համակարգի առաջացրած փոփոխությունները զգացվեցին արդեն նախընտրական շրջանում. և քարոզարշավն անցավ բավական լարված ու ակտիվ: Հետաքրքիր է, որ այդ ժամանակվանից թուրքական քաղաքական հռետորաբանության մեջ ակտիվորեն մտավ և քաղտեխնոլոգիաներում սկսեց կիրառվել քաղաքական հակառակորդներին կոմունիզմի մեջ մեղադրելու սովորույթը:

Այդ ընտրություններում առաջին անգամ կիրառվեց միաստիճան ընտրակարգը. միաստիճան կարգին անցնելու մասին հայտարարեց անձամբ նախագահ Ինյոնյուն:

1946թ. հուլիսի 21-ին Թուրքիայում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որին հանրապետության պատմության մեջ առաջին անգամ մասնակցում էին մեկից ավելի կուսակցություններ: Փաստորեն, իր ստեղծումից ընդամենը 6 ամիս անց ԺԿ-ն մասնակցեց ընտրություններին և արձանագրեց որոշակի հաջողություն. 465 տեղանոց խորհրդարանում ԺԿ-ն ձեռք բերեց 66 պատգամավորական մանդատ, ՀԺԿ-ն՝ 395, իսկ անկախները՝ 8:

1946թ. օգոստոսի 5-ին Թուրքիայի նորընտիր խորհրդարանը երկրի նախագահ ընտրեց Իսմեթ Ինյոնյուին: Կառավարությունը գլխավորեց Ռեջեփ Փեքերը, որը մինչ այդ Թուրքիայի ներքին գործերի նախարարն էր և միաժամանակ ՀԺԿ գլխավոր քարտուղարը: Նա և՛ իր աշխատանքային գործունեության, և՛ քաղաքականության մեջ հայտնի էր որպես կոշտ մեթոդների կողմնակից, ինչը դրսևորվեց նաև ընդդիմության դեմ պայքարում: Նրա վարչապետության շրջանում լիովին արգելվեցին ձախակողմյան կուսակցությունները և կազմակերպությունները, ցրվեցին արհմիությունները: Փեքերը հատկապես կոշտ էր արդեն հիմնական ընդդիմություն դարձած ԺԿ-ի նկատմամբ, նրա վարչապետության տարիներին էլ ավելի սրվեցին ՀԺԿ և ԺԿ հարաբերությունները: 1947թ. սկզբին երկու կողմերն էլ հանդես էին գալիս փոխադարձ կոշտ և անզիջում քննադատությամբ: Այդ պայմաններում, սակայն, ՀԺԿ նախագահ Իսմեթ Ինյոնյուն փորձում էր պահել հավասարակշիռ դիրք: Նա 1947թ. հուլիսի 12-ին հրապարակեց մի հայտարարություն, որը ստացավ «Հուլիսի 12-ի հռչակագիր» անվանումը: Դրանում նախագահը նշում էր, որ երկու կուսակցությունների համար էլ գործունեություն ծավալելու երաշխիք է ապահովելու, և, բացի այդ, ինքն իրեն պատասխանատու է համարում ոչ միայն իր գլխավորած ՀԺԿ-ի, այլև ԺԿ-ի համար ևս: Այս հռչակագրի շնորհիվ ՀԺԿ-ի և ԺԿ-ի միջև յուրատեսակ մի հաշտություն կնքվեց, որն, իր հերթին, խնդիրներ առաջացրեց երկու կուսակցություններում էլ: ՀԺԿ-ում լարվեցին նախագահ Ինյոնյուի և առավել կոշտ դիրքորոշման կողմնակից վարչապետ Ռեջեփ Փեքերի հարաբերությունները: Փեքերը ՀԺԿ խորհրդարանական խմբակցությունում հանդես եկավ նախագահի դիրքորոշման բացահայտ քննադատությամբ, սակայն պատգամավորների մեծամասնությունը պաշտպանեց Ինյոնյուի կողմնորոշումը, և վարչապետը ստիպված հրաժարական տվեց: 1947թ. սեպտեմբերի 9-ին նոր վարչապետ նշանակվեց Հասան Սաքան, որը մինչ այդ զբաղեցրել էր արտաքին

գործերի նախարարի պաշտոնը և ԺԿ-ի հետ հարաբերություններում չափավոր գծի կողմնակիցներից էր:

ԺԿ-ում ևս լարվածություն առաջացավ, որի պատճառով մի խումբ գործիչներ հեռացան կուսակցության շարքերից. նրանց թվում էր մարշալ Ֆևզի Չաքմաքը, որն իր համախոհների հետ որոշ ժամանակ անց ստեղծեց Ազգային կուսակցությունը: Կուսակցականների շարքերում ընդգծված դժգոհությունները ստիպեցին ԺԿ ղեկավարությանը հրաժարվել ՀԺԿ-ի հետ հարաբերությունները բարելավելու քաղաքականությունից և շարունակել անզիջում հակակառավարական գիծը:

Սակայն որքան էլ որոշ թուրք և արևմտյան հեղինակներ փորձեն Իսմեթ Ինյոնյուի քայլերում տեսնել «ժողովրդավարական փոփոխությունների անհրաժեշտության գիտակցում», միևնույն է՝ ներքաղաքական զարգացումների և քաղաքական մտածողության վրա որոշակի ազդեցություն էին ունենում Արևմուտքի հետ Թուրքիայի հարաբերությունների սերտացումը և այնտեղից եկող կոշտ ու մեղմ ճնշումները: Օրինակ, Արևմուտքի ազդեցությամբ և պահանջով արված փոփոխություններից կարող ենք համարել ինչպես միակուսակցական համակարգում եղած տեղաշարժերը, այնպես էլ անձի պաշտամունքի «ինստիտուտի» փոխակերպումները: Այսպես, 1946թ. մայիսին իշխող ՀԺԿ համաժողովում կուսակցության ծրագրից և կանոնադրությունից հանվեցին «անփոփոխ նախագահ» եզրույթը և Իսմեթ Ինյոնյուի համար կիրառվող «ազգային շեֆ» տիտղոսը:

Այսքանով, սակայն, փոփոխությունները չսահմանափակվեցին, ընդհակառակը՝ ավելի լայն ծավալ ընդունեցին: ՀԺԿ պատմության մեջ կարևոր դեր ունի 7-րդ համագումարը (1947թ. նոյեմբերի 17 - դեկտեմբերի 6): Համագումարում փոփոխություններ կատարվեցին կուսակցության կանոնադրության մեջ. թուլացվեցին կուսակցության նախագահի լայն լիազորությունները: Մասնավորապես՝ արձանագրվեց, որ եթե կուսակցության նախագահին ընտրվում է նաև երկրի նախագահ, ապա նրա կուսակցական լիազորությունները կատարում է առաջին տեղակալը: Սրանով, փաստորեն, փորձ էր արվում թուլացնել պետություն-կուսակցություն սերտաճած վիճակը:

Գաղափարախոսական առանձին կետերի շուրջ ընթացող բանավեճերից հետո էլ կուսակցության վեց նետերից մեկը հանդիսացող «ազգայնականությունը» ստացավ հետևյալ ձևակերպումը. «Մենք ազգայնականությունը համարում ենք հիմնական պայմանը և միջոցը թուրք ազգի համար քաղաքակրթության բարձրագույն մակարդակին հասնելու ճանապարհին»:

Գաղափարախոսական կետերից հատկապես կարևոր էր լայիցիզմի քննարկումը: Նախ նկատենք, որ ՀԺԿ-ի և ԺԿ-ի միջև ընթացող միջկուսակցական պայքարում սկսել էր մեծ տեղ հատկացվել իսլամին՝ նպատակ ունենալով ընտրություններին իրենց կողմը գրավել հասարակության առավել կրոնամետ հատվածին: ՀԺԿ 7-րդ համագումարում արդեն կար ձևավորված իսլամամետ խմբավորում, որն առաջարկում էր կրոնը կիրառել երկրում ստեղծված բարոյական անկման, ձախ հայացքների աճի դեմ պայքարում: ՀԺԿ-ն որոշակի սրբագրումներ արեց կրոնին վերաբերող իր քաղաքականության մեջ. նախ մզկիթների վերանորոգման աշխատանքներին նոր թափ հաղորդվեց, 20 տարվա դադարից հետո թույլատրվեց և պետական բյուջեից միջոցներ տրամադրվեցին Մեքքա ուխտագնացության (հաջ) համար: Անգամ կուսակցական մամուլում սկսեցին հրատարակվել կրոնական տոների մասին հայտարարություններ և մեկնաբանություններ, ավելացավ նաև կրոնական գրականության հրատարակումների թիվը: Սակայն ՀԺԿ ամենակարևոր զիջումը մասնագետները համարում են դպրոցներում և բուհերում կրոնի դասավանդման թույլատրումը: 1949թ. որպես ֆակուլտատիվ առարկա միջնակարգ դպրոցների 4-րդ և 5-րդ դասարաններում մտցվեցին իսլամի դասեր, Անկարայի համալսարանում հիմնվեց աստվածաբանության ֆակուլտետ, բացվեցին իմամ-հաթիփների պատրաստման կուրսեր: Իսլամի դասընթաց թույլատրելու փաստարկներից մեկն այն էր, որ քրիստոնյա և հրեա փոքրամասնությունների դպրոցներում արտոնված էր կրոնի դասավանդումը (համապատասխանաբար՝ քրիստոնեություն և հուդայականություն), իսկ մուսուլմանական դպրոցներում նման դասընթաց չկար:

Շատերը կրոնի հետ կապված վերոնշյալ զիջումներում և փոփոխություններում նաև տեսնում են իսլամագիտության ասպարեզում պրոֆեսորի կոչում ունեցող, առավել հետադեմ պահպանողական, սակայն տնտեսության մեջ ազատական հայացքների տեր վարչապետ

Շ. Գյունալթայի դերը, որը 1949թ. հունվարին փոխարինեց Հասան Սաքային: Կրոնի խնդրի արծարծումը քաղաքականության մեջ ավելի ակտիվացավ 1950թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ. երկու կուսակցություններն էլ իրենց հռետորաբանության մեջ զգալի տեղ էին տալիս կրոնին և փոխադարձ մեղադրանքներ հնչեցնում իսլամին հավատարիմ չլինելու մեջ:

5. Թուրքիայի արտաքին քաղաքականությունը երկրորդ աշխարհամարտից հետո. Հայկական հարցի վերադարձը միջազգային քաղաքական օրակարգ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության կարևոր նպատակներից էր ռազմաքաղաքական սերտ համագործակցություն հաստատել Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի հետ: Այդ կողմնորոշման հարցում իշխող և ընդդիմադիր կուսակցությունների միջև ո՛չ այդ ժամանակ, ո՛չ էլ հետագայում էական տարաձայնություններ չեն եղել: Արևմտյան կողմնորոշման հարցում ամենակարևոր գործոնն այն էր, որ Թուրքիան պատերազմի տարիներին որդեգրած «տարօրինակ չեզոքության» պատճառով լրջագույն խնդիրների առաջ էր կանգնած, որոնք ավելի շատ վերաբերում էին խորհրդա-թուրքական հարաբերություններին: Եվ այդ պայմաններում Թուրքիան կարիք ուներ հզոր հովանավորի, որը խորհրդա-թուրքական սրացող հակամարտության պայմաններում կսատարեր նրան: Այսինքն՝ կարելի է ասել, որ պատերազմի ավարտից հետո տևական ժամանակ Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և կողմնորոշումները պայմանավորված էին Խորհրդային Միությունից բխող և սպասվող սպառնալիքով:

Թուրքիայի ռազմավարական դիրքը, ինչպես նաև նրա առջև կանգնած արտաքին քաղաքական մարտահրավերները ձեռնտու վիճակ էին ստեղծել Արևմուտքի համար. գլխավոր դաշնակից պետությունները պատերազմից հետո ոչ միայն հայտնվել էին տարբեր ճակատներում, այլև դարձել էին

հակառակորդներ «Սառը պատերազմում»: Ուստի, Թուրքիային ԽՍՀՄ-ից պաշտպանելը, նրան տարատեսակ աջակցություն ցուցաբերելը և իր խմբավորման մեջ ներառելը դարձել էին հույժ կարևոր խնդիր Արևմուտքի հակախորհրդային քաղաքականության մեջ:

Արևմուտքի աջակցությունը Թուրքիային արտահայտվեց և՛ ռազմական, և՛ քաղաքական, և՛ ֆինանսական ոլորտներում: Այսպես, 1947թ. մարտի 12-ին ԱՄՆ նախագահ Հարի Թրումանը հռչակեց մի ծրագիր, որը ստացավ «Թրումանի դոկտրին» անվանումը: Այն նախատեսում էր տարատեսակ, այդ թվում՝ ռազմական և ֆինանսական օգնություն «ազատ ժողովուրդներին, որոնք դիմադրություն են ցույց տալիս արտաքին ճնշմանը»: Այդ նպատակն ավելի մանրամասն սահմանվում էր նաև հետևյալ կերպ. «աջակցություն որոշ պետություններին՝ կոմունիզմի սպառնալիքի դեմ պայքարում»: Դոկտրինի համաձայն՝ ԱՄՆ օգնությունը հատկացվելու էր Թուրքիային և Հունաստանին, այդ նպատակի համար տրամադրվել էր 400 միլիոն դոլար: 1947թ. հուլիսի 12-ին ստորագրվեց ամերիկա-թուրքական համաձայնագիր Թուրքիային օգնություն ցույց տալու վերաբերյալ. Թուրքիան ստանալու էր 100 միլիոն ԱՄՆ դոլար և ամերիկյան սպառազինություն: Նախատեսվում էր նաև Միջերկրական ծովի արևելյան մասերում հիմնել ամերիկյան ռազմակայաններ: 1947թ. սեպտեմբերի 1-ին ընդունվեց օրենք ԱՄՆ-ի կողմից Թուրքիային օգնություն հատկացնելու վերաբերյալ, դրանից հետո Թուրքիային հատկացվեցին զինամթերք, ռազմական վարկեր, Թուրքիա գործուղվեցին ամերիկյան ռազմական փորձագետներ: Օգնությունը, ըստ էության, ամբողջովին ուղղվում էր ռազմական ոլորտին և ճանապարհների, նավահանգիստների, օդանավակայանների շինարարությանը, ինչը ևս ուղղակիորեն առնչվում էր ռազմական ոլորտին:

1947թ. հունիսի 5-ին ելույթ ունենալով Հարվարդի համալսարանում՝ ԱՄՆ պետքարտուղար Ջորջ Մարշալը ներկայացրեց Եվրոպայի, այդ թվում Թուրքիայի վերականգնման իր ծրագիրը, որը պատմագրության մեջ ստացավ «Մարշալի պլան» անվանումը: 1948թ. հուլիսի 4-ին Թուրքիան և ԱՄՆ-ը ստորագրեցին «Տնտեսական համագործակցության մասին համաձայնագիր»՝ Մարշալի պլանի շրջանակներում:

Այս երկու համաձայնագրերով էլ Թուրքիան սկսեց ստանալ ահռելի

ռազմական, տնտեսական օգնություն: Ընդհանուր առմամբ, 1948-1964թթ. ԱՄՆ-ը Թուրքիային ցուցաբերեց մոտ 2,5 միլիարդ դոլարի ռազմական օգնություն, իսկ Եվրոպան՝ մոտ 1,5 միլիարդ դոլարի տնտեսական օգնություն:

Այսպիսով՝ Թուրքիան, մերձենալով Արևմուտքի հետ, դարձավ նրա կարևոր դաշնակիցը Մերձավոր Արևելքում, կամ՝ ինչպես անվանվում է հակաարևմտյան գրականության մեջ՝ «ԱՄՆ ժանդարմը»: Թուրքիան կարողացավ մտնել մի խմբավորման մեջ, որն ապահովում էր նրան տարատեսակ արտաքին քաղաքական վտանգներից, ինչպես նաև տրամադրում էր ռազմական և տնտեսական ահռելի չափերի օգնություն: Սակայն, այդ ամենով հանդերձ, Թուրքիան արտաքին քաղաքականության մեջ ունեցավ նաև ինքնուրույնության որոշակի նվազում, որը հետագայում բազմիցս զգալ տվեց իրեն:

Պատերազմից հետո արտաքին քաղաքական ոլորտում Թուրքիայի առջև կանգնած ամենակարևոր խնդիրը կապված էր ԽՍՀՄ-ի կողմից խորհրդա-թուրքական 1925թ. պայմանագրի չեղյալ հայտարարման (դենոնսացիա) և արդար պահանջների ներկայացման հետ: Խորհրդա-թուրքական հարաբերությունների այդ լարված իրավիճակում միջազգային ասպարեզում կրկին ակտիվացավ Հայկական հարցը:

Թուրքիայի և Խորհրդային Միության միջև հարաբերություններում սառնություն սկսում է զգացվել արդեն 1930-ական թթ.: Դա դրսևորվում է նաև դիվանագիտական ներկայացուցչությունների մակարդակում: Այսպես՝ 1938թ. փակվեցին խորհրդային հյուպատոսություններն Իզմիրում և Կարսում, Թուրքիան, իր հերթին, փակեց Օդեսայի, Բաքվի, Երևանի և Լենինգրադի թուրքական հյուպատոսությունները: Խորհրդա-թուրքական հարաբերությունները հատկապես լարվեցին Երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ Թուրքիան, հանդես գալով որպես ֆաշիստական Գերմանիայի «չպատերազմող դաշնակից», բացահայտ և գաղտնի քայլեր արեց ԽՍՀՄ-ի դեմ:

Պատերազմի ավարտին՝ 1945թ. մարտի 19-ին, ԽՍՀՄ-ը պաշտոնապես հայտարարեց Թուրքիային, որ 1925թ. կնքված և 1935թ. տասը տարով երկարացված խորհրդա-թուրքական պայմանագիրն այլևս չի համապատասխանում նոր իրողություններին, որոնք ձևավորվել են

պատերազմի արդյունքում, և ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար (նախարար) Վ. Մոլոտովն առաջարկում է կնքել նոր պայմանագիր: 1945թ. հունիսի 7-ին տեղի է ունենում Մոլոտովի և ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Սարփերի հանդիպումը, որի ընթացքում Մոլոտովն անդրադառնում է խորհրդա-թուրքական սահմանին՝ ընդգծելով, որ դա ձևավորվել է այն ժամանակ, երբ ԽՍՀՄ-ը թույլ էր, և ավելի կոնկրետացնելով նշել է, որ 1921թ. Կարսի պայմանագրով Թուրքիային անցած որոշ տարածքների նկատմամբ ԽՍՀՄ-ը պահանջներ ունի, և «պետք է ուղղվեն նախկին անարդարությունները»: Մոլոտովը նշել է նաև, որ պետք է վերանայվի սևծովյան նեղուցների ռեժիմը: ԽՍՀՄ այդ բավական կոշտ հայտարարությանը թուրքական կողմը պատասխանում է դիվանագիտական խուսափողական արտահայտություններով՝ հողային պահանջների հանդեպ, սակայն, ցուցաբերելով որոշակի կոշտ հակազդեցություն:

Տարածքային պահանջների մասով ԽՍՀՄ-ը Թուրքիայից պահանջում էր վերադարձնել Կարսի, Արդահանի և Արդվինի նահանգները, որոնք եղել են նախ Ռուսական կայսրության, ապա դրանց մի մասը՝ նաև անկախ Հայաստանի Հանրապետության սահմաններում և Թուրքիային են անցել Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով: Սակայն խորհրդային իշխանությունները և՛ պաշտոնական, և՛ ոչ պաշտոնական քննարկումներում նշում էին, որ դրանք Խորհրդային Հայաստանի հողային պահանջներն են, և, բացի այդ, կա սփյուռքահայերին վերաբնակեցնելու խնդիր, իսկ Խորհրդային Հայաստանի տարածքը դա թույլ չի տալիս: Այս ամենին զուգահեռ՝ Խորհրդային Միությունը սկսել էր ակտիվ քարոզչություն իրականացնել սփյուռքահայերի շրջանում՝ հայրենադարձության և պատմական Հայաստանի տարածքում վերաբնակվելու ուղղությամբ: 1945թ. հունիսին ընտրված Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ն նամակով դիմել էր Ստալինին և բարձրացրել պատմական հայկական տարածքների վերամիավորման հարցը: Ամբողջ 1945 թվականի ընթացքում սփյուռքահայ տարբեր կազմակերպությունների և համայնքների կողմից հաղթող տերությունների ղեկավարներին, կառավարություններին հարյուրավոր դիմումներ հղվեցին՝ հայկական արդար պահանջատիրության խնդրով: Սփյուռքահայ շատ գաղթօջախներում տեղի էին ունենում

բազմահազարանոց հանրահավաքներ՝ ի պաշտպանություն հայկական հողային պահանջների: Նույն թվականի նոյեմբերի 27-ին Գևորգ Ջ կաթողիկոսն այդ հարցով միաժամանակ դիմեց ԽՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի ղեկավարներին:

Հայկական հողային պահանջատիրությանը զուգահեռ՝ 1945թ. վերջերին Ստալինի ցանկությամբ ավելացավ նաև վրացական պահանջատիրությունը, ընդ որում՝ հայկական Արդահանի նկատմամբ: Վրացի պատմաբաններ, ակադեմիկոսներ Սիմոն Ջանաշիան և Նիկոլայ Բերձենիշվիլին 1945թ. դեկտեմբերին հանդես եկան ծավալուն հոդվածով, որտեղ փորձեցին հիմնավորել վրացական պահանջատիրությունը և հավակնությունները: Այս հոդվածը լայն արձագանք գտավ, դրան շատ արագ՝ 1946թ. հունվարի 6-ին արձագանքեց անձամբ Թուրքիայի վարչապետ Շուքրյու Սարաջօղլուն՝ ներկայացնելով այլ փաստեր և տվյալներ: Նա իր ելույթն ավարտել էր այն եզրահանգմամբ, որ «վրացի պրոֆեսորները չգիտեն ո՛չ անցյալի, ո՛չ էլ ներկա պատմությունը»: Սարաջօղլուն առաջ քաշեց նաև այն կասկածելի պնդումը, թե Կարսի ու Արդահանի նահանգներում 1918թ. տեղի է ունեցել հանրաքվե, և հենց այդ «ժողովրդավարական» հիմքով են հիշյալ նահանգները մտել Թուրքիայի կազմի մեջ:

Այդուհետ ԽՍՀՄ-ը տարածքային պահանջները սկսեց ներկայացնել որպես Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանի պահանջներ: Մի կողմ թողնելով Արդահանի տարածքը որպես վրացական ներկայացնելու անհիմն և հակագիտական փորձերը՝ նշենք, որ ժամանակի միջազգային մամուլում լայն տեղ է գտել Թուրքիային ԽՍՀՄ ներկայացրած հողային պահանջները հենց որպես Հայկական հարցի բաղկացուցիչ մաս: Ավելին՝ մամուլում ներկայացվում էին ընդարձակ և համառոտ վերլուծություններ, պատմական ակնարկներ, որոնց համատեքստում վեր էին բարձրանում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված հանցանքը, հայոց պատմության որոշ դրվագներ և այլն:

Բացի տարածքային պահանջներից՝ ԽՍՀՄ-ը, նաև հիմք ընդունելով երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի կողմից 1936թ. Մոնտրյոյի համաձայնագրի բազմաթիվ խախտումները, կոնկրետ գերմանական և իտալական ռազմանավերի կողմից նեղուցները

ռազմական նպատակով օգտագործելու փաստերը, բացահայտորեն Թուրքիային պատասխանատու էր համարում այդ ամենի համար և առաջարկում էր փոխել սևծովյան նեղուցների ռեժիմը:

ԽՍՀՄ-ն առաջարկում էր նեղուցների նոր ռեժիմ, համաձայն որի.

1. նեղուցները պետք է միշտ բաց լինեն բոլոր երկրների առևտրային նավերի համար,
2. նեղուցները պետք է միշտ բաց լինեն սևծովյան պետությունների ռազմանավերի համար,
3. նեղուցներով ոչ սևծովյան պետությունների ռազմանավերի անցումը, բացառությամբ հատուկ դեպքերի, պետք է արգելվի,
4. նեղուցներից օգտվելու կանոնակարգի սահմանումը պետք է մտնի Թուրքիայի և սևծովյան մյուս երկրների իրավասության մեջ,
5. Թուրքիան և Խորհրդային Միությունը, որպես նեղուցներում առևտրային նավագնացությունն ու դրա անվտանգությունն ապահովելու մեջ ամենից ավելի շահագրգռված պետություններ, համատեղ միջոցներով պետք է կազմակերպեն նեղուցների պաշտպանությունը՝ ուրիշ տերությունների կողմից սևծովյան պետությունների դեմ թշնամական նպատակներով դրանց օգտագործումը կանխելու համար:

Խորհրդա-թուրքական դաշնագրի չեղյալ հայտարարումից և տարածքային ու սևծովյան նեղուցների ռեժիմի փոփոխության պահանջներից հետո երկու երկրների հարաբերությունները թևակոխեցին լարվածության նոր փուլ, ինչը բնութագրվում է նաև որպես «նյարդերի պատերազմ»:

Խորհրդային Միությունը երբեմն նաև բացահայտ ուժի ցուցադրում էր անում, օրինակ՝ ավելացնելով իր զորքերի թվաքանակն ամբողջ խորհրդա-թուրքական սահմանի երկայնքով, ինչը մեծ անհանգստություն, իսկ երբեմն էլ խուճապ էր առաջացնում թուրքական կողմում: ԽՍՀՄ-ը չէր էլ թաքցնում, որ պատրաստ է ամեն պահի տարածքային հարցերը լուծել ռազմական ճանապարհով:

ԽՍՀՄ-ից եկող սպառնալիքների դիմաց Թուրքիան սկսում է դաշնակիցներ որոնել, և հասկանալի է, որ այդ պայմաններում նման պետությունները, որոնք կարող էին հակակշռել այդ ուժին, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան էին, որոնք էլ ներգրավվում են հողային և սևծովյան նեղուցների ռեժիմի շուրջ ծավալվող վեճի մեջ: Ակնհայտ էր, որ հատկապես

նեղուցների ռեժիմի փոփոխության պահանջը հանդիպելու էր ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի հակազդեցությանը, քանի որ դրանով էականորեն մեծանում էր ԽՍՀՄ ազդեցությունը, ուստի երկու պետություններն էլ սկսում են հանդես գալ Թուրքիայի բացահայտ և քողարկված պաշտպանությամբ:

Մեծ տերությունների ղեկավարները ԽՍՀՄ պահանջները քննարկել են հետպատերազմյան մի շարք պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ: Պոտսդամի կոնֆերանսի օրակարգում էր նաև Կարսի, Արդահանի և Արդվինի տարածքների հարցը: Այդ խնդիրը ներկայացնում է ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Մոլոտովը: Նույն թեմային է անդրադառնում Ստալինը՝ ընդգծելով, որ իրենք ոչ թե նոր տարածքներ են պահանջում, այլ ցանկանում են վերականգնել հին սահմանները, համաձայն որոնց՝ Կարսը եղել է Հայաստանի տարածքում:

Տպավորություն է ստեղծվում, թե ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային առավելապես հետաքրքրել է սևծովյան նեղուցների հարցը, և հայկական հողերի խնդիրը նրանք փորձել են տարանջատել կամ էլ այդ հարցի շուրջ հրապարակավ հանդես չգալ: Խորհրդային ղեկավարներն էլ, իրենց հերթին, արևմտյան պաշտոնյաների հետ զրույցներում հիշեցրել են նրանց, որ հաճախ պատմության ընթացքում Արևմուտքը հանդես է եկել հայ ժողովրդի շահերի պաշտպանության վերաբերյալ հայտարարություններով ընդդեմ թուրքական բռնապետության, ու հիմա ժամանակն է խոսքից գործի անցնելու և սատարելու դրանց գործնական կիրառմանը, որի արդյունքում հարյուր հազարավոր սփյուռքահայեր կարող էին վերադառնալ իրենց պատմական հայրենիք: Այս բանակցությունների և հանդիպումների ժամանակ երբեմն շոշափվել է նաև Թուրքիայի հայ համայնքի, նրա անվտանգության և թվաքանակի հարցը. Մոլոտովը Թուրքիայում բնակվող հայերի թվաքանակը նշել է 400-500 հազար՝ ըստ երևույթին նկատի ունենալով նաև ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայերին[9]:

Ավելորդ չէ շեշտել, որ այդ ընթացքում թուրքերն արևմտյան տերությունների հետ ակտիվ բանակցություններում շարունակ որպես համ-

9 Արխիվային որոշ փաստաթղթեր վկայում են, որ այդ տարիներին խորհրդային իշխանությունները զբաղված են եղել Թուրքիայում ապրող բռնի իսլամացված հայերի թվաքանակի ու բնակության վայրերի ճշգրտմամբ և ուսումնասիրությամբ:

ընդհանուր սպառնալիք էին ներկայացրել ԽՍՀՄ ազդեցության աճը: Օրինակ, ինչպես հայտնել է Թուրքիայում ԱՄՆ դեսպան Էդվին Վիլսոնը, իր հետ հանդիպման ժամանակ վարչապետ Սարաջօղլուն ասել է, որ եթե ԽՍՀՄ-ը բարձրացնի տարածքային հարցեր և Արևմուտքը չկարողանա կասեցնել դրանք, ապա Մերձավոր Արևելքի ժողովուրդները դա կընկալեն որպես խորհրդային կողմի հաղթանակ, և «ամբողջ տարածաշրջանը կհայտնվի խորհրդային գերիշխանության տակ»:

Կարևոր է նկատել, որ խորհրդա-թուրքական հարաբերությունների սրմանը և արևմտյան աջակցությանը զուգահեռ՝ Թուրքիայում կրկին անդրադարձան պանթուրքիստներին, և վաղաժամ՝ 1945թ. դեկտեմբերին, բանտերից ազատվեցին այն ծայրահեղական գործիչները, որոնք դատապարտվել էին ընդամենը կարճ ժամանակ առաջ և որոնց բանտարկումը ներկայացվել էր որպես ԽՍՀՄ-ի նկատմամբ ժեստ: Թուրքիայում ուժեղացան հակահայկական, հակախորհրդային տրամադրությունները, իշխանություններն այս հարցում ամեն կերպ հրահրում էին մոլեռանդ խավին, ինչպես նաև գործի էին դնում իրենց կամակատար մամուլի միջոցները: 1945թ. դեկտեմբերի 4-ին Ստամբուլում անցկացվել է հակախորհրդային բնույթի հանրահավաք, որն ուղեկցվել է անկարգություններով, քարուքանդ են արվել խորհրդային և ռուս գրականություն վաճառող գրախանութներ, այրվել ռուս և խորհրդային հեղինակների գրքերը: Այս առիթով Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Ս. Վինոգրադովը բողոքի նոտա է փոխանցել Թուրքիայի արտգործնախարարին և անկարգությունների պատասխանատու համարել թուրքական իշխանություններին: Թուրքական քաղաքական վերնախավում ևս նկատելի էր ագրեսիվ տրամադրությունների աճ: Այդ ժամանակ բավական մեծ տարածում էր գտել մարշալ Ֆևզի Չաքմաքի թևավոր արտահայտությունը հողային պահանջների և սևծովյան նեղուցների ռեժիմի հետ կապված: Նա ասել էր. «Նեղուցները մեր կոկորդն են[10], իսկ Կարսը՝ մեր ողնաշարը»՝ սրանով փորձելով հոխորտալ, որ Թուրքիան երբեք չի կարող համաձայնվել ԽՍՀՄ պահանջներին:

10 Այստեղ ակնհայտ է թուրքերեն boğaz բառի, որն առաջին իմաստով նշանակում է կոկորդ, երկրորդ իմաստով՝ նեղուց, երկու իմաստների հիման վրա կառուցված բառախաղը:

Միջազգային այդ լարված իրավիճակում ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան նեղուցների հարցով ավելի բացահայտ, իսկ տարածքների հարցով՝ սկզբում առավել նվազ ինտենսիվությամբ սկսեցին պաշտպանել Թուրքիային: Մեծ տերությունների բանակցություններն ավարտվում են ոչինչ չասող մի որոշմամբ, համաձայն որի՝ տարածքային հարցերը վերաբերում են զուտ երկու երկրներին, և առաջարկվում է դրանք լուծել առանց երրորդ երկրների մասնակցության, իսկ նեղուցների հարցը կարող էր քննարկվել շահագրգիռ պետությունների մասնակցությամբ: Սակայն այս դիվանագիտական ձևակերպումները հստակ նշանակում էին աջակցություն Թուրքիային, և դրանք հետզհետե ավելի բացահայտ ու ագրեսիվ դարձան: 1946թ. մարտին Չերչիլի ֆուլտոնյան ելույթով սկիզբ առած «Սառը պատերազմն» էլ ավելի նպաստավոր վիճակ ստեղծեց Թուրքիայի համար. նախ՝ այն դարձավ ԱՄՆ կարևորագույն դաշնակիցը, երկրորդ՝ նրա տարածքային խնդիրները, ըստ էության, դարձան նաև արևմտյան տերությունների խնդիրը, որոնք այս անգամ ևս գնացին ոչ թե արդարության ճանապարհով, ինչի մասին հռչակում էին, այլ սառը քաղաքական հաշվարկների, որը ճակատագրական եղավ Հայկական հարցի նորօրյա փուլի համար: Արդեն 1946թ. վերջին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Դին Աչեսոնը բացահայտ հայտարարեց, որ ԱՄՆ-ը ամեն կերպ կպաշտպանի Թուրքիայի շահերը խորհրդային հարձակումներից:

Խորհրդային Միությունը ստեղծված իրականության և իրողությունների ազդեցության տակ ստիպված եղավ քաղաքական օրակարգում սառեցնել իր տարածքային պահանջները, ինչպես նաև սևծովյան նեղուցների ռեժիմի փոփոխության հարցը. Մոնտրյոյի կոնվենցիան մնաց անփոփոխ և մինչ օրս էլ գործում է:

Այսպիսով՝ Հայկական հարցը հերթական անգամ դարձավ մեծ տերությունների քաղաքական առևտրի առարկա. Արևմուտքը, առավել կոնկրետ՝ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան, ևս մեկ անգամ կործանարար հարված հասցրին Հայկական հարցին և չեզոքացրին պահանջատիրության վերջին իրական շանսերը: Ճիշտ է, 1946թ. Հայկական հարցը ձևական առումով դեռևս մնում էր միջազգային քաղաքական օրակարգում, սակայն նրա լուծման հավանականությունը լիովին սպառված էր: Կարծիք կա նաև, որ

հայկական հողերի վերադարձի հարցը ԽՍՀՄ-ը նախօրոք չէր քննարկել դաշնակից պետությունների հետ, այդ պատճառով այն նրանց կողմից դիտարկվել է որպես կոմունիստական ծավալապաշտության օրինակ: Սակայն իրականությունն այն է, որ պատերազմից հետո դաշնակիցների շահերն արդեն լիովին տարբեր էին, և արևմտյան տերությունները, սատարելով Թուրքիային, իրենց համար լուծեցին աշխարհաքաղաքական և ռազմավարական լուրջ հարցեր: Թուրքիա-Արևմուտք հարաբերությունների ջերմացման կարևոր խթանը հենց ԽՍՀՄ-Թուրքիա խնդիրն էր, և այդ ամենն ի վերջո ավարտվեց Թուրքիայի անդամակցումով արևմտյան ռազմական դաշինքին՝ ՆԱՏՕ-ին:

Նկատենք նաև, որ ԽՍՀՄ-Թուրքիա-Արևմուտք եռանկյունու միջև եղած այդ բարդ խնդրի հանգուցալուծումից հետո Թուրքիան թե՛ քաղաքական, թե՛ հասարակական մակարդակներում կոշտացրեց դիրքորոշումը ԽՍՀՄ-ի նկատմամբ: Այդ ժամանակվա թուրքական մամուլը լի էր հակախորհրդային ագրեսիվ և սպառնալից հրապարակումներով: Այսպես՝ թուրքական «Թանին» թերթի գլխավոր խմբագիր, նախկին երիտթուրք և Հայոց ցեղասպանության մեջ մեղսակցության համար 1919թ. Մալթա աքսորված Հուսեյին Ջահիթ Յալչընը առաջարկում էր ԽՍՀՄ-ին ստիպել հաշտվել նոր աշխարհակարգի հետ, հակառակ դեպքում «ատոմային ռումբերի անձրև» կտեղա նրա վրա:

Հայկական հողերի վերադարձի հարցը, թեկուզ և արդեն խորհրդանշական, շարունակել է մնալ Խորհրդային Միության արտաքին քաղաքական օրակարգում ընդհուպ մինչև Ստալինի մահը՝ 1953թ.: Այդ ընթացքում նաև կազմակերպվեց սփյուռքահայերի հայրենադարձությունը, որի հիմնական նպատակն էր վերաբնակեցնել սփյուռքահայությանն այն տարածքներում, որոնք պետք է վերադարձվեին Հայաստանին:

1953թ. մայիսի 30-ին Խորհրդային Միության կառավարությունը պաշտոնապես հրաժարվեց Թուրքիայի նկատմամբ տարածքային, ինչպես նաև սևծովյան նեղուցների ռեժիմի փոփոխության վերաբերյալ իր պահանջներից: Խորհրդային Միության արտաքին գործերի նախարար Մոլոտովը Թուրքիայի դեսպան Հոզարին է փոխանցել պաշտոնական հայտարարություն, որի մեջ նշված է եղել. «Բարիդրացիական հարաբերությունների պահպանման և խաղաղության ու անվտանգության

ամրապնդման համար Հայաստանի և Վրաստանի կառավարությունները հնարավոր են համարել հրաժարվել Թուրքիայի նկատմամբ իրենց տարածքային պահանջներից»: Նույն հայտարարության մեջ ասվում է, որ Խորհրդային Միությունը վերանայել է նաև նեղուցների վերաբերյալ իր նախկին մոտեցումները: Սրան հետևել է Թուրքիայի պաշտոնական պատասխանը, որտեղ դիվանագիտական լեզվով նշվել է, որ Խորհրդային Միության հայտարարությունը գոհունակությամբ է ընդունվել: Սակայն դրանից հետո էլ խորհրդա-թուրքական հարաբերությունները կարգավորելու ԽՍՀՄ ձգտումները համարժեք արձագանք չստացան թուրքական կողմից:

Ուշագրավ զարգացումներ տեղի ունեցան նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղության մեջ: Այսպես, չնայած 1947թ. ՄԱԿ-ում Թուրքիան պաշտպանել էր արաբական երկրներին և դեմ արտահայտվել Պաղեստինի բաժանմանը, 1949թ. մարտի 28-ին նա ճանաչեց Իսրայելի անկախությունը՝ դառնալով առաջին մուսուլմանական երկիրը, որն ընդունեց նորաստեղծ հրեական պետության գոյությունը: Այդ քայլը բացասական ազդեցություն է ունենում Թուրքիայի և արաբական մի շարք երկրների հարաբերությունների վրա, դժգոհության ու քննադատության լուրջ ալիք բարձրացնում ինչպես Մերձավոր Արևելքի իսլամադավան երկրներում, այնպես էլ հենց թուրքական հասարակության որոշակի շրջանակներում: Սակայն թուրքական իշխանություններն իրենց այս քայլն արդարացնում էին Եվրոպայի հետ ինտեգրացիայի և քրիստոնեական Արևմուտքում Թուրքիայի հանդեպ եղած բացասական կարծրատիպերը վերացնելու մղումով: Իսրայելա-արաբական պատերազմի ժամանակ ևս Թուրքիան չեզոքություն է պահպանում և վարում սպասողական կամ, ինչպես ասում են թուրքերենով՝ «սպասիր-տես» ("bekle gör") քաղաքականություն:

1950թ. մարտին Թուրքիայի և Իսրայելի միջև հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ, որին հետևում է առևտրային պայմանագրերի ստորագրումը: Սկսում է լայն թափով զարգանալ թուրք-իսրայելական համագործակցությունը նաև ռազմարդյունաբերական ոլորտում: Բացի այդ, ձևավորվում է Թուրքիա-հրեական լոբբի համագործակցություն: Տարբեր խնդիրներում այդ լոբբին աջակցում է

Թուրքիային, ինչպես ԱՄՆ-ի հետ հարաբերություններում, այնպես էլ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարում, որը շարունակվում է մինչև օրս:

Գրականություն լրացուցիչ ընթերցանության համար

1. Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 5, Երևան, 2008, էջ 127-143:
2. Մելքոնյան Ռ., «Էթնիկ զորակոչ» Թուրքիայի Հանրապետությունում (1941-1942թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2012, 2-3, էջ 42-50:
3. Մելքոնյան Ք., ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները, Հայկական հարցը, սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947թթ.), Երևան, 2013:
4. Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946гг. (под редакцией Армана Киракосяна), Ереван, 2010.
5. Еремеев Д., Турция в годы Второй мировой и "холодной" войн (1939-1990), Москва, 2005.
6. Корхмазян Р., Турецко-германские отношения в годы второй мировой войны, Ереван, 1977.
7. Aktar A., Varlik Vergisi ve "Türkleştirme" Politikalari, İstanbul, 2000.

ԳԼՈՒԽ Դ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ (1950-1960ԹԹ.)

1. Ժողովրդավարական կուսակցության իշխանության հաստատումը. ներքաղաքական իրավիճակը

1950թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ Թուրքիայում սրվել էր միջկուսակցական պայքարը ՀԺԿ-ի և ԺԿ-ի միջև, ինչը, բնականաբար, ազդել էր ներքաղաքական վիճակի վրա: Դեռևս 1949թ. հունիսին տեղի ունեցած ԺԿ երկրորդ համագումարում որոշում էր ընդունվել, որ եթե գալիք խորհրդարանական ընտրություններում կրկին թույլատրվեն 1946թ. տեղի ունեցած խախտումները, ապա «ժողովուրդը պետք է օգտագործի օրինական իշխանություն ձևավորելու իր իրավունքը»: Սա, փաստորեն, բացահայտ սպառնալիք էր՝ ուղղված ՀԺԿ-ին, որով ԺԿ-ն խոստանում էր հետընտրական գործընթացները վերածել հեղափոխության: Երկրում ստեղծված ընդհանուր քաղաքական վիճակը, ինչպես նաև հասարակական տրամադրությունները ստիպեցին ՀԺԿ-ին որոշակի փոփոխություններ և զիջումներ անել, որոնցից ամենակարևորը վերաբերում էր ընտրությունների անցկացման կարգին: 1950թ. փետրվարի 16-ին ԹԱՄԺ-ը ընդունեց օրենք, որով սահմանվում էր, որ ընտրություններն անցկացվելու են միաստիճան համակարգով, քվեարկությունը լինելու էր փակ, իսկ քվեաթերթիկների հաշվարկը՝ բաց, ընդ

որում՝ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների հսկողությամբ:

Ժողովրդավարական կուսակցությունը, մտնելով ընտրական գործընթացների մեջ, արագ ձևավորեց իր հասարակական-քաղաքական աջակցության պլատֆորմը: Նրան աջակցում էին ՀԺԿ քաղաքականությունից դժգոհ խոշոր հողատերերը, հոգևորականությունը, կրոնամետ հատվածը, որոնք թշնամաբար էին տրամադրված քեմալական լայիցիզմին: Միջին խավը նույնպես դժգոհ էր, ինչի հիմնական պատճառներից էին միակուսակցական բռնապետությունը, գնաճը, ցածր աշխատավարձերը և այլն: Ազգային փոքրամասնությունները ևս մեծ մասամբ նախընտրեցին ժողովրդավարական կուսակցությունը, քանի որ ՀԺԿ իշխանության տարիներն ուղեկցվում էին էթնիկ և կրոնական հալածանքի բազմաթիվ օրինակներով: Նրանք հույս ունեին որոշակի փոփոխություն տեսնել այդ հարցում, որը, սակայն, խորքային առումով չիրականացավ:

Ընտրությունների նախօրյակին ԺԿ նախընտրական խոստումները հասան իրենց գագաթնակետին. դրանք հատկապես գրավիչ էին մանր ու միջին գործարարների և սեփականատերերի համար, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական, որոնք էլ լուրջ ընտրազանգված էին կազմում: ԺԿ-ն նաև շրջանառության մեջ դրեց որոշ կարգախոսներ, որոնք, նախ՝ շատ գրավիչ էին, երկրորդ՝ անմիջապես լայն տարածում էին գտնում. դրանցից էր, օրինակ, «ամեն թաղամասում մեկ միլիոնատեր» կարգախոսը:

Ինչևէ, 1950թ. մայիսի 14-ին տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որին մասնակցեց ընտրողների 89 տոկոսը: Ընտրությունները հաջողություն բերեցին ԺԿ-ին: Խորհրդարանում մանդատները բաժանվեցին հետևյալ կերպ՝ ԺԿ՝ 408 պատգամավորական մանդատ, ՀԺԿ՝ 69: ՀԺԿ-ի նկատմամբ ժողովրդի հակակրանքի դրսևորումներից կարելի է համարել նաև այն, որ կառավարության անդամներից պատգամավորության թեկնածու առաջադրվածներից կարողացավ ընտրվել միայն վարչապետ Շամսուդդին Գյունալթայը: Անգամ նախագահ Իսմեթ Ինյոնյուն չկարողացավ հաղթել մայրաքաղաք Անկարայում և պատգամավոր դարձավ Մալաթիայի նահանգից, որտեղ նույնպես դրել էր իր թեկնածությունը, քանի որ օրենքը դա թույլ էր տալիս:

Այսպիսով՝ վերջ տրվեց ՀԺԿ 27 տարի տևած միակուսակցական կառավարմանը, և տեղի ունեցավ իշխանափոխություն: Մայիսի 22-ին ԹԱՄԺ նիստում հանրապետության նախագահ ընտրվեց Ջելալ Բայարը, իսկ մեջլիսի նախագահ՝ Ռեֆիք Քորալթանը: Վարչապետ նշանակվեց Ադնան Մենդերեսը: Բայարը երկրի նախագահ ընտրվելուց հետո հրաժարվեց ԺԿ նախագահի պաշտոնից՝ այսպիսով կատարելով կուսակցական կանոնադրությամբ նախատեսվող կետը, ԺԿ նոր նախագահ ընտրվեց վարչապետ Ադնան Մենդերեսը:

1950թ. ընտրություններում ՀԺԿ պարտությունը կարող էր դառնալ լուրջ ցնցումների սկիզբ: Սակայն Իսմեթ Ինյոնյուն քաղաքական որոշում է կայացնում՝ զիջել իշխանությունը: Այս հարցում ամենևին երկրորդական չեն եղել Արևմուտքի ճնշումները, ինչպես նաև նրանց ծրագրերը՝ Թուրքիային Մերձավոր Արևելքի այլ երկրներից ժողովրդավարության առումով որոշակիորեն տարբերվող պետության իմիջ ապահովելու վերաբերյալ:

Կարծիք կա, որ այդ ընտրություններով պառակտվեց 1908 թվականից գոյություն ունեցող երիտթուրքական էլիտան, քանի որ ՀԺԿ-ն երիտթուրքերի շարունակությունն էր համարվում: Սակայն ԺԿ իշխանության գալով երիտթուրք կադրերը մեծ մասամբ շարունակեցին մնալ կառավարման համակարգում, և հենց նախագահ Ջելալ Բայարը երիտթուրքական ակտիվ գործիչ էր: Մյուս կողմից՝ երիտթուրքական մտածելակերպը և գործելաոճը շարունակեցին գերիշխող մնալ թուրքական քաղաքական համակարգում, որը ցայտուն դրսևորվեց ազգային փոքրամասնությունների պարագայում:

Գալով իշխանության՝ ԺԿ առաջին քայլը եղավ ռազմական համակարգում փոփոխություններ անելը. պաշտոնանկ արվեցին նոր իշխանությունների համար ոչ վստահելի զինվորականները, մասնավորապես՝ գլխավոր շտաբի պետը և մի շարք բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, նրանց փոխարեն նշանակվեցին առավել հավատարիմ զինվորականներ: Բացի այդ, պաշտոնանկություններ արվեցին պետական համակարգի տարբեր օղակներում ևս: Զինվորականության նկատմամբ անվստահությունն էլ ավելի խորացավ, երբ վարչապետ Մենդերեսին զեկուցվեց իր դեմ ծրագրվող հեղաշրջման մասին: Ընդհանրապես, ԺԿ կառավարման հենց սկզբից էլ ակնհայտ դարձան նոր իշխանության և

քեմալականներ-զինվորականություն դաշինքի խորքային հակասությունները, որոնք հետզհետե ավելի խորացան:

ԺԿ իշխանության գալը համընկավ Թուրքիայում տնտեսական վիճակի բարելավման հետ: Ընդհանրապես, 1950-1954 թվականները համարվում են թուրքական տնտեսության զարգացման տարիներ: Մենդերեսի կառավարությունը սկզբնական շրջանում կարողացավ որոշակի տնտեսական հաջողությունների հասնել, լուծել սոցիալական խնդիրների մի մասը, ինչը դրական դեր ունեցավ նաև ժողովրդի շրջանում ԺԿ հեղինակության աճի հարցում:

Այդ ժամանակ ԺԿ-ն վարում էր նաև տնտեսության ազատականացման քաղաքականություն, ինչի արդյունքում թուլացավ պետական վերահսկողությունը որոշ ոլորտների վրա: Վարչապետ Մենդերեսի համար տնտեսության իդեալն ամերիկյան տարածևն էր, նրա հաճախ կիրառվող կարգախոսներից էր՝ «Վերածենք Թուրքիան փոքրիկ Ամերիկայի»: Բացի այդ, Թուրքիան ստանում էր միլիոնավոր դոլարների օգնություն, ինչն էական դեր խաղաց տնտեսության և ընդհանրապես երկրի տարբեր ոլորտների զարգացման գործում: Մասնավորապես՝ «Մարշալի պլանի» գործադրմամբ զգալի փոփոխություններ սկսեցին նկատվել գյուղատնտեսության ոլորտում, որոնք հանգեցրին ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքների: Ընդ որում՝ այդ հետևանքները չսահմանափակվեցին միայն գյուղատնտեսության ոլորտով: Այսպես, հիշյալ ժամանակաշրջանում արևմտյան օգնությամբ ներկրվեցին մեծ քանակությամբ գյուղատնտեսական մեքենաներ և տրակտորներ: Եթե 1948թ. Թուրքիայում կար ընդամենը 2000 տրակտոր, ապա 1956-ին՝ 44.000: Գյուղատնտեսության մեջ մեքենաների կիրառումը մի կողմից՝ զարգացրեց ոլորտը, սակայն մյուս կողմից՝ հանգեցրեց գյուղացիների շրջանում գործազրկության աճին, քանի որ այն, ինչ նախկինում անում էին մի քանի տասնյակ գյուղացիներ, արդեն կարող էր անել մեկ մեքենան:

Գյուղացիական ուժի պահանջարկի նվազման և գործազրկության ուղղակի հետևանքն էր նաև ուրբանիզացիոն լայն ալիքը, երբ սկսվեց մեծ թվով գյուղացիների միգրացիա գյուղից դեպի քաղաք: Այդ պատճառով գյուղերը սկսեցին դատարկվել, իսկ քաղաքներում հիմնվեցին նոր արվարձաններ, որոնք բնակեցված էին քաղաքում աշխատանք փնտրող

գյուղացիներով: Ուրբանիզացիոն այդ ալիքը պատճառ դարձավ քաղաքների մեծացման, քաղաքաբնակների թվի աճին. 1950-1955թթ. Թուրքիայում քաղաքային բնակչության թիվն ի հաշիվ գործազուրկ դարձած գյուղացիների ավելացավ մոտ 30 տոկոսով: Հատկապես ավելանում էր այն քաղաքների բնակչությունը, ուր տեղափոխվում էին գյուղացիներն աշխատանք գտնելու հույսով. դրանք էին՝ Ստամբուլը, Անկարան, Իզմիրը, Ադանան, Բուրսան:

Ինչպես նշվեց, քաղաքների ծայրամասերում ստեղծվեցին արվարձաններ, որտեղ ապրում էին գյուղերից տեղափոխվածները: Դրանք անվանվում էին «գեջեքոնդու», որը թուրքերեն նշանակում է մեկ գիշերվա ընթացքում կառուցված: Գեջեքոնդուների ավանդույթի արմատները հասնում են մինչև Հռոմեական կայսրություն. եթե մեկ գիշերվա ընթացքում դատարկ տարածքի վրա կառուցվում էր տուն և կապվում էր տանիքը, ուրեմն այն ենթակա չէր քանդման: Այդ չգրված օրենքը գործում էր նաև Թուրքիայում, և ուրբանիզացիային զուգահեռ՝ ավելանում էին գեջեքոնդուական արվարձանները, որոնց դեմ իշխանություններն ակտիվորեն պայքարում էին, սակայն գյուղացիներին հաջողվում էր մեկ գիշերվա ընթացքում ինչ-որ կերպ մի հյուղակ կառուցել և տանիքը փակել, ինչն իշխանություններին կանգնեցնում էր փաստի առաջ, և նրանք այլևս ոչինչ չէին կարողանում ձեռնարկել: Ավելին, բախվելով արդեն կայացած իրողության հետ՝ իշխանությունները շուտով ստիպված էին լինում այդ գեջեքոնդուական թաղամասերում անցկացնել ջուր, կոյուղի, էլեկտրականություն, այլապես ստեղծվում էր ծայրահեղ հակասանիտարական վիճակ: Այդ թաղամասերում ձևավորվեց մի նոր սոցիալական խավ, այսպես կոչված՝ «գեջեքոնդուական ժողովուրդ»:

Արևմտյան օգնությունը հատկապես ցայտուն դրսևորվեց նաև ճանապարհաշինության ասպարեզում, և հենց ԺԿ իշխանության տարիներին Թուրքիայում լայն թափ ստացավ ասֆալտապատ ժամանակակից ճանապարհների շինարարությունը: Նկատենք, որ հիշյալ ժամանակաշրջանում հատկապես արևելյան նահանգներում խճուղիներ կամ ընդհանրապես չեն եղել, կամ դրանք գտնվել են շատ վատ վիճակում: Որոշակի բացառություն էր կազմում Կարսի նահանգը, որտեղ մինչև XX դարի կեսերը կիրառվում էին ցարական Ռուսաստանի տիրապետության

ժամանակ կառուցված խճուղիները: Կարսի նահանգում ավելի շատ խճուղիներ են եղել, քան մյուս բոլոր արևելյան նահանգներում միասին: Մնացած վայրերում XX դարի կեսերին անգամ ճանապարհ ասելով հաճախ հասկացվում էին սայլուղիները: Իսկ 1950-ականներին արևմտյան ֆինանսական աջակցությամբ կառուցվել է մոտ 15 հազար կիլոմետր ավտոմայրուղի, ինչն ուներ որոշակիորեն ռազմական նպատակ, քանի որ դրանց մի մասը կիրառվում էր նաև ՆԱՏՕ կարիքների համար: Այդ ժամանակ որոշակի քայլեր արվեցին նաև տուրիզմի ոլորտում, և իշխանությունները սկսեցին ուշադրություն դարձնել հատկապես Մարմարա, Էգեյան ծովերի ափամերձ շրջանների բարեկարգման և զարգացման վրա:

Գալով իշխանության՝ Ժողովրդավարական կուսակցությունը որոշակի փոփոխություններ արեց նաև քաղաքական և գաղափարախոսական ոլորտներում: Այդ փոփոխությունների մի մասը բացահայտ կամ քողարկված հակասում էր քեմալականությանը, Աթաթյուրքի բարեփոխումներին և հատկապես լայիցիզմին: Կարելի է ասել, որ այդ ժամանակ իսլամն ավելի քաղաքականացվեց, և ԺԿ-ն նպաստեց «քաղաքական իսլամի» զարգացմանը: ԺԿ-ն իշխանության գալուց հետո բառիս բուն իմաստով առաջին քայլերից մեկն արեց կրոնի ասպարեզում, և կառավարության ձևավորումից 15 օր անց խորհրդարան ներկայացվեց ու ընդունվեց օրենք էզանը՝ իսլամական աղոթականչն արաբերեն կարդալու մասին, որն ընկալվեց որպես բացահայտ սիրաշահման քայլ կրոնամետ զանգվածին և կառավարության դիրքորոշման հստակ ցուցադրում: 1950թ. հունիսի 17-ին արդեն պաշտոնապես թույլ տրվեց էզանը հնչեցնել արաբերեն[11]:

Էզանը կրկին արաբերեն կարդալը որոշակի և խորհրդանշական քայլ էր, որով ԺԿ իշխանություններն իրենց հավատարմությունն էին հայտնում առավել կրոնամետ մոտեցմանը: Դրան հետևեցին կրոնի ասպարեզում

11 Էզանը սկսել էր կարդացվել թուրքերեն հենց քեմալական բարեփոխումների համատեքստում: Դեռևս թյուրքականության գաղափարախոս Զիյա Գյոքալփն անդրադարձել է էզանի թուրքերեն կարդալու խնդրին, իսկ Քեմալ Աթաթյուրքը, որը Գյոքալփին համարում էր իր գաղափարական հայրը, փաստորեն իրականացրել էր նրա առաջ քաշած տեսական դրույթը: Առաջին անգամ թուրքերեն էզան կարդացվել է 1932թ. փետրվարի 3-ին, իսկ ոչ պաշտոնական տվյալներով առաջին էզանը կարդացվել էր արդեն 1931-ի դեկտեմբերի 20-ին:

մի շարք այլ քայլեր ևս. վերականգնվեց կրոնական ազատությունների մի մասը, թույլատրվեց կրոնական համայնքների և աղանդների գործունեությունը, սկիզբ առան մզկիթաշինության ակտիվ աշխատանքներ, դպրոցներում իսլամի դասընթացի քննության հաջող հանձնումն էր միայն ապահովում հաջորդ դասարան փոխադրվելը: Թուրքիայի վարչապետ Ադնան Մենդերեսը հրապարակավ խոնարհվեց և համբուրեց «Նուրջու» կրոնական հոսանքի ղեկավար Սայիդ Նուրսիի ձեռքը, որը դարձավ նաև իշխանությունների վերաբերմունքի տեսանելի ապացույցը:

Այդ տարիներին նաև սկսեցին ընտրողաբար կիրառվել Աթաթյուրքի բարեփոխումները, դրանց նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն նկատվեց, և ԺԿ-ն հրապարակ նետեց հետևյալ ձևակերպումը. «Ժողովրդի կողմից յուրացված ու ընկալելի բարեփոխումներ և ժողովրդի կողմից չյուրացված ու անընկալելի բարեփոխումներ»: ԺԿ խորհրդարանական խմբակցությունում վարչապետը հայտարարել էր, որ եթե ցանկանան՝ անգամ խալիֆայություն էլ կարող են վերականգնել: Իրականում Թուրքիայի հասարակության մի մասում լայիցիստական մոտեցումները խոր ընկալում չէին գտել, ավելին՝ հատկապես գյուղական, գավառական շրջաններում կրոնամետները մեծամասնություն էին կազմում, և այս հանգամանքն էլ ավելի էր դրդում քաղաքական կուսակցություններին իրենց նախընտրական հռետորաբանության մեջ մեծ տեղ տալ կրոնին:

Բացի կրոնի հարցից, ԺԿ-ն ուշադրություն էր դարձնում նաև ավանդական օսմանյանը կամ հինը խորհրդանշող այլ տարրերի վերականգնմանը: Օրինակ՝ ԺԿ կառավարման շրջանում զգալի չափով վերականգնվեցին արաբերեն փոխառությունները կամ հնաբանությունները, որոնք քեմալական լեզվական բարեփոխումների ժամանակ դուրս էին մղվել գրական լեզվից: Հին կամ արաբերեն բառերի վերականգնումը և կիրառումը ևս համարվում էին ավանդականի, իսլամական խորհրդանիշների նկատմամբ հարգանքի դրսևորում: Անգամ սահմանադրության տեքստի մեջ կատարվեցին որոշ լեզվական փոփոխություններ, և 1945թ. հանված գրեթե բոլոր արաբերեն բառերը, որոնք փոխարինվել էին թուրքերեն բառերով կամ նորաբանություններով, կրկին վերականգնվեցին: Պաշտոնական գրագրությունում, տերմիններում ևս

վերականգնվեցին հները. օրինակ՝ հանրապետության նախագահ-cumhur başkanı բառի փոխարեն սկսեցին կիրառել հին reis-i-cumhur ձևը:

ԺԿ-ն նաև իրականացրեց ՀԺԿ-ի դեմ տրամադրված և իր շուրջը համախմբված որոշակի շրջանակներին տված խոստումները: Այդ քայլերի շարքում արժե հիշատակել այն, որ 1952թ. թույլ տրվեց Թուրքիայից 1924թ. արտաքսված Օսմանյան սուլթանական ընտանիքի իգական սեռի անդամների վերադարձը Թուրքիա: Դրանից որոշ ժամանակ անց թուրքական վերջին սուլթան Մեհմեթ Վահիդեդինի թոռնուհին վերադարձավ Թուրքիա, և սա ընկալվեց որպես սուլթանության և խալիֆայության կողմնակիցներին արված ժեստ:

ԺԿ-ն նաև թշնամաբար էր վերաբերվում ՀԺԿ իշխանության տարիներին իրականացված որոշակի բարեփոխումներին կամ քայլերին: Այդ համատեքստում 1954թ. հունվարի 27-ին փակվեցին «գյուղական ինստիտուտները»՝ կոմունիստական քարոզչություն անելու մեղադրանքով: Ավելորդ չէ նկատել, որ իրոք այդ ինստիտուտների շատ շրջանավարտներ հետագայում հարեցին ձախ կողմնորոշում ունեցող քաղաքական և հասարակական կազմակերպություններին՝ երբեմն դառնալով դրանց առաջնորդներ:

Իշխանության գալուց հետո ԺԿ և ՀԺԿ հարաբերություններն էլ ավելի վատացան, իսկ միջկուսակցական լարումն օրեցօր աճում էր, այն հետզհետե վերածվեց թշնամանքի: ՀԺԿ-ի դեմ իրականացված քայլերից է 1953թ. ԹԱՄԺ ընդունած օրենքը, որով պետականացվում էր ՀԺԿ-ին պատկանող բազմաթիվ անշարժ գույք, անգամ այն, ինչը կուսակցությանն էր կտակել դրա հիմնադիրը՝ Քեմալ Աթաթյուրքը: ԺԿ առաջնորդներն ընդգծված թշնամանք էին տածում հատկապես Իսմեթ Ինյոնյուի հանդեպ: 1950-ական թթ. սկզբից նրա նկատմամբ որոշակի քայլեր գործադրվեցին: Այսպես, ԺԿ կողմնակիցները կազմակերպում էին բողոքի ակցիաներ Ինյոնյուի դեմ, հրապարակային վայրերում հարձակվում էին նրա վրա, ընդ որում՝ որոշ ժամանակ անց դա սովորական երևույթ դարձավ և լուրջ վտանգի տակ դրեց նախկին նախագահի ֆիզիկական անվտանգությունը:

Կառավարման առաջին չորս տարում արձանագրած տնտեսական հաջողությունները, երկրի սոցիալական վիճակի բարելավումը, ինչպես նաև պոպուլիստական քայլերն ու հայտարարությունները ԺԿ-ին ապահովեցին

լուրջ քաղաքական հենք 1954թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ: 1954թ. մայիսի 2-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում ԺԿ-ն շոնդալից հաղթանակ տարավ՝ ստանալով 502 մանդատ, իսկ ՀԺԿ-ն՝ 31: Կրկին հանրապետության նախագահ ընտրվեց Ջելալ Բայարը, վարչապետ նշանակվեց Ադնան Մենդերեսը:

Նման քաղաքական հաջողություններից հետո ԺԿ-ում արդեն ավելի բացահայտ էին երևում հակաժողովրդավարական, բռնապետական հակումները, որոնք ցայտուն դրսևորվեցին ներքաղաքական կյանքում: ԺԿ-ն փոփոխություններ մտցրեց ընտրական օրենսգրքում, որով զգալի խոչընդոտներ ստեղծեց ընդդիմության համար. ըստ այդ փոփոխությունների՝ կուսակցությունը փոխած քաղաքական գործիչներին վեց ամիս ժամկետով արգելվում էր թեկնածու առաջադրվել, ինչպես նաև չէր թույլատրվում մամուլում և ռադիոյով հանդես գալ քաղաքական քարոզչությամբ: 1954թ. մարտին ընդունվեց մամուլի մասին օրենք, որով արգելվում էր պաշտոնատար անձանց, կառավարության քննադատությունը: Օրենքը խախտողների համար նախատեսվում էին խիստ պատիժներ՝ ընդհուպ մինչև ազատազրկում: Ընդդիմադիր մամուլի, լրագրողների նկատմամբ հալածանք սկսվեց, քրեական գործեր հարուցվեցին. 1950-1958թթ. ընթացքում ձերբակալվել և տարբեր պատիժների է ենթարկվել 2324 լրագրող: ԺԿ-ն սկսեց կոշտ սահմանափակումներ կիրառել նաև հանրահավաքների մասին օրենքում, և հատկապես ՀԺԿ հավաքներն արգելվում էին կամ ցրվում: Ի հավելումն այս ամենի՝ ԺԿ-ում խորանում էր նաև անձի պաշտամունքը, որը դրսևորվում էր հատկապես վարչապետ Մենդերեսի պարագայում:

ԺԿ ներսում տիրող մթնոլորտը որոշակի դժգոհություն առաջացրեց հենց կուսակցության շարքերում: Դժգոհություն էր առաջանում նաև հասարակության տարբեր խավերում, քանի որ տնտեսական վիճակը ևս վատանում էր. դրամն արժեզրկվում էր, որոշ ապրանքներ թանկանում էին և այլն: ԺԿ կրոնական քաղաքականությունը ևս, լայիցիզմին հակասող և Աթաթյուրքի սկզբունքներին ու բարեփոխումներին դեմ քայլերը հանգեցրել էին զինվորականության դժգոհությանը: Այս ամենի հանրագումարը հիմք ստեղծեց քաղաքական վիճակի հետագա վատացման և սրման համար:

2. Արտաքին քաղաքականությունը

Գալով իշխանության՝ նախագահ Ջելալ Բայարը հայտարարեց, որ երկրի արտաքին քաղաքականությունում փոփոխություններ չեն լինելու, այսինքն՝ շարունակվելու են ՀԺԿ իշխանության տարիների արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Իրականում մի շարք կարևոր հարցերում, որոնցից էին, օրինակ, Արևմուտքի հետ ռազմաքաղաքական մերձեցումը, հակախորհրդային դիրքորոշումը, փոփոխություններ չեղան, սակայն Ժողովրդավարական կուսակցության արտաքին քաղաքականության մեջ որոշակի փոփոխություններ, այնուամենայնիվ, տեղի ունեցան: Սկզբից ևեթ Մենդերեսի կառավարությունը հռչակեց «պրոակտիվ» արտաքին քաղաքականություն վարելու պատրաստակամության մասին, ինչն ինքնաբերաբար տարբերվում էր Աթաթյուրքի հռչակած «անկողմնակալ» քաղաքականությունից: Արտաքին գործերի նոր նախարար Ֆուաթ Քյոփրուլյուն հայտարարեց Թուրքիայի «պասիվ դերի» դադարեցման և «լոկոմոտիվ քաղաքականություն» իրականացնելու հաստատակամության մասին:

Թուրքիայի արտաքին քաղաքականության ամենակարևոր ուղղությունն Արևմուտքի և հատկապես ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների սերտացումն էր: Թուրքիան որդեգրեց բացահայտ արևմտամետ քաղաքականություն՝ ձգտելով դառնալ Արևմուտքի շահերի ներկայացուցիչը Մերձավոր Արևելքում:

ՆԱՏՕ-ին անդամակցելու առաջին քայլերը Թուրքիան արել է դեռ ՀԺԿ իշխանության տարիներին, որոնք, սակայն, չհասան հաջողության: Պաշտոնապես Թուրքիան ՆԱՏՕ-ին անդամակցելու համար դիմել է 1950թ. օգոստոսի 1-ին, սակայն նրա անդամակցության գործընթացը տևել է շուրջ մեկ ու կես տարի: ՆԱՏՕ-ին անդամակցելու Թուրքիայի ձգտումները հանդիպում էին այդ կազմակերպության տարբեր անդամ երկրների բացասական վերաբերմունքին, ընդ որում՝ տարատեսակ պատճառներով, որոնք պայմանավորված էին այդ երկրներից յուրաքանչյուրի սեփական քաղաքական շահերով: Իսկ Թուրքիայի համար ՆԱՏՕ-ին անդամակցումը նշանակում էր ԱՄՆ-ի հետ ռազմական ասպա-

ռեզում բարձրագույն դաշնակցային հարաբերություններ, որը նրան կապահովագրեր խորհրդային սպառնալիքից: Այդ նպատակի համար Թուրքիան պատրաստ էր տարբեր զոհողությունների և կատարում էր քայլեր, որոնք նաև միտված էին ապացուցելու իր հավատարմությունն արևմտյան բլոկին: Նման քայլերից է, օրինակ, այն, որ Թուրքիան 1950թ. Կորեական պատերազմի ժամանակ 4500 հոգանոց զինվորական բրիգադ ուղարկեց պատերազմելու ԱՄՆ-ի կողմից ընդդեմ Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության: Հետագայում թուրքական այդ բրիգադն անընդհատ համալրվում էր. ընդհանուր առմամբ պատերազմին մասնակցեց 25.000 թուրք զինվոր, որոնց 10 տոկոսը՝ մոտ 2500-ը, սպանվեց: Ճիշտ է, սա Թուրքիայի որոշակի, հատկապես ձախակողմյան շրջանակներում դժգոհություն առաջացրեց, սակայն Կորեական պատերազմում Թուրքիայի մասնակցությունը զգալի դեր խաղաց ՆԱՏՕ-ին նրա անդամակցության հարցում: Դեռևս 1951թ. մայիսին ԱՄՆ-ը երաշխավորել էր Թուրքիային ՆԱՏՕ-ի անդամակցության համար, իսկ նույն թվականի սեպտեմբերին Հյուսիսատլանտյան դաշինքի խորհուրդը որոշում է ընդունել Թուրքիայի անդամակցության վերաբերյալ: 1952թ. փետրվարի 18-ին ԹԱՄԺ-ը վավերացրեց Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցության մասին պայմանագիրը, և դե-յուրե Թուրքիան դարձավ Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ: Սրանով նաև ավելի հստակեցվեց, թե «Սառը պատերազմում» Թուրքիան որ բևեռում է գտնվում: Ավելի խորացնելով հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ՝ Թուրքիան իր բանակն ամբողջովին դրեց Հյուսիսատլանտյան խմբավորման հրամանատարության ենթակայության տակ, այսինքն՝ ամբողջ թուրքական բանակն ինքնաբերաբար դարձավ ՆԱՏՕ-ի բանակ, ինչը հետագայում որոշ խնդիրներ առաջացրեց հենց Թուրքիայի համար: Սա ստիպեց թուրքական իշխանություններին հետագայում կազմավորել էգեյան Չորրորդ բանակային կորպուսը, որը ՆԱՏՕ-ի հրամանատարության ներքո չէր, այլ զուտ թուրքական զորամիավորում էր:

Ինչպես նշվել է, ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամակցելու գլխավոր շարժառիթներից էր խորհրդային սպառնալիքը, թուրք-արևմտյան համագործակցությունն ընթանում էր «կարմիր վտանգի» դեմ ընդհանուր և փոխշահավետ պայքարի դրոշի ներքո: Մի կողմից՝ Արևմուտքը

ցանկանում էր ԽՍՀՄ-ի դեմ շղթա ստեղծել նաև արևելյան երկրների մասնակցությամբ, մյուս կողմից՝ այդ ամենի համատեքստում Թուրքիան բարձրացնում էր իր քաղաքական նշանակությունը:

«Սառը պատերազմի» տարիներին արևմտյան խմբավորումում տեղ զբաղեցնելը կանխորոշում էր Թուրքիայի վերաբերմունքը ԽՍՀՄ-ի նկատմամբ. ԺԿ իշխանության տարիներին շարունակվեց և խորացավ հակախորհրդային քաղաքականությունը: Մենդերեսի իշխանության պաշտոնական գաղափարախոսություններից մեկը, ըստ էության, դարձավ հակակոմունիզմը: Սրան զուգահեռ՝ Թուրքիայում սաստկացան ձախակողմյան շարժման նկատմամբ (որը համարվում էր խորհրդային կողմնորոշում ունեցող) հալածանքները, փակվեցին մամուլի միջոցները, մի շարք գործիչներ ձերբակալվեցին՝ մեղադրվելով կոմունիստական գաղափարախոսություն քարոզելու համար:

Ինչպես արդեն նշվել է, 1953թ. մայիսի 30-ին ԽՍՀՄ-ը նոտա ուղարկեց Անկարային, որում ասվում էր, որ պաշտոնական Մոսկվան հրաժարվում է Թուրքիայի նկատմամբ տարածքային ցանկացած պահանջներից, ինչպես նաև նեղուցների ռեժիմի հարցն առաջարկում քննարկել երկուստեք ընդունելի պայմաններով: Սակայն Թուրքիան սառն ընդունեց խաղաղությանը միտված ԽՍՀՄ այդ քայլը: Թուրքիան ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններն այլևս չէր համարում միայն երկու երկրների խնդիր, այլ դա դիտարկում էր ավելի լայն՝ ԽՍՀՄ և Արևմուտքի հարաբերությունների ծիրում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից որոշ ժամանակ անց կրկին բարելավվեցին թուրք–գերմանական հարաբերությունները, և 1949թ. սկսվեց տնտեսական հարաբերությունների զարգացում Թուրքիայի և Արևմտյան Գերմանիայի միջև: 1950թ. արդեն Արևմտյան Գերմանիան զբաղեցնում էր առաջին տեղը թուրքական արտաքին առևտրի մեջ: 1953թ. Թուրքիայի և Արևմտյան Գերմանիայի միջև կնքվեց պայմանագիր վիզային ռեժիմը վերացնելու վերաբերյալ: Որոշ ժամանակ անց թուրք-գերմանական հին կապերը ևս, ընդ որում՝ բավական սկանդալային դեմքերի մակարդակով, վերականգնվեցին[12]:

[12] Ավելի ուշ՝ 1963թ., Թուրքիայի Հանրապետության հիմնադրման 40-ամյակի հետ կապված տոնակատարություններին որպես պաշտոնական հյուր հրավիրվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում Գերմանիայի դեսպան ֆոն Պապենը, որին թուրքական մամուլն անվանում էր «թուրքերի բարեկամ»:

Թուրքիայի արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներից է Կիպրոսի հարցը, որը միջազգային քաղաքական օրակարգ մտավ 1950-ական թթ. կեսերին: Այդ ժամանակ կղզու 600.000 բնակչության 82 տոկոսը կազմում էին հույները, իսկ 18 տոկոսը՝ թուրքերը: Կիպրոսցի հույների շրջանում սկսված՝ Հունաստանի հետ վերամիավորվելու շարժումը (էնոզիս) հանդիպեց Թուրքիայի և կիպրոսցի թուրքերի դիմադրությանը. կիպրոսցի հույների և թուրքերի միջև լարվածությունը վերածվեց ազգամիջյան բախման: Թուրքական քաղաքական մեքենան, գործի դնելով իր ազգայնամոլական տարրերը, հրապարակ նետեց «Կիպրոսը թուրքական է» անհիմն և ազգամիջյան թշնամանք հրահրող կարգախոսը, որը բավական արագ տարածում գտավ: Այդ կարգախոսն այնքան էր տարածված, որ դրան կարելի էր հանդիպել ոչ միայն մամուլում, այլև տրանսպորտում, փողկապների, մազակալների վրա և այլուր: Իշխող ժողովրդավարական կուսակցության խմբակցությունը ԹԱՄԺ-ում հանդես եկավ հայտարարությամբ, թե Կիպրոսը հանդիսանում է Թուրքիայի մի մասը՝ աշխարհագրական և պատմական տեսանկյունից:

Մեծ թափով ծավալվող կոնֆլիկտը և ազգամիջյան բախումը կանխելու համար 1955թ. օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 7-ը Լոնդոնում տեղի ունեցավ Կիպրոսի խնդրին նվիրված անգլո-հունա-թուրքական կոնֆերանս՝ արտաքին գործերի նախարարների մակարդակով: Հենց այդ օրերին էլ հունական կողմի վրա ճնշումներ գործադրելու համար Թուրքիայում ուժեղացան հակահունական տրամադրությունները, որոնք արվում էին իշխանությունների հրահանգով և քաջալերմամբ: Լոնդոնյան կոնֆերանսն ավարտվեց, ըստ էության, անարդյունք, իսկ կոնֆլիկտը շարունակվեց:

Արդեն 1956թ. թուրքական քաղաքական օրակարգում առաջ եկավ մեկ այլ գաղափար. դեկտեմբերի 28-ին վարչապետ Մենդերեսը, ելույթ ունենալով խորհրդարանում, ասաց. «Կղզու բաժանումը կապահովի, որպեսզի մեր ցեղակիցներն ապրեն թուրքական դրոշի ներքո»: Ի հայտ եկավ նաև սրան համապատասխան կարգախոս՝ «Բաժանում կամ մահ», թուրքերեն հարմար բառախաղով՝ ya bölüm, ya ölüm: Կղզու բաժանման պահանջով 1957թ. սեպտեմբերի 22-ին Վաշինգտոնում հանդես եկավ Թուրքիայի ֆինանսների նախարար Փոլաթքանը՝ նշելով, որ դա 26 միլիոն թուրքերի պահանջն է: Իսկ դրանից երկու շաբաթ անց վարչապետ Մենդերեսն ավելի մանրամասնեց իրենց պահանջները. «Մենք չենք համաձայնվի հարցի լուծման ոչ մի այլ տարբերակի, բացի նրանից, որը

կապահովի մեր կիպրոսցի եղբայրներին ապրել թուրքական դրոշի ներքո, և որպեսզի կղզու մի մասը, որը մոտ է թուրքական ափին, հանձնվի Թուրքիային»: Ի վերջո, 1958-1959թթ. Ցյուրիխում և Լոնդոնում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ձեռք բերվեց համաձայնություն, որով Կիպրոսը հռչակվում էր անկախ պետություն, իսկ Մեծ Բրիտանիան, Հունաստանը և Թուրքիան դառնում էին նրա անկախության երաշխավորները:

Հիշյալ ժամանակաշրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության մյուս կարևոր ուղղությունը Մերձավոր Արևելքն էր: Վարչապետ Մենդերեսը և արտաքին գործերի նախարար Ֆուաթ Քյուփրուլյուն հայտարարեցին արաբական երկրների հետ հարաբերությունների կարգավորման և նոր մակարդակի բարձրացման պատրաստակամության մասին, սակայն այդ քաղաքականության մեջ Թուրքիան ինքն իրեն վերապահել էր «մեծ եղբոր» դերը:

Թուրքիան նաև Արևմուտքի աջակցությամբ ակտիվորեն ներգրավված էր և ջատագովն էր Մերձավոր Արևելքում ռազմական խմբավորում ստեղծելու հարցում: Այսպես, 1954թ. ապրիլի 2-ին Թուրքիան դաշինք կնքեց Պակիստանի հետ, իսկ 1955թ. փետրվարի 24-ին Բաղդադում՝ Իրաքի հետ, որն էլ դարձավ Բաղդադի պակտի՝ ռազմաքաղաքական նոր խմբավորման հիմքը: Այդ նոր դաշինքին մասնակցում էին Թուրքիան, Իրաքը, Իրանը, Պակիստանը և Մեծ Բրիտանիան, իսկ ԱՄՆ-ն ուներ դիտորդի կարգավիճակ: Այս դաշինքը ևս արևմտամետ էր. այն անգամ կոչում էին «ՆԱՏՕ արևելյան մասնաճյուղ»: Բաղդադի պակտով Արևմուտքը նպատակ ուներ ստեղծել «երեք հազար մղոն ձգվող գաղափարախոսական և ռազմական սանիտարական պատնեշ խորհրդային հետագա ներթափանցման դեմ»:

1958թ. հուլիսի 14-ին Իրաքում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից[13] հետո այդ երկիրը դուրս եկավ Բաղդադի պակտից, իսկ կազմակերպության

[13] Ժողովրդավարական կուսակցության իշխանությանը լրջորեն անհանգստացնում էր Իրաքում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումը, որի հիմնական պատճառը ոչ այնքան իրենց կողմնակից թագավորի և վարչապետի տապալումն էր, որքան նման սցենարի կրկնության հավանականությունը Թուրքիայում: Բաղդադի պակտի անդամ իսլամական երկրների ղեկավարներն Անկարայում հանդես եկան այդ հեղաշրջման քննադատությամբ:

կենտրոնականը տեղափոխվեց Անկարա: Այն վերանվանվեց ՍԵՆՏՕ (Կենտրոնական պայմանագրի կազմակերպություն), որտեղ ԱՄՆ-ը փոխեց իր կարգավիճակը՝ դիտորդից դառնալով լիիրավ անդամ: ՍԵՆՏՕ-ն գոյատևեց մինչև 1979թ., երբ դրանից դուրս եկան Իրանը և Պակիստանը, իսկ Թուրքիան հայտարարեց կազմակերպության գործունեության դադարեցման մասին:

ԺԿ իշխանության տարիներին Թուրքիան մի քանի անգամ պաշտպանեց Արևմուտքին արաբական երկրների դեմ իրականացրած ռազմական գործողությունների ժամանակ, ինչը լրջորեն հարվածեց իսլամական աշխարհում նրա դիրքին և հեղինակությանը: Օրինակ՝ 1951թ. անգլո-եգիպտական հակամարտության ժամանակ Թուրքիայի դիրքորոշումն ի նպաստ Անգլիայի էր, իսկ Ֆրանսիայի դեմ Ալժիրի և Թունիսի մղած պատերազմում Թուրքիան պաշտպանում էր Ֆրանսիային: Սակայն մինչ այդ էլ արաբական աշխարհում Թուրքիայի հեղինակությունն արդեն էապես սասանվել էր՝ կապված Իսրայելի ճանաչման փաստի հետ: 1954թ. խիստ լարվել էին եգիպտա-թուրքական հարաբերությունները, փաստացի սառեցվել էին դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև: Թուրքիան փաստացի պաշտպանեց նաև 1956թ. Եգիպտոսի դեմ անգլո-ֆրանս-իսրայելական համատեղ հարձակումը: Նույնը տեղի ունեցավ նաև 1957 և 1958թթ. Սիրիայի և Լիբանանի դեմ ԱՄՆ գործողությունների ժամանակ:

Այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ Թուրքիան որոշ իմիտացիոն և ցուցադրական ժեստեր էր անում արաբական երկրներին, որպեսզի վերականգնի իր սասանված հեղինակությունը, սակայն այդ քայլերը մեծ մասամբ անարդյունք էին: Այսպես, Թուրքիայի և Իսրայելի միջև նախապատրաստվել էր մշակութային համագործակցության պայմանագրի նախագիծ, որը վարչապետ Մենդերեսի կողմից 1953թ. չեղյալ հայտարարվեց: 1956թ. նոյեմբերին Թուրքիան Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերություններն իջեցրեց ժամանակավոր հավատարմատարի մակարդակի՝ որպես քաղաքական ժեստ Սուեզի ճգնաժամի հետ կապված, երբ Իսրայելն Անգլիայի և Ֆրանսիայի հետ բռնազավթել էր Եգիպտոսի տարածքները: Իսրայելն էլ, իր հերթին, հետ կանչեց Անկարայում իր դեսպանին: Սակայն Թուրքիայի վերոնշյալ քայլերն

արաբական երկրներում չվերականգնեցին նրա հեղինակությունը, և Թուրքիան շարունակեց ընկալվել որպես Արևմուտքի ժանդարմ:

ԺԿ «արևելյան քաղաքականությունը» քննադատության էր ենթարկվում նաև երկրի ներսում: ՀԺԿ առաջնորդ Իսմեթ Ինյոնյուն 1958թ. օգոստոսի 2-ին ԹԱՄԺ-ում Մենդերեսի կառավարության արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում որակեց որպես արկածախնդրական:

3. Ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականությունը

Ուսումնասիրելով 1950-ականներին Թուրքիայում ազգային-կրոնական փոքրամասնությունների վիճակը և նրանց նկատմամբ կիրառվող պետական քաղաքականությունը՝ ակնհայտ է դառնում, որ երիտթուրքական մտածողությունը շարունակում էր գերիշխող մնալ, իսկ նախկին երիտթուրք գործիչ, նախագահ Ջելալ Բայարն ապահովում էր «ժողովրդավարական» և երիտթուրքական շրջանի օրգանական կապը: Ասվածի ամենացայտուն ապացույցն է այն, որ հենց ԺԿ իշխանության տարիներին տեղի ունեցան հույների և հայերի ջարդեր, որոնք կազմակերպվել էին պետության կողմից: Այդ տարիներին արձանագրվել են ազգային-կրոնական փոքրամասնությունների հանդեպ հալածանքի այլ դրսևորումներ ևս, սակայն, միաժամանակ, 1950-1960-ական թվականները Թուրքիայի քաղաքական կյանքին փոքրամասնությունների մասնակցության ամենաակտիվ տարիներն էին:

1955թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերը: Ինչպես արդեն նշվել է, 1950-ական թթ. միջազգային քաղաքական օրակարգում գտնվող խնդիրների շարքում կարևոր տեղ էր զբաղեցնում Կիպրոսի հարցը: 1955թ. Լոնդոնում Կիպրոսի հարցին նվիրված միջազգային կոնֆերանսի օրերին թուրքական իշխանությունների ջանքերով Թուրքիայում էլ ավելի սրվեցին հակահունական տրամադրությունները և հալածանքները հունական համայնքի դեմ: Այդ քայլերով թուրքական իշխանությունները ցանկանում էին ճնշող ազդեցություն ունենալ Լոնդոնում տեղի ունեցող կոնֆերանսի

վրա և ստիպել հունական կողմին որոշակի զիջումների գնալ: Սեպտեմբերի 6-7-ին հիմնականում Ստամբուլում և Իզմիրում տեղի ունեցան հունական և հայկական համայնքների վրա թուրքական իշխանությունների կազմակերպած հրոսակախմբերի հարձակումներ:

Սեպտեմբերի 6-ին, ժամը 13:00-ին Թուրքիայի պետական ռադիոյով հայտարարվել է, որ Սալոնիկում գտնվող Աթաթյուրքի հայրական տան վրա ռումբ է նետվել[14]: Այս լուրը կեսօրից հետո հրատարակում է «Իսթանբուլ Էքսպրես» թերթը, որը հատուկ դրա համար նույն օրը երկրորդ անգամ է տպագրվում: Նույն օրը կեսօրից հետո տարբեր երիտասարդական կազմակերպություններ, իշխանությունների աջակցությամբ ստեղծված «Կիպրոսը թուրքական է» միությունը Ստամբուլի Թաքսիմ հրապարակում կազմակերպում են բողոքի հանրահավաք՝ կապված այդ դեպքի հետ: Դրանից հետո միտինգավորները սկսում են քարեր նետել Թաքսիմին մոտ Իսթիքլյալ պողոտայում գտնվող, հույներին և հայերին պատկանող խանութների վրա, իսկ կարճ ժամանակ անց հայտնվում են նախօրոք մահակներով և այլ անհրաժեշտ գործիքներով զինված խմբեր, որոնք հարձակվում են, կոտրում ու թալանում ոչ մուսուլմաններին պատկանող խանութները, արհեստանոցները, տները, դպրոցները, եկեղեցիները և անգամ գերեզմանատները: Ջարդարարների շարքերում եղել են նաև կանայք ու աղջիկներ, որոնք ակտիվորեն մասնակցել են ոչ մուսուլմանների խանութների, տների, արհեստանոցների թալանին: Ջարդերը չեն սահմանափակվել միայն Իսթիքլյալ պողոտայով, այլ արագ տարածվել են Ստամբուլի մյուս թաղամասեր՝ Բաքըրքյոյ, Բեյօղլու, Բեյքոզ, Բեշիքթաշ, Էմինոնյու, Էյուփ, Ֆաթիհ, Քադըքյոյ, Սարըյեր, Շիշլի, Ուսքյուդար, անգամ Ստամբուլի մոտակայքում գտնվող Մարմարա ծովի Իշխանաց կղզիներ, որտեղ բնակվում էին հույներ. հիմնականում այնտեղ էին գտնվում նրանց ամառանոցները:

Բազմաթիվ են ապացույցները, որ այս ամենը նախօրոք մանրակրկիտ ծրագրված և կազմակերպված է եղել պետության կողմից: Մինչև Աթաթյուրքի տան ռմբահարման մասին ռադիոյով հայտարարելը և թերթում տպագրելը՝ Ստամբուլի տարբեր վայրերում հավաքվել էին մարդկանց հոծ խմբեր, որոնք լուրի տարածումից հրոպեներ անց սկսել են իրենց գործողությունները: Ձևավորվել էին 20-30 հոգանոց ջարդարարների խմբեր, որոնցում կար հստակ դերաբաժանում. կային խմբերի ղեկավարներ, հրահրողներ, փոքրամասնությունների տների և խանութների տեղերը ցույց տվողներ, ջարդարարներ, ուղղորդողներ, թալանողներ և այլն: Ավերածություններին մասնակցել է 2032 անձ, թալանին՝ 772, իսկ խմբերի ղեկավարների թիվը 347 էր: Թաղամասերի որոշակի տեղերում նախօրոք կանգնել էին բեռնատարներ և ավտոբուսներ, որոնցում գտնվում էին համապատասխան գործիքներ, մահակներ, որոնք ջարդարարների խմբերը ստանում էին զենքի պես և անցնում իրենց գործողությունների կատարմանը: Երբեմն այդ խմբերին միանում էին փողոցներում կամ սրճարաններում գտնվող այլ թուրքեր ևս՝ ինքնաբուխ կամ թալանելու ակնկալիքով ու մոլուցքով: Ջարդարարների խմբերի ղեկավարներն ունեին ցուցակներ, որտեղ մանրակրկիտ նշված էին կոնկրետ թաղամասում կամ փողոցում գտնվող փոքրամասնությունների տների, խանութների, եկեղեցիների հասցեները: Հենց միայն այս փաստը բավական է՝ հասկանալու, որ այդ ամենը նախօրոք կազմակերպված էր պետության կողմից: Բացի այդ, հույների, հայերի տների և խանութների վրա նախօրոք նշաններ էին արել, որպեսզի հեշտությամբ գտնեին. այսպես, այդ տների վրա կամ խաչ էր արված, կամ գրված էր GM (gayrimüslim)՝ ոչ մուսուլման, GMR (gayrimüslim Rum)՝ ոչ մուսուլման հույն: Կարևոր է նկատել, որ ջարդարարներին ինքնաբուխ ուղղորդում էին նաև մուսուլման բնակիչները՝ հայտնելով կամ ցույց տալով իրենց հայ և հույն հարևանների տները կամ խանութները: Մոլագար ամբոխները հարձակվում և պղծում էին անգամ գերեզմանները, հանում աճյունները, փշրում ոսկորները կամ այրում դրանք: Արձանագրվել են դեպքեր, երբ գերեզմանից հանել են նոր հուղարկավորված մարդու աճյուն և գազազած դանակահարել այն:

Ոստիկանության պահվածքը ևս խոսում էր դեպքերի կազմակերպված և իշխանությունների կողմից հրահանգավորված լինելու մասին: Ոստիկանները որևէ կերպ չեն միջամտել և կանխել ջարդարարությունները, ավելին՝ երբեմն ոգևորել և ուղղորդել են հանցագործներին, ծափահարել

14 1930 թվականից հետո թուրք-հունական հարաբերությունները փոքր-ինչ կարգավորվել էին, և 1937թ. հունական կողմը, որպես բարի կամքի դրսևորում, գնում է Սալոնիկում գտնվող այն տունը, որտեղ ծնվել էր Քեմալ Աթաթյուրքը, և այն փոխանցում Թուրքիայի նախագահի տնօրինմանը:

նրանց: Բնութագրական օրինակներից է այն, որ երբ ոչ մուսուլման քաղաքացին օգնության խնդրանքով դիմել է ոստիկանին, նա պատասխանել է. «Ես այսօր ոստիկան չեմ, թուրք եմ»: Հետագայում պարզվել է, որ դեպքերից դեռ մի քանի ժամ առաջ բոլոր ոստիկանական տեղամասերին վերևից հրահանգ է եկել՝ դուրս չգալ ոստիկանության շենքից և որևէ կերպ չմիջամտել դեպքերին:

Իզմիրում նույնպես գործի են դրվել նույն մեթոդները, և ջարդարարների խմբերը քաղաքի հունաբնակ թաղամասերում իրականացրել են հարձակում և թալան: Բացի այդ, ամբոխը հարձակվել է Իզմիրում գտնվող Հունաստանի հյուպատոսարանի շենքի վրա, ավերել այն և հետո հրդեհել, որի հետևանքով շենքն ամբողջովին այրվել է: Բողոքի ակցիաներ են տեղի ունեցել նաև Անկարայում, Բուրսայում, Էսքիշեհիրում, Ադանայում, սակայն այնտեղ թալանի և ջարդարարության զանգվածային դեպքեր չեն արձանագրվել:

Թուրքական դատարանների տվյալներով՝ սեպտեմբերի 6-7-ի դեպքերի ընթացքում հարձակման են ենթարկվել ոչ մուսուլմանների, հիմնականում հույների և հայերի 4214 տուն, 1004 աշխատավայր, 73 եկեղեցի, 1 սինագոգ, 2 վանք, 26 դպրոց, ինչպես նաև գործարան, հյուրանոց, բար, գերեզմանատուն, դեղատուն, լաբորատորիա, տպարան և այլն: Սպանվել է 15 մարդ, որոնցից հինգը՝ հույն հոգևորական: Պատահական չէ, որ հարձակման ենթարկված ու ծանր վիրավորվածների մեջ զգալի թիվ են կազմել քրիստոնյա հոգևորականները, որոնք, ինչպես Հայոց ցեղասպանության ժամանակ, այնպես էլ այս անգամ, առաջնային թիրախ էին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ ոչ մուսուլմանական համայնքներին պատճառվել է 150 միլիոն թուրքական լիրայի վնաս, որը համարժեք էր 54 միլիոն ԱՄՆ դոլարի: Հետագայում պետությունը տուժողներին փոխհատուցել է միայն 60 միլիոն թուրքական լիրա, այսինքն՝ պատճառված վնասի մոտ մեկ երրորդի չափ միայն:

Իշխանությունները սկսել են գործել միայն սեպտեմբերի 7-ին՝ հայտարարելով արտակարգ դրություն Ստամբուլում, Անկարայում և Իզմիրում: Զորք և տանկեր են մտցվել Ստամբուլ, սկսվել են ձերբակալություններ. վարչապետ Մենդերեսը սկզբում այդ դեպքերը ներկայացրել է որպես թուրք ժողովրդի ինքնաբուխ զայրույթի դրսևորում, սակայն մի քանի

օր անց պաշտոնական վարկածը փոխվել է, նշվել է, որ այդ ամենը կազմակերպել են թուրք կոմունիստները, և նույնիսկ մոտ 2000 հոգու ձերբակալել են կոմունիստական հայացքներ ունենալու մեղադրանքով: Կոմունիստներին մեղադրող հայտարարություններով հանդես են եկել նաև երիտասարդական կազմակերպությունները: Այդ հայտարարություններն անմիջապես լայն տեղ են զբաղեցրել մամուլում: Դեպքերից հետո, որպես հրապարակային քայլ, իշխանություններն աշխատանքից հեռացրել են ներքին գործերի նախարար Նամըք Գեդիքին:

Սեպտեմբերի 6-7-ի դեպքերի հետ կապված՝ սկզբնական շրջանում թուրքական դատարանները մեղադրանք են առաջադրել 4480 անձի, սակայն ընթացքում նրանց մի մասի մեղադրանքը հանվել է, իսկ արդեն 1955թ. վերջին 3933 հոգի ազատ է արձակվել: 1956թ. հունվարին 61 հոգի արդարացվել է, դատապարտվել է ընդամենը 228 անձ, այն էլ բավական մեղմ պատժամիջոցների:

Ուշագրավ է, որ սեպտեմբերի 6-7-ի դեպքերից հետո թուրքական քաղաքական դաշտում գործընթաց սկսվեց, որի ժամանակ ընդդիմադիր ՀԺԿ-ն ու ԺԿ-ն հանդես եկան միմյանց քննադատող, մերկացնող հայտարարություններով և ելույթներով, որոնց ընթացքում մի շարք սկանդալային բացահայտումներ եղան: Սակայն սեպտեմբերի 6-7-ի հետ կապված ամենասկանդալային բացահայտումը եղավ ավելի ուշ. տարատեսակ փաստերի և ապացույցների հիման վրա բացահայտվեց, որ Սալոնիկում Աթաթյուրքի տան վրա ռումբ նետելը իրականում կազմակերպել էին թուրքական հատուկ ծառայությունները՝ իրենց գործակալների միջոցով: Փաստորեն՝ և Սալոնիկի գործողությունը, և Ստամբուլում ու այլ քաղաքներում բողոքի հանրահավաքների անցկացումը, և զինված հրոսակախմբերի հարձակումները հույների և հայերի տների ու խանութների վրա մեկ միասնական ծրագրի մաս են կազմել, որի կազմակերպիչը թուրքական պետությունն էր՝ իր համապատասխան կառույցներով: Հավելենք նաև, որ 1955թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերի մասին մինչ օրս էլ արվում են հետաքրքիր և հաճախ սկանդալային բացահայտումներ, որոնք հավելյալ լույս են սփռում տեղի ունեցածի վրա և ավելի հստակ ներկայացնում թուրքական իշխանությունների հանցավոր վարքագիծը:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ 1955թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերն ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ թուրքական իշխանությունների բռնությունների և հալածանքների քաղաքականության գագաթնակետերից էին, ինչը կործանարար նշանակություն ունեցավ հատկապես հունական համայնքի համար և առաջացրեց արտագաղթի հզոր ալիք:

Տեղանունների թուրքացումը. Թուրքիայի Հանրապետությունում որդեգրված և կիրառվող համատարած թուրքացման քաղաքականությունն անխուսափելիորեն պետք է անդրադառնար նաև ոչ թուրքական տեղանուններին, քանի որ այդ տարածքներում բազմաթիվ էին բնիկ ժողովուրդների լեզուներով անվանակոչված վայրերը, որոնք ուղղակի ապացույցն էին նրանց, թեկուզ նախկին, ներկայության: Տեղանունները, միևնույն ժամանակ, ցույց են տալիս պատմական անցյալը, այդտեղ բնակված ժողովրդի պատմության, մտածելակերպի մի շարք մանրամասներ: Այդ է պատճառը, որ միատարր Թուրքիայի Հանրապետության կայացման գործընթացում տեղանունների թուրքացմանը վերապահվել էր կարևոր դեր:

Տեղանունների թուրքացումը նոր երևույթ չէր և սկսվել էր օտար, այն է՝ թուրքական տարրի տարածաշրջան ներթափանցմանը զուգահեռ, սակայն այդ քաղաքականությունն ավելի ընդգծված և համակարգված բնույթ է ստացել XIX դարի կեսերից: Այն ավելի է խորացել երիտթուրքերի օրոք, իսկ հանրապետական Թուրքիայում գտել իր վերջնական լուծումը:

Ոչ թուրքական տեղանունների փոփոխության կոնկրետ և ինստիտուցիոնալ կիրառումը սկսվում է 1957թ., երբ հատուկ դրա համար ստեղծվում է «Տեղանունների փոփոխության մասնագիտական հանձնաժողով»: Դրա մեջ ընդգրկվում են գլխավոր սպայակույտի, ներքին գործերի, պաշտպանության, կրթության նախարարությունների, Անկարայի համալսարանի լեզվական, պատմաաշխարհագրական ֆակուլտետների և «Թուրքական լեզվաբանական ընկերության» ներկայացուցիչներ: Հիշյալ հանձնաժողովն ուսումնասիրել է շուրջ 75 հազար տեղանուն և անվանափոխել դրանցից 28 հազարը: Ամենաշատ տեղանուններ փոխվել են Թուրքիայի արևելյան, հարավարևելյան և Սևծովյան շրջաններում, այսինքն՝ հիմնականում պատմական Հայաստանում, ինչպես նաև նախկին հունական տարածքներում: Սև ծովի հարավարևելյան շրջաններում բավական թիվ են կազմում նաև հայկական տեղանունները, քանի որ հիմնականում հենց այնտեղ են գտնվում համշենահայերի բնակավայրերը: Հանձնաժողովն ուշադրություն է դարձրել, որ պարտադիր փոփոխվեն այն տեղանունները, որոնց բաղադրիչներից մեկը կարմիր, զանգ, եկեղեցի բառերն են եղել, որոնք բացահայտ ցույց են տալիս դրանց ոչ թուրքական կամ ոչ մուսուլմանական ծագումը, իսկ կարմիր բառն ուներ նաև կոմունիստական երանգ:

Տեղանունների թուրքացման քաղաքականությունն անդրադարձել է նաև Ստամբուլի հայկական և հունական փողոցների, թաղամասերի անվանումներին: Ստամբուլում մինչև 1954թ. անվանափոխվել են 100-ից ավելի փողոց, թաղամաս և այդ անվանափոխությունների մեջ որոշակի միտումներն առավել քան ցայտուն են: Մասնավորապես՝ այն թաղամասերում, որտեղ ավելի հոծ ապրում են հայեր, հույներ, նոր տեղանունների մեջ գերիշխում են ազգայնամոլական կամ, այսպես կոչված, «սիմվոլիկ սպառնալիք» պարունակող անվանումներ: Այսպես, այդ թաղամասերում կարելի է հանդիպել Էրգենեքոն, Թալեաթ փաշա անունները կրող փողոցներ և անգամ դպրոցներ:

Այդ տարիներին թուրքական մամուլում բազմաթիվ հասարակական, քաղաքական գործիչներ, մասնագետներ, շարքային ընթերցողներ հանդես էին գալիս ոչ թուրքական տեղանունների, փողոցների, հյուրանոցների, կազմակերպությունների անվանումների դեմ և սպառնալից առաջարկում արագ փոխել դրանք, այսինքն՝ հասարակության որոշակի մաս ևս մասնակից էր ազգային-կրոնական փոքրամասնությունների դեմ կիրառվող հալածանքին:

Ազգային փոքրամասնությունների ներկայությունը քաղաքական կյանքում. Թուրքիայի Հանրապետությունում հայ համայնքն օբյեկտիվ պատճառներից ելնելով՝ քաղաքականության նկատմամբ պասիվ դիրքորոշում է որդեգրել: Սակայն ԺԿ իշխանության տարիներին այդ առումով զգալի ակտիվություն է նկատվել, և կուսակցության ցուցակով ԹԱՄԺ պատգամավոր են դարձել երեք հայազգի գործիչներ. 1950-1954թթ.՝ Անդրե Վահրամ Բայար Քոջաբոյաքյանը, 1954-1960թթ.՝ Զաքար Թարվերը, 1957-1960թթ.՝ Մկրտիչ Շելեֆյանը:

Զաքար Թարվերը (1894-1960թթ.) *ծնվել է Ակնում, իսկական անունն է Ռուբեն-Զաքար Զաքարյան, սակայն ավելի ուշ՝ 1934թ., Թուրքիայում ազգանվան մասին օրենքի ընդունումից հետո, վերցրել է Զաքար Թարվեր անուն-ազգանունը: Ընտանիքը Ակնում զբաղվել է տեքստիլի առևտրով, սակայն սաստկացող հակահայկական տրամադրությունները, սկիզբ առած համիդյան ջարդերը հարկադրում են նրանց 1895թ. փախչել Սրամբուլ: Զաքար Թարվերն ուսանել է Սրամբուլի բժշկական համալսարանի ռադիոլոգիայի ֆակուլտետում, որն ավարտել է 1917թ., իսկ այնուհետ՝ 1919-1922թթ., ուսումը կատարելագործել Ֆրանսիայում: Ավելորդ չէ նշել, որ Զաքար Թարվերն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին որպես բժիշկ ծառայել է օսմանյան բանակում, և երևի թե մասնագիտության բերումով կարողացել է փրկվել կոտորածից: Սկսած 1923 թվականից՝ նա աշխատել է Սրամբուլի հայտնի Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցում, 1927-1933թթ. եղել է ռադիոլոգիայի կլինիկայի ղեկավար, իսկ 1948-1955թթ.՝ գլխավոր բժիշկ: Տարբեր աղբյուրներում հանդիպում է այն տեղեկությունը, որ հենց Զաքար Թարվերն է Թուրքիա ներմուծել առաջին ռենտգեն սարքը: Լինելով միջազգային համարում ունեցող բժիշկ և ժամանակի կրթված մտավորականներից՝ նա տիրապետել է մի քանի լեզուների՝ հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն և լուրջ ներդրում ունի Թուրքիայում բժշկության զարգացման գործում:*

Զաքար Թարվերի նկատմամբ հանրապետական Թուրքիայում չեն դադարել հալածանքները, և նա հազարավոր այլ հայերի հետ միասին 1942թ. ենթարկվել է «20 դասակարգի զորակոչի»: Նա ստիպված է եղել 48 տարեկանում կրկին մեկնել զինծառայության և տաժանակրություն անել Սեբաստիայում տեղակայված աշխատանքային ճամբարներում: Այդ տարիներին իշխող և հակահայկական քաղաքականություն վարող քեմալական կուսակցության նկատմամբ ատելությունն էլ ստիպել է Զաքար Թարվերին քաղաքականություն մուտք գործելուց հետո նախընտրել ՀԺԿ-ին ընդդիմադիր Ժողովրդավարական կուսակցությունը:

Սկսելով քաղաքական գործունեությունը՝ Զաքար Թարվերը նախ ընտրվել է Սրամբուլի քաղաքային ավագանու անդամ, իսկ 1954թ. ԺԿ առաջարկով և նրանց ցուցակով՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր: Հաջորդ՝ 1957թ. ընտրություններին ևս Զաքար Թարվերն

ընտրվել է պատգամավոր: 1960թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո ձերբակալված 600 պետական պաշտոնյաների մեջ է լինում նաև Զաքար Թարվերը, որը, ըստ պաշտոնական վարկածի, ձերբակալությունից կարճ ժամանակ անց մահանում է Յասըադայի բանտում: Սակայն մի շարք այլ աղբյուրներում նշվում է, որ Զաքար Թարվերը ենթարկվել է կտտանքների և ծեծի ու իրականում մահացել ուղեղի արյան զեղումից: Սակայն Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավորի սպանությունը նույնիսկ չի էլ դարձել հետաքննության նյութ, և թուրքական իշխանությունները քողարկել են այն: Ժամանակի մամուլը գրեթե չի արձագանքել այդ դեպքին, միայն Սրամբուլի հայկական «Ժամանակ» օրաթերթում տպագրվել են հակիճ տեղեկատվություն և հանգուցյալ պատգամավորի համառոտ կենսագրությունը:

Մկրտիչ Շելեֆյան (1914-1987թթ.). *Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավորների շարքում առանձնահատուկ տեղ ունի Մկրտիչ Շելեֆյանը, որի նպաստը համայնքային և ազգային խնդիրներին անուրանալի է: Նա եղել է Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության, Սրամբուլի հայ համայնքի, ինչպես նաև գավառներում մնացած իսլամացված հայերի խնդիրների, հետագայում նաև Հայաստանի խորհրդային հանրապետության և Սփյուռքի հարաբերությունների կիզակետում:*

Մ. Շելեֆյանը ծնվել է Ադափազարում, ընտանիքը զբաղվել է երկաթի առևտրով: Հայոց ցեղասպանության ժամանակ Շելեֆյանների ընտանիքը տեղափոխվել և ապաստանել է Քյութահիայում: Ցեղասպանության առաջին ալիքից հետո հրաշքով փրկված ընտանիքը կրկին վերադարձել է Ադափազար, սակայն ավելի ուշ, քեմալականների առաջխաղացման ժամանակ տեղափոխվել և հաստատվել են Սրամբուլում՝ կորցնելով իրենց ունեցվածքի մեծագույն մասը:

Մկրտիչ Շելեֆյանը երիտասարդ տարիքից ներգրավվել է առևտրական գործունեության մեջ, իսկ զինվորական ծառայությունից հետո՝ 1941թ., սկսել է կառավարել հոր բիզնեսը՝ երկաթի առևտուրը: Գործարարության մեջ ունեցել է գլխապտույտ հաջողություններ, որոնք տարբեր տարիներին ասեկոսեների տեղիք են տվել, սակայն բոլորն էլ միակարծիք են եղել նրա առևտրային ընդունակությունների հարցում: Իր առևտրական և կազմակերպչական հմտությունների շնորհիվ Մկրտիչ Շելեֆյանը

հետզհետե սկսել է որոշիչ դեր խաղալ Սփամբուլի հայ համայնքում: 1951թ. դարձել է Պոլսո հայոց պատրիարք Գարեգին Խաչատուրյանի խորհրդականը, իսկ 1953թ. ընտրվել է Թուրքիայի հայերի ազգային կենտրոնական վարչության ատենապետ: Այս կառույցը, ըստ էության, Թուրքիայի հայերի կառավարման աշխարհիկ մարմինն էր, իսկ ատենապետը՝ համայնքի ղեկավարը: 1955թ. Մկրտիչ Շելեֆյանն ընտրվել է Սփամբուլի քաղաքային ավագանու անդամ և այդ պաշտոնը զբաղեցրել է մինչև 1957թ.: Գործունեության հենց սկզբից էլ դրսևորվել է նրա ազգային նկարագիրը: Դեռևս 1934թ. ազգանվան օրենքի ընդունումից հետո փորձել են փոխել և թուրքացնել նրա ազգանունը՝ դարձնելով Շելեֆօղլու, սակայն նա կտրուկ դեմ է եղել և կարողացել է պահպանել իր հայկական ազգանունը: Սփամբուլի քաղաքապետարանի ավագանի եղած տարիներին Շելեֆյանը կարողացել է լավ կապեր հաստատել թուրք ամենատարբեր պաշտոնյաների, անգամ վարչապետ Ադնան Մենդերեսի հետ և այդ ամենը ծառայեցնել համայնքի շահերին: Այսպես, մեծապես նրա ջանքերով է բացվել Սփամբուլի Սուրբ խաչ դպրեվանքը, որի կարևոր գործառույթներից էր Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված և ուծացած հազարավոր հայերի երեխաներին Սփամբուլ տեղափոխելով՝ հայեցի կրթություն տալն ու այդ միջոցով ազգային ակունքներին վերադարձնելը: Այդ տարիներին Մկրտիչ Շելեֆյանը կարողացել է թույլտվություն ստանալ Գալաթիայի քանդված հայկական եկեղեցու վերականգնման համար: Եկեղեցին վերակառուցվել է հայկական ճարտարապետական ոճով, ինչը եզակի երևույթ է Սփամբուլում:

Իր ակտիվ գործունեությունը, ինչպես նաև համայնքում ունեցած հեղինակությունը ստիպել են, որպեսզի Մկրտիչ Շելեֆյանով հետաքրքրվեն թուրքական իշխանությունները, և 1957թ. խորհրդարանական ընտրություններից առաջ իշխող Ժողովրդավարական կուսակցության կողմից նա առաջարկ է ստացել կուսակցական ցուցակով մասնակցել ընտրություններին: Շելեֆյանը սկզբում մերժել է այդ առաջարկը՝ պատճառաբանելով իր բազմազբաղությունը, սակայն ավելի ուշ տեղի է տվել և ընդունել անձամբ Թուրքիայի վարչապետ Ադնան Մենդերեսի առաջարկը՝ մասնակցել ընտրություններին: Ավելորդ չէ նշել, որ Շելեֆյանի դրական պատասխանի վրա որոշիչ ազդեցություն է ունեցել նաև Գարեգին

պատրիարքի դիրքորոշումը: Այս հարցում և հոգևորական, և աշխարհիկ գործիչների համար առաջնային են եղել հայ համայնքի շահերը, իսկ պատգամավորի հանգամանքը Շելեֆյանին թույլ կտար էլ ավելի արդյունավետ նպաստել համայնքային որոշ խնդիրների լուծմանը: Սակայն Շելեֆյանին պատգամավոր առաջադրելով՝ ԺԿ-ն ևս ակնկալում էր որոշակի օգուտներ, քանի որ նրա հեղինակության շնորհիվ իշխող կուսակցությունը մեծ թվով ձայներ էր ստանալու հայ համայնքից: Նկատենք նաև, որ ինչպես Զաքար Թարվերի պարագայում էր, այնպես էլ Մկրտիչ Շելեֆյանի քաղաքական նախընտրության մեջ որոշակի դեր է ունեցել այն հանգամանքը, որ քեմալական ՀԺԿ-ն ազգային փոքրամասնությունների և հատկապես հայերի նկատմամբ վարել էր ծայրահեղ խտրական քաղաքականություն:

Պատգամավոր ընտրվելուց հետո Շելեֆյանն ընդգրկվել է խորհրդարանի բյուջեի հանձնաժողովում: Նա ազգային փոքրամասնությունների միակ ներկայացուցիչն էր, որ աշխատել է այդ հանձնաժողովում: Պատգամավոր աշխատելու տարիներին Շելեֆյանը լայն թափով շարունակել է հայ համայնքի խնդիրների լուծմանն ուղղված իր գործունեությունը, և այդ շրջանում համայնքում դրական առաջընթաց է նկատվել:

1960թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից հետո ձերբակալվել է նաև Մկրտիչ Շելեֆյանը: Ուշագրավ է, որ նա խիզախ պահվածք է դրսևորել և նախաքննության, որն ուղեկցվել է դաժան կտրտանքներով, և դատական նիստերի ժամանակ: Շելեֆյանը դատապարտվել է 4,5 տարվա ազատազրկման և տեղափոխվել Կեսարիայի բանտ, իսկ նրա ամբողջ ունեցվածքը բռնագրավվել է: Հետաքրքիր է, որ Շելեֆյանն իր ազատազրկումն անցկացրել է Թուրքիայի երրորդ նախագահ Ջելալ Բայարի հետ նույն խցում և այդ միջոցով նրանք բավական մտերմացել են: Զրույցների ընթացքում Շելեֆյանը բազմաթիվ դրվագներ է պատմել հայ ժողովրդի պատմությունից, մշակույթից, ավանդույթներից, ինչից հետո Բայարը հայտարարել է, որ նոր-նոր է սկսում ճանաչել հայերին և այն էլ՝ Շելեֆյանի շնորհիվ:

1960-ական թթ. վերջին թուրքական քաղաքական, լրատվական դաշտում սաստկացել են սպառնալիքները, ճնշումները Մկրտիչ Շելեֆյանի հասցեին, ինչը ստիպել է նրան հեռանալ Թուրքիայից և հաստատվել

Շվեյցարիայում, որտեղ կարճ ժամանակ անց դարձել է տեղի հայ համայնքի ազդեցիկ գործիչներից մեկը:

4. Իսլամի դերի բարձրացումը և քաղաքականացումը

Ինչպես արդեն նշվել է, 1940-ականների վերջին քաղաքական կուսակցությունները և գործիչները սկսեցին իսլամին ավելի մեծ տեղ տալ: Թուրքիայում հետզհետե ավելի իրական էր դառնում «քաղաքական իսլամի» վերելքը: ԺԿ իշխանության գալով այդ գործընթացը լայն թափ ստացավ: Էզանն արաբերեն ընթերցելու մասին օրենքի ընդունումից հետո Մենդերեսի կառավարությունը սկսեց ուշադրություն դարձնել իսլամի լեզվի՝ արաբերենի մակարդակին: ԺԿ պատգամավոր Ա. Գյուրքանը խորհրդարանում հանդես եկավ բուհերում արաբերեն դասավանդելու օրենսդրական առաջարկությամբ, ինչը հավանության արժանացավ ԹԱՄԺ-ի կողմից: Լայն թափ առավ արաբերենով կրոնական գրականության հրատարակումը, ավելին՝ կրոնի հարցերով վարչությունը երբեմն գրագրությունը կատարում էր արաբերենով: Այդ տարիներին հասարակական-քաղաքական օրակարգում սկսեցին ավելի շատ հնչել հնին վերադառնալու կոչեր, մասնավորապես՝ մուսուլմանական հանդերձանքի պարագաների՝ ֆեսերի, չադրաների վերականգնումը, ուրբաթ օրը որպես ոչ աշխատանքային ընդունելը, բազմակնության իրավական թույլատրումը և այլն:

Իշխանությունները մեծ ուշադրություն էին դարձնում մզկիթաշինությանը. 1951-1959թթ. ընթացքում Թուրքիայում կառուցվել է 25.000 մզկիթ: Արդեն 1960թ. Թուրքիայում կար մոտ 55.000 մզկիթ, որն ավելի շատ էր, քան դպրոցների թիվը: Այսպես, 1960թ. կրթության նախարարության պաշտոնական տվյալներով՝ Թուրքիայում գյուղերի մոտ կեսը՝ 20.000, չուներ դպրոց և ուսուցիչ: Իսկ անգրագիտության մակարդակը Թուրքիայում շարունակում էր մնալ աշխարհում ամենաբարձրերից մեկը, որը, ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, գաղութային երկրների հետ գրեթե հավասար էր:

Մզկիթների կառուցման հարցը ԺԿ-ն և անձամբ վարչապետ Մենդերեսն օգտագործում էին նաև միջկուսակցական պայքարում. քննադատելով ՀԺԿ-ին՝ նա հայտարարել էր, որ ՀԺԿ իշխանության տարիներին պետությունը վաճառել է 800 մզկիթ, իսկ մի քանիսն էլ տվել է քրիստոնյաներին: Այս հայտարարության երկրորդ մասն իրոք ուշագրավ է այն առումով, որ ենթադրաբար այդ «տրված» մզկիթներն իրականում եղել են քրիստոնեական եկեղեցիներ, որոնք վերածվել էին մզկիթների[15]: ԺԿ-ն կրոնը և մզկիթների շինարարությունը քարոզչական նպատակներով օգտագործում էր նաև այլ ոլորտում՝ հայտարարելով, որ դրանով պայքարում են արտաքին վտանգի և մասնավորապես՝ կոմունիզմի ու ԽՍՀՄ-ի դեմ:

ԺԿ իշխանության տարիներին թույլատրվեց նաև արգելված կրոնական աղանդների գործունեությունը, ավանդական աղանդների կողքին ավելացան նորերը: Այդ տարիներին Թուրքիայում ակտիվ գործունեություն էին ծավալել մոտ 50 մեծ ու փոքր կրոնական եղբայրություններ և հոսանքներ, որոնք բացահայտ անցկացնում էին իրենց արարողությունները: Այդ աղանդները հանդես էին գալիս լայիցիզմի և երբեմն նաև Աթաթյուրքի քննադատությամբ, շարիաթի, խալիֆայության վերականգնման կոչերով:

Կառավարությունը և հատկապես վարչապետ Մենդերեսը բավական ուշադիր էին որոշ հոգևորականների ու աղանդների ղեկավարների հանդեպ և նրանց ցուցաբերում էին ֆինանսական ու այլ տեսակի աջակցություն: Իսլամական աղանդների և հոգևորականների մեջ իր կշռով ու ազդեցությամբ հատկապես առանձնանում էր Սայիդ Նուրսին, որը Նուրջուական աղանդի հիմնադիրն ու ղեկավարն էր: Նա ազգությամբ քուրդ էր և մինչև 1950թ. գտնվում էր աքսորում՝ իր գործունեության համար, սակայն ԺԿ իշխանության գալուց հետո նրա նկատմամբ կիրառվեց համաներում: Ազատվելուց հետո Սայիդ Նուրսին հայտարարեց, որ զբաղվելու է քաղաքական գործունեությամբ, ինչպես նաև արտահայտեց իր դրական վերաբերմունքը ԺԿ-ի նկատմամբ, իսկ վարչապետ Մենդերեսին անվանեց «բարեպաշտ մուսուլման»: Սայիդ Նուրսին կողմնակից էր իսլամական կրոնապետության ստեղծմանը, սուլթանության և խալի-

[15] Սակայն այդ տարիներին քրիստոնեական համայնքներին իրենց պատկանող եկեղեցիների վերադարձման դեպքեր արձանագրված չեն, և մինչև այժմ էլ անգամ Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցին չի վերադարձվել հայ համայնքին:

ֆայության վերականգնմանը: Ուշագրավ է նաև Նուրջու աղանդի կազմը, որը բավական խայտաբղետ էր. նրա անդամների շարքում կային տարբեր մասնագիտության տեր մարդիկ, ուսանողներ, դասախոսներ, անգամ զինվորականներ և ռազմական ուսումնարանների սովորողներ:

Ակտիվ էր նաև Թիջանի աղանդը, որը ծայրահեղ թշնամաբար էր վերաբերվում կոնկրետ Աթաթյուրքին, հանդես գալիս նրա անձի խիստ քննադատությամբ: Այս աղանդի գործունեության մեջ հստակ առանձնանում էր այն, որ աղանդավորները կազմակերպում և իրականացնում էին Աթաթյուրքի արձանների ու կիսանդրիների քանդումը, նկարների անարգումը: Թիջանի աղանդը նաև բավական քաղաքականացված էր, նրա հետևորդներից շատերը ԺԿ անդամներ էին:

Մեծ տեղ տալով մուսուլման հոգևորականությանը և աղանդների ղեկավարներին՝ ԺԿ-ն ակնկալում էր նաև նրանց աջակցությունը: Այսպես, ԺԿ-ն իր քարոզարշավների ժամանակ և նախընտրական շրջանում լայնորեն օգտագործում էր հոգևորականության ռեսուրսները. հոգևորականները բացահայտ աշխատում էին ԺԿ օգտին և անգամ մզկիթներում իրենց քարոզներում պաշտպանում էին այդ քաղաքական ուժին:

Մուսուլման հոգևորականների, շեյխերի, թարիքաթների և աղանդների շրջանում մեծ հեղինակություն էր վայելում հատկապես վարչապետ Մենդերեսը. 1959թ., երբ Լոնդոն մեկնող թուրքական պատվիրակության ինքնաթիռը վթարի ենթարկվեց և ուղևորների մի մասը զոհվեց, իսկ Մենդերեսը փրկվեց և անգամ քերծվածք չստացավ, վարչապետի կուսակիցների և հոգևորականության մի մասը դա համարեց Աստծո նշան՝ նրան հռչակելով սուրբ և անգամ մարգարե: Դրանից հետո կրոնամետ շրջանակները Մենդերեսին երբեմն դիմավորում էին իսլամական-խալիֆայական կանաչ դրոշակներով:

ԺԿ-ն հստակ հետևում էր հոգևորականներին և կրոնին զգալի տեղ տալու իր որդեգրած քաղաքականությանը, որն էլ ավելի ակտիվացավ սոցիալական, քաղաքական և տնտեսական դժվարությունների աճին զուգահեռ՝ միաժամանակ որոշակի շրջանակների՝ զինվորականության և լայիցիզմի կողմնակիցների անսքող դժգոհության պատճառ դառնալով:

5. Ներքաղաքական իրավիճակը 1950-ական թթ. երկրորդ կեսին. քաղաքական ճգնաժամը

Թուրքիայի տնտեսության մեջ արձանագրված որոշ բարելավումներն արդեն 1950-ականների կեսերին սկսեցին հետզհետե նահանջել. երկրում աճում էր դրամի արժեզրկումը, թանկացումներն ավելանում էին, վատթարանում էր սոցիալ-տնտեսական վիճակը: Սա, բնականաբար, ազդում էր հասարակության հատկապես սոցիալապես ավելի խոցելի խավերի վրա, որոնց մեջ էին մտնում բանվորները, գյուղացիները, պետական ծառայողները, մտավորականները և սպայական կազմը: Այս ամենն առաջացնում էր հասարակության լայն շերտերի բողոքը և նորովի բորբոքում հակաիշխանական տրամադրությունները: Բացի այդ, իշխանությունները սկսել էին ավելի հաճախ դիմել բռնի, հակաժողովրդավարական մեթոդների, որոնք էլ դժգոհություններ էին առաջացնում հատկապես մտավորականության և երիտասարդության շրջանում:

Կարևոր է նկատել, որ քաղաքական հաղթանակները վարչապետ Ադնան Մենդերեսին չափազանց ինքնավստահ էին դարձրել, որի պատճառով նա արդեն չէր կարողանում համարժեք զգալ իրականությունը: Մենդերեսի ինքնավստահության դրսևորումներից էր այն, որ նա, մի շրջանակում խոսելով ընտրություններին իր կուսակցության հաղթանակի մասին, ասել էր. «Եթե ցախ էլ ներկայացնեմ որպես թեկնածու, ապա նա վստահորեն կընտրվի պատգամավոր»: Այսինքն՝ Թուրքիայում բազմակուսակցական համակարգի ներդրումը ստեղծել էր ոչ թե ժողովրդավարական, այլ «մեծամասնության բռնապետության» համակարգ:

Իշխանությունների դեմ դժգոհությունն այնքան էր մեծացել, որ դրսևորվում էր անգամ իշխող ԺԿ-ում: 1955թ. արդեն ԺԿ ներսում ձևավորվել էին դժգոհ խմբեր, ինչի հետևանքով կուսակցությունից նախ հեռացվեց 9 պատգամավոր, որոնց որոշ ժամանակ անց հետևեց արդեն ինքնակամ կուսակցությունը լքած ևս 10 պատգամավոր: Այս «19-ի խումբը» 1955-ի վերջին հիմնեց նոր՝ «Ազատություն» կուսակցությունը՝ ԺԿ կառավարության ներքին գործերի նախկին նախարար Լյութֆի Ֆևզի Քարաօսմանօղլուի նախագահությամբ:

1950-ական թթ. երկրորդ կեսին Թուրքիայում քաղաքական վիճակը, միջկուսակցական պայքարը բռնել էին շարունակական սրացման ուղի. իշխանությունները բացահայտ իրականացնում էին հակաժողովրդավարական քայլեր, որոնք հաճախ ունենում էին «օրենքի» ուժ:

1957թ. սեպտեմբերի 4-ին երեք ընդդիմադիր կուսակցությունները՝ ՀԺԿ-ն, «Ազատություն» կուսակցությունը և Հանրապետական ազգային կուսակցությունը հայտարարեցին ընդհանուր քաղաքական կուրսի որդեգրման մասին: Բացի այդ, ծրագրվում էր առաջիկա խորհրդարանական ընտրություններին հանդես գալ միասնական ընտրական դաշինքով: Սակայն ԹԱՄԺ-ը ընդամենը օրեր անց՝ սեպտեմբերի 11-ին, ԺԿ ներկայացմամբ ընդունեց նախընտրական դաշինքները և ընտրություններին միացյալ ցուցակով հանդես գալն արգելող օրենք: Սրանով իշխանությունները փորձում էին կանխել իրենց համար վտանգավոր զարգացումները:

Չսահմանափակվելով այս քայլերով՝ ԺԿ-ն դիմեց մեկ այլ քայլի ևս. չնայած հերթական խորհրդարանական ընտրությունները նախատեսված էին 1958-ին, սակայն ԺԿ-ն նախընտրեց մեկ տարի առաջ անցկացնել արտահերթ ընտրություններ՝ խուսափելու համար հեղինակության հետագա նվազումից: Ընտրությունները և նախընտրական քարոզարշավը բավական լարված անցան, չնայած որ մինչ այդ ընդդիմությունը, փաստորեն, զրկվել էր միավորվելու և անգամ հանրահավաքներ անելու հնարավորությունից: ԺԿ-ի և ՀԺԿ-ի միջև առկա միջկուսակցական լարվածությունը երբեմն դուրս էր գալիս քաղաքական պայքարի սահմաններից:

1957թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ. ԺԿ-ն, ճիշտ է, պակաս թվով ձայներ ստացավ, քան նախորդ ընտրություններում, սակայն հաղթեց՝ խորհրդարանում ձեռք բերելով մեծամասնություն՝ 424 պատգամավոր: ՀԺԿ-ն ստացավ 178 մանդատ, Հանրապետական ազգային կուսակցությունը՝ 4, «Ազատություն» կուսակցությունը՝ 4, անկախները՝ 2: Սակայն այդ ընտրություններում ԺԿ-ն օգտագործեց վարչական ռեսուրսը, ոստիկանությանը, կեղծվեցին ընտրողների ցուցակները, բաժանվեց կաշառք, կիրառվեցին ճնշումներ, իսկ ընտրություններից հետո մերժվեցին ընդդիմադիր կուսակցությունների բողոքներն ու բողոքարկումները: Ընտրություններից հետո իրավիճակը մի քանի նահանգներում ու քաղաքներում այն աստիճան սրվեց, որ ոստիկանությունն ի զորու չէր կարգուկանոն հաստատել, և միայն բանակային զորամիավորումների միջամտությամբ հնարավոր եղավ իրավիճակը կարգավորել: Ավելորդ չէ փաստել, որ նոր խորհրդարանի բացման օրը մայրաքաղաք էին մտցվել տանկեր: Այս անգամ ևս Ջելալ Բայարը և Ադնան Մենդերեսն անփոփոխ մնացին համապատասխանաբար՝ երկրի նախագահի և վարչապետի պաշտոններում:

1957թ. ընտրությունները ոչ միայն չնպաստեցին քաղաքական վիճակի կարգավորմանը, այլև ավելի լարեցին այն: Սկսվեց ուժերի համախմբում ընդդիմության շարքերում, տեղի ունեցավ կուսակցությունների միաձուլում: Այսպես՝ «Ազատություն» կուսակցությունը մտավ ՀԺԿ կազմի մեջ, իսկ Գյուղացիական կուսակցությունը միացավ Հանրապետական ազգային կուսակցությանը, որը վերանվանվեց Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցություն: Իշխող ԺԿ-ում ևս տեղի էին ունենում խմորումներ և դժգոհության աճ. դրա ամենախոսուն ապացույցներից էր այն, որ ԺԿ-ից հեռացել և ընդդիմությանն էր միացել այդ կուսակցության հիմնադիրներից մեկը՝ արտաքին գործերի նախկին նախարար Ֆուաթ Քյոփրուլյուն:

Երկրի սոցիալ-տնտեսական վիճակը նույնպես շարունակում էր անկում ապրել, որն ազդում էր նաև պետական պաշտոնյաների և զինվորականության աշխատավարձերի վրա: ԺԿ-ն շարունակում էր ընդդիմության դեմ պայքարում կիրառել ժողովրդավարությունը ոտնահարող մեթոդներ, արգելվում էին հանրահավաքները, խստացել էր գրաքննությունը: Այս և նմանատիպ այլ քայլերը համարվում են Մենդերեսի կառավարության կողմից իրականացված «կառավարական հեղաշրջում» կամ «քաղաքացիական հեղաշրջում», որի դեմ ավելի էին հասունանում ռազմական հեղաշրջում իրականացնելու անհրաժեշտությունը, սպասումը և ձգտումը:

Թուրքիայի զինվորականության շրջանում նույնպես տեղի էին ունենում խմորումներ: Ավանդաբար, զինվորականությունը համարվել է քեմալական սկզբունքների պաշտպան, և բնական է, որ քեմալական ՀԺԿ հեռացումը իշխանությունից պետք է որոշակի անհանգստություն պատճառեր բանակին: Զինվորականների շրջանում ակտիվության փորձեր

և քաղաքականությանը միջամտելու ձգտումներ արձանագրվել են 1950թ. խորհրդարանական ընտրություններից հետո, երբ պարզ դարձավ, որ ՀԺԿ-ն կորցրել է իշխանությունը: Դրանից հետո մի խումբ գեներալներ Իսմեթ Ինյոնյուին առաջարկել են չհանձնել իշխանությունը և փաստացի իրականացնել ռազմական հեղաշրջում, սակայն մի քանի հանգամանք, այդ թվում՝ արտաքին ճնշումը, ստիպել են նրան հրաժարվել այդ քայլից: Պետք է նկատել նաև, որ այդ ժամանակ բանակը միասնական չէր, գեներալների մի մասն աջակցում էր ԺԿ-ին, ինչը կարող էր հանգեցնել բոլորովին այլ հետևանքների:

ԺԿ իշխանության գալուց անմիջապես հետո լարվածություն էր նկատվում նոր իշխանությունների և բանակի որոշակի հատվածի միջև: 1950թ. ԺԿ-ն բանակում իրականացրել էր «զտման» աշխատանքներ և հեռացրել իր համար անվստահելի տարրերին, իսկ առաջացած թափուր տեղերը համալրել, այսպես կոչված, «տեխնիկական սպաներով», որոնց կարիքն առաջացավ ամերիկյան նոր ռազմատեխնիկայի շահագործման համար: Երկրում տիրող սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև լայիցիզմի և Աթաթյուրքի սկզբունքների դեմ արվող քայլերը լուրջ դժգոհություն էին առաջացրել նաև զինվորականության շրջանում, ինչն աստիճանաբար խորանում էր: 1950-ական թթ. կեսերին բանակում հակակառավարական տրամադրություններն ավելի բացահայտ բնույթ էին կրում, սկիզբ առած դժգոհությունները լայնորեն տարածվել էին նաև վերոնշյալ «տեխնիկական սպաների» շարքերում:

Զինվորականության շրջանում առկա դժգոհությունները պատճառ էին դառնում բանակում որոշ խմբավորումների կամ, այսպես կոչված, գաղտնի խմբերի ստեղծման համար: Առաջին գաղտնի խմբերը բանակի սպայական շրջանակներում ստեղծվել են դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Ընդհանրապես, 1940-ականները կարևոր են զինվորականության քաղաքական դերակատարությունը հետագայում հասկանալու տեսանկյունից: Ավելին՝ թուրք զինվորականության շրջանում 1950-ական թթ. տեղի ունեցող գործընթացները հասկանալու համար որպես սկզբնակետ ճիշտ է համարել 1938թ.՝ Աթաթյուրքի մահվանը հաջորդած իրադարձությունները: Այսինքն՝ զինվորականության ակտիվությունը, որն ի վերջո հանգեցրեց ռազմական հեղաշրջման 1960 թվականին, ճիշտ չէ պայմանավորել միայն ԺԿ կառավարման տասը տարիներով, այլ այն պետք է դիտարկել ավելի լայն ժամանակային հարթությունում:

Արդեն 1950-ականների կեսերին բանակում ստեղծվել էին տարբեր գաղտնի խմբեր ռազմական ուսումնարաններում, գլխավոր շտաբում և այլ ստորաբաժանումներում, որոնք հաճախ իրար հետ կապ չունեին: Գաղտնի խմբերի շարքում կարևորներից էր 1955-1956թթ. Ռազմական ակադեմիայում ստեղծված խումբը, որը կոչվում էր «Աթաթյուրքի կողմնակիցների ասոցիացիա»: Արդեն 1957թ. խմբի օրակարգում կար հեղաշրջման պատրաստվելու հարցը: Ավելի ուշ այդ անկախ գործող խմբերը տեղեկանում են միմյանց մասին, և սկսվում է նաև ցանցային համագործակցություն: Նրանց ընդհանուր նպատակը հեղաշրջումն էր, սակայն տարբեր էին մոտեցումները ժամանակի և անցկացման ձևի վերաբերյալ: Գաղտնի խմբերի անդամներին արգելվում էր քաղաքական գործիչների հետ համագործակցությունը, այդ դերը վերապահված էր միայն ղեկավարներին: Ավելորդ չէ փաստել, որ ՀԺԿ առաջնորդ Իսմեթ Ինյոնյուի հետ զինվորականների գաղտնի հանդիպում անցկացնելու և հեղաշրջում իրականացնելու մասին առաջարկներն ավարտվել էին անհաջող, քանի որ Ինյոնյուն կտրուկ դեմ էր հանդես եկել այդ գաղափարին և անգամ չէր հանդիպել զինվորականների հետ:

Պետք է նկատել նաև, որ զինվորականների այս գործողությունները ամբողջովին գաղտնի չէին մնում և 1957թ. դեկտեմբերին բացահայտվեց սպաների մի խմբի հակակառավարական գործունեությունը և ձերբակալվեցին 9 սպաներ, իսկ գործն էլ համապատասխանաբար ստացավ «ինը սպաների գործ» անվանումը: Սակայն այդ գործի քննությունը վարող զինվորականները, ինչպես նաև ռազմական դատարանը նույնպես ունեին հակակառավարական տրամադրություններ և համակրում էին ձերբակալված սպաներին, ուստի շուրջ մեկ տարի տևած քննությունն ու դատավարությունն ավարտվեցին սպաների ազատ արձակմամբ՝ «ապացույցների և վկայությունների բացակայության» պատճառով: Ավելին՝ ձերբակալվեց այդ խմբի գործունեությունը մատնած անձը՝ Սամեդ Քուշչուն:

Այս դեպքից հետո զինվորականների փոքր-ինչ նվազած ակտիվությունը վերականգնվեց 1959-ի սկզբին և գաղտնի խմբերը իրենց գլխավորելու, ինչպես նաև մտահոգությունները հայտնելու համար կապ հաստատեցին

ցամաքային զորքերի հրամանատար, գեներալ Ջեմալ Գյուրսելի հետ, ով նույնպես դժգոհ էր առկա իրավիճակից: Ստանալով Գյուրսելի համաձայնությունը՝ գաղտնի խմբերի անդամներն ավելի ակտիվացրին իրենց գործողությունները: Գաղտնի խմբերի անդամները կարևոր քայլերի շարքում ընդգրկել էին իրենց յուրայիններին տարբեր պատասխանատու պաշտոնների նշանակելու հարցը: Մտերմանալով Գյուրսելի հետ՝ նրանք կարողացան լուծել այդ խնդիրը: Օրինակ, Օ. Քյոքսալը նշանակվեց ցամաքային ուժերի կադրերի բաժնի պետ, ինչն էլ, իր հերթին, թույլ տվեց այլ համախոհների ևս կարևոր պաշտոնների նշանակել: Օ. Քյոքսալը շուտով նշանակվեց Անկարայի նախագահական նստավայրի անվտանգության-պահպանության գումարտակի հրամանատար: Ամրապնդելով իրենց դիրքերը բանակի տարբեր ստորաբաժանումներում և պահպանելով ցանցային կապ իրար հետ՝ զինվորականները սպասում էին հարմար առիթի ակտիվ գործողություններ սկսելու համար:

1950-ականների վերջին Թուրքիայի ներքաղաքական կյանքում լարվածությունը հասել էր գագաթնակետին. դերերը փոխվել էին, և այժմ ՀԺԿ-ն էր դարձել ժողովրդավարության «ջատագով» ու քարոզիչ, իսկ ԺԿ-ն՝ դիկտատուրայի կրող և իրականացնող: ՀԺԿ-ի դեմ հալածանքները հատկապես ցայտուն և անձնավորված կերպով դրսևորվում էին Ինյոնյուի հանդեպ, որին իշխանությունները ձգտում էին մեկուսացնել, նրան երբեմն չէին հրավիրում պաշտոնական ընդունելություններին, նրա վրա հարձակվում էին իշխանության կողմնակիցները: Վախենալով իր անվտանգության համար՝ նախկին նախագահը խորհրդարան էր մտնում ծառայողական մուտքից, որպեսզի խուսափի ԺԿ պատգամավորների և նրանց կողմնակիցների հետ հանդիպումներից, քանի որ այդ հանդիպումները ուղեկցվում էին բանավոր վիրավորանքներով, երբեմն նաև քաշքշուկներով: Իսմեթ Ինյոնյուի դեմ հալածանքները արդեն լուրջ վտանգ էին ստեղծել նրա ֆիզիկական գոյության համար: 1959թ. ապրիլի 30-ին Ուշաքում Ինյոնյուի դեմ կազմակերպվել էր մահափորձ, ինչի հետևանքով նա վիրավորվել էր, իսկ նույն թվականի մայիսի 4-ին արդեն Ստամբուլում ԺԿ կողմնակիցների մի մեծ ամբոխ քարերով և մահակներով հարձակվել էր Ինյոնյուի մեքենայի վրա: Նախկին նախագահին ստույգ մահից փրկել

էին այնտեղ գտնվող զինվորականները՝ սպառնալով հարձակվողների վրա կրակ բացել:

Լարվածությունը դրսևորվում էր նաև խորհրդարանում, որտեղ ԺԿ և ՀԺԿ պատգամավորների միջև տեղի էին ունենում ձեռնամարտեր: 1960թ. ապրիլի 13-ին ԹԱՄԺ-ում ՀԺԿ խմբակցությունը պահանջեց հետաքննություն սկսել ԺԿ առաջնորդների և կառավարության անդամների անօրինական գործունեության վերաբերյալ, որին ի պատասխան՝ ԺԿ պատգամավորները հանդես եկան պահանջով՝ կախել ՀԺԿ նախագահ Իսմեթ Ինյոնյուին:

Այդ շրջանում քաղաքական լարվածությունն արտացոլվում էր նաև հասարակական կյանքում. ՀԺԿ և ԺԿ կողմնակիցների միջև սկսվել էր լարված ու անզիջում պայքար բոլոր ոլորտներում, որը հասցրել էր հասարակական պառակտման: Նույնիսկ թաղամասերը, սրճարանները բաժանվում էին ըստ կուսակցական պատկանելության. ԺԿ կողմնակիցների սրճարաններում կախված էր վարչապետ Մենդերեսի, իսկ ՀԺԿ կողմնակիցների սրճարաններում՝ Իսմեթ Ինյոնյուի լուսանկարները: Անգամ մզկիթներում կուսակցականներն իրար կողքի չէին աղոթում, այնտեղ նույնպես ձևավորվել էին «կուսակցական կողմեր»: Բացի այդ, միջկուսակցական պայքարի համատեքստում քաղաքական ուժերը փորձում էին ստեղծել նաև հասարակական վստահության պլատֆորմներ. այսպես ԺԿ-ն ստեղծեց «Հայրենիքի ճակատ» պլատֆորմը, որին ստիպեցին անդամագրվել մարդկանց, նույնիսկ ամբողջ գյուղեր՝ օգտագործելով վարչական ռեսուրսը: Իսկ ընդդիմադիր ՀԺԿ-ն ստեղծեց համանման մի պլատֆորմ «Ուժերի համախմբում» անվանմամբ: Պատրաստվելով գալիք խորհրդարանական ընտրություններին՝ կուսակցությունները ակտիվացնում էին իրենց համախոհների ընտրազանգվածները և աշխատանքներ տանում նրանց իրենց կողմը գրավելու համար: ԺԿ-ն ակտիվ քայլեր էր անում առևտրաարդյունաբերական, կրոնամետ, հոգևորականների շրջանակներում: Հետաքրքիր են այդ առումով ՀԺԿ արած քայլերը, որը մեծ ուշադրություն էր դարձնում ուսանողական և պրոֆեսորադասախոսական շրջանակների հետ իր շփումներին: Հենց նրանք էին դառնալու հեղաշրջման տանող գործընթացների կարևոր լոկոմոտիվներից մեկը: Հիշատակման արժանի է Ինյոնյուի խորհրդարանում ունեցած ելույթներից

մեկում արված թափանցիկ ակնարկը, որն իր մեջ նաև սպառնալիքի տարրեր էր պարունակում. ՀԺԿ առաջնորդը խիստ քննադատելով ԺԿ գործողությունները՝ շեշտեց, որ իշխանությունները չունեն աջակցություն ոչ բանակում, ոչ ուսանողության մեջ:

Արդեն 1960թ. սկզբին Թուրքիայում հաստատվել էր քաղաքական խոր ճգնաժամ, ստեղծվել էր պայթյունավտանգ դրություն: Այդ լարվածության խորացմանը նպաստեց այն, որ 1960թ. ապրիլի 18-ին ԺԿ առաջարկով ստեղծվեց արտակարգ լիազորություններ ունեցող խորհրդարանական հանձնաժողով, որը զբաղվելու էր ընդդիմության գործունեության ուսումնասիրությամբ: Հանձնաժողովը, կիրառելով իր լիազորությունները, մայիսին երեք ամսով արգելեց ընդդիմադիր ուժերին և կուսակցություններին ժողովներ, հանրահավաքներ, համագումարներ անցկացնել, մամուլում տպագրել քաղաքական բնույթի հայտարարություններ և այլն: ՀԺԿ նախագահ Իսմեթ Ինյոնյուին անգամ արգելվեց մուտք գործել Ազգային ժողովի շենք:

Դժգոհությունն իշխանությունների կոշտ սահմանափակումներից հետզհետե ավելի հրապարակային բնույթ ստացավ, որն արտահայտվեց բողոքի հանրահավաքների տեսքով, որոնց մասնակցում էին հասարակության տարբեր խավեր: Այսպես, 1960թ. ապրիլի 19-ին Անկարայում տեղի ունեցավ բազմամարդ հանրահավաք ընդդեմ իշխանությունների գործողությունների: Ապրիլի 28-ին հանրահավաք կազմակերպեցին Ստամբուլի համալսարանի ուսանողները, որի ժամանակ ոստիկանությունը կրակ բացեց, ինչի հետևանքով սպանվեց մեկ, իսկ վիրավորվեցին տասնյակ ցուցարարներ: Ի նշան համերաշխության հաջորդ օրը հանրահավաք կազմակերպեցին արդեն Անկարայի համալսարանի ուսանողները հենց համալսարանի շենքի առջև: Այստեղ ևս ոստիկանությունը բիրտ մեթոդներով ցրեց ցույցը՝ կրակ բաց անելով ուսանողների վրա, ինչի հետևանքով մի քանիսը վիրավորվեցին: Այնուհետև ոստիկանները ներխուժեցին համալսարանի շենք և այնտեղ շարունակեցին ուսանողների հետապնդումները, սակայն ուսանողական հանրահավաքը տեղափոխվեց Քըզըլայ հրապարակ: Բողոքի հանրահավաքներ էին տեղի ունենում նաև Իզմիրում, Բուրսայում: Այս ամենի հետևանքով իշխանությունները Անկարայում և Ստամբուլում մտցրեցին արտակարգ դրություն, սկսվեցին ձերբակալություններ հատկապես ուսանողության շրջանում, արգելվեցին բոլոր տեսակի ժողովները, ցույցերը և այլն: Սակայն այս բոլոր մեթոդները արդյունավետ չէին, և հուզումները շարունակվում էին:

Գրականություն լրացուցիչ ընթերցանության համար

1. Մելքոնյան Ռ., Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավորները (1935-1960թթ.), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2012, հ. 7, էջ 166-186:
2. Մելքոնյան Ռ., Տեղանունների փոփոխությունը՝ որպես թուրքացման քաղաքականության բաղադրիչ, «21-րդ ԴԱՐ», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2009, 6, էջ 30-37:
3. Данилов В., Политическая борьба в Турции 50-е – начало 80-х годов XX в., Москва, 1985.
4. Еремеев Д., Турция в годы Второй мировой и “холодной” войн (1939-1990), Москва, 2005.
5. Вдовиченко Д., Борьба политических партий в Турции (1944-1965гг.), Москва, 1967.
6. Güven D., 6-7 Eylül Olaylari, İstanbul, 2009.
7. Zürcher E., Turkey: A Modern History, London-New York, 2004.

ԳԼՈՒԽ Ե

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ. ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐ (1960-1980թթ.)

1. 1960թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումը

1960թ. մայիսի 3-ին Թուրքիայի ցամաքային զորքերի հրամանատար, գեներալ Ջեմալ Գյուրսելը պաշտպանության նախարար Էթեմ Մենդերեսին նամակ հղեց, որում իր մտահոգությունն էր հայտնում երկրում ստեղծված վիճակի համար և խոսում անհապաղ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտության մասին: Նամակում գեներալը մի շարք պահանջներ էր առաջ քաշում, որոնցից էին երկրի նախագահի հրաժարականը, մի շարք նախարարների, Ստամբուլի և Անկարայի նահանգապետերի ազատումն աշխատանքից և այլն: Այս գրությունը հետագայում պատմագրության մեջ բնորոշվելու է որպես զինվորականության վերջնագիր, որին, սակայն, ԺԿ իշխանություններն ուշադրություն չդարձրեցին, ընդհակառակը՝ մայիսի 6-ին Գյուրսելին ուղարկեցին թոշակի և ազատեցին աշխատանքից:

Մայիսի 4-ին Անկարայում կրկին տեղի ունեցավ բազմամարդ հանրահավաք և այնտեղ եկած վարչապետ Ադնան Մենդերեսի բոլոր ջանքերը՝ երկխոսել ցուցարարների հետ, ավարտվեցին անարդյունք, ավելին՝ կատաղած երիտասարդությունը հարձակվեց վարչապետի վրա և ոստիկանությունը բիրտ մեթոդներով միջամտեց: Այս լարված իրավիճակում վարչապետ Մենդերեսը որոշում կայացրեց այցելել երկրի տարբեր նահանգներ և անձամբ տեսնել իրավիճակը: Սակայն այն վայրերում, ուր նա

այցելում էր, նրան դիմավորում էին մեծ պատվով, ինչն էլ տպավորություն էր ստեղծել վարչապետի մոտ, որ երկրում չկա հեղափոխական իրավիճակ և միայն Անկարայում ու Ստամբուլում է վիճակը անհանգիստ, ինչն էլ կրում է լոկալ բնույթ:

Ինչպես ընդհանուր քաղաքական լարվածության, այնպես էլ բողոքի հանրահավաքների մեջ հատկապես կարևորվում է այն փաստը, որ դրանց արդեն բացահայտ սկսեցին մասնակցել նաև զինվորականները: Այսպես՝ մայիսի 21-ին Անկարայում հանրահավաքի մասնակցեց տեղի ռազմական ուսումնարանի մոտ 1000 կուրսանտ, և սա արդեն բանակի բացահայտ կողմնորոշման և վերաբերմունքի դրսևորում էր, մանավանդ որ հանրահավաքին մասնակցում էր նաև ուսումնարանի պետը: Մայիսի 25-ին Ստամբուլում տեղի ունեցավ նաև համալսարանական դասախոսների հանրահավաք:

Բանակի ցուցադրական դեմարշին վարչապետ Մենդերեսը ականատես եղավ նաև Էսքիշեհիրում, ուր մեկնել էր մայիս 25-ին՝ թողնելով անհանգիստ մայրաքաղաքը: Էսքիշեհիրի օդանավակայանում Մենդերեսին դիմավորելու եկած սպաների անձնակազմը ցուցադրաբար մեջքով շրջվեց վարչապետին, երբ նա մոտեցել էր զինվորականներին ողջունելու համար: Նույն օրը երեկոյան պաշտոնական ընդունելության ժամանակ զինվորականները ցուցադրաբար որևէ ուշադրություն չէին դարձնում վարչապետի վրա:

Այդ ընթացքում հեղաշրջման որոշում ընդունած զինվորականները, գործողությունների որոշ մանրամասներ քննարկելով, անցան իրենց պլանի իրագործմանը. մայիսի 26-ի լույս 27-ի գիշերը նրանք ձերբակալեցին Թուրքիայի ցամաքային զորքերի հրամանատար Սուաթ Քոյաշին, Անկարայի զինվորական պարետ Նամըք Արգյուչին, Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Ռյուշթյու Էրդելհունին: Այնուհետև տանկերը շրջապատեցին նախագահական պալատը, և զինվորականները ձերբակալեցին նախագահ Ջելալ Բայարին: Հեղաշրջման մասնակիցները գրավեցին Ազգային ժողովի, կառավարության, անվտանգության ծառայության, ներքին գործերի նախարարության, ինչպես նաև ռադիոյի, փոստի, հեռագրատան և հեռախոսակայանի շենքերը: Ռադիոյի շենքի մոտ տեղի ունեցավ փոխհրաձգություն, որի հետևանքով սպանվեց հեղաշրջման մասնակից-

ներից լեյտենանտ Քալմազը: Տեղի ունեցան կառավարության անդամների և ԺԿ պատգամավորների ձերբակալություններ: Հեղաշրջման մասին վարչապետ Մենդերեսն իմացավ առավոտ կանուխ և ֆինանսների նախարար Հասան Փոլաթքանի հետ ուղևորվեց դեպի Քյութահիա, որտեղ էլ հենց նահանգապետի տանը զինվորականները նրանց ձերբակալեցին և ռազմական ինքնաթիռով տեղափոխեցին Անկարա: Թուրքիայում կազմակերպված հեղաշրջումը, որևէ լուրջ դիմադրության չհանդիպելով, ավարտվեց հաջողությամբ, և ԺԿ իշխանությունը տապալվեց:

Այսպիսով՝ 1960թ. մայիսի 27-ին Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում, որի արդյունքում իշխանությունից հեռացվեց ժողովրդավարական կուսակցությունը: «Մայիսի 27-ը» կազմակերպեցին և իրականացրեցին գլխավորապես միջին աստիճանակարգ ունեցող և հիմնականում քեմալիզմի սկզբունքներին անսահման նվիրված սպայական կազմի անդամները:

Ռազմական հեղաշրջումից հետո երկրի ամբողջ իշխանությունն անցավ նորաստեղծ Ազգային միասնության կոմիտեի (ԱՄԿ, Milli Birlik Komitesi) ձեռքը, որը բաղկացած էր 38 անդամից (5 գեներալ, 9 գնդապետ, 6 փոխգնդապետ, 11 մայոր, 7 կապիտան): ԱՄԿ ղեկավար դարձավ Ջ. Գյուրսելը, քարտուղար՝ Օ. Էրքանլին:

Ռազմական հեղաշրջման հաջորդ օրը՝ մայիսի 28-ին, կազմավորվեց նոր կառավարություն, որը գլխավորեց Ջեմալ Գյուրսելը: Նոր կառավարության կազմի մեջ ընդամենը 3 զինվորական էր ընդգրկված, մյուսներն անկուսակցական քաղաքացիական գործիչներ էին: Նոր կառավարության կազմում Գյուրսելը ղեկավարում էր նաև պաշտպանության նախարարությունը: Փաստորեն, Ջեմալ Գյուրսելը ստացավ անսահմանափակ իշխանություն:

Մինչև ԹԱՄԺ ընտրությունների կազմակերպումը երկրի օրենսդիր և գործադիր իշխանության ղեկավարը ԱՄԿ-ն էր, որը նախապատրաստելու էր նոր սահմանադրությունն ու ընտրության մասին օրենքը և սեղմ ժամկետներում ընտրություններ պետք է կազմակերպեր՝ իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելու համար:

ԱՄԿ գործունեության առաջին իսկ ամիսներից լուրջ հակասություններ առաջացան նրա անդամների միջև՝ կապված երկիրը ղեկավարելու հետագա ընթացքի հետ: ԱՄԿ-ն բաժանվեց երկու թևի, որոնց ընդունված է կոչել պահպանողականների և արմատականների խմբեր: Պահպանողականների խումբը, որի կազմում էին նաև գեներալները՝ Ջ. Գյուրսելի գլխավորությամբ, փորձում էր շուտափույթ ընտրություններ կազմակերպել և իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին: Այս խմբին մեծապես աջակցում էր ՀԺԿ նախագահ Իսմեթ Ինյոնյուն:

ԱՄԿ արմատական թևին հարող անդամները, որոնք հեղաշրջման հիմնական կազմակերպիչներն էին, պնդում էին, որ միայն ԺԿ-ին իշխանությունից զրկելով զինվորականության «առաքելությունը» չի ավարտվում: Նրանք պետք է իշխանության ղեկը պահեն իրենց ձեռքում՝ ռազմական դիկտատուրայի միջոցով երկրում արմատական բարեփոխումներ իրականացնելու համար: Արմատականների մի մասը պնդում էր, որ հեղաշրջման պատճառների հիմնական մասն ի հայտ է եկել 1938-1960թթ., այսինքն՝ Աթաթյուրքի մահից հետո: Սա կարևոր հանգամանք էր, քանի որ նրանք, փաստորեն, 1938-1950թթ. իշխած Իսմեթ Ինյոնյուի վարչակարգին հավասարապես մեղադրում էին հեղաշրջումից առաջ ստեղծված իրադրության համար: Այս խմբի առաջնորդներից էր գնդապետ Ալփարսլան Թյուրքեշը: ԱՄԿ ներսում տեղի ունեցող հակամարտությունը մեծապես խոչընդոտում էր երկրում նշանակալի բարեփոխումներ իրականացնելու գործին:

ԱՄԿ առաջին ամիսների գործունեությունից պետք է առանձնացնել արմատականների խմբի նախաձեռնությամբ բանակում իրականացված փոփոխությունները: Որպես բանակի արդիականացման գլխավոր ուղղություն՝ արմատականները դիտում էին բարձրագույն սպայական կազմում կրճատումներ իրականացնելու անհրաժեշտությունը: Դա պայմանավորված էր հիմնականում երկու հանգամանքով. Նախ՝ բարձրագույն սպայակազմը չափազանց ուռճացված էր, նրանցից շատերը չէին համապատասխանում ժամանակի պահանջներին, և այդ հանգամանքը խոչընդոտում էր երիտասարդ զինվորականների առաջխաղացմանը: Եվ երկրորդ՝ բանակի բարձրագույն սպայակազմը սկսել էր թշնամանքով վերաբերվել հեղաշրջում իրականացրած երիտասարդ զինվորականներին, որոնք խախտել էին բանակի աստիճանակարգության կարգապահությունը: Հետևաբար, բանակում կրճատումներ իրականացնելով՝ արմատականների

թևը փորձում էր ամրապնդել իր դիրքերը բանակում: 1960թ. օգոստոսին այս բարեփոխումների շրջանակներում թոշակի ուղարկվեց սպայական կազմի մոտ 5000 ներկայացուցիչ, որոնցից՝ 235 գեներալ և ծովակալ: Հատկանշական է, որ թոշակի ուղարկվեց թուրքական բանակի բոլոր գնդապետների մոտ 80%-ը, փոխգնդապետների՝ մոտ 50%-ը և մայորների՝ մոտ 10%-ը: Բանակից հեռացվեց նաև հեղաշրջումից հետո գլխավոր շտաբի պետ նշանակված Ռագըփ Գյումյուշփալան:

Հոկտեմբերին ԱՄԿ արմատական թևը ձեռնամուխ եղավ որոշակի փոփոխությունների իրականացմանը նաև համալսարաններում: Մշակվեց համալսարանների մասին նոր օրենքը, որն ընդունելուց առաջ համալսարաններից հեռացվեցին ընդդիմադիր կեցվածք ունեցող 147 պրոֆեսորներ և դասախոսներ: Արմատականների այս քայլը հասարակական տարբեր շրջանակներում դժգոհություններ առաջացրեց և բողոքների պատճառ դարձավ հատկապես երիտասարդության շրջանում:

Պետք է նշել, որ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին չափազանց լարված էին ԱՄԿ երկու թևերի միջև հարաբերությունները: ԱՄԿ պահպանողական թևը, ոչ առանց ՀԺԿ նախագահ Իսմեթ Ինյոնյուի գործուն աջակցության, օգտվեց «147 դասախոսների գործից» հետո երկրում ԱՄԿ գործունեությունից առաջացած որոշակի դժգոհություններից: Նրանք որոշեցին ազատվել արմատականների թևից: Նոյեմբերի 13-ին Գյուրսելը հրամանագիր ստորագրեց, որով ԱՄԿ արմատականների խմբի բոլոր 14 անդամները հեռացվեցին և արտերկրում՝ Թուրքիայի դեսպանատներում նշանակվեցին որպես ռազմական կցորդներ՝ ըստ էության «արտաքսվելով» երկրից:

Արմատականների խմբին հեռացնելուց հետո ՀԺԿ ղեկավար Իսմեթ Ինյոնյուի ազդեցությունը մեծացավ ԱՄԿ-ի վրա, և նրա աջակցությամբ պահպանողականները ձեռնամուխ եղան իշխանությունը քաղաքացիական ուժերին փոխանցելու գործընթացին: Մինչև նոր ընտրությունների կազմակերպումը և իշխանությունը փոխանցելը քաղաքական կուսակցություններին, ԱՄԿ ղեկավարությունն անհրաժեշտ էր համարում ընդունել նոր սահմանադրություն և նոր ընտրական օրենսգիրք, վերականգնել բանակում աստիճանակարգության կարգուկանոնը և ավարտել ԺԿ ղեկավարության դատավարությունը: Այս վերջին

հանգամանքը հատկապես կարևոր էր զինվորականների համար, քանի որ ԺԿ ղեկավարները դեռ շարունակում էին մեծ հեղինակություն վայելել երկրի որոշ հատվածներում:

2. ԺԿ անդամների դատավարությունը

Ռազմական հեղաշրջումից հետո հիմնական հարցերից մեկը մնում էր ԺԿ նախկին անդամների ճակատագիրը: ԱՄԿ-ն ստեղծեց Բարձրագույն քննչական հանձնաժողով, որը պետք է քններ ԺԿ իշխանության օրոք ղեկավար պաշտոններ զբաղեցրած անձանց կողմից իրականացված հանցագործությունները: Հանձնաժողովը ղեկավարում էր դատավոր Սելիմ Բաշոլը:

1960թ. հոկտեմբերի 14-ին Մարմարա ծովի Յասսըադա կղզում ստեղծված «Բարձրագույն արդարադատության դիվանում» (“Yüksek Adalet Divani”) սկսվեց 1960թ. մայիսի 27-ի հեղաշրջման հետևանքով իշխանությունից հեռացված 592 տարբեր պաշտոնյաների, այդ թվում՝ Թուրքիայի նախկին նախագահ Ջելալ Բայարի, վարչապետ Ադնան Մենդերեսի, նախարարների, պատգամավորների դատավարությունը: Ներկայացված մեղադրանքների թվում էին նաև 1955թ. սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլում, Իզմիրում և այլ վայրերում հույների ու հայերի նկատմամբ իրականացված ջարդարարությունները: Ուշագրավ է, որ նախագահ Բայարին սկզբում մեղադրանք է առաջադրվել նաև հայրենիքի դավաճանության հոդվածով, որի համար հիմք է ծառայել այն պնդումը, թե նա պատրաստվել է Թուրքիայի արևելյան շրջաններից տարածքներ փոխանցել ԽՍՀՄ-ին տնտեսական օգնության դիմաց: Խնդրո առարկա շրջանները, փաստորեն, պատմական Հայաստանի տարածքներն են եղել: Սակայն հետագայում այդ մեղադրանքը չի հաստատվել փաստերի անբավարար լինելու պատճառով: Ներկայացված մեղադրանքները մեծ մասամբ վերաբերում էին ներքին քաղաքականությանը:

Դատական գործընթացը շարունակվեց 11 ամիս՝ մինչև 1961թ. սեպտեմբերի 15-ը: Ի վերջո, 15 մարդ դատապարտվեց մահապատժի, 31-ը դատա-

պարտվեց ցմահ ազատազրկման, 418 հոգի դատապարտվեց տարբեր ժամկետների ազատազրկման, իսկ 123 մարդ արդարացվեց: Մահապատժի ենթարկվածներից 11-ի դեպքում ԱՄԿ-ն փոխեց դատավճիռը, իսկ 4 հոգու դեպքում միաձայն հաստատեց մահապատժի դատավճիռը. դրանք էին՝ նախագահ Ջելալ Բայարը, վարչապետ Ադնան Մենդերեսը, արտաքին գործերի նախարար Ֆաթին Ռյուշթյու Զորլուն և ֆինանսների նախարար Հասան Փոլաթքանը: 1961թ. սեպտեմբերի 16-ին կախաղան բարձրացվեցին Զորլուն և Փոլաթքանը, իսկ սեպտեմբերի 17-ին՝ վարչապետ Մենդերեսը (մահապատժից մեկ օր առաջ Մենդերեսը փորձեց ինքնասպանություն գործել, սակայն իրավապահներին հաջողվեց այն կանխել):

Ջելալ Բայարի մահապատժի դատավճիռն առաջացած տարիքի պատճառով փոխարինվեց ցմահ ազատազրկմամբ: Իսկ ավելի ուշ՝ 1964թ., առողջության վատացման հիմնավորումով նրան ազատ արձակեցին: Նկատենք, որ մահապատժի վճիռները հակազդեցություն առաջացրին ինչպես Թուրքիայի ներսում, այնպես էլ արտաքին աշխարհում: Դրանք կանխելու փորձեր արեցին Իսմեթ Ինյոնյուն, Ջեմալ Գյուրսելը, օտարերկրյա պետություններն իրենց դեսպանատների միջոցով հայտարարություններ արեցին, սակայն զինվորական վերնախավը չփոխեց իր որոշումը: Ավելի ուշ՝ 1960-ականների կեսերին, իշխանությունները համաներում հայտարարեցին և ազատ արձակեցին ԺԿ դատապարտված անդամներին: Իսկ 1990թ. Մենդերեսը, Զորլուն և Փոլաթքանը արդարացվեցին, նրանց վերաթաղեցին պետական արարողակարգի համաձայն:

3. 1961թ. սահմանադրությունը և անցումը քաղաքացիական կառավարման

Հեղաշրջումից հետո ԱՄԿ-ն ձեռնամուխ եղավ նոր սահմանադրության մշակման աշխատանքներին: ԱՄԿ առաջին որոշումներից մեկը Ստամբուլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի պրոֆեսորներին Անկարա հրավիրելն էր, որտեղ վերջիններս պետք է մշակեին նոր սահմանադրության տեքստը: Խմբի աշխատանքները ղեկավարում էր նույն

համալսարանի ռեկտոր Սըդըք Սամի Օնարը: Ստեղծվեց նաև սահմանադրության նախագիծ մշակող երկրորդ խումբը, որի կազմում ընդգրկված էին Անկարայի համալսարանի պրոֆեսորները՝ Յավուզ Աբադանի գլխավորությամբ: Վերոնշյալ երկու խմբերն առանձին սահմանադրության նախագծեր մշակեցին և ներկայացրին սահմանադիր ժողովի քննարկմանը:

1961թ. մայիսի 27-ին՝ ռազմական հեղաշրջման առաջին ամյակին, Սահմանադիր ժողովի կողմից ընդունվեց նոր սահմանադրությունը, և որոշում կայացվեց կազմակերպել սահմանադրական հանրաքվե: Հունիսի 9-ին տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեով ձայների մոտ 61% կողմ և 39% դեմ հարաբերակցությամբ ընդունվեց Թուրքիայի Հանրապետության երկրորդ սահմանադրությունը: Հատկանշական է, որ 11 վիլայեթներում ընտրողները դեմ էին քվեարկել սահմանադրության նախագծին: Իսկ ընտրողների մոտ 39%-ի դեմ քվեարկելը վառ ապացույցն էր այն բանի, որ հասարակությունը հավանություն չէր տալիս զինվորականների մի շարք քայլերին:

Նոր սահմանադրությամբ ԹԱՄԺ-ը բաժանվում էր երկու պալատների՝ ստորին պալատ, որը կոչվում էր Ազգային մեջլիս (Millet Meclisi) և վերին պալատ, որը կոչվում էր Հանրապետության սենատ (Cumhuriyet Senatosu): Ազգային մեջլիսը բաղկացած էր 450 պատգամավորից, որոնք ընտրվում էին 4 տարի ժամկետով: Սենատը կազմված էր 150 սենատորից, որոնց պաշտոնավարման ժամկետը 6 տարի էր, 2 տարին մեկ անգամ սենատի անդամների մեկ երրորդը վերընտրվում էր: Սենատի 15 անդամի նշանակում էր նախագահը:

Նոր սահմանադրությամբ հանրապետության նախագահն ընտրվում էր 7 տարի ժամկետով՝ ԹԱՄԺ անդամներից և ԹԱՄԺ երկու պալատների համատեղ նիստի ժամանակ: 1961թ. սահմանադրությամբ ստեղծվեցին նոր պետական մարմիններ՝ սահմանադրական դատարան, վերահսկիչ պալատ, պետական պլանավորման կազմակերպություն և այլն: Պարզեցվում էին կուսակցությունների և միությունների ստեղծումը, հավաքների և զանգվածային միջոցառումների, գործադուլների անցկացումը և արհմիությունների ու արհմիութենական համադաշնությունների ստեղծումը: Համալսարաններին տրվում էր ինքնավարություն:

1961թ. սահմանադրության 111-րդ հոդվածով ստեղծվեց Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը: ԱԱԽ-ն իր կազմի մեջ ընդգրկում էր հանրապետության նախագահին, վարչապետին, կառավարության որոշ անդամների և ԶՈՒ հրամանատարությանը: ԱԱԽ ստեղծումով բանակի վերնախավն իր համար ճանապարհ էր բացում դեպի մեծ քաղաքականություն: 1960-ական թթ. վերջերին ԱԱԽ-ն դարձել էր մի մարմին, որտեղ որոշվում էին երկրի բոլոր կարևորագույն խնդիրներն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության բնագավառում: ԱԱԽ-ի միջոցով, փաստորեն, երկրի բարձրաստիճան զինվորականությունն ուղղակիորեն սկսեց մասնակցություն ունենալ երկրի համար կարևորագույն խնդիրների քննարկմանը, ինչը խթանեց բանակի ղեկավարության քաղաքականացմանը:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ 1961թ. սահմանադրությունը Թուրքիայի համար աննախադեպ ազատություններ և ժողովրդավարական իրավունքներ էր հռչակում, ինչը նոր իրադրություն առաջ բերեց երկրի ներքաղաքական կյանքում:

1961թ. հոկտեմբերի 15-ին Թուրքիայում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ: Դեռ հունվարից թույլատրվել էր կուսակցությունների գործունեությունը, բացառությամբ ԺԿ-ի: Նախկին՝ ՀԺԿ-ի և ՀԳԱԿ-ի (Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցություն, Cumhuriyetçi Köylü Millet Partisi) կողքին, կարճ ժամանակահատվածում բացվեցին 10-ից ավելի նոր կուսակցություններ: Առավել ազդեցիկներից էին «Արդարություն» կուսակցությունը (ԱԿ, Adalet Partisi) և Նոր Թուրքիայի կուսակցությունը (ՆԹԿ, Yeni Türkiye Partisi): Այս երկու կուսակցությունները վայելում էին ԺԿ նախկին անդամների և համակիրների աջակցությունը, ավելին՝ ԺԿ որոշ անդամներ համալրել էին նորաստեղծ կուսակցությունների շարքերը:

ԱԿ հիմնադիրներից էր բանակի գլխավոր շտաբի նախկին պետ, զորացրված գեներալ Ռագըփ Գյումյուշփալան, ով դարձավ ԱԿ առաջին նախագահը: ԱԿ-ն ստացավ նաև նահանգային մտավորականության և հոգևորականության աջակցությունը:

ՆԹԿ-ն գլխավորեց տնտեսագետ Էքրեմ Ալիջանը, որը մինչև 1957թ. ԺԿ

անդամ էր: Ռազմական հեղաշրջումից հետո Ալիջանը մի քանի ամիս ԱՄԿ կառավարությունում զբաղեցնում էր ֆինանսների նախարարի պաշտոնը:

1961թ. հոկտեմբերի 15-ին տեղի ունեցան խորհրդարանի երկու պալատների ընտրությունները: Ընտրություններին մասնակցեց 4 կուսակցություն՝ ՀԺԿ, ԱԿ, ՀԳԱԿ և ՆԹԿ: Ընտրողների քվեները բաշխվեցին հետևյալ կերպ.

Կուս.	Ազգային մեջլիս		Սենատ		Ընդհանուր տեղերը
	Ձայների %-ը	Տեղերի քանակը	Ձայների %-ը	Տեղերի քանակը	
ՀԺԿ	36,7	173	37,2	36	209
ԱԿ	34,7	158	35,4	71	228
ՀԳԱԿ	13,9	54	13,4	16	70
ՆԹԿ	13,7	65	13,9	27	93
Անկախ.	0,8	-	2,9	-	-

Ընտրությունների արդյունքներն անակնկալ էին ՀԺԿ ղեկավար Ինյոնյուի և նրան աջակցող զինվորականների համար: Թվում էր, թե զինվորականները բոլոր հիմքերը ստեղծել էին ընտրություններին ՀԺԿ հաղթանակն ապահովելու համար, սակայն ընտրությունների արդյունքներն այլ բան էին վկայում: Ընտրություններից հետո զինվորական շրջանակներում կրկին սկսեցին քննարկվել ռազմական հեղաշրջում իրականացնելու հնարավորությունները, սակայն բանակի վերնախավի գործուն մասնակցությամբ հնարավոր եղավ կանխել նոր ռազմական հեղաշրջումը: Զինվորականների աջակցությամբ խորհրդարանի կողմից Թուրքիայի Հանրապետության 4-րդ նախագահ ընտրվեց Ջեմալ Գյուրսելը: Նոր նախագահի և զինվորականների մասնակցությամբ հնարավոր եղավ ընդհանուր հայտարարի բերել ՀԺԿ և ԱԿ ղեկավարներին և ստեղծել ՀԺԿ-ԱԿ կոալիցիոն կառավարությունը, որի վարչապետ դարձավ Իսմեթ Ինյոնյուն:

Հոկտեմբերի 24-ին ԱՄԿ-ն ինքնալուծարվեց, և նրա բոլոր անդամները, համաձայն սահմանադրության, ցմահ սենատորներ դարձան (այդ ժամանակ ԱՄԿ-ում 21 անդամ էր մնացել):

Թուրքիայի առաջին կոալիցիոն կառավարությունը երկար կյանք չունեցավ: ՀԺԿ-ԱԿ կոալիցիոն կառավարության կազմավորման հենց սկզբից

տարաձայնություններ սկսվեցին երկու կուսակցությունների միջև: Շուտով մեջլիսը վերածվեց կուսակցությունների բախման թատերաբեմի: Կոալիցիոն գործընկերների միջև լարվածությունը հասավ գագաթնակետին, երբ սկսեցին քննարկվել Ժողովրդավարական կուսակցության նախկին անդամներին համաներում շնորհելու հարցը և տնտեսական զարգացման «հնգամյա պլանը»: ԱԿ անդամները պնդում էին, որպեսզի ԺԿ բոլոր անդամներին ներում շնորհվի և վերջիններս ազատ արձակվեն: ՀԺԿ-ն կողմ էր մասնակի համաներմանը: Այս լարվածությունը նկատելի էր նաև հասարակության մեջ: Երկրում սկսվեցին ուսանողական բողոքի ակցիաներ, որոնք ժամանակ առ ժամանակ բախումներով էին ավարտվում: Այս իրավիճակում բանակում արմատական տրամադրված զինվորականների շրջանակում նոր ռազմական հեղաշրջում էր հասունանում, որը ղեկավարում էր Անկարայի ռազմական ակադեմիայի ղեկավար, գնդապետ Թալեաթ Այդեմիրը:

Գնդապետ Այդեմիրը 1960թ. ռազմական հեղաշրջման ակտիվ կազմակերպիչներից էր, սակայն հեղաշրջման իրականացման ժամանակ նա գտնվում էր Հարավային Կորեայում և այդ պատճառով չմտավ ԱՄԿ կազմի մեջ: Այդեմիրը, ինչպես «արմատականների» խմբի ներկայացուցիչները, գտնում էր, որ մայիսի 27-ի հեղաշրջումը չի հասել իր նպատակին և շեղվել է զինվորականների նախանշած ուղուց:

1962թ. փետրվարի 22-ին Այդեմիրի գլխավորությամբ տեղի ունեցավ ռազմական հեղաշրջման փորձ: Հեղաշրջման կազմակերպիչների կողմից հանդես էր գալիս մոտ 8 հազար զինվորական, որոնցից 500-ը՝ սպա: Սակայն երկրի քաղաքական և զինվորական իշխանությունները կարողացան ճնշել այն: Հաշվի առնելով բանակում հակաիշխանական տրամադրությունները՝ վարչապետ Ինյոնյուն որոշեց քրեական հետապնդման չենթարկել հեղաշրջման կազմակերպիչներին:

Այդեմիրի ձախողված հեղաշրջման փորձից հետո էլ շարունակում էր խորանալ լարվածությունը երկու հիմնական քաղաքական կուսակցությունների միջև, որն, ի վերջո, հանգեցրեց 1962թ. մայիսին կոալիցիայի կազմից ԱԿ անդամների դուրս գալուն: Երկրում սկսվեց կառավարական ճգնաժամ, որը հաղթահարվեց միայն հունիսի վերջին, երբ Ինյոնյուին հաջողվեց ՀԺԿ-ի շուրջը համախմբել ՆԹԿ և ՀԳԱԿ քաղաքական ուժերին և նոր

կոալիցիա ձևավորել: Այս կառավարությունը ևս երկար կյանք չունեցավ և գոյատևեց մինչև 1963թ. դեկտեմբերը: Այն ի զորու չեղավ թուլացնել երկրում առկա քաղաքական լարվածությունը, որը տարածվում էր նաև հասարակական տարբեր շերտերի վրա:

1963թ. մայիսի 20-ին Թուրքիայում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջման նոր փորձ, որը կրկին ղեկավարում էր Թալեաթ Այդեմիրը: Այս անգամ հեղաշրջման կազմակերպիչներին հաջողվում է գրավել մի քանի կարևոր հաստատություններ, այդ թվում՝ ռադիոկայանի շենքը: Սակայն իշխանություններին, վարչակարգին հավատարիմ զորքերի միջոցով, կրկին հաջողվեց ճնշել գնդապետ Այդեմիրի կազմակերպած հեղաշրջման փորձը: Այս անգամ իշխանությունները խիստ պատժամիջոցներ կիրառեցին հեղաշրջման մասնակիցների նկատմամբ: Գնդապետ Թալեաթ Այդեմիրը և մայոր Ֆեթհի Գյուրջանը ենթարկվեցին մահապատժի, հեղաշրջման 14 մասնակից դատապարտվեց ցմահ ազատազրկման, մի շարք զինվորականներ հեռացվեցին բանակից:

1963թ. լուծարվեց ՀԺԿ-ՆԹԿ-ՀԳԱԿ կոալիցիոն կառավարությունը, և Իսմեթ Ինյոնյուի գլխավորությամբ ստեղծվեց երրորդ կոալիցիոն կառավարությունը, որը կազմված էր ՀԺԿ-ից և անկախ պատգամավորներից: 1964թ. տեղի ունեցան սենատի մասնակի ընտրություններ, որոնցում ԱԿ-ը հաջողության հասավ՝ ավելացնելով իր պատգամավորների թվաքանակը: Այս ընտրություններից հետո ԹԱՄԺ-ում մեծամասնություն կազմեց ԱԿ-ը, ինչն էլ ավելի բարդացրեց Ինյոնյուի երրորդ կառավարության աշխատանքը: 1965թ. փետրվարին ընդդիմադիր կուսակցությունները դեմ քվեարկեցին բյուջեի նախագծին, ինչի արդյունքում կառավարությունը հրաժարական տվեց:

Նախագահ Գյուրսելի նախաձեռնությամբ 1965թ. փետրվարին ձևավորվեց նոր կառավարություն, որը ժամանակավոր բնույթ էր կրում և հիմնական խնդիրն էր նախապատրաստել նույն տարվա հոկտեմբերին կայանալիք խորհրդարանական ընտրությունները:

Հարկ է նշել, որ 1960-ականներին Թուրքիայից դեպի Եվրոպա սկսվեց աշխատանքային միգրանտների հոսք: Այսպես, Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում մասնատված, հիմնահատակ ավերված ու

հսկայական մարդկային կորուստներ կրած Գերմանիային արդեն 1950թ. հաջողվեց վերականգնել արդյունաբերության նախապատերազմյան մակարդակը, իսկ 1956թ. ավելացնել այն կրկնակի: Աշխատանքի ներքին շուկայում առաջացած բացը գերմանական իշխանությունները որոշեցին լրացնել ավելի թույլ զարգացած երկրների հետ հյուր-աշխատողներ (գերմ. Gastarbeiter) հրավիրելու վերաբերյալ միջպետական պայմանագրեր կնքելու միջոցով: Նման պայմանագիր Գերմանիան կնքեց Թուրքիայի հետ 1961թ. հոկտեմբերի 30-ին Անկարայում: 1950-ականների վերջին բնակչության արագ աճի, ահռելի չափերի հասնող գործազրկության, աղքատության տարածման, գյուղաբնակների հողազրկության, ռազմական ծախսերի մեծացման, տնտեսական և քաղաքական մի շարք խնդիրների պատճառով ծանր վիճակում գտնվող Թուրքիայի կառավարող շրջանակներին նման պայմանագիրը հնարավորություն էր տալու մի կողմից նվազեցնել գործազուրկների թիվը և էականորեն թուլացնել առկա սոցիալական լարվածությունը, մյուս կողմից՝ հարստացնել երկիրը արտերկրում աշխատող հայրենակիցների ուղարկած գումարներով, իսկ նրանց վերադարձից հետո Եվրոպայի առաջատար երկրում ձեռք բերված փորձը կիրառել սեփական տնտեսության մեջ: Այս պայմաններից ելնելով՝ թուրքական իշխանությունները համաձայնվեցին պայմանագիր կնքել ոչ միայն Գերմանիայի, այլև հետագա տարիներին՝ Բելգիայի, Հոլանդիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի, Մերձավոր Արևելքի նավթ արդյունահանող պետությունների և անգամ Ավստրալիայի հետ: 1960-ականներին Թուրքիայից սկսած արտագաղթի հետևանքով Եվրոպայում և մասնավորապես՝ Գերմանիայում ձևավորվեց թուրքական համայնք, որի թիվը, ըստ տարբեր հետազոտողների, ներկայումս միայն Գերմանիայում հասնում է մոտ 3 միլիոնի: Թուրքական համայնքն ավելի ուշ սկսեց ծառայել Թուրքիայի նաև լոբբիստական նպատակներին: Այդ գործընթացն առավել ցայտուն դրսևորվում է մեր օրերում:

4. Ներքաղաքական իրադրությունը 1960-ական թթ. երկրորդ կեսին և նոր քաղաքական-գաղափարական հոսանքների ձևավորումը

1965թ. հոկտեմբերի 10-ին Թուրքիայում անցկացված խորհրդարանական ընտրություններին մասնակցում էին տարբեր քաղաքական գաղափարախոսություն ունեցող կուսակցություններ, այդ թվում՝ Թուրքիայի աշխատավորական կուսակցությունը (ԹԱԿ, Türkiye İşçi Partisi), որը կոմունիստական գաղափարախոսություն կրող կուսակցություն էր: Ընտրություններին մասնակցող հիմնական քաղաքական ուժերն էին՝ ԱԿ, ՀԺԿ, ՆԹԿ, ՀԳԱԿ, ԹԱԿ, Ազգային կուսակցությունը (Millet Partisi):

Ընտրությունների արդյունքում վստահ հաղթանակ տարավ ԱԿ-ը, որն ընտրություններին մասնակցում էր կուսակցության նոր նախագահ Սուլեյման Դեմիրելի առաջնորդությամբ[16]: ԱԿ-ը խորհրդարանում ունենալով մեծամասնություն՝ կարողացավ հեղաշրջումից հետո առաջին անգամ ձևավորել միակուսակցական կառավարություն, որը գլխավորեց Ս. Դեմիրելը:

Դեմիրելի միակուսակցական կառավարությունը հիմնական ուշադրությունը սևեռեց երկրի տնտեսական զարգացման վրա: Կառավարությունը մեծ կարևորություն էր տալիս մասնավոր հատվածի զարգացմանը և արտասահմանյան ներդրումներին, ինչը նպաստեց երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: 1960-ական թթ. վերջերին Թուրքիայի տնտեսական զարգացման ցուցանիշը բավական բարձր էր, և նաև տնտեսական հաջողությունների շնորհիվ էր, որ այդ տարիներին ԱԿ-ը հետևողականորեն ամրապնդում էր իր իշխանությունը: Դրա խոսուն ապացույցն է, որ ԱԿ-ը սենատի և ՏԻՄ ընտրություններում ևս վստահ հաղթանակ տարավ:

Դեմիրելի իշխանության տարիներին ԱԿ-ը ուշադրություն դարձրեց իսլամական գործոնին, ինչն ունենում էր տարբեր դրսևորումներ՝ Կրոնի գոր-

16 ԱԿ նախագահ Ռ. Գյումյուշփալան մահացավ 1964թ., որից հետո կուսակցության նոր նախագահ ընտրելու անհրաժեշտություն առաջացավ: Կուսակցության ներսում երկու հիմնական թեկնածուների (Սադեթին Բիլգինչ և Սուլեյման Դեմիրել) պայքարից հաղթանակած դուրս եկավ 40-ամյա Դեմիրելը:

ծերով վարչության ֆինանսավորման ավելացումը, կրոնական ուսումնական հաստատությունների թվի մեծացումը, տարբեր կրոնական եղբայրությունների և միաբանությունների հետ սերտ համագործակցությունը և այլն:

1960-ական թթ. վերջերին ընդհանուր առմամբ ձևավորվեցին այն հիմնական քաղաքական-գաղափարական ուժերը, որոնց միջև ընթանալու էր ներքաղաքական պայքարը հաջորդ տասնամյակում՝ ՀԺԿ, ԱԿ, իսլամական, պանթյուրքիստական, ձախակողմյան շարժումները:

«Արդարություն» կուսակցությունը 1960-ական թթ. երկրորդ կեսին Թուրքիայում գործող ամենաազդեցիկ քաղաքական կուսակցությունն էր: 1969թ. ընտրություններին ԱԿ-ը հավաքեց ընտրողների մոտ 46,5% քվեն և ստացավ խորհրդարանում 252 մանդատ: Փաստորեն, ԱԿ-ը կրկին մեծամասնություն ունեցավ և միակուսակցական կառավարություն կազմեց Դեմիրելի գլխավորությամբ:

ԱԿ-ը աջ ուղղվածության քաղաքական կուսակցություն էր և համարվում էր ԺԿ քաղաքական ու գաղափարական ժառանգորդը: 1960-ական թթ. վերջերին Դեմիրելի համար կուսակցության ներսում որոշակի խնդիրներ առաջացան: Կուսակցական որոշ շրջանակներում դժգոհություններ կային նրա վարած տնտեսական քաղաքականությունից: Կուսակցության ներսում ձևավորվեց Դեմիրելին ընդդիմադիր քաղաքական թև, որը ղեկավարում էին Ազգային մեջլիսի նախագահ Ֆերուհ Բոզբեյլին և Սադեթին Բիլգիչը: Այդ հակասությունների արդյունքում ԱԿ 41 պատգամավոր և սենատոր լքեցին կուսակցությունը և 1970թ. դեկտեմբերին ստեղծեցին Ժողովրդավարական կուսակցությունը (Demokratik Parti), որի ղեկավար դարձավ Ֆ. Բոզբեյլին, տեղակալներ՝ Ս. Բիլգիչը և Յուքսել Մենդերեսը (Ադնան Մենդերեսի որդին): Սակայն Դեմիրելին հաջողվեց խորհրդարանում պահպանել ԱԿ մեծամասնությունը և շարունակել ղեկավարել կառավարությունը: Թվում էր, թե Դեմիրելին այլևս ոչինչ չի կարող խանգարել մինչև հաջորդ խորհրդարանական ընտրությունները ղեկավարել երկիրը, սակայն 1971թ. մարտի 12-ին Թուրքիայում զինվորականները իրականացրեցին ռազմական միջամտություն և իշխանությունից հեռացրեցին Դեմիրելին:

ՀԺԿ-ն 1960-ական թթ. ընտրությունների ժամանակ հետևողականորեն կորցնում էր իր ձայները: ԱԿ հեղինակության աճման ֆոնին այս

ձախողումները լուրջ մտահոգություններ առաջացրին կուսակցական շարքերում: Հատկապես 1965թ. ընտրություններից հետո սկսեցին ակտիվորեն քննարկել կուսակցության մեջ էական փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտությունը: Կուսակցության ներսում առաջացան երկու հիմնական խմբավորումներ, որոնց կարելի է անվանել կենտրոնամետներ և ձախակենտրոններ: Առաջին խմբավորումն առաջնորդում էր կուսակցության ազդեցիկ գործիչ Թուրհան Ֆեյզիօղլուն, իսկ ձախակենտրոնները համախմբված էին երիտասարդ Բյուլենթ Էջևիթի շուրջ: Ի վերջո, ոչ առանց Իսմեթ Ինյոնյուի գործուն աջակցության, Էջևիթը հաղթանակած դուրս եկավ այդ պայքարից. 1966թ. ՀԺԿ 18-րդ համագումարի ժամանակ նա ընտրվեց կուսակցության գլխավոր քարտուղար՝ առաջ քաշելով իր «կենտրոնից ձախ» ուղղությունը: 1967թ. սկզբին Ֆեյզիօղլուն իր համախոհների հետ միասին լքեց ՀԺԿ-ն (ՀԺԿ խմբակցության 48 պատգամավոր լքեց կուսակցությունը) և հիմնեց նոր՝ «Վստահություն» կուսակցությունը (Güven Partisi), որը հետագայում վերանվանվեց «Հանրապետական վստահություն» կուսակցություն (Cumhuriyetçi Güven Partisi): Այս իրադարձությունների արդյունքում ՀԺԿ-ն 1969թ. ընտրություններին մոտեցավ որոշակիորեն թուլացած վիճակում և ընտրություններին ստացավ ընտրողների ձայների 27,4%-ը (143 մանդատ): ՀԺԿ նախագահ Իսմեթ Ինյոնյուի և գլխավոր քարտուղար Բյուլենթ Էջևիթի միջև սկսված լարումը խորացավ և հանգուցալուծվեց Էջևիթի հաղթանակով: 34 տարի ՀԺԿ-ն ղեկավարած Ինյոնյուն 1972թ. մայիսին հրաժարական տվեց նախագահի պաշտոնից, իսկ նույն թվականի նոյեմբերին դուրս եկավ ՀԺԿ-ից ու մեկ տարի անց մահացավ[17]: ՀԺԿ նախագահ ընտրվեց Բյուլենթ Էջևիթը:

1960թ. ռազմական հեղաշրջումից հետո զինվորականները թեև հայտարարում էին քեմալիզմի սկզբունքներին վերադառնալու անհրաժեշտության մասին, այնուամենայնիվ, կրոնի հանդեպ վարած նրանց քաղաքականությունը բավարար խիստ և հետևողական չէր այն լայիցիզմի կաղապարներում պահելու համար: 1960թ. ռազմական հեղաշրջումից հետո արգելված ԺԿ քաղաքական ժառանգորդը հանդի-

17 Ինյոնյուի դին ամփոփվեց Անքարայում՝ Աթաթյուրքի դամբարանի դիմաց: Այդ վայրում ամփոփված են միայն Աթաթյուրքի և Ինյոնյուի մարմինները:

սացող ԱԿ-ը շարունակեց ԺԿ՝ կրոնի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը: 1960-ական թթ., պայմանավորված երկրի արագ արդյունաբերացմամբ, միջազգային տնտեսական զարգացումներով, սոցիալական տեղաշարժերով և ձախակողմյան ուժերի քաղաքական աշխուժացմամբ, ինչը խորացնում էր վախը կոմունիստական սպառնալիքի հանդեպ, տեղի ունեցավ իսլամի քաղաքականացում: Հիմնականում այդ իրողություններով էր պայմանավորված Թուրքիայի քաղաքական թատերաբեմում իսլամական կուսակցության ի հայտ գալը: 1970թ. Թուրքիայում քաղաքական իսլամի հիմնադիրներից մեկը՝ Նեջմեթին Էրբաքանը, ստեղծեց Ազգային կարգի կուսակցությունը (ԱԿԿ, Milli Nizam Partisi), որը, սակայն, երկար կյանք չունեցավ: Շուտով՝ 1971թ. մարտի 12-ի զինվորականության՝ քաղաքական կյանքին միջամտությունից հետո, ի թիվս մի շարք քաղաքական կուսակցությունների, զինվորականներն արգելեցին նաև ԱԿԿ գործունեությունը: 1971թ. մայիսի 20-ին սահմանադրական դատարանն արգելեց ԱԿԿ գործունեությունը՝ որակելով այն որպես հակասահմանադրական:

1972թ. հոկտեմբերին ԱԿԿ նախկին ղեկավարները՝ Ն. Էրբաքանի գլխավորությամբ, հիմնադրեցին «Ազգային փրկություն» կուսակցությունը (ԱՓԿ, Milli Selamet Partisi): Թեև ԱՓԿ ծրագրում լայիցիզմի սկզբունքի ուղղակի մերժում չկար, սակայն ծրագրի 6-րդ բաժնում լայիցիզմի սկզբունքը ենթարկվում էր խիստ քննադատության: ԱՓԿ ղեկավարության կողմից քննադատության էին ենթարկվում երկրի քաղաքական ուժերը և նրանց վարած թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությունը: Արտաքին քաղաքականության բնագավառում Էրբաքանը և նրա կուսակիցները նշում էին, որ Թուրքիան պիտի իր հայացքն Արևմուտքից ուղղի դեպի Արևելք: 1973-1980թթ. Էրբաքանի կուսակցության անդամներն ու համակիրներն ընդարձակում են ազդեցության շրջանակը՝ տեղեր գրաղեցնելով խորհրդարանում, վարչական մարմիններում, կրթական հաստատություններում, գործարար աշխարհում:

Պանթյուրքիստական շարժում: 1960թ. մայիսի 27-ին ռազմական հեղաշրջման կազմակերպիչների մեջ իր պանթյուրքիստական հայացքներով աչքի էր ընկնում գնդապետ Ալփարսլան Թյուրքեշը, որը հետագա գրեթե 4 տասնամյակների ընթացքում ղեկավարելու էր պանթյուրքիստական շարժումը Թուրքիայում:

1965թ. Ա. Թյուրքեշն արմատականների խմբի որոշ անդամների հետ մտավ Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցության (Cumhuriyetçi Köylü Millet Partisi) մեջ և շուտով դարձավ այդ կուսակցության նախագահ՝ ամբողջովին վերափոխելով կուսակցության քաղաքական և գաղափարական ուղղությունները: 1969թ. այն վերանվանվեց «Ազգայնական շարժում» կուսակցության (ԱՇԿ, Milliyetçi Hareket Partisi): ԱՇԿ-ն թուրքական ազգայնականության առավել ծայրահեղական՝ պանթյուրքիստական ուղղության հետևորդ էր: Ա. Թյուրքեշն իր «Հիմնական տեսակետներ» (Temel Görüşler) աշխատության մեջ նշում է, որ իրենց գլխավոր նպատակն է նախ հզորացնել Թուրքիան, իսկ հետագայում արդեն հզոր Թուրքիայի դրոշի տակ միավորել ամբողջ թյուրքական աշխարհը: Քննարկվող ժամանակաշրջանում թյուրքեշականների կողմից այդ ծրագրերի իրականացման գլխավոր խոչընդոտ համարվում էր կոմունիզմը:

1960-ական թթ. վերջերին Թյուրքեշի վերահսկողության տակ սկսեցին գործել «գաղափարապաշտների» (ülkücüler) կազմակերպությունները, որոնք ղեկավարվում էին ԱՇԿ-ի կողմից: «Գաղափարապաշտների» կազմակերպությունները բաղկացած էին առավելապես երիտասարդներից և սկզբնական փուլում զբաղված էին պանթյուրքիստական գաղափարախոսության քարոզչությամբ: 1970-ական թթ. ներգրավվելով ահաբեկչական պայքարի մեջ՝ «գաղափարապաշտների» կազմակերպությունները վերածվել էին հզոր բանակի, որոնք իրենց կազմում ունեին ավելի քան 100 հազար անդամ:

Մանրամասն հյուսված աստիճանակարգային ցանցը, որի մեջ մտնում էին թե՛ ԱՇԿ-ն, թե՛ «գաղափարապաշտների» կազմակերպությունները և թե՛ ԱՇԿ վերահսկողության տակ գտնվող զինված գրոհային ջոկատները (կոմանդոսների ջոկատները), անվանվում են «գորշ գայլերի» (bozkurtlar) հասարակական-քաղաքական շարժում, իսկ Թյուրքեշի պանթյուրքիստական գաղափարախոսության բոլոր համակիրներն իրենց «գորշ գայլեր» են կոչում: «Գորշ գայլ», ինչպես նաև «բաշբուղ» (başbuğ - բառացի՝ առաջնորդ, այդպես էին անվանում Թյուրքեշին) եզրերը լայն

գործածության մեջ դրեց Թյուրքեշը: Ի դեպ, այդ եզրերն օգտագործվում էին նաև Էնվերի կողմից:

Ձախակողմյան շարժումներ: 1960-ական թթ. ձախակողմյան շարժումը Թուրքիայում վերելք էր ապրում, որին նպաստեց 1961թ. սահմանադրությունը՝ ամրագրելով Թուրքիայի համար աննախադեպ ազատություններ և ժողովրդավարական իրավունքներ: Առաջին անգամ ձևավորվեցին օրինական գործող ձախակողմյան կուսակցություններ և կազմակերպություններ, որոնցից առավել ազդեցիկ էր 1961թ. ստեղծված Թուրքիայի աշխատավորական կուսակցությունը (ԹԱԿ): ԹԱԿ-ն արդեն 1965թ. համապետական խորհրդարանական ընտրությունների ժամանակ նշանակալի հաջողությունների հասավ՝ խորհրդարանում զբաղեցնելով 15 պատգամավորական մանդատ: Ձախ կուսակցության նման հաջողությունը որոշակի անհանգստություն առաջացրեց երկրի իշխանությունների և Թուրքիայի արևմտյան դաշնակիցների շրջանում: Արդեն 1968թ. ընտրական օրենսգիրքը որոշակի փոփոխությունների ենթարկվեց իշխանությունների կողմից, որը նպատակ էր հետապնդում խոչընդոտել փոքր կուսակցությունների մուտքը խորհրդարան և, ըստ էության, ուղղված էր հատկապես ձախ կուսակցությունների դեմ: Այդ պատճառով ԹԱԿ-ը 1969թ. խորհրդարանական ընտրություններում հավաքեց գրեթե նույն քանակությամբ քվեներ, որքան 1965թ., սակայն ԹԱՄԺ-ում ունեցավ ընդամենը 2 պատգամավոր:

Թուրքիայում 1970-ական թթ. ձախ շարժման առաջատար ուժը ԴԻՍԿ-ն էր (DISK – Devrimci Işçi Sendikları Konfederasyonu, Հեղափոխական աշխատավորների արհմիությունների համադաշնություն), որը ձախ ուղղվածություն ունեցող արհմիությունների խոշորագույն համադաշնություն էր: 1967թ. մի քանի տասնյակ արհմիություններ, դուրս գալով Թուրքիայի արհմիությունների ամենախոշոր համադաշնության՝ Թյուրք-Իշ-ի (Türk-İş) կազմից, ստեղծեցին ԴԻՍԿ-ը: ԴԻՍԿ-ը, քննադատելով Թյուրք-Իշ-ին ԱՄՆ շահերին ծառայելու համար, նպաստում էր աշխատավորների քաղաքականացմանը՝ համագործակցելով Թուրքիայի ձախ կազմակերպությունների հետ: ԴԻՍԿ-ը 1970-ական թթ. վերջերին իր կազմի մեջ ընդգրկում էր ավելի քան 500 հազար անդամ, որի շնորհիվ արհմիութենական շարժման գլխավոր նախաձեռնող ուժը դարձավ:

Ձախակողմյան հոսանքները սրընթաց տարածվեցին հատկապես ուսանողության մեջ, որի ընդհանուր թիվը 1960-ական թթ. կազմում էր մոտ 600 հազար: 1960-ական թթ. կեսերին ընդհանուր առմամբ ավարտվեց գաղափարական և քաղաքական բևեռացման գործընթացն ուսանողության մեջ: Երիտասարդները հիմնականում բաժանվեցին երկու հակադիր ճամբարի՝ աջերի և ձախերի:

Ուսանողական երիտասարդության ձախ քաղաքական կողմնորոշում ունեցող թևը գլխավորապես բաժանված էր երկու խմբի՝ ձախ կենտրոնամետների և սոցիալիստների: Առաջին խումբը ՀԺԿ նոր՝ «կենտրոնից ձախ» ուղղության կողմնակիցներն էին, որոնք թեև քննադատում էին գործող կարգը, այնուամենայնիվ, դեմ էին սոցիալիստական կարգերի հաստատմանը: Սոցիալիստներն ավելի արմատական էին տրամադրված և 1960-ական թթ. սատարում էին ԹԱԿ քաղաքական և գաղափարական հիմնական դրույթներին: ԹԱԿ երիտասարդական կազմակերպություններին անդամակցությունից բացի նրանք գործուն մասնակցություն էին ունենում ուսումնական հաստատություններում գործող գաղափարական ակումբներում՝ «Մտքերի ակումբներ»: 1965թ. բազմաթիվ ուսանողական գաղափարական խմբակների հիման վրա ստեղծվեց «Մտքերի ակումբների դաշնությունը» (ՄԱԴ), որի տպագրական մարմինը դարձավ «Դյոնուշում» (Dönüşüm- Շրջադարձ) թերթը: Գաղափարական ակումբներում Մաո Ցզե Դունի, Լենինի, Տրոցկու տեսական դրույթների հետ մեկտեղ որոշակի ազդեցություն ունեին Հերբերտ Մարկուզեի գաղափարական դրույթները (ֆրանկֆուրտյան դպրոց), որոնք, անկասկած, նպաստում էին երիտասարդության ծայրահեղականացմանը:

1969թ. ՄԱԴ հիմքի վրա ստեղծվեց Թուրքիայի հեղափոխական երիտասարդության դաշնությունը (Türkiye Devrimci Gençlik Federasyonu, ԴԵՎ-ԳԵՆՉ): Արդեն 1970-ական թթ. Թուրքիայում գործում էին մի քանի տասնյակ ձախակողմյան ծայրահեղական կազմակերպություններ, որոնց գլխավոր նպատակը զինված հեղափոխությունն էր:

1969թ. փետրվարի 16-ին Ստամբուլում ձախակողմյան երիտասարդական կազմակերպությունների ցույցի ժամանակ նրանց վրա զինված

հարձակում տեղի ունեցավ աջ ծայրահեղական երիտասարդների կողմից, ինչի արդյունքում երկու երիտասարդ զոհվեց, մոտ 200 հոգի էլ վիրավորվեց: Այդ օրը թուրքական պատմության մեջ հայտնի է «արյունոտ կիրակի» անվամբ:

5. 1971թ. մարտի 12-ի ռազմական միջամտությունը

1970-1971թթ. երկրում ճգնաժամային իրավիճակ էր ստեղծվել: Սրվել էին սոցիալ-տնտեսական խնդիրները. գործազրկությունը հատել էր 2 մլն-ի սահմանագիծը: Մեծացել էին ուրբանիզացիայի ծավալները, և շատերը գյուղերից քաղաք էին տեղափոխվում աշխատանք գտնելու ակնկալիքով, սակայն հիմնականում համալրում էին գործազուրկների շարքերը: Ուրբանիզացիան ուղեկցվում էր «գեջեքոնդուների» կտրուկ աճով: Երկրում մեծապես ակտիվացել էր ձախակողմյան շարժումների գործունեությունը, որոնց միջամտությամբ կազմակերպվում էին աննախադեպ գործադուլային ակցիաներ երկրի ամբողջ տարածքում: 1960թ. վերջերից սկսած՝ երկրում ավելի էր խորանում հասարակության բևեռացման և արմատականացման գործընթացը: 1970-1971թթ. գաղափարախոսական պայքարն ուղեկցվում էր ծայրահեղական դրսևորումներով:

Այս պայմաններում, 1971թ. մարտի 12-ին Թուրքիայում տեղի ունեցավ ռազմական միջամտություն, որը պատմության մեջ մտավ «հուշագրային հեղաշրջում» անվամբ: Թուրքիայի ԶՈՒ հրամանատարությունը՝ գլխավոր շտաբի պետ Մեմդուհ Թաղմաչի գլխավորությամբ, հանրապետության նախագահ Ջևդեթ Սունային[18] ներկայացրեց հուշագիր, որով պահանջվում էր կառավարության հրաժարականը՝ սպառնալով հակառակ դեպքում իր ձեռքը վերցնել իշխանությունը: Զինվորականների հուշագրի տեքստը հեռարձակվեց նաև ռադիոյով: Նույն օրը Սուլեյման Դեմիրելի ղեկավարած կառավարությունը հրաժարական տվեց և դադարեցրեց գործունեությունը:

18 1966թ. մարտի 28-ին հիվանդության պատճառով հրաժարական տվեց երկրի նախագահ Ջեմալ Գյուրսելը (Գյուրսելը մահացավ 1966թ. սեպտեմբերի 14-ին՝ 71 տարեկան հասակում): 1966թ. մարտի 28-ին ԹԱՄԺ-ը Թուրքիայի Հանրապետության 5-րդ նախագահ ընտրեց ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ Ջևդեթ Սունային:

Թուրքիայի 11 նահանգներում Ազգային անվտանգության խորհրդի կողմից ռազմական դրություն հայտարարվեց, որն ամեն երկու ամիսը մեկ երկարացվում էր և շարունակվեց մոտ երկու տարի:

«Մարտի 12-ի» ռազմական միջամտության պատճառները կարելի է բաժանել հիմնականում երկու խմբի՝ հասարակական և զինվորականությանը հուզող պատճառներ: Հասարակական պատճառներից կարելի է առանձնացնել երկրում ծայրահեղականության դրսևորումների ահագնացումը, գործադուլային շարժումների տարածումը, ձախակողմյան կազմակերպությունների ակտիվ գործունեությունը, ահաբեկչությունը, որոնք խորապես անհանգստացնում էին թուրքական զինվորական վերնախավին:

Զինվորականությանը հուզող պատճառները քննարկելիս պետք է ընդգծել, որ «մարտի 12-ի» կազմակերպիչների առաջնային նպատակներից էր նաև ցածր զինվորական աստիճան ունեցող սպաների կողմից նախապատրաստվող նախաձեռնողական ռազմական հեղաշրջման կանխումը: 1960-ական թթ. վերջերին երկրում սկսեց գործել գաղտնի խմբավորում, որը ռազմական հեղաշրջում էր նախապատրաստում: 1971թ. սկզբին այդ կազմակերպությունը զգալի ուժ և ռեսուրսներ ուներ հեղաշրջում իրականացնելու համար: Սակայն զինվորական ղեկավարությանը հայտնի դարձան կազմակերպության ծրագրերը, և բանակի վերնախավը «մարտի 12-ի միջամտության» միջոցով կարողացավ խոչընդոտել այդ ծրագրերին: Մարտի 12-ի «միջամտությունից» անմիջապես հետո բանակից հեռացվեցին մեծ թվով սպաներ, սպայական կազմում բազմաթիվ տեղափոխություններ կատարվեցին:

Այդպիսով, եթե մայիսի 27-ի հեղաշրջումը կազմակերպված էր հիմնականում միջին տարիքի արմատական զինվորականների կողմից, ապա մարտի 12-ի միջամտությունը միտված էր կանխելու նրանց քաղաքական հավակնությունները: 1971թ. հեղաշրջման նախապատրաստումը, փաստորեն, արմատականների վերջին փորձն էր՝ ավարտին հասցնելու «մայիսի 27-ին» սկսած իրենց գործը: Թուրքիայի արմատական սպաները, ի տարբերություն արևելյան որոշ երկրների, որտեղ նմանօրինակ շարժումները հաջողության հասան, չկարողացան համախմբվել և ուժերի ճիշտ վերադասավորում անել: Խոշոր կապիտալը, բանակի ղեկավարությունը

և կուսակցությունները կարողացան լուրջ դիմադրություն ցուցաբերել և հաղթանակած դուրս գալ այդ պայքարից:

«Հուշագրային հեղաշրջումից» անմիջապես հետո նախագահ Սունայը վարչապետ նշանակեց ՀԺԿ նախկին անդամ Նիհաթ Էրիմին: Էրիմի կառավարությունն իր գործունեության հիմնական նպատակ դարձրեց, մի կողմից՝ ձախակողմյան շարժումները թուլացնելը, մյուս կողմից՝ այն պատճառները վերացնելը, որոնք հանգեցրին Թուրքիայում ձախակողմյան շարժումների զարգացմանը: Ձախակողմյան ծայրահեղականների հանդեպ զանգվածային ձերբակալումներ և խիստ պատժամիջոցներ կիրառեցին: Արգելվեց ԴԵՎ-ԳԵՆՉ-ի գործունեությունը, նրա 229 անդամ դատապարտվեց, որոնցից մի քանիսը՝ մահապատժի: Նրանց մեջ էր նաև Թուրքիայի ժողովրդական ազատագրական բանակի (Türkiye Halk Kurtuluş Ordusu) ղեկավար Դենիզ Գեզմիշը: Զինվորականների կողմից ձախակողմյան շարժումների դեմ պատժամիջոցներն ահագնացող չափերի հասան հատկապես 1971թ. մայիսին Ստամբուլում տեղի ունեցած Իսրայելի գլխավոր հյուպատոս Էրայիմ Էլրոմի սպանությունից հետո, որը կազմակերպել էին ձախակողմյան ծայրահեղական խմբավորումները: Ավելի քան 5 հազար հոգի ձերբակալվեց, այդ թվում՝ առաջատար մտավորականներ (գրողներ, դասախոսներ, լրագրողներ), ԹԱԿ ղեկավարությունը, բազմաթիվ արհմիութենական գործիչներ և այլն:

1971-1973թթ. ընկած ժամանակահատվածում, թեպետ շարունակում էին գործել խորհրդարանը և քաղաքացիական կառավարությունը, սակայն, ըստ էության՝ երկրի ամբողջ իշխանությունը գտնվում էր բանակի անմիջական հսկողության ներքո: Եվ եթե առաջին ռազմական հեղաշրջումից հետո երկրում առաջ եկան Թուրքիայի համար աննախադեպ ժողովրդավարական ազատություններ, ապա արդեն 1971թ. զինվորականների «միջամտությունը» միտված էր սահմանափակել այդ ազատությունները, որոնք, ըստ բարձրաստիճան զինվորականության, նպաստում էին որոշ ուժերի «քայքայիչ գործունեությանը»: 1971-73թթ. ժամանակահատվածում ընդհանուր առմամբ փոփոխության ենթարկվեց սահմանադրության մոտ 30%-ը (այդ պատճառով որոշ հետազոտողներ օգտագործում են «1971թ. սահմանադրություն» եզրը): Չնայած զինվորական իշխանությունների վերահսկողությամբ կատարված ազատությունների սահմանափակմանը, այնուամենայնիվ, Թուրքիայի սահմանադրությունը պարունակում էր բազմաթիվ ժողովրդավարական դրույթներ, որոնց շրջանակներում էլ ընթացան քաղաքական գործընթացները 1970-ական թթ.:

6. Անցում քաղաքացիական կառավարման

1973թ. հոկտեմբերին Թուրքիայում տեղի ունեցան համապետական խորհրդարանական ընտրություններ, որոնց ժամանակ ի դերև ելան 1970-ական թթ. երկրի քաղաքական թատերաբեմում գործող հիմնական քաղաքական կուսակցությունների ակնկալիքները: Ոչ մի կուսակցություն ընտրություններում չստացավ ընդհանուր ձայների կեսից ավելին և չկարողացավ միանձնյա կառավարություն ձևավորել: Ընտրությունների արդյունքում 450 պատգամավորական տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ՝ ՀԺԿ-ն ստացավ 185, ԱԿ-ն՝ 149, «Ազգային փրկություն» կուսակցությունը (ԱՓԿ)՝ 48, ԺԿ-ն՝ 45, «Հանրապետական վստահություն» կուսակցությունը (ՀՎԿ)՝ 13, ԱՇԿ-ն՝ 3 և այլն: Ընտրությունների արդյունքում Թուրքիայում սկսվեց կոալիցիաների ժամանակաշրջանը:

Թուրքիայում երկու խոշորագույն կուսակցությունների՝ ԱԿ-ի և ՀԺԿ-ի միջև եղած տարաձայնություններն ու անհանդուրժողականության մթնոլորտը գործնականում անհնար էին դարձնում նրանց միջև քաղաքական դաշինքը, և այդ իրողություններում ԱՓԿ-ն վճռորոշ դեր ունեցավ կոալիցիոն կառավարություն կազմավորելու հարցում: 1974թ. կազմավորվեց ՀԺԿ-ԱՓԿ կոալիցիոն կառավարությունը, որտեղ Էջևիթը զբաղեցնում էր վարչապետի, Էրբաքանը՝ փոխվարչապետի պաշտոնը:

ՀԺԿ-ԱՓԿ կոալիցիան աննախադեպ երևույթ էր Թուրքիայի պատմության մեջ. ՀԺԿ-ն, որի իշխանության օրոք դաժանորեն ճնշվում էին կրոնական շարժումները, այժմ կոալիցիոն կառավարություն էր կազմում իսլամամետ կուսակցության հետ: Կուսակցությունների միջև գոյություն ունեցող բազմաթիվ հակասություններն այդ դաշինքը դարձրին կարճատև, և այն գոյատևեց ընդամենը 10 ամիս: Պետք է նշել, որ ՀԺԿ-

ԱՓԿ կոալիցիոն կառավարությունն ի սկզբանե դատապարտված էր անհաջողության, քանի որ, նախ՝ իսլամամետ և ձախ կենտրոնամետ կուսակցությունների դաշինքն առաջացրեց Թուրքիայի զինվորական շրջանակների և արևմտյան դաշնակիցների դժգոհությունը, և որ ամենակարևորն է, հենց իրենց՝ կոալիցիայի անդամ կուսակցությունների միջև գոյություն ունեին բազմաթիվ հակասություններ:

1974թ. ամռանը Թուրքիայի ռազմական գործողությունները Կիպրոսում, որոնց արդյունքում Կիպրոսի հյուսիսային հատվածը զավթվեց Թուրքիայի կողմից, ՀԺԿ-ի և ԱՓԿ-ի միջև նոր հակասություններ առաջացրին: Ն. Էրբաքանը քննադատում էր Բ. Էջևիթին՝ ընդգծելով ամբողջ կղզին գրավելու անհրաժեշտությունը, իսկ վերջինս դեմ էր նման գործողություններին՝ նշելով, որ այն հնարավոր չի լինի հիմնավորել միջազգային հանրության առջև: 1974թ. սեպտեմբերին Բ. Էջևիթը, օգտվելով այն հանգամանքից, որ Կիպրոսի հյուսիսային հատվածում թուրքական բանակի գործողությունները նպաստել էին իր և ՀԺԿ վարկանիշի կտրուկ աճին[19], փորձեց ձերբազատվել անցանկալի գործընկերոջից և հրաժարական տվեց՝ վաղաժամկետ ընտրություններ անցկացնելու ակնկալիքով, որտեղ ՀԺԿ բացարձակ հաղթանակն անխուսափելի էր թվում: «Կենտրոնից ձախ» ուղղվածության կուսակցության նմանօրինակ ծրագրերն անհանգստացրին ոչ միայն «աջ ուղղվածության» կուսակցություններին, այլև լուրջ մտահոգություններ առաջացրին թուրքական բանակի վերնախավի շրջանում: Վերջիններիս «խրախուսմամբ» Ս. Դեմիրելին հաջողվեց իր շուրջը համախմբել խորհրդարանական որոշ ուժերի և ստանալ ձայների անհրաժեշտ քանակ՝ ԹԱՄԺ-ում մեծամասնություն ձևավորելու համար: Աջերի համախմբման գործում նշանակալի դերակատարություն ունեցավ նաև երկրի նախագահ Ֆահրի Քորություրքը[20]:

19 Կիպրոսի նվաճումից հետո թուրքական մամուլի հրապարակումներում Էջևիթին սկսեցին կոչել «Կիպրոսի նվաճող» (Kıbrıs fatihi) և «Երկրորդ Աթաթյուրք» (İkinci Atatürk):

20 Նախագահական լիազորությունների ավարտից հետո՝ 1973թ. մարտի 28-ին, Ջ. Սունայը հրաժեշտ տվեց նախագահի պաշտոնին: Ապրիլի 6-ին Թուրքիայի վեցերորդ նախագահ ընտրվեց նախկին զինվորական, Խորհրդային Միությունում և Իսպանիայում Թուրքիայի նախկին դեսպան Ֆահրի Քորություրքը: Ի դեպ, 1964թ. մարտին դեսպանի պաշտոնում Ֆ. Քորություրքն այցելել է Խորհրդային Հայաստան, շրջել մի շարք վայրերում և գրառում թողել Մատենադարանի հուշամատյանում:

ԱԿ-ԱՓԿ-ԱՇԿ-ՀՎԿ աջակողմյան կուսակցությունների և անկախ պատգամավորների միավորմամբ ծնվեց Ազգայնական ճակատ (Milliyetçi Cephe, ԱՃ) կոալիցիոն կառավարությունը (31.03.1975-21.06.1977թթ.)՝ վարչապետ Ս. Դեմիրելի, փոխվարչապետեր Ն. Էրբաքանի,թ. Ֆեյզիողլուի և Ա. Թյուրքեշի գլխավորությամբ: ԱՃ-ը, ըստ էության, նպատակ չէր հետապնդում թուլացնել լարվածությունը երկրում, վերացնել սոցիալ-տնտեսական դժվարությունները, այլ ԱՃ գործունեության հիմնական թիրախ դարձավ ձախերի դեմ պայքարը: Հակակոմունիստական ալիքի վրա ձևավորված ԱՃ կառավարությունը նոր պայքար սկսեց ձախակողմյան շարժումների դեմ՝ ուժեղացնելով ճնշումները նրանց նկատմամբ: ԱՃ վարած քաղաքականության արդյունքում խորանում էր երկրի բևեռացումն աջերի և ձախերի միջև, ինչն, ի վերջո, հանգեցրեց երկրում լայնածավալ ահաբեկչական ալիքի պոռթկմանը: 1970-ական թթ. վերջերից Թուրքիան փաստացի գտնվում էր քաղաքացիական պատերազմի իրավիճակում:

7. «Գորշ գայլերի» ահաբեկչական գործունեությունը 1970-ական թթ.

1970-ական թթ. վերջերին ահաբեկչությունը Թուրքիայում աննախադեպ ծավալներ էր ընդունել և միտում ուներ աճելու. եթե 1978թ. Թուրքիայում ահաբեկչության զոհ է դարձել 879, 1979-ին՝ մոտ 1200 մարդ, ապա միայն 1980թ. առաջին 8 ամիսների ընթացքում (մինչև սեպտեմբերի 12-ը) զոհերի թիվը գերազանցում էր 2000-ը:

1970-ական թթ. Թուրքիայում ահաբեկչության գլխավոր նախաձեռնողներն ազգայնամոլական «գորշ գայլեր» և ձախակողմյան ծայրահեղական ուժերն էին: Թեև զինվորական հրամանատարության կողմից, ի թիվս ձախակողմյան ծայրահեղական կազմակերպությունների և «գորշ գայլերի», որպես ահաբեկչության կազմակերպիչներ նշվում էին նաև արմատական իսլամական կազմակերպությունները և քրդական շարժումները, սակայն քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայում արմատական իսլամական կազմակերպությունները թույլ էին, իսկ քրդա-

կան շարժումները հիմնականում հանդես էին գալիս ձախակողմյանների հետ միասին և ներգրավված էին այդ շարժումների մեջ:

«Գորշ գայլերի» կազմավորման և հզորացման գործընթացին մեծապես նպաստեցին երկրի ուժային կառույցները և արևմտյան երկրների գաղտնի ծառայությունները: ԱՄՆ նախաձեռնությամբ ՆԱՏՕ անդամ երկրներում ստեղծվեցին «կոնտրգերիլաների» (Counter Guerrilla - հակապարտիզանական) գաղտնի կազմակերպություններ, որոնց գլխավոր նպատակն էր «հակապարտիզանական» պայքար ծավալել ձախակողմյան շարժումների դեմ և «ամեն գնով» խոչընդոտել դրանց զարգացմանը: Թուրքիայում «կոնտրգերիլաների» գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվեց Հատուկ պատերազմի բաժինը (ՀՊԲ, Özel Harp Dairesi), որը գաղտնի կառույց էր և գործում էր սկզբում ՄԻԹ-ի (Milli İstihbarat Teşkilâtı - Ազգային հետախուզական կազմակերպություն), իսկ հետագայում՝ գլխավոր շտաբի ենթակայության տակ: ՀՊԲ-ն, ըստ էության, դարձավ թուրքական «խորքային պետության» հիմնասյունը և ղեկավարվում էր բարձրաստիճան զինվորականների կողմից:

Ընդհանուր թշնամու գործոնը՝ ի դեմս ձախակողմյան շարժումների, անխուսափելի էր դարձնում «գորշ գայլերի» և ՀՊԲ համագործակցությունը: ՀՊԲ-ն «գորշ գայլերին» դիտում էր որպես միջոց՝ ձախակողմյան շարժումների դեմ պայքարելու համար և սկսեց նրանց օգտագործել, այսպես կոչված, սև աշխատանք կատարելու համար: 1960-ականների վերջին ՀՊԲ օժանդակությամբ ստեղծվեցին «գորշ գայլերի» «կոմանդոսների» ճամբարները, որոնք վճռական դեր խաղացին «գորշ գայլերի» ահաբեկչական գործունեության համար: Այդ ճամբարներում պատրաստություն էին անցնում «գորշ գայլերի» գրոհայինները՝ «կոմանդոսները», որտեղ նրանց վարժեցնում էին թե ֆիզիկապես, թե գաղափարապես, թե հոգեպես: Հատուկ ուշադրություն էր դարձվում հատկապես «կոմանդոսների» գաղափարական պատրաստվածությանը՝ նրանց մեջ սերմանելով պանթյուրքիստական գաղափարախոսություն: 1970-ական թթ. վերջերին Թուրքիայում 28 այդպիսի ճամբար կար:

«Գորշ գայլերի» կարգավիճակը կտրուկ փոխվեց 1970-ական թթ. կեսերից, երբ ԱՇԿ-ն 1975թ. Ազգայնական ճակատ իշխող կոալիցիայի մաս կազմեց, և Ա. Թյուրքեշը դարձավ փոխվարչապետ: Գտնվելով իշխանական կոալիցիայում՝ Թյուրքեշն առավելագույնս օգտագործեց իշխանական լծակներն իր կուսակցության հզորացման համար: «Բաշբուղն» ամեն կերպ աջակցում էր իր կուսակիցների՝ պետական մարմիններ ներթափանցմանը, որի արդյունքում 1970-ական թթ. կեսերից «գորշ գայլերը» հայտնվեցին պետական գրեթե բոլոր կառույցներում: Թյուրքեշը հատկապես խթանում էր «գորշ գայլերի» ուժային կառույցներ «ներխուժման» գործընթացը: 1970-ական թթ. վերջերին մեծ թվով «գորշ գայլեր» ներթափանցեցին ոստիկանական համակարգ, բանակ և անվտանգության մարմիններ:

«Գորշ գայլերը», բավարար չհամարելով կառավարության կողմից «կոմունիստների» (բոլոր ձախակողմյան շարժումները «գորշ գայլերը» կոմունիստական էին համարում) դեմ կազմակերպվող միջոցառումները, պայքարը դուրս բերեցին փողոց՝ փորձելով ահաբեկչական ու սադրիչ գործողություններով պայքարել ձախակողմյան շարժումների հզորացման դեմ: 1970-ական թթ. երկրորդ կեսին «գորշ գայլերի» կազմակերպած ամենազանգվածային ահաբեկչական գործողությունը տեղի ունեցավ 1977թ. մայիսի 1-ին: Աշխատավորության մայիսմեկյան օրվա կապակցությամբ ձախակողմյան կազմակերպությունների կողմից Թաքսիմի հրապարակում կազմակերպված ցույցի ժամանակ «գորշ գայլերն» իրականացրին ահաբեկչական ու սադրիչ գործողություններ, որոնց արդյունքում զոհվեց 34, վիրավորվեց 100-ից ավելի մարդ: 1977թ. մայիսի 1-ի դեպքերը պատմության մեջ հայտնի են «արյունոտ երկրորդ կիրակի» անվամբ:

1978թ. հունվարին Էջևիթի կառավարության կազմավորումից հետո «գորշ գայլերի» մարտավարությունը որոշակի փոփոխության ենթարկվեց: «Գորշ գայլերն» ամեն կերպ փորձում էին իրենց ահաբեկչական ու սադրիչ գործողություններով այդ պայքարը դարձնել ավելի զանգվածային՝ նպատակ հետապնդելով երկրում քաոսային վիճակ ստեղծել և ապակայունացնել ներքին դրությունը: Դա հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ արդեն 1978թ. թուրքական բանակի վերնախավը նախապատրաստվում էր ռազմական հեղաշրջման, և բարձրաստիճան զինվորականությունը ցանկանում էր քաոսային վիճակ ստեղծել

երկրում՝ հետագայում ռազմական հեղաշրջումն արդարացնելու և բանակը որպես պետության միասնականության և պահպանման «փրկիչ» ներկայացնելու համար:

Քննարկվող ժամանակահատվածում «գորշ գայլերի» ահաբեկչություններից ամենաարյունալի հետևանքներն ունեցան Քահրամանմարաշի դեպքերը: Քահրամանմարաշում «գորշ գայլերի» կազմակերպած սադրիչ գործողությունների արդյունքում տեղի ունեցավ հանրապետական Թուրքիայի պատմության մեջ ամենազանգվածային բախումը երկրի սուննի և ալևի բնակչության միջև: 1978թ. դեկտեմբերին Քահրամանմարաշ քաղաքում գտնվող կինոթատրոններից մեկում՝ «Արևը երբ է ծագելու» (Güneş ne zaman doğacak?) հակակոմունիստական ֆիլմի ցուցադրման ժամանակ «գորշ գայլերն» իրականացրին պայթյուն և դրանում մեղադրեցին ալևիներին, որոնք հայտնի էին ձախակողմյան կողմնորոշմամբ: Հաջորդ մի քանի օրերին «գորշ գայլերը» կազմակերպեցին ևս մի քանի սադրիչ գործողություններ, որոնց արդյունքում բախումներ սկսվեցին ալևի և սուննի բնակչության միջև՝ դառնալով ավելի քան 100 մարդու մահվան պատճառ, շուրջ 1000 մարդ վիրավորվեց:

Քահրամանմարաշի դեպքերից հետո երկրի 13 շրջաններում ռազմական դրություն մտցվեց, ինչն ահաբեկչության հեղինակների գլխավոր նպատակներից մեկն էր հանդիսանում: Նման պայմաններում առավել դյուրին էր դառնում ռազմական հեղաշրջման իրականացումը:

«Գորշ գայլերի» ահաբեկչությունն ուղղված էր հասարակության գրեթե բոլոր շերտերի դեմ: Քննարկվող ժամանակահատվածում «գորշ գայլերը» պատասխանատու են դասախոսների (Օրհան Յավուզ, Ումիթ Քաթանջըօղլու), հասարակական և քաղաքական գործիչների (ԴԻՍԿ նախկին ղեկավար Քեմալ Թյուրքլեր), հարյուրավոր ուսանողների[21], լրագրողների («Միլլիյեթ» թերթի գլխավոր խմբագիր Աբդի Իփեքչի)[22] և բազմաթիվ այլ անմեղ մարդկանց սպանության համար:

21 1978թ. մարտի 16-ին «Գորշ գայլերի»՝ Ստամբուլի համալսարանի դիմաց կազմակերպած պայթյունի հետևանքով զոհվեց 7, վիրավորվեց 41 ուսանող:

22 1979թ. փետրվարի 1-ին Մեհմեթ Ալի Աղջայի կողմից սպանվեց Աբդի Իփեքչին: «Գորշ գայլ» Մեհմեթ Ալի Աղջան հասարակության լայն շրջանակներին հայտնի դարձավ Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ի դեմ կատարած մահափորձից հետո:

8. Ձախակողմյան ծայրահեղական կազմակերպությունների ահաբեկչական գործունեությունը

1971-73թթ. զինվորական իշխանությունները չափազանց ծանր հարված հասցրին ձախակողմյան ծայրահեղական շարժումներին: Մեծ թվով ձախակողմյաններ դատապարտվեցին ազատազրկման. նրանք բանտերում դաժան խոշտանգումների էին ենթարկվում, ձախակողմյան ծայրահեղական շարժման որոշ ղեկավարներ մահապատժի ենթարկվեցին: Այնպիսի տպավորություն էր, թե ձախակողմյան ծայրահեղական շարժումներն այլևս չեն կարողանա ուշքի գալ, սակայն դեպքերի հետագա զարգացումներն այլ ընթացք թելադրեցին:

Ձախակողմյան շարժումների վերակենդանացման գործընթացին մեծապես նպաստեց այն հանգամանքը, որ 1974թ. Բ. Էջևիթի կառավարությունը համապետական համաներումը տարածեց նաև Թուրքիայի քրեական օրենսգրքի (ԹՔՕ) 141 և 142 հոդվածներով դատապարտված մոտ 4000 անձանց վրա: Կոմունիստական գործունեության դեմ ուղղված ԹՔՕ 141 և 142 հոդվածներով դատապարտվածների համաներման արդյունքում ազատության մեջ հայտնվեցին քաղաքական ձախ կողմնորոշում ունեցող բազմաթիվ երիտասարդներ: Բանտերում նրանց նկատմամբ կիրառված խոշտանգումները նպաստել էին ձախակողմյան երիտասարդության ծայրահեղականացմանը՝ էլ ավելի խորացնելով նրանց՝ երկրի կարգն «ամեն գնով» փոխելու անհրաժեշտության հաստատակամությունը: Այդ իրադրությունում ձախակողմյանները ձեռնամուխ եղան նոր շարժման նախաձեռնմանը:

1970-ական թթ. վերջերին Թուրքիայում գործում էին մոտ 60 ձախակողմյան ծայրահեղական կազմակերպություններ, որոնց գլխավոր նպատակը զինված հեղափոխությունն էր: Ձախակողմյան ծայրահեղական կազմակերպություններից առավել ազդեցիկ էին՝ Թուրքիայի ազգային ազատագրական կուսակցությունը, Թուրքիայի ազգային ազատագրական ճակատը (ԹՀՔՊ, ԹՀՔՋ - Türkiye Halk Kurtuluş Partisi, Türkiye Halk Kurtuluş Cephesi), ԴԵՎ-ՍՈԼ-ը (Devrimci Sol, Հեղափոխական ձախ),

ԴԵՎ-ՅՈԼ-ը (Devrimci Yol - Հեղափոխական ուղի)[23], ՄԼՍՓ-Բ-ն (Marksist-Leninist Silahli Propaganda-Birliği - Մարքսիստական-լենինյան զինված քարոզչության միություն), ՀԴՕ-ն (Halkın Devrimci Öncüleri - Ժողովրդի հեղափոխական առաջապահներ), ԹՔՓ/ՄԼ-ը (Türkiye Komünist Partisi/ Marxist Leninist - Թուրքիայի կոմունիստական կուսակցություն /մարքսիստ-լենինիստ)՝ իր զինված խմբավորումով, որը կոչվում էր ԹԻՔՔՕ (Türkiye İşçi Köylü Komünist Ordusu - Թուրքիայի աշխատավորական գյուղացիական կոմունիստական բանակ) և այլն:

Ձախակողմյան ծայրահեղականների ահաբեկչության թիրախ էին դառնում հիմնականում աջ ծայրահեղականները, իշխանությունների ներկայացուցիչները, զինվորական և ոստիկանության աշխատակիցները, աջ քաղաքական ուժերի ներկայացուցիչները և այլն: Միայն ՀԴՕ-ն 1978թ. 10 ամիսների ընթացքում 36 ահաբեկչական գործողություն է իրականացրել, որոնք ուղղված են եղել ԱՇԿ գրասենյակների, «գաղափարապաշտների ակումբների», «Սաբանջի Հոլդինգի» Ստամբուլի և Անկարայի վարչական կենտրոնների դեմ:

1980թ. մայիսի 27-ին ԴԵՎ-ՍՈԼ-ի զինյալների կողմից սպանվեց ԱՇԿ փոխնախագահ Գյուն Սազաքը: Այդ սպանությունն ազգայնամոլական ուժերի դեմ կազմակերպված ձախ ծայրահեղականների ամենահնչեղ ահաբեկչական գործողություններից էր:

Ձախակողմյան ծայրահեղականների հաջորդ խոշոր ահաբեկչական գործողությունը տեղի ունեցավ 1980թ. հուլիսի 19-ին, երբ ԴԵՎ-ՍՈԼ-ի զինյալներն սպանեցին նախկին վարչապետ Նիհաթ Էրիմին, որի կառավարման տարիներին ձախակողմյան շարժումներին ծանր հարված էր հասցվել:

Ձախակողմյան ծայրահեղականների գործունեությունը լայն տարածում գտավ նաև քրդերով բնակեցված արևելյան շրջաններում, և քրդերն ակտիվորեն ներգրավված էին ձախակողմյան կազմակերպություններում: 1970-ական թթ. կեսերից Թուրքիայում սկսեցին գործել նաև քրդական կազմակերպություններ՝ Քրդստանի աշխատավորական կուսակցություն (PKK - ՊԿԿ), Քոմալ, ՔԱՎԱ և այլն: Այս կազմակերպությունների հիմնական մասն ուներ ձախակողմյան ուղղվածություն և ընդհանուր առմամբ պայքարում էր սոցիալիստական շարժումների հետ համատեղ:

23 ԴԵՎ-ՅՈԼ-ն ու ԴԵՎ-ՍՈԼ-ը կազմավորվեցին ԴԵՎ-ԳԵՆՉ-ի պառակտման արդյունքում:

Այսպիսով՝ ձախակողմյան ծայրահեղական ահաբեկչությունը 1970-ական թթ. վերջերին զանգվածային բնույթ էր ստացել և տարածվել ողջ երկրով մեկ: Նրանց ահաբեկչական գործունեությունը լուրջ մտահոգություններ և անհանգստություններ առաջացրեց երկրի իշխանությունների և զինվորականության շրջանում:

9. Ներքաղաքական ճգնաժամը

1977թ. հունիսին Թուրքիայում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում ՀԺԿ-ն ավելացրեց իր պատգամավորների թվաքանակը՝ հասցնելով այն 213-ի: Խորհրդարանական ընտրություններում ՀԺԿ հաջողությանը զգալիորեն նպաստեց այն հանգամանքը, որ ձախակողմյան կազմակերպությունների մեծ մասը համախմբվեց և աջակցեց ՀԺԿ-ին՝ ընդդեմ իր մեջ ֆաշիստական տարրեր պարունակող ԱՃ կոալիցիայի անդամ կուսակցությունների: Հատկապես նշանակալի էր ԴԻՍԿ օժանդակությունը, որը ձախակողմյան արիմիությունների խոշորագույն համադաշնություն էր և նպաստում էր աշխատավորական շարժման քաղաքականացմանը:

ԱԿ-ը 1977թ. ընտրություններում նույնպես ավելացրեց իր պատգամավորների թիվը՝ 189, ինչը հիմնականում կատարվեց ի հաշիվ ԺԿ ձայների: Էրբաքանի ԱՓԿ-ն թեև կորցրեց պատգամավորական տեղերի ուղիղ կեսը, այնուամենայնիվ, իր 24 պատգամավորական մանդատներով որոշակի կշիռ ուներ երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Ընտրություններում շոշափելի առաջընթաց արձանագրած քաղաքական ուժը ԱՇԿ-ն էր, որն ավելացրեց իր պատգամավորների թիվը՝ հասցնելով 16-ի (նախկին 3-ի փոխարեն):

Ընտրություններից անմիջապես հետո նախագահ Քորություրքը Բ. Էջևիթին լիազորեց նոր կառավարություն կազմել, սակայն Էջևիթի փոքրա-

մասնության կառավարությունը գործեց ընդամենը մեկ ամիս՝ տեղը զիջելով ԱՃ-ին:

1977թ. վերջերին Բ. Էջևիթը գաղտնի պայմանավորվածություն ձեռք բերեց ԱԿ 13 պատգամավորների հետ, որոնք, համաձայն Էջևիթի ծրագրի, պիտի դուրս գային ԱԿ-ից և միանալով ՀԺԿ-ին՝ անվստահություն հայտնեին կառավարությանը, որից հետո բոլոր 13 պատգամավորները նախարարի պաշտոն պիտի ստանային Էջևիթի կառավարությունում: Ազգային ժողովի 450 պատգամավորական տեղերից 213-ը զբաղեցնում էր ՀԺԿ-ն, և ընդամենը 13 ձայնն Էջևիթին հնարավորություն կտար ձեռք բերել մեծամասնություն: Էջևիթի ծրագիրը հաջողությամբ պսակվեց, և 1977թ. դեկտեմբերին հանրապետական Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ ԹԱՄԺ-ը անվստահություն հայտնեց կառավարությանը, և Ազգայնական ճակատ կոալիցիոն կառավարությունը դադարեցրեց իր գործունեությունը:

1978թ. հունվարին Բ. Էջևիթը, նախկին ԱԿ-ականների հետ միասին ձևավորեց իր երրորդ կառավարությունը (05.01.1978-16.10.1979թթ.), որը գործունեության հենց սկզբից լուրջ դժվարությունների առաջ կանգնեց:

Թուրքիայի առաջ տնտեսական լուրջ դժվարություններ ծառացան, որոնք շուտով վերաճեցին խորությամբ աննախադեպ տնտեսական ճգնաժամի: Թուրքիան իր աճող արտաքին պարտքով, արտադրության կտրուկ անկումով, դրամի արժեզրկմամբ կանգնած էր սնանկության եզրին: Էջևիթի կառավարության գլխավոր խնդիրներից մեկն էր համաձայնության գալ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ և վերջինիս կողմից ֆինանսական այդքան անհրաժեշտ օգնությունն ստանալ: ԱՄՀ առաջնային պայմանն ազատ շուկա ստեղծելն էր և, ըստ էության, «խառը տնտեսության» սկզբունքից հրաժարվելը: 1979թ. հուլիսին Էջևիթի կառավարությանը վերջապես հաջողվեց համաձայնության հասնել ԱՄՀ-ի հետ. հետաձգվում էին պարտքերի վճարումները և մեծածավալ վարկ էր տրամադրվում Թուրքիային: Այնուամենայնիվ, Էջևիթի կառավարությունը չկարողացավ օգտվել դրանից, քանզի 1979թ. հոկտեմբերին խորհրդարանի մասնակի ընտրությունների ժամանակ ՀԺԿ-ն պարտություն կրեց և Բ. Էջևիթի կառավարությունը հրաժարական տվեց: 1979թ. վերջին կազմավորվեց Ս. Դեմիրելի 3-րդ կառավարությունը:

Այսպիսով՝ Թուրքիայում օրըստօրե խորանում էին ճգնաժամային երևույթները՝ ահաբեկչությունը, սոցիալ-տնտեսական դժվարությունները, բևեռացումը հասարակության մեջ, իսկ երկրի քաղաքական ուժերը զբաղված էին ներքաղաքական պայքարով և վճռական քայլեր չէին ձեռնարկում երկրում շրջադարձային փոփոխություններ կատարելու համար: 1973-1980թթ. ընկած ժամանակահատվածում երկրում գործել է 8 կառավարություն: Կառավարությունների կարճաժամկետ գոյությունը նվազեցնում էր նրանց արդյունավետությունը և ներքաղաքական ճգնաժամերի պատճառ հանդիսանում: Այսպիսի իրավիճակում էլ Թուրքիան թևակոխեց 1980 թվական, որը վճռորոշ դարձավ երկրի պատմության հետագա ընթացքի համար:

1980թ. հունվարի 24-ին Ս. Դեմիրելի կառավարությունն ընդունեց «տնտեսության կայունացման» ծրագիրը, որը նախատեսում էր լայնածավալ տնտեսական բարեփոխումների իրականացում: Բարեփոխումների գլխավոր նպատակն էր ստեղծել «ազատ շուկա»՝ նվազեցնելով պետության դերը տնտեսության մեջ, բազմաթիվ արտոնություններ վերապահել մասնավոր սեկտորին, նպաստավոր պայմաններ ապահովել օտարերկրյա ներդրողների համար, վերջ դնել լիրայի արժեզրկմանը, լճացմանը և այլն: «Հունվարի 24-ի» ծրագրի հիմնական սկզբունքները ձևակերպվել էին վարչապետի՝ տնտեսական գծով խորհրդական Թուրգութ Օզալի կողմից: Սակայն Թուրքիայում բացակայում էր անհրաժեշտ ներքաղաքական կայունությունը նմանատիպ բարեփոխումներ իրականացնելու համար:

1980-ը չափազանց ծանր տարի էր Թուրքիայի համար. երկիրը բաժանվել էր երկու բևեռի՝ աջերի և ձախերի: Ահաբեկչությունն աննախադեպ ծավալներ էր ընդունել: Հաճախակի էին դարձել նաև բախումները կրոնական՝ սունիի և ալևի համայնքների միջև: Թուրքիայում առկա էին հասունացող քաղաքացիական պատերազմին բնորոշ բոլոր նախադրյալները, երկիրը գտնվում էր չհայտարարված քաղաքացիական պատերազմի վիճակում:

Թուրքական լիրայի ահագնացող արժեզրկմանը զուգընթաց՝ երկրում թանկանում էին առաջին անհրաժեշտության ապրանքների գները:

Գյուղաբնակների զանգվածային արտահոսքը դեպի մեծ քաղաքներ նորանոր դժվարությունների պատճառ էր դառնում, որի հետևանքով քաղաքների բնակչության մի ստվար զանգված բնակվում էր, այսպես կոչված, «գեջեքոնդուներում»:

Թուրքիան գտնվում էր էներգետիկ ճգնաժամի մեջ, որը պայմանավորված էր, մի կողմից՝ միջազգային շուկայում էներգակիրների գների թանկացմամբ, մյուս կողմից էլ՝ երկրի արտաքին պարտքերի պատճառով Իրաքը դադարեցրել էր նավթի, իսկ Բուլղարիան՝ էլեկտրաէներգիայի մատակարարումը: Էներգետիկ ճգնաժամն, իր հերթին, խոչընդոտում էր արդյունաբերության զարգացմանը: Բնակչությանը մատակարարվող էլեկտրաէներգիան օրական ընդամենը 11 ժամ էր, դժվարացել էր բենզին և նավթ ձեռք բերելը:

Հետզհետե ավելի զանգվածային բնույթ էր ստանում արհմիությունների կողմից կազմակերպվող գործադուլային շարժումը: 1980թ. հունվարին թուրքական «Ջումհուրիյեթ» թերթը գրում էր, որ գործադուլների պատճառով գործարանների ընդամենը 20%-ն էր աշխատում, ինչը կաթվածահար էր արել ամբողջ տնտեսությունը:

1980թ. գարնանը Թուրքիայի քաղաքական համակարգը նոր ճգնաժամի առջև կանգնեց՝ նախագահական ընտրությունների ճգնաժամի: Լրացավ նախագահ Քորություրքի պաշտոնավարման ժամկետը, և Թուրքիայում նոր նախագահ ընտրելու անհրաժեշտություն ծագեց: Մարտի 22-ին մեկնարկեցին նախագահական ընտրությունները: Թուրքական սահմանադրության համաձայն՝ երկրի նախագահն ընտրվում էր ԹԱՄԺ ստորին պալատի՝ Ազգային ժողովի (Milli Meclis) կողմից՝ ձայների երկու երրորդի հարաբերակցությամբ: Փաստորեն, ԹԱՄԺ-ում քաղաքական ուժերի հարաբերակցությունն այնպիսին էր, որ առանց ՀԺԿ և ԱԿ փոխհամաձայնության նախագահ ընտրելու համար անհրաժեշտ ձայների քանակը չէր ապահովվում: Իսկ այդ երկու կուսակցությունների միջև գոյություն ունեցող անհանդուրժողականության մթնոլորտում նախագահի ընտրությունն ի սկզբանե դատապարտված էր անհաջողության: Նախագահական ընտրությունների ընթացքում ՀԺԿ հիմնական թեկնածուն պաշտոնաթող գեներալ Մուհսին Բաթուրն էր, իսկ ԱԿ-ը պաշտպանում էր Ֆ. Թյուրունի թեկնածությունը: Բազմաթիվ անարդյունք փուլերից հետո նախագահական ընտրությունները մտան փակուղի, որի հետևանքով կաթվածահար էր լինում երկրի քաղաքական-հասարակական կյանքը: Ավելի քան 100 փուլ շարունակվող նախագահական ընտրություններն այդպես էլ չհասան իրենց հանգուցալուծմանը: Հետագայում գեներալ Ջենան Էվրենը նշել է, որ «աշխարհի ոչ մի երկրում նախագահի պաշտոնի և ընտրության նկատմամբ այդքան թեթևամիտ չեն վերաբերվել և չի ծախսվել այդչափ դատարկ ժամանակ»:

Ստեղծված իրավիճակում երկրի քաղաքական համակարգն ի զորու չէր երկիրն ինքնուրույն դուրս բերել ճգնաժամից, և նույնիսկ քաղաքական գործիչներն էին նշում քաղաքական համակարգի սնանկության, ճգնաժամից դուրս գալու անկարողության մասին:

10. Արտաքին քաղաքականությունը

1960թ. ռազմական միջամտությունից հետո զինվորականները շտապեցին հայտարարել, որ մտադիր են հավատարիմ մնալ Թուրքիայի արտաքին քաղաքական պարտավորություններին, դաշինքներին և նախաձեռնություններին՝ այդպիսով նպատակ ունենալով հանդարտեցնել ԱՄՆ-ում, ՆԱՏՕ և ՍԵՆՏՕ գործընկերների շրջանակում հնարավոր տարակարծությունները Թուրքիայի արտաքին քաղաքական կողմնորոշման վերաբերյալ: ՄԱԿ-ում և ՆԱՏՕ-ում Թուրքիայի դեսպան Սելիմ Սարփերի նշանակումն արտաքին գերատեսչության ղեկավարի պաշտոնում ևս մեկ անգամ վկայում էր արտաքին քաղաքականության ոլորտում շարունակականության մասին: Ռազմական հեղաշրջումից անմիջապես հետո ԱՄՆ իշխանությունները Թուրքիային տրամադրեցին շուրջ 400 մլն դոլար վարկ, որը կարևոր օգնություն էր Ազգային միասնության կոմիտեի համար և աջակցություն դաշնակից երկրի կողմից: Արտաքին քաղաքականության ոլորտում Թուրքիայի իշխանությունները նպատակ

ունեին բազմազանեցնել հարաբերությունները և դրանք դարձնել առավել անկախ:

1962թ. հոկտեմբերին, Կարիբյան ճգնաժամի օրերին, հանրային կարծիքը Թուրքիայում ընդգծված հակաամերիկյան էր, քանի որ ԱՄՆ նախագահ Ջոն Քենեդին համաձայնվել էր ԽՍՀՄ առաջնորդ Նիկիտա Խրուշչովի պահանջներին և հրամայել հեռացնել Թուրքիայի տարածքում տեղակայված ատոմային հրթիռները: ԱՄՆ-ին ուղղված քննադատությունների հիմնական փաստարկն այն էր, որ ԱՄՆ-ը զոհաբերել է իր դաշնակցի անվտանգությունը սեփական անվտանգության համար:

Ռազմական հեղաշրջումից անմիջապես հետո ԽՍՀՄ իշխանություններն սկսեցին ակտիվ աշխատանքներ տանել, որպեսզի Թուրքիան առավել չեզոք դիրքորոշում ունենա, հրաժարվի սպառազինությունների վրա կատարվող ծախսերից և այդ միջոցներն ուղղի զարգացման ծրագրերի իրականացմանը: Այս ուղերձները մերժվեցին Գյուրսելի կողմից, վերջինս Մոսկվային հիշեցրեց նաև իր ՆԱՏՕ անդամ լինելու և դաշնակցային պարտավորությունների իրականացման մասին:

Այդուհանդերձ, Թուրքիայի հարաբերությունները Խորհրդային Միության հետ փոքր-ինչ բարելավվեցին: 1961-1965թթ. ընթացքում տեղի ունեցան բարձր մակարդակի փոխադարձ այցեր: Հատկապես արդյունավետ եղավ ԽՍՀՄ կառավարության խորհրդի նախագահ (վարչապետ) Ա. Կոսիգինի՝ 1966թ. դեկտեմբերին Թուրքիա կատարած այցը: Խորհրդային կառավարությունը ստանձնեց Թուրքիայի տարածքում մի շարք խոշորածավալ արդյունաբերական նախագծերի իրականացումը: Հաջորդ տարի կնքվեց միջկառավարական պայմանագիր, որի համաձայն՝ հետագա տարիների ընթացքում Թուրքիայում կառուցվեցին մի շարք կարևոր արդյունաբերական ձեռնարկություններ (Իսքենդերունի մետալուրգիական, Ալիաղի նավթավերամշակման, Արդվինի փայտավերամշակման գործարանները և այլն): Այս արդյունաբերական ծրագրերի շնորհիվ Թուրքիայի տնտեսությունը դարձավ զգալիորեն ինքնաբավ՝ կրճատելով արդյունաբերական հումքի ներմուծման ծավալները:

Սահմանային խնդիրների կարգավորումը ևս նպաստեց խորհրդա-

թուրքական հարաբերությունների սերտացմանը: 1967թ. փետրվարին Անկարայում ստորագրվեց խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանանշման արձանագրությունը: Համատեղ հաղորդագրության մեջ նշվում էր, որ 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով հաստատված, 1926թ. սահմանանշված խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանանշումը (redemarcation) անհրաժեշտություն էր դարձել սահմանային գետերի հուների փոփոխության, ինչպես նաև սահմանանշման փաստաթղթերի արդի տեխնիկական պայմաններին անհամապատասխանության պատճառով: Վերասահմանանշման աշխատանքներն ամփոփվեցին 1973թ. դեկտեմբերի 29-ին Անկարայում ստորագրված մի քանի փաստաթղթերում: Ուշագրավ է, որ ԽՍՀՄ-Թուրքիա սահմանի վերագծման աշխատանքներն իրականացնող խորհրդա-թուրքական խառը հանձնաժողովի աշխատանքներին Խորհրդային Հայաստանի կողմից մասնակցած գնդապետ Գուրգեն Նալբանդյանը հրաժարվեց ներկա գտնվել 1973թ. դեկտեմբերին Անկարայում վերոհիշյալ փաստաթղթերի ստորագրման արարողությանը՝ իր անհամաձայնությունը հայտնելով այդ իրադարձության ընթացքում արվելիք քաղաքական հայտարարության հետ, որում ևս մեկ անգամ նշվելու էր տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության մասին:

Կիպրոսի հիմնախնդիրը: 1960-1970-ական թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական գործընթացները ծավալվեցին Կիպրական խնդրի շուրջ: Թուրքիայի Ազգային միասնության կոմիտեի կողմից ևս Լոնդոնի պայմանագրի կետերը հարգելու հավաստիացումներ եղան: 1960թ. օգոստոսի 16-ին Կիպրոսի հանրապետության հռչակումից հետո արքեպիսկոպոս Մակարիոսն ընտրվեց նախագահ, իսկ Կիպրոսի թուրքական համայնքի ղեկավար Ֆազըլ Քյուչյուքը՝ փոխնախագահ: Հանրապետության սահմանադրությունը շոշափելի իրավունքներ էր տրամադրում թուրք փոքրամասնությանը, որը տեղիք տվեց Կիպրոսի հույների դժգոհությանը: 1963թ. օգոստոսին նախագահ Մակարիոսն ակնարկեց սահմանադրության փոփոխության մասին, իսկ նոյեմբերին ներկայացրեց բուն փոփոխությունները, ինչը դժգոհության մեծ ալիք բարձրացրեց Թուրքիայում: Վարչապետ Ինյոնյուն հայտարարեց, որ անհրաժեշտության

դեպքում Թուրքիան կօգտագործի իր իրավունքը և կներխուժի Կիպրոս: Այդ հայտարարությունը հակազդեցություն առաջ բերեց Հունաստանի և Մեծ Բրիտանիայի կողմից:

1963թ. դեկտեմբերին կղզում ծագեց քաղաքական սուր ճգնաժամ, որի հետևանքով երկրում սկսվեցին միջէթնիկական բախումներ: Նիկոսիայում տեղի ունեցան փոխհրաձգություններ թուրքական համայնքի և հունական ոստիկանության միջև: Թուրքիան պաշտոնապես հայտարարեց այս իրադարձություններին իր մասնակցության անհրաժեշտության մասին: Թուրքական համայնքի ներկայացուցիչները դադարեցին մասնակցություն ունենալ բոլոր պետական ինստիտուտների աշխատանքներին, իսկ 1967թ. վերջից կղզում սկսեց գործել «թուրքական համայնքի վարչակազմը»:

1963թ. դեկտեմբերին հակամարտության կարգավորմանը միացավ նաև Միավորված Ազգերի Կազմակերպությունը: Միաժամանակ Կիպրոսի դրության հարցը քննարկման դրվեց նաև ՆԱՏՕ խորհրդում: Հյուսիսատլանտյան դաշինքի ղեկավարությունը փորձում էր ճնշում գործադրել Կիպրոսի նախագահ Մակարիոսի վրա՝ Կիպրոսում «երաշխավոր» երկրների զինված ուժերի օգտագործման համար: ՆԱՏՕ-ն ճնշում էր գործադրում նաև Թուրքիայի և Հունաստանի ղեկավար շրջանների վրա: ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ն, օգտագործելով մտացածին «հյուսիսային սպառնալիք»-ը, փորձում էին յուրօրինակ կերպով իրենց ենթակայության տակ պահել Թուրքիան և Հունաստանը:

1964թ. մարտի 16-ին վարչապետ Ինյոնյուն ԹԱՄԺ արտակարգ նիստ հրավիրեց, որի ընթացքում նրա կառավարությունը վստահության քվե ստացավ Կիպրոսում ռազմական գործողություններ իրականացնելու համար: Թուրքիայի իշխանությունները քննադատության ալիքն ուղղեցին ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի դեմ՝ Թուրքիայի «ազգային և արդար պահանջներին» օժանդակություն չցուցաբերելու համար և հայտարարեցին, որ «թուրք-հունական բարեկամությունն ավարտված է»:

Դեպքերի ընթացքին և հակաամերիկյան տրամադրություններին նոր ազդակ հաղորդեց ԱՄՆ նախագահ Լինդոն Ջոնսոնի՝ 1964թ. հունիսի 5-ին վարչապետ Ինյոնյուին ուղղած նամակը: ԱՄՆ նախագահը զգուշացնում էր, որ որպես ՆԱՏՕ դաշնակից չի աջակցի Թուրքիային, եթե վերջինիս քայլերի արդյունքում Խորհրդային Միությունը ռազմական միջամտություն իրականացնի: Չնայած նամակի բովանդակությունը շուրջ 18 ամիս չհրապարակայնացվեց, սակայն այն հայտնի էր լրագրողական շրջանակներում: Ջոնսոնի նամակը համարվում է թուրք-ամերիկյան հարաբերությունների անախորժ էջերից մեկը: Նամակն ստանալուց հետո Թուրքիայի կառավարությունը չեղարկեց Կիպրոս ներխուժման որոշումը:

Կղզում բախումները դադարեցնելու նպատակով ՄԱԿ Անվտանգության խորհուրդը 1964թ. մարտի 4-ին ընդունեց թիվ 186 բանաձևը, որով ստեղծվեցին ՄԱԿ միջազգային ուժեր Կիպրոսում խաղաղության պահպանման համար (UNFICYP), որոնք մինչ օրս գտնվում են կղզում: Կիպրոսում սահմանվեց նաև ՄԱԿ գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի պաշտոն:

1967թ. ապրիլին Հունաստանում իրականացվեց ռազմական հեղաշրջում, որի արդյունքում իշխանության եկան զինվորականները: Ռազմական իշխանության արտաքին քաղաքականության հետևանքը եղավ Կիպրոսում իրադրության վատթարացումը. միջէթնիկական բախումները վերսկսվեցին 1967թ. նոյեմբերին: Կիպրոսի ազգային գվարդիան՝ գեներալ Գեորգիոս Գրիվասի հրամանատարությամբ, փորձեց հսկողության տակ վերցնել թուրքական հատվածի որոշ բնակելի տարածքներ: Ի պատասխան՝ Թուրքիան սկսեց իր զինված ուժերի նախապատրաստումը կղզի ներխուժելու համար: ԱՄՆ, ՆԱՏՕ և ՄԱԿ ներկայացուցիչների ջանքերը բերեցին լարվածության որոշակի թուլացման և հակամարտող կողմերի միջև պայմանավորվածության: 1968թ. ապրիլին կղզուց դուրս բերվեցին հունական զորքերը, սակայն բազմաթիվ հույն սպաներ մնացին կիպրոսյան ազգային գվարդիայում: 1968թ. փետրվարին թարմացվեցին Թուրքիայի և Հունաստանի պաշտոնական ներկայացուցիչների միջև կապերը, և դադարեցվեց թուրք կիպրոսցիների բնակավայրերի տնտեսական պաշարումը:

Թուրքական հասարակությունում հակաամերիկյան տրամադրությունները, սակայն, շարունակեցին խորանալ: Նոյեմբերի 23-ին նախագահ Լ. Ջոնսոնի բանագնաց Սայրուս Վենսի ինքնաթիռը չկարողացավ վայրէջք կատարել Անկարայի օդանավակայանում, քանի որ անվտանգության երաշխիքներ չտրվեցին բազմահազարանոց ցույցի պատճառով: Նա ստիպված

էր ընտրել ռազմականայանի օդանավակայանը: Հետագա տարիներին ևս ԱՄՆ-ի դեմ բացասական տրամադրությունները չնվազեցին, ավելին, ԱՄՆ 6-րդ նավատորմի դեմ անցկացվեցին ցույցեր, անգամ արձանագրվեցին ամերիկյան զինվորական անձնակազմի անդամներին պատանդ վերցնելու դեպքեր:

1972թ. փետրվարին իրադրությունը սրվեց՝ կապված հունական զինվորական վերնախավի ներկայացրած հուշագրի հետ, որում նշվում էր կղզում «ահաբեկչության մակարդակի բարձրացման» և վերջինիս դեմ Կիպրոսի կառավարության հետ համատեղ պայքարի մասին: «Ահաբեկչության մակարդակն» սկսեց ավելի աճել՝ կապված «Կիպրոսի մարտիկների ազգային կազմակերպության» («ԷՕԿԱ») առաջնորդ, գեներալ Գ. Գրիվասի՝ կղզի մուտք գործելու հետ: «ԷՕԿԱ»-ի գլխավոր խնդիրը «Էնոսիսի» (Կիպրոսը միացնել Հունաստանին) գաղափարն էր: 1967թ.՝ Կիպրոսի երկու համայնքների միջև հարաբերությունների սրման ժամանակ, Թուրքիան առաջ քաշեց նաև Գրիվասին կղզուց վտարելու պահանջը: 1971թ. սեպտեմբերին գեներալը գաղտնի վերադարձավ կղզի՝ նախագահ Մակարիոսի օրինական կառավարության դեմ պայքար մղելու համար: 1973թ. երկրորդ կեսին Կիպրոսի ոստիկանությունը բացահայտեց վերոնշյալ կազմակերպության մշակած «Ապոլոն» գաղտնի դավադրությունը, ըստ որի՝ «ահաբեկչական խմբերը» պետք է տապալեին Կիպրոսի օրինական կառավարությունը: «Ահաբեկչական խմբերի» հիմնական ուժերը կազմում էին կղզում մնացած հույն սպաները, ովքեր չցանկացան 1967թ. վերադառնալ Հունաստան:

1973թ. կեսերին Կիպրոսում ստեղծվել էր մի դրություն, երբ «թուրքական համայնքի վարչակազմը» դարձավ դե-ֆակտո պետություն պետության ներսում: 1974թ. սկզբին Թուրքիայի և Հունաստանի միջև հակասություններն Էգեյան ծովում գերիշխանության հասնելու համար նշանակալիորեն սրվեցին՝ կապված հունական Թասոս կղզում ամերիկյան կազմակերպության կողմից նավթի և գազի պաշարներ հայտնաբերելու հետ: Նավթի հայտնաբերման փաստը սրեց Հունաստանի կառավարող շրջանների ուշադրությունը: Նավթային խառնաշփոթը գրավեց նաև Թուրքիային: Այսպես, պաշտպանության նախարար Սանիսարը 1974թ.

հունվարի 10-ին հայտարարեց, որ «Թուրքիայի ապագան ծովն է, և Թուրքիան պարտավոր է դառնալ միջերկրածովյան ազգ»: Նրան փոխարինած Հասան Ըշըքը հուլիսի 1-ին հայտարարեց, որ «Թուրքիան երբեք թույլ չի տա, որ Էգեյան ծովը դառնա հունական և թույլ չի տա որևէ մեկին յուրացնել այդ տարածաշրջանում թուրքական իրավունքները»:

1973թ. Թուրքիան սկսել էր պնդել, որ Էգեյան ծովի մի մասը կղզիների հետ միասին, որոնք գտնվում են թուրքական ափերի մոտ, պատկանում են իրեն: Թուրքական քաղաքական գործիչները երբեք չեն օգտագործում «հունական կղզիներ» հասկացությունը, այլ մշտապես խոսում են «Էգեյան ծովի կղզիների» մասին:

Հունաստանը փորձում էր դիտել Էգեյան ծովի ջրային տարածքը որպես «ներքին հունական ծով», այդ պատճառով էլ հավակնում էր դրա ռեսուրսների շահագործման իրավունքներին ոչ միայն Հունաստանի տարածքային ջրերում և մայրցամաքային խութում, այլ նաև միջազգային ջրային տարածքում: Թուրքիան համարում էր Էգեյան ծովը «հույն-թուրքական համատեղ ջրային տարածք» և հավակնում էր դրա ռեսուրսների օգտագործման այնպիսի իրավունքների, ինչպիսիք Հունաստանն է տիրապետում: Նավթի և գազի ձեռքբերման իրավունքների շուրջ ծավալվեց կատաղի վիճաբանություն: Այդ վեճը երկկողմանի համաձայնությամբ որոշվեց տեղափոխել Հաագայի միջազգային դատարան:

Թուրքիայի և Հունաստանի միջև սուր վեճի առարկա հանդիսացան նաև Դոդեկանեզյան կղզիները (Ռոդոս, Կոս, Կարպատոս, Կալիմնոս, Աստիպոլեա, Տիլոս, Սամի, Կասոս և այլն), որոնք տեղակայված են Էգեյան ծովի հարավարևելյան հատվածում՝ Թուրքիայի հարավարևմտյան ափի մերձակայքում և ներկայումս պատկանում են Հունաստանին: Տասներկու կղզիներն ունեն ընդհանուր 2700 քառ. կմ տարածք և մոտ 150 հազար բնակիչ: Թուրքիան մշտապես մեղադրում էր Հունաստանին այդ կղզիները ռազմականացնելու և Թուրքիայի դեմ ռազմական գործողություններ պատրաստելու մեջ: Իր հերթին, Հունաստանն արդարացնում էր իր զինված ուժերի ներկայությունը կղզում Թուրքիայի ագրեսիվ մտադրություններից ապահովագրված լինելու համար:

1974թ. մարտին Կիպրոսի «թուրքական համայնքի վարչակազմը» թողարկեց իր փոստային նամականիշները, իսկ հետո ներմուծեց սեփական դրամական միավորը՝ լիրան: Դրանով թուրքերը փաստացի իրականացրին իրենց համայնքի տարանջատումը Կիպրոսի Հանրապետությունից: Երկու երկրների միջև խաղաղ բանակցությունների բոլոր հույսերը վերջնականապես խորտակվեցին: Այդ տարվա կեսերին անարդյունք ավարտվեցին նաև Թուրքիայի և Հունաստանի պաշտպանության նախարարությունների միջև բանակցություններն Օտտավայում, դրանից անմիջապես հետո՝ նաև վարչապետերի բանակցությունները Բրյուսելում: Երկու երկրներն էլ չհամաձայնվեցին գնալ զիջումների, սակայն պատրաստակամություն հայտնեցին շարունակել խաղաղ բանակցությունները:

Կղզում իրադրության կարգավորման համար նախագահ Մակարիոսը սկսեց Կիպրոսի ազգային գվարդիայի ապակազմակերպումը՝ դիմելով «սև գնդապետների» ռազմական կառավարությանը՝ հույն սպաներին հետ կանչելու համար: Ի պատասխան՝ 1974թ. հուլիսի 15-ին 650 հույն սպաներ, ովքեր ծառայության մեջ էին գտնվում 12 հազարանոց ազգային գվարդիայում, և 950 զինծառայող սկսեցին ռազմական ապստամբություն՝ Կիպրոսի օրինական կառավարությունը տապալելու նպատակով: Ապստամբներին գլխավորեց գնդապետ Ի. Դերտիլիսը՝ կիպրոսյան մարտիկների ազգային կազմակերպության ղեկավարը («ԷՕԿԱ-2»): Ապստամբները գրավեցին օդանավակայանը, կառավարական շենքերը և ռադիոկայանը: Ապստամբներին զինված դիմադրություն ցույց տվեցին ոստիկանությունը, անվտանգության ուժերը և կամավորները: Հետապնդվող նախագահ Մակարիոսին թույլ տրվեց անցնել բրիտանական ռազմական հենակետերի տարածք: Երկրի ղեկավար դարձավ Նիկոս Սամպսոնը:

Կիպրոսի հակակառավարական ապստամբությունը և հունական զինված ուժերի մասնակցությունն առաջ բերեցին Թուրքիայի անմիջական հակազդումը: Թուրքական կառավարությունը դիմեց Անգլիային՝ որպես երաշխավորող, համատեղ միջոցառումներ ձեռնարկել Կիպրոսում դրությունը վերականգնելու ուղղությամբ: Թուրքիայի վարչապետը Լոնդոնում բանակցություններ վարեց այդ հարցով: Թուրքական կառավարությունը դիմեց նաև ԱՄՆ-ին: Սակայն բանակցություններն արդյունքներ չտվեցին, քանի

որ Թուրքիայի դաշնակիցների քաղաքականությունն ուղղված չէր կանխելու հունական միջամտությունը Կիպրոսի ներքին գործերին, և քանի որ ստեղծված իրադրությունը բխում էր իրենց շահերից:

Հուլիսի 18-ին Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի առաջարկով անցկացվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի արտակարգ նիստ: Պառլամենտը քննարկեց Կիպրոսում առկա իրադրությանը ռազմական միջամտություն ցուցաբերելու հարցը: Կառավարության որոշմամբ Թուրքիայի գլխավոր շտաբի ղեկավար Սեմիհ Սանջարը հրաման արձակեց կղզու վրա թուրքական զինված ուժեր իջեցնելու մասին:

«Աթիլա» գաղտնանունը ստացած ռազմական գործողությունը սկսվեց հուլիսի 20-ի առավոտյան: Թուրքական զինված ուժերի թիվը հասնում էր մոտ 30 հազարի: Երկու օրվա ընթացքում թուրքական զորքերը կարողացան վերահսկել ռազմական իրավիճակը: Ժնևում սկսված երկփուլ բանակցություններն արդյունք չտվեցին, և օգոստոսի 14-ի արևածագին թուրքական զորքերը սկսեցին երկրորդ «խաղաղության գործողությունը» (Barış Harekâti): Օգոստոսի 16-ին թուրքական ռազմական ստորաբաժանումները, դուրս գալով, այսպես կոչված, «Աթիլայի» գիծ, կատարեցին իրենց առջև դրված հիմնական խնդիրը: «Աթիլայի» գիծն անցնում էր Լեֆկայի, Նիկոսիայի և Ֆամագուստայի բնակակետերով և առաջարկվում էր թուրքական կառավարության կողմից որպես սահման: Վարչապետ Էջևիթը հայտարարեց իր կառավարության՝ Կիպրոսում հրադադարի որոշման մասին: Օգոստոսի 18-ին, ժամը 18:00-ին ռազմական գործողությունները դադարեցվեցին, իսկ UNFICYP-ը լիազորվեց վերահսկել զինադադարը և հսկել բուֆերային գոտին:

Այսպիսով՝ Թուրքիան իրականացրեց ինքնիշխան պետության տարածքի 37/40 տոկոսի բռնազավթում: Կիպրոս կղզու հյուսիսային և հյուսիսարևելյան հատվածների բռնազավթմամբ՝ կղզին փաստացի բաժանվեց երկու շրջանների: Այժմ արդեն Թուրքիան էր թելադրում նոր բանակցությունների պայմանները: Սակայն հույն վարչապետ Կարամանլիսը հրաժարվում է բանակցել ստեղծված իրավիճակում: Այդ ժամանակ Թուրքիան կրկին դիմեց ռազմական գործողությունների: Կրակը դադարեցնելուց երկու օր անց՝ օգոստոսի 20-ին, զորքերը կրկին

սկսեցին ներխուժումը և շարժվեցին ենթադրյալ սահմանից դեպի հարավ: Թուրքիայի արտաքին գործերի նախարարը հայտարարեց, որ նախապատվելի է ուղղակի բանակցություններ վարչապետեր Էջևիթի և Կարամանլիսի միջև:

ԱՄՆ-ը, հաշվի առնելով այն փաստը, որ կիպրոսյան հակամարտությունը կարող է վերածվել թուրք-հունական պատերազմի, ժամանակավորապես դադարեցրեց զենքի մատակարարումը կողմերին: Սա երկկողմանի դժգոհություն առաջացրեց: Հունաստանը մեղադրեց ԱՄՆ-ին Թուրքիային աջակցելու համար: 1974թ. սեպտեմբերի երկրորդ կեսին ԱՄՆ Սենատի և Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի կողմից ընդունվեց օրինագիծ, որը վերանայում էր Թուրքիային ռազմական օգնություն ցուցաբերելու որոշումը, քանի որ վերջինս Կիպրոսում անօրինական ձևով էր օգտագործել ամերիկյան զենքը, որը նախատեսված էր պաշտպանության ընդհանուր դաշնակցային նպատակների համար՝ նախատեսված 1947թ. ամերիկա-թուրքական համաձայնությամբ: Այս օրինագիծն ընդունվեց հակառակ ԱՄՆ վարչակազմի ցանկության: 1975թ. փետրվարի 5-ին ԱՄՆ Կոնգրեսը զենքի էմբարգո սահմանեց Թուրքիայի նկատմամբ, քանի դեռ Թուրքիան էական առաջընթաց չի արձանագրել Կիպրոսի բանակցություններում: Թուրքական պետական գործիչները հայտարարեցին, որ այդ որոշումը խախտում է երկու երկրների միջև ռազմաքաղաքական պարտավորությունները, և Թուրքիան ստիպված էր վերանայել իր տարածքում տեղակայված ամերիկյան 27 ռազմակայանների հարցը: 1975թ. հուլիսի վերջին Թուրքիայի տարածքում գործում էր միայն Ինջիրլիք ռազմակայանը, իսկ Դեմիրելը հայտարարեց, որ եթե մինչև սեպտեմբերի 30-ը ԱՄՆ-ը չվերացնի էմբարգոն, նա կսկսի ռազմակայանները դուրս հանելու գործընթացը:

Վախենալով Թուրքիայում և Հունաստանում հակաամերիկյան տրամադրությունների հետագա աճից և զգուշանալով այդ երկրներում իր ռազմակայանների ճակատագրի և ՆԱՏՕ հարավային ճակատի ապագայի համար՝ ԱՄՆ-ը մեծ ճնշում էր գործադրում թուրքական և հունական կառավարությունների վրա՝ ստիպելով նրանց ստորագրել նոր՝ քառամյա ռազմական պայմանագիր: 1976թ. մարտի 26-ի թուրք-ամերիկյան ռազմական պայմանագրի համաձայն՝ ԱՄՆ-ը հնարավորություն ստացավ շարունակել օգտագործել թուրքական տարածքում իր բոլոր ռազմական հենակետերը 1 մլրդ 366 մլն դոլար ռազմական օգնության դիմաց: 1976թ. ապրիլի 16-ի հույն-ամերիկյան ռազմական պայմանագրով՝ ԱՄՆ-ը պահպանեց իր ռազմական հենակետերը Հունաստանում՝ պարտավորվելով ռազմական օգնություն ցուցաբերել 700 մլն դոլարի չափով:

1976թ. սկզբին թուրքական համայնքի ղեկավարությունը միակողմանի կարգով հայտարարեց օկուպացված տարածքում «Կիպրոսի թուրքական դաշնային հանրապետության»[24] ստեղծման մասին՝ նախկին փոխվարչապետ Ռաուֆ Դենքթաշի գլխավորությամբ: Այս ամենը լրացուցիչ խոչընդոտներ ստեղծեց կիպրոսյան խնդրի լուծման ճանապարհին: Նույն տարվա հունիսին թուրքական համայնքի կողմից հաստատվեց նոր «պետության» սահմանադրությունը:

Ռազմական գործողությունների արդյունքում երկրի տնտեսությունը քայքայվել էր, խզվել էին կապերը երկու համայնքների միջև: Կիպրոսի ազգագրական առանձնահատկությունները բերեցին նրան, որ 1974-1975թթ. ընթացքում գրեթե բոլոր թուրք կիպրոսցիները տեղափոխվեցին թուրքական զորքերի կողմից ռազմակալված տարածքներ Կիպրոսի հյուսիսային հատվածում, իսկ 200 հազար հույն կիպրոսցիները՝ կղզու հարավ:

Արհեստականորեն կղզում էթնիկ մեծամասնություն ստեղծելու Թուրքիայի քաղաքականությունը նախատեսում էր թուրքերի զանգվածային տեղափոխություն դեպի Կիպրոս: Տեղափոխվածների քանակը կազմում է 80-110 հազար: Ավելի քան 1500 հույներ, ինչպես կիպրոսցիներ, այնպես էլ Հունաստանի քաղաքացիներ, անհետ կորած են համարվում 1974թ. ռազմական գործողությունների արդյունքում:

Թուրքիա-Եվրոպական տնտեսական համայնք (ԵՏՀ/Եվրամիություն՝ ԵՄ): Դեռ 1959թ. Մենդերեսի կառավարությունը դիմել էր Եվրոպական տնտեսական համայնքին՝ ցանկանալով դառնալ ասոցիացված անդամ: Չորս տարի անց՝ 1963թ. սեպտեմբերի 12-ին, Թուրքիայի և ԵՏՀ-ի միջև

24 Հետագայում՝ 1983թ. նոյեմբերի 15-ին ինքնահռչակ այդ «պետությունը» վերանվանվեց Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետություն:

Անկարայում ստորագրվեց Ասոցիացման մասին պայմանագիրը, որն ուժի մեջ մտավ հաջորդ տարվա դեկտեմբերի 1-ին: Անկարայի պայմանագրում նշվում էր, որ Թուրքիան նպատակ ուներ տնտեսական և առևտրային հարաբերությունների խորացման շնորհիվ նախ անդամակցել ԵՏՀ մաքսային միությանը, ապա դառնալ ԵՏՀ անդամ:

Վավերացումից 6 տարի անց՝ 1970թ. նոյեմբերի 23-ին, ընդունվեց «Լրացուցիչ արձանագրությունը», որով հաստատվեց գործողությունների ժամանակացույցը՝ նպատակ ունենալով հետագա 12 տարիների ընթացքում Թուրքիան դարձնել մաքսային միության անդամ:

Թուրքիայի գյուղատնտեսությունը զգալի օգուտ քաղեց 1970թ. ստորագրված արձանագրությունից, և գյուղատնտեսական ապրանքների արտահանումը ԵՏՀ աճեց մի քանի անգամ: 1970-ական թթ. Թուրքիայի տնտեսական զարգացման ռազմավարությունը և մաքսային քաղաքականությունը հակասում էին ԵՏՀ-ի հետ առևտրի ազատականացման վերաբերյալ ԵՄ-ի առջև ստանձնած պարտավորություններին: Այս գործոնին գումարվեցին նաև 1974թ. հուլիս-օգոստոսին Թուրքիայի ներխուժումը Կիպրոս և կզոու գրեթե կեսի բռնակալումը: Թուրքիա-Հունաստան հարաբերությունների կտրուկ վատթարացումը բացասական հետևանքներ ունեցավ ԵՏՀ-ի հետ հարաբերություններում,

1974 թվականը շրջադարձային էր Թուրքիա-ԵՏՀ հարաբերություններում: Կիպրոս ներխուժման եվրոպական և ամերիկյան արձագանքները Թուրքիայում բերեցին ոչ միայն հակաամերիկյան, այլ նաև հակաեվրոպական տրամադրությունների աճի: Թուրքիայի հասարակական և քաղաքական շրջանակները ժամանակ առ ժամանակ բարձրաձայնում էին ԵՏՀ-ին անդամակցության նպատակահարմարության հարցը: Որոշ շրջանակների համար առավել անընդունելի էր այն հանգամանքը, որ ԵՏՀ 9 անդամների և երկու ասոցիացված անդամների (Թուրքիա և Հունաստան) միջև առկա էր հսկայական տարբերություն: Վերջիններս, ելնելով իրենց կարգավիճակից, չէին մասնակցում որոշումների կայացմանը, հետևաբար, ստիպված էին հաշվի նստել հիմնական անդամների ընդունած որոշումների հետ:

11. Թուրքիայի քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների նկատմամբ

1961թ. հունիսի 22-ին մահանում է Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը: Նոր պատրիարք է ընտրվում Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, որն այդ աթոռի ամենաերկարակյաց գահակալներից էր (1961-1990թթ.): Գարեգին պատրիարքի մահվան և Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի ընտրության ժամանակ Ստամբուլում է գտնվել նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն: Շնորհք Գալուստյան պատրիարքի ջանքերով համայնքային կյանքում աշխուժություն էր նկատվում: Գավառներում մնացած և ուծացման տարբեր մակարդակներում գտնվող հայերի հարցը մշտապես եղել է Շնորհք պատրիարքի ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, նա ոչ միայն ակտիվորեն զբաղվել է ուծացած հայության հարցերով, այլև գիտական հետազոտության է ենթարկել խնդիրը, տվել Թուրքիայում բնակվող հայության խմբային բաժանումներ: Հատկանշական է, որ հենց Շնորհք պատրիարքի գահակալության տարիներին և մեծապես նրա ջանքերով է «Էրմենի Վարթո աշիրեթի»[25] անվամբ հայտնի քրդախոս հայերի ցեղախումբը տեղափոխվել Ստամբուլ, սկսել շփվել հայ համայնքի հետ:

Շնորհք պատրիարքի գահակալությունը նաև համընկնում է միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության խնդրի ակտիվացման ժամանակաշրջանի հետ, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում համայնքի և անձամբ պատրիարքի համար:

1960-1980-ական թվականներին հայ համայնքի առանձին անդամներ փորձել են դիրքեր զբաղեցնել քաղաքական դաշտում և տարբեր կուսակցությունների ցուցակներով առաջադրվել պատգամավոր, քաղաքապետարանների կամ թաղապետարանների ավագանի: Օրինակ՝ 1964թ. հայտնի գրող Զավեն Բիբերյանը Թուրքիայի բանվորական կուսակցության ցուցակով առաջադրվում է պատգամավոր, իսկ 1968թ. ընտրվում

25 Ի դեպ, Վարթո ցեղախմբի անդամ է նաև պոլսահայ համայնքի հայտնի գործիչ Հրանտ Դինքի կինը՝ Ռաքել Դինքը:

Ստամբուլի ավագանու խորհրդի անդամ: Սարգիս Չերքեզօղլուն, Մասիս Քյուրքչուգիլը, Հրանտ Դինքը, Արմենակ Բաքրջյանը (Օրհան Բաքըր), Գրիգոր Ալթունը և ուրիշներ մասնակցել են ձախակողմյան շարժումներին՝ անդամակցելով տարբեր կուսակցությունների և կազմակերպությունների, սակայն ընդհանուր առմամբ թե՛ համայնքային կառույցները, թե՛ պատրիարքարանն աշխատել են հեռու մնալ քաղաքականությունից:

Թուրքահայ համայնքի համար փորձության տարիներ դարձան 1970-1980 թվականները, երբ Հայկական հարցի ակտիվացման և հայկական կազմակերպությունների վրիժառուական գործողությունների արդյունքում Թուրքիայում ուժեղացան հակահայկական տրամադրությունները: Այդ տեսակետից առավել դժվար կացություն ստեղծվեց 1982թ. Անկարայի Էսենբողա օդանավակայանում կազմակերպված գործողության և դրան հետևած Լևոն Էքմեքչյանի դատավարության ժամանակ: Թուրքական իշխանություններն իրենց քարոզչական քաղաքականության մեջ օգտագործում էին նաև թուրքահայ համայնքը, և պատրիարք Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը ստիպված եղավ հանդես գալ նման գործողությունները դատապարտող հայտարարություններով: Թուրքական իշխանություններն, իրենց հերթին, փորձում էին տարանջատում մտցնել թուրքահայ համայնքի և Սփյուռքի միջև:

Քրիստոնյա մյուս փոքրամասնության՝ հույների դեմ ևս թուրքական հալածանքի քաղաքականությունը շարունակվում էր նույն ինտենսիվությամբ: Այդ քաղաքականության մի ցայտուն դրսևորում տեղի ունեցավ 1964թ.: Հայտնի է, որ Լոզանի վեհաժողովում 1923թ. հունվարի 30-ին Հունաստանի և Թուրքիայի միջև կնքվեց «Բնակչության փոխանակման վերաբերյալ» պայմանագիր, ըստ որի՝ Թուրքիայի քաղաքացի հույն ուղղափառները և Հունաստանի քաղաքացի մուսուլմանները պետք է փոխանակվեին: Բացառություն էր արվում միայն Ստամբուլի բնակիչ հույների և Արևմտյան Թրակիայի բնակիչ մուսուլմանների համար, որոնք իրավունք ունեին մնալ: 1930թ. Թուրքիայի և Հունաստանի միջև կնքված Անկարայի պայմանագրով Հունաստանի քաղաքացիություն ունեցող ստամբուլաբնակ հույներին բնակության, աշխատանքի և սեփականության իրավունք էր տրվում:

Չնայած հունական համայնքի նկատմամբ մշտական հալածանքներին, որոնք նկարագրված են նախորդ գլխում, 1960-ական թթ. Թուրքիայում դեռևս պահպանվել էր մի քանի տասնյակ հազարի հասնող հույն բնակչություն: Թուրքական իշխանությունները, Կիպրոսի հարցի սրացումը պատրվակ համարելով, գործի դրեցին իրենց ծրագիրը, որի թիրախը դարձան հիմնականում ստամբուլաբնակ և Հունաստանի քաղաքացիություն ունեցող հույները:

1964թ. մարտի 16-ին Թուրքիայի կառավարությունը՝ վարչապետ Իսմեթ Ինյոնյուի գլխավորությամբ, չեղյալ հայտարարեց 1930թ. պայմանագրով նախատեսվող ստամբուլաբնակ հույների բնակության իրավունքը և նրանց արտաքսման հրաման տվեց: Այդ ժամանակ Ստամբուլում բնակվում էր հունական քաղաքացիություն ունեցող մոտ 12.500 մարդ, որոնք պարտադիր ենթակա էին արտաքսման: Այս 12.500-ի արտաքսումը, սակայն, ենթադրում էր ավելի լայն ծավալների ընդգրկում, քանի որ նրանք ամուսնական և ընտանեկան կապերով կապված էին Թուրքիայի քաղաքացի հույների հետ և նրանց արտաքսումն ինքնաբերաբար ենթադրում էր նաև մյուսների արտաքսում: Այսինքն՝ կային բազմաթիվ ընտանիքներ, որոնցում կինը Հունաստանի քաղաքացի էր, իսկ ամուսինը՝ Թուրքիայի, և արտաքսման հրամանից հետո ստիպված արտագաղթում էր ամբողջ ընտանիքը:

Կառավարության որոշումից հետո անմիջապես հրապարակվեցին արտաքսման ենթակա անձանց ցուցակները: Սառեցվեցին այդ մարդկանց բանկային հաշիվները, ինչպես նաև սեփականության վկայականները: Արտաքսվողներն իրավունք ունեին իրենց հետ վերցնելու անձնական իրերով մի ճամպրուկ, որը չպետք է գերազանցեր 20 կիլոգրամը, և 200 թուրքական լիրա, որը հավասար էր 22 ԱՄՆ դոլարի: Նրանց մնացած ամբողջ շարժական գույքը, անձնական իրերն արգելվում էր հանել Թուրքիայի սահմաններից դուրս: 12.500 Հունաստանի քաղաքացիների հետ Թուրքիայից հեռացան նաև նրանց հետ ընտանեկան կապերի մեջ գտնվող, ինչպես նաև հալածանքի ընդհանուր մթնոլորտից վախեցած մոտ 40.000 հույներ: Այս աքսորյալ հույներին անվանում են «Ստամբուլի վերջին աքսորյալներ»:

1964թ. հոյների արտաքսումը Թուրքիայի Հանրապետությունում հետևողականորեն իրականացված էթնիկ զտման հերթական փուլերից էր, որի ճարտարապետն էր Իսմեթ Ինյոնյուն: Այսպիսով՝ 1964թ. Թուրքիայից հոյների պարտադիր և «կամովին» արտաքսումից հետո հունական համայնքը շարունակեց պահպանել լոկ խորհրդանշական ներկայություն:

Գրականություն լրացուցիչ ընթերցանության համար

1. Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-1970-ական թթ., Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. IV, Երևան, 2006, էջ 103-113:
2. Данилов В., Политическая борьба в Турции: 50-е - начало 80-х годов XX в. (политические партии и армия), Москва, 1985.
3. Данилов В., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", Москва, 1991.
4. Birand M. A, 12 Eylül Saat: 04:00, İstanbul, 1984.
5. Hale W., Turkish Politics and the Military, London, 1994.
6. Landau J., The Nationalist Action Party in Turkey. - Journal of Contemporary History, Vol. 17, No. 4. (Oct., 1982), p. 587-606.
7. Özdemir H., Siyasal Tarihi (1960-1980), Türkiye Tarihi 4. Cilt, Çağdaş Türkiye 1908-1980, İstanbul, 2005, s. 191-265.
8. Weiker W., The Turkish Revolution 1960-1961, Aspects of Military Politics, Washington, 1963.

ԳԼՈՒԽ Զ

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄ. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ (1980-1995Թ-Թ.)

1. 1980թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը

1980թ. ռազմական հեղաշրջումը լավ նախապատրաստված և մանրամասն ծրագրված գործողությունների արդյունք էր: Ռազմական հեղաշրջման նախապատրաստական գործընթացն սկսվել էր դեռ 1978թ.: Գլխավոր շտաբի (ԳՇ) պետ, բանակի գեներալ Քենան Էվրենի հրահանգով գլխավոր շտաբում սկսեց գործել մի խումբ, որը պետք է ուսումնասիրեր երկրում ռազմական հեղաշրջման անհրաժեշտությունը: Խմբի աշխատանքները ղեկավարում էր ԳՇ պետի տեղակալ, բանակի գեներալ Հայդար Սալթըքը: Նրա խմբի գլխավոր նպատակներից էր նաև ուսումնասիրել, թե ինչ հիմք պիտի ունենա զինվորականների միջամտությունը երկրի քաղաքական կյանքին:

1979թ. առաջին օրերից սկսած՝ ԳՇ պետ Քենան Էվրենը հաճախակիացրեց իր այցելությունները զորամասեր և հանդիպումները զինված ուժերի հրամանատարության հետ, որոնց ընթացքում փորձում էր հասկանալ հնարավոր ռազմական հեղաշրջման նկատմամբ բանակում տիրող տրամադրվածությունը: Զինվորական վերնախավը ռազմական հեղաշրջմանն այլընտրանք չէր տեսնում, և 1979թ. սեպտեմբերի 11-ին Հ. Սալթըքը ԳՇ սպայակազմից մի քանի սպա ընտրեց ու ձեռնամուխ եղավ ռազմական հեղաշրջում ծրագրելու գործընթացին:

1979թ. դեկտեմբերին Ք. Էվրենը, վերադառնալով Բրյուսել կատարած այցից, քննարկումներ անցկացրեց Զինված ուժերի (ԶՈՒ) հրամանատարության հետ՝ քաղաքական կյանքին միջամտելու հարցի շուրջ: Քննարկումների ժամանակ ԶՈՒ հրամանատարության որոշ անդամներ պնդում էին անհապաղ հեղաշրջում իրականացնելու անհրաժեշտության մասին: Սակայն բանակի ղեկավարությունը որոշեց այդ փուլում հանդես գալ ընդամենը նախազգուշացնող նամակով: Դեկտեմբերի 27-ին Զանքայա նախագահական նստավայրում Քենան Էվրենը նախագահ Ֆահրի Քորություրքին հանձնեց երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ բանակի մտահոգությունն արտահայտող նախազգուշացնող նամակը: «Նախազգուշացնող նամակը» նպատակ էր հետապնդում ստուգել հասարակության և իշխանությունների արձագանքները բանակի միջամտությանը: Այդ նամակն, ըստ էության, ռազմական հեղաշրջման առաջին ազդանշանն էր:

Մարտի սկզբին Հ. Սալթըքի ղեկավարած խումբը նախապատրաստեց հեղաշրջման ռազմավարությունն ընդգրկող ծրագիր, որն ստացավ «Դրոշակ գործողություն» (Bayrak Harekati) անվանումը: Զինվորականները ռազմական հեղաշրջման նախնական օր ընտրեցին հուլիսի 11-ը, որը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Բ. Էջևիթի կուսակցությունը խորհրդարանում բարձրացրել էր Դեմիրելի կառավարության անվստահության հարցը, իսկ այն քվեարկության էր դրվել հուլիսի սկզբին: Կառավարության տապալման դեպքում իշխանության ճգնաժամ էր առաջանում, ինչը լրացուցիչ հիմնավորում էր ստեղծում զինվորականների միջամտության համար: Սակայն Դեմիրելի կառավարությունը վստահության քվե ստացավ ԹԱՄԺ-ում, և զինվորականները նպատակահարմար գտան հետաձգել հեղաշրջումը:

Օգոստոսին ռազմական հեղաշրջման կազմակերպիչները վերսկսեցին հեղաշրջման նախապատրաստման գործընթացը: Զինվորական հրամանատարությունը որոշեց հեղաշրջումն իրականացնել սեպտեմբերի 12-ին: Օրվա ընտրությունը պայմանավորված էր երկու հանգամանքով: Նախ՝ ԹԱՄԺ-ը ԱՓԿ առաջարկով քվեարկության էր դրել արտաքին գործերի նախարար Հայրեթին Էրքմենի անվստահության հարցը, որը կայանալու էր սեպտեմբերի սկզբին. Էրքմենին անվստահություն հայտնելու դեպքում

հավանական էր Դեմիրելի ամբողջ կառավարության տապալումը, ինչը կառաջացներ իշխանության ճգնաժամ: Երկրորդ՝ սեպտեմբերի 9-ին նախատեսված էր Թուրքիայում անցկացնել ՆԱՏՕ «Էնվիլ Էքսպրես» (Anvil Express) կոչվող զորավարժությունները, և հնարավոր էր այդ զորավարժություններով քողարկել զինված ուժերի տեղաշարժերը:

1980թ. սեպտեմբերի 11-ի երեկոյան ձերբակալվեց և գաղտնի կերպով գլխավոր շտաբ բերվեց Թուրքիայի ռադիոյի ու հեռուստատեսության վարչության (Türkiye Radyo ve Televizyon Kurumu - TRT) տնօրեն Դողան Քասարօղլուն, որը պահվեց ԳՇ-ում մինչև հեղաշրջման գործողությունների ավարտը: Գլխավոր շտաբ բերվեց նաև հեռուստատեսության հաղորդավար Մեսութ Մերջանը, որին հրամայված էր ծանոթանալ զինվորականների հայտարարություններին՝ հեռուստատեսությամբ հայտարարելու համար: Գիշերը ժամը 2-ին զինվորականները հայտնեցին հեղաշրջում սկսելու մասին գաղտնաբառը, որից հետո սկսվեց ռազմական հեղաշրջման իրականացումը: Գլխավոր շտաբ բերվեցին նաև ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց այնտեղ պահեցին մինչև գործողությունների ավարտը: Ապա զորքերը շրջապատեցին քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների գրասենյակները: Զինվորականները հատուկ ուշադրություն էին դարձնում այն կազմակերպություններին, որոնցից որոշակի հակազդեցություն էին սպասում, ինչպես, օրինակ, ԱՇԿ-ին, ԴԻՍԿ-ին, «գաղափարապաշտների» կազմակերպություններին և այլն: Զինվորականները գլխավոր շտաբ «հրավիրեցին» չորս խոշոր կուսակցությունների գլխավոր քարտուղարներին՝ Հ. Զեթինին (ՀԺԿ), Ն. Մենթեշեին (ԱԿ), Օ. Ասիլթյուրքին (ԱՓԿ) և Ն. Գյուլթեքին (ԱՇԿ): Կուսակցությունների գլխավոր քարտուղարներին ծանոթացրին Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) առաջին հայտարարությանը: Կուսակցությունների ղեկավարներից Բյուլենթ Էջևիթին և Սուլեյման Դեմիրելին փոխադրեցին Դարդանելի ափին գտնվող Համզաքյոյ զինվորական կայազոր, Նեջմեթին Էրբաքանին՝ Էգեյան ծովում գտնվող Ուզունադա կղզի, երեք օր փախուստի մեջ գտնվելուց հետո նրան միացավ նաև Ալփարսլան Թյուրքեշը: «Հանրապետական վստահություն» կուսակցության նախագահ Թուրհան Ֆեյզիօղլուն և սենատի նախագահ

Իհսան Չաղլայանգիլը տնային կալանքի ենթարկվեցին: Զինվորականները ծերբակալեցին «Ազգայնական շարժում» կուսակցության և «Ազգային փրկություն» կուսակցության բոլոր պատգամավորներին:

Այդպիսով՝ կարճ ժամանակահատվածում, առանց որևէ լուրջ դիմադրության, զինվորականներն իրենց վերահսկողության տակ վերցրին ռազմավարական նշանակության բոլոր օբյեկտները, կալանքի տակ վերցրին ազդեցիկ քաղաքական գործիչներին՝ զրկելով հակազդեցության ամենաչնչին հնարավորությունից, ինչն ինքնին վկայում էր հեղաշրջման հանգամանալի կազմակերպված լինելու մասին:

Սեպտեմբերի 12-ի առավոտյան ժամը 4-ին հեռուստատեսությամբ հնչեց ռազմական ուսումնարանի քայլերգը, որից հետո ընթերցվեց Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ, Milli Güvenlik Konseyi)[26] առաջին հայտարարությունը: Այնտեղ նշվում էր, որ երկրի և ազգի միասնության պահպանման, հնարավոր քաղաքացիական պատերազմի կանխման, պետության և նրա հեղինակության վերականգնման նպատակով թուրքական բանակը, կատարելով պարտքը, իր ձեռքն է վերցնում երկրի ամբողջ իշխանությունը: Հայտարարության մեջ նշվում էր, որ լուծարվել են խորհրդարանը և կառավարությունը: Նույն օրը հրապարակվեց ԱԱԽ ևս 7 հայտարարություն:

ԱԱԽ 4-րդ հայտարարության մեջ նշվում էր, որ երկրի ամբողջ իշխանությունն անցնում է նորաստեղծ Ազգային անվտանգության խորհրդին: Հայտարարությամբ սահմանվում էր խորհրդի անդամների կազմը. նախագահ՝ ԳՇ պետ Քենան Էվրեն, անդամներ՝ ցամաքային զորքերի հրամանատար Նուրեթին Էրսին, ռազմաօդային զորքերի հրամանատար Թահսին Շահինքայա, ռազմածովային զորքերի հրամանատար Նեժաթ Թյումեր և ժանդարմերիայի հրամանատար Սեդաթ Ջելասուն: ԱԱԽ գլխավոր քարտուղար էր նշանակվում Հայդար Սալթըքը:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ը աջակցում էր հեղաշրջման կազմակերպիչներին: Ռազմական հեղաշրջման նախապատրաստմանն աջակցելու գործով զբաղվում էր Թուրքիայում Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) ներկայացուցիչ Փոլ Հենցը: Ուշագրավ է այն փաստը, որ 1980թ. սեպտեմբերի 12-ին Փ. Հենցը, զանգահարելով Սպիտակ տուն, զեկուցել է՝ «Our boys have done it» (Մեր տղաները դա արել են)՝ նկատի ունենալով ռազմական հեղաշրջումը:

Հեղաշրջումն արդեն փաստ էր. թուրքական բանակը քսան տարիների ընթացքում արդեն երրորդ անգամ ուղղակի միջամտեց երկրի քաղաքական գործընթացին:

26 Թուրքիայում նախքան հեղաշրջումը գործող Ազգային անվտանգության խորհուրդը թուրքերեն կոչվում էր «Milli Güvenlik **Kurulu**»:

2. Զանգվածային պարտամիջոցներ

Ռազմական հեղաշրջման արդյունքում երկրի ամբողջ իշխանությունն անցավ անսահմանափակ իշխանությամբ օժտված ԱԱԽ ձեռքը, և Թուրքիայում սկսվեց «անցումային շրջանը», որը սովորաբար հաջորդում է ռազմական հեղաշրջումներին: 1980թ. հեղաշրջման անցումային շրջանը, նախորդ հեղաշրջման (1960թ.) և զինվորականների «միջամտության» (1971թ.) անցումային շրջանների համեմատ, բավական երկար տևեց՝ ավելի քան երեք տարի: Դա հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ 1980թ. ռազմական հեղաշրջման պատճառները խորն ու տարաբնույթ էին, և հետևաբար՝ զինվորականներից ավելի երկար ժամանակ էր պահանջվելու հեղաշրջման պատճառները վերացնելու համար:

Զինվորական վերնախավի՝ իշխանությունը երկար տնօրինելու նպատակներն ակնհայտ դարձան սեպտեմբերի 16-ին, ԱԱԽ նախագահ Քենան Էվրենի մամուլի ասուլիսի ժամանակ: Էվրենը նշեց հեղաշրջման մի շարք նպատակներ՝ վերացնել անիշխանությունը և ահաբեկչությունը, ապահովել հասարակության անվտանգությունը, կարգուկանոն հաստատել, բարձրացնել երկրի հեղինակությունը, տնտեսության վիճակը բարելավել, օրենսդրական փոփոխություններ իրականացնել, հետո նոր միայն իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին: Այսպիսով՝ պարզ էր դառնում, որ զինվորական իշխանությունները նպատակադրված

են երկրում բազմաթիվ փոփոխություններ իրականացնել և հետո նոր իշխանությունը փոխանցել կուսակցություններին, ինչը երկար ժամանակ էր պահանջելու:

Հեղաշրջումից հետո կառավարության ղեկավարի պաշտոնում ԱԱԽ-ն նշանակեց ռազմաօդային զորքերի նախկին հրամանատար, զորացրված ծովակալ Բյուլենթ Ուլուսուին: Նա նախկինում ռազմածովային զորքերի հրամանատարն էր և որոշակի մասնակցություն էր ունեցել հեղաշրջման նախապատրաստման նախնական փուլին: Ուլուսուի կառավարության մեջ ընդգրկված էին անկուսակցական տեխնոկրատներ և մի քանի զորացրված զինվորականներ:

Բ. Ուլուսուի կառավարության ծրագիրը երեք հիմնական խնդիր էր նախանշում՝ կարգուկանոն հաստատել երկրում, բարելավել երկրի տնտեսական դրությունը և օրենսդրական դաշտում բազմաթիվ, այդ թվում և սահմանադրական փոփոխություններ իրականացնել: Ըստ երևույթին, զինվորական իշխանությունների առաջնային նպատակը երկրում կարգուկանոն հաստատելն էր: Ինչ վերաբերում է տնտեսական բնագավառում կառավարության քաղաքականությանը, ապա այն շարունակելու էր «հունվարի 24-ի» բարեփոխումների ծրագիրը և միջազգային կազմակերպություններից ու պետություններից ակնկալվող վարկերի միջոցով փորձելու էր երկիրը դուրս բերել տնտեսական ճգնաժամից: Ավելացնենք միայն, որ «հունվարի 24-ի» բարեփոխումների ծրագիրն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով վարչապետի տեղակալ և էկոնոմիկայի նախարար նշանակվեց Թուրգութ Օզալը:

Կարգուկանոն հաստատելու հիմնական միջոցը, բարձրագույն զինվորականների տեսանկյունից, երկրի ողջ տարածքում զանգվածային պատժամիջոցների կիրառումն էր: Ռազմական հեղաշրջումից անմիջապես հետո զանգվածային ձերբակալություններ սկսվեցին: Սկզբնական շրջանում ձերբակալությունների գլխավոր թիրախ ընտրվեցին ձախակողմյան ծայրահեղական կազմակերպությունները և «գորշ գայլերի» ազգայնամոլական շարժման ակտիվիստները: Դրանով զինվորականները փորձում էին կտրուկ միջոցներով վերջ դնել երկիրը կաթվածահար անող ահաբեկչությանը և բացառել այդ շարժումների հնարավոր հակազդեցությունը: Արդեն 1980թ. հոկտեմբերի 8-ին մահապատժի ենթարկվեց երկու երիտասարդ՝ 24-ամյա ձախակողմյան Նեջդեթ Ադալը և 22-ամյա աջ ծայրահեղական, «գորշ գայլ» Մուսթաֆա Փեհլիվանօղլուն:

Ռազմական հեղաշրջումից հետո, երկու ամսվա ընթացքում, ահաբեկչական գործողություններին մասնակցելու մեղադրանքով ձերբակալվել է 7945 մարդ, այն դեպքում, երբ 1979թ. նույն ժամանակահատվածում ձերբակալվել էր ընդամենը 170-ը: Առաջին երկու ամիսների ընթացքում իշխանություններն առգրավել են 160 հազար միավոր հրազեն, իսկ արդեն 1981թ. հուլիսին այդ թիվը հասնում էր մոտ 640 հազարի: Խիստ պատժամիջոցների կիրառման արդյունքում զինվորական իշխանություններին հաջողվեց հասնել իրենց նպատակին՝ կտրուկ նվազեցնել ահաբեկչական գործողությունները: Այսպիսով, եթե 1979թ. սեպտեմբերի 12-ից 1980թ. սեպտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում ահաբեկչության զոհ էր դարձել 2677 քաղաքացի, ապա 1980թ. սեպտեմբերի 12-ից մինչև 1981թ. սեպտեմբերի 11-ն այդ թիվը հասել էր 227-ի, իսկ հաջորդ տարի այդ թիվը կազմում էր 63:

Սակայն զինվորական իշխանություններն ահաբեկչության դեմ պայքարի քողի տակ ձերբակալությունների և պատժամիջոցների զանգվածային գործողություններ սկսեցին, որոնց նպատակն էր, «հարմար առիթն» օգտագործելով, արմատախիլ անել իրենց համար անցանկալի շարժումները: Զինվորականները ջախջախիչ հարված հասցրին այն շարժումներին, որոնք նրանց տեսանկյունից վտանգ էին ներկայացնում քեմալական Թուրքիայի համար: Այսպես, սեպտեմբերի 12-ի վարչակարգի ժամանակ 650 հազար մարդու դեմ դատական գործ հարուցվեց, որոնցից 230 հազարը դատապարտվեց: 7 հազար հոգու համար մահվան դատավճիռ պահանջվեց, 517 մարդ մահապատժի դատապարտվեց: Անցումային շրջանում 388 հազար մարդ զրկվեց անձնագրերից, 14 հազարը՝ քաղաքացիությունից: 30 հազար մարդ «վտանգավոր» լինելու պատճառով աշխատանքից հեռացվեց, իսկ 30 հազար մարդ՝ որպես քաղաքական փախստական, հեռացավ երկրից: Արգելվեց ավելի քան 23 հազար կազմակերպության գործունեությունը: 3854 դասախոս հեռացվեց աշխատանքից: Մի քանի հարյուր մարդ մահացավ բանտերում՝ նրանց դեմ կիրառված բռնարարքներից ու խոշտանգումներից:

Ռազմական պատժամիջոցները հիմնականում ուղղված էին ձախ շարժումների դեմ, զինվորական վերնախավը ջախջախիչ հարված հասցրեց այդ շարժումներին: Տասնյակ հազարավոր մարդիկ դատապարտվեցին՝ ձախ շարժման դեմ ուղղված Թուրքիայի քրեական օրենսգրքի 141 և 142 հոդվածներով: Մոտ 100 հազար մարդ դատապարտվեց «կազմակերպության անդամ լինելու» (örgüt üyesi olmak) մեղադրանքով: Ռազմական հեղաշրջումից հետո 18 ձախակողմյան երիտասարդ մահապատժի ենթարկվեց:

Անցումային շրջանում իշխանություններն առանձնահատուկ կոշտ դիրքորոշում էին որդեգրել ԴԻՍԿ-ի նկատմամբ: Հեղաշրջումից անմիջապես հետո ձերբակալվեցին ԴԻՍԿ ղեկավարները, այդ թվում և կազմակերպության նախագահ Աբդուլա Բաշթյուրքը: Նրանց նկատմամբ անմարդկային խոշտանգումներ էին կիրառվում բանտերում:

Զինվորական իշխանությունների պատժամիջոցների գլխավոր թիրախ դարձավ նաև քրդական շարժումը: Զինվորականները «հարմար առիթը» փորձեցին օգտագործել՝ քրդական շարժումն իսպառ վերացնելու համար: 1981թ. հոկտեմբերին Քենան Էվրենն իր հարցազրույցներից մեկում նշում էր, որ ամեն անգամ, երբ թուրքական պետությունը թուլանում է, քրդական շարժումը գլուխ է բարձրացնում և փորձում քանդել երկրի միասնականությունը: Էվրենը նշում էր, որ իրենք ամեն ինչ կանեն քրդական հարցն «արմատախիլ» անելու համար:

Անցումային շրջանում զինվորականները խիստ պատժամիջոցներ կիրառեցին նաև զանգվածային լրատվական միջոցների նկատմամբ: Նախ, հեղաշրջումից անմիջապես հետո ԱԱԽ-ն ԹՐԹ տնօրեն նշանակեց զինվորական ներկայացուցչի: Հեռուստատեսությամբ ու ռադիոյով եթեր հեռարձակվող նյութերն սկսեցին մանրամասն գրաքննության ենթարկվել: Անցումային շրջանում 300 օր ժամանակով արգելված էին բոլոր թերթերը: 13 գլխավոր թերթերի նկատմամբ դատական գործեր հարուցվեցին: 300 լրագրողի նկատմամբ կիրառվեց բռնություն, իսկ 3 լրագրող հրազենային հարձակման զոհ դարձավ:

Թուրքիայում չորս գլխավոր կուսակցություններից՝ ՀԺԿ, ԱԿ, ԱՓԿ և ԱՇԿ, ամենադաժան պատժամիջոցները կիրառվեցին հատկապես ԱՇԿ-ի

նկատմամբ: Հեղաշրջումից անմիջապես հետո զինվորականները կտրուկ հարված հասցրին «գորշ գայլերի» շարժմանը: Ձերբակալվեցին մեծ թվով «գորշ գայլեր»: Ալփարսլան Թյուրքեշի կուսակցության նկատմամբ դատական գործն սկսվեց 1981թ. օգոստոսի 19-ին: Մեղադրվող 587 «գորշ գայլերից» ձերբակալված էր 498-ը, որոնցից 216-ի, այդ թվում և Թյուրքեշի համար մահվան դատավճիռ էր պահանջվում: Հեղաշրջումից հետո ութ աջ ծայրահեղական մահապատժի ենթարկվեց: Թյուրքեշը դատապարտվեց 11 տարի, մեկ ամիս և 10 օր ազատազրկման: Հարկ է նշել, որ «գորշ գայլերի» նկատմամբ զինվորական իշխանությունների գործողությունները միանշանակ չէին: Զինվորական իշխանությունները, ճնշող մեթոդներ կիրառելով «գորշ գայլերի» նկատմամբ, փորձում էին նրանց հնարավորություն չտալ հակազդող միջոցներ ձեռնարկելու, սակայն հետագայում, երբ արդեն զինվորական իշխանության համար «գորշ գայլերը» սպառնալիք չէին ներկայացնում, զինվորական վերնախավը կրկին նրանց սկսեց օգտագործել «սև աշխատանք» կատարելու համար:

Իսլամամետ «Ազգային փրկություն» կուսակցության նկատմամբ զինվորականների հարվածը նույնպես աչքի էր ընկնում խստությամբ: Կուսակցության ակտիվիստները ենթարկվեցին դատական պատասխանատվության: Կուսակցության նախագահ Նեջմեթին Էրբաքանը դատապարտվեց 4 տարի ազատազրկման:

Սակայն 1980թ. ռազմական հեղաշրջումից հետո ԱԱԽ քաղաքականությունը կրոնի հանդեպ խիստ զգույշ էր, և, ի տարբերություն ձախ և աջ ծայրահեղականների, որոնք ջախջախվեցին զինվորական իշխանությունների կողմից, իսլամական շարժումը ոչ միայն փրկվեց, այլև 1980-ական թթ. աճեց նրա նշանակությունը: Կրոնի նկատմամբ զինվորական իշխանությունների քաղաքականությունը միտված էր երկրում ակտիվացած կրոնական արմատականությանը հակազդելուն: Զինվորականները խիստ մոտեցում ցուցաբերեցին կրոնական մոլեռանդություն և ծայրահեղականություն հրահրողների նկատմամբ:

Երկրի խոշորագույն կուսակցությունների՝ ՀԺԿ-ի և ԱԿ-ի նկատմամբ զինվորական իշխանությունների քաղաքականությունն աչքի էր ընկնում զգուշավորությամբ: Սուլեյման Դեմիրելը և կուսակցության ակտիվիստները

խուսափեցին զինվորականների պատժամիջոցներից, սակայն Դեմիրելն, իր հերթին, խուսափում էր հրապարակային գործունեությունից: Նույնը չի կարելի ասել նրա քաղաքական հակառակորդ Բյուլենթ Էջևիթի մասին, որը 1981 և 1982թթ. ընթացքում զինվորական ռեժիմը քննադատելու համար մի քանի անգամ դատական պատասխանատվության ենթարկվեց: Եղան նաև դեպքեր, երբ ՀԺԿ անդամները մեղադրվեցին ձախ շարժմանը ցուցաբերած աջակցության համար, և նրանց նկատմամբ պատժամիջոցներ կիրառվեցին: Հիշատակման է արժանի հատկապես Ստամբուլի նախկին քաղաքապետ, ՀԺԿ անդամ Ահմեթ Իշվանի նկատմամբ դատական գործընթացը. նա մեղադրվում էր 1977թ. մայիսի 1-ին ԴԻՍԿ-ի ցույցին կազմակերպչական աջակցություն ցուցաբերելու համար:

Այսպիսով՝ թուրքական իշխանությունները զանգվածային ձերբակալությունների միջոցով ծանր հարված հասցրին ոչ միայն ահաբեկչական, այլև այն քաղաքական կազմակերպություններին, որոնք այս կամ այն պատճառներով անընդունելի էին զինվորական իշխանությունների համար:

3. Անցում քաղաքացիական կառավարման

Սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման ղեկավարներն իրենց առաջին իսկ հայտարարություններում ընդգծեցին հեղաշրջման պատճառները վերացնելուն պես իշխանությունը կրկին քաղաքական կուսակցություններին վերադարձնելու անհրաժեշտությունը: Պարզ էր նաև, որ արևմտյան երկրները, որոնցից զինվորականությունը մեծածավալ վարկեր էր ակնկալում, չէին հանդուրժի երկարաժամկետ ռազմական դիկտատուրան: Սակայն անորոշ էին մնում այն հարցերը, թե ինչպիսին է լինելու նախքան հեղաշրջումը գործող քաղաքական կուսակցությունների ճակատագիրը, երբ և ինչ պայմաններում են զինվորականներն իշխանությունը փոխանցելու քաղաքացիական ուժերին:

1981թ. հոկտեմբերի 16-ին ԱԱԽ որոշմամբ լուծարվեցին և արգելվեցին երկրի բոլոր քաղաքական կուսակցությունները: ԱԱԽ նախագահ Քենան Էվրենը զինվորականների այդ քայլը բացատրում էր այն հանգամանքով, որ քաղաքական կուսակցությունների ղեկավարները, շրջանցելով զինվորականների արգելքները, փորձում էին ազդեցություն ունենալ երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացների, ինչպես նաև մամուլում տպագրվող հոդվածների միջոցով ճնշումներ գործադրել զինվորական իշխանությունների վրա:

Վերոնշյալ քայլը հիմնականում ուղղված էր նախքան հեղաշրջումը գործող քաղաքական կուսակցությունների և դրանց ղեկավարների դեմ՝ նրանց զրկելով երկրում ծավալվելիք քաղաքական գործընթացներին մասնակցելու հնարավորությունից: Զինվորականները նպատակ ունեին իրենց հսկողությամբ ձևավորել երկրի նոր քաղաքական համակարգը, որի հիմնական խաղի կանոնները սահմանվելու էին նրանց կողմից մշակվող սահմանադրության միջոցով:

Զինվորականներն ընդգծում էին նոր սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը: ԱԱԽ գլխավոր քարտուղար Հայդար Սալթըքը հանրությանը ներկայացրեց ԱԱԽ՝ «նորմալ ժողովրդավարական համակարգի» անցնելու ծրագիրը: Ծրագրի հիմնական փուլերն էին՝ Սահմանադիր ժողովի ձևավորման համար նախնական պայմանների նախապատրաստում, Սահմանադիր ժողովի կողմից նոր սահմանադրության նախագծի մշակում, սահմանադրական հանրաքվեի կազմակերպում, կուսակցությունների մասին նոր օրենքի ընդունում և խորհրդարանական ընտրությունների միջոցով իշխանության փոխանցում քաղաքական կուսակցություններին: Դրանից հետո դադարելու էին գործել Սահմանադիր մեջլիսն ու ԱԱԽ-ն, և երկիրն անցում էր կատարելու «նորմալ ժողովրդավարական քաղաքական կյանքին»:

Նոր սահմանադրության նախագիծը նախապատրաստելու և մինչև խորհրդարանի գումարումը երկրի օրենսդրական գործառույթներն իրականացնելու նպատակով 1981թ. հունիսին 29-ին ԱԱԽ-ն օրենք ընդունեց Սահմանադիր ժողով (Kurucu Meclis) ստեղծելու մասին: Սահմանադիր ժողովը բաղկացած էր ԱԱԽ-ից և Խորհրդատվական մեջլիսից (Danışma Meclisi): Խորհրդատվական ժողովը/մեջլիս (ԽՄ) կազմված էր 160 անդամից, որոնցից 120-ը ընտրվում էր շրջանների՝ ռազմական դրության հրամանատարության ներկայացուցիչներից և հաստատվում ԱԱԽ-ի կողմից, իսկ մնացած 40 անդամներին ուղղա-

կիորեն ԱԱԽ-ն էր նշանակում: Ըստ էության, ԽՄ-ն, ինչպես հուշում է նաև անվանումը, հիմնականում ուներ խորհրդատվական գործառույթներ, վերջնական որոշումներն ընդունում էր ԱԱԽ-ն:

ԽՄ նախագահ նշանակվեց նախկին վարչապետ Սադի Ըրմաքը: 1982թ. աշնանը ԽՄ-ն նոր սահմանադրության տեքստը հանձնեց ԱԱԽ դատին: Զինվորականները, որոշ «խմբագրումներից» հետո, հոկտեմբերի 24-ին հատուկ օրենքով հաստատեցին սահմանադրության վերջնական տեքստը, որից հետո ԱԱԽ-ն այն հրապարակեց: Այդ տեքստի հրապարակումը, հանրաքվեից ընդամենը հաշված օրեր առաջ, զրկում էր հասարակության լայն շրջանակներին երկրի մայր օրենքին մանրամասն ծանոթանալու հնարավորությունից:

1982թ. սեպտեմբերի 24-ին ԱԱԽ-ն ընդունեց սահմանադրական հանրաքվեի մասին օրենքը, համաձայն որի՝ սահմանադրությունն ընդունվում էր ընտրողների ձայների պարզ մեծամասնությամբ: Սահմանադրության հանրաքվեն նշանակվեց 1982թ. նոյեմբերի 7-ին:

4. Թուրքիայի երրորդ սահմանադրության ընդունումը և անցումը քաղաքացիական իշխանությանը

1982թ. նոյեմբերի 7-ին համաժողովրդական քվեարկության արդյունքում ընդունվեց ԱԱԽ հեղինակած Թուրքիայի երրորդ սահմանադրությունը: Հանրաքվեի մասնակիցների 91,37 տոկոսը կողմ քվեարկեց նոր սահմանադրությանը: Հանրաքվեին մասնակցությունը պարտադիր էր, չմասնակցողները հինգ տարի ժամկետով զրկվելու էին ընտրելու և ընտրվելու իրավունքից: Նախորդների նման՝ նոր սահմանադրությունը ևս ծնվեց ներկայացուցչական քննարկումների, մշակումների ու կարծիքների փոխանակման բացակայության պայմաններում, որի պատճառով քաղաքական ուժերն օտարվեցին և, հետևաբար, հենց սկզբից մտավորականության, գիտական ու քաղաքական շրջանակների կողմից սահմանադրությունը չարժանացավ դրական ընդունելության: 1982թ. սահմանադրության հանրաքվեով Էվրենն ընտրվեց նախագահ, այդ քայլը կարգավորվում էր նոր սահմանադրության վեցերորդ գլխի առաջին անցումային հոդվածով, որտեղ նշված էր. «...հանրաքվեի անցկացման օրն Ազգային անվտանգության խորհրդի նախագահ հանդիսացող անձը յոթ տարի ժամկետով դառնում է հանրապետության նախագահ...»:

Սահմանադրության նախաբանում ընդգծված էին հանրապետության հիմնադիր Աթաթյուրքի իրականացրած բարեփոխումների, ներմուծված սկզբունքների և պատգամած գաղափարների անքակտելիության կարևորությունը և դրանց հիման վրա նոր հասարակական-քաղաքական իրականության ստեղծման անհրաժեշտությունը:

Իշխանությունը բաժանված էր օրենսդիր, գործադիր և դատական մարմինների միջև: Միապալատ օրենսդիր մարմինը՝ ԹԱՄԺ-ը, բաղկացած էր 400 պատգամավորից (հ. 75): Պատգամավոր ընտրվելու իրավունք ունեին (հ. 76) 30 տարին լրացած, բանակում ծառայության անցած այն քաղաքացիները, որոնք նախկինում չէին դատապարտվել կոռուպցիայի, կաշառակերության, գողության, պետական դավաճանության և այլ հոդվածներով: Ընտրություններն անցկացվում էին յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ (հ. 77)՝ համամասնական ընտրակարգով: Կառավարության անդամներն առաջադրվում են վարչապետի և նշանակվում նախագահի կողմից, նախարարներ կարող են առաջադրվել թե պատգամավորները, թե նրանք, ովքեր կարող են ընտրվել պատգամավոր (հ. 109, 112): Այսպիսով, կառավարության անդամների ճնշող մեծամասնությունը, որպես կանոն, նաև պատգամավորներ էին:

Կառավարությունը գլխավորում էր վարչապետը, որն ուներ բավական լայն լիազորություններ: Երկրի նախագահը, որը պետության գլուխն է (հ. 104), ընտրվում էր խորհրդարանի կողմից փակ գաղտնի քվեարկությամբ, 7 տարի ժամկետով՝ առանց վերընտրության իրավունքի (հ. 101-102): Եթե ընտրված նախագահը կուսակցական էր, ապա նա պետք է դադարեցներ կուսակցությանն իր անդամակցությունը: Նախագահի բացակայության, մահվան կամ հրաժարականի դեպքում լիազորություններն իրականացնում էր խորհրդարանի ղեկավարը (հ. 106):

Դատական իշխանությանը վերաբերող հոդվածներում ևս կատարվեցին էական փոփոխություններ: Թեև դատարանների կառուցվածքը, գործառույթներն ու իրավազորությունները սահմանվում էին օրենքով, սակայն

սահմանադրության մեջ ամրագրվեցին մի շարք հոդվածներ, որոնք առնչվում էին պետական անվտանգության դատարաններին (հ. 143), ռազմական արդարադատությանը (զինվորական դատարաններ՝ վերաքննիչ ու վճռաբեկ, և զինվորական կարգապահական դատարաններ) (հ. 145), ինչպես նաև բարձր ատյանի դատարաններին՝ Սահմանադրական դատարանին (հ. 146-153), Բարձրագույն վերաքննիչ դատարանին (հ. 154), Պետական խորհրդին (հ. 155) և այլն:

Սահմանադրության չորրորդ գլխում ներկայացվեցին քաղաքական իրավունքների և պարտականությունների մասին դրույթները, որոնցից առաջին հոդվածով (66-րդ) սահմանվում էր, որ Թուրքիայի քաղաքացիություն ունեցող յուրաքանչյուր ոք թուրք է: Սահմանադրությունը քաղաքական գործընթացներում փակուղիների կանխմանը և հաղթահարմանն ուղղված հոդվածներ էր ներառում, ինչպես, օրինակ, հանրապետության նախագահի կամ խորհրդարանի նախագահի ընտրության կարգի մանրամասն սահմանումը, ինչը նպատակ ուներ կանխել 1980թ. նախորդած շրջանում ճգնաժամերի կրկնումը: Քաղաքական կուսակցությունների՝ խորհրդարանում խմբակցություն ստեղծելու համար անհրաժեշտ պատգամավորների թվաքանակը 10-ից բարձրացվեց 20-ի: Դա նպատակ ուներ նվազեցնել խմբակցությունների կողմից խորհրդարանի աշխատանքներին խոչընդոտելու հնարավորությունը: Սահմանադրության 84-րդ հոդվածն էլ նախատեսում էր մանդատից զրկել այն պատգամավորներին, որոնք խորհրդարանական գումարման ընթացքում կփոխեին իրենց կուսակցությունը: Այս քայլը ձեռնարկված էր կանխելու պատգամավորների անցումները մի կուսակցությունից մյուսը, ինչը 1980թ. նախորդած շրջանի հիմնական խնդիրներից էր: 67-68 հոդվածները սահմանում էին քաղաքական կուսակցություններին անդամակցության հիմնական սահմանափակումները և նվազագույն տարիքը (21), ինչպես նաև ընտրություններին և հանրաքվեներին մասնակցության նվազագույն տարիքը (20): Կուսակցություններին արգելվում էր արտասահմանում ստեղծել կազմակերպություն, հիմնել երիտասարդական կամ կանանց միություններ, հիմնադրամ (հոդված 68/6), համագործակցել որևէ արհմիության, կոոպերատիվի, հիմնադրամի, միության, հասարակական կազմակերպության հետ կամ դրանցից ստանալ

նյութական օժանդակություն (հոդված 69/2): Սահմանադրության մշակման ամբողջ ընթացքում ԱԱԽ-ը բավական զգայուն էր կուսակցությունների հարցում, և 1983թ. ընդունված կուսակցությունների (ապրիլի 22) և ընտրությունների (հունիսի 10) մասին օրենքներում ամրագրվեցին մի շարք կարևորագույն դրույթներ, մշակվեցին հսկողության խիստ մեխանիզմներ: Կուսակցությունների մասին նոր օրենքի 86-89-րդ հոդվածները կոչված էին երաշխավորելու երկրի աշխարհիկ կարգերի անձեռնմխելիությունը և վերահսկելու քաղաքական նպատակներով կրոնի օգտագործման ու չարաշահման հնարավորությունը: Համաձայն նոր օրենսդրության՝ կուսակցություններին արգելվում էր խրախուսել երկրի աշխարհիկ սկզբունքների դեմ ուղղված ցանկացած ձեռնարկում:

1982թ. սահմանադրությամբ էականորեն մեծացան Ազգային անվտանգության խորհրդի դերն ու գործառույթների շրջանակը: Նոր՝ 118-րդ հոդվածն էապես բարձրացրեց ԱԱԽ կարգավիճակը: Այն արդեն պարզապես խորհրդատվական մարմին չէր: Համաձայն այս հոդվածի՝ կառավարությունն առաջնահերթություն էր տալու ԱԱԽ այն որոշումներին, որոնք վերաբերում էին պետության անկախությանը, ամբողջականությանը, հասարակության անվտանգության և խաղաղության պահպանմանը: Բացի դրանից, 1983թ. ընդունված ԱԱԽ-ի և դրա քարտուղարության մասին օրենքն ԱԱԽ քարտուղարին, որը հանդիսանում էր գործող գեներալ, իրավունք տվեց կառավարման ցանկացած քաղաքացիական մարմնում իրականացնել անսահմանափակ մշտազննում և հետևել ԱԱԽ-ի կողմից կառավարությանը ներկայացված հանձնարարականների կատարման ընթացքին:

1982թ. նոյեմբերյան սահմանադրության անցումային դրույթների համաձայն՝ 1970-ական թթ. ակտիվ քաղաքական գործունեություն ծավալած 723 անձ ընդմիշտ, 242 քաղաքական գործիչ՝ 10, իսկ 481-ը՝ 5 տարով զրկվեցին քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից, իսկ փակված կուսակցությունների անվամբ նոր կուսակցությունների վերաբացումը ևս 10 տարով արգելվեց:

Հիմնական օրենքում ամրագրվեցին ԱԱԽ ծրագրերը կրոնի և հոգևոր կրթության ոլորտներում: 14-րդ հոդվածը կտրականապես արգելում էր ծավալել քաղաքական ու հասարակական այնպիսի գործունեություն,

որը հիմնված էր կրոնական սկզբունքների վրա, իսկ 24-րդ հոդվածն արգելում էր անձնական կամ քաղաքական ազդեցության տարածման նպատակով կրոնական արժեքների ու սկզբունքների չարաշահումը: Համաձայն քրեական օրենսգրքի 163, 241 և 242 հոդվածների՝ կրոնական քարոզչությունը համարվում էր քրեորեն պատժելի, գրեթե նույն կանխարգելիչ նպատակներն ուներ 1983թ. ընդունված Միությունների մասին օրենքը:

24-րդ հոդվածը սահմանում էր նաև տարրական և միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրերում պարտադիր կրոնական կրթության մասին հիմնադրույթները: Ուշագրավ էր այդ հոդվածում տեղ գտած հակասությունը. օրինակ՝ դավանանքի և կրոնական համոզմունքների ազատության իրավունքի դրույթի հետ միասին նույն օրենքը սահմանում էր, որ կրոնական ուսուցումն իրականացվում էր պետության վերահսկողության ներքո: Ակնհայտորեն այս իրարամերժությունն ունի մեկնաբանություն. ՀՈ առաջնորդները գտնում էին, որ կրոնական կրթության բացակայությունն առաջացրել էր բարոյական անջրպետ, որը հեշտությամբ լցվում էր անցանկալի մարքսիստական, ֆաշիստական ու ծայրահեղ ազգայնական գաղափարախոսություններով: Գեներալների կարծիքով՝ երկար ժամանակ պետությունն աչքաթող էր արել կրթության կրոնական բաղադրիչը և դրանով իսկ հասարակությունում չվերահսկվող գաղափարների ու տրամադրությունների առաջացման տեղիք տվել:

136-րդ հոդվածը կարգավորում էր Կրոնի գործերի նախագահությանը (ԿԳՆ) վերաբերող լիազորությունները: ԿԳՆ-ն, որը գործում էր որպես պետության կրոնական քաղաքականությունն իրագործող հաստատություն, կոչված էր հանրությանը մատուցել իսլամի պետականորեն հաստատված տարբերակը՝ փորձելով համաձայնեցնել ազգային պետության և իսլամի միջև առկա գաղափարական անհամաձայնությունները: Մինչև 1950թ. ԿԳՆ-ն ուներ սահմանափակ աշխատակազմ, իսկ 1989թ.՝ մոտ 89.000 աշխատակից: ԿԳՆ-ն վերահսկում է երկրում գործող մոտ 80.000 մզկիթների, դրանց սպասավորների ու քարոզիչների գործունեությունը (վերջիններս համարվում են պետական ծառայողներ), ինչպես նաև կրոնական գրականության, դասավանդվող կրոնական առարկաների բովանդակությունը: ԿԳՆ-ն ընդունում է իսլամի սուննի

ուղղության հանիֆիական մազհաբը՝ որպես լեգիտիմ կրոնական գաղափարախոսություն:

1970-ական թվականների վերջերին համալսարանների աննախադեպ ակտիվացումը, ներհամալսարանական գաղափարական պայքարը և բռնությունները ստիպեցին ԱԱԽ-ին միջոցներ ձեռնարկել երկրի քաղաքական գործընթացներին ուսանողության անկառավարելի ակտիվացումը և տարերային մասնակցությունը բացառելու համար: 1981թ. նոյեմբերի 5-ին ընդունված բարձրագույն կրթության մասին նոր օրենքն այդ ուղղությամբ կատարված առաջին քայլն էր: Ուսանողությանն արգելվեց անդամակցությունը կուսակցություններին և գաղափարական հենք ունեցող կազմակերպություններին: Ստեղծվեց Բարձրագույն կրթության խորհուրդը, որին տրվեցին լայն լիազորություններ բուհերի կադրային քաղաքականության հարցերում (դասախոսական կազմի պարտականությունների սահմանում, նրանց կոչումների շնորհում, ծառայողական առաջխաղացում և կենսաթոշակի անցում, դասախոսական կազմի վերապատրաստում, պետական և այլ կազմակերպությունների հետ համալսարանների ու դասախոսական կազմի միջև հարաբերությունների կանոնակարգում և այլն):

Համալսարանների ռեկտորները պետք է նշանակվեին երկրի նախագահի կողմից, անգամ ֆակուլտետների դեկանները նշանակվելու էին կառավարությանն առընթեր գործող «Բարձրագույն կրթության պետական խորհրդի» կողմից: Կրթության մասին նոր օրենքում կրոնական կրթությունը բաժանվում էր երեք խմբի՝ աստվածաբանական ֆակուլտետներ, Ղուրանի ուսուցման կենտրոններ և «իմամ-հաթիփների» պատրաստման դպրոցներ: Հետագա տարիներին ավելացավ երկրի բուհերում գործող աստվածաբանական ֆակուլտետների, «իմամ-հաթիփ» դպրոցների և Ղուրանի ուսուցման դպրոցների թիվը:

1983թ. առաջին կեսին զինվորականներն ընդունեցին մի շարք օրենքներ, որոնք նպատակ ունեին քաղաքացիական իշխանություններին վերադարձնել իշխանության լծակները: Արձանագրվեցին քաղաքական կյանքի վերակենդանացման փորձեր, և կուսակցություններ ստեղծելու թույլտվությանը հետևեց 15 նոր կուսակցությունների հիմնադրումը:

Սահմանադրության հանրաքվեից մեկ տարի և վերջին խորհրդարանական ընտրություններից 6 տարի անց՝ 1983թ. նոյեմբերի 6-ին, նշանակվեցին խորհրդարանական ընտրություններ, որոնց մասնակցելու թույլտվություն ստացան միայն երեք նորաստեղծ կուսակցություններ՝ ԶՈւ-ի կողմից հովանավորվող Ժողովրդականը (ԺԿ), Սոցիալ-ժողովրդավարականը (ՍԺԿ) և «Մայր հայրենիքը» (ՄՀԿ, Anavatan Partisi): Վերջինս գլխավորում էր Ուլուսուի կառավարությունում փոխվարչապետի պաշտոնը զբաղեցրած Թուրգութ Օզալը: Մինչև հեղաշրջումը գոյություն ունեցած մի շարք կուսակցություններ վերաբացվեցին այլ անուններով, օրինակ՝ նորաբաց «Ճշմարիտ ուղի» կուսակցությանը (ՃՈՒԿ) հիմնականում անդամագրվեցին փակված «Արդարություն« կուսակցության անդամները: Թե՛ ՄՀԿ-ն, թե՛ ՃՈՒԿ-ը ներկայացնում էին աջակենտրոն քաղաքական դաշտը, սակայն հետագա տասնամյակների ընթացքում նրանք չկարողացան համատեղել ուժերը:

1983թ. հուլիսի 6-ին նախկին ՀԺԿ կորիզը հիմնադրեց Սոցիալական ժողովրդավարության կուսակցությունը (Sosyal Demokrasi Partisi)՝ Իսմեթ Ինյոնյուի որդու՝ Էրդալի գլխավորությամբ, որը քաղաքական դաշտում դիրքավորվեց որպես ՀԺԿ իրավահաջորդ՝ որդեգրելով քեմալիզմի վեց դրույթները որպես կուսակցության գաղափարական խորհրդանիշներ: 1985թ. նոյեմբերի 14-ին նախկին ՀԺԿ-ում Էջևիթի կողմնակիցները հիմնադրեցին Ժողովրդավարական ձախ կուսակցությունը (Demokratik Sol Parti - ԺՁԿ)՝ Բյուլենթ Էջևիթի կնոջ՝ Ռահշանի գլխավորությամբ: Հասկանալի է, որ վերջինիս անվանադրման և կուսակցական շինարարության գործը վերապահված էր քաղաքական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկված Էջևիթին, որին ժամանակավորապես օգնելու էր իր կինը: 1985թ. նոյեմբերի 3-ին Ժողովրդական և Սոցիալական ժողովրդավարության կուսակցությունները միավորվեցին՝ ստեղծելով Սոցիալական ժողովրդավարության ժողովրդական կուսակցությունը (ՍԺԺԿ. Sosyaldemokratik Halkçi Parti)՝ Էրդալ Ինյոնյուի գլխավորությամբ, որն էլ հետագա մի քանի տարիների ընթացքում դարձավ փակված ՀԺԿ լիարժեք իրավահաջորդ քաղաքական ուժը: Ուշագրավ է, որ նորաստեղծ կուսակցության միավորման բանակցությունների ժամանակ Է. Ինյոնյուն և Ժողովրդական կուսակցության նախագահ Գ. Գյուրքենը հորդորեցին

Բյուլենթ Էջևիթին ստանձնել նոր կուսակցության ղեկավարումը՝ չնայած վերջինիս վրա քաղաքականությամբ զբաղվելու գործող արգելանքին, սակայն Բ. Էջևիթը մերժեց այդ կոչը:

Բազմաթիվ քաղաքական կուսակցությունների կողքին 1983թ. հուլիսի 19-ին քաղաքական դաշտում հայտնվեց նաև «Բարօրություն» կուսակցությունը (ԲԿ) (Refah Partisi), որն ԱԱԽ-ի կողմից արգելված իսլամամետ ԱՓԿ քաղաքական ժառանգորդն էր: ԲԿ-ն հիմնադրվեց Էրբաքանի մերձավոր գաղափարակիցներից մեկի՝ Ալի Թյուրքմենի ջանքերով: Համեմատելով ԱԿԿ, ԱՓԿ և ԲԿ ծրագրային դրույթները՝ կարելի է նշել, որ թեև, ընդհանուր առմամբ, ԲԿ-ն կրում էր ԱՓԿ գաղափարական կնիքը, այնուհանդերձ, ԲԿ ծրագրային դրույթները ժամանակին առավել համահունչ էին և անհամեմատ ճկուն: ԲԿ սոցիալական արդարության և քաղաքական ազատությունների մասին կոչերը նպատակ ունեին կուսակցական համալրումներ իրականացնել քաղաքացիական ծառայողների, բանվորների և միջին դասի ներկայացուցիչների հաշվին, որը տարբերվելու էր ԱՓԿ սոցիալական հենարանից, որտեղ ընդգրկված էին մանր առևտրականներ, ձեռնարկատերեր և ֆերմերներ:

5. Թուրգութ Օզալի կառավարման գարիները

1983թ. նոյեմբերի ընտրություններում Օզալի ղեկավարած կուսակցությունը ԶՈւ-ի համար անսպասելի տպավորիչ հաղթանակ տոնեց՝ ստանալով 211 պատգամավորական մանդատ, որը բավարար էր միակուսակցական կառավարություն ձևավորելու համար: Ինքնատիպ քաղաքական մոտեցումների շնորհիվ Օզալին հաջողվեց հիմնադրել թուրքական պահպանողականության այն տարբերակը, որը կրում էր ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանի և Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարետ Թեթչերի քաղաքական հայացքների ազդեցությունը:

ՄՀԿ-ն, ըստ էության, վերածվեց մինչև հեղաշրջումը գործած աջ ուղղվածության երեք կուսակցությունների («Արդարություն», «Ազգայնական շարժում» և «Ազգային փրկություն») գաղափարների և անդամ-

ների հավաքատեղիի, ուստիև դրա հետագա քաղաքական վերելքը որոշակիորեն այս կուսակցությունների գաղափարակիրների շնորհիվ էր: Օզալը չէր թաքցնում, որ նպատակ ուներ իր հովանու տակ վերցնել թուրքական քաղաքականության չորս հիմնական հոսանքները՝ արևմտամետ ազատականներին, իսլամականներին, ձախ ազգայնականներին և աջ կողմնորոշման քաղաքական ուժերին: Օզալի կուսակցության շարքերում ընդգրկված ԱՇԿ, ԱԿ և ԱՓԿ կողմնակիցների պատճառով ՄՀԿ-ն կոչում էին նաև «Սուրբ երրորդության դաշինք»: Օզալի կուսակցությունն, ըստ էության, կառուցողական իրատեսության և մշակութային պահպանողականության համատեղում էր, որը նա կոչեց «հասարակության վերաձևման իսլամական տարբերակ»: 1980-ական թթ. ամբողջ ընթացքում իսլամամետ ուժերի նկատմամբ Օզալի բարեհամբույր դիրքորոշմանը բացահայտորեն դեմ արտահայտվեց նախագահ Էվրենը: Նա Օզալին մշտապես հիշեցնում էր, հորդորում, հաճախ նաև սաստում զերծ մնալ իսլամական տարրերին խրախուսելու, կուսակցության շարքերը ներգրավելու վտանգավոր գաղափարներից:

Ընտրություններում բացարձակ մեծամասնություն ստանալով՝ Օզալը հնարավորություն ունեցավ իրագործելու մի շարք գաղափարներ՝ համատեղելով կառուցվածքային ու համակարգային բարեփոխումների անհետաձգելի պահանջը, իրատեսությունը, իր կրոնական ընկալումները և երկրի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները: Օզալի կուսակցության շարքերում առկա իսլամամետ քաղաքական գործիչներն աջակցեցին մի քանի անսպասելի և հակասական օրենքների ընդունմանը: 1983թ. նորակազմ կառավարությունում կրթության նախարար նշանակված, Նաքշիբենդի կրոնական միաբանության անդամ Վեհբի Դինչերլերը թե՛ տարրական, թե՛ միջնակարգ դպրոցներում արգելեց դարվինյան տեսության դասավանդումը, փոխարենն ավելացվեցին արաբերենի ուսուցման և Իսլամական փիլիսոփայություն առարկայի դասաժամերը: Աննախադեպ ձևակերպումներով վերաշարադրվեց հանրապետության վաղ շրջանի պատմությունը՝ հիմնական շեշտը դնելով քաղաքական ու ռազմական այն գործիչների վրա, որոնք ունեցել են Աթաթյուրքից տարբերվող հայացքներ: «Մենք կամ շատ առաջ ենք գնում, կամ՝ աննկարագրելիորեն հետ»,– ակնարկել էր Ք. Էվրենը, երբ 1985թ. սեպտեմբերի 14-ին ստորագրում էր կրթության նախարար Դինչերլերի ներկայացրած հրաժարականի դիմումը:

6. 1980–1990-ական թթ. սոցիալ-տնտեսական բարեփոխումների առանձնահատկությունները

Նախորդ տասնամյակների ընթացքում Թուրքիայի տնտեսությունը գերազանցապես հենված էր ներմուծման խրախուսման տնտեսական կառուցվածքի վրա: Թուրքիայում արտադրվող համեմատաբար թանկ և ցածրորակ ապրանքները գերազանցապես ներքին սպառման համար էին: Տնտեսական ոլորտը շարունակում էր կախված մնալ օտարերկրյա տեխնիկական մատակարարումներից, ինչպես նաև պետական հովանավորչությունից: Մի շարք արդյունաբերական ոլորտներ՝ շաքարավազ, թուղթ, ածուխ, ոգելից խմիչքներ, համարվում էին պետական սեփականություն և գտնվում էին պետության խիստ վերահսկողության ներքո: Գործարար շրջանակներին պարզ էր, որ տնտեսության կառավարման գործող մեխանիզմները չէին կարող ապահովել սպառողական աճող պահանջարկը: Հետևաբար, տնտեսության ազատականացման մասին Օզալի քաղաքական նախաձեռնությունները դրական արձագանքի արժանացան գործարար շրջանակների կողմից:

Վարչապետության տարիներին Օզալին հաջողվեց ապահովել տարեկան միջինը 5 տոկոս տնտեսական աճ, որի շնորհիվ եռանիշ գնաճը դարձավ միանիշ: Նրա տնտեսական բարեփոխումների շնորհիվ վերացվեցին մի շարք պետական մենաշնորհներ, առաջ եկան նոր սոցիալական խմբեր: Սկսվեց «ստամբուլյան մեծ կապիտալի» ներթափանցումն Իզմիր, Ադանա, երկրի կենտրոնական մի շարք շրջաններ, որի շնորհիվ ստեղծվեցին նոր արդյունաբերական և առևտրային կենտրոններ: Հատկապես տեքստիլ արդյունաբերության զարգացման, ինչպես նաև շինարարական և ինժեներական կազմակերպությունների կողմից Մերձավոր Արևելքում նոր շուկաների հայտնաբերման շնորհիվ արդեն 1980-ական թթ.

վերջերին Թուրքիայի կենտրոնական և արևմտյան մի շարք քաղաքներ, ինչպիսիք էին, օրինակ, Այնթափը, Դենիզլին, Կայսերին (Կեսարիա), դարձան «արդյունաբերական երրորդ հեղափոխության» կենտրոններ: Այս ժամանակաշրջանում է, որ Սաբանջը, Քոչ և Էջզաջըբաշը ընտանիքները մուտք գործեցին միջազգային շուկաներ և դարձան կարևոր խաղացողներ: Այսպիսով՝ արդյունաբերական կենտրոնների գործարար նախաձեռնությունների շնորհիվ 1980-1990-ական թթ. ընթացքում Թուրքիայի արտահանման ծավալներն ավելացան 7 անգամ՝ 3 միլիարդից հասնելով 20-ի: Սառը պատերազմի ավարտից հետո նորաբաց շուկաները դարձան Թուրքիայի արտահանման համար հարմար միջավայրեր: Թուրք գործարարներն արագ էին կողմնորոշվում նոր շուկաներում և կատարելով չնչին ներդրումներ՝ ապահովում էին պատկառելի եկամուտներ:

Տնտեսական ակտիվությանը նպաստող մյուս կարևոր ոլորտը զբոսաշրջությունն էր: Եթե 1970-ական թթ. Թուրքիայի ՀՆԱ-ում այդ ոլորտից ստացված մուտքերը չէին գերազանցում 200 մլն դոլարը, ապա 1989թ. արդեն կազմում էին 3 մլրդ դոլար: Հետագա տասնամյակների ընթացքում այդ ոլորտը ոչ միայն առավել ընդլայնվեց, այլև Թուրքիան դարձավ համաշխարհային մակարդակով առաջատար զբոսաշրջային երկրներից մեկը:

Եկամուտների աճի շնորհիվ կատարվեցին նաև քաղաքների ընդլայնման և մեծածավալ կառուցապատման աշխատանքներ: 1988թ. շահագործման հանձնվեց Ստամբուլի երկրորդ կամուրջը: Կառուցվեցին նոր մայրուղիներ, հեռախոսային ցանցը թարմացվեց, առաջին անգամ Թուրքիայի գրեթե բոլոր գյուղերն ունեցան հեռահաղորդակցության միջոցներ:

Օզալի ազատականացման քաղաքականության շնորհիվ էական փոփոխության ենթարկվեց նաև հանրային մշակույթը, այդ գործում զգալի դեր խաղացին նոր հեռուստաալիքները: Առաջին ոչ պետական հեռուստաընկերությունը «Սթարն» էր (STAR), որը հիմնադրվեց 1989թ. Ջեմ Ուզանի կողմից: Հեռուստաընկերությունն առաջին հաղորդումները սկսեց հեռարձակել Գերմանիայից 1990թ.: Դեռ 1980-ական թթ. պետական հեռարձակող TRT-ն արդեն սկսել էր հանրային մշակույթի վրա ազդող հեռուստատեսային հաղորդումների հեռարձակումը: Հեռարձակվող հաղորդումները պետք է հետևեին գեներալների գծած «կարմիր գծերի» տրամաբանությանը և բարոյական չափորոշիչներին: Սակայն ինչն արգելված էր գեներալների կողմից, հասանելի էր դառնում «Սթարի» միջոցով: 1989թ., երբ Էվրենն այլևս նախագահ չէր, նկատվեց պետական հսկողության որոշակի մեղմացում: Իսկ 1993թ., երբ մեկ այլ հեռուստաալիք՝ «Show»-ն ևս սկսեց հեռարձակվել, խորհրդարանը վերացրեց ռադիոյի և հեռուստատեսության պետության մենաշնորհը: Օրենքի ընդունումից անմիջապես հետո միանգամից 3 հեռուստաալիք սկսեց հեռարձակումներ կազմակերպել:

Անհրաժեշտ է նշել «Թուրքիայի նոր ճարտարապետի» կամ «երկրորդ Աթաթյուրքի», ինչպես ընդունված էր կոչելթ. Օզալին, «նեոլիբերալ արմատական» վերափոխումների կամ «սպիտակ հեղափոխության» սոցիալ-տնտեսական հետևանքների մասին: Անկասկած, ազատ շուկայական տնտեսության ուղղությամբ արված քայլերի շնորհիվ թուրքական տնտեսության մրցունակությունը զգալիորեն աճեց, իսկ երկրի տնտեսությունը կայունացման ազդակներ ստացավ: Թուրքիան իր տնտեսական աճի տեմպերի շնորհիվ ընդգրկվեց աշխարհի 40 ամենամրցունակ երկրների շարքում:

Սակայն ազատական շուկայական տնտեսության կերտման քաղաքականությունը, այլ զարգացող երկրների օրինակով, չուղեկցվեց ժողովրդավարական բարեփոխումներով: Օզալի ազատականացման քաղաքականությունն առաջ բերեց համակարգային, կառուցվածքային փոփոխությունների և օրենսդրական լրամշակումների անհրաժեշտություն, որոնց իրականացման ուղղությամբ չձեռնարկված քայլերն իրենց ազդեցությունը թողեցին 1994թ. և 2001թ. տնտեսական ճգնաժամերի վրա:

Թմբկահարվող տնտեսական նվաճումներն արտացոլում էին իրականության միայն մեկ տեսանելի կողմը: Օզալի հեղինակած բարեփոխումներն իրականացվեցին ուղղահայաց՝ վերևից ներքև, հասարակությանն ընձեռելով դրանց հասցեականությունը քննարկելու նվազագույն հնարավորություն: Արդյունքում՝ Համաշխարհային բանկը Թուրքիան ընդգրկեց այն յոթ երկրների շարքում, որոնք ամենաանմխիթար վիճակում էին եկամուտների անհավասար բաշխման առումով: Ազգային եկամտի 55 տոկոսը կենտրոնացվեց բնակչության 5 տոկոսի ձեռքում: Ուստի, հասարակության ճնշող մեծամասնությանը բաժին հասավ

տնտեսական հրաշքի միայն նվազագույն մասը, ինչն էլ ուղեկցվեց սոցիալական բնույթի խնդիրների աճով: Վիճակագրության համաձայն՝ 1987–1989թթ. աշխատավարձով ապրող բնակչության իրական եկամուտները նվազեցին 50 տոկոսով: Թե կառավարությունը, թե ՏԻՄ-երը չստեղծեցին համապատասխան ենթակառուցվածքներ, նրանց չհաջողվեց բարձրացնել սոցիալական ուղղվածության ծառայությունների արդյունավետությունը: Դրա հետևանքով հասարակական գործընթացներում ավելի հստակորեն սկսեցին առանձնանալ որոշակի սոցիալական խմբեր, որոնք առավել խոցելի դարձան քաղաքական, սոցիալ-տնտեսական և կրոնական գործընթացների նկատմամբ:

Թուրքիան վերջին չորս տասնամյակների ընթացքում արձանագրեց ուրբանիզացման արընթաց և իշխանությունների համար մտահոգիչ ցուցանիշներ: Այսպես՝ եթե 1965թ. քաղաքներում ապրող բնակչության թիվը մոտ 10,8 միլիոն էր, ապա 20 տարի հետո այդ թիվը հասավ 26,9 միլիոնի, իսկ նույն ժամանակահատվածում գյուղական բնակչությունն աճեց ընդամենը 3 միլիոնով՝ 20,5 միլիոնից հասնելով 23,8 միլիոնի: 1980-ական թվականների կեսերին երկրի գյուղական բնակչության 78 տոկոսը ցանկանում էր տեղափոխվել քաղաք, նրանց մեծ մասը նման ցանկություն էր հայտնել բացառապես սոցիալական ծանր պայմաններից դրդված: Սոցիալ-տնտեսական պատճառներից բացի՝ ուրբանիզացման հիմնական խթանիչներից մեկը թուրքական իշխանությունների կողմից քրդական զինված պայքարը բիրտ մեթոդներով ճնշելու մարտավարությունն էր: Կառավարության 1994թ. հրապարակած տվյալների համաձայն՝ մոտ 1500, իսկ մամուլի գնահատմամբ՝ մոտ 2300 գյուղ և բնակավայր, մասամբ կամ ամբողջությամբ ավերվել էին, որի հետևանքով մոտ 2 միլիոն մարդ տեղահանվել էր և գաղթել երկրի կենտրոնական ու արևմտյան նահանգներ, ավելին, նրանք Ստամբուլը դարձրին աշխարհի ամենամեծ քրդաբնակ քաղաքը:

Նման զանգվածային ուրբանիզացման հետևանքով քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը ևս զգալիորեն փոխվեց. քաղաքային բնակչությունը 1995թ. կազմում էր 69,2 տոկոս: Ստամբուլի բնակչությունը 1990թ. 7 միլիոն էր, իսկ 1998թ.՝ մոտ 10 միլիոն (ոչ

պաշտոնական տվյալների համաձայն՝ 2008թ. Ստամբուլի բնակչությունը հասնում էր 15 միլիոնի), Անկարայի բնակչությունը մոտ 4 միլիոն է, այն դեպքում, երբ քաղաքը նախագծված է եղել 500.000 բնակչի համար:

1975թ. տվյալներով՝ քաղաքային բնակչության քառորդ մասը՝ 4,5 մլն մարդ, ապրում էր ապօրինի զբաղեցրած տարածքներում: Իրականում, արդեն 1980-ական թթ. Թուրքիայի մեծ քաղաքներում բնակվողների մոտ կեսը ապրում էր գեջեքոնդուներում: Օրինակ, Ստամբուլում այդ ցուցանիշը 40 տոկոս էր: Հետագա տարիներին մեծ քաղաքները պարզապես կլանեցին այդ ավանները, ինչի պատճառով 1990-ական թվականների երկրորդ կեսին արդեն բավական դժվարացավ քաղաքի և գեջեքոնդուի միջև գործող երբեմնի տարբերակիչ գծի վերականգնումը, ուստի, հասարակությունում և ՁԼՄ-ում շրջանառության մեջ դրվեց մեկ այլ բնութագրական տերմին՝ «վարոշ», որը հունգարերենից թարգմանաբար նշանակում էր արվարձան: Վարոշը հասարակական ընկալման մեջ դարձավ նաև «մեկ այլ Թուրքիայի» հոմանիշ, որի բնորոշ հատկանիշներն էին աղքատությունը, բնակիչների գյուղական ծագումը, կրոնամետ կենսակերպը, ինչպես նաև իսլամական խորհրդանիշների և, առաջին հերթին, կրոնական գլխաշորի կրումը: Գյուղաբնակների նման հոսքն առավել վատթարացրեց քաղաքներում առանց այն էլ բարդ ենթակառուցվածքային հիմնախնդիրները: 1975թ. տվյալներով՝ քաղաքային բնակարանային ֆոնդի 47,9 տոկոսը հոսանքազուրկ էր, 56,7 տոկոսը զուրկ էր ջրամատակարարումից: Թե Արժույթի միջազգային հիմնադրամի կառուցվածքային կարգավորման, թե քաղաքային ենթակառուցվածքների կայունացման նախագծերը չկարողացան ապահովել այն ենթակառուցվածքային պահանջները, որոնք էական էին ուրբանիզացումը ցանկալի սահմաններում պահելու համար: Բնակչության նման չնախատեսված հոսքն ազդեց մեծ քաղաքների տեղական ինքնակառավարման, նոր ժամանող բնակիչների սոցիալական պահանջները բավարարելու և աշխատանքային պայմաններն ապահովելու խնդիրների լուծման վրա:

Տեղափոխվելով մեծ քաղաքներ՝ գյուղաբնակները շարունակում էին ապրել մեկտեղված՝ ստեղծելով «քաղաքային գյուղեր» և, պահպանելով

ավանդական արժեհամակարգը, ներկայացնում էին ինքնատիպ մշակութային ինքնություն: Հասարակական կարծիքի հարցման արդյունքներից մեկի համաձայն՝ գյուղական բնակչության 28,7 տոկոսն էր միայն կողմ արտահայտվում աղջիկների բարձրագույն կրթությանը, տղամարդկանց 86 տոկոսն անթույլատրելի էր համարում կանանց հայտնվելը հասարակական վայրերում՝ առանց գլխաշորի: Գյուղական բնակչության 40 տոկոսը տակավին լուրջ դժվարություններ ուներ ռադիոհաղորդումների լեզուն ընկալելու հարցում: Հանդիպելով նման դժվարությունների և հաճախ բացահայտ խաբեությունների, ինչպես նաև հուսահատվելով թե իշխանության բարձր էշելոններում, թե տեղական մակարդակում իշխանավորների լիազորությունների չարաշահման, կաշառակերության և կոռուպցիայի զգալի չափերից, նոր բնակչությունը բավական խոցելի դարձավ զանազան սոցիալական ու քաղաքական հոսանքների և գաղափարախոսությունների նկատմամբ: Հետևաբար, ծայրահեղ ազգայնական և հատկապես կրոնական բնույթի ցանկացած օգնության կոչ նրանք ոգևորությամբ էին ընդունում: Նրանք գերադասում էին ապրել իրար մոտ, ինչն էլ ավելի էր հեշտացնում նրանց հետ հարաբերությունների հաստատման, հաղորդակցման ու քաղաքական նպատակներով մոբիլիզացման ջանքերը:

Թուրքիայում ուրբանիզացման բարձր ցուցանիշներն ունեցան ոչ միայն հասարակական-քաղաքական, այլ նաև մշակութային հետևանքներ: Վերլուծաբաններից մեկի պնդմամբ՝ արևմտյան քաղաքների «անատոլիացումը» առաջացրեց թուրքական ազգային մշակույթի հիմնարար վերագնահատման պահանջ, քանզի որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ տեղի էր ունենում ոչ թե մշակութային երկվության խորացում, այլ մշակույթների ակնհայտ բախում: Երկրում ընթացող ուրբանիզացման և սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրների սրացմանը զուգընթաց՝ ընդլայնվեց զանազան կրոնական կազմակերպությունների, շարժումների գործունեությունը:

Ինչպես նշվեց, 1980-ական թվականների կեսերին Օզալի հասցեին հնչող մեղադրանքներն իսլամի սոցիալ-քաղաքական ակտիվացմանը նպաստելու առումով շարունակական բնույթ էին կրում, սակայն սակավաթիվ քաղաքական գործիչներ էին գիտակցում, որ Օզալն իսլամի

վերածննդին նպաստեց ոչ միայն հասարակությունում իսլամական մշակույթի, խորհրդանիշների, գաղափարների ուղղակի վերաներարկմամբ, այլ նաև տնտեսական ազատականացման քաղաքականության միջոցով:

Իրականում Օզալի տնտեսական բարեփոխումների շնորհիվ իսլամական կամ, ինչպես ընդունված է կոչել, «կանաչ կապիտալն» աննախադեպ վերելք ապրեց: Ավելին, ակնհայտ էր, որ առանց համապատասխան ֆինանսական աջակցության իսլամական շարժումների, կազմակերպությունների գործունեությունը և «Բարօրություն» կուսակցության ճոխ նախընտրական քարոզարշավներն անհնար կլինեին: 1985-1990-ականները դարձան շրջադարձային տարիներ իսլամական կապիտալի ակտիվ շրջանառության առումով: Այդ գործընթացի համար կարևորագույն խթան հանդիսացան նախ՝ սաուդյան, ապա նաև արաբական այլ պետությունների կապիտալ ներդրումները և արտագնա աշխատանքի մեկնածների դրամական միջոցների փոխանցումը (պաշտոնական տվյալների համաձայն՝ արտերկրում աշխատող 4 մլն թուրքերի դրամական փոխանցումները 1993-1998թթ. ընթացքում կազմեցին 21 մլրդ ԱՄՆ դոլար): Շուկայական տնտեսության ընձեռած հնարավորություններից օգտվեցին նաև կրոնական կազմակերպությունները, որոնք էական ներդրումներ կատարեցին տնտեսության եկամտաբեր ոլորտներում: Որոշակի վերապահումներով կարելի է պնդել, որ ԲԿ-ն հավակնում էր դառնալ երկրում հետզհետե ակտիվացող «կանաչ կապիտալի» քաղաքական շահերի պաշտպանը:

Ի հակադրություն 1971թ. հիմնված «Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների ընկերության» (հայտնի է «TÜSİAD» անվանմամբ - Türk Sanayiciler ve İşadamları Derneği)՝ փոքր և միջին բիզնեսի զարգացման շնորհիվ երևան եկած նոր էլիտան կամ, ինչպես ընդունված էր կոչել՝ «Անատոլիայի վագրերը», 1990թ. մայիսի 5ին Ստամբուլում հիմնադրեց «Անկախ արդյունաբերողների և գործարարների ընկերությունը» (հայտնի է «MÜSİAD» անվանմամբ - Müstakil Sanayiciler ve İşadamları Derneği): Նրանք երկար ժամանակ որպես ընկերության խորհրդանիշ օգտագործում էին «M» տառը, որն ավելի շուտ մուսուլման (թուրք.՝ Müslüman) բառի առաջին տառն էր: Նրանք մտադիր էին ստեղծել նոր «իսլամական

տնտեսական համակարգ»՝ որպես գոյություն ունեցող «կապիտալիստական համակարգի» այլընտրանք: Նրա անդամների ղեկավարած ձեռնարկությունների տարեկան եկամուտը կազմում էր մոտ 2,79 մլրդ ԱՄՆ դոլար: Նրա անդամներն ակտիվ գործունեություն ծավալեցին տնտեսության գրեթե բոլոր եկամտաբեր ոլորտներում՝ շինանյութերի արտադրություն, տեքստիլ, քիմիական և մետալուրգիական, ինչպես նաև սննդի արդյունաբերություն: Կազմակերպությանն անդամակցում էին մի շարք ազդեցիկ առևտրական ընկերություններ, որոնց մեջ առանձնանում էր ԲԿ քաղաքական հենարան համարվող և Քոնիայում գործող «Քոմբասան-հոլդինգը» (Kombasan holding, հիմնադրվել է 1985թ.): Այն առևտրային ընկերությունների ցանց է՝ մոտ 30.000 բաժնետերերով, որոնց մեծ մասը Գերմանիայում բնակվող թուրքերն են: Վերջիններիս վրա էր հիմնված նաև «Յըմփաշ-հոլդինգի» (Yimpaş-holding, հիմնադրվել է 1982թ.) գործունեությունը: 1990-ական թթ. Քոնիայում օրինական և ընդհատակյա կարգով գործում էր նմանատիպ մոտ 50 հոլդինգ: «ՄՅՈՒՍԻԱԴ»-ի մասնաճյուղերը գործում էին ամբողջ երկրում, հատկապես երկրի կենտրոնական և արևելյան շրջաններում, նրա անդամների թիվը հասնում էր 3000-ի, այն ունի նաև ներկայացուցչություններ աշխարհի 20 երկրներում: Կազմակերպությունը ոչ միայն ակտիվորեն աջակցում է փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, պաշտպանում նրանց շահերը, այլ նաև կատարում է գիտահետազոտական աշխատանք երկրի տնտեսության վերաբերյալ: Փոխարենը «ԹՅՈՒՍԻԱԴ»-ը հիմնականում օգնում էր այն գերիշխող ընկերություններին, որոնք շուկայում ունեին մենաշնորհային դիրքեր: Այն նաև կողմ էր Եվրամիության հետ տնտեսական և քաղաքական շուտափույթ ինտեգրման գործընթացին: «ՄՅՈՒՍԻԱԴ»-ը, ԲԿ-ի հետ միասին, դեմ էր արտահայտվում Եվրամիության հետ մաքսային միության գաղափարին և կողմ էր իսլամական երկրների հետ տնտեսական հարաբերությունների խորացմանը:

Իսլամական շարժումների ակտիվացումը և ԲԿ քաղաքական վերելքը մի կողմից, տնտեսական գործընթացներում իսլամական կապիտալի աճող կարևորությունը՝ մյուս կողմից, համընթաց ու փոխկապակցված գործընթացներ էին: ԲԿ ակտիվացումն արտացոլեց նաև հասարակական և տնտեսական էլիտար դիրք ձեռք բերած իսլամական բուրժուազիայի շահերը:

Այսպիսով, 1990-ական թթ. կեսերին ակնհայտ էր, որ «ՄՅՈՒՍԻԱԴ»-ի և ԲԿ-ի շահերը համընկնում էին, և նրանք ակտիվ համագործակցում էին: Քաղաքական իսլամի կողքին հստակորեն առանձնանում էր տնտեսական իսլամը՝ գործունեության համակարգային միտումներով:

XX դարի 60-70-ական թթ. ընթացքում թուրք հասարակության ավելի ստվար զանգվածներ սկսեցին գիտակցել, որ քեմալականների խոստացած «լուսավոր ապագան այդպես էլ չժամանեց», ուստիև կառավարող վերնախավի շարունակական խոստումները հասարակությանը ստիպեցին հարցականի տակ դնել դրանց իրականացման նպատակով կատարվող զոհողությունների նպատակահարմարությունը: Սոցիալական կողմնացույցի վերակողմնորոշումն իր ազդեցությունը թողեց հասարակության գրեթե բոլոր խմբերի ու քաղաքական հոսանքների, մարդկանց նիստուկացի, կենցաղի և առօրյայի վրա:

1980թ. հեղաշրջմանը հաջորդած ժամանակահատվածում հասարակության վերահսկելի իսլամականացման միջոցով ՀՈւ-ն մտադիր էր կերտել ապաքաղաքականացված նոր հասարակություն-համայնք, որը կրելու էր օսմանյան ժամանակաշրջանի որակական հատկանիշները: Օզալի կառավարման տարիներին կրոնական գործընթացները շատ ավելի արագ զարգացան, քան հնարավոր էր ակնկալել: Նրա զգուշավոր, սակայն համակարգված իսլամականացման ծրագրերը գործունեության լայն դաշտ տրամադրեցին իսլամական սկզբունքներով ուղեկցվող հասարակական ու քաղաքական շարժումներին:

Օզալի տնտեսական ազատականացման քաղաքականությանը բնորոշ էին նաև մի շարք այլ առանձնահատկություններ, ինչպիսիք էին՝ տնտեսական ու հասարակական գործընթացների վրա պետության հսկողություն նվազեցումը, հասարակական ու քաղաքական գործընթացներում ծայրամասի ներգրավումը, «անատոլիական բուրժուազիայի» վերելքը, արաբական կապիտալի ներհոսքը, համալսարանների ու դպրոցների ցանցի ընդլայնումը, ՀԼՄ հասանելիությունը և այլն: Այս քայլերն Օզալին հնարավորություն տվեցին համագործակցելու անհամեմատ ավելի մեծ ընտրազանգվածի հետ ու նրանց հասու դարձնելու մինչ այդ անուշադրության մատնված գաղափարներ և սկզբունքներ: Այսպիսով, 1970-ական թվականներին սկսված իսլամի քաղաքական ու հասարակական վերելքը

1980-ական թվականներին դարձավ առավել ընդգրկուն ու համակարգված՝ շնորհիվ ՀՈՒ կրոնական քաղաքականության իրարամերժ դրսևորումների և Օզալի վարած քաղաքականության:

7. «Թյուրք-իսլամական համադրություն» ծրագիրը

1980-ական թվականների կեսերին, երբ գեներալների աչալուրջ հսկողության ներքո երկրում իշխում էին քաղաքացիական իշխանությունները, և թվում էր՝ ստեղծվել էր հարաբերականորեն ներդաշնակ ու կայուն քաղաքական մթնոլորտ, ակնհայտ դարձավ, որ ՀՈՒ կրոնական քաղաքականությունն ուներ առավել հեռագնա նպատակներ: Վերլուծելով վերոշարադրյալ դեպքերը՝ հնարավոր է իրավիճակի բարդությունն առավել պարզորոշ ներկայացնել հետևյալ կերպ. եթե կրոնական հետադիմության (irtica) վերելքը և կրոնի անհանգստացնող քաղաքական ակտիվությունը դասվում էին երրորդ ռազմական հեղաշրջման հիմնական պատճառների շարքին, ապա հետագայում գեներալների համար հենց կրոնը դարձավ հասարակական կարգերը և արժեքները նորովի համակցելու միջոց:

ՀՈՒ-ն ձեռնարկեց մի շարք քայլեր հասարակությունում կրոնի դերը վերանայելու, ամրապնդելու և ցանկալի շրջանակների մեջ պահելու ուղղությամբ: Ավելին՝ հետագա քայլերն ապացուցեցին, որ գեներալները ցանկանում էին իսլամական գաղափարները միաձուլել ազգայնամոլական նպատակներին: Այս աննախադեպ քաղաքական վերաձևումով իսլամը ՀՈՒ-ի համար դարձավ միջոց՝ նվազեցնելու թուրք հասարակության ներսում ծառացած արժեհամակարգերի այն տարբերությունը, որը հանգեցրել էր դրա մեծածավալ քաղաքականացմանը: Հեղաշրջման ղեկավարներն իսլամը համարում էին խաղաղեցնող ու հնազանդեցնող գաղափարախոսական զենք, որի նպատակային օգտագործման դեպքում այն կարելի էր ուղղել կոմունիզմի և քրդական էթնո-ազգայնականության դեմ: Իսլամն, ըստ գեներալների, նվազեցնելու կամ իսպառ վերացնելու էր հասարակությունում առկա մշակութային պառակտումը:

Հասարակության նորովի վերակերտման պահանջը հայտնվեց ՀՈՒ

քաղաքական օրակարգում, և գեներալները ձեռնամուխ եղան այն գաղափարական հոսանքի ստեղծմանը, որի առանցքում 1970-ական թթ. վերջին տեղի ունեցած դեպքերի կրկնության բացառման նպատակով ազդեցիկ գաղափարական արգելապատնեշի կառուցումն էր: ՀՈՒ ղեկավարությունը գիտակցում էր, որ երրորդ հեղաշրջման հետևանքով պարտադրված ապաքաղաքականացումը ստեղծել էր գաղափարական անջրպետ, որն ավելի էր մեծացնում ներհասարակական սոցիալական ու գաղափարական առճակատման հավանականությունը: ՀՈՒ-ում գիտակցեցին, որ ընթացիկ տնտեսական բարեփոխումների սոցիալական հետևանքների քննարկման և հնարավոր քննադատություններից խուսանավելու համար նպատակահարմար է հասարակությանը վերահիրամցնել կրոնի սոցիալական արդարության հիմնադրույթները:

1985թ. հունիսի 20-ին «Աթաթյուրքի բարձրագույն խորհուրդը»՝ նախագահ Էվրենի ղեկավարությամբ, վարչապետ Օզալի և ՀՈՒ ազդեցիկ հրամանատարների մասնակցությամբ, հավանություն տվեց «Թյուրք-իսլամական համադրություն» կոչվող մշակութային հայեցակարգին: Դրա «Ազգային փոխզիջում» անվանված հռչակագրում զետեղված էին հետևյալ գերնպատակները՝ ա) պայքար ձախ և անջատողական ուժերի դեմ, բ) Աթաթյուրքի փափագած միատարր հասարակության ամրապնդում, գ) Օսմանյան կայսրության «վեհանձն անցյալի» մատուցում նոր լույսի ներքո, դ) թուրքականության, իսլամականության և արևմտականացման սկզբունքների համատեղման վրա հիմնված մշակութային ժառանգության խրախուսում:

Նախաձեռնողը 1970-ական թվականներից ակտիվ գործունեություն ծավալած «Մտավորականների օջախ» խումբն էր, որի հիմնական նպատակը քաղաքական դաշտի աջ ուժերի հետ դաշինքի ստեղծումն ու դրա շնորհիվ բարոյական և փիլիսոփայական համադրված համակարգի մշակումն էր, որը պետք է ներառեր օսմանյան-իսլամական և թուրքական մշակութային հարուստ ժառանգությունը: Նոր բանաձևը դարասկզբին հենց քեմալականների կողմից մերժված պանիսլամիզմի և պանթյուրքիզմի գաղափարախոսությունների խմբագրված տարբերակն էր՝ երկուսին խիստ բնորոշ հատկանիշներով: «Թյուրք-իսլամական համադրության» մշակման գործում հսկայական ավանդ են ներդրել «իմամ-հաթիփ»

դպրոցների շրջանավարտները և «Ուլքյուջու» (գաղափարապաշտներ) պանթյուրքիստական երիտասարդական շարժման հետևորդները, որոնց հայացքներն, իրենց հերթին, ձևավորվել էին թուրք ազգայնականության և պանթյուրքիզմի գաղափարախոսների՝ Զիյա Գյոքալփի, Մեհմեթ Աքիֆի, Յահյա Քեմալի, Փեյամի Սաֆայի, Նիհալ Աթսըզի գաղափարների ազդեցության ներքո:

Թյուրք-իսլամական համադրության գաղափարախոսները դիմեցին օսմանյան-իսլամական խորհրդանիշներին ու արժեքներին՝ ընտանիքի, ազգի և պետության գաղափարական հատվածայնության անցանկալի հետևանքները շեշտադրելու համար և ընդգծեցին ազգային փոխզիջման գաղափարի կարևորությունը: Նոր գերիշխող գաղափարախոսությունն անտեսում էր նաև թուրք հասարակության բազմամշակութային բնույթը, դրանով հանդերձ անտեսում էր ազգային ու կրոնական փոքրամասնությունների գոյության փաստը: Մի խումբ պահպանողական մտավորականներ՝ կենտրոնամետ քաղաքական գործիչների, բյուրոկրատական ու դատական համակարգի, ինչպես նաև ազդեցիկ ֆինանսական կազմակերպությունների օժանդակությամբ, սկսեցին ակտիվորեն աջակցել ՀՈւ-ին նոր նախաձեռնության իրագործման հարցում: Շուտով թե՛ կրթական համակարգը, թե՛ ՀԼՄ-ը լծվեցին այս գաղափարախոսության հրապարակայնացման գործին:

1980-ական թթ. կեսերին, քաղաքական վերնախավի՝ հասարակությանը հանդարտեցնելու ցանկություններին հակառակ, երկրում աննախադեպ ակտիվություն ցուցաբերեցին իսլամական կազմակերպությունները, շարժումները, մշակութային ուղղվածության խմբերը: 1986թ. սեպտեմբերի 13-ին Ստամբուլում գործող Նևե-Շալոմ սինագոգում պայթեցված նռնակների պատճառով սպանվեց 24 մարդ: Ահաբեկչության պատասխանատվությունը ստանձնեցին միանգամից վեց իսլամական ծայրահեղական կազմակերպություններ, այդ թվում՝ «Իսլամի պաշտպանության լիգան» և «Իսլամական ջիհադը»:

1987թ. հունվարի 8-ին Ադանայի համալսարանում Ք. Էվրենը մեկ անգամ ևս վճռականորեն խոսեց կրոնական հետադիմության մասին և

ազդարարեց, որ պետք է վերացնել բոլոր այն ուժերը, որոնք կցանկանան կոմունիստական կամ կրոնապետական կարգեր հաստատել Թուրքիայում: Էվրենի նման վճռական ելույթի պատճառներից մեկը գլխավոր շտաբի այն զեկույցն էր, որտեղ նշված էր, որ հետադիմությունը բանակում զգալի չափեր է ընդգրկել, և որ այն կրոնամոլների գործունեության ամենախոսուն հետևանքն է: Նա դատապարտեց կրոնական հոսանքների աննախադեպ ակտիվացումը՝ մտավախություն հայտնելով, որ Աթաթյուրքի աշխարհիկ սկզբունքները լրջորեն վտանգված են: Ոմանց կարծիքով՝ նախագահի նման ելույթը պատասխանն էր պարբերաբար իր հասցեին ուղղված այն մեղադրանքների, որոնցում նրան քննադատում էին կրոնական կրթության անվերահսկելի ազատականացման համար:

1987թ. սեպտեմբերի 6-ին անցկացված հանրաքվեի արդյունքում Ս. Դեմիրելը, Բ. Էջևիթը, Ն. Էրբաքանը, Ա. Թյուրքեշը վերադարձան ակտիվ քաղաքականություն: 1987թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին կայացան ՃՈւԿ, ՍԺԿ, ԲԿ, ԱՇԿ հերթական համագումարները, որոնք իրենց առաջնորդներ ընտրեցին համապատասխանաբար՝ Դեմիրելին, Էջևիթին, Էրբաքանին և Թյուրքեշին: Հանրաքվեով փոխվեց նաև խորհրդարանի պատգամավորների թիվը, որը հասցվեց 450-ի:

Նոր քաղաքական իրավիճակում Օզալը որոշեց անակնկալի բերել քաղաքական ընդդիմությանը և 1987թ. նոյեմբերի 29-ին նշանակեց արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Երկրում հապճեպ ընտրապայքար սկսվեց. ռազմական հեղաշրջումից հետո առաջին անգամ ընտրություններին մասնակցում էին քաղաքական դաշտի գրեթե բոլոր ազդեցիկ դերակատարները: Ընտրություններում հաղթեց ՄՀԿ-ն՝ 450 պատգամավորական մանդատից ստանալով 292-ը, որը բավարար էր երկրորդ անգամ միակուսակցական կառավարություն ձևավորելու համար, ստացած քվեներով երկրորդը Է. Ինյոնյուի ՍԺԺԿ-ն էր՝ 99 և երրորդը՝ ՃՈւԿ-ը՝ 59 պատգամավորական մանդատներով, իսկ Էջևիթի ԺՁԿ-ն չհաղթահարեց 10%-ի արգելքը:

8. Քրդական հիմնահարցը

Քրդստանի աշխատավորական կուսակցությունը (Partiye Karkeren Kurdistan - ՔԱԿ), որը ձևավորվել էր Թուրքիայում 1978թ., 1984թ. զինված պայքար սկսեց կենտրոնական իշխանությունների դեմ: Թուրքիայի իշխանությունները ներքաշվեցին լայնածավալ ռազմական գործողությունների մեջ, որը հետագա 15 տարիների ընթացքում երկուստեք 35.000 զոհի, 100.000 վիրավորի, միլիոնավոր մարդկանց տեղահանման պատճառ դարձավ: Կարելի է առանձնացնել քրդերի կողմից պայքարն սկսելու մի քանի դրդապատճառ՝ անկախություն, թուրքական գաղութատիրության դեմ պայքար, մարքսիզմի ուսմունքի հաստատում: Դեռ 1960-1970-ական թթ. մի շարք քուրդ ակտիվիստներ հանդես էին գալիս քրդական ինքնության պահպանման դիրքերից: ՔԱԿ-ը դարձավ ամենաազդեցիկը զանազան քրդական շարժումների շարքում: Նրա ղեկավար Աբդուլահ Օջալանը, որը բնակչության շրջանում առավել հայտնի էր Ապո մականունով, դարձավ քրդական շարժման առաջնորդը և խորհրդանիշը: Նա իր պայքարը կառուցել էր մարքսիզմի ծայրահեղ ձախ գաղափարախոսության, թուրքական գաղութատիրության դեմ պայքարի և ազգայնականության սկզբունքի վրա, որի հաջող իրականացումը հանգեցնելու էր «Քրդստանի» անկախությանը և պանքրդական միության ձևավորմանը: ՔԱԿ-ը ձգտում էր ոչ միայն անկախության, այլ նաև քաղաքական և սոցիալական հեղափոխության՝ ֆեոդալական համակարգի վերացման նպատակով: ՔԱԿ-ը պարբերաբար հրավիրում էր համագումարներ՝ նպատակ ունենալով ցույց տալ, որ այն հանդիսանում է քաղաքական ուժ և հետևում է դասական քաղաքական կուսակցությունների սկզբունքներին:

ՔԱԿ-ն ուներ կուռ կառուցվածք և առաջնորդվում էր «ժողովրդավարական ցենտրալիզմի» հեղափոխական կազմակերպությունների սկզբունքով: ՔԱԿ-ին անդամակցում էին մեծաթիվ երիտասարդ աղջիկներ և տղաներ, որոնք անմնացորդ նվիրվել էին պայքարին: ՔԱԿ-ը հանդես էր գալիս տարբեր հարթակներում, հաճախ՝ տարբեր անվանումներով: 1985թ. ՔԱԿ-ն ստեղծեց Քրդստանի ազգային ազատագրության ճակատը, նոր

անդամների հավաքագրման, հետախուզական տեղեկույթի հավաքման, ինչպես նաև Թուրքիայի տարածքում և արտերկրում քարոզչության ծավալման նպատակով, 1986թ. ստեղծված Քրդստանի ժողովրդի ազատագրության բանակը ևս նպատակ ուներ աջակցել ՔԱԿ-ին՝ հաճախ գործելով ապակողմնորոշիչ առաքելությամբ:

Ֆինանսական աջակցության և անդամների հավաքագրման առումներով ՔԱԿ-ին էական օժանդակություն էին ցույց տալիս Գերմանիայում, Շվեդիայում, Դանիայում ապրող քրդական համայնքները: Մարտական գործողություններում ՔԱԿ արձանագրած հաջողություններն առավել զգալի էին 1991-1993թթ. ընթացքում, երբ հարավարևելյան մի շարք նահանգներում հաջողվեց ստեղծել քաղաքական վակուում, քանի որ կենտրոնական իշխանությունները և հաստատությունները զրկված էին մի շարք քաղաքներ և գյուղեր մուտք գործելու հնարավորությունից, արգելված էր նաև քաղաքական կուսակցությունների և տպագիր մամուլի մուտքը ՔԱԿ-ի կողմից վերահսկվող շրջաններ: ՔԱԿ-ը կազմակերպում էր նաև քաղաքացիական անհնազանդության ակցիաներ, գործադուլներ, նստացույցեր: ՔԱԿ-ը ձևավորել էր նաև դատարաններ՝ բնակիչների միջև առաջացած իրավական վեճերին լուծում տալու նպատակով: Ոչ միանշանակ էին նաև ՔԱԿ փոխհարաբերությունները քրդական քաղաքական կուսակցությունների հետ, օրինակ՝ 1991թ. ՍԺԺԿ-ի հետ դաշինքով խորհրդարան մտած Ժողովրդական աշխատանքային կուսակցության (HEP) գործունեությունը շուտով կասեցվեց՝ քրդական անջատողականության խրախուսման պատճառաբանությամբ: Շուտով, նույն կուսակցության մի շարք անդամներ ձևավորեցին մեկ այլ քրդական ժողովրդավարական կուսակցություն (DEP), որի գործունեությունը ևս շուտով կասեցվեց՝ կրկին նույն պատճառաբանությամբ: Կասեցված երկու կուսակցությունների շարքերում էլ կային և ՔԱԿ-ին աջակցող, և նրան ընդդիմացող քաղաքական գործիչներ: Բարդ էին նաև ՔԱԿ փոխհարաբերություններն առավել երկարակյաց՝ Ժողովրդի ժողովրդավարության կուսակցության (HADEP) հետ: ՔԱԿ առաջնորդն անձամբ դեմ էր այնպիսի քաղաքական կուսակցությունների ձևավորմանը, որոնք կարող էին խաթարել նրա հեղինակությունը:

Կենտրոնական իշխանությունների կողմից ՔԱԿ-ի դեմ պայքարն ընդգրկել է ամենատարբեր մեթոդներ. սովորական բանակային և ոստիկանական ուժերից բացի, ստեղծվեցին գաղտնի հակաահաբեկչական միավորումներ, որոնք ոչ միայն պատերազմում էին քրդերի դեմ, այլ նաև սպանում էին քուրդ մտավորականներին և քաղաքական ակտիվիստներին: Բանակի կողմից ստեղծվեց «Ժանդարմերիայի հետախուզության և հակաահաբեկչության կենտրոնը», որը հայտնի դարձավ JİTEM անվամբ, իսկ ոստիկանության կողմից՝ «Հատուկ թիմը» (Özel Tim)-ը, որոնք գործում էին որպես ոստիկանական զորքեր: Ստեղծվեցին նաև զինված իսլամական խմբավորումներ, որոնք նույնպես նպատակ ունեին պայքարել քրդերի դեմ: Դրանցից առավել հայտնի էր քրդական «Հըզբոլահը»: Այն, ընդհանուր ոչինչ չունենալով լիբանանյան անվանակցի հետ, պետությունից ստանալով էական ֆինանսական և նյութական օգնություն, իրականացնում էր հարձակումներ քուրդ մտավորականների, քուրդ ակտիվիստների և անգամ կանանց նկատմամբ:

Սկզբում զինվորականությունը պատրաստ չէր ՔԱԿ-ի դեմ պայքարի, որի պատճառով մեծաթիվ զոհեր էր տալիս, իսկ ռազմական գործողությունների արդյունավետությունը բավական ցածր էր: ՔԱԿ զորամիավորումները պարբերաբար օգտագործում էին Հյուսիսային Իրաքի Քանդիլի լեռները՝ թե՛ պատսպարվելու, թե՛ ռազմական գործողությունների նպատակով: Թուրքիայի ՀՈՒ-ն բազմիցս խախտել է Իրաքի օդային և ցամաքային տարածքը՝ ՔԱԿ-ին տարբեր ծավալի հարվածներ հասցնելու նպատակով:

9. Ներքաղաքական զարգացումները 1990-ական թթ. առաջին կեսին

1990-ական թթ. սկզբին տեղի ունեցող ներքաղաքական գործընթացները, միջկուսակցական պայքարի սրումը, դրանց զուգակցումը սոցիալ-քաղաքական ու տնտեսական խնդիրներին տարբեր առումներով հիշեցնում էին 1980թ. ռազմական հեղաշրջմանը նախորդող իրավիճակը: Մի շարք ուսումնասիրողներ կարծիք հայտնեցին, թե հիշյալ ժամանակահատվածում մեկ այլ հեղաշրջման իրական վտանգ էր ստեղծվել:

1989թ. մարտի 26-ի տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրությունների արդյունքները որոշակի հստակեցումներ մտցրին քաղաքական դաշտում.թ. Օզալի կուսակցությունը երրորդն էր ՍԺԺԿ-ից և ՃՈՒԿ-ից հետո: Նույն տարվա հոկտեմբերին, երբ ավարտվում էին Էվրենի նախագահական լիազորությունները, Օզալն այդ պաշտոնում առաջադրեց իր թեկնածությունը: Խորհրդարանում ունենալով ամուր դիրքեր՝ 1989թ. հոկտեմբերի 31-ինթ. Օզալն ընտրվեց նախագահ: Նոյեմբերի 9-ին նախագահի երդման արարողության ժամանակ նա նշեց, որ Թուրքիային հարկավոր է երեք արմատական ազատություն կրկին քաղաքակրթվելու համար՝ ա) խոսքի և մտքի ազատություն, բ) կրոնի ազատություն «աշխարհիկության» երաշխիքի հետ միասին և գ) ազատ ձեռնարկատիրություն: Նրա կարծիքով՝ իր իշխանության տարիներին տեղի ունեցած բարեփոխումներն արևմտականացման վերջին անհրաժեշտ փուլն էին, որի շնորհիվ երկրին շարունակական հեղափոխություններ և բարեփոխումներ այլևս պետք չեն: Սահմանադրության պահանջի համաձայն՝ Օզալը վայր դրեց կուսակցության ղեկավարի պարտականությունները, ՄՀԿ նոր ղեկավար ընտրվեց խորհրդարանի խոսնակը՝ Յըլդըրըմ Աքբուլութը, որը դարձավ նաև վարչապետ և կառավարությունը ղեկավարեց մինչև 1991թ. հունիսը: 1991թ. հունիսին տեղի ունեցած կուսակցության համագումարում նախագահ ընտրվեց Մեսութ Յըլմազը[27], որը կուսակցությունը ղեկավարեց մինչև 2002թ.:

1991թ. հոկտեմբերի 20-ին տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Դեմիրելի ղեկավարած ՃՈՒԿ-ը, շահելով քվեների 27 տոկոսը (178 մանդատ), մեջլիսում ձեռք բերեց մեծամասնություն, Օզալի ՄՀԿ-ն եզրագիծն ավարտեց երկրորդ լավագույն ցուցանիշով (115 մանդատ): Այսպիսով, 1983թ. հետո Օզալի ղեկավարած կուսակցության միանձնյա կառավարման ժամանակահատվածն ավարտվեց, և սկսվեց իրարահաջորդ կոալիցիոն կառավարությունների տաս-

27 Մեսութ Յըլմազը համշենահայերի արևմտյան՝ Ռիզեի խմբի ներկայացուցիչ է, սակայն հրապարակային քաղաքականության մեջ խուսափել է իր էթնիկ ծագման մասին հիշատակումից:

նամյակը: Դեմիրելը դարձավ կառավարության ղեկավար, որի մաս կազմեց ՍԺԺԿ-ն (88 պատգամավորական մանդատ), վերջինիս ղեկավարը՝ Է. Ինյոնյուն, դարձավ փոխվարչապետ: Ինյոնյուի պահանջով կոալիցիոն հուշագրում ամրագրվեց այդ կուսակցության սկզբունքային պահանջներից մեկը՝ թույլատրել մինչև 1980թ. ռազմական հեղաշրջումը գործած կուսակցությունների վերաբացումը: Այդ քայլի շնորհիվ 1992թ. հունիսին վերաբացվեց ՀԺԿ անվամբ նոր կուսակցություն, որի ղեկավար ընտրվեց Դենիզ Բայքալը: Կուսակցական գաղափարախոսությունը ստացավ «Նոր ճախ» (Yeni Sol) անվանումը, որի հիմնական սկզբունքներն արտացոլված էին Դենիզ Բայքալի և Իսմայիլ Ջեմի հեղինակած համանուն գրքում: Շուտով ՍԺԺԿ մի քանի տասնյակ պատգամավորներ շտապեցին անդամակցել վերաբացված ՀԺԿ-ին, որը դարձավ խորհրդարանական կուսակցություն: 1992-1995թթ. ընթացքում երկու գաղափարակից կուսակցությունները գոյակցեցին, ավելին, 1994թ. լույս տեսած ՀԺԿ ծրագրում նշվում էր սոցիալական արդարության, հավասար հնարավորությունների մասին, դրանց հետ միասին մատնանշվում էր քաղաքական իսլամի ու էթնիկ անջատողականության դեմ պայքարի կարևորությունը: 1995թ. հունվարի 29-ին ՍԺԺԿ-ն և ՀԺԿ-ն միավորվեցին՝ ստանալով ՀԺԿ անվանումը, կուսակցության ժամանակավոր ղեկավար ընտրվեց Հիքմեթ Չեթինը, ավելի ուշ Դենիզ Բայքալը վերընտրվեց կուսակցության ղեկավարի պաշտոնում:

1993թ. ապրիլի 17-ին Օզալը հանկարծամահ եղավ[28], իսկ մայիսի 16-ին երկրի նախագահ ընտրվեց Դեմիրելը: ՃՈՒԿ նախագահ ընտրվեց Թանսու Չիլերը, որը հունիսին ստանձնեց վարչապետի պաշտոնը՝ դառնալով այդ պաշտոնն զբաղեցնող առաջին կինը: Ստամբուլի բիզնես-շրջանակների շահերը ներկայացնող և Դեմիրելի կառավարությունում տնտեսության զարգացման նախարար աշխատած Չիլերի՝ հակասություններով հարուստ վարչապետության շրջանն այնքան էլ չարդարացրեց աշխարհիկ կարգերի ջատագովների հույսերը: Նա հաճախ էր համագործակցության ձեռք մեկնում կրոնական կազմակերպություններին՝ ֆինանսական կամ քաղաքական աջակցություն ստանալու ակնկալիքով: Չիլերը հաճախ

28 Օզալի մահից հետո սկսեցին շրջանառվել ոչ բնական ճանապարհով նրա մահվան մի քանի վարկածներ (թունավորում, բժշկական օգնության միտումնավոր ուշացում և այլն):

անկեղծանում էր. «Անզոր եմ մեկնաբանել այն, ինչ զգում եմ ամեն անգամ էզանի (մուսուլմանական աղոթքի կանչ) ձայնից»,- մի առիթով նշել էր նա: Միևնույն ժամանակ, նա բաց չէր թողնում երկրում իսլամականության վերելքին ծայրահեղ գնահատականներ տալու առիթը:

Չիլերի ղեկավարած կոալիցիոն կառավարությունը, համագործակցելով ՀՈՒ-ի և գաղտնի ծառայությունների հետ, լայնածավալ ռազմական գործողություններ ծավալեց ՔԱԿ-ի դեմ: 1993-1995 թվականներն առանձնացան այդ գործողությունների ծավալային և աշխարհագրական ընդգրկումների առումներով: Հարավարևելյան նահանգներում Թուրքիայի գլխավոր շտաբը կենտրոնացրեց ավելի քան 150.000 զինվոր, որոնք, համագործակցելով ժանդարմերիայի ուժերի հետ, ՔԱԿ-ի, քուրդ մտավորականների դեմ կատաղի պայքար և ահաբեկչական գործողություններ սկսեցին:

1991թ. ընտրություններից հետո ԲԿ-ն, զարգացնելով ընտրական հաջողությունները, կարողացավ 1992թ. ՏԻՄ լրացուցիչ ընտրությունների արդյունքում հաղթել Ստամբուլի չորս վարչական շրջաններում: 1991-1994թթ. ԲԿ-ն ակտիվացրեց գործունեությունը և 1994թ. մատուցեց առաջին լուրջ անակնկալը: Նույն թվականի մարտի 27-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններում և ընտրողների աննախադեպ՝ 90,3 տոկոս մասնակցության պայմաններում ԲԿ-ն կարողացավ ավելի քան կրկնապատկել իր նախորդ ցուցանիշը՝ ստանալով քվեների 19,1 տոկոսը: Անկարան և Ստամբուլը, ինչպես նաև 29 այլ քաղաքներ, մոտ 400 միջին և փոքր բնակավայրեր կամ երկրի բնակչության 2/3-ն անցան ԲԿ կառավարման ներքո: Ստամբուլի քաղաքապետ ընտրվեց ԲԿ Ստամբուլի տարածքային կազմակերպության ղեկավար Ռեջեփ Թայիփ Էրդողանը, Անկարայի քաղաքապետ ընտրվեց Մելիհ Գյոքչեքը:

ԲԿ-ն զգալի առավելությամբ հաղթել էր երկրի արևելյան և հարավարևելյան քրդաբնակ շրջաններում: Այդ տարածքում ԲԿ հաղթանակի պատճառներից մեկն ընտրությունների բոյկոտումն էր քրդական «Ժողովրդավարական շարժում» կուսակցության կողմից, երբ վերջինիս մի քանի պատգամավորներ զրկվել էին անձեռնմխելիության իրավունքից՝ հակապետական գործունեության մեղադրանքով: ԲԿ-ն կարողացավ ընտրարշավը կառուցել բավական խելամիտ և հաշվենկատ՝

շեշտադրելով կառավարության դաժան քաղաքականությունը ՔԱԿ-ի նկատմամբ:

Հաղթանակից հետո ԲԿ-ն զգալիորեն բարելավեց հասարակական ծառայությունների ոլորտը և սկսեց պայքարել կոռուպցիայի, օրինախախտումների և նմանատիպ այլ երևույթների դեմ: Մի շարք քաղաքներում, օրինակ՝ Քոնիա և Դիարբեքիր, արգելվեց ալկոհոլի վաճառքը, ինչպես նաև գիշերային ակումբների գործունեությունը, իսկ որոշ համայնքներում խրախուսվեց կրոնական գլխաշոր կրելը: Հանրային զբոսայգիներից մերկ արձանների հեռացման առիթով Ստամբուլի նորընտիր քաղաքագլուխ Էրդողանն ակնարկել էր. «Եթե սա մշակույթ է, ապա ես թքում եմ դրա վրա»: ԲԿ քաղաքագլուխները տարբեր առիթներով հայտարարեցին, որ ավելի շուտ կգերադասեին գումարներ ծախսել իսլամին նվիրված սեմինարների անցկացման համար, քան բալետի կամ դասական երաժշտության, որոնք նրանք համարում էին այլասերված արվեստ:

ԲԿ հանրային աջակցության գաղտնիքը հարկավոր է փնտրել նրա ղեկավարության հմտորեն իրականացրած ժողովրդավարական պոպուլիզմի և մշակութային ծայրահեղականության համատեղության մեջ:

1995թ. մայիսի 2-ին նախագահ Դեմիրելը «Միլիյեթ»-ին տված հարցազրույցում անդրադառնում է ԲԿ համայնքային գործելաոճին և նշում. «Եթե անկարող ես վճարել քո գազի կամ էլեկտրաէներգիայի վճարները, ապա ԲԿ տեղական իշխանությունները քեզ կկանչեն գրասենյակ, կներեն քո պարտքը, և այդ ամենից հետո դու կքվեարկես ԲԿ օգտին»: Կար նաև կարծիք, որ ԲԿ արդյունավետ գործունեության վերաբերյալ առկա գնահատականները չափազանցված են, քանի որ ԲԿ քաղաքապետերը ևս ներքաշված էին կոռուպցիոն գործընթացների մեջ: Այնուհանդերձ, վերլուծաբանների գերակշիռ մասը համակարծիք է այն հարցում, որ կուսակցությունն ուշադրություն դարձրեց սոցիալական ծառայությունների տրամադրման՝ նախկինում անտեսված ոլորտներին և զգալի առաջընթաց արձանագրեց ՏԻՄ-ում:

ՏԻՄ-ում համեմատաբար լավ աշխատանքի շնորհիվ ԲԿ անդամ

ղեկավարների մեծ մասը ձեռք բերեց ազդեցիկ հեղինակություն: 1990-ական թվականների կեսերին արդեն ակնհայտ էր, որ ԲԿ ներսում նշմարվում էր սերնդափոխություն, որի առաջամարտիկներից էին Ռեջեփ Թայիփ Էրդողանը, Աբդուլահ Գյուլը, Բյուլենթ Արընչը, Ալի Ջոշքունը, Ջեմիլ Չիչեքը: Ստանձնելով Ստամբուլի քաղաքապետի պաշտոնը՝ քառասնամյա Էրդողանն իր գործելաոճով, խարիզմատիկ առաջնորդի ու հասարակ հռետորի որակներով, համեմատաբար լիբերալ քաղաքական հայացքներով սկսեց հստակորեն զանազանվել Էրբաքանից: Այդուհանդերձ, քեմալականներն առիթ ունեցան ականատես լինելու նաև Էրդողանի կառավարման այնպիսի դրվագների, երբ վերջինս տարբեր առիթներով նշում էր. «Հանրապետական շրջանում քեմալիզմն ընդունվել է որպես կրոն, ուժի միջոցով այն պարտադրվել է ժողովրդական զանգվածներին... Քեմալիզմի կամ այլ պետական գաղափարախոսության համար ապագա Թուրքիայում տեղ չկա: Մեզ՝ մուսուլմաններիս համար իսլամի սկզբունքները սահմանում են ամեն ինչ»:

Այսպիսով՝ 1990-ական թվականների առաջին կեսին երկրում տեղի ունեցան ուժերի և հարաբերությունների վերադասավորումներ: Օգալի կառավարման տարիներին տնտեսական ու քաղաքական ոլորտների չափավոր ազատականացման շնորհիվ իսլամական կազմակերպությունները, շարժումները, ֆինանսական միությունները գործադրեցին հնարավոր բոլոր լծակները սեփական նպատակների իրագործման ուղղությամբ: Իսլամի դրոյթները շարունակում էին ծառայել որպես սոցիալական ու քաղաքական խմբավորումներին համախմբելու արդյունավետ լծակներ: Այս զարգացումների վերջին ակորդը «Բարօրություն» կուսակցության օրեցօր աճող հզորությունն էր և 1994թ. ՏԻՄ ընտրություններում նրա ձեռքբերումները, որոնց արդյունքների վերլուծությունը պետք է որ սթափեցնեին այն ուժերին, որոնք իսլամի վերելքը դիտում էին որպես երկրի ապագան ու աշխարհիկ-հանրապետական իրավակարգը վտանգող թիվ մեկ թշնամի:

10. Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 1980-1995թթ.

Թուրգութ Օզալի իշխանության տասնամյակը կարևոր նշանակություն ունեցավ Թուրքիայում նոր արտաքին քաղաքական տեսլականի մշակման և իրագործման հարցում: Նրա իշխանության տարիներին մշակվեց ավանդական արևմտականացման քաղաքականությունից տարբերվող հայեցակարգ: Օզալը «Թուրքիան Եվրոպայում, Եվրոպան Թուրքիայում» գրքում առաջ էր քաշում Թուրքիայի՝ կամուրջ լինելու գաղափարը: Օզալի հայացքները Թուրքիայի կամրջային դերակատարման մասին զգալի ազդեցություն թողեցին Թուրքիայի աշխարհաքաղաքական մտքի վրա, մասնավորապես՝ հետագայում արդեն «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման շրջանում արտաքին գործերի նախարար Ահմեթ Դավութօղլուի «Ռազմավարական խորք» աշխատության վրա ևս զգացվում է Օզալի գաղափարների ազդեցությունը:

Թուրքիայի ներքին կյանքում Թուրգութ Օզալի բարենորոգումների շնորհիվ տեղի ունեցան արմատական փոխակերպումներ: Նախ՝ «Թուրք-իսլամական համադրության» նախագծի շնորհիվ հնարավոր եղավ որոշակիորեն մեղմել ներհասարակական բևեռացումը. Օզալը, իր կուսակցության մեջ ընդգրկելով քաղաքական տարբեր հոսանքների, մոտ մեկ տասնամյակ հնարավորություն ունեցավ ավելի արդյունավետ արտաքին քաղաքականություն վարելու: Մյուս կողմից՝ Օզալի բարենորոգումների շնորհիվ ի հայտ եկած իսլամամետ բուրժուազիան աստիճանաբար սկսեց դերակատարում ունենալ արտաքին քաղաքականության ձևավորման մեջ: 1991թ. «Սառը պատերազմի» ավարտը, ԽՍՀՄ փլուզումը, Ռուսաստանից եկող սպառնալիքի վերացումը և նորանկախ թյուրքախոս պետությունների ի հայտ գալը Թուրքիային հետխորհրդային տարածքում ավելի անկաշկանդ ու ակտիվ արտաքին քաղաքականություն վարելու հնարավորություն ընձեռեցին: Նման պայմաններում Օզալը գտնում էր, որ Թուրքիան այլևս չի կարող մնալ Մուսթաֆա Քեմալի հոչակած «Ազգային ուխտի» սահմաններում և վարել պասիվ քաղաքականություն: Օզալի

օրոք սկսված գիծը հաճախ նշվում է որպես նեո-օսմանական արտաքին քաղաքականության առաջին փուլ:

Օզալի գաղափարները հետագայում ավելի մշակված կերպով ներկայացրեց 1997-2002թթ. արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմը: Նա հիմնավորեց Թուրքիայի պատմական աշխարհագրության օգտագործման կարևորությունը նախկին Օսմանյան կայսրության տարածքներում ազդեցության հասնելու համար: Ջեմի գաղափարների մեջ առանձնանում էր գլոբալ տերության վերածվելու ձգտումը, որի նախապայմաններ էր համարում տնտեսական զարգացման ու պատմամշակութային արժեքների համադրումը: Սակայն Ջեմի ժամանակաշրջանում նման գլոբալ ու տարածաշրջանային նկրտումները դեռևս թույլ հիմքեր ունեին. մասնավորապես՝ տնտեսական ճգնաժամը Թուրքիայում և կառավարության կոալիցիոն բնույթը հնարավորություն չէին տալիս կենսագործել այս գաղափարները:

Արևմուտքի հետ դաշնակցային հարաբերություններ ունեցող աշխարհիկ, բայց գերազանցապես իսլամական բնակչությամբ պետության մոդելը հիմնավորվեց որպես «թուրքական մոդել», և այն, 1990-ական թթ. սկսած, ԽՍՀՄ փլուզումից հետո Արևմուտքի կողմից ներկայացվում էր որպես նմուշաձև Միջին Ասիայի թյուրքալեզու հանրապետությունների համար: Արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները՝ ԵՄ լիիրավ անդամակցությունը, ԱՄՆ-ի հետ ռազմավարական դաշինքն ու ՆԱՏՕ-ում դերակատարությունը որպես առաջնային պահպանելով՝ Անկարան միաժամանակ արտաքին քաղաքականության վեկտորն սկսեց ուղղել նաև դեպի Արևելք:

Թուրքիայի հարաբերությունները ԵՄ իրավազոր կազմակերպությունների հետ սկիզբ են առել դեռևս «Սառը պատերազմի» տարիներին: 1987թ. Թուրքիան արդեն դիմեց եվրոպական համայնքին անդամակցության համար, սակայն վերջինս հարցը հետաձգեց մինչև ավելի նպատակահարմար ժամանակ: Եվրոպական կառույցներին անդամակցությունը, բացի տնտեսական բաղադրիչից, ելնում էր պաշտոնական քեմալական գաղափարախոսությունից, որը թուրքերին քաղաքակրթապես համարում էր եվրոպացիներ, ու արևմտականացման գործընթացի շրջանակում Թուրքիայի եվրաինտեգրումը, փաստորեն,

համարվում էր էվոլյուցիայի նշան և բնական զարգացում: Սակայն Եվրոպան հանձն առավ ցույց տալ Անկարային, որ ոչ տնտեսական, ոչ էլ կոպենհագենյան քաղաքական չափանիշներով Թուրքիան դեռ պատրաստ չէր այդ գործընթացին: Նույն՝ 1987թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանն ընդունեց որոշում, որով ճանաչեց Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում և կոչ արեց Եվրախորհրդին՝ ճնշումներ գործադրել Թուրքիայի վրա:

Այդուհանդերձ, երկու տարի անց՝ 1989թ., Թուրքիան մտավ նախապատրաստման գործընթացի մեջ: 1995թ. Թուրքիան դիմեց ԵՄ մաքսային միությանն անդամակցության համար, և կրկին ԵՄ ներսում մեծ վեճ տեղի ունեցավ: Թուրքիայի համար առավել խնդրահարույց կարող էր լինել պաշտոնական Աթենքի դիրքորոշումը, սակայն Հունաստանը չօգտվեց վետոյի իր իրավունքից՝ փոխարենը ստանալով ԵՄ անդամների համաձայնությունը Կիպրոսի հետ անդամակցության գործընթաց սկսելու վերաբերյալ: Այսպիսով՝ Կիպրոսի Հանրապետությունն առաջ անցավ Թուրքիայից և, ի հավելումն Հունաստանի, Եվրամիությունում այլևս տեսականորեն կարող էր արգելակել Անկարային վերաբերող յուրաքանչյուր խնդիր:

Կիպրոսի խնդիրն առանցքային արգելքներից էր Եվրամիությանը Թուրքիայի լիիրավ անդամակցության գործընթացում: 1974թ. կղզու հյուսիսային մասը զավթելուց 9 տարի հետո՝ 1983թ. թուրքերն այդ տարածքում հիմնադրեցին, այսպես կոչված, «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն» (Kuzey Kıbrıs Türk Cumhuriyeti), ինչն ավելի ամրապնդեց բաժանումը: Վերջինս պաշտոնապես ճանաչված է միայն Անկարայի կողմից:

Անկարային կիպրական խնդրում մեծ աջակցություն էր ցուցաբերում Վաշինգտոնը: Սա բխում էր ընդհանուր առմամբ Կիպրոս կղզու ռազմավարական մեծ նշանակությունից: Կիպրոսը կարևոր է ԱՄՆ-ի համար Մերձավոր Արևելքի երկրների և ընդհանրապես Միջերկրական ծովի արևելյան մասի հանդեպ իր ունեցած գերակա դիրքի շնորհիվ: «Սառը պատերազմի» ժամանակաշրջանում Վաշինգտոնը կղզում թուրքական զորքերի ներկայությունը դիտում էր որպես Խորհրդային Միության ու

նրա դաշնակիցների վրա ազդեցության հավելյալ լծակ: Սրանով էր բացատրվում այս խնդրում ԱՄՆ աջակցությունը Թուրքիային:

Սակայն հետխորհրդային ժամանակաշրջանում իրավիճակն արմատապես փոխվեց: Թուրքիան կորցրեց իր նշանակությունը որպես ՆԱՏՕ առաջին գիծ հակախորհրդային ճակատում: Նույնը որոշ առումով վերաբերվեց նաև Կիպրոսին:

ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում առկա են զգալի տարաձայնություններ: ԵՄ անդամ պետությունները Թուրքիայի անդամակցության հարցում երկու հիմնական խմբի են բաժանվում: Անդամակցությանն աջակցում են Մեծ Բրիտանիան, Սկանդինավյան պետություններն ու նոր միացած պետությունները, որոնք նախ ԵՄ անդրատլանտյան դաշնակից ԱՄՆ-ի հետ կիսում են ընդհանուր անվտանգության ընկալումը և, բացի այդ, կողմ էին ավելի թույլ ինտեգրված ԵՄ-ին: Այս պետությունները շեշտում էին ԵՄ նվազող աշխատուժի պայմաններում Թուրքիայի երիտասարդ աշխատուժի կարիքը, Թուրքիայի բանակի կարևորությունը ԵՄ-ի համար, աշխարհաքաղաքական օգուտները, որը ԵՄ-ը կստանա իսլամական աշխարհի հետ հարաբերություններում: Թուրքիայի անդամակցությանը ընդդիմանում են Ֆրանսիան, Գերմանիան և Ավստրիան: Այս պետությունների դիրքորոշումը հիմնականում պայմանավորված է ավելի ամուր, դաշնային ԵՄ ունենալու տեսլականով, ներգաղթյալների հետ ունեցած խնդիրներով, նաև այն հանգամանքով, որ Թուրքիայի անդամակցության դեպքում ԵՄ կառույցներում, հատկապես խորհրդարանում Թուրքիան քվեարկելիս կունենա մեծամասնություն իր բնակչության մեծաքանակության շնորհիվ: Կրոնամշակութային տարբերությունը ևս առանձնահատկություն է հաղորդում Թուրքիայի անդամակցությանը:

1997թ. Լյուքսեմբուրգում տեղի ունեցած գագաթաժողովի ժամանակ Թուրքիան պահանջեց, որ իրեն շնորհվի «լիիրավ անդամակցության թեկնածու երկրի» կարգավիճակ, ինչը երկար քննարկումների արդյունքում մերժվեց, քանի որ Թուրքիան ոչ մի կերպ դեռ չէր համապատասխանեցրել իր ներքին օրենսդրությունը կոպենհագենյան չափանիշներին: Եվրամիությունն ընդհանրապես, իսկ Ֆրանսիան ու Գերմանիան՝ մասնավորապես, Անկարայի ընթացքը դանդաղեցնելու հա-

մար օգտագործում են բազմաթիվ միջոցներ, այդ թվում նաև խաղարկելով Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը: Թեև Հայոց ցեղասպանության ճանաչումը ԵՄ պարտադիր պահանջների ցուցակում չի գտնվում, սակայն այն այսօր էլ մնում է եվրոպացիների զինանոցում և կարիքի դեպքում կարող է գործի դրվել Անկարայի վրա ճնշումներ բանեց_նելու նպատակով:

Ուշագրավ է, որ հենց Օզալի կառավարման տարիներին, երբ նոր թափ ստացավ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Թուրքիայում ավանդական ժխտողական մեթոդին զուգահեռ՝ փորձ արվեց մշակել և կիրառել ավելի ճկուն ու խորամանկ քաղաքականություն, որը հաճախ քողարկվում էր «հայամետ» միջոցառումների անվան տակ: Թուրքիայի խորհրդարանում պատգամավորության հայ թեկնածուների առաջադրումը հենց այդ կարգի միջոցառումներից էր: Վերջին շրջանում Թուրքիայում հրապարակվեցին նաև տեղեկություններ այն մասին, թե իբր Օզալը հայկական սփյուռքի մեկ-երկու ներկայացուցիչների հետ հանդիպումից հետո հայտարարել էր. «Ավելի լավ չէր լինի՞ ճանաչել Հայոց ցեղասպանությունը և վերջ դնել այդ հարցին»: Ակնհայտ է, սակայն, որ նույնիսկ եթե նմանատիպ տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, Հայոց ցեղասպանության ճանաչման հեռանկարը Թուրքիայի նախկին նախագահի կողմից ընկալվում էր որպես դատարկ քաղաքական ժեստ, որը ոչինչ չէր պարտավորեցնի, փոխարենը կազատեր երկիրը հայկական լոբբիի կոշտ ճնշումից և, միևնույն ժամանակ, աշխարհում կընկալվեր որպես դեպի Եվրոպա ձգտող Թուրքիայի «բարի կամքի» դրսևորում:

1990-ական թթ. ՆԱՏՕ-ում ու ԵՄ-ում ազդեցություն ձեռք բերելու համար Անկարան որդեգրեց նոր միտում, այն է՝ Թուրքիան որպես ՆԱՏՕ անդամ պետք է գործի ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև Արևելյան Եվրոպայում ու Բալկաններում, ինչը հնարավորություն կտար միջամտել Բալկանների կյանքին ու մասամբ կփոխհատուցեր ԵՄ անդամակցության թերությունները: Ելնելով այս դրույթից՝ Թուրքիան ակտիվ մասնակցություն ցուցաբերեց Բոսնիայում, Կոսովոյում, Մակեդոնիայում ՆԱՏՕ և ԵՄ գլխավորած ռազմական առաքելություններին:

XXդ. 80-ական թվականների վերջից, հատկապես «Սառը պատերազմի» ավարտից հետո, Թուրքիան սկսեց վերանայել իր արտաքին քաղաքականության ուղղվածությունն աշխարհի տարբեր կետերում: Մերձավոր Արևելքը, մասնավորապես՝ Պարսից ծոցի ավազանը, ավելի մեծ նշանակություն ձեռք բերեց Թուրքիայի համար: Նախորդ դարի 90-ական թթ. սկզբից ի վեր Թուրքիայի Հանրապետությունը փորձեց խաղալ Արևմուտքն ու Արևելքը կապողի դեր և առավել ակտիվություն ցուցաբերել արաբ հարևանների, հատկապես արաբական միապետությունների հետ հարաբերություններում՝ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական առումով տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդելու նպատակով:

Թուրքիայի մերձավորարևելյան քաղաքականության համար առավել խնդրահարույց էր Սիրիան: Թուրք-սիրիական հարաբերություններում լարվածությունն ավելանում էր մինչև 1998թ., երբ երկու երկրների միջև ստեղծվեց ռազմական բախման հավանականություն: Երկկողմ հարաբերություններն ավանդաբար լարված էին Հաթայի (նախկին Ալեքսանդրեթի սանջաք) խնդրի, Տիգրիսի ու Եփրատի ջրի օգտագործման, Սիրիայում ՔԱԿ ակտիվության պատճառով: Անկարան տվյալներ ուներ, որ ՔԱԿ անդամների մեծ մասը ոչ միայն թաքնվում ու մարզվում էր Սիրիայի տարածքում, այլև օգտագործում էր սիրիական բանկերը Թուրքիայում իրենց գործունեության ֆինանսավորման համար: Ավելին, այնտեղ էր թաքնվում ՔԱԿ առաջնորդ Աբդուլա Օջալանը: Մինչև 1987թ. Սիրիան մերժում էր Օջալանի ներկայության և կամ ՔԱԿ-ին աջակցության փաստը: Սակայն 1987թ. հուլիսին Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալի այցի ընթացքում երկու երկրները ստորագրեցին պայմանագիր, համաձայն որի՝ պարտավորվում էին չօժանդակել գործընկեր երկրի դեմ գործող կազմակերպություններին: Սիրիան, սակայն, չպահեց այս խոստումը, ինչպես նաև հաջորդները, որոնք տրվեցին 1988թ. օգոստոսին, 1992թ. ապրիլին, 1993թ. նոյեմբերին, 1994թ. ապրիլին: Այդպես էր Դամասկոսը փորձում հակազդել Անկարային, որը կառուցելով մի շարք ամբարտակներ Տիգրիս ու Եփրատ գետերի վրա՝ վերահսկում էր ջրի հոսքը Սիրիա: Թուրքիան կարող էր թե՛ նվազագույնի հասցնել այդ հոսքը, ինչպես բազում անգամ սպառնացել է, թե՛ հեղեղել Սիրիան՝ ջրի հոսքն օգտագործելով որպես ճնշման լծակ: 1998թ. Թուրքիայի ԳՇ վերջնագրի ազդեցությամբ

Սիրիան վտարեց ՔԱԿ առաջնորդ Աբդուլահ Օջալանին, որից հետո երկու երկրների հարաբերություններում մեղմացում նկատվեց:

Թուրքիայի մերձավորարևելյան քաղաքականության ամենամեծ շրջադարձը տեղի ունեցավ Իսրայելի հետ հարաբերություններում: 1949թ. հանդիսանալով առաջին իսլամադավան պետությունը, որը ճանաչել է Իսրայելի անկախությունը, 1990-ական թթ. պաշտոնական Անկարան Թել Ավիվի հետ զարգացրեց ռազմավարական համագործակցություն: Ծոցի պատերազմն արաբական երկրների միջև, Օսլոյի արձանագրություններն ու հաշտեցման գործընթացն Իսրայելի և պաղեստինցիների միջև ստեղծեցին նպաստավոր պայմաններ երկու պետությունների վերամերձեցման համար: Գլխավոր պատճառը, սակայն, ընդհանուր սպառնալիքներն էին՝ Իրան, Իրաք, Սիրիա, քրդական գործոն, որն օգտագործվում էր երրորդ պետությունների կողմից: Նման պայմաններում, 1993թ. Թուրքիայի ԱԳ նախարար Հիքմեթ Չեթինի այցի ժամանակ երկու պետությունները կնքեցին Ռազմավարական համագործակցության համաձայնագիր, որն ընդգրկում էր համագործակցություն միջազգային և տարածաշրջանային, ռազմական տեխնիկայի փոխանցման, կրթության և գիտության, առևտրի ու ներդրումների բնագավառներում:

1994թ. Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելն ընդունեց Պաղեստինի առաջնորդ Յասիր Արաֆաթին, որը խնդրեց Թուրքիային խաղաղապահներ տեղակայել Պաղեստինի տարածքում: Թուրքիան նաև պատրաստակամություն հայտնեց միասնական ձեռնարկություններ հիմնել Գազայում, ինչպես նաև խոշոր վարկ տրամադրել Գազայի վերականգնման համար՝ հաշտության հասնելու դեպքում: Ռազմատեխնիկական համագործակցությունը շարունակվեց հետագա տարիներին ևս:

1991թ. ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ պայմանավորված էր մի շարք գործոններով, որոնց թվում էին Թուրքիայի հետաքրքրությունները Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում՝ կապված էներգակիրների համար մրցակցության ու թյուրքական ժողովուրդների «մեծ եղբոր» դերակատարումն ստանալու նկրտումների հետ: Այլ գործոնների թվում էին Ռուսաստանի աջակցությունը Կիպրոսին, պատերազմը Չեչնիայում, քրդական ահաբեկչությունները Թուրքիայում և այլն:

Կենտրոնական Ասիայում ու Հարավային Կովկասում ազդեցությունը տարածելու Թուրքիայի ձգտումները ստանում էին Արևմուտքի, մասնավորապես՝ ԱՄՆ աջակցությունը, որը «թուրքական մոդելն» ակնկալում էր տեսնել Եվրասիայի թյուրքական պետություններում: Այս նկրտումները տեսական ձևակերպում էին գտնում թուրք վերլուծաբանների ու տեսաբանների մշակած «Եվրասիական ռազմավարության» մեջ, որը նախատեսում էր Թուրքիայի գերիշխանության տարածումը Եվրասիայում: Նման նկրտումները, բնականաբար, բախվելու էին Ռուսաստանի շահերին, որը 1993թ. արտաքին քաղաքականության դրույթներում ԱՊՀ-ը, այդ թվում Կենտրոնական Ասիան և Կովկասը դիտարկում էր որպես Ռուսաստանի կենսական շահերի ոլորտ:

1990-ական թվականները նշանավորվեցին Թուրքիայի և Ռուսաստանի միջև լարված հարաբերություններով, որոնք հատկապես դրսևորվում էին Չեչենական առաջին պատերազմի ընթացքում, երբ Թուրքիան աջակցություն էր ցուցաբերում չեչեն գրոհայիններին: 1994թ. Ռուսաստանը Թուրքիայի դեմ սկսեց կիրառել քրդական խաղաթուղթը՝ աջակցելով ՔԱԿ-ին: Նման հարաբերությունները պահպանվեցին մինչև 1999թ., երբ Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթը Ռուսաստանի հետ համաձայնության եկավ, որ կողմերը չեն օգնի միմյանց դեմ կռվող անջատողական ուժերին: Կողմերը պայմանավորվեցին Կենտրոնական Ասիայում ու Կովկասում հարաբերությունները կառուցել համագործակցության, այլ ոչ թե կոշտ մրցակցության հիման վրա: Սակայն աշխարհաքաղաքական մրցակցությունը կողմերի միջև պահպանվեց:

1990-ական թթ. սկզբներին Թուրգութ Օզալը ձեռնամուխ եղավ «Ադրիատիկից մինչև Չինական պատ» թյուրքական ժողովուրդների հետ կապեր հաստատելուն և թյուրքական աշխարհում առաջնորդի դեր կատարելուն: Նոր դերակատարության պահանջները, ինչ խոսք, զգալի գերազանցում էին Թուրքիայի տնտեսական, քաղաքական, առավել ևս՝ ֆինանսական կարողությունները: Սակայն Հարավային Կովկասի և Միջին Ասիայի թյուրքալեզու հանրապետությունների հետ սերտաճելու հեռանկարը ոգևորել էր նրան: Այդ պատճառով պաշտոնական Անկարան նոր դերը համարեց «բացառիկ առիթ» և ի լուր աշխարհի հայտարարեց, որ XXI դարը լինելու է «թյուրքական աշխարհի դար»: Թուրքական խոշոր

ընկերությունները, ինչպես և մանր ու միջին ձեռնարկությունները, իրենց մասնաճյուղերը բացեցին Կենտրոնական Ասիայի պետություններում: Նման ձեռնարկությունները հիմնականում զբաղվում էին թեթև ու մշակող արդյունաբերությամբ՝ օգտագործելով տեղական հումքը: Թուրքիայի նախաձեռնությամբ և առաջնորդությամբ 1992թ. Կենտրոնական Ասիայի թյուրքական պետությունների, նաև Ադրբեջանի միջև սկսեցին կազմակերպվել թյուրքախոս երկրների գագաթաժողովներ: 1990-ական թթ. երկրորդ կեսից, սակայն, Թուրքիայի քաղաքական ակտիվությունը տարածաշրջանում սկսեց թուլանալ, ինչը նաև պայմանավորված էր Թուրքիայում տնտեսական ճգնաժամի հետ: Իր դերը կատարեց նաև այն հանգամանքը, որ խորհրդային տիրապետությունը թոթափած պետությունները շահագրգիռ չէին նոր «մեծ եղբայր» ունենալ: Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում այդ ժամանակահատվածում թուրք փորձագետները գնահատեցին ոչ բանական, հոգեբանորեն, տեսականորեն ու կազմակերպչական առումով անպատրաստ, քանզի այն հիմնվում էր տարածաշրջանի իրողությունների վերաբերյալ թյուր ընկալումների վրա:

1991 թվականից հետո Հարավային Կովկասը դարձավ Թուրքիայի ազդեցության տարածման ևս մեկ գոտի: Թուրքիայի այդ քայլերը աջակցություն էին ստանում Արևմուտքից, որը նպատակ ուներ հակազդելու Ռուսաստանի և Իրանի ազդեցությանը: Թուրքիան, որտեղ նեոպանթյուրքիստական տրամադրությունների զգալի աճ արձանագրվեց, անմիջապես սկսեց մի շարք ուղղություններով (քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական) ներթափանցել տարածաշրջանային իրադարձությունների մեջ: Թուրքիան Ադրբեջանի միջոցով Միջին Ասիա ներթափանցելու խնդիր ուներ՝ թյուրքալեզու հանրապետությունների «տնտեսական, քաղաքական և մշակութային միություն» ձևավորելու հեռահար նպատակով: Ուստի, Հայաստանը խոչընդոտ համարվեց նրա երկարաժամկետ շահերի ճանապարհին: Թերևս, այդ առումով պատահական չէր վարչապետ Սուլեյման Դեմիրելի «անիծյալ սեպ» արտահայտությունը, որը նա 1992թ. Թեհրանում հասցեագրեց Հայաստանին:

Պանթյուրքիզմի տեսակետից առանձնահատուկ նշանակություն ուներ Նախիջևանը: Այդ տարածքը, ըստ էության, կապող օղակ է Թուրքիայի և Ադրբեջանի, Թուրքիայի և ողջ «Թուրանի» միջև: Ժամանակին Հեյդար Ալիևը Նախիջևանը որակել էր դեպի թուրք-իսլամական աշխարհ բացվող դուռ: Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում (ՆԻՀ) սեփական ազդեցությունը մեծացնելու Թուրքիայի առաջին գործուն քայլը հանդիսացավ 1992թ. մայիսին Արաքս գետի վրա կառուցված Հասրեթ (թարգմանաբար՝ կարոտ) կամուրջը, որն ադրբեջանցիներն անվանում են նաև «Հույսի կամուրջ»: Կամրջի բացման արարողության ժամանակ Թուրքիայի վարչապետ Դեմիրելը հայտարարեց. «Այս կամրջի բացմամբ վերջ տրվեց 70-ամյա կարոտին: Թուրքիան և Նախիջևանը «գրկախառնվեցին» միմյանց»:

Ղարաբաղի պատերազմի ընթացքում Թուրքիան 5-6 հազար զինվորական ու զգալի զինամթերք առաքեց Ադրբեջան՝ Հայաստանի ու Արցախի դեմ պայքարելու: Ադրբեջանում լայն գործունեություն ծավալեցին թուրք ազգայնականները: Ադրբեջանի հետ հարաբերություններում առաջին խարսխող գործարքը կարելի է համարել «Դարի պայմանագիրը», որ Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը 1994թ. սեպտեմբերին կնքեց Արևմտյան ընկերությունների կոնսորցիումի հետ և որը նախատեսում էր ադրբեջանական նավթի արդյունահանում: Թուրքական պետական նավթային ընկերությունը (TPAO) նախապես ստացավ եկամտի 1,75%-ը, որը Թուրքիայի վարչպետ Թանսու Չիլերի այցից հետո հասցվեց 6,75%-ի: Իսկ 1999թ. Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի և Ղազախստանի նախագահները կատարեցին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի հիմնարկեքը, որը, փաստորեն, վերոնշյալ պայմանագրի կարևորագույն փուլն էր: Երկկողմ հարաբերություններում, տնտեսական նախագծերից բացի, ստորագրվեցին նաև ռազմաքաղաքական բնույթի պայմանագրեր:

Վրաց-աբխազական հակամարտության ընթացքում Թուրքիան, ունենալով 500-700 հազարի հասնող աբխազական և մոտ 2 միլիոնանոց հյուսիսկովկասյան սփյուռք, գտնվում էր ներքին ճնշումների տակ: Աբխազական սփյուռքը ևս ներգրավվեց Վրաստանի դեմ գործողություններում, սակայն Թուրքիան պաշտոնապես իր աջակցությունն

էր հայտնում Վրաստանի տարածքային ամբողջականությանը: Թուրքիայի հարաբերությունները Վրաստանի հետ ավելի ջերմացան 1993-1994թթ. սկսած, երբ պաշտոնական Անկարան սկսեց գիտակցել այդ պետության կարևորությունն էներգակիրների տարանցման հարցում: 1994թ. Թուրքիան ու Վրաստանը նախագահների մակարդակով ստորագրեցին Համագործակցության հռչակագիր՝ պարտավորվելով աջակցել միմյանց անկախությանը, կայունությանը, ժողովրդավարությանը:

Թուրքիան 1991թ. դեկտեմբերի 24-ին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, սակայն հրաժարվեց հաստատել դիվանագիտական հարաբերություններ՝ նպատակ ունենալով ճնշում գործադրել նորանկախ Հայաստանի վրա և նրանից զիջումներ կորզել: Հետագայում Անկարան առաջ քաշեց մի շարք նախապայմաններ.

- որ Հայաստանը դադարեցնի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը,
- որ Հայաստանը գնա միակողմանի զիջումների Արցախի հարցում,
- որ Հայաստանը ճանաչի ժամանակակից Թուրքիայի սահմանները, այսինքն՝ ճանաչի Կարսի 1921թ. հոկտեմբերի 13-ին ստորագրված պայմանագիրը, որով գծվել են այսօրվա հայ-թուրքական սահմանները:

1992թ. հունիսի 25-ին կազմավորվեց Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը, որին անդամակցելու համար Հայաստանը նույնպես իրավեր էր ստացել: Ստամբուլում այդ կառույցի հիմնադրման արարողության ընթացքում ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն առաջին անգամ հանդիպեց Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելին: Կողմերի միջև երկխոսությունը դրական ընթացք չունեցավ Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ թուրքական կողմի նախապայմանների պատճառով:

Շուշիի հաղթանակը և Լաչինի միջանցքի ապահովումը լուրջ մտավախություն պատճառեցին Անկարային: Թուրքիան, ելնելով Ղարաբաղի փորձից, անհանգստացած էր, որ հայերը հեշտությամբ կգրավեն նաև Նախիջևանը: Անհանգստությունը տագնապի վերաճեց 1992թ. մայիսի 18-ին, երբ ռազմական աջակցության խնդրանքով միասնաբար Թուրքիային ահազանգեցին Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Իսա Ղամբարն ու Նախիջևանի Ինքնավար Հանրապետության նախագահ Հեյդար Ալիևը: Ահազանգին նույն օրն արձագանքեց ցամաքային ուժերի զորահրամանատար, գեներալ Մուհիթին Ֆյուսունջոլուն՝ հայտարարելով, որ թուրքական բանակը պատրաստ է դիմել հնարավոր ռազմական գործողությունների: Դրան զուգընթաց՝ Անկարայի պաշտոնական շրջանակները սկսեցին քննարկել Հայաստանի նկատմամբ «կիպրոսյան տարբերակի» կիրառման հարցը: Դա ենթադրում էր հանկարծակի հարձակում և երկրի արագ գրավում: Այդ ընթացքում համալրվեցին Հայաստանի սահմանին տեղակայված և մարտական պատրաստականության բերված թուրքական զորքերը: Հայաստանը կանգնեց Թուրքիայի ռազմական ներխուժման լուրջ վտանգի առջև:

Հաշվի առնելով թուրքական ագրեսիայի հնարավոր հետևանքները ոչ միայն Հայաստանի, այլև ողջ Հարավային Կովկասի համար՝ Ռուսաստանը ճնշում գործադրեց Թուրքիայի վրա: 1992թ. մայիսի 15-ին Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) զինված ուժերի գլխավոր հրամանատար, մարշալ Եվգենի Շապոշնիկովը հայտարարությամբ զգուշացրեց Թուրքիային, որ ռազմական գործողություններին մեկ այլ երկրի մասնակցությունը կհանգեցնի համաշխարհային 3-րդ պատերազմի: Ակնարկը ԱՊՀ - ՆԱՏՕ բախման մասին էր:

Այս հայտարարությունը զսպող ներգործություն ունեցավ: Շնորհիվ դրա Հայաստանը խուսափեց թուրքական հնարավոր ագրեսիայից: Մայիսի 21-ին վարչապետ Դեմիրելը ստիպված հայտարարեց, որ ռազմական միջամտության մասին խոսք լինել չի կարող: Մինչդեռ ընդդիմությունը, հանձին Ժողովրդավարական ձախ կուսակցության նախագահ Բյուլենթ Էջևիթի, շուտափույթ ռազմական միջամտություն էր պահանջում՝ պատճառաբանելով, թե Նախիջևանը գրավելու դեպքում Հայաստանը հողային պահանջ կներկայացնի Թուրքիային, իսկ նախագահ Օզալը մատնանշում էր, որ Թուրքիան պարտավոր է հայերից հետ վերցնել «Ղարաբաղում և Նախիջևանում օկուպացված տարածքները»:

1993թ. ապրիլի 3-ին, երբ հայկական զինված ուժերն ազատագրեցին Քարվաճառը (Քելբաջար), Թուրքիան փակեց Հայաստանի հետ իր սահմանը, արգելեց երկրի տարածքով ամեն տեսակի բեռնափոխադրումները Հայաստան, մարդասիրականը ներառյալ՝ պատճառաբա-

նելով, թե «դրանք նպաստում են հայերի ռազմական ջանքերին ընդդեմ Ադրբեջանի»: Հայկական ինքնաթիռների առջև փակվեց նաև H-50 օդային միջանցքը: Թուրքիան լիակատար շրջափակման ենթարկեց Հայաստանը:

Այսպիսով՝ Հայաստանին ուղղված երեք նախապայմանները, որոնց կատարումով էր Թուրքիան պայմանավորում դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և հայ-թուրքական սահմանի բացումը, պաշտոնական Անկարայի բացահայտ ճնշման կամ «հարկադրման քաղաքականության» արտահայտությունն էին: Հետագայում Թուրքիան ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու մի քանի փորձ կատարեց, սակայն դա կապելով Ղարաբաղի խնդրի լուծման հետ: 1995թ. Նյու Յորքում ՄԱԿ շրջանակներում Լևոն Տեր-Պետրոսյանը կրկին հանդիպեց Դեմիրելին, սակայն, Հայաստանի արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի բնորոշմամբ, «Այդ երկու հանդիպումները ոչնչով չէին տարբերվում: Չէին փոխվել ոչ Դեմիրելի մտածելակերպը[29], ոճն ու մոտեցումները, ոչ էլ հայկական կողմի պատասխանները»:

Պաշտոնական Անկարան հայկական զինված ուժերի հաջողությունները Ղարաբաղի պատերազմում համարում է հետսառըպատերազմյան փուլում Թուրքիայի մեծագույն կորուստը: Թուրքիայի քաղաքական վերնախավում, սկսած 1993-ից, այն մտավախությունը կա, որ ՀՀ-ն, լուծելով ԼՂ հարցը, հանդես կգա Նախիջևանի, ապա և Կարսի, Իգդիրի, Արդահանի նկատմամբ պահանջատիրությամբ: Ձգտելով կանխել նման զարգացումը՝ Թուրքիան որդեգրել է Հայաստանին առաջին փուլում՝ ԼՂ-ում կասեցնելու քաղաքականությունը: Հետագա տարիների ընթացքում Թուրքիայի և Ադրբեջանի «ղարաբաղյան ռազմավարության» անկյունաքարը դարձավ՝ Հայաստանի շարունակվող տնտեսական շրջափակման միջոցով ստիպել

29 1995թ. սեպտեմբերին Տաջիկստան այցի ժամանակ Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի բանակցությունների օրակարգում է եղել երիտթուրք պարագլուխ և Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկի՝ Էնվեր փաշայի Տաջիկստանում գտնվող գերեզմանը Թուրքիա տեղափոխելու հարցը: Որոշ դժվարություններից հետո 1996թ. օգոստոսի 3-ին ոճրագործի աճյունը տեղափոխվել է Ստամբուլ: Օգոստոսի 4-ին, որն Էնվերի սպանության օրն էր, պետական և կրոնական համապատասխան արարողակարգերից հետո Թուրքիայի պետական դրոշով պատված աճյունը վերահուղարկավորվել է Ստամբուլի Շիշլի թաղամասում գտնվող «Ազատության հուշարձանի» մերձակա պանթեոնում՝ Թալեաթ փաշայի գերեզմանի հարևանությամբ: Հուղարկավորությանը մասնակցել է պետական ողջ վերնախավը՝ նախագահ Սուլեյման Դեմիրելի գլխավորությամբ:

Երևանին և Ստեփանակերտին գնալ միակողմանի զիջումների և այդ ճանապարհով հասնել հաջողության ղարաբաղյան կոնֆլիկտում:

Հայաստանի շրջափակմանը զուգընթաց՝ Դեմիրելի կառավարությունը հակահայկական հիստերիա հրահրեց երկրում և հայերի առաջխաղացումը կասեցնելու համար որոշեց, «առանց պատերազմական գործողություններին մասնակցելու, ռազմական օգնություն ցույց տալ» Ադրբեջանին: Միաժամանակ, նա սկսեց Հայաստանին մեղադրել Քուրդիստանի աշխատավորական կուսակցության զինյալներին հովանավորելու, նրանց իր տարածքում հենակետ տրամադրելու մեջ:

Համատարած հակահայկական հիստերիայի պայմաններում աննախադեպ ակտիվացավ «Ազերի թուրքերի հետ համերաշխություն» միության գործունեությունը: «Գորշ գայլերի» առաջնորդ Թյուրքեշի «Ազգայնական շարժում» կուսակցությանը հարող այս միությունը «Ազերի եղբայրներին օգնության ձեռք մեկնելու» կարգախոսով զենքի կոչեց «զգոն թուրքերին»: Կոչին առաջինն արձագանքեցին «գորշ գայլերի» նախկին գրոհայինները: Նրանց գլխավորությամբ սկսվեց զինծառայությունը հատուկ նշանակության զորամասերում անցկացրած ազգայնամոլ տարրերի հավաքագրումը, առավելապես Հայաստանին սահմանակից Կարս և Իգդիր նահանգներում: Շուտով «զգոն թուրքերի» շարքերը սկսեցին համալրել Թյուրքեշի կուսակցությանը համակիր սպաները:

Կամավորների հավաքագրման աշխատանքները համակարգում էին թուրքական հատուկ ծառայությունները, որոնց օգնությամբ կամավորականներն անարգել Թուրքիայի սահմանն անցնում և Նախիջևանից ինքնաթիռով տեղափոխվում էին Ադրբեջան, մասնավորապես Կիրովաբաղ, որտեղից էլ մեկնում Ղարաբաղ՝ հակամարտության գոտի: Զինելով Ադրբեջանին՝ Թուրքիան «զգոն թուրքերի» միջոցով իր անուղղակի մասնակցությունը բերեց Լեռնային Ղարաբաղում ծավալվող ռազմական գործողություններին:

Մինչև 1992թ. հունիսը Նախիջևանի և Ադրբեջանի տարածքում տեղակայված էր շուրջ 3 հազար թուրք կամավորական: Ինչ վերաբերում է թուրքական կառավարությանը, ապա այն, դեղորայքի և պարենամթերքի քողի տակ, ադրբեջանցիներին զենք ու զինամթերք էր մատակարարում,

այդ թվում՝ 5 հազար «Սթինգեր» տեսակի հրթիռ, հրթիռային կայանք, ականներ և ականանետեր:

1993թ. հունիսին Ադրբեջանն ականատես եղավ հերթական իշխանափոխության: Երկրի նախագահի պաշտոնում Աբուլֆազ Էլչիբեյին փոխարինեց Հեյդար Ալիևը: Փոխվեցին նաև թուրքական օգնության բնույթն ու տրամադրման սկզբունքը: Թուրքական կառավարությունը դադարեցրեց «ազերի եղբայրներին» նվիրատվության կարգով սպառազինությունների տրամադրումը, փոխարենը որոշեց զենք գնելու համար վարկեր տրամադրել՝ 30 մլն դոլար ընհանուր ծավալով: Սակայն վարկերից օգտվելու համար Անկարան ադրբեջանական իշխանություններից պահանջում էր բացառել թուրքական ռազմական օգնության փոշիացումը և ապահովել թուրք զինվորական հրահանգիչների գործուն մասնակցությունն Ադրբեջանում ազգային բանակի կազմավորման աշխատանքներին: Ադրբեջանական իշխանություններն ընդունեցին Թուրքիայի պահանջները և վերսկսվեց թուրքական ռազմական օգնության ներհոսքն Ադրբեջան:

Հայաստան-Թուրքիա «մերձեցման» հարցը վաղուց էր դուրս եկել երկու երկրների հարաբերությունների շրջանակից ու ներքաշվել էր Հարավային Կովկասում քաղաքական ազդեցության համար Ռուսաստանի Դաշնության և Արևմուտքի միջև ծավալվող մրցապայքարի ոլորտ: Այդ առումով պատահական չէր վարչապետ Սուլեյման Դեմիրելի՝ դեռևս 1993-ի հունվարին արած հայտարարությունը. «Հայաստանն ինքնին մեծ խնդիր չէ, բայց մեծ քաղաքականության խնդիր է: Պարտավոր ենք Հայաստանի հետ գտնվել այնպիսի հեռավորության վրա, որ չսպառվեն երկխոսության հնարավորությունները»: Թուրքիան, համառորեն հրաժարվելով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումից, Հայաստանի նկատմամբ իր քաղաքականության հիմքում դրեց «երկկողմ շփումները դիվանագիտական հարաբերությունների բացակայությամբ շարունակելու» սկզբունքը:

Նշված ժամանակաշրջանում թուրքական դիվանագիտությանը չհաջողվեց հասնել իր նպատակներին: Նրա քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում նույնպես չհասավ իր նպատակին, իսկ Կովկասում արձանագրվեցին միայն սահմանափակ ձեռքբերումներ:

Գրականություն լրացուցիչ ընթերցանության համար

1. Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ., Երևան, 2009:
2. Մինասյան Ն., Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում (1991-2007թթ.), Երևան, 2013:
3. Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001թթ.), Երևան, 2008:
4. Кондакчян Р., Турция: Внутренная политика и ислам, Ереван, 1983.
5. Birand M. A., Shirts of Steel: An Anatomy of the Turkish Armed Forces, London, 1991.
6. Feroz A., The Making of ModernTurkey, NewYork, 1993.
7. Zurcher E., Turkey: A Modern History, NewYork, 1997.

ԳԼՈՒԽ Է

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ. «ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ (1996-2011ԹԹ.)

1. «Բարօրություն» կուսակցության քաղաքական վերելքը

1995 թվականը Չիլերի կառավարության համար սկսվեց տնտեսական բնույթի մարտահրավերներով. 1994թ. գնաճը կազմել էր 149,6 տոկոս, իսկ ՀՆԱ-ն նվազել 6 տոկոսով: Տնտեսական լուրջ խնդիրներին ավելացան ներքաղաքական խմորումները և քրդական շարժման դեմ իշխանությունների նոր թափ ստացած պայքարը: 1994-1995թթ. ամբողջ ընթացքում ՀՈւ ղեկավար կազմն ուղղակի և անուղղակի խողովակներով պարբերաբար ակնարկում էր հերթական ռազմական միջամտության հավանականության մասին: 1995թ. ապրիլին նախկին նախագահ Ք. Էվրենը, հանդես գալով ակտիվ զինծառայությունն ավարտած սպաների անունից, նշեց. «Եթե համակարգը չկազդուրվի, ապա ՀՈւ-ն մտադիր չէ մնալ հանդիսատեսի կարգավիճակում»: 1995թ. հուլիսի 23-ին խորհրդարանը կողմ քվեարկեց սահմանադրությունում փոփոխությունների և լրացումների օգտին: Այդ փոփոխություններից հատկապես ուշագրավ էին խորհրդարանում պատգամավորների թվաքանակի ավելացումը 100-ով՝ հասցնելով 550-ի և ընտրական իրավունքի շնորհումը 18 տարին լրացած քաղաքացիներին: 1995թ. սեպտեմբերին Չիլերի և Դենիզ Բայքալի կոալիցիոն կառավարությունը դադարեց գոյություն ունենալ, որի պատճառով Չիլերի գլխավորությամբ ստեղծված «բլից-կառավարությանը» հաջողված միակ հիշարժան քայլն արտահերթ խորհրդարանական ընտրությունների օրը հայտարարելն էր:

1995թ. դեկտեմբերի 24-ին նախատեսված արտահերթ խորհրդարանական ընտրությունները մի շարք առումներով տարբերվելու էին նախորդներից: Ընտրությունների նախօրեին Եվրախորհրդարանի կայացրած որոշման համաձայն՝ 1996թ. հունվարի 1-ից Թուրքիան դառնալու էր Եվրոպական մաքսային միության անդամ: Թվում էր, այդ քայլը պետք է զգալիորեն օգներ Չիլերին և աջ կենտրոնի մյուս կուսակցություններին ստանալու առավել շատ քվեներ, քան նախկինում, սակայն իշխանություններին չհաջողվեց այդ խաղաթուղթը խելամիտ օգտագործել: Փոխարենը թե՛ Չիլերի, թե՛ Յըլմազի ամբողջ նախընտրական քարոզչությունը հիմնված էր քաղաքական իսլամի աճող ազդեցության դեմ պայքարի վրա: ՀԺԿ-ն ևս խստորեն բարձրաձայնում էր իր անհամաձայնությունը քաղաքական իսլամի աճող ազդեցության կապակցությամբ: Բայքալի հռետորաբանության մեջ ընդգծվեցին աշխարհիկ կարգերին անվերապահ աջակցելու և քեմալականության հիմնադրույթներն ու Աթաթյուրքի ժառանգությունը պահպանելու դրույթները:

1995թ. դեկտեմբերի 24-ի ընտրություններին մասնակցեց 14 կուսակցություն, որոնցից միայն հինգին հաջողվեց հաղթահարել 10 տոկոսանոց ընտրաշեմը: ԲԿ-ն ընտրություններում առաջինն էր՝ ստանալով քվեների 21,4 տոկոսը, «Մայր հայրենիքը» ստացավ 19,7%, ՃՈւԿ-ը՝ 19,2%, ԺՁԿ-ն՝ 14,6%, ՀԺԿ-ն՝ 10,7%: Արդյունքները միանգամայն անսպասելի էին աշխարհիկ կարգերի և քեմալիզմի գաղափարախոսության ջատագովների համար: ԲԿ-ն թատերաբեմ բերեց քաղաքական պայքարի նոր մարտավարություն: Նրա հաղթանակի գաղտնիքը հեռատես դիրքորոշումն էր քրդական հարցում. երկրի քրդաբնակ նահանգների մեծ մասում ԲԿ-ն հաղթեց (ԲԿ պատգամավորներից 36-ը քրդեր էին):

ԲԿ քվեները, սակայն, բավարար չէին միակուսակցական կառավարություն ձևավորելու համար, հետևաբար, կոալիցիոն կառավարության ձևավորումը դարձավ անխուսափելի: Հանդիպելով Դեմիրելին՝ Էրբաքանը հավաստիացրեց նոր կառավարություն կազմելու իր պատրաստակամության մասին: 1996թ. փետրվարի 28-ին Յըլմազ-Չիլեր հանդիպումը

պսակվեց հաջողությամբ, և Յըլմազի կոալիցիոն կառավարությունը մարտի 12-ին վստահության քվե ստացավ ԹԱՄԺ-ում:

Թեև Յըլմազի և Չիլերի կուսակցությունները համարվում էին «նույն ծառի ճյուղերը», հակասությունների վրա հիմնված նրանց կառավարությունն անկարող էր երկարատև կյանք ունենալ մի քանի պատճառներով. նախ՝ այս երկու քաղաքական գործիչները երդվյալ հակառակորդներ էին, որի վկայությունն էր այն անմիջական մեղադրանքների շարքը, որոնք հնչում էին միմյանց նկատմամբ՝ մեղադրելով կաշառակերության, պետական միջոցների մսխման, հարկերի չվճարման համար: Յըլմազը Չիլերին անվանում էր «Թուրքիայի ամենաահավոր վարչապետը», իսկ Չիլերը նրան պարզապես կոչում էր «քաղաքական աղետ»: Հունիսի 7-ին Յըլմազը հրաժարականի դիմում ներկայացրեց:

Նման պայմաններում Դեմիրելն այլընտրանք չուներ և կրկին դիմեց Էրբաքանին կառավարություն կազմելու հանձնարարականով: Ի վերջո, Էրբաքան-Չիլեր հանդիպումն ավարտվեց հաջողությամբ, և հուլիսի 8-ին Էրբաքանի կառավարությունն ստացավ վստահության քվե: Այս դաշինքի ձևավորումն ամենևին էլ պատահական չէր և ամբողջությամբ տեղավորվում էր 1980-ական թթ. սկիզբ առած «թյուրք-իսլամական համադրության» ծրագրի տրամաբանության մեջ:

Նոր կառավարությունում ԲԿ-ն ստանձնեց ֆինանսների, աշխատանքի և սոցիալական ապահովության, արդարադատության, մշակույթի, էներգետիկայի, գյուղատնտեսության և մի շարք այլ նախարարությունների ղեկավարությունը, իսկ ՃՈՒԿ-ը՝ ՀՈՒ ակնհայտ թելադրանքով, արտաքին գործերի, ներքին գործերի, պաշտպանության, կրթության ու տրանսպորտի նախարարությունների ղեկավարումը, ընդ որում՝ ՃՈՒԿ ենթակայության տակ էր նաև ԿԳՆ-ն: Չիլերը նշանակվեց փոխվարչապետ և արտաքին գործերի նախարար:

Թեև ՀՈՒ-ն դժկամությամբ համաձայնեց ԲԿ-ի՝ կառավարության ղեկը ստանձնելու գաղափարին, սակայն ընդհանուր համապատկերում ակնհայտ էր ՀՈՒ հանգստությունը: Թվում էր՝ Չիլերի կուսակցության ձեռքում եղած լծակները նրան հնարավորություն կտային հակակշռելու ԲԿ իսլամամետ ծրագրերի իրագործմանը: Սակայն ԲԿ-ն, որին վերկուսակցական ուժերը դիտում էին որպես միջոց, հետզհետե վերածվեց քաղաքական գործոնի:

Էրբաքանը 50 տոկոսով բարձրացրեց պետական ծառայողների աշխատավարձը, որը դժգոհության մեծ ալիք բարձրացրեց ընդդիմադիր դաշտում: Էրբաքանն այս որոշումից հետո նշեց, որ իր կառավարությունը դեռ շատ գործերով կապացուցի իր նվիրվածությունը հասարակության լայն զանգվածներին, և որ նա չի պատրաստվում դրժել իր նախընտրական կարգախոսներից մեկը՝ «տալ և ոչ թե վերցնել»:

Նոր կառավարության տնտեսական ծրագիրը նախատեսում էր հաջորդ չորս տարիների ընթացքում բյուջետային ծախսերի կրճատման հաշվին ապահովել 10 տոկոսանոց տնտեսական աճ: Սակայն տնտեսության առողջացման ԲԿ փաթեթները պարունակում էին անիրական նպատակներ, քանզի պետբյուջեի կարողություններն անհամեմատ սուղ էին: Սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման Էրբաքանի խոստումները, որոնք թուրքական մամուլը բնութագրեց որպես «հեքիաթներ մեծահասակների համար», խստագույնս քննադատվեցին ոչ միայն ազդեցիկ առևտրական տների՝ Քոչի և Սաբանջըի, այլև տնտեսվարող այլ սուբյեկտների կողմից:

Թեև Էրբաքան-Չիլեր կառավարության տարիներին տնտեսության մեջ կտրուկ առաջընթաց չնկատվեց, այնուհանդերձ, 1994թ. տնտեսական ճգնաժամի ու ֆինանսական ցնցումների համապատկերում այս կառավարությանը հաջողվեց որոշակի կայունություն ապահովել և անգամ տնտեսական աճ արձանագրել: Այսպես, եթե Էրբաքանի կառավարության գործունեությանը նախորդող 2 տարիների ընթացքում մեկ անձի առումով ՀՆԱ-ն միջին հաշվով կազմել է 2472 ԱՄՆ դոլար, ապա 1996-1997թթ. այն կազմել է 3004 դոլար:

Մի շարք խնդիրների նման՝ քրդական հարցում ևս ԲԿ հետընտրական քայլերը զգալիորեն տարբերվում էին նախընտրական տրամադրություններից: Էրբաքանը, փորձելով շարունակել պետական ավանդույթը, քրդական շարժումը պիտակեց որպես ահաբեկչություն: Թեև Էրբաքանը փորձեց միջնորդավորված բանակցություններ սկսել ՔԱԿ առաջնորդների հետ, այնուհանդերձ, անվտանգության մարմինների, ԱԱԽ

աչալուրջ հսկողության պայմաններում դրանք արդյունավետ չէին կարող լինել:

1996թ. նոյեմբերի 3-ին Բալըքեսիրի նահանգի Սուսուրլուք քաղաքի մոտ տեղի ունեցած ավտովթարի հետևանքով «Մերսեդես» մակնիշի մեքենայում հայտնաբերվել էին Ինտերպոլի կողմից որոնման մեջ գտնվող քրեական հանցագործ, Չիլերին մոտ կանգնած բարձրաստիճան մի պաշտոնյա, մեկ բարձրաստիճան գեներալ և նախկին միսս Թուրքիան: Սուսուրլուքի աղմկահարույց դեպքի պատճառով երկրի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում ներքին գործերի նախարար Մեհմեթ Աղարը, մեղադրվեցին թմրաբիզնեսի, զենքի անօրինական վաճառքի և Ինտերպոլի կողմից հետախուզման մեջ գտնվող անձանց հետ համագործակցելու համար: Հետագայում պարզվեց, որ սա թուրքական «Խորքային պետության» (Derin devlet) հերթական նախաձեռնություններից էր: Նոյեմբերին սկսված Սուսուրլուքի աղմկահարույց գործընթացի հետևանքով Էրբաքանին գործունեության ավելի լայն հնարավորություն տրվեց, իսկ նոյեմբերին տեղի ունեցած ՏԻՄ մասնակի ընտրություններում ԲԿ-ն ստացավ 30,4 տոկոս վստահության քվե:

Երկրում գործում էր ԲԿ-ի կողմից թե՛ անուղղակիորեն, թե՛ ուղղակիորեն ֆինանսավորվող քարոզչական հսկայական ցանց՝ մոտ 50 հրատարակչական տուն, 45 ռադիոկայան, հարյուրավոր տեսագրման և ձայնագրման ստուդիաներ: ԲԿ-ին էին պատկանում 12 հեռուստաալիք (դրանցից էին՝ «Kanal 7», «TGRT», «STV», «2000 Doğru») և 20 ռադիոհաճախականություն, զանազան պարբերականներ («Milli Gazete», «Cuma», «Yorunge», «Yeni Şafak», «Akit»):

Զանտեսվեց նաև կրթության ոլորտը. ԲԿ հատուկ պայմանավորվածության շնորհիվ Կահիրեի հեղինակավոր Ալ-Ազհար համալսարանը տարեկան 1000 ուսանող պետք է ընդուներ Թուրքիայից: Մեծ հեղինակություն էր վայելում «Գիտության տարածման միությունը», որի դրամական միջոցները միլիոնավոր դոլարների էին հասնում: Այս միությունը հոգում էր նաև իսլամական կրթօջախներում սովորող աշակերտների և ուսանողների հանրակացարանային ծախսերը: Երկրում ընդլայնվեցին «Իսլամի ուսումնասիրության կենտրոնները», անգամ աշխատանքներ սկսվեցին իսլամական հանրագիտարանների թուրքական նոր տարբերակների ստեղծման

ուղղությամբ: Տարածվեցին նաև կրոնական գրականության հրատարակչական տները՝ «Դար ուլ-Հիքմեթ», «Դար ուլ-Ինսան», «Դար Բահար», որոնց գործունեությունը հիմնականում ուղղված էր Օսմանյան կայսրության անցյալը փառաբանող գրքերի, արաբերենի դասագրքերի հրատարակմանը:

Այսպիսով, օգտագործելով հակաարևմտյան, հակահրեական, հակակապիտալիստական կարգախոսներ, որոնք համեմված էին սոցիալական հավասարության, «արդար տնտեսական կարգի» ու հարաբերությունների հիմնադրման խոստումներով, ԲԿ-ին հաջողվեց վայելել մեծ թվով քաղաքացիների վստահությունը: ԲԿ գործունեությունը նաև ցույց տվեց, որ իսլամական սկզբունքների ու խորհրդանիշների հիման վրա քաղաքական առավել արդյունավետ պայքարի ծավալման համար Թուրքիայում առկա էին նպաստավոր պայմաններ:

2. 1997թ. փետրվարի 28-ի ռազմական միջամտությունը

Թուրքիայի բարձրագույն սպայակույտը շարունակում էր աչալրջորեն հսկել երկրում տեղի ունեցող զարգացումները՝ ձգտելով դրանք պահել կանխատեսելիության սահմաններում: Բանակ-ԲԿ հակասությունների նոր փուլը սկսվեց 1997թ. հունվարին, երբ ՀՈ-ն խստորեն դատապարտեց Ռամադանի կապակցությամբ կառավարության նիստերի դահլիճում Էրբաքանի կազմակերպած ընդունելությունը, որին հրավիրված էին հայտնի իսլամական շարժումների ու միաբանությունների ղեկավար անդամներ: Հունվարի 22-24-ը Մարմարայի Գոյչյուք ծովային ռազմակայանում գլխավոր շտաբը հանդիպում նախաձեռնեց, որի ընթացքում ընդունվեց գաղտնի համաձայնագիր «աշխարհիկ համակարգի քայքայման ու արմատականության դեմ վճռական պայքար ծավալելու մասին»: Հունվարի 31-ից փետրվարի 2-ը Անկարայից 25 կմ հեռավորության վրա գտնվող Սինջան քաղաքում կազմակերպված «Երուսաղեմի օր» երթի ժամանակ Իրանի դեսպան Մուհամեդ Ռեզա Բաքերիի հակաամերիկյան և

հակահրեական ելույթից հետո զինվորականները քաղաք մտցրին տանկեր, ելույթը համարվեց հակաշխարհիկ և անհանդուրժելի, որի պատճառով Սինջանի քաղաքապետը ձերբակալվեց, իսկ Իրանի դեսպանին պարտադրեցին լքել երկիրը:

Լարված ներքաղաքական իրավիճակում 1997թ. փետրվարի 28-ին թուրքական ԶԼՄ-ը տարածեցին ԱԱԽ արտահերթ նիստի մասին լուրը: Շուտով հայտնի դարձավ, որ ԶՈՒ ղեկավարությունն Էրբաքանին 18 կետից բաղկացած անհապաղ քայլերի վերջնագիր էր ներկայացրել և նրանից պահանջել անմիջապես ձեռնամուխ լինել դրանց իրականացմանը: Էրբաքանը միառժամանակ մերժեց այս պահանջների իրականացումը՝ փաստելով, որ ԱԱԽ-ն խորհրդատվական մարմին է, ուստի 18 կետերի իրականացման նպատակահարմարության հարցը պատկանում է կառավարությանը և խորհրդարանին, սակայն ճնշման սաստկացման պատճառով շուտով տեղի տվեց:

Այսպիսով՝ 1960թ. հետո ԶՈՒ-ն չորրորդ անգամ ներխուժեց քաղաքական թատերաբեմ՝ այս անգամ կրկին հանդես գալով քեմալիզմի և աշխարհիկ կարգերի պաշտպանության դիրքերից: ԶՈՒ ակնհայտ ճնշման պայմաններում իշխող կառավարությունը վայր դրեց լիազորությունները, իրավիճակ, որը զուգահեռներ ուներ 1971թ. իրականացված «հուշագրային հեղաշրջման» հետ: «Փետրվարի 28-ը» փաստեց, որ քեմալականները մտադիր չեն զիջել քաղաքական և տնտեսական իշխանությունը «սև թուրքերին» (իմա՝ իսլամականներին) ու քրդերին և ապագա գործընթացներում հանդուրժել վերջիններիս մասնակցությունը:

1997թ. ապրիլի 15-ին ներքին գործերի նախարարը հրահանգեց նահանգային վարչություններին խստորեն պատժել հակաշխարհիկ ցանկացած ելույթ և ձեռնամուխ լինել քեմալիզմի խաթարված դիրքերի վերականգնմանը: ԶՈՒ-ն Էրբաքանից պահանջեց ներկայացնել արդյունքները և դրանք ստուգելուց հետո նշեց, որ կրթության ոլորտում քայլերն անբավարար են, իսկ մյուս ոլորտներում առաջխաղացումը՝ խաբուսիկ: Հունիսի 11-ին ԶՈՒ ղեկավարությունը հայտարարեց նոր՝ «Արևմտյան աշխատանքային խմբի» ստեղծման մասին, որի հիմնական առաքելությունը պետական մարմիններից իսլամամետ տարրերի արտաքսումն էր:

1997թ. հունիսի 20-ին Էրբաքանը հրաժարականի դիմում ներկայացրեց նախագահին: Չիլերի թեկնածության հարցն անգամ չքննարկվեց, քանզի, միանալով Էրբաքանին, նա ԶՈՒ-ի համար ընկալվում էր որպես քեմալիզմին դավաճանած քաղաքական գործիչ: Նախագահ Դեմիրելն ընդունելով հրաժարականի դիմումը՝ անմիջապես դիմեց Յըլմազին էջևիթի և Հուսամեթին Ջինդորուքի («Ժողովրդավարական Թուրքիա» կուսակցություն) հետ համատեղ կոալիցիոն կառավարություն կազմելու առաջարկությամբ: Հուլիսի 12-ին այս կառավարությունը վստահության քվե ստացավ մեջլիսում: Յըլմազի կառավարման տարիներին ԶՈՒ-ի հետ լարված մթնոլորտը պահպանվեց:

1998թ. հունվարին ԶՈՒ ակնհայտ ազդեցության պայմաններում Սահմանադրական դատարանը՝ Ահմեթ Նեջդեթ Սեզերի նախագահությամբ, որոշում ընդունեց ԲԿ գործունեության արգելման վերաբերյալ: ԲԿ գույքը պետականացվեց, ղեկավար կազմի մի քանի անդամներ ազատազրկման ենթարկվեցին, իսկ Էրբաքանին արգելվեց հինգ տարի զբաղվել քաղաքականությամբ:

Յըլմազի ղեկավարած երրորդ կառավարությունը գոյատևեց մինչև 1999թ. հունվար: Հաջորդ վարչապետ դարձավ Բյուլենթ Էջևիթը, որի ղեկավարած փոքրամասնության կառավարության հիմնական նպատակն ապրիլի 18-ին նախատեսվող արտահերթ խորհրդարանական ընտրություններին նախապատրաստվելն էր:

3. «Ազգային տեսակետի» (Milli Görüş) պառակտումը

1998թ. ապրիլի 21-ին Դիարբեքիրի պետական անվտանգության դատարանը Ստամբուլի քաղաքապետ Էրդողանին մեղավոր ճանաչեց կրոնական ատելություն սերմանելու համար և նրան դատապարտեց 10-ամսյա ազատազրկման: Էրդողանը զրկվեց նաև կարևոր պաշտոններ զբաղեցնելու իրավունքից: Գերագույն դատարանը մերժեց Էրդողանի բողոքարկումը: Էրդողանը նոյեմբերին հրաժարական տվեց քաղաքապետի պաշտոնից: Փընարհիսար բանտում նա անցկացրեց չորս ամիս (1999թ.

մարտից հուլիս): Այդ քայլի պատճառը 1997թ. դեկտեմբերին Սիիրթ (Սղերթ) քաղաքում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ Էրդողանի արտասանած հետևյալ մտքերն էին. «Մզկիթները մեր զինանոցներն են, գմբեթները՝ մեր սաղավարտները, մինարեթները մեր սվիններն են և հավատացյալները մեր զինվորներն են» (իրականում Էրդողանը մեջբերում էր Զիյա Գյոքալփին), և «երկրում գոյություն ունեն երկու արմատապես տարբեր ճամբարներ՝ նրանք, ովքեր կուրորեն հետևում են Աթաթյուրքի բարեփոխումներին, և այն մուսուլմանները, ովքեր իսլամը միատեղում են շարիաթի հետ»: Այս ազատազրկումն էլ ավելի բարձրացրեց նրա հեղինակությունը. Էրդողանը բանտում իրեն անգամ հռչակել էր «Թուրքիայի Նելսոն Մանդելա»:

1998թ. քաղաքական դաշտում արդեն գործում էր իսլամամետ «Առաքինություն» կուսակցությունը՝ (Fazilet Partisi - (ԱռԿ), որն «Ազգային տեսակետի» հերթական կուսակցություն էր[30]: Այն ստեղծվել էր 1997թ. դեկտեմբերին Էրբաքանի զինակիցների կողմից, երբ ակնհայտ էր, որ ԲԿ գործունեությունը շուտով արգելվելու է: Նորաստեղծ կուսակցության նախագահը սկզբում Իսմայիլ Ալփթեքին էր, իսկ շատ չանցած նրան փոխարինեց Էրբաքանի մտերիմ համախոհներից մեկը՝ Ռեջայի Քութանը: Թեև Էրբաքանն իրավունք չուներ զբաղվել քաղաքականությամբ, սակայն, նա անուղղակիորեն ներգրավված էր կուսակցության ղեկավարության ընտրության ու ռազմավարության մշակման հարցերում: ԲԿ գրեթե բոլոր պատգամավորներն անդամակցեցին ԱռԿ-ին, որը 140 պատգամավորներով դարձավ մեջլիսի ամենամեծ խմբակցությունը: ԱռԿ-ը ի սկզբանե հայտարարեց, որ Թուրքիայի աշխարհիկ կարգերի հավատարիմ ջատագովներից է, և, ի հաստատումն այդ խոսքերի, կուսակցության ղեկավարությունն այցելեց Աթաթյուրքի դամբարան, ինչը ԲԿ անդամները դժկամությամբ էին կատարում: ԱռԿ-ը հայտարարեց նաև, որ աջակցում է Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցության գործընթացին և ժողովրդավարական

30 1960-ական թթ. կեսերին ստեղծված այս շարժման նպատակն էր քաղաքական գործընթացներում ապահովել իսլամի ներկայացվածությունը: Շարժման երկարամյա ղեկավարն էր Նեջմեթին Էրբաքանը, որը 1970թ. հետո ղեկավարեց մի շարք քաղաքական կուսակցություններ («Ազգային կարգ», «Ազգային փրկություն», «Բարօրություն»):

բարեփոխումներին: Սակայն հետագա զարգացումները ցույց տվեցին, որ ԱռԿ-ը հավատարիմ մնաց «Ազգային տեսակետի» սկզբունքներին:

1999թ. ապրիլի 18-ի խորհրդարանական ընտրություններում ԱռԿ-ը ստացավ քվեների 15 տոկոսը, որը երրորդ ցուցանիշն էր: Ընտրությանը հաջորդող ժամանակահատվածում ԱռԿ-ն ընդգծված զգուշավորություն էր ցուցաբերում աշխարհիկության, կանանց կրոնական գլխաշորերի, «իմամ-հաթիփ» դպրոցների գործունեության և մի շարք այլ հարցերում: Ընդսմին, Քութանի ղեկավարության նկատմամբ կուսակցության շարքերում նկատվում էր դժգոհության աճ: Դեռ 1997թ., երբ քննարկվում էին «Բարօրություն» կուսակցությանը փոխարինող «Առաքինություն» կուսակցության ռազմավարական խնդիրները, կուսակցության մի շարք անդամներ՝ Աբդուլահ Գյուլը, Ջեմիլ Չիչեքը, Ալի Ջոշքունը, Աբդուլքադիր Աքսուն, պահանջում էին դասեր քաղել «Փետրվարի 28-ի գործընթացից» և լինել առավել խոհեմ քեմալականների հետ հարաբերություններում: Այդ նպատակով նրանք առաջարկում էին կուսակցության ղեկավար կազմում ընդգրկել Էրբաքանի գաղափարական ազդեցությունից ազատ երիտասարդ կադրերի, որոնք կլինեին առավել կառուցողական և լավ հարաբերություններ կհաստատեին քեմալականների հետ, սակայն Էրբաքանի կողմնակիցները մեծամասնություն կազմեցին, և հաղթեց Քութանը: ԱռԿ-ում պահպանողականների ու բարեփոխականների միջև (Gelenekçiler-Yenilikçiler) հակամարտությունն առավել ակնհայտ դարձավ 2000թ. մայիսին կայացած կուսակցության համագումարի ժամանակ: Կուսակցության նախագահի ընտրություններում գործող նախագահից բացի, առաջադրվել էր նաև Աբդուլահ Գյուլը: Դեռ համագումարի նախօրեին Գյուլը քննադատել էր կուսակցության ղեկավարությանը և հատկապես այն անուղղակիորեն ղեկավարող Էրբաքանին, կոչ արել առավել կառուցողական դիրքորոշում որդեգրել քաղաքական կարևոր գործընթացների վերաբերյալ ու համաձայնության եզրեր գտնել ՀՈւ ղեկավարության հետ: 2000թ. մայիսի 14-ին կուսակցության ղեկավարի ընտրություններում Քութանը հաղթեց 112 քվեի առավելությամբ (Քութանը ստացավ 633 քվե, իսկ Գյուլը՝ 521): Այսպիսով, համագումարում Գյուլի թեկնածության առաջադրմամբ ձեռնոց նետվեց շուրջ երեք տաս-

նամյակ «Ազգային տեսակետը» միանձնյա ղեկավարող Էրբաքանին և նրա կողմից ուղղորդվող Ռեջայի Քութանին: Գյուլի օգտին տրված քվեների զգալի քանակը վկայեց Էրբաքանի ու Քութանի քաղաքական գծի անհեռանկարայնության և, միևնույն ժամանակ, Գյուլի ու նրա համախոհների աճող հեղինակության մասին: Հետագա ամիսներին Գյուլը և նրա համախոհները սկսեցին ավելի ակնհայտորեն քննադատել կուսակցության քաղաքական ուղին և իրենց կոչել նվիրյալ բարեփոխականներ: Այսպիսով, կուսակցության ներսում հասունացած սերնդափոխության, ինչպես նաև քաղաքականության մեջ իսլամի հետագա ռազմավարության վերաբերյալ կարծիքների տարբերակման պատճառով առավել իրական էր դառնում կուսակցության պառակտման ու չափավոր իսլամամետ քաղաքական կուսակցության հիմնադրման գաղափարը:

Իրականում, «Առաքինություն» կուսակցությունը չպառակտվեց, փոխարենն արժանացավ Էրբաքանի ղեկավարած նախորդ կուսակցությունների ճակատագրին. 2001թ. հունիսին Թուրքիայի Սահմանադրական դատարանն արգելեց կուսակցության հետագա գործունեությունը՝ հակաշխարհիկ գործունեություն ծավալելու մեղադրանքով: Այսպիսով՝ «Փետրվարի 28-ի գործընթացը», «Բարօրություն» և «Առաքինություն» կուսակցությունների արգելումը և զուգահեռ ընթացող մյուս իրադարձությունները ցույց տվեցին, որ եթե քեմալականները դանդաղ ու դժկամությամբ էին ընդունում բարեփոխումների անհրաժեշտությունը, ապա իսլամական կողմնորոշում ունեցող քաղաքական ուժերը սկսեցին արագ վերափոխվել՝ ձգտելով ներկայանալ ու գործել եվրոպական քրիստոնեաժողովրդավարական ուժերին բնորոշ ոճով:

Շատ չանցած, «Ազգային տեսակետ» գաղափարաքաղաքական շարժումը երկատվեց. 2001թ. հուլիսի 20-ին պահպանողականները հիմնադրեցին «Երջանկություն» կուսակցությունը (Saadet Partisi), որը 31 տարիների ընթացքում «Ազգային տեսակետի» կողմից հիմնադրված հինգերորդ կուսակցությունն էր, իսկ օգոստոսի 14-ին չափավոր բարեփոխականների թևը հիմնադրեց «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (Adalet ve Kalkınma Partisi)՝ Ռ.թ. Էրդողանի և Ա. Գյուլի գլխավորությամբ: Քանի որ ԱԶԿ հիմնադիրները գործող պատգամավորներ էին, այն դարձավ խորհրդարանական կուսակցություն, որը

դրականորեն ազդեց վերջինիս հասարակական-քաղաքական տեսանելիության բարձրացման հարցում: ԱԶԿ ղեկավարությունը շտապեց հայտարարել, որ հրաժարվում է «Ազգային տեսակետից» և, որպես ապացույց, շրջանառության մեջ դրեց «ժողովրդավարական պահպանողականություն» տերմինը՝ որպես նորաստեղծ կուսակցության գաղափարաքաղաքական հիմք:

4. «Կորսված սասնամյակի» ավարտը

XX դարի վերջին տասը տարիները համարվում են «կորսված», «անհաջող կոալիցիոն կառավարությունների», «կոռուպցիոն սկանդալների» տասնամյակ: 1999-ը ևս լի էր հակասական զարգացումներով: Նախ՝ ՔԱԿ-ի դեմ երկարատև հակամարտության մեջ նոր փուլ սկսվեց: Թուրքիայի հատուկ ծառայությունները՝ Հունաստանի և Քենիայի իշխանությունների հետ համագործակցությամբ, կարողացան փետրվարին Նայրոբիում ձերբակալել ՔԱԿ առաջնորդ Օջալանին: Նրան հատուկ չվերթով տեղափոխեցին Ստամբուլ, իսկ այդ չվերթի մասին մինչև վայրէջքի պահն անգամ վարչապետ Էջևիթը տեղյակ չէր: Օջալանի ձերբակալությունը լուրջ հարված էր ՔԱԿ հեղինակությանը և արդեն թուլացող պայքարին: Օջալանի դեմ ընթացող դատավարության ընթացքում հանրային կարծիքն ի սկզբանե պահանջում էր նրան մահապատժի ենթարկել, սակայն դատավարության ավարտին արտաքին, հիմնականում եվրոպական ազդեցությունների ճնշման ներքո, մահապատիժը Թուրքիայում վերացվեց, իսկ Օջալանի դեմ կայացված դատավճիռը պահանջում էր ցմահ ազատազրկում: Դատավճիռն իրականացվեց անհապաղ, և Օջալանն այն կրելու էր Իմրալը կղզու բանտում, միայնակ: Ամբողջ կղզին գտնվում է հատուկ ծառայությունների հսկողության ներքո, իսկ Օջալանի հետ տեսակցությունը խիստ սահմանափակ է:

Օջալանի ձերբակալությունը դրական կերպով ազդեց Էջևիթի հեղինակության վրա, որի հետևանքը 1999թ. ապրիլի 18-ի ընտրություններում գրանցված արդյունքներն էին: Նրա ղեկավարած կուսակցությանը հա-

ջողվեց ընտրություններում էական առաջընթաց արձանագրել՝ ստանալով 136 պատգամավորական մանդատ: Այդ մանդատները բավարար չէին միակուսակցական կառավարություն կազմելու համար, և ստիպված ձևավորվեց հերթական կոալիցիոն կառավարությունը, որի մաս կազմեցին «Մայր հայրենիք» կուսակցությունը և երկարատև ընդմիջումից հետո խորհրդարան վերադարձած «Ազգայնական շարժում» կուսակցությունը: Եռակուսակցական կոալիցիոն կառավարությունը դառնալու էր վերջինը 1991 թվականից ի վեր ձևավորվող կոալիցիոն կառավարությունների շարքում, այն վերջինն էր նաև Էջևիթի քաղաքական քառասնամյա կարիերայում:

Ուշագրավ է, որ 1999թ. ապրիլի 18-ի ընտրություններում ՀԺԿ-ն չկարողացավ հաղթահարել 10 տոկոսի ընտրաշեմը: Դենիզ Բայքալը հրաժարական տվեց, և մայիսին կուսակցության ղեկավար ընտրվեց Ալթան Օյմենը, որը 15 ամիս ղեկավարեց կուսակցությունը: Այդ ընթացքում ՀԺԿ-ն որդեգրեց նոր գաղափարախոսական ուղղություն, որը ստացավ «Անատոլիական ձախ» (Anadolu Solu) անվանումը: 2000թ. սեպտեմբերին Դենիզ Բայքալը նորից վերընտրվեց ՀԺԿ նախագահ ու սկսեց նոր շունչ ու բովանդակություն հաղորդել «Անատոլիական ձախ» ուղեգծին: Նա պնդում էր, որ հենվելով աշխարհիկ-հանրապետական կարգերի քարոզչության ու Աթաթյուրքի դերի վերիմաստավորման վրա՝ հարկավոր է Արևելյան Թուրքիայի հասարակ մարդու շահերն ու առաջնահերթությունները դնել պետական քաղաքականության ու սոցիալական ծրագրերի հիմքում, որը պետք է հիմնված լինի էթնոկրոնական ինքնության հավասար կարգավիճակի իրացման վրա: Նա կարևորում էր նաև թուրքական ազգային ինքնությանը հարիր սոցիալ-ժողովրդավարական զարգացման մոդելի ստեղծումը:

Նոր կառավարության հեղինակությանն էական հարված հասցրեց 1999թ. օգոստոսի 17-ին Իզմիթում տեղի ունեցած երկրաշարժը: Արհավիրքի պատճառով 25.000 մարդ մնաց փլատակների տակ, շուրջ 500.000 մարդ զրկվեց տանիքից: Ավերվեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, էական հարված հասցվեց երկրի տնտեսությանը: Ազգաբնակչության համար առավել մտահոգիչ էր իշխանությունների ցուցաբերած արձագանքը թե առաջին օգնության, թե փրկարարական

աշխատանքների կազմակերպման, թե երկրաշարժի հետևանքների վերացման հարցերում: Ավելին, փլուզումների վերլուծությունը ցույց էր տվել, որ բազմաթիվ շենքեր ու շինություններ կառուցվել էին սեյսմիկ պաշտպանության կանոնների աղաղակող խախտումներով, տեղական իշխանությունների թողտվությամբ և այլն: Երկրաշարժի հետևանքների վերացման հարցում պետության ցուցաբերած դանդաղկոտությունը, վատ համակարգումն էապես վնասեցին իշխանությունների հեղինակությանը:

1999թ. թվում էր՝ երկիրը թևակոխել է անդառնալի բարեփոխումների փուլ և իշխանություններն անելու էին առավելագույնը ԵՄ անդամության գործընթացն էապես արագացնելու հարցում: Սակայն հաջորդ երկու տարիների ընթացքում Բյուլենթ Էջևիթի կառավարությանը չհաջողվեց լայնածավալ ու բովանդակային բեկում մտցնել ԵՄ անդամակցության բանակցությունների փուլը մեկնարկելու առումով: ԵՄ-Թուրքիա բանակցություններում առկա էին մի շարք ոլորտներ, որոնցից հատկապես առանձնանում էին դատական, պաշտպանական, իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերում իրականացվելիք բարեփոխումները:

Էջևիթի ղեկավարած կառավարության իրական անկման պատճառ դարձավ 2001թ. փետրվարյան ֆինանսական ճգնաժամը, որը ցնցեց Թուրքիայի ֆինանսատնտեսական համակարգը: Արժույթի միջազգային հիմնադրամը Թուրքիային պարբերաբար տրամադրում էր երկարաժամկետ փոխառություններ՝ ֆինանսատնտեսական խնդիրները կարգավորելու նպատակով: Ճգնաժամին նախորդած վերջին 11 մլրդ փոխառությունը ԱՄՀ-ի կողմից տրամադրվել էր 2000թ. նոյեմբերին: 2001թ. փետրվարին Ազգային անվտանգության խորհրդում նախագահ Սեզերի[31] և վարչապետ Էջևիթի միջև տեղի ունեցած փոխադարձ քննադատությունների ընթացքում նախագահը վարչապետին մեղադրում է բանկային համակարգում առկա կոռուպցիայի դեմ անարդյունավետ պայքար մղելու համար և նրա ուղղությամբ նետում Սահմանադրության օրինակը: Վարչապետը լքում է Ազգային անվտանգության խորհրդի նիստը՝ հայտարարելով մոտալուտ ճգնաժամի մասին: ՁԼՄ-ը տարածեցին Էջևիթի հայտարարությունը, որին հետևեց Թուրքիայի պատմության ըն-

31 2000թ. մայիսի 16-ին Թուրքիայի նախագահ ընտրվեց Սահմանադրական դատարանի նախագահ Ահմեթ Նեջդեթ Սեզերը:

թացքում ամենամասշտաբային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Տարբեր ցուցանիշների համադրմամբ՝ մեկ օրում Թուրքիայի ՀՆԱ-ն 25 տոկոսով անկում ապրեց: Բանկային համակարգում ճգնաժամն ամենաշոշափելին էր, քանի որ ճգնաժամի պատճառով 17 բանկ սնանկացավ, պետությունը 39 մլրդ դոլարի փնաս կրեց: Լիրան արժեզրկվեց 54 տոկոսով, ֆոնդային բորսան 20 տոկոսանոց անկում ապրեց, արտարժույթի արտահոսքը կազմեց 7,6 մլրդ դոլար, մի շարք ներմուծվող ապրանքների գներն աճեցին 50 տոկոսով: Մեծ թվով կազմակերպություններ սնանկացան, 3 մլն մարդ դարձավ գործազուրկ: Թուրքիայի իշխանությունների խնդրանքով Համաշխարհային բանկի փոխնախագահ, ազգությամբ թուրք Քեմալ Դերվիշը թողեց իր պաշտոնը, ժամանեց Թուրքիա և ստանձնեց փոխվարչապետի պաշտոնը՝ նպատակ ունենալով կարգավորել ֆինանսատնտեսական ճգնաժամը և նվազագույնի հասցնել հետևանքները: Այդ ճգնաժամի պատճառով կառավարության վստահության ամբողջ ռեսուրսը սպառված էր, և Թուրքիան կանգնած էր աննախադեպ քաղաքական փոփոխությունների շեմին:

5. «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման առաջին շրջանը (2002-2007թթ.)

2002թ. հուլիսին կոալիցիոն կառավարության մաս կազմող կուսակցությունների միջև տարաձայնություններն առավել խորացան: Վարչապետ Էջևիթի դիրքերն ավելի թուլացան, երբ չորս տասնյակ անդամներ (պատգամավորներ, նախարարներ) լքեցին նրա ղեկավարած կուսակցությունը: Առավել նշանակալից էին արտգործնախարար Իսմայիլ Ջեմի հրաժարականը և նոր կուսակցություն ձևավորելու մասին հայտարարությունը: Կոալիցիոն գործընկերների, հատկապես ԱՇԿ ղեկավար Դևլեթ Բահչելիի կողմից աճող ճնշման պայմաններում՝ հուլիսի 16-ին հայտնի է դառնում, որ սահմանադրությամբ նախատեսված ժամանակահատվածից 18 ամիս շուտ Թուրքիայում տեղի կունենան արտահերթ խորհրդարանական ընտրություններ:

2002թ. նոյեմբերի 3-ի ընտրություններում ընդամենը 16 ամիս առաջ ստեղծված ԱԶԿ-ն ստացավ ընտրողների քվեների 34,17 տոկոսը (363 մանդատ): Հաջորդ կուսակցությունը, որին հաջողվեց հաղթահարել 10 տոկոսի ընտրաշեմը, ՀԺԿ-ն էր, որը ստացավ քվեների 19,41 տոկոսը (177 պատգամավորական մանդատ): Ընտրությունների արդյունքում նախկին գումարման պատգամավորների 90 տոկոսն անկարող եղավ վերընտրվել: ԱԶԿ հաղթանակի պատճառների շարքում կարելի է առանձնացնել մի քանի հիմնական գործոններ՝ քաղաքական վերնախավի հանդեպ ժողովրդի դժգոհությունը, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների դանդաղ վերացումը, 11 տարի շարունակվող իրարահաջորդ կոալիցիոն կառավարությունների պատճառով ստեղծված համակարգային ճգնաժամը, քաղաքական վերնախավում խարդավանքների աննախադեպ չափերը և որպես այդ ամենի հակադրություն՝ ԱԶԿ ղեկավարության անհամեմատ դրական հեղինակության և կոռուպցիոն սկանդալներից հեռու լինելու հանգամանքները:

ԱԶԿ հաղթանակի պատճառների շարքին պետք է դասել նաև տնտեսապես և քաղաքականապես խոցելի, սակայն ֆինանսապես ազդեցիկ «անատոլիական բուրժուազիայի» կողմից Էրդողանին և Գյուլին ցուցաբերված անվերապահ օժանդակությունը: Գործարարների այդ խմբի համար առավել ընդունելի էին տնտեսական ազատականացման և սոցիալ-պահպանողականության ուղղություններում ԱԶԿ ներկայացրած ծրագրերը:

Քանի որ ԱԶԿ առաջնորդը՝ Էրդողանը, զրկված էր քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից, ԱԶԿ-ի կողմից ձևավորված միակուսակցական կառավարության ղեկավար է դառնում Աբդուլահ Գյուլը: Նա կառավարությունը ղեկավարում է մինչև 2003թ. ապրիլ ամիսը: Այդ ընթացքում ԱԶԿ-ին հաջողվում է համապատասխան օրենսդրական փոփոխություն իրականացնելով՝ Էրդողանի վրայից հանել քաղաքականությամբ զբաղվելու արգելքը, որից հետո հարավարևելյան Սիիրթ (Սղերթ) նահանգում 2003թ. մարտին տեղի ունեցած լրացուցիչ ընտրություններում Էրդողանը հաղթում է, դառնում պատգամավոր, ապա նշանակվում վարչապետ: Ապրիլին Էրդողանը ձևավորում է իր առաջին կառավարությունը: Նոր կառավարությունում Ա. Գյուլը համատեղում էր փոխվարչապետի և արտգործնախարարի պաշտոնները:

Էրդողանն իր ելույթներում առաջ քաշեց ծառայության (hizmet) գաղափարը՝ որպես պետության և ժողովրդի միջև գործակցության նոր ելակետային սկզբունք: Ըստ Էրդողանի՝ դարեր շարունակ Թուրքիան ուղղորդվել է «ազգը պետության համար» սկզբունքով, մինչդեռ այժմ, ըստ նրա, հարկավոր էր ուղղորդվել հակառակ տրամաբանությամբ և պետությունը վերածել ժողովրդին ու անհատին ծառայություններ մատուցող ինստիտուտի: Թեև ի սկզբանե հանրային ընկալման մեջ ԱԶԿ-ն ընկալվում էր որպես «Ազգային տեսակետի» հերթական կուսակցությունը, սակայն ԱԶԿ ղեկավարությունը ձգտում էր հնարավորինս հեռանալ Էրբաքանի կամ Քութանի հետ բոլոր զուգահեռումներից: ԱԶԿ-ն քաղաքական դաշտում դիրքավորվեց որպես աջ կենտրոնի կուսակցություն՝ դավանելով պահպանողական ժողովրդավարության գաղափարախոսություն: Ուսումնասիրողները, սակայն, ԱԶԿ-ի համար օգտագործում էին «մուսուլման ժողովրդավարներ», «չափավոր իսլամականներ», «նախկին իսլամականներ» և այլ բնորոշումներ:

2002թ. նոյեմբերին, երբ անգամ իշխանության լծակները դեռ ամբողջությամբ չէին անցել ԱԶԿ-ին, վերջինիս ղեկավարները սկսեցին ինտենսիվորեն այցելել եվրոպական մայրաքաղաքները: Այդ քայլն առնվազն երկու նպատակ էր հետապնդում՝ ապահովել ԵՄ քաղաքական աջակցությունն ԱԶԿ-ին և ընդգծել ԱԶԿ նվիրվածությունը եվրոպական ուղղվածությանը: 2002թ. դեկտեմբերին Եվրոպական խորհրդի Կոպենհագենյան գագաթաժողովում որոշվեց խրախուսել դեռևս Էջևիթի կառավարության օրոք սկսված բարեփոխումների ընթացքը և նշվեց, որ եթե մինչև 2004թ. նախատեսված գագաթաժողովը բարեփոխումները լինեն տեսանելի, ապա կմեկնարկեն բուն անդամակցության բանակցությունները: Նոր կառավարության համար այդ որոշումը խիստ կարևոր էր նաև ներքաղաքական գործընթացներում: Ուստի, ԱԶԿ-ն առանց հապաղելու հանդես եկավ օրենսդրական նախաձեռնություններով և բարեփոխումներով:

2002-2006թթ. Թուրքիայի խորհրդարանն ընդունեց օրենսդրական փոփոխությունների 6 փաթեթ: Այդ ժամանակահատվածում փոխվեց սահմանադրության 1/3-ը: Թուրքիայի ազգաբնակչության 70 տոկոսը կողմ էր ԵՄ-ի հետ շուտափույթ ինտեգրման գաղափարին, և դա ԵՄ

օգտին երբևէ գրանցված ամենաբարձր հանրային աջակցությունն էր Թուրքիայում:

2003-2004թթ. ԱԶԿ-ն սկսեց աստիճանաբար, առանց հավելյալ շտապողականության, իրականացնել մի շարք բարեփոխումներ, որոնց նպատակը զինվորականության կողմից որոշված և անքննելի համարվող դերակատարության սահմանափակումն էր: ԵՄ օրենսդրության համապատասխանեցման յոթերորդ փաթեթով կատարվեցին սահմանադրական և օրենսդրական որոշակի փոփոխություններ, որոնց արդյունքում ԱԱԽ անդամների համամասնությունը փոխվեց հօգուտ քաղաքացիականների, իսկ ԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնում նշանակվեց քաղաքացիական անձ: ԵՄ անդամակցության գործընթացում բարձրաստիճան զինվորականներն ակնհայտ զգուշավորություն և դիմադրություն էին դրսևորում, սակայն հանրային հայտարարություններում նրանք, հատկապես գլխավոր շտաբի պետ Օզքյոքը, ԵՄ-ը դիտում էին որպես Թուրքիայի հարյուրամյա արդիականացման տրամաբանական և վերջնական հանգրվան: Ավելին, նրանց ընկալմամբ, Եվրամիությանն անդամակցության շնորհիվ հնարավոր կլիներ վերջ տալ զինվորականության համար ներքին մարտահրավերներ համարվող իսլամականության վերելքին ու քրդական անջատողականությանը:

2002-2007թթ. լինելով միակ խորհրդարանական ընդդիմությունը՝ ՀԺԿ-ին հնարավորություն ընձեռվեց հասարակությանը ներկայանալ առավել բյուրեղացված գաղափարախոսությամբ: Վերջին 5-6 տարիների ընթացքում կուսակցության դավանած քաղաքական հայացքները ստացան բազմաթիվ որակավորումներ. «ավտորիտար քեմալիզմ», «ծայրահեղ աջ ուղղվածություն», «ծայրահեղ ազգայնամոլություն» և այլն: Ընդհանուր առմամբ, այն բնորոշվեց որպես փոփոխական ու պետականակենտրոն ուղղություն դավանող քաղաքական ուղեգիծ, որին, բնականաբար, ավելացան նաև կուսակցական կառավարման Բայքալի որդեգրած հակաժողովրդավարական մեթոդները, նրա անհանդուրժողական կեցվածքը և այլն: Բայքալի ու նրա մերձավոր գաղափարակիրների համար սեփական պայքարի նպատակը «դասական քեմալիզմի» երկարակեցության ապահովումն էր՝ գործարկելով պետության և նրա համապատասխան ուժային հաստատությունների ռեսուրսները:

Տնտեսական վերելքի համար ԱԶԿ-ն պարտական էր նաև Էջևիթի կառավարությունում տնտեսական զարգացման նախարար աշխատած Քեմալ Դերվիշին՝ տնտեսական ու կառուցվածքային բարեփոխումների հիմքերի, ծրագրերի մշակման և իրականացման համար: Երբ ԱԶԿ-ն եկավ իշխանության, Թուրքիայի տնտեսությունն աշխարհում 26-րդն էր՝ 230 մլրդ ԱՄՆ դոլար ՀՆԱ-ով: Ֆինանսատնտեսական համակարգում կառուցվածքային բարեփոխումների, ինչպես նաև ներդրումային քաղաքականության շնորհիվ 6-7 տարի անց Թուրքիայի տնտեսությունը դարձավ 16-րդը՝ 780 մլրդ ԱՄՆ դոլար ՀՆԱ-ով: Աճ արձանագրեց նաև մեկ անձի հաշվով ՀՆԱ-ն՝ 2002թ. 3500 ԱՄՆ դոլարից 2010թ. հասնելով 10.000-ի: Էապես աճեցին նաև արտահանման ծավալները՝ 2002թ. 36 մլրդ ԱՄՆ դոլարից 2010թ. հասնելով 114 մլրդ-ի: 2002-2004թթ. օտարերկրյա ներդրումներն աճեցին 60 տոկոսով, իսկ 2004-2005թթ. եռապատկվեցին: Մեկ այլ խորհրդանշական քայլ էր 2005թ. հունվարի 1-ից նոր թուրքական լիրան (Yeni Türk Lirası) և նոր քուրուշը (Yeni Kuruş) շրջանառության մեջ դնելը: Մինչ այդ, լիրայի արժեզրկման պատճառով առևտուրը և անգամ ընտանեկան բյուջետային հաշվարկները կատարվում էին միլիոններով և միլիարդներով, այդ պատճառով նոր որոշմամբ թուրքական թղթադրամների և մետաղադրամների վրայից հեռացվեցին վեց զրոները (դեվալվացիա) և ստեղծվեց նոր դրամական միավորը:

2004թ. մարտի ՏԻՄ ընտրություններում ԱԶԿ-ն ևս շոշափելի հաջողություն արձանագրեց՝ ստանալով քվեների մոտ 42 տոկոսը: ԱԶԿ թեկնածուները կրկին հաղթեցին Ստամբուլում, Անկարայում: Այս ընտրությունների արդյունքներն ԱԶԿ ղեկավարությունն ընդունեց որպես կատարված բարեփոխումների հարցում հասարակության ցուցաբերած վստահության քվե:

Թուրքիայում սկսված լայնածավալ փոփոխությունները և բարեփոխումներն ազդեցին նաև մարդկանց կենսամակարդակի, կյանքի որակի բարելավման վրա: Կառավարությունն էական միջոցներ ներդրեց մեծ քաղաքների ենթակառուցվածքների զարգացման վրա, աննախադեպ զարգացում ապրեց շինարարությունը, քաղաքներում ի հայտ եկան նոր բազմահարկ, էլիտար թաղամասեր: Երկրի տարբեր հատվածներում շահագործման հանձնվեցին նոր օդանավակայաններ, մայրուղիներ, ընդլայնվեց նաև երկաթուղային ցանցը: Այս փոփոխությունները մի շարք վերլուծաբաններ անվանեցին Թուրքիայի «արդիականացման չորրորդ փուլ»: Այս ամենին զուգահեռ՝ հասարակությունը նկատելիորեն դառնում էր առավել պահպանողական: Նման հայացքներ դավանող նոր բիզնես վերնախավն էական փոփոխության ենթարկեց նաև քաղաքային մշակույթը: Մզկիթաշինությունը և հանրային վայրերում կրոնական բարեպաշտության դրսևորումները դարձան համատարած: Տարբեր հաշվարկներով՝ 2009թ. կանանց մոտ 40 տոկոսը գլխաշոր էր կրում: ԱԶԿ-ն էական աջակցություն ստացավ Նաքշիբենդի կրոնական միաբանությունից և «Նուրջու» կրոնական հոսանքի ղեկավար Ֆեթուլահ Գյուլենից: Նաքշիբենդին «Ազգային տեսակետին» օժանդակող հիմնական կրոնական կառույցն էր, որը թեև 1925թ. ընդունված օրենքով իրավունք չուներ գոյություն ունենալ և ավելին՝ գործունեություն ծավալել, սակայն հանրապետության ամբողջ ընթացքում ոչ միայն շարունակում էր գործել, այլ նաև էապես ազդում էր քաղաքական իսլամի զարգացման վրա: ԱՄՆ-ում ապրող Ֆ. Գյուլենի և Թուրքիայում նրա հարյուր հազարավոր հետևորդների աջակցության շնորհիվ ԱԶԿ-ն կարողացավ առաջ մղել իր քաղաքական ու տնտեսական բարեփոխումները:

6. Զարգացումներ Քրդական հարցի շուրջ

1999թ. Օջալանի ձերբակալությունից որոշ ժամանակ անց քրդաբնակ նահանգներում վերացվեց արտակարգ իրավիճակի ռեժիմը, որի շնորհիվ այդ տարածքներում իրավիճակն էապես կայունացավ, թեև մի շարք հեռավոր գյուղական շրջաններում փոքրածավալ զինված բախումները չդադարեցին: Հարավարևելյան ՏԻՄ-երում իշխող քրդական «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցությունը սկսեց կազմակերպել հանրային մշակութային միջոցառումներ, որոնք ունեին քրդական ինքնությունը համախմբող նպատակներ: Դիարբեքիրի քաղաքապետ Օսման Բայդեմիրը վերանորոգեց քաղաքի կենտրոնում գտնվող ամրոցի պատերը, որոնք անմխիթար վիճակում էին, քանի որ պետությունը

հատուկ նպատակով չէր ցանկանում վերանորոգել քրդերի համար խորհրդանշական շինություն: ԱՀԿ կառավարության՝ ԵՄ-ի առջև ստանձնած պարտավորությունների շնորհիվ պետական TRT-ն սկսեց քրդերենով հեռուստատեսային և ռադիոհեռարձակումները, որոնք թեպետ օրական մեկ ժամ էին, սակայն քաղաքական իմաստով աննախադեպ էին: Թույլատրվեց նաև քրդերենի ուսուցման դասընթացների կազմակերպում, սակայն ոչ դպրոցականների համար: Քրդաբնակ քաղաքներում և գյուղերում սկսեցին վերականգնել պատմական նշանակություն ունեցող այլ շինություններ և հուշարձաններ, օրինակ՝ Սուրիչի շրջանի ղեկավար Աբդուլահ Դեմիրբաշը սկսեց հայկական լքված և ավերված եկեղեցու վերանորոգման աշխատանքները: Քրդաբնակ շրջաններում մինչև 2005թ. աճեց նաև ներդրումների քանակը, բարելավվեցին ենթակառուցվածքները, ստեղծվեցին նոր աշխատատեղեր:

2005թ. նոյեմբերին Շեմդինլիում տեղի ունեցած բռնությունը և դրա հետ կապված սկանդալային բացահայտումները զգալի վնաս հասցրին պետության և քրդերի միջև ձևավորված վստահության փոքր ռեսուրսին: Նոյեմբերի 9-ին, ԵՄ-ի հետ բանակցությունների մեկնարկից մեկ շաբաթ անց, Շեմդինլիում գտնվող գրախանութը, որը պատկանում էր ՔԱԿ նախկին անդամներից մեկին, պայթեցվեց, որի պատճառով անցորդներից մեկը սպանվեց: Մոտակայքում գտնվող ականատեսները կարողացան կանգնեցնել ահաբեկչությունն իրականացրած երեք մարդու և հանձնեցին ոստիկանություն: Պարզվեց, որ այն իրականացնողները բանակի սպաներ են և ՔԱԿ նախկին մի գործակալ, նրանց մեքենայում հայտնաբերվեց զենք, ոստիկանության և ժանդարմերիայի համազգեստ, հսկողության տակ գտնվող մարդկանց ցուցակներ, քրդական ԴՀԿ անդամների ցուցակներ և այլ փաստաթղթեր, իսկ մեքենան գրանցված էր ժանդարմերիայի գեներալներից մեկի անունով: Այս միջադեպը հանրային դժգոհությունների պատճառ դարձավ, որոնց հետևանքով մի շարք բնակավայրերում քրդերը քարկոծեցին ժանդարմերիայի տեղական կայանները: Որոշ վայրերում ցուցարարների ուղղությամբ կրակ բացվեց, որի պատճառով եղան զոհեր: Փաստերի համադրությունը ցույց էր տալիս, որ ահաբեկչությունը հրահրվել էր իրավապահ մարմինների կողմից, ավելին, երբ գործի վերաբերյալ նախաքննություն սկսվեց, ցամաքային զորքերի հրամանատար և ՀՈՒ

ԳՇ ապագա պետ Յաշար Բույուքանըթը դրական կարծիք հայտնեց ձերբակալվածներից մեկի մասին, ինչը Վանի երիտասարդ դատախազ Ֆերհաթ Սարըքայան մեկնաբանեց որպես ճնշման գործադրում գործի քննությունն իրականացնող մարմնի հանդեպ: Թեև Վանի Ծանր հանցագործությունների դատարանը երեք մեղադրյալների համար երկարատև ազատազրկման վճիռ կայացրեց, սակայն վճիռն օրինական ուժի մեջ չմտավ, քանի որ գործի բողոքարկման ընթացքում գործը քննվեց ռազմական դատարանում, որը երեքին էլ դատարանի դահլիճից ազատ արձակեց: Այս դրվագը ցույց տվեց, որ ՀՈՒ-ն դատահրավական համակարգի հետ համատեղ ընդդիմանում է ԱՀԿ բարեփոխումներին և քրդերի հետ հաշտության եզրեր գտնելու ջանքերին:

2006թ. մարտի 29-ին ՔԱԿ 14 զինյալների մահվան մասին լուրը տարածվեց քրդաբնակ շրջաններում, որը ցույցերի և բռնությունների նոր ալիքի պատճառ դարձավ: Իրադարձությունների լուսաբանման գործում առանցքային դերակատարում ունեցավ արբանյակային ROJ TV-ն: Հաջորդ մի քանի օրերի ընթացքում Դիարբեքիրի անվտանգության մարմինները սպանեցին 14 ցուցարարի: Զոհվածների մեծ մասը երիտասարդներ էին, իսկ երեքը մինչև 10 տարեկան էին: Մոտ 400-ը վիրավորվեց, իսկ 500-ը ձերբակալվեց հարցաքննության նպատակով, որոնցից 200-ը 12-18 տարեկան էին: Ձերբակալվածներից 90-ին մեղավոր ճանաչեցին անօրինական ցույցերին մասնակցելու, ՔԱԿ-ին օժանդակելու մեղադրանքներով և ազատազրկեցին: Հետագա երկու տարիների ընթացքում ավելի քան 2000 անչափահաս ենթարկվեց պատասխանատվության՝ համաձայն Հակաահաբեկչության մասին օրենքի: Գրեթե բոլոր դեպքերում նրանց մեղքն անվտանգության աշխատակիցների ուղղությամբ քարեր, իսկ ավելի քիչ դեպքերում՝ Մոլոտովի կոկտեյլներ նետելն էր: Ազատազրկման և պատասխանատվության ենթարկվեցին նաև ԴՀԿ տեղական կառույցների ղեկավարները և համայնքների ղեկավարները, այդ թվում՝ Օսման Բայդեմիրը և Աբդուլահ Դեմիրթաշը:

7. Քննարկումներ Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ

2000-ական թթ. սկզբին քեմալականների որոշակի պասիվության պայմաններում մի շարք գիտնականներ, մտավորականներ, լրագրողներ, քաղաքացիական հասարակության անդամներ հարցականի տակ դրեցին Օսմանյան կայսրության վերջին և հանրապետության հիմնադրման տարիներին տեղի ունեցած մի շարք իրադարձությունների վերաբերյալ մինչ այդ պաշտոնական և համատարած տեսակետները: 2000թ. հոկտեմբերին պատմաբան Հալիլ Բերքթայը Radikal օրաթերթում տպագրված հոդվածում մեղադրեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության «Հատուկ կազմակերպության»-ը (Teşkilât-ı Mahsusa) 1915թ. հայերի դեմ զանգվածային սպանություններ իրականացնելու համար: Այդ հոդվածը կարևոր նշանակություն ունեցավ և, ի թիվս այլ զարգացումների, նպաստեց Հայոց ցեղասպանության թեմայի ակտիվացմանը: Մի քանի այլախոհ հրատարակչությունների կողմից լույս տեսան ցեղասպանության մասին անգլերենից և ֆրանսերենից թարգմանված գրքեր, որոնք ազատ վաճառվում էին որոշ գրախանութներում: 2005թ. տեղի ունեցավ նամականիշների և բացիկների ցուցադրություն՝ «Հայերը Թուրքիայում 100 տարի առաջ» խորագրով: Այն փաստում էր Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում և տարբեր բնագավառներում հայերի հոծ ու առանցքային ներկայության մասին: Այս ցուցադրությունը թուրքական հասարակության որոշակի մասին ստիպեց հարցականի տակ դնել տասնամյակներ շարունակ մատուցված պաշտոնական պատմագրության որոշակի դրույթներ:

Գրքերից ու հոդվածներից բացի, հասարակական կարծիքի վրա մեծ ազդեցություն թողեց վեպերի, պատմվածքների և հուշերի տպագրությունը, որոնք անդրադառնում էին մարդկային ճակատագրերի պատմությանը: Էլիֆ Շաֆաքի (Baba ve Piç - «Հայրը և ապօրինի զավակը»), Ֆեթհիե Չեթինի (Anneannem - «Մեծ մայրս»), Իրֆան Փալալըի (Tehcir Çocukları - «Աքսորի երեխաները»), Բասքըն Օրանի խմբագրությամբ լույս տեսած (MK Adlı Çocuğun Tehcir Anıları - «ՄԿ անունով երեխայի աքսորի հուշերը») գրքերը մեծ տարածում էին գտնում Թուրքիայում և նրա սահմաններից դուրս: Այս պատմությունների շնորհիվ թուրք հասարակությունն առավել լավ գիտակցեց Հայոց ցեղասպանության իրողությունը, որն արդեն ներկայացվում էր Թուրքիայի քաղաքացիների կողմից:

Թուրք հասարակության մեծ մասը չողջունեց հայերի նկատմամբ և ցեղասպանության հարցի վերաբերյալ նմանօրինակ հետաքրքրության աճը: Մի շարք ազգայնամոլական շրջանակներ (Քեմալ Քերինչսիզ, Դողու Փերինչեք և այլք) բացահայտ պայքար սկսեցին այն հեղինակների և լրագրողների դեմ, որոնք համարձակվել էին հարցականի տակ դնել պաշտոնական դիրքորոշումը:

2005թ. սեպտեմբերի 6-ին քաղաքացիական հասարակության մի շարք անդամներ Ստամբուլի Իսթիքլալ պողոտայում կազմակերպեցին ցուցահանդես՝ ի հիշատակ 1955թ. սեպտեմբերի 6-7-ին տեղի ունեցած իրադարձությունների: Մի շարք աջակողմյան կազմակերպություններ հարձակվեցին կազմակերպիչների վրա գրեթե նույն ոճով, ինչպես տեղի էր ունեցել 50 տարի առաջ: Նույն 2005թ. սեպտեմբերին Սաբանջի և Բոսֆորի համալսարանները համատեղ կազմակերպել էին գիտաժողով «Օսմանյան հայերը կայսրության վերջին տարիներին. գիտական պատասխանատվության և ժողովրդավարության հարցեր» խորագրով: Պետության, ինչպես նաև մի շարք շրջանակների ճնշման արդյունքում գիտաժողովը նախապես նշված համալսարաններում չեղարկվեց, ավելի ուշ Բիլգի համալսարանը որոշեց ընդունել գիտաժողովը: Քեմալ Քերինչսիզի, Դենիզ Բայքալի, Դողու Փերինչեքի կողմից կասկածներ հնչեցին միջոցառման գիտականության վերաբերյալ, իսկ արդարադատության նախարար Ջեմիլ Չիչեքը գիտաժողովի կազմակերպիչներին մեղադրեց «թուրք ազգին մեջքից հարվածելու համար»: Գիտաժողովն ուղեկցվեց ազգայնամոլների կողմից կազմակերպված ագրեսիվ ցույցերով, որոնց ընթացքում մասնակիցների նկատմամբ իրականացվեցին բռնություններ: Գիտաժողովն ամեն դեպքում տեղի ունեցավ, որին մասնակցեցին մի շարք ազդեցիկ գիտնականներ, լրագրողներ, մտավորականներ, ինչպես նաև ուսանողներ և թեմայով հետաքրքրվող այլ մարդիկ: Գիտաժողովի հաջորդ օրը լույս տեսած օրաթերթերից մեկը գրեց. «Գիտաժողովի ընթացքում անգամ «ցեղասպանություն» բառն արտասանվեց, իսկ

Երկիր մոլորակը շարունակում է պտտվել, իսկ Թուրքիան դեռ իր տեղում է»: Այդուամենայնիվ, գիտաժողովից հետո սկսվեցին դատական հետապնդումներ մասնակիցներից մի քանիսի նկատմամբ:

Թեև օրեր անց ԵՄ-ի հետ սկսվելու էին անդամակցության բանակցությունները, սակայն Թուրքիայի ներքաղաքական կյանքը բավական թեժացել էր, բարեփոխումների նկատմամբ հետաքրքրությունը՝ շոշափելիորեն նվազել, իսկ ԵՄ-ին անդամակցության աջակիցների թիվն իջել էր մինչև 50 տոկոս: Քեմալականները, ՀՈւ ղեկավարությունը, դատախազական համակարգի ներկայացուցիչները, ազգայնական շրջանակները սկսել էին տարբեր ճակատներով հարձակումներ գործել թե ԱՀԿ-ի, թե ազգային ու կրոնական փոքրամասնությունների, թե ազատական մտավորականների նկատմամբ: «Ակօսի» խմբագիր Հրանտ Դինքի նկատմամբ ևս սկսվեցին դատական քաշքշուկներ, նրա հասցեին հնչում էին անխնա քննադատություններ, ուղարկվում էին մահվան սպառնալիքներ: Դրանք հատկապես ուժգնացան այն ժամանակ, երբ «Ակօս»-ում հրապարակվեց սկանդալային հոդված, որտեղ բացահայտվում էր, որ Աթաթյուրքի հոգեզավակ և Թուրքիայի առաջին կին ռազմական օդաչու Սաբիհա Գյոքչենը իրականում ցեղասպանության հայ որբերից է՝ Խաթուն Սեբիլջյան անունով: 2006թ. փետրվարին Տրապիզոնի Սուրբ Մարիա կաթոլիկ եկեղեցում աղոթքի ժամանակ սպանվեց կաթոլիկ հովիվ հայր Անդրեա Սանտորոն: Սպանություն իրականացնողը 16-ամյա երիտասարդ էր: Մայիսին տեղի ունեցավ մեկ այլ աղմկահարույց սպանություն. իսլամական ծայրահեղականի կողմից Պետական խորհրդի դատարանում սպանվեց դատավոր Օզբիլգինը:

Հաջորդ աղմկահարույց սպանությունը ցնցեց ոչ միայն հայ ժողովրդին ու համաշխարհային հանրությանը, այլ նաև Թուրքիան: 2007թ. հունվարի 19-ին, Ստամբուլում «Ակօս»-ի խմբագրատան մուտքի մոտ սպանվեց նույն պարբերականի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը՝ անչափահաս ազգայնամոլի կողմից: Այդ սպանության պատճառով Ստամբուլում բողոքի մեծածավալ ու աննախադեպ ցույցեր կազմակերպվեցին: Դինքի հուղարկավորության թափորը բաղկացած էր մի քանի կմ ձգվող հարյուրհազարավոր սգակիցներից, որոնք կրում էին Դինքին աջակցող և արդարություն պահանջող ցուցանակներ: Թեև հանցագործն արագ հայտնաբերվեց, սակայն սկսված դատավարության ընթացքում սպանության պատվիրատուների հարցը բաց մնաց: Դատավարության ընթացքում պարզ դարձավ, որ անվտանգության համակարգի մի շարք աշխատակիցներ կամ նախապես տեղյակ են եղել, կամ էլ տեղեկանալով սպանության պլանների մասին՝ ցուցաբերել են հանցավոր անգործություն:

8. «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման երկրորդ փուլը (2007-2011թթ.)

2007թ. մայիսին ավարտվում էր նախագահ Ահմեթ Սեզերի լիազորությունների ժամկետը: Ապրիլին սկսված թեկնածությունների առաջադրման գործընթացում ակտիվորեն քննարկվում էր Էրդողանի թեկնածության առաջադրման հավանականությունը, որն առաջ բերեց լայնածավալ դժգոհության ալիք: Ապրիլի 14-ից Թուրքիայի մի շարք քաղաքներում տեղի ունեցան «Հանրապետական երթեր», որոնց մասնակիցներն Էրդողանից պահանջում էին հարգել Թուրքիայի աշխարհիկ կարգերը և խուսափել իր կամ իր կուսակցության անդամներից մեկին նախագահ առաջադրելու մտադրությունից: Էրդողանը նահանջեց, սակայն մասամբ, և ԱՀԿ-ն նախագահի պաշտոնում առաջադրեց արտգործնախարար Աբդուլահ Գյուլի թեկնածությունը: ՀՈւ-ԱՀԿ հակասությունները վերաճեցին անթաքույց հակամարտության: Այդ հակասությունների կիզակետը դարձավ ապրիլի 27-ին ՀՈւ ԳՇ ինտերնետային կայքում տեղադրված BA 08/07 հուշագիր-հաղորդագրությունը, որով ՀՈւ ղեկավարությունն իշխող կուսակցությանը կոչ էր անում զգուշանալ հանրապետական աշխարհիկ կարգերը խախտելու մտադրությունից և խոստանում էր հակառակ պարագայում դիտորդի դերում չմնալ: Այս քայլն ուղղակիորեն նշանակում էր, որ բանակը վերջնագիր էր ներկայացնում իշխող կուսակցության ղեկավարությանը:

ՀԺԿ-ն անվերապահ աջակցություն հայտնեց գրնդարմերիայի գործողություններին և ընդդիմացավ նախագահի պաշտոնում արտգործնախարար Ա. Գյուլի թեկնածության առաջադրմանը [illegible]

քվեարկության օրը ՀԺԿ-ն որոշեց բոյկոտել խորհրդարանի նիստը, որպեսզի հետագայում ԱԶԿ քվեարկությունը համարվեր անվավեր: Թեև Գյուլն ընտրվեց նախագահ, սակայն ՀԺԿ-ն դիմեց ՍԴ՝ նախագահի ընտրության ընթացակարգը խախտելու պատճառով ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու հայցով: ՀԺԿ հայցադիմումում նշված էր, որ քվեարկության օրը խորհրդարանում 2/3-ի քվորում չի ապահովվել: Ի զարմանս բոլոր սահմանադրագետների և իրավաբանների՝ ՍԴ-ն բավարարեց հայցը և քվեարկության արդյունքները չեղյալ հայտարարեց: Ստեղծված ներքաղաքական ճգնաժամը հարթելու միակ ուղին նոր խորհրդարանական ընտրություններն էին:

2007թ. հուլիսի 22-ին անցկացվեցին խորհրդարանական արտահերթ ընտրություններ: Ընտրություններին ԱԶԿ-ն ներկայացավ այնպիսի քաղաքական ծրագրով, որով հնարավոր կլիներ լիցքաթափել աշխարհիկ քեմալականների վրդովմունքը, որոնք Էրդողանին և Գյուլին մեղադրում էին Աթաթյուրքի աշխարհիկ ժառանգությունը նենգափոխելու և Թուրքիան իսլամականացնելու համար: Ինչպես 2002, այնպես էլ 2007թթ. ԱԶԿ կարգախոսն էր՝ «Ամեն ինչ Թուրքիայի համար» (Herşey Türkiye için), իսկ այս անգամ ավելացավ նաև «Կանգնել չկա. ճանապարհը շարունակվում է» (Durmak yok, yola devam) կարգախոսը: Ի հեճուկս քեմալականների, հատկապես ՀՈՒ ղեկավարության հարուցած աննախադեպ խոչընդոտների, 2007թ. հուլիսյան ընտրություններում ԱԶԿ-ն 12%-ով ավելացրեց 2002թ. ստացած քվեները՝ ապահովելով 46,5%: ԱԶԿ-ն խորհրդարանում ստացավ 341 մանդատ, ԺՁԿ-ի հետ դաշինք կազմած ընդդիմադիր ՀԺԿ-ն և «Ազգայնական շարժում» կուսակցությունը (ԱՇԿ) ստացան համապատասխանաբար՝ 112 և 71, իսկ անկախ թեկնածուները՝ 25 մանդատ:

Ընտրություններից մեկ ամիս անց՝ նախագահական ընտրություններում ԱԶԿ-ն կրկին առաջադրեց արտգործնախարար Ա. Գյուլի թեկնածությունը: Օգոստոսի 28-ին Գյուլն ընտրվեց հանրապետության 11-րդ նախագահ: Երկու ամիս անց՝ հոկտեմբերի 21-ին անցկացված հանրաքվեի արդյունքներով փոխվեց հանրապետության նախագահի ընտրության կարգը. հաստատվեցին նախագահի ուղղակի ընտրության սկզբունքը, երկու անգամ ընտրվելու իրավունքը, նախագահության պաշտոնավարման ժամկետը կրճատվեց՝ 7-ից դառնալով 5 տարի, խորհրդարանական

ընտրությունները նախկինում յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ անցկացնելու փոխարեն հաստատվեց դրանք 4 տարին մեկ անցկացնելու սկզբունքը, նվազեց նաև խորհրդարանական քվորումի տոկոսը՝ դառնալով 34%: Այսպիսով, 2007-ը նշանավորվեց ներքաղաքական բուռն գործընթացներով, և ակնհայտ էր, որ աշխարհիկ քեմալական վերնախավը պատրաստ չէր համակերպվել ԱԶԿ աճող հեղինակության հետ:

2008թ. սկզբին ԱԶԿ-ն ԱՇԿ-ի և ԴՀԿ-ի հետ միասին հանդես եկավ օրենսդրական նախաձեռնությամբ, որի նպատակն էր վերացնել համալսարաններում և պետական հաստատություններում գլխաշոր կրելու վրա դրված արգելքը: 1990-ականների վերջից կրոնական գլխաշոր կրելը քեմալականների կողմից դիտվում էր որպես քաղաքական իսլամի խորհրդանիշ, որի հետևանքով տեղի էին ունենում մի շարք խտրական դրսևորումներ այն կրող կանանց նկատմամբ: Ավելի քան մեկ տասնամյակ գլխաշորը դարձել էր քաղաքական քննարկումների առարկա՝ պառակտելով հասարակությանը: Հետևաբար, քաղաքական ուժերի նոր նախաձեռնությունը նպատակ ուներ փոփոխել սահմանադրության 10-րդ և 42-րդ հոդվածները, որոնք առնչվում էին հանրային ծառայություններին ու կրթությանը: Փետրվարի 9-ին այդ կուսակցություններին հաջողվեց խորհրդարանում 411 կողմ և 103 դեմ ձայների հարաբերակցությամբ հաստատել սեփական նախաձեռնությունը և փոփոխություն կատարել սահմանադրության մեջ: Այդ քայլով լուծվում էր թուրքական հասարակությունն առնվազն երեք տասնամյակ բևեռացնող խնդիրներից մեկը, որի շուրջ քեմալական ու իսլամական շրջանակները սուր բանավեճեր էին ծավալել: Փետրվարի 21-ին նախագահ Գյուլը հաստատեց սահմանադրական փոփոխության փաթեթը, և, թվում էր՝ երկար տարիներ շարունակվող ներքաղաքական թնջուկն իր վերջնական լուծումն էր ստացել, և գլխաշոր կրող միլիոնավոր կանայք ու աղջիկներ իրավունք էին ձեռք բերելու անարգել կրթություն ստանալ պետական համալսարաններում և աշխատել պետական հաստատություններում: Սակայն ընդդիմադիր ՀԺԿ-ն որոշեց ՍԴ-ում վիճարկել փոփոխության սահմանադրականությունը: Հունիսի 5-ին ՍԴ-ն 9 կողմ, 2 դեմ ձայների հարաբերակցությամբ չեղյալ հայտարարեց փետրվարի 9-ին ընդունված սահմանադրական փոփոխությունները: Այսպիսով՝ ՀԺԿ-դատական համակարգ համագործակցության արդյունքում

ԱԶԿ նախաձեռնությունն անհաջողություն կրեց: Հարկ է նշել, որ ՍԴ այս որոշումը հակասահմանադրական էր, քանզի սահմանադրության 148-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ ՍԴ ներկայացված հայցերը ՍԴ-ն իրավունք ունի քննել և հաստատել միայն ձևի, սակայն ոչ բովանդակության առումով. օրինակ՝ քվեարկությանը ներկա գտնվող պատգամավորների քանակը, քվորումի ապահովումը և այլն: Հետևաբար, ՍԴ-ն գերազանցեց սահմանադրությամբ ամրագրված լիազորությունները, իսկ կանանց գլխաշորի հարցը շարունակեց դասվել չլուծված խնդիրների շարքին:

2008թ. մարտի 14-ին Վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազ Աբդուրահման Յալչընքայան «հակաշխարհիկ գործունեություն ծավալելու» մեղադրականով հայց ներկայացրեց ՍԴ՝ իշխող ԱԶԿ գործունեությունը կասեցնելու վերաբերյալ: Մեղադրականը պահանջում էր ԱԶԿ կառավարման խորհրդի շուրջ յոթ տասնյակ անդամներին 5 տարով զրկել քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից, այդ թվում՝ վարչապետ Էրդողանին և նախագահ Գյուլին, պահանջում էր նաև տարբեր ժամկետներով ազատազրկումներ: Մի քանի ամիս տևած քննարկումներից հետո՝ հուլիսի 30-ին, ՍԴ-ն 6 կողմ, 5 դեմ ձայների հարաբերակցությամբ մերժեց հայցը (այն փակելու համար հարկավոր էր 7 կողմ), փոխարենը կուսակցությունը ենթարկվեց ֆինանսական պատասխանատվության:

2008թ. մարտի 21-ին ի հայտ եկավ մեկ այլ սկանդալային գործընթաց՝ աջ ծայրահեղ ազգայնական խմբավորումներից մեկի անդամների ձերբակալությամբ: Սկսվեց «Էրգենեքոն» անունը ստացած գաղտնի կազմակերպության և վերջինիս գործունեության բացահայտման գործընթացը: Հոկտեմբերի 30-ին Ստամբուլի քրեական դատարանում 86 մեղադրյալների մասնակցությամբ սկսվեց «Էրգենեքոնի» դատավարությունը: «Խորքային պետության» մարմնավորումներից մեկը հանդիսացող «Էրգենեքոն» գաղտնի կազմակերպության շուրջ սկսված գործընթացները դարձան ԱԶԿ-ի կողմից դատաիրավական համակարգի դեմ հմտորեն օգտագործվող երկսայր զենք: Հետագա 4 տարիների ընթացքում «Էրգենեքոնի» գործով եղել է «ձերբակալությունների 13 ալիք», որոնց արդյունքում ձերբակալվել են ՀՈՒ բարձրագույն ու միջին սպայական կազմի, մտավորականության, դատաիրավական համակարգի,

լրագրության մի քանի հարյուր ներկայացուցիչներ, որոնց անունները շրջանառվում էին գաղտնի կազմակերպություններ ղեկավարելու, ընդհատակյա գործունեություն ծավալելու և մի շարք այլ աղմկոտ գործերում (պաշտոնաթող գեներալ Վելի Քյուչուք, Դողու Փերինչեք, Քեմալ Քերինչսիզ, հայտնի հրապարակախոս և լրագրող Իլիան Սելջուկ և այլն): Առգրավվել էին նաև մեծաքանակ զենք ու զինամթերք, համակարգչային ֆայլեր, որոնք ներառում էին կարևոր ապացույցներ 2000-ականներին զինվորականների պլանավորած գործունեության վերաբերյալ:

Ապրիլի 18-ին հինգ տարի տևած քննարկումների ու հետաձգումների արդյունքում ընդունվեց սոցիալական ապահովության ոլորտում բարեփոխումների իրականացման փաթեթը, որը զգալիորեն փոխեց արտադրահարաբերությունները, ընդլայնեց պետության հնարավորությունները սոցիալական քաղաքականության մշակման ու իրագործման փուլում: 2008թ. մայիսի 1-ին Ստամբուլի Թաքսիմի հրապարակում տեղի ունեցած ամենամյա ցույցը բիրտ միջոցներով ցրելու հետևանքով ԱԶԿ հեղինակությունը զգալի վնաս կրեց: Մայիսի 8-ին Գյուլը ստորագրեց մեկ այլ՝ Քրեական օրենսգրքի փոփոխության փաթեթը, որով վերաշարադրվում էր տխրահռչակ 301-րդ հոդվածը:

2009թ. մարտի 29-ի ՏԻՄ հերթական ընտրություններից հետո Էրդողանի կառավարության կազմում փոփոխություններ կատարվեցին՝ նշանակվեց ինը նոր նախարար: 2009թ. մայիսի 1-ին Էրդողանը հայտարարեց Բյուլենթ Արընչին առաջին փոխվարչապետ նշանակելու մասին. այդ քայլը միանշանակ չմեկնաբանվեց քաղաքական և վերլուծական շրջանակների կողմից: Պահպանողական հայացքներ դավանող և հոետորական ձիրքով Էրդողանին գերազանցող Արընչի նշանակումը փոխվարչապետի պաշտոնում վերլուծաբանները մեկնաբանեցին որպես կուսակցության պահպանողական թևի պահանջների բավարարում և դեպի «Երջանկություն» կուսակցություն նրանց հավանական հոսքը կանխելու քայլ: Ներկուսակցական ազգայնամոլական տրամադրություններն ուղղորդելու նպատակ էր հետապնդում Ջեմիլ Չիչեքի դիրքերի ամրապնդումը, որը միաժամանակ զգաղեցնում էր փոխվարչապետի և պետնախարարի պաշտոնները:

Արտգործնախարար Բաբաջանը, որը շուրջ մեկ տարի բանակցում էր Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ուղղությամբ, վերադարձավ իր հին՝ էկոնոմիկայի նախարարի պաշտոնին, իսկ նոր արտգործնախարար դարձավ Էրդողանի երկարամյա գլխավոր խորհրդական Ահմեթ Դավութօղլուն:

2009թ. հաջորդ կարևոր իրադարձություններից մեկը դեկտեմբերին ՍԴ-ի կողմից քրդական ԴՀԿ գործունեության կասեցումն էր: ՍԴ այդ որոշումը քրդաբնակ բնակավայրերում առաջ բերեց դժգոհության մեծ ալիք, տեղի ունեցան բախումներ, իրականացվեցին ձերբակալություններ: Սակայն, ինչպես նախորդ դեպքերում, այս անգամ ևս փակված կուսակցության անդամներն արագ հիմնադրեցին հերթական քաղաքական կուսակցությունը՝ «Խաղաղություն և ժողովրդավարություն» անվամբ (ԽԺԿ): Անկախ պատգամավոր Ուֆուք Ուրասը միացավ նորաստեղծ կուսակցությանը, և ստեղծվեց 20 պատգամավորից բաղկացած խմբակցություն:

2010թ. հունվարի 20-ին «Թարաֆ» օրաթերթում տպագրվեց հոդված «Մեծ մուրճ» օպերացիայի մասին, որը բացահայտեց զինվորականների կողմից 2003թ. ծրագրված ռազմական հեղաշրջման պլանները: Այդ աղմկոտ բացահայտումը երկրորդն էր 2008թ. մարտին բացահայտված «Էրգենեքոնի» գործից հետո: Երկու դեպքում էլ ներգրավված էին բարձրաստիճան զինվորականներ, որոնք էլ ավելի հանրային հնչեղություն հաղորդեցին այդ դեպքերին: Ըստ «Թարաֆ»-ում հայտնված տեղեկատվության՝ զինվորականները նախատեսում էին հատուկ նշանակության գործողություն իրականացնել ԱԶԿ-ի դեմ՝ երկրում քաոսային ու անվերահսկելի իրավիճակ ստեղծելով, հանրային ընդվզումներ կազմակերպելով:

2010թ. փետրվարի 23-ին և 26-ին Թուրքիայի տարբեր քաղաքներում տեղի ունեցան մոտ 70 բարձրաստիճան գործող և պաշտոնաթող զինվորականների ձերբակալություններ, որոնց շարքում էին Թուրքիայի ՀՈՒ ռազմածովային և ռազմաօդային ուժերի նախկին գլխավոր հրամանատարներ Օ. Օրնեքը և Ի. Ֆըրթընան, Առաջին ցամաքային զորքերի նախկին հրամանատար, բանակի գեներալ Է. Սայգունը, մի շարք այլ գեներալներ, ծովակալներ, որոնց ներկայացված մեղադրանքում նշվում էր նրանց կապն ահաբեկչության հետ, նրանք մեղավոր էին ճանաչվում 2003թ. ռազմական հեղաշրջման փորձի կազմակերպման համար: «Մեծ մուրճի» գործով մինչև տարեվերջ ձերբակալվեց մոտ 200 զինվորական, որոնց դեմ դատավարությունը սկսվեց 2010թ. դեկտեմբերի 16-ին: Պետական մեղադրող կողմն ամբաստանյալների համար պահանջում էր մինչև 20 տարի ազատազրկում:

2010թ. կարևոր իրադարձություններից էր իշխանափոխությունը ՀԺԿ-ում: Դենիզ Բայքալի մասնակցությամբ ինտիմ բնույթի սկանդալային տեսաերիզի շուրջ ծավալված հասարակական-քաղաքական ճնշումների ներքո մայիսի 10-ին նա հրաժարական տվեց կուսակցության ղեկավարի պաշտոնից: 12 օր անց Անկարայում տեղի ունեցավ կուսակցության 33-րդ արտահերթ համագումարը, որտեղ կուսակցության ղեկավար ընտրվեց ծագումով դերսիմցի ալևիական ընտանիքի զավակ, մասնագիտությամբ հաշվապահ 62-ամյա Քեմալ Քըլըչդարօղլուն[32]: Կուսակցության նոր ղեկավարը քաղաքական հայացքներով, արդարության և կոռուպցիայի դեմ համառ պայքարի իր վճռականությամբ, ինչպես նաև պահվածքով ու հագուստի ոճով ցանկանում էր նմանվել Թուրքիայի նախկին վարչապետ և ՀԺԿ նախկին առաջնորդ Բյուլենթ Էջևիթին:

9. 2010թ. սեպտեմբերի 12-ի սահմանադրական հանրաքվեն

2010թ. սեպտեմբերի 12-ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն Թուրքիայի ներքաղաքական ամենակարևոր իրադարձությունն էր: Այն փոփոխությունները, որոնք ներկայացվեցին հանրաքվեի, տարբերվում էին մինչ այդ 16 անգամ կատարված սահմանադրական փոփոխություններից: Այս անգամ հանրաքվեի էին դրվել Թուրքիայում ՀՈՒ և դատական համակարգի լիազորությունների ու նրանց կողմից

32 Կուսակցության ղեկավարի պաշտոնում ընտրվելուց հետո մամուլում հայտնվեցին տեղեկություններ, համաձայն որոնց՝ Քըլըչդարօղլուի մայրը՝ եմուշը, ունի հայկական ծագում: Քըլըչդարօղլուն ոչ հաստատեց, ոչ էլ հերքեց այս տեղեկությունը՝ բավարարվելով խուսափողական պատասխանով:

ներքաղաքական գործընթացներին մասնակցության սահմանափակման, ինչպես նաև քաղաքացիների սոցիալ-տնտեսական իրավունքների ու ազատությունների ընդլայնման հարցերը: Հատուկ կարևորություն էր ներկայացնում դատական իշխանության մարմինների ձևավորման կարգի փոփոխությունը: Ներկայացված փոփոխությունների համաձայն՝ սահմանադրական դատարանի անդամների թիվը 11-ից հասցվում է 17-ի, իսկ դատավորների և դատախազների բարձրագույն խորհրդի անդամների թիվը՝ 7-ից 22-ի: Փոփոխությունների փաթեթի համաձայն՝ վերացվում էր նաև սահմանադրության այն հոդվածը, որն իրավական պաշտպանություն և անձեռնմխելիություն էր ապահովում ռազմական հեղաշրջման կազմակերպիչներին: Մյուս կարևոր փոփոխությունը բարձրագույն զինվորականներին և դատական պաշտոնյաներին որպես մեղադրյալ ներգրավելու իրավունքի ամրագրումն էր:

Սեպտեմբերի 12-ին սահմանադրական փոփոխություններին կողմ քվեարկեց հանրաքվեին մասնակցած Թուրքիայի քաղաքացիների 58%-ը: Թուրքիայի հանրապետական պատմության ընթացքում վեցերորդ, իսկ ԱԶԿ կառավարման շրջանում՝ երկրորդ հանրաքվեի արդյունքները ցույց տվեցին, որ ԱԶԿ-ն մտադիր էր կազմաքանդել տասնամյակներ շարունակվող քեմալական քաղաքական-գաղափարախոսական հարաբերությունների հիմքերը: Քվեարկության արդյունքում ԶՈւ և դատական իշխանության սահմանադրական լիազորությունների սահմանափակմամբ ԱԶԿ-ն ստացավ գրեթե անսահմանափակ իշխանություն:

Թեև քվեարկության ներկայացված սահմանադրական փոփոխությունների փաթեթը հաստատվեց, սակայն հանրաքվեին նախորդող ժամանակաշրջանում ՀԺԿ և քրդական ԽԺԿ դիրքորոշումը որոշակի խնդիրներ հարուցեց ԱԶԿ-ի համար: ՀԺԿ նոր նախագահ Քեմալ Քըլըչդարօղլուն հանդես էր գալիս հանրաքվեում ներառված հոդվածների քննադատությամբ՝ շեշտելով, որ դրանց հաստատումով ԱԶԿ-ն կստանա անսահմանափակ իշխանություն, և երկրի աշխարհիկ-հանրապետական կարգերը լրջորեն կխաթարվեն: Բացի այդ՝ Ք. Քըլըչդարօղլուի համար հանրաքվեին նախորդող քարոզարշավն առաջինն էր կուսակցության ղեկավարի նոր կարգավիճակում, և տարբեր գնահատականներով՝ նա բավական հաջող քարոզարշավ իրականացրեց:

Քրդական կուսակցությունը բոյկոտեց հանրաքվեն, քանի որ փոփոխությունների փաթեթում ներգրավված չէին ազգային փոքրամասնությունների իրավունքների խնդիրները: ԽԺԿ նման դիրքորոշման պատճառով քրդաբնակ նահանգներում գրանցվեց քվեարկության մասնակցության ցածր մակարդակ:

2010թ. հանրաքվեում ստացած վստահության քվեն նպաստեց, որ Էրդողանի քաղաքական վարքագծում ի հայտ գան փոփոխություններ: Դատաիրավական համակարգի թուլացման, զինվորականության դերակատարման նվազեցման և ընդդիմության նկատելի թուլության պայմաններում Էրդողանի կառավարման գործելակերպը ձեռք բերեց բացահայտ ավտորիտար միտումներ:

10. Քաղաքական համակարգի հիմնախնդիրները և արդիականացման հեռանկարները

2011թ. հունիսի 12-ին Թուրքիայում տեղի ունեցան հերթական խորհրդարանական ընտրությունները: Բազմակուսակցական համակարգի հաստատումից հետո (1946թ.) այդ խորհրդարանական ընտրությունները 17-րդն էին: Ընտրություններն առանձնահատուկ էին մի շարք առումներով: 1982թ. սահմանադրության ընդունումից և 1983թ. առաջին խորհրդարանական ընտրություններից հետո, առաջին անգամ, դրանք ոչ թե արտահերթ էին, այլ հերթական:

Երկրորդ առանձնահատկությունն այն էր, որ 1946 թվականից ի վեր, երբ Թուրքիան անցավ բազմակուսակցական համակարգի, միայն ժողովրդավարական կուսակցությանն է հաջողվել 10 տարի անընդմեջ կառավարել երկիրը: Մինչև ընտրություններն ԱԶԿ-ն Թուրքիան ղեկավարել էր 8,5 տարի և կրկին հաղթելով ընտրություններում՝ ձևավորեց արդեն 4-րդ կառավարությունը՝ գործնականում ստանալով ևս 4 տարի պաշտոնավարելու իրավունք: Այդպիսով, ԱԶԿ-ն հավակնում էր դառնալ Թուրքիայում բազմակուսակցական համակարգի հիմնադրումից ի վեր ամենաերկար կառավարած քաղաքական ուժը:

Երրորդ առանձնահատկությունն այն էր, որ ընդդիմադիր կուսակցություններն ընտրություններին մասնակցեցին վերիմաստավորված մարտավարությամբ: Խոսքը հատկապես ընդդիմադիր ՀԺԿ-ի մասին է, որի ղեկավարության փոփոխությունը 2010թ. մայիսին ստիպեց վերանայել 1990-ական թվականներից ճգնաժամ ապրող կուսակցության ղեկավարման սկզբունքները: Կուսակցության ղեկավար Ք. Քըլըչդարօղլուի ներկայացրած նախընտրական ցուցակում ընդգրկվեցին նոր անուններ, ավելին՝ ՀԺԿ 101 գործող պատգամավորներից միայն 23-ի թեկնածություններն էին կրկին ներկայացվել: Այնուհանդերձ, ընտրություններում ցածր վստահության քվե ստանալու պարագայում Քըլըչդարօղլուի հեղինակությունը կարող էր խաթարվել, վերջին ամիսների ներկուսակցական անառողջ պառակտումները կարող էին կրկնվել, քանի որ կուսակցությունը բաժանված էր երեք թևի՝ գործող նախագահի, կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Օնդեր Սավի և կուսակցության նախկին ղեկավար Դենիզ Բայքալի միջև: Նույնատիպ դժվարությունների միջով էր անցնում նաև «Ազգայնական շարժում» կուսակցությունը, որի ղեկավարության վրա ևս առկա էր աննախադեպ ճնշում՝ ազգայնամոլության ու ատելության վրա հիմնված քաղաքական ծրագիրը վերանայելու պահանջով:

ԱԶԿ-ն ևս ընտրություններին մասնակցեց թեկնածուների թարմացված ցուցակով. նոր ցուցակում պատգամավորության թեկնածուների ընդգրկման սկզբունքը մեկն էր՝ հավատարմությունն Էրդողանին ու նրա որոշումների անվերապահ իրականացումը, որոնց հավանական բացակայությամբ է պայմանավորված ԱԶԿ խորհրդարանական խմբակցության կազմում գործող 164 պատգամավորների թեկնածությունների չընդգրկումն ընտրացուցակում: Վերընտրվելու հնարավորությունից զրկվածների այս պատկառելի թիվը ցույց է տալիս, որ ԱԶԿ շարքերում առկա է ընդդիմադիրների մեծաթիվ բանակ, և այդ պատճառով էր, որ ԱԶԿ-ի համար դժվարացել էր ներքաղաքական ու օրենսդրական բարեփոխումների իրականացումը:

Քրդական խնդիրը շարունակում էր մնալ Թուրքիայի քաղաքական կյանքի ամենակարևոր հարցը, և այս ընտրություններում այդ գործոնն առավել քան երբևէ զգալի էր: Էրդողանը փորձում էր ցույց տալ, որ տիրապետում էր իրավիճակին, և քրդերը միայն նրա հետ են կապում քրդական հարցի լուծման հավանականությունը: Եվ իրոք, միայն ԱԶԿ թեկնածուներն էին քրդական խնդիրն անվանում «քրդական»՝ ի տարբերություն ՀԺԿ-ի ու ԱՇԿ-ի կողմից տրվող «հարավարևելյան խնդիր» բնութագրմանը: Կրկնելով 2007թ. կիրառած անկախ թեկնածուների խորհրդարան մտնելու հաջողված մեթոդը՝ խորհրդարանում աճեց քուրդ պատգամավորների թվաքանակը՝ հասնելով 35-ի, որն ազդեց քրդական հարցի ներկայացվածության վրա:

Այս ընտրությունները բացառիկ էին նաև այն առումով, որ ընտրությունների նախօրեին հայտնի դարձավ ավելի քան վեց տասնյակ լրագրողների ազատազրկման մասին: Վերջին 4 տարիների ընթացքում Էրդողանը բազմիցս սուր արտահայտվել էր մամուլում իր հասցեին հնչող քննադատություններին, հարուցվել էին բազմաթիվ քրեական գործեր լրագրողների կամ ՋԼՄ-ի դեմ: Էրդողանն անհանդուրժող էր իր հասցեին հնչող քննադատությունների հարցում, և լրագրողների կողմից նրա հասցեին ասված անգամ կառուցողական քննադատությունները նա տեղափոխում էր դատական ատյան՝ պահանջելով կամ բարոյական փոխհատուցում, կամ ազատազրկում: Ազատազրկված լրագրողների շարքում մեծ թիվ էին կազմում նաև «Էրգենեքոնի» և «Մեծ մուրճի» գործով անցնող լրագրողները, որոնք մեղադրվում էին գաղտնի տեղեկությունների տիրապետելու և անօրինական կազմակերպությունների հետ համագործակցելու համար:

ԱԶԿ գերնպատակն էր խորհրդարանում առնվազն 367 մանդատ ստանալը, որը թույլ կտար գրեթե անարգել կերպով իրականացնել սահմանադրության փոփոխության պլանները: Դրանով էր պայմանավորված ընդդիմադիր ԱՇԿ հեղինակության խաթարմանն ուղղված ԱԶԿ քննադատությունը: 2010թ. սահմանադրական բարեփոխման հանրաքվեի ընթացքում ԱԶԿ ստացած 58% աջակցության քվեն վստահություն էր ներշնչել Էրդողանին, որ եթե հնարավոր լինի օգտագործել 2010թ. մայիսին ՀԺԿ ղեկավարության սկանդալային փոփոխությունից դեռևս լիովին ուշքի չեկած կուսակցական պառակտման գործոնը և ԱՇԿ-ն զրկել 10% ընտրական շեմը հաղթահարելու հնարավորությունից, [illegible] 367-1 մանդատ սցենարի հավանականությունը գրեթե [illegible]

Մյուս կողմից, եթե ԱԶԿ-ն խորհրդարանում ստանար 330 կամ ավելի քիչ մանդատ, ապա Էրդողանի քաղաքական հավակնությունները դժվարությամբ կարող էին առաջ մղվել: Այդ էր պատճառը, որ Էրդողանի կիրառած քաղաքական մեթոդները կանգ չէին առնում ոչ մի ընտրության առջև:

Հունիսի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած հերթական խորհրդարանական ընտրություններում գրանցված անակնկալները «թույլատրելիության սահմաններում» էին: Ինչպես և կանխատեսվում էր, ընտրություններում կրկին հաղթեց ԱԶԿ-ն, սակայն խորհրդարանում կորցրեց 15 էական մանդատներ: Մեծամասնության համար անհրաժեշտ նվազագույն շեմը՝ 276 մանդատը, հնարավոր եղավ հեշտությամբ հաղթահարել, սակայն մյուս երկու առավել կարևոր շեմերը (330 և 367 մանդատներ) հաղթահարել չհաջողվեց: 330 մանդատի առկայության դեպքում ԱԶԿ-ն հնարավորություն կունենար խորհրդարանում հավանության արժանացած սահմանադրական փոփոխության ցանկացած նախագիծ դնելու հանրաքվեի՝ առանց մյուս քաղաքական ուժերի աջակցության, իսկ 367 մանդատը հնարավորություն կտար հենց խորհրդարանում ընդունել սահմանադրական փոփոխություններ:

Խորհրդարանական ընտրություններն աչքի ընկան նաև նրանով, որ հանրապետության հիմնադրումից ի վեր աննախադեպ թվով կին պատգամավորներ մուտք գործեցին խորհրդարան՝ կազմելով պատգամավորների ընդհանուր թվի 14%-ը: Հարկ է հիշել, որ 1935թ., երբ կանայք առաջին անգամ օգտվեցին ընտրվելու իրավունքից, խորհրդարանում հայտնվեց 14 կին պատգամավոր: Թվում էր՝ Աթաթյուրքի մշակութային բարեփոխումների ազդեցության ներքո կանանց թիվը հաջորդ գումարման խորհրդարաններում պետք է անշեղորեն ավելանար, սակայն միայն 67 տարի անց՝ 2002թ. ընտրություններում հնարավոր եղավ հաղթահարել 1935թ. ցուցանիշը, և խորհրդարան ընտրվեց 24 կին պատգամավոր (4,2%), 2007թ. այդ թիվը հասավ 50-ի (9,1%): Նոր խորհրդարանում 78 կանանց ներկայությունը թեև առաջընթաց է նախորդ ցուցանիշների համեմատությամբ, սակայն կին ակտիվիստները դժգոհ են այդ ցուցանիշից և նպատակ ունեն 2015թ. ընտրություններում այն հասցնել 25%-ի:

2011թ. խորհրդարանական ընտրություններին հաջորդած կարևոր ներքաղաքական գործընթացներից էր Թուրքիայի բարձրագույն զինվորականության և ԱԶԿ-ի միջև հերթական լարվածությունը: Հուլիսի 29-ին հրաժարական տվեց Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Ըշըք Քոշաները: Բարձրագույն զինվորական պաշտոնյայի հրաժարականի վերջին դեպքը տեղի էր ունեցել 1990թ. նոյեմբերին: Քոշաներին հաջորդեցին ցամաքային, ռազմաօդային ու ռազմածովային ուժերի հրամանատարների հրաժարականների դիմումները: Թեև որպես հրաժարականների պատճառ մատնանշվում էր ընթացող աղմկահարույց դատավարություններում բարձրագույն և միջին սպայական կազմի նկատմամբ ցուցաբերվող անհիրավաչափ ու անպատշաճ վերաբերմունքը, սակայն իրական պատճառներն ավելի խորքային էին:

Հրաժարական ներկայացրած բարձրաստիճան զինվորականներն օգոստոսի 1-4-ն անցկացված Բարձրագույն ռազմական խորհրդի նիստի ընթացքում փոխարինվեցին նորերով, իսկ գլխավոր շտաբի պետ նշանակվեց Նեջդեթ Օզելը, որը մինչև հուլիսի 29-ը ժանդարմերիայի զորքերի հրամանատարն էր: Իրադարձությունների նման ընթացքը մի շարք կասկածներ առաջ բերեց Թուրքիայի ընդդիմության և քաղաքագիտական-վերլուծական շրջանակներում: Ընդդիմությունը կառավարությանը մեղադրեց քաղաքական ճգնաժամ հրահրելու և ոչ թափանցիկ գործելաոճի համար, իսկ վերլուծական շրջանակները շտապեցին կարծիք հայտնել, որ Էրդողանը վերջնականապես իրեն ենթարկեց տասնամյակներ շարունակ քաղաքացիական իշխանություններին չենթարկվող զինվորականներին:

Վերջին տարիների ընթացքում բարձրաստիճան զինվորականների նկատմամբ սկիզբ առած դատավարությունների շղթան, որոնք կապված էին աղմկահարույց «Էրգենեքոն» և «Մեծ մուրճ» գործընթացների հետ, զգալիորեն ազդեցին ՀՈՒ հեղինակության վրա: Վերջինիս ղեկավարները քաջ գիտակցում էին, որ հեղինակության նման անկումը կարող է բացասական հետևանքներ ունենալ նաև երկրում զինվորականության մասնագիտական շահերի վրա: Թերևս, այդ խնդիրը հերթական անգամ բարձրաձայնելուն էին ուղղված ՀՈՒ ԳՇ նախկին պետ Իլքեր Բաշբուղի կողմից 2011թ. հունիսի 17-ին արված կարևոր դիտարկումները, որոնք արտացոլում են ՀՈՒ-ում տեղի ունեցող խորքային գործընթացները

և ակնարկում գալիք հրաժարականների անխուսափելիության մասին: Նրա առաջ քաշած դրույթների հիմքում զինվորականության արհեստավարժության հիմքերի խաթարման անթույլատրելիությունն է և զինվորականության նկատմամբ «առարկայական քաղաքացիական վերահսկողության համադրումը»: Ուշագրավ է, որ Բաշբուղը՝ որպես ԳՇ նախկին պետ, առաջին անգամ խոսում էր պաշտպանական դիրքերից և ակնարկում, որ «միջամտությունը բանակի գործերին խարխլում է զինվորականների արհեստավարժությունը»: Նա նաև նշում էր, որ բանակին հարկավոր է ինքնավարություն շնորհել, ինչը կհանգեցնի քաղաքականապես չեզոք ու քաղաքացիական իշխանություններին ենթակա արհեստավարժ բանակի կառուցմանը: Այս ուշագրավ ելույթը ցույց է տալիս, որ բանակի ղեկավարությունն ունի որոշակի պատրաստակամություն՝ աջակցելու իշխանություններին ապագա օրենսդրական բարեփոխումների հարցում՝ միևնույն ժամանակ ձգտելով սեփական ձեռքերով գծել գործունեության նախապատվելի սահմանները:

ԵՄ պահանջներից մեկի համաձայն՝ ՀՈՒ ԳՇ պետը պետք է ենթարկվի պաշտպանության նախարարին, ինչին հասկանալիորեն ընդդիմանում են զինվորականության ներկայացուցիչները: Հարկ է նշել, որ 2010թ. փետրվարին Թուրքիայի կառավարությունը վերացրեց «Հանրային կարգի և անվտանգության համագործակցության արձանագրությունը» (EMASYA), որը ՀՈՒ ղեկավարությունը կազմել էր 1997թ. փետրվարյան «թավշյա հեղաշրջումից» հետո՝ ներքաղաքական սպառնալիքները հսկողության տակ պահելու նպատակով: Այդ փաստաթուղթը ՀՈՒ ղեկավարության համար ծառայում էր որպես միջոց՝ քաղաքական գործընթացներում ունեցած միջամտությունն օրինականացնելու և քաղաքացիական անձանց հեռախոսները գաղտնալսելու համար: Այնուհանդերձ, այդ արձանագրության վերացումը ներքաղաքական գործընթացներին ՀՈՒ մասնակցության հնարավոր խողովակներից ընդամենը մեկն էր, քանի որ գոյություն ունեն մի շարք այլ ենթաօրենսդրական հնարավորություններ, որոնցից կառչելով՝ բանակը հնարավորություն ունի լեգիտիմացնել իր մասնակցությունը ներքաղաքական գործընթացներին, օրինակ՝ 1961թ. ընդունված Թուրքիայի զինված ուժերի «Ներքին ծառայության մասին օրենքի» 35-րդ, «Ներքին ծառայության ուղեցույցի» 85/1 հոդվածները: Այս

հոդվածները հստակորեն նշում են, որ Թուրքիայի ՀՈՒ պարտականությունն է պաշտպանել հայրենիքը և հանրապետությունը, անհրաժեշտության դեպքում անգամ զենքով՝ ընդդեմ ներքին և արտաքին սպառնալիքների:

2011թ. ընտրություններից հետո խորհրդարանի խոսնակի նախագահությամբ ձևավորվեց Սահմանադրության համաձայնության հանձնաժողով, որի անդամ դարձան խորհրդարանական 4 կուսակցություններից երեքական անդամներ: Հանձնաժողովը նախ հանդիպումներ կազմակերպեց երկրի տարբեր շրջաններում, լսեց հանրության առաջարկները նոր սահմանադրության վերաբերյալ, դրանք հավաքվեցին, մշակվեցին, և հանձնաժողովը ձեռնամուխ եղավ նոր սահմանադրության մշակման աշխատանքներին: Հետագա ամիսների ընթացքում հանձնաժողովի անդամ կուսակցությունների կողմից միմյանց հասցեին ինչեցին մեղադրանքներ, որոնց պատճառով գործընթացն էապես դանդաղել է: Հանձնաժողովին ներկայացված վերջնաժամկետները երկարացվել են առնվազն 4 անգամ, թեև հարկ է փաստել, որ աշխարհիկության, կրթության, պետական կառուցվածքի, կառավարման համակարգի, ապակենտրոնացման խնդիրների և մի շարք առանցքային դրույթների շուրջ հակասություններն այնքան խորն են, որ վերջնաժամկետներով հնարավոր չէ հարցերը շուտափույթ լուծել: Մյուս կողմից էլ՝ իշխանությունները կոչված են ապահովելու համապատասխան մթնոլորտ հանձնաժողովի աշխատանքների բարեհաջող ընթացքի համար:

Նոր սահմանադրության հետ Թուրքիայում մեծ հույսեր են կապում, քանզի գործընթացների մասնակիցների և հասարակ քաղաքացիների պատկերացմամբ՝ նոր սահմանադրությունը կվերացնի գործող մի շարք նորմեր, դրույթներ ու ազատականության սահմանափակումներ (խոսքի և դավանանքի ազատություն, մշակութային, ինքնության և լեզվի ազատության խնդիրներ և այլն): Տասնամյակներ շարունակ կուտակված խնդիրների լուծումը բացառապես նոր սահմանադրության հետ կապելը ևս իրատեսական չէ:

11. Արտաքին քաղաքականությունը

1996-1997թթ. կոալիցիոն կառավարությունում վարչապետ Էրբաքանը և փոխվարչապետ Չիլերը բաժանեցին դերերն արտաքին քաղաքականության իրականացման հարցում. Չիլերը ստանձնեց արևմտյան ուղղության պատասխանատվությունը, իսկ վարչապետը՝ իսլամական երկրների հետ համագործակցությունը: Մինչև իշխանության գալը, «Բարօրություն» կուսակցությունը դեմ էր Իսրայելի հետ թուրքական իշխանությունների ցանկացած շփումներին, ուստի, թվում էր, Էրբաքանի ընդգծված հակահրեական նախընտրական նախագծերն իրագործելու աննախադեպ հնարավորություն է ընձեռվել: Իրականում, թուրք-իսրայելական հարաբերություններում նոր մակարդակի մեկնարկը զարմանալիորեն համարվում է հենց Էրբաքանի կառավարման ժամանակահատվածը: Մի շարք պայմանավորվածություններից բացի, ուշագրավ էր Իսրայելի հետ կնքված 500 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ռազմատեխնիկայի ձեռքբերման և իսրայելյան մասնագետների կողմից Ֆ-4 մակնիշի 54 ռազմական ինքնաթիռների արդիականացման պայմանագրերի ստորագրումը:

1996թ. օգոստոսին Էրբաքանն սկսեց պաշտոնական այցեր կատարել իսլամական երկրներ՝ քաջ գիտակցելով, որ դրանք թե՛ ՀՈՒ ղեկավարության, թե՛ ընդդիմության շրջանում դրական արձագանք չեն ունենա: Նա կարճ ժամանակահատվածում հասցրեց այցելել բավական մեծ թվով երկրներ. օգոստոսին՝ Իրան, Պակիստան, Սինգապուր, Մալայզիա, Ինդոնեզիա, հոկտեմբերին՝ Լիբիա, Նիգերիա և Եգիպտոս: Այցելությունների ընթացքում կնքված առևտրատնտեսական պայմանագրերն ընդլայնեցին Թուրքիայի արտահանման շուկան՝ միաժամանակ նոր ներդրումներ բերելով երկիր:

1996թ. հոկտեմբերի 6-ին Էրբաքանն այցելեց Լիբիա: Տրիպոլիում Քադաֆիի հետ հանդիպման ժամանակ Էրբաքանը դատապարտեց Լիբիայի դեմ ՄԱԿ պատժամիջոցները, այնուհանդերձ, այցելությունը նշանավորվեց նրանով, որ երկու երկրները հազիվ խուսափեցին դիվանագիտական սկանդալից: Հանդիպման ընթացքում, որն ուղիղ կապով հեռարձակվում էր թուրքական մի հեռուստաընկերությամբ, Քադաֆին Թուրքիայի արտաքին քաղաքականությունն «ալֆայից օմեգա խեղաթյուրանք» համարեց, ինչպես նաև մեղադրեց արաբների հաշվին ամերիկամետ և իսրայելամետ քաղաքականություն իրագործելու համար՝ միաժամանակ պնդելով, որ «քուրդ ազգը պետք է անկախություն ստանա»: Թեև այցելության ընթացքում կնքվեցին տնտեսական բնույթի մի շարք շահավետ պայմանագրեր, այնուհանդերձ, «բռնակալ ահաբեկչի» (ինչպես թուրքական ընդդիմության մի շարք անդամներ արտահայտվում էին Քադաֆիի հասցեին) կողմից քրդերի կապակցությամբ արված հայտարարությունը մթագնեց այցելության արդյունքները: Ըստ վերլուծաբանների՝ Լիբիա այցելության ընթացքում տեղի ունեցածն Էրբաքանի վարչապետության ընթացքում նրա արտաքին քաղաքական միակ սայթաքումն էր:

Իսլամադավան երկրներ կատարած նրա այցելությունների հիմնական նպատակն իսլամական առաջատար երկրների համագործակցության առանցքի ստեղծումն էր: 1996թ. հոկտեմբերի 22-ին Եգիպտոսի, Բանգլադեշի, Ինդոնեզիայի, Իրանի, Մալայզիայի, Նիգերիայի, Պակիստանի և Թուրքիայի արտգործնախարարները Ստամբուլում ստորագրեցին հուշագիր «Դ-8»-ի հիմնադրման վերաբերյալ: 1997թ. հունվարին տեղի ունեցավ կազմակերպության հիմնադիր համագումարը, որն Էրբաքանի արտահայտմամբ՝ «համաշխարհային պատմության մեջ դարակազմիկ իրադարձություն էր»: Այս կազմակերպության ռազմավարությունը հստակ էր սահմանված. «ներգրավել Հարավարևելյան Ասիայի հզոր տնտեսություններին և իրագործել առևտրական, արդյունաբերական ու ֆինանսական նախագծեր», ինչին կնպաստեին այդ պետությունների հսկայական մարդկային ռեսուրսները (մոտ 800 մլն): Միևնույն ժամանակ, ակնհայտ էր այդ կազմակերպության մեջ «առաջին ջութակի դեր» խաղալու Թուրքիայի անթաքույց ցանկությունը: Սակայն կազմակերպության առջև ծառացած խնդիրների շարքում առաջին հերթին առանձնանում էին աշխարհագրական հեռավորության, այդ երկրներում փոփոխվող վարչակարգերի և ներքաղաքական անկայունության գործոնները:

Էրբաքանի նախընտրական քարոզարշավը և վարչապետության ժամանակահատվածը հստակորեն տարբերվեցին, քանզի Էրբաքանը

գիտակցեց, որ իրական արտաքին քաղաքական ուղեգիծը թելադրում են ՋՈւ-ն և արտգործնախարարության ընտրախավը, որի դիրքորոշումները քննության ենթակա չեն: Ուստի, եթե որոշ վերապահումներով կարելի է փաստել, որ Էրբաքանը հարմարվողական և իրատես վարչապետ էր, ապա նա պարզապես ստիպված էր ենթարկվել խաղի գործող կանոններին, որոնք սահմանել էին վերոհիշյալ վերնախավը, ընդդիմությունը և ոչ պակաս ազդեցիկ հակաիսլամական ՋԼՄ-ը, որոնք մշտապես քննադատում էին Էրբաքանին՝ անկախ նախաձեռնության տեսակից և արդյունքներից: Հրեա մի դիվանագետ նշում է, որ դժվար թե Էրբաքանին կարելի է անվանել իրատես, երբ ՋՈւ-ն զենքն ուղղում է նրա գլխին և թելադրում հետագա քայլերի հաջորդականությունը: Խոսելով Էրբաքանի երկար փայփայած «իսլամական համերաշխություն» գաղափարի մասին՝ կարող ենք փաստել, որ նա ևս քաջ գիտակցում էր, որ եթե անգամ նրան նման հնարավորություն տրվեր, այն իրագործելը մի շարք առումներով անհնար կլիներ: Ոմանք բացառում էին անգամ դրա իրականացման մեխանիզմների և ուղիների գոյությունը՝ մասնավորապես ընդգծելով չափազանց ընդգրկուն դաշնակցային պարտավորությունների հանգամանքը: Թուրքիան տնտեսական, քաղաքական և ռազմական ոլորտներում սերտորեն կապված էր արևմտյան դաշնակիցների հետ, ուստի, անիրատեսական էր կտրուկ վերանայել տասնամյակներ շարունակվող արտաքին քաղաքական ուղղությունները:

Թուրքիա-Եվրոպական միություն հարաբերությունները: 1996թ. հունվարի 1-ին Թուրքիան դարձավ ԵՄ մաքսային միության անդամ, որը կարևոր քայլ էր Եվրոպայի հետ ինտեգրման տասնամյակներ շարունակվող գործընթացում: 1997թ. մարտի 7-ին Բրյուսելում կայացած ԵՄ համաժողովի ընթացքում, անդրադառնալով Թուրքիայի՝ այդ կառույցին անդամակցության հարցին, Բելգիայի, Գերմանիայի, Իռլանդիայի, Լյուքսեմբուրգի և Իսպանիայի քրիստոնեա-դեմոկրատական կառավարությունները նշեցին, որ քանի դեռ այդ երկրում ոտնահարվում են մի շարք տարրական քաղաքական սկզբունքներ, ԵՄ-ին անդամակցելու մասին ակնարկներ անգամ չեն կարող լինել: Այս տրամադրությունը գերիշխեց նաև 1997թ. դեկտեմբերին Լյուքսեմբուրգում անցկացված ԵՄ գագաթաժողովում, որտեղ Թուրքիայի անդամակցության քննարկման հարցը հետաձգվեց անհայտ ժամանակով՝ պատճառները հիմնավորելով հետևյալ մի քանի կետերով. բարեփոխումների դանդաղ ընթացք, Կիպրոսի չլուծված հիմնահարց, քաղաքական գործընթացներին ՋՈւ ակտիվ մասնակցություն, մարդու իրավունքների պաշտպանության անբավարար մակարդակ: ԵՄ անդամ երկրների՝ Անկարայում գործող դեսպանները բազմիցս կրկնում էին ԱԱԽ լիազորությունների սահմանափակման անհրաժեշտության մասին՝ փաստարկելով, որ դա և հակաժողովրդավարական է, և անվստահելիության մթնոլորտ թելադրող, ավելին, թուրքական ԱԱԽ-ն, իր լայն լիազորություններով, նմանը չուներ ԵՄ անդամ և անդամության թեկնածու ոչ մի երկրում:

Այդուհանդերձ, 2 տարի անց ԵՄ-ը փոխեց իր դիրքորոշումը՝ հաշվի առնելով Թուրքիայում տեղի ունեցած մի շարք բարեփոխումների ընթացքը: 1999թ. դեկտեմբերի 10-11-ին Հելսինկիում անցկացված Եվրոպական խորհրդի նիստում Թուրքիային շնորհվեց ԵՄ թեկնածու երկրի կարգավիճակ: Թուրքիայի իշխանությունները պարտավորվեցին իրագործել մի շարք կառուցվածքային բարեփոխումներ, որպեսզի հնարավոր լիներ սկսել անդամակցության բանակցությունները:

Արդեն նշվեց, որ 2002թ. ընտրություններում հաղթանակից հետո ԱԶԿ ղեկավարությունն առավել խորացրեց ԵՄ-ի հետ բազմամակարդակ համագործակցությունը, որի տրամաբանական ավարտը 2004թ. դեկտեմբերին Եվրոպական խորհրդի կայացրած որոշումն էր՝ 2005թ. հոկտեմբերի 3-ից մեկնարկել Թուրքիայի հետ անդամակցության բանակցությունները: Բանակցային գործընթացում ԵՄ օրենսդրությունը պայմանականորեն բաժանվում է 35 գլուխների՝ ըստ բնագավառների, որոնցում Թուրքիան պետք է համապատասխանեցներ իր օրենսդրությունը:

ԵՄ-ի հետ բանակցություններ վարելու նպատակով, ԱԳ նախարարից բացի, 2005թ. Թուրքիան նշանակեց գլխավոր բանագնացի, որի պաշտոնը ստանձնեց մինչ այդ էկոնոմիկայի նախարարի պաշտոնը զբաղեցրած Ալի Բաբաջանը, իսկ 2009թ. նրան փոխարինեց Էգեմեն Բաղիշը: 2011թ. հունիսյան ընտրություններից հետո ստեղծվեց առանձին ԵՄ գործերի նախարարություն, որը գլխավորեց Է. Բաղիշը:

ԵՄ-ում Թուրքիայի նկատմամբ դրական փոփոխության պատճառների շարքում հարկ է առանձնացնել 2004թ.ապրիլի 24-ին Կիպրոսի հունական և Թուրքիայի բռնազավթած հյուսիսային թուրքական հատվածներում տեղի ունեցած հանրաքվեի արդյունքները: Հանրաքվեին ներկայացված էր կղզու դաշնային կառուցվածքի միջոցով վերամիավորման հարցը, որը մշակվել էր ՄԱԿ գլխավոր քարտուղար Քոֆի Անանի անմիջական մասնակցությամբ: Հանրաքվեի նախօրեին միջազգային հանրությունը լիահույս էր, որ կղզու երկու հատվածների բնակիչները կգնահատեն պատմական հնարավորությունը և կողմ կքվեարկեն դաշնային կառավարման համակարգին: Դրա շնորհիվ հնարավորություն կստեղծվեր միավորված կառուցվածքով դառնալ ԵՄ անդամ, որը նախատեսված էր իրականացնել հանրաքվեից մեկ շաբաթ անց՝ 2004թ.մայիսի 1-ին: Հանրաքվեի արդյունքներն անակնկալի բերեցին միջնորդներին. կղզու հունական հատվածի մոտ 65 տոկոսը դեմ էր արտահայտվել «Միավորված Կիպրոսի Հանրապետության» ստեղծման պլանին, մինչդեռ թուրքական հատվածի 76 տոկոսը կողմ էր քվեարկել: Թուրքիայի կառավարությունը հանրաքվեի նախապատրաստման ամբողջ ընթացքում իր աջակցությունն էր հայտնել միավորման ուղղությամբ միջնորդների գործադրած ջանքերին և աշխատանքներ տարել կղզու թուրքական հատվածի իշխանությունների հետ: Թեև հանրաքվեն ձախողվեց, սակայն Թուրքիայի իշխանություններին հաջողվեց ցույց տալ, որ այդ ամբողջ ընթացքում նրանք ունեցել են կառուցողական դիրքորոշում և հնարավոր բոլոր միջոցներով աջակցել են գործընթացին:

Թվում էր, թե միջազգային իրադրությունը և Թուրքիայի ներքաղաքական գործընթացները ստեղծել են նպաստավոր մթնոլորտ բանակցությունների ընթացքն արագացնելու և շուտափույթ արդյունք արձանագրելու ուղղությամբ: Իրականում հենց բանակցությունների մեկնարկից հետո պարզ դարձավ, որ առկա են գործընթացն արագացնելու մի շարք խոչընդոտներ: Նախ, 35 գլուխներից ընդամենը 13-ն են բացվել, իսկ մեկը, որն առնչվում է գիտությանը և հետազոտություններին, բացվել էր և հաջողությամբ ավարտվել: 18 գլուխների նկատմամբ Կիպրոսը, Ֆրանսիան և Եվրոպական խորհուրդը քաղաքական վետո են սահմանել: 2006թ. դեկտեմբերին ութ գլուխների արգելանքը Եվրոպական խորհուրդը վերահաստատեց, քանի որ Թուրքիան չէր կատարել Ասոցիացված անդամությամբ սահմանված մաքսային միությանն առնչվող պարտավորությունները: Այդ խնդիրը վերաբերում էր Կիպրոսին. ԵՄ-ը պահանջում էր, որպեսզի Անկարան ԵՄ անդամ Կիպրոսի Հանրապետության առջև բացեր իր օդանավակայաններն ու նավահանգիստները, մինչդեռ Թուրքիան պահանջում էր Հյուսիսային Կիպրոսի տնտեսական ապաշրջափակում: Մնացած երեք գլուխների շուրջ նախատեսվում էր բանակցել գործընթացի ավարտին՝ հաշվի առնելով դրանց բարդ ընթացակարգային բնույթը: Այսպիսով՝ պարզ էր, որ ԵՄ անդամակցության բանակցություններում հիմնական արգելքը շարունակում էր մնալ Թուրքիայի կոշտ դիրքորոշումը Կիպրոսի Հանրապետության հետ հարաբերությունների կարգավորման հարցում: Այդ գործոնին գումարվում են նաև ԵՄ «ծանրքաշայինների» (Գերմանիա և Ֆրանսիա) հետ Թուրքիայի ոչ միանշանակ հարաբերությունները, Կիպրոսի մշտական ընդդիմությունը Թուրքիայի հետ բանակցություններին, ԵՄ հանրային կարծիքի հակաթուրքական տրամադրվածությունը, Թուրքիայի հանրային կարծիքի հակաեվրոպական դրսևորումները և աջակցության համընդհանուր անկումը: 1998 թվականից ի վեր Եվրոպական հանձնաժողովը պատրաստում է ամենամյա զեկույց Թուրքիայի առաջընթացի վերաբերյալ, որը մի շարք չափորոշիչներով որոշում էր Թուրքիայի ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը: 2006-ից ի վեր պատրաստված զեկույցներում փաստվում էր, որ Թուրքիայում ակնհայտորեն դանդաղել էր բարեփոխումների ընթացքը, իսկ մի շարք ոլորտներում անգամ արձանագրվել էր հետընթաց:

ԱՀԿ կառավարման տարիներին Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական միտումները գնահատելիս հարկ է նշել, որ դրանք զգալիորեն պայմանավորված են «Ռազմավարական խորություն» անվանումը կրող գաղափարական և քաղաքական դոկտրինով: Մարմարայի համալսարանի պրոֆեսոր Ահմեթ Դավութօղլուի նույնանուն գիրքը, որը լույս տեսավ 2001թ., նոր խոսք էր Թուրքիայի աշխարհաքաղաքական մտքի զարգացման առումով: Այդ գրքում տեղ գտած ձևակերպումները,

թեզերն ու սկզբունքները կարևոր են հետագա տարիների ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականության ընթացքը և նախաձեռնությունների տրամաբանությունն ամբողջությամբ հասկանալու համար: Գիրքը մոտ 50 անգամ վերահրատարակվել է Թուրքիայում, թարգմանվել մի շարք լեզուներով: Գրքի, հետևաբար նաև տեսության հիմքում ընկած է այն սկզբունքը, որ Թուրքիայի ռազմավարական դիրքը և ընդգրկումը պայմանավորված են նրա աշխարհագրական դիրքով և պատմական դերակատարությամբ: Ուստի, Թուրքիայի պատմական անցյալը և աշխարհագրական ներկան հնարավորություն են տալիս նորովի նայել հարևան երկրներին կամ այն տարածքներին, որոնք երբևէ ընդգրկված են եղել Օսմանյան կայսրությունում: Ըստ հեղինակի՝ Թուրքիան Օսմանյան կայսրության բնական ժառանգն է, որը ժամանակին միավորել էր մուսուլմանական աշխարհը, հետևաբար, ռազմավարական դիրքի խելամիտ օգտագործման շնորհիվ հնարավոր է, որ այն դառնա «մուսուլմանական գերտերություն»: Այն ենթադրում էր նաև վերանայել երկար տարիներ շրջանառվող այն տեսությունը, ըստ որի՝ Թուրքիան կամ կամուրջ էր Արևելքի ու Արևմուտքի միջև, կամ ճակատային երկիր՝ «Սառը պատերազմի» ժամանակ, կամ սովորական մի պետություն՝ իսլամադավան աշխարհի և Արևմուտքի միջև: Կամուրջ-պետության տեսությունը ենթադրում էր կրավորականություն, որը հնարավորություն չէր տալիս հանդես գալ նախաձեռնություններով: Դրա փոխարեն առաջ էր քաշվում Թուրքիայի՝ որպես կենտրոնական կամ առանձնահատուկ պետության տեսությունը: Ա. Դավութօղլուի բնութագրմամբ՝ Թուրքիան հանդես է գալիս մի քանի տարածաշրջանային ինքնություններով, որոնք հնարավոր չէ մեկտեղել: Նրա համոզմամբ՝ «Ազդեցության ոլորտներով Թուրքիան միաժամանակ մերձավորարևելյան, բալկանյան, կովկասյան, միջերկրածովյան, Պարսից ծոցի, կենտրոնասիական, կասպյան և սևծովյան երկիր է, ինչի շնորհիվ կարողանում է տարաշարժեր կատարել միաժամանակ մի քանի տարածաշրջաններում»: Հիմնվելով աշխարհագրական և պատմական «խորությունների վրա»՝ Թուրքիան իր անմիջական տարածաշրջանում ունի պատասխանատվություն և միաժամանակ որոշ իրավունքներ: Այս ամենի հետևանքով Թուրքիան միջազգային հարաբերություններում վերածվում է «կենտրոնական պետության», որը կոչված է բացառելու նրա՝ ծայրամասային պետություն լինելու հավանականությունը: Դավութօղլուն նաև նշում է. «Թուրքիան Բալկանների, Մերձավոր Արևելքի ու Կովկասի էպիկենտրոնն է, Եվրասիայի կենտրոնը և Միջերկրականից դեպի Խաղաղ օվկիանոս ձգվող Ռիմլենդի միջակետն է»:

Ըստ այդ տեսության՝ արտաքին քաղաքականությունը հիմնված է հինգ փոխկապակցված սկզբունքների վրա. ա. ժողովրդավարացում՝ առանց անվտանգության և կայունության խաթարման, բ. լավ հարաբերություններ («զրո խնդիրներ») հարևանների հետ, գ. գերակտիվ, բազմակողմ և փոխլրացնող քաղաքականություն, դ. նոր դիվանագիտական ոճ (ինքնավստահություն), ե. քարացած դիվանագիտությունից անցում դինամիկ նախաձեռնողականության: 2009թ. մայիսի 1-ից դառնալով արտաքին գործերի նախարար՝ Դավութօղլուն հնարավորություն ստացավ անմիջականորեն իրագործել իր մշակած աշխարհաքաղաքական սկզբունքները:

Թուրքիայի արտաքին քաղաքական վերնախավը, փորձառու դիվանագիտական անձնակազմը, որոնք ունեին արտաքին քաղաքականության վերաբերյալ միանգամայն այլ պատկերացումներ, փակ շրջանակներում հարցականի տակ էին դնում ԱԶԿ հավակնոտ արտաքին քաղաքական ուղեգիծը՝ այն համարելով պարզունակ ու անհեռատեսական: Ավելին, արտաքին գերատեսչության ղեկավարման Դավութօղլի մեթոդները նրանց համար նույնպես շարունակում էին խորթ մնալ:

ԱԶԿ արտաքին քաղաքականության ակնառու դրսևորումներից էին մերձավորարևելյան, հյուսիսաֆրիկյան ուղղություններով և հատկապես հարևան երկրների հետ հարաբերություններում արձանագրված ձեռքբերումները: Թուրքիայի աճող տնտեսական հնարավորությունների համար հարկավոր էր սպառման նոր շուկաներ գտնել, ինչպես նաև խթանել առևտրի և ներդրումների ծավալները: Նշված տարածաշրջանի երկրների հետ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը շոշափելիորեն նպաստեց ազատ առևտրի վերաբերյալ պայմանագրերի կնքումը: 2003-2011թթ. Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի մի շարք երկրների հետ (Իսրայել, Պաղեստին, Թունիս, Մարոկո, Եգիպտոս, Լիբանան, Սիրիա և Հորդանան) Թուրքիան կնքեց ազատ առևտրի վե-

բաբերյալ պայմանագրեր: Նմանատիպ պայմանագրեր են կնքվել նաև Վրաստանի, Ալբանիայի, Կոսովոյի, Սերբիայի, Մակեդոնիայի, Բոսնիայի և մի շարք այլ պետությունների հետ: Նշված քաղաքականության արդյունավետ իրականացման շահերից էր բխում վերոհիշյալ մի շարք երկրների հետ առանց մուտքի արտոնագրի ռեժիմի սահմանումը: Նշված քաղաքականության արդյունքում՝ 2003-2011թթ. ընթացքում արաբական երկրների հետ առևտրի ծավալներն աճեցին չորս անգամ՝ հասնելով 49 մլրդ ԱՄՆ դոլարի: Այդ երկրների հետ համագործակցության խորացման մեկ այլ ձևաչափ էր «Բարձր մակարդակի ռազմավարական խորհուրդների» ստեղծումը: 2006-2011թթ. ընթացքում 13 երկրների, այդ թվում նաև Իրաքի, Սիրիայի, Լիբանանի և Եգիպտոսի հետ Թուրքիան ստեղծեց նմանատիպ խորհուրդներ: Ռազմավարական խորհրդի նիստերում կնքված պայմանագրերը վերաբերում էին առևտրի, գիտության և տեխնոլոգիաների, արդյունաբերության, մուտքի արտոնագրերի, տուրիզմի, առողջապահության, գյուղատնտեսության, տրանսպորտի, կրթության և մի շարք այլ ոլորտներում համագործակցության ընդլայնմանը:

2003-ից ի վեր Թուրքիան փոփոխական ակտիվությամբ ներգրավված էր մերձավորարևելյան հակամարտությունների լուծման գործում (Իսրայել-Սիրիա, Իսրայել-Պաղեստին): Այդ ընթացքում Թուրքիան նաև ձգտում էր վերացնել Սուդանի և «Համաս» կազմակերպության միջազգային մեկուսացումը: Թուրքիայի մերձավորարևելյան միջնորդական առաքելությունները թեև լայն առումով տպավորիչ հաջողություններ չարձանագրեցին, սակայն երկրի հեղինակությունն էապես աճեց իսլամական աշխարհում:

Իրաքի հետ հարաբերություններում ԱԶԿ կառավարությունը որդեգրեց ինքնատիպ քաղաքականություն: ԱԶԿ իշխանության գալը գրեթե համընկավ Իրաքյան պատերազմի հետ, և պատերազմի ամբողջ ընթացքում Թուրքիան ձգտում էր հեռու մնալ կոնֆլիկտից, սակայն պատրաստ էր հնարավորության դեպքում օգուտ քաղել ստեղծված իրավիճակից: Երկար ժամանակ Անկարան հրաժարվում էր հարաբերություններ հաստատել Իրաքի հյուսիսում ստեղծված Քրդստանի տարածաշրջանային կառավարության (ՔՏԿ) հետ, ինչը նպաստում էր պաշտոնական Բաղդադի հետ նորմալ հարաբերությունների պահպանմանը: 2009-ից ի վեր, երբ Անկարան ՔՏԿ-ի հետ հարաբերություններ սկսեց, Բաղդադի հետ նախկին սերտ համագործակցությունը նահանջ ապրեց:

Ուշագրավ էր Սիրիայի հետ հարաբերությունների դինամիկան: Եթե 1990-ական թվականներին դրանք բնութագրվում էին թշնամական, ապա ԱԶԿ կառավարման տարիներին փոխվեցին այդ հարաբերությունների ձևը և բովանդակությունը: Սիրիան դարձավ կարևոր երկիր Թուրքիայի մերձավորարևելյան տարածաշրջանային քաղաքականության իրականացման առումով: Այն դարձավ նաև կարևոր տարանցիկ երկիր առևտրատնտեսական հարաբերությունների տեսակետից: Երկու երկրների կառավարությունները համատեղ նիստեր էին անցկացնում և արագ որոշումներ կայացնում ընթացիկ խնդիրների վերաբերյալ: 2011թ. հետո, սակայն, այդ հարաբերությունները կտրուկ փոխվեցին, և Թուրքիան դարձավ Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադի դեմ պայքարող առանցքային պետություններից մեկը:

ԱԶԿ իշխանության գալը համընկավ նաև Իրանի միջուկային ծրագրերի շուրջ միջազգային լարվածության աճի հետ: Դեմ լինելով Թեհրանի միջուկային ծրագրին՝ Անկարան կողմ էր արտահայտվում տարածաշրջանում բաժանարար գծերի վերացմանը և երկակի չափորոշիչների կիրառմանը: Կասկածի տակ դնելով Թեհրանի միջուկային պոտենցիալը՝ Անկարան հող էր ստեղծում Թեհրանի հետ մերձեցման համար: Այդ ուղղությամբ կարևոր քայլ էր 2010թ. հունիսի 9-ին ՄԱԿ Անվտանգության խորհրդում Իրանի դեմ նոր պատժամիջոցների սահմանման 1929 բանաձևին Թուրքիայի դեմ քվեարկելը: Դրանից հետո Թուրքիայի հեղինակությունն Իրանում աճեց: Ավելին, նույն թվականին Իրանում նախագահական ընտրություններին հաջորդած ներքաղաքական ճգնաժամից հետո Էրդողանն առաջիններից էր, ով շնորհավորեց Մ.Ահմադինեժադին նախագահ վերընտրվելու կապակցությամբ: Այդուհանդերձ, Իրանի հետ հարաբերություններում Թուրքիան մշտապես ունեցել է ոչ միանշանակ դիրքորոշում, և երկու երկրների հարաբերությունները գերազանցապես բնորոշվում են որպես բարդ: Դրա հիմքում ընկած են տարածաշրջանի մի շարք երկրներում Թուրքիայի և Իրանի հետապնդած հակոտնյա շահերը:

Իսրայելի հետ հարաբերությունները ԱԶԿ կառավարման տարիների ամենահակասական էջերից են: ԱԶԿ առաջնորդները սերում էին «Ազգային տեսակետից», հետևաբար, անմասն չէին կարող լինել հակահրեական տրամադրություններից: Այդուհանդերձ, իշխանության գալուց հետո ԱԶԿ-ն անկարող էր միանգամից ի ցույց դնել իր հակաիսրայելական քաղաքական գիծը: Ավելին, առաջին տարիների ընթացքում թուրք-իսրայելական քաղաքական և առևտրատնտեսական հարաբերությունները զարգանում էին բավական ինտենսիվ: Ստեղծվել էին համագործակցության այն բոլոր հարթակները, որոնք գործում էին Մերձավոր Արևելքի մյուս բոլոր պետությունների հետ: Իսրայելի հետ հարաբերություններում առաջին լարվածությունն առաջացավ «Համասի» առաջնորդ Խալեդ Մեշալի Անկարա այցով: 2008թ. դեկտեմբեր-2009թ. հունվար ամիսներին Գազայի վրա Իսրայելի հարձակման պատճառով արձանագրվեցին մարդկային շատ զոհեր: Միջազգային հարթակում Անկարան դարձավ Իսրայելի գլխավոր քննադատը: 2009թ. հունվարին Դավոսի Համաշխարհային տնտեսական համաժողովում Էրդողանը քննադատեց համազեկուցող՝ Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսին: Նրա այդ ելույթը ստացավ «One minute» անվանումը, քանի որ նա փորձում էր խոսքի իրավունք խնդրել կամ հակադարձել Պերեսին՝ օգտագործելով անգլերեն այդ արտահայտությունը: Երկկողմ հարաբերությունների լարվածությունը նոր մակարդակի հասավ 2010թ. մայիսին, երբ ԱԶԿ-ին հարող հասարակական կազմակերպությունները որոշեցին վեց նավերով հումանիտար օգնություն հասցնել շրջափակման մեջ գտնվող Գազայի բնակիչներին: Մայիսի 31-ին Իսրայելի ջրային տարածքների մատույցներում «Գազայի ազատության նավատորմը» հարձակման ենթարկվեց Իսրայելի հատուկ նշանակության ջոկատների կողմից: Արդյունքում՝ Թուրքիայի ութ և ԱՄՆ մեկ քաղաքացի սպանվեց, տասնյակ մարդիկ վիրավորվեցին: Տեղի ունեցածը միջազգային լարվածության պատճառ դարձավ: Դավութօղլուն այն անվանեց «Թուրքիայի սեպտեմբերի 11»: Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունները Թուրքիան իջեցրեց երկրորդ քարտուղարի մակարդակի: Այդ միջադեպից հետո թուրք-իսրայելական հարաբերությունները դեռ երկար ժամանակ շարունակում էին լարված մնալ, քանի որ Իսրայելը հրաժարվում էր կատարել Թուրքիայի պահանջները՝ պաշտոնական ներողություն խնդրելու և տուժածների ընտանիքներին փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ: Թուրք-իսրայելական հակասություններն, անտարակույս, չէին կարող չանհանգստացնել ԱՄՆ իշխանություններին, քանի որ տասնամյակներ շարունակ այդ երկու երկրները եղել են ԱՄՆ հիմնական տարածաշրջանային դաշնակիցները:

ԱՄՆ հարաբերությունները Թուրքիայի հետ ԱԶԿ կառավարման տարիներին ևս ունեցել են ակնհայտ բարդություններ և նախկինից էապես տարբերվող զարգացումներ: ԱԶԿ ձևավորումը և հաղթանակը խորհրդարանական ընտրություններում համընկան մի ժամանակաշրջանի հետ, երբ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումից հետո փոխվել էին ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության գերակայությունները: ԱԶԿ հաղթանակը 2002թ. նոյեմբերին և նրա իսլամամետության վերաբերյալ մտավախություններն արագ տարածվեցին ԱՄՆ-ում՝ որոշ պահպանողական շրջանակների համար դառնալով մտահոգության պատճառ: 2003թ., երբ ԱՄՆ-ը որոշում կայացրեց ներխուժել Իրաք, Թուրքիայի խորհրդարանը մարտին տեղի ունեցած քվեարկության արդյունքում թույլ չտվեց, որպեսզի իր տարածքով ԱՄՆ Զինված ուժերի հետևակային ստորաբաժանումները ցամաքային ճանապարհով ներխուժեն Իրաք: Թեև հետագայում Թուրքիան թույլատրեց, որպեսզի իր տարածքից Իրաքի դեմ իրականացվեն օդային գործողություններ, սակայն այն վնասը, որը հասցվել էր երկկողմ հարաբերություններին, ԱՄՆ-ի համար անդառնալի էր: Հարաբերությունները չընդհատվեցին, սակայն նկատելիորեն լարվեցին: Հետագա տարիներին լարվածությունը պահպանվեց, թեև 2009թ. ապրիլի 6-ին ԱՄՆ նախագահ Բ. Օբաման ԹԱՄԺ-ում իր ելույթում Թուրքիային կոչ արեց «նորոգել դաշինքը և ժողովուրդների միջև բարեկամությունը», սակայն 2003թ. մարտի քվեարկության հետևանքները շարունակում էին զգացվել:

Իսրայելի հետ Թուրքիայի հարաբերությունների վատթարացումը, Գազայի նավատորմի միջադեպը, ԱՄՆ-ի կողմից ահաբեկչական կազմակերպություն համարվող «Համասի» հետ Թուրքիայի համագոր-

ծակցությունը, Սիրիայի հետ հարաբերությունների սերտացումը, Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ ՄԱԿ ԱԽ-ում Թուրքիայի արտահայտած դիրքորոշումը և մի շարք այլ խնդիրների առկայությունը շարունակում են լրջորեն վնասել թուրք-ամերիկյան համագործակցությանը:

Իշխանության գալուց հետո ԱԶԿ քաղաքականությունն Ադրբեջանի և Վրաստանի նկատմամբ շարունակում էր հենվել նախորդ տասնամյակում առաջ քաշված սկզբունքների վրա: Թուրք-ադրբեջանական համագործակցությունն ընդգրկեց մի շարք ոլորտներ՝ քաղաքական, ռազմական, աշխարհաքաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական և այլն: Երկու երկրների մայրաքաղաքներում գործող դեսպանատներից բացի, գործում են նաև գլխավոր հյուպատոսարաններ. Թուրքիան ունի գլխավոր հյուպատոսարաններ Գանձակում և Նախիջևանում, իսկ Ադրբեջանի երկու հյուպատոսարանները գործում են Կարսում և Ստամբուլում:

1999թ. Ստամբուլում անցկացված ԵԱՀԿ գագաթաժողովի շրջանակում Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի և ԱՄՆ նախագահների կողմից ստորագրվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման հայտարարությունը: Նավթամուղի շինարարությունը տևեց յոթ տարի, իսկ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շինարարությունը՝ ութ տարի: 2007թ. նոյեմբերին Վրաստանը, Ադրբեջանը և Թուրքիան նախաձեռնեցին մեկ այլ ծրագիր, որը նպատակ ուներ երկաթուղային կապ հաստատել Բաքվի և Կարսի միջև: Նախագծի համաձայն՝ շինարարության ենթակա մոտ 100 կմ երկարությամբ երկաթուղու 76 կմ-ն կառուցվելու էր Թուրքիայի, մնացածը՝ Վրաստանի տարածքում: Նախատեսվում էր, որ այն ավարտվելու էր 2010թ., սակայն շինարարության ավարտի ժամկետներն անընդհատ հետաձգվում են: ԵՄ-ը և ԱՄՆ-ը դեմ արտահայտվեցին այդ ծրագրին, քանի որ տարածաշրջանում ստեղծում էին հավելյալ բաժանարար գծեր և ավելի մեկուսացնում Հայաստանը:

Թուրք-ադրբեջանական հարաբերություններում կարևոր էր 2010թ. օգոստոսի 16-17-ին նախագահ Գյուլի Բաքու այցի շրջանակներում ստորագրված «Ռազմավարական համագործակցության և փոխադարձ աջակցության համաձայնագիրը»: Մեկ ամիս անց՝ սեպտեմբերի 15-16-ին, Ստամբուլում Էրդողանի ու Ալիևի միջև ստորագրվեց «Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհուրդ ստեղծելու մասին համատեղ հայտարարությունը»:

Սերտ համագործակցությունից բացի, Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում առկա են նաև մի շարք խնդիրներ բանկային, ֆինանսական, հարկային և մաքսային ոլորտներում, որոնք պարբերաբար ներազդում են երկկողմ հարաբերությունների վրա: Հաճախ քննարկվող հարցերից է, օրինակ՝ Թուրքիայի քաղաքացիներին առանց մուտքի արտոնագրի Ադրբեջան այցելության իրավունքի տրամադրումը: Ադրբեջանը հրաժարվում է նաև ճանաչել Հյուսիսային Կիպրոսի ինքնահռչակ հանրապետությունը: Թուրքիան, իր հերթին, օգտագործում է իր տարածքով փոխադրվող ադրբեջանական գազի տարանցման գինը որպես հակակշռող գործոն Ադրբեջանի հետ հարաբերություններում:

Վրաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների ընդլայնումը պայմանավորված էր թե Թուրքիայի հետապնդած աշխարհաքաղաքական ու էներգետիկ շահերով, թե Վրաստանի իրականացրած բաց դռների տնտեսական քաղաքականությամբ սահմանված նպատակներով: Երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների ընդլայնման հարցում անկյունաքարային են համարվում 2004 և 2007 թվականները: Մինչև Միխեիլ Սաակաշվիլու իշխանության գալը (2004թ.) թուրք-վրացական առևտրային ծավալները բավական համեստ էին: Իրադրությունը փոխվեց 2004-2006թթ. ընթացքում: 2006թ. վրացական ապրանքների համար ռուսական շուկան հիմնականում դարձավ անհասանելի, որին հետևեց Թուրքիայի առաջարկը՝ 2007թ. նոյեմբերին կնքել Ազատ առևտրի պայմանագիր: Դրա ուժի մեջ մտնելուց հետո վրաց-թուրքական առևտրի ծավալները շեշտակի աճ են արձանագրում՝ հասնելով աննախադեպ ցուցանիշների: Հասկանալի է, առևտրային ծավալների աճը կապված էր ոչ միայն հիշյալ պայմանագրի ուժի մեջ մտնելու, այլ նաև Հարավօսական պատերազմի հետևանքով վրաց-ռուսական սահմանի փակման հանգամանքի, ինչպես նաև էներգետիկ ծրագրերի ամբողջական գործարկման և մի շարք այլ հարակից գործոնների հետ: Ծավալների նման աճ արձանագրվում է նաև Թուրքիայի կողմից Վրաստանում կատարված ուղղակի ներդրումներում: 1997-2003թթ.

ընթացքում կատարված ներդրումները կազմում էին ընդամենը 103 մլն ԱՄՆ դոլար և բավական համեստ էին յուրաքանչյուր տարվա կտրվածքով, սակայն իրավիճակը կտրուկ փոխվում է 2004 թվականից հետո: Հաջորդ տարիների ընթացքում թուրքական ներդրումները զգալիորեն աճում են՝ կազմելով 864 մլն ԱՄՆ դոլար: Թուրք ներդրողներին գերազանցապես հետաքրքրում են Վրաստանի տնտեսության տեքստիլ արտադրության, գյուղատնտեսության, շինարարության և էներգետիկ ոլորտները: Շինարարության (ՋԷԿ, ճանապարհներ, երկաթգիծ) ոլորտում իրականացվող ծրագրերում ներգրավված են ավելի քան 80 թուրքական շինարարական կազմակերպություններ:

Տնտեսական ազդեցության աճին զուգահեռ՝ Թուրքիայի իշխանություններն առանձնահատուկ կարևորություն են հատկացրել կրթական, կրոնական, մշակութային և հումանիտար քաղաքականությանն ու հասարակական մակարդակում Թուրքիայի հանդեպ Վրաստանում դրական վերաբերմունքի ձևավորմանը: Վրաստանում ևս Թուրքիան սկսեց ձևավորել կրոնագաղափարական և մշակութային ազդեցության տարածման լծակներ, որոնց աշխատանքները համակարգում են Թուրքիայի վարչապետին կից երեք պետական հաստատություններ՝ Թուրքիայի համագործակցության և համակարգման գործակալությունը, «Յունուս Էմրե» մշակութային կենտրոնները և Կրոնի գործերի գլխավոր վարչությունը: Ի լրումն վերոհիշյալ պետական հաստատությունների՝ Վրաստանում գործում են նաև Ֆեթուլահ Գյուլենի ցանցին պատկանող յոթ դպրոց և մեկ համալսարան:

Միևնույն ժամանակ, Թուրքիայի և Վրաստանի միջև առկա են որոշ խնդիրներ, որոնք շարունակաբար բարձրացվում են պաշտոնական և ոչ պաշտոնական մակարդակներում: Աջարիայում Թուրքիայի տնտեսական, մշակութային և կրոնական քաղաքականության շուրջ քննարկումները ժամանակ առ ժամանակ սրվում են՝ դառնալով երկկողմ հարաբերությունների օրակարգային խնդիր: Հատկապես Վրաց Ուղղափառ եկեղեցու համար անընդունելի են Աջարիայում Թուրքիայի կողմից իրականացվող մի շարք ծրագրեր (մզկիթների վերանորոգում կամ նորերի կառուցում, կրոնական ուսուցման նպատակով տեղի երիտասարդության գործուղում Թուրքիա, իսլամի դասընթացների կազմակերպում, գիշերօթիկների ցանցի ընդլայնում, հակավրացական և հակաքրիստոնեական քարոզչություն):

Թուրք-վրացական հարաբերություններում առկա խնդիրներից է նաև Աբխազիայի հետ Թուրքիայի առևտրատնտեսական հարաբերությունների խորացումը: Թուրքիայում ապրում են մեծ թվով էթնիկ աբխազներ (մոտ 500.000), որոնք վայելում են մեծաքանակ չերքեզական համայնքի աջակցությունը: Նրանք 1991 թվականից ի վեր Թուրքիայի կառավարության վրա ազդում են Աբխազիայի հետ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Հատկապես 2008թ. հետո Թուրքիայի առևտրային ներգրավվածությունն Աբխազիայում աճել է: Այս խնդիրը հարուցեց Վրաստանի իշխանությունների անհանգստությունը, սակայն, քանի դեռ Թուրքիան ճանաչում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը, Վրաստանի հանրային կարծիքն ըմբռնումով է մոտենում այդ հարաբերություններին:

Թե՛ Թուրքիայում, թե՛ Ռուսաստանում 1990-ական թվականները ներքաղաքական անկայունության շրջան էին: 2000-ականների սկզբին նախ Պուտինի, ապա Էրդողանի իշխանության հաստատմամբ ստեղծվեցին իրական հնարավորություններ ռուս-թուրքական հակասությունները վերագնահատելու և հարաբերությունների նոր մակարդակ ապահովելու ուղղությամբ: Թեև աշխարհաքաղաքական առումով ՌԴ-ի և Թուրքիայի միջև պահպանվում են խոր հակասություններ, մասնավորապես Հարավային Կովկասում, սակայն առևտրատնտեսական հարաբերությունների առումով ռուս-թուրքական երկկողմ համագործակցության ընդլայնումն ընթանում է գրեթե անխոչընդոտ:

Երկկողմ հարաբերությունների խորացման մասին էր վկայում 2001թ. նոյեմբերի 16-ին կողմերի միջև ստորագրված «ՌԴ-ի և Թուրքիայի միջև Եվրասիայում համագործակցության գործողությունների ծրագիր. երկկողմ համագործակցությունից դեպի բազմակողմ գործընկերություն» փաստաթուղթը: 2004թ. Պուտինն այցելեց Թուրքիա, նրա այցի ընթացքում ընդունվեց համատեղ հռչակագիր բարեկամության և համակողմանի համագործակցության վերաբերյալ: Էներգետիկ ոլոր-

տում համագործակցությունը կարևոր է երկու երկրների համար: Մասնավորապես, Թուրքիան Ռուսաստանից ներմուծում է գազ, ինչը կազմում է գազի ողջ ներմուծման մոտ 65 տոկոսը: Մշակութային առումով կարևոր էր նախ 2007թ. «Ռուսաստանի մշակութային տարվա» անցկացումը Թուրքիայում, իսկ 2008թ.՝ «Թուրքիայի մշակութային տարվա» անցկացումը Ռուսաստանում: 2009թ. փետրվարի 12-15-ին նախագահ Գյուլը ժամանեց Մոսկվա, հանդիպումներ ունեցավ նախագահ Մեդվեդևի և վարչապետ Պուտինի հետ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց առավել խորացնել համագործակցությունը տարբեր ոլորտներում: Հետագա տարիներին տեղի ունեցած հանդիպումների ընթացքում նախ որոշում կայացվեց ստեղծել Ռուս-թուրքական բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհուրդ (2010թ. մայիս), կողմերը պայմանավորվեցին առավել ընդլայնել առևտրի ծավալները՝ նպատակ ունենալով գալիք տարիների ընթացքում դրանք հասցնել 100 մլրդ-ի: Ռուսաստանը հաղթեց նաև Թուրքիայի առաջին ատոմակայանի շինարարության համար հայտարարված մրցույթում, որի արժեքը կազմում էր 20 մլրդ ԱՄՆ դոլար: Թուրքիայի տնտեսության համար կարևոր է նաև ռուսաստանցի զբոսաշրջիկների այցը, որոնց թիվը վերջին տարիներին կտրուկ աճել է՝ հասնելով տարեկան 3.5 մլն նշագծին:

Հայաստանի հետ հարաբերություններում 1996 թվականից հետո նկատվեցին մի շարք փոփոխություններ, թեև դիվանագիտական հարաբերություններ այդպես էլ չհաստատվեցին, իսկ Հայաստանի շրջափակումը չվերացվեց: 1997թ. ստեղծվեց «Հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհուրդը», որի գործունեությունը բավական համեստ էր: Փոխարենը, ակտիվացան հասարակական կազմակերպությունների միջև շփումները:

2001-2002թթ. Թուրքիայի արտգործնախարարար Ի. Ջեմը երկու անգամ հանդիպեց արտգործնախարար Վ. Օսկանյանի հետ: 2001թ. Հայաստանը Ստամբուլում բացեց Սևծովյան համագործակցության կազմակերպությունում իր մշտական ներկայացուցչությունը: 2002թ. նոյեմբերին ԱԶԿ իշխանության գալուց հետո ՀՀ-ի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության մեջ որոշ դրական միտումներ նկատվեցին: ԱԶԿ առաջին արտգործնախարար Յաշար Յաքըշը անգամ հայտարարեց, որ եթե հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և սահմանի վերաբացումը բխեն Թուրքիայի շահերից, ապա վերջինս հաշվի չի նստի Ադրբեջանի հետ: 2003-2004թթ. ընթացքում Թուրքիայի և Հայաստանի ԱԳ նախարարներ Գյուլի և Օսկանյանի միջև տեղի ունեցան մի քանի հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվեցին մի շարք այլընտրանքային տարբերակներ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Վ. Օսկանյանի վկայությամբ, այդ հանդիպումների սկիզբը խոստումնալից էր, սակայն յուրաքանչյուր հաջորդ հանդիպում ավելի վատն էր, քան նախորդը: Վերջին հանդիպման ժամանակ Գյուլն իր հայ գործընկերոջը տեղեկացրեց, որ Թուրքիայի կառավարությունը ձեռնպահ կմնա Հայաստանի հետ որևէ քայլ ձեռնարկելուց, քանի դեռ ղարաբաղյան հարցում շոշափելի առաջընթաց չկա:

2005թ. ապրիլի 10-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանը նամակով դիմեց Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ առաջարկելով ստեղծել պատմաբանների համատեղ հանձնաժողով՝ արխիվների և պատմական փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով: Մինչ նամակը կհասներ հասցեատիրոջը՝ արդեն շրջանառության մեջ էր դրվել թուրքական մամուլում, հետո նաև ԱՄՆ Կոնգրեսում: Թեև պատմաբանների հանձնաժողովի խնդիրը Թուրքիայում 1998թ. ի վեր քննարկվում էր, սակայն առաջին անգամ էր, որ Թուրքիայի վարչապետը գրավոր ձևով բարձրացնում էր այդ հարցը: Ապրիլի 25-ին Հայաստանի նախագահը պատասխանեց՝ նշելով, որ երկկողմ հարաբերությունների զարգացումը երկու կառավարությունների պատասխանատվությունն է, և նրանք իրավունք չունեն այն լիազորել պատմաբաններին: Նա նաև կոչ էր անում առանց որևէ նախապայմանի հարաբերություններ հաստատել և բոլոր հարցերը քննարկել միջկառավարական հանձնաժողովում: Էրդողանի նամակը նպատակ ուներ միջազգային հանրության ուշադրությունը շեղել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացից և փորձել ցույց տալ, որ Հայաստանի և Թուրքիայի միջև առկա է հարաբերությունների կարգավորման գործընթաց: ԱՄՆ և Շվեյցարիայի կառավարություններն աջակցություն հայտնեցին Էրդողանի առաջարկին, Թուրքիայի ընդդիմությունը ևս հայտնեց իր աջակցության մասին:

2005թ. հուլիսից ՀՀ և ԹՀ արտգործնախարարությունների բարձրաստիճան ներկայացուցիչների միջև Վիեննայում տեղի ունեցան բազմափուլ խորհրդակցություններ, որոնք տևեցին շուրջ մեկ տարի: 2007թ. սեպտեմբերի 16-ին Շվեյցարիայի միջնորդությամբ վերսկսվեցին հայ և թուրք պաշտոնյաների միջև շփումները:

2008թ. հունիսի 24-ին Մոսկվայում հայկական համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտնեց, որ մտադիր է Թուրքիայի նախագահ Ա. Գյուլին հրավիրել Երևան՝ Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումը միասին դիտելու համար: Այսպիսով, սկիզբ դրվեց մի գործընթացի, որը ստացավ «ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումը: 2008թ. սեպտեմբերի 6-ին Թուրքիայի նախագահը պատմության մեջ առաջին անգամ այցելեց Երևան: Նախագահները հանդես եկան հայտարարությամբ, իսկ Գյուլի մեկնելուց հետո արտգործնախարար Բաբաջանը մնաց Երևանում՝ ՀՀ արտգործնախարար Նալբանդյանի հետ աշխատանքային խորհրդակցություններ անցկացնելու նպատակով:

Թուրքիայի և Հայաստանի ԱԳ նախարարների բանակցությունների արդյունքում 2009թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում նախաստորագրվեց «Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հարաբերությունների զարգացման մասին» երկու արձանագրություն: Դրանք ստորագրեցին Է. Նալբանդյանը և Ա. Դավութօղլուն, արարողությանը ներկա էին ՌԴ արտգործնախարարը, ԱՄՆ պետքարտուղարը և ԵՄ, ԵԱՀԿ, Շվեյցարիայի մի շարք այլ պաշտոնյաներ: Արձանագրություններով նախատեսվում էին վավերացումից հետո հաստատել դիվանագիտական հարաբերություններ, երկու ամսվա ընթացքում բացել սահմանները, ստեղծել միջկառավարական երկկողմ հանձնաժողով, որը բաղկացած կլիներ առանձին ենթահանձնաժողովներից: Երկրորդ արձանագրությունը պարունակում էր նաև հավելված, որում զետեղված էին արձանագրության իրագործման ժամանակացույցը և տարրերը: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 2009թ. հոկտեմբերի 14-ին այցելեց Բուրսա՝ երկու հավաքականների միջև ֆուտբոլային պատասխան խաղը դիտելու նպատակով:

Իրականում, թե հոկտեմբերի 10-ին նախորդող, թե հաջորդող ժամանակահատվածում Թուրքիայի կառավարության ներկայացուցիչների հայտարարությունները հակասում էին բանակցությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններին, առավել ևս՝ ցյուրիխյան արձանագրությունների ոգուն և բովանդակությանը: Այդ քաղաքականության մեջ Թուրքիան հատկապես օգտագործեց հայ-թուրքական բանակցությունների վերաբերյալ Ադրբեջանի բարձրաձայնած դժգոհության գործոնը: Դեռ 2009թ. ապրիլից Բաքուն դժգոհություն էր հայտնել, որ Թուրքիան ցուցաբերել էր պատրաստակամություն բանակցություններ վարել Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Շաբաթներ անց՝ 2009թ. մայիսի 13-ին, Էրդողանն Ադրբեջանի խորհրդարանում վերահաստատեց, որ մինչև ղարաբաղյան հարցում առաջընթաց չլինի, սահմանները չեն բացվելու: Այդ հայտարարությունն առժամանակ մեղմացրեց Բաքվի դժգոհության ալիքը, սակայն ամիսներ անց Թուրքիան, այնուամենայնիվ, ստորագրեց արձանագրությունները, որոնց դեմ արտահայտվեցին ինչպես Բաքվի իշխանությունները, այնպես էլ Թուրքիայի հիմնական ընդդիմադիր կուսակցությունները: Իրադարձությունների ընթացքը ցույց էր տալիս, որ Անկարան մտադիր էր հետքայլ կատարել ձեռք բերված պայմանավորվածություններից և միջազգային պարտավորություններից: Իր դիրքորոշումը հիմնավորելու և ծանրակշիռ դարձնելու նպատակով պաշտոնական Անկարան շահարկում էր հայ-թուրքական մերձեցմանը դեմ արտահայտվող թե ներքին, թե արտաքին հայտարարությունները: Ակնհայտ էր, որ Թուրքիայի համար առավելապես կարևորվում էր գործընթացը, քան թե վերջնական արդյունքը:

Գործընթացի արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններից Թուրքիայի ակնհայտ խուսափելու և «խելամիտ ժամկետներում» ստանձնած պարտավորությունները չկատարելու պայմաններում հայկական կողմը որոշեց առկախել արձանագրությունների վավերացման գործընթացը, որի մասին ՀՀ նախագահը հայտարարեց 2010թ. ապրիլի 22-ին:

Գրականություն լրացուցիչ ընթերցանության համար

1. Տեր-Մաթևոսյան Վ., Հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարները ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2011, հ. 7, էջ 371-379:
2. Демоян Г., Внешняя политика Турции и Карабахский конфликт: историко-сравнительный анализ, Ереван, 2013.
3. Çarkoğlu A., Toprak B., Turkiye'de Din, Toplum ve Siyaset, İstanbul, 2000.
4. Kökce H., Ak Parti ve Kürtler, İstanbul, 2011.
5. Özal T., Turkey in Europe, and Europe in Turkey, 1991.
6. Ter-Matevosyan V., Kemalism as a Social Movement: Transforming Patterns of Collective Identities in Turkey, - Turkic and Ottoman Studies, V. 6, Yerevan, 2009, p. 86-104.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանրապետական ժողովրդական կուսակցություն (ՀԺԿ) – Cumhuriyet Halk Partisi (CHP)

Առաջին քաղաքական կուսակցությունը Թուրքիայում հիմնադրվեց 1923-ին՝ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի նախաձեռնությամբ և կոչվեց Ժողովրդական կուսակցություն: 1924թ. այն վերանվանվեց Հանրապետական ժողովրդական կուսակցություն: Կազմավորման օրից կուսակցությունը գլխավորել է Աթաթյուրքը: Նրա մահից հետո կուսակցության նախագահի պաշտոնը ստանձնել է Իսմեթ Ինյոնյուն և 34 տարի անընդմեջ ղեկավարել այն: Միակուսակցական համակարգի պայմաններում Հանրապետական ժողովրդական կուսակցությունը Թուրքիայում միանձնյա իշխել է մինչև 1950 թվականը:

1980թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումից հետո կուսակցության գործունեությունը կասեցվել է, և Բյուլենթ Էջևիթը վայր է դրել նախագահի լիազորությունները: 1981թ. հոկտեմբերի 16-ի որոշմամբ գեներալ Քենան Էվրենի վարչախումբը լուծարեց քաղաքական բոլոր կուսակցությունները: Այսպիսով՝ ասպարեզից հեռացավ նաև Հանրապետական ժողովրդական կուսակցությունը, որը 58 տարի շարունակ որպես առաջատար քաղաքական կազմակերպություն գործել էր Թուրքիայում:

Ժամանակակից Թուրքիայի քաղաքական առաջին կազմակերպությունը հանդիսացող այս կուսակցությունը վերականգնվեց 1992թ. սեպտեմբերի 9-ին: Սակայն վերականգնումը ծանր ընթացք ունեցավ կուսակցության համար, որովհետև լուծարումից հետո նրա հենքի վրա ձևավորվել էին նոր կուսակցություններ, ինչպիսիք են Ժողովրդական և Սոցիալ-ժողովրդավարական կուսակցությունները, որոնք միմյանց դեմ անհաշտ մրցապայքար էին ծավալել:

1985թ. նոյեմբերի 2-ին հրավիրված արտահերթ համագումարը որոշեց Ժողովրդական կուսակցությունը վերանվանել Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական կուսակցություն: Նույն թվականի նոյեմբերի 3-ին ինքնալուծարման որոշումից հետո Սոցիալ-ժողովրդավարական կուսակցությունը միացավ Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական կուսակցությանը: Միավորումը տեղիք տվեց ներկուսակցական սուր պայքարի: Թեև կուսակցությունը 1990թ. հոկտեմբերի 20-ի ընտրությունների արդյունքում պատգամավորական 88 տեղ ստացավ խորհրդարանում և կոալիցիոն հիմունքներով իշխանության եկավ, սակայն դա չհանգեցրեց տարաձայնությունների հաղթահարմանը կուսակցության ներսում:

1990թ. հունվարին Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական կուսակցության երրորդ համագումարում Դենիզ Բայքալի խմբավորումը պարտվեց Էրդալ Ինյոնյուի խմբավորմանը: Չհաշտվելով կուսակցության նախագահի պաշտոնում Ինյոնյուի ընտրության հետ՝ Բայքալը 14 պատգամավորի հետ լքեց խմբակցության շարքերը: Նույն թվականի սեպտեմբերի 9-ին նա իր զինակիցներով վերակազմավորեց Հանրապետական ժողովրդական կուսակցությունը:

1995թ. փետրվարի 18-ին գումարված արտահերթ համագումարի որոշմամբ Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական կուսակցությունն ինքնալուծարվեց ու ողջ կազմով անցավ Հանրապետական ժողովրդական կուսակցության շարքերը: Նույն թվականի սեպտեմբերի 9-ին գումարված համագումարը կուսակցության նախագահ ընտրեց Դենիզ Բայքալին, որը նախքան 1980թ. զինվորական հեղաշրջումը զբաղեցրել էր կազմակերպության նախագահի պաշտոնը:

Հանրապետական ժողովրդական կուսակցությունն ունի սոցիալ-ժողովրդավարական ուղղվածություն, Սոցիալիստական ինտերնացիոնալի անդամ է: Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության մեջ կուսակցությունն առաջնորդվում է Քեմալ Աթաթյուրքի սկզբունքներով: Քեմալական ազգայնամոլության ջատագովն է: Հանդես գալով Թուրքիայի աշխարհիկ հանրապետական կարգերի երաշխավորի դերում՝ պայքարում է երկրում իսլամականության դրսևորումների դեմ: Ազգային փոքրամասնությունների, էթնիկ և կրոնական խմբավորումների նկատմամբ նրա դիրքորոշումը ելնում է թուրք ազգի «միասնականության» քեմալական սկզբունքից: Արտաքին քաղաքականության մեջ կարևոր տեղ է հատկացնում ԱՄՆ-ի ու Եվրամիության հետ հարաբերություններին՝ պայմանավորելով Թուրքիայի ապագան արևմտյան կողմնորոշմամբ:

Վերակազմավորված Հանրապետական ժողովրդական կուսակցությունը Բայքալի գլխավորությամբ մասնակցեց 1995թ. դեկտեմբերի 24-ի Թուրքիայի Ազգային մեծ ժողովի վաղաժամ ընտրություններին և մեծ դժվարությամբ հաղթահարելով 10 տոկոսանոց արգելապատնեշը՝ մտավ խորհրդարան: Հաջորդ ընտրություններին, որոնք նշանակվել էին 1999թ. ապրիլի 18-ին, կուսակցությունը ջախջախիչ պարտություն կրեց և դուրս մնաց խորհրդարանից: Պարտությունը ստիպեց Բայքալին հրաժարվել ՀԺԿ նախագահի պաշտոնից: Սակայն 2000թ. սեպտեմբերի 30-ի արտահերթ համագումարը նրան վերստին նախագահ ընտրեց:

2002թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական վաղաժամ ընտրություններում, որոնք միանձնյա իշխանություն ապահովեցին «Արդարություն և զարգացում» կուսակցությանը, ՀԺԿ-ն ստացավ ընտրողների ընդհանուր ձայների 19,3 տոկոսը և պատգամավորական 178 տեղ ձեռք բերեց խորհրդարանում: Քանի որ մյուս կուսակցությունները պառակտվել կամ վարչապետ Բյուլենթ Էջևիթի կառավարող կոալիցիայի կազմում երկրի տնտեսական խոր ճգնաժամի պատճառով հեղինակազրկվել էին, ուստի չկարողացան խորհրդարան մտնել: Դառնալով խորհրդարանական՝ կուսակցության ներսում ծայր առան տարաձայնություններ, պայմանավորված նրա ավանդականությունից բխող իշխանության հավակնությունների և կարողությունների անհամաչափությամբ:

Չնայած ներկուսակցական տարաձայնություններին, 2007թ. հուլիսի 22-ի խորհրդարանական ընտրություններում կուսակցությունը պահպանեց դիրքերը՝ ստանալով ձայների 20 տոկոսը: Սակայն ընտրություններից հետո

տարաձայնությունները ծավալվեցին: 2010թ. մայիսի 10-ին հրաժարական տվեց կուսակցության նախագահ Բայքալը: Մայիսի 22-ին գումարված համագումարում նախագահի պաշտոնը ստանձնեց Քեմալ Քըլըչդարօղլուն: Փոխվեց Հանրապետական ժողովրդական կուսակցության ղեկավար կազմը:

Մինչ այդ՝ 2008թ. դեկտեմբերի 21-ին, համագումարի որոշումով կուսակցությունը փոխել էր ծրագիրն ու կանոնադրությունը: Սակայն փոփոխությունները դեռևս իշխանության համար անհրաժեշտ ժողովրդականություն չեն ապահովել նրան: 2011թ. հունիսի 12-ի ընտրություններում ՀԺԿ-ն ստացավ ընդհանուր ձայների 25,9 տոկոսը, որպես գլխավոր ընդդիմադիր կուսակցություն 135 տեղ ունի խորհրդարանում: Նրա նախագահն է 2012թ. հուլիսի 17-18-ի համագումարում վերընտրված Քեմալ Քըլըչդարօղլուն:

«Ազգայնական շարժում» կուսակցություն (ԱՇԿ) – Milliyetçi Hareket Partisi (MHP)

Ազգայնամոլական և պանթուրքիստական կուսակցություն է, համարվում է «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպությունը: Հիմնադրվել է 1957թ. կազմավորված Հանրապետա-գյուղացիական ազգային կուսակցության հենքի վրա: 1965թ. նրա շարքերն է անցել, ապա և նախագահը դարձել Ալփարսլան Թյուրքեշը: 1970-ական թթ. մասնակցել է Սուլեյման Դեմիրելի կոալիցիոն առաջին և երկրորդ կառավարությունների կազմավորմանը:

1980թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումից հետո կուսակցության գործունեությունը կասեցվեց, իսկ մեկ տարի անց արգելվեց: Ձերբակալվեցին նախագահ Թյուրքեշն ու ղեկավար կազմի անդամները: 1983թ. հուլիսի 7-ին, երբ Թուրքիայում վերականգնվել էին խորհրդարանական կարգերը, «Ազգայնական շարժում» կուսակցության նախկին անդամներն Ալի Քոչի գլխավորությամբ կազմավորեցին Պահպանողական կուսակցությունը: 1985թ. վերջերին հրավիրված համագումարի որոշմամբ քաղաքական այս կազմակերպությունը վերանվանվեց Ազգայնական աշխատանքային կուսակցություն:

1987թ. սեպտեմբերի 6-ի հանրաքվեն վերականգնեց Ալփարսլան Թյուրքեշի քաղաքական իրավունքները: Նա անցավ «Ազգայնական շարժում» կուսակցության իրավաժառանգորդի դերում հանդես եկող այս կազմակերպության շարքերը, ապա դարձավ նրա նախագահը: Ազգայնական աշխատանքային կուսակցությունը 1987թ. նոյեմբերի 29-ի ընտրություններում չկարողացավ հաղթահարել 10 տոկոսանոց շեմը և դուրս մնաց խորհրդարանից: 1991թ. հոկտեմբերի 20-ի ընտրություններին կուսակցությունը մասնակցեց Էրբաքանի «Բարօրություն» կուսակցության ցուցակներով և մուտք գործեց խորհրդարան: Նույն թվականի դեկտեմբերին Ազգայնական աշխատանքային կուսակցության 18 պատգամավոր Թյուրքեշի գլխավորությամբ հեռացավ «Բարօրություն» խմբակցությունից: 1992թ. դեկտեմբերի 27-ի համագումարի որոշմամբ Ազգայնական աշխատանքային կուսակցությունն ինքնալուծարվեց: 1993թ. հունվարի 24-ին հրավիրվեց արտակարգ համագումար, որտեղ լուծարված կազմակերպության հիմքի վրա կազմավորվեց «Ազգայնական շարժում» կուսակցությունը:

Ելնելով թուրք ազգի գերազանցության սկզբունքից՝ «Ազգայնական շարժում» կուսակցությունը կտրականապես մերժում է ոչ թուրք ժողովուրդների գոյության իրավունքը երկրում: Նա, ազգային փոքրամասնություններին, էթնիկ և կրոնական խմբավորումներին, մասնավորապես քրդերին ու ալևիներին դիտարկելով որպես Թուրքիայի միասնականության սպառնալիք, դրա հաղթահարումը համարում է պետության անհետաձգելի խնդիրը: Արտաքին քաղաքականության մեջ կուսակցությունը պաշտպանում է իսլամական աշխարհի հետ մերձեցման կուրսը, բայցևայնպես թուրքական պետության գերագույն նպատակն է համարում «թյուրքական աշխարհի» հետ տնտեսական, քաղաքական և մշակութային սերտաճումը:

Վերակազմավորված ԱՇԿ-ն Թյուրքեշի գլխավորությամբ ինքնուրույն մասնակցեց հաջորդ՝ 1995թ. դեկտեմբերի 24-ի ընտրություններին: Սակայն, ստանալով ընդհանուր ձայների ընդամենը 8,2 տոկոսը, զրկվեց խորհրդարան մուտք գործելու իրավունքից: 1997թ. մահացավ կուսակցության առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշը: Նույն թվի հուլիսի 6-ին

հրավիրված արտահերթ համագումարում, հաղթելով նրա որդուն՝ Թուղրուլ Թյուրքեշին, կուսակցության նախագահ ընտրվեց Դալեթ Բահչելին:

Հակառակ ենթադրություններին, կուսակցությունը 1999թ. ապրիլի 18-ի խորհրդարանական ընտրություններում ոչ միայն խորհրդարան մտավ, այլև հավաքելով ձայների 17,9 տոկոսը՝ 129 մանդատ, դուրս եկավ երկրորդ տեղ: Շնորհիվ այս հաջողության՝ կուսակցությունը 11 նախարարով մասնակցեց Էջևիթի կոալիցիոն կառավարությանը: Այդ ընթացքում կուսակցության նախագահ Բահչելին նշանակվեց փոխվարչապետ:

Թեև 2002թ. ընտրություններում կուսակցության ձայների քանակը կրճատվեց և կազմեց 8,3 տոկոս, սակայն 2007-ին արդեն, ստանալով ձայների 14,2 տոկոսը, պատգամավորական 71 տեղ ապահովեց խորհրդարանում: 2011-ի հունիսի 12-ի վերջին ընտրությունների արդյունքներով ԱՇԿ-ն հավաքեց ձայների 13 տոկոսը: Թուրքիայի Ազգային մեծ ժողովում ունի 53 պատգամավոր, նախագահը Դալեթ Բահչելին է:

«Մայր հայրենիք» կուսակցություն (ՄՀԿ) – Anavatan Partisi (ANAP)

Աջակենտրոն պահպանողական կուսակցություն է, տնտեսության մեջ՝ ազատական: Հիմնադրվել է 1983թ. մայիսի 20-ին: Հիմնադիր նախագահը տեխնոկրատ Թուրգութ Օզալն է: Ներառելով իր կազմում ավանդական «Արդարություն», Հանրապետական ժողովրդական, «Ազգային փրկություն» և «Ազգայնական շարժում» կուսակցությունների նախկին անդամներին՝ ՄՀԿ-ն հանդես է եկել ազգայնական, պահպանողական, ազատական և սոցիալ-ժողովրդավարական հոսանքներն իր հովանու ներքո միավորելու հավակնություններով: Կուսակցության վրա ակնհայտ էր գեներալ Էվրենի վարչակազմի դրոշմը, ինչն արտահայտվեց 1980թ. սեպտեմբերի զինվորական հեղաշրջման նկատմամբ հանդուրժողական մոտեցումով: Արտահայտում է միջին խավերի շահերը, գլխավոր առաջադրանքն է համարում թուրքական տնտեսության ազատականացումը: Արտաքին քաղաքականության մեջ կուսակցությունը պաշտպանում է ԱՄՆ-ի հետ

Թուրքիայի ռազմաքաղաքական դաշինքն ամրապնդելու և Եվրամիության հետ սերտաճելու գիծը:

1983թ. նոյեմբերի 6-ի խորհրդարանական ընտրություններին կուսակցությունը, ստանալով ընդհանուր ձայների 45,1 տոկոսը, կատարյալ հաղթանակ տարավ և միանձնյա իշխանության եկավ: Թեև 1987թ. նոյեմբերի 29-ի ընտրություններում, որոնք վաղաժամ էին, ՄՀԿ ստացած ձայները իջել էին 36,2 տոկոսի, բայցևայնպես այն պահպանեց իշխանությունը: Այսպիսով՝ կազմավորվեց վարչապետ Օզալի երկրորդ կառավարությունը:

1989թ. նոյեմբերի 10-ին ԹԱՄԺ-ը նախագահի պաշտոնին առաջադրեց Թուրգութ Օզալին: Քանի որ սահմանադրության համաձայն՝ նա վայր էր դրել կուսակցության նախագահի լիազորությունները, ուստի այդ պաշտոնում նրան փոխարինեց Յըլդըրըմ Աքբուլութը և կազմեց նոր կառավարություն: Օզալի հեռացումը նախագահի պաշտոնից բացասաբար անդրադարձավ կուսակցության վրա, սրվեցին ներքին տարաձայնությունները: Վարչապետ Աքբուլութի կառավարությունը հայտնվեց ճգնաժամի մեջ:

1991թ. հունիսի 15-ին ՄՀԿ համագումարը, Աքբուլութի փոխարեն, նախագահ ընտրեց Մեսութ Յըլմազին, որը նաև դարձավ վարչապետ: 1991թ. հունիսի 23-ին կազմավորվեց Յըլմազի կառավարությունը: Սակայն, կուսակցական ճգնաժամի պայմաններում, որը վերաճել էր կառավարականի, Յըլմազն ուրիշ այլընտրանք չգտավ, քան խորհրդարանական վաղաժամ ընտրություններ նշանակելը: Նույն թվականի հոկտեմբերի 20-ին տեղի ունեցած ընտրություններում, զիջելով դիրքերը «Ճշմարիտ ուղի» կուսակցությանը, «Մայր հայրենիք» կուսակցությունը հեռացավ իշխանությունից:

1995թ. դեկտեմբերի 24-ի ընտրություններում, ստանալով ձայների 19 տոկոսը, ՄՀԿ-ն խորհրդարանում ձեռք բերեց 132 մանդատ: Նույն թվականի մարտի 6-ին նախագահ Սուլեյման Դեմիրելի հանձնարարականով Մեսութ Յըլմազի գլխավորությամբ կազմավորվեց «Մայր հայրենիք»-«Ճշմարիտ ուղի» կուսակցությունների կառավարող կոալիցիան: Սակայն շուտով ՃՈՒԿ-ը դուրս եկավ կառավարության կազմից: 1996-ի հունիսին փլուզվեց Յըլմազի կառավարությունն, ու ՄՀԿ-ն հեռացավ իշխանությունից:

1997թ. հունիսի 2-ին, երբ բանակի միջամտությամբ տապալվել էր Նեջմեթին Էրբաքանի գլխավորած «Բարօրություն»-«Ճշմարիտ ուղի» կուսակցությունների կոալիցիոն կառավարությունը, Մեսութ Յըլմազը կազմեց հերթական՝ երրորդ կառավարությունը, դրա կազմում ընդգրկելով Ձախ ժողովրդավարական և «Ժողովրդավար Թուրքիա» կուսակցություններին: Սակայն նրա այս կառավարությունը նույնպես անկենսունակ գտնվեց և հրաժարական տվեց 1998թ. նոյեմբերին:

1999թ. ապրիլի 18-ին նշանակվեցին ԹԱՄԺ ընտրություններ, որոնց արդյունքում ՄՀԿ-ն ստացած ձայների 13,2 տոկոսով պատգամավորական 86 տեղ ձեռք բերեց խորհրդարանում: Նույն թվականին կոալիցիոն հիմունքներով ՁԺԿ-ի և ԱՇԿ-ի հետ ընդգրկվեց նաև Բյուլենթ Էջևիթի կառավարության կազմում, սակայն հաջորդ՝ 2002թ. նոյեմբերի 3-ի ընտրություններում ջախջախիչ պարտություն կրեց և դուրս մնաց խորհրդարանից: Նույն թվականին նախագահի պաշտոնից հրաժարվեց Մեսութ Յըլմազը:

Այդ ընտրություններում «Մայր հայրենիք» կուսակցությունն ընդամենը հավաքել էր ձայների 5,1 տոկոսը: Պատկերն էլ ավելի վատթարացավ 2007 և հատկապես 2011թթ. ընտրություններում: Այսպիսով՝ քաղաքական այս կազմակերպությունը վերածվեց «գրպանային» կուսակցության: Ներկայումս կուսակցության գլխավոր նախագահը Սալիհ Ուզունն է, որն այդ պաշտոնը զբաղեցնում է 2009-ից:

«Ճշմարիտ ուղի» կուսակցություն (ՃՈՒԿ) – Doğru Yol Partisi (DYP)

Աջակենտրոն կուսակցություն է, ունի ազգային ազատականության ուղղվածություն: Համարվում է 1980թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջման հետևանքով իշխանությունից հեռացված «Արդարություն» կուսակցության իրավաժառանգորդը, որն ստեղծվել էր ժողովրդավարական կուսակցության հենքի վրա: Կուսակցությունը գլխավորել է հիմնադիր նախագահ Յըլդըրըմ Ավջըն:

1985թ. մայիսի 14-ին հրավիրված առաջին համագումարը ՃՈՒԿ նախագահ ընտրեց Սուլեյման Դեմիրելի զինակից Հյուսամեթին Ջինդորուքին: Սակայն 1987թ. սեպտեմբերի 6-ին, երբ վերականգնվեցին Դեմիրելի քաղաքական իրավունքները, Ջինդորուքը հրաժարվեց նախագահի պաշտոնից: Նույն թվականի սեպտեմբերի 24-ին կուսակցությունն արտահերթ համագումար հրավիրեց, որտեղ նախագահ ընտրվեց Սուլեյման Դեմիրելը:

1984թ. նոյեմբերի 29-ի խորհրդարանական ընտրություններում կուսակցությունը ձեռք էր բերել 59 մանդատ՝ ստանալով ընտրողների ընդհանուր ձայների 19,1 տոկոսը: Նախագահի պաշտոնում Դեմիրելի ընտրությունը նպաստեց կուսակցության հեղինակության աճին: 1991թ. հոկտեմբերի 20-ի ընտրություններում արդեն ՃՈՒԿ-ը հավաքեց ձայների ավելի քան 27 տոկոսը՝ ձեռք բերելով պատգամավորական 178 տեղ՝ հարաբերական մեծամասնություն ապահովելով խորհրդարանում: Դա իշխանության գալու հնարավորություն ընձեռեց կուսակցությանը, և Դեմիրելը կոալիցիոն կառավարություն կազմեց ՍԺԺԿ-ի հետ:

1993թ. ապրիլի 17-ին հանկարծամահ եղավ նախագահ Թուրգութ Օզալը: Նույն թվականի մայիսի 16-ին ԹԱՄԺ-ը նախագահի պաշտոնին ընտրեց Սուլեյման Դեմիրելին: Քանի որ Դեմիրելը, ըստ սահմանադրության, վայր էր դրել կուսակցության ղեկավարի լիազորությունները, ուստի հունիսի 13-ին հրավիրվեց արտակարգ համագումար, որտեղ ՃՈՒԿ նախագահ ընտրվեց Դեմիրելի կառավարության տնտեսության գծով պետնախարար Թանսու Չիլերը: Հաջորդ օրը նա կառավարություն կազմելու հանձնարարական ստացավ երկրի նախագահից:

1995թ. սրվեցին «Ճշմարիտ ուղի» և Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական կուսակցությունների հարաբերությունները, ինչի հետևանքով տապալվեց վարչապետ Չիլերի կոալիցիոն կառավարությունը: 1996թ. ՃՈՒԿ-ը կոալիցիոն հիմունքներով մասնակցեց «Բարօրություն» կուսակցության նախագահ, վարչապետ Էրբաքանի կառավարությանը, որի կազմում Թանսու Չիլերը նշանակվեց փոխվարչապետ և արտգործնախարար: Սակայն 1997թ. փետրվարի 28-ին բանակը հուշագիր ներկայացրեց Էրբաքանին, որն էլ ստիպված հրաժարական տվեց: «Բարօրություն» կուսակցության հետ իշխանությունից զրկվեց նաև ՃՈՒԿ-ը:

1999թ. ապրիլի 18-ի ընտրություններում ՃՈՒԿ-ը, ստանալով ձայների

12 տոկոսը, հազիվ մուտք գործեց խորհրդարան, իսկ 2002թ. նոյեմբերի 3-ի ընտրությունները կատարյալ հիասթափություն առաջացրին: Կուսակցությանը չհաջողվեց հաղթահարել 10 տոկոսանոց արգելքը, և այն դուրս մնաց խորհրդարանից: Ստանձնելով ջախջախիչ այս պարտության պատասխանատվությունը՝ Թանսու Չիլերը հրաժարվեց նախագահի պաշտոնից: Նույն թվականի դեկտեմբերի 14-ին գումարված համագումարը ՃՈՒԿ գլխավոր նախագահ ընտրեց Մեհմեթ Աղարին:

Այս փոփոխությունը, սակայն, ի զորու չեղավ բարելավելու իրերի դրությունը հօգուտ կուսակցության: 2007թ. մայիսի 27-ին, համաձայն «Մայր հայրենիք» կուսակցության նախագահ Էրքան Մումջուի հետ Աղարի ձեռք բերած պայմանավորվածության, ՃՈՒԿ-ն ինքնալուծարվեց: Մինչ այս երկու կուսակցությունները միավորվում էին, որ ստեղծեն միավորված ժողովրդավարական կուսակցությունը, մայիսի 28-ին կուսակցականները Չեթին Օզաչրքգյոզի գլխավորությամբ վերականգնեցին ՃՈՒԿ գործունեությունը, որը, սակայն, ձևական բնույթ է կրում: Օզաչրքգյոզի գլխավորած այս կուսակցությունը ներկայումս որևէ ազդեցություն չունի Թուրքիայի քաղաքական կյանքում:

Ժողովրդավարական ձախ կուսակցություն (ԺՁԿ) – Demokratik Sol Parti (DSP)

Ձախակենտրոն կուսակցություն է, ունի սոցիալ-ժողովրդավարական ուղղվածություն: Կազմավորվել է 1985թ. նոյեմբերի 14-ին, հայտնի քաղաքական գործիչ Բյուլենթ Էջևիթի տիկնոջ՝ Ռահշան Էջևիթի նախաձեռնությամբ: 1986թ. մայիսին գումարվեց կուսակցության առաջին համագումարը, որը նախագահ ընտրեց Ռահշան Էջևիթին: Սակայն 1987թ. սեպտեմբերի 6-ին, երբ վերականգնվեցին նախկին գործիչների քաղաքական իրավունքները, Ձախ ժողովրդավարական կուսակցության նախագահի պաշտոնը ստանձնեց Բյուլենթ Էջևիթը:

Էջևիթի նախագահությամբ աճեց կուսակցության ժողովրդականությունը: 1991թ. հոկտեմբերի 20-ի խորհրդարանական ընտրություններին

կուսակցությունը հավաքել էր ընտրողների ընդհանուր ձայների 10,7 տոկոսը՝ ձեռք բերելով խորհրդարանում 7 մանդատ, 1995թ. դեկտեմբերի 24-ին արդեն 14,6 տոկոսի քվեներով ձեռք բերեց 76 մանդատ, իսկ 1999թ. ապրիլի 18-ի ընտրություններում ստացած ձայների ցուցանիշը բարձրացրեց 22,1 տոկոսի և զբաղեցրեց առաջին տեղը ԹԱՄԺ-ում: Այս հաղթանակը հնարավորություն տվեց ԺՁԿ-ին կազմելու կոալիցիոն կառավարություն՝ «Մայր հայրենիք» և «Ազգայնական շարժում» կուսակցությունների մասնակցությամբ, որը գլխավորեց վարչապետ Բյուլենթ Էջևիթը:

2001թ. ապրիլի 29-ին հրավիրված համագումարում, չնայած ներկուսակցական տարաձայնություններին, վարչապետ Էջևիթը վերընտրվեց կուսակցության նախագահ: 2002թ. մայիսին, սակայն, վատթարացավ Էջևիթի առողջական վիճակը: Կուսակցությունը պառակտվեց, նրա շարքերից արտգործնախարար Իսմայիլ Ջեմի գլխավորությամբ հեռացան մի շարք առաջատար գործիչներ, ինչի հետևանքով կուսակցության մանդատների թիվը խորհրդարանում կրճատվեց 128-ից 64-ի:

Վարչապետ Էջևիթի վատառողջությունը խարխլեց նաև նրա կառավարության դիրքերը: Ստեղծված իրավիճակում Էջևիթի կառավարող կոալիցիայի անդամ, ԱՇԿ նախագահ, փոխվարչապետ Դևլեթ Բահչելիի առաջարկով նշանակվեցին խորհրդարանական վաղաժամ ընտրություններ: Հատկանշական է, որ 2002թ. նոյեմբերի 3-ին տեղի ունեցած ընտրություններում կոալիցիայի անդամ կուսակցությունները խայտառակ պարտություն կրեցին: Նրանցից ոչ մեկին չհաջողվեց խորհրդարան մտնել, ԺՁԿ-ն, որ գլխավորում էր կառավարող կոալիցիան, հավաքեց ընդամենը ձայների 1,5 տոկոսը:

2004թ. հուլիսի 24-ին կուսակցության 6-րդ համագումարում Բյուլենթ Էջևիթը հրաժարական տվեց, նրան նախագահի պաշտոնում փոխարինեց Չեքի Սեզերը: Սակայն նոր նախագահի ընտրությամբ սրվեց ներկուսակցական ճգնաժամը: Կուսակցությունը չմասնակցեց 2007թ. հուլիսի 22-ի խորհրդարանական ընտրություններին, իսկ 2011թ. հունիսի 12-ի ընտրություններում ստացավ ընտրողների ընդհանուր ձայների 0,25 տոկոսը միայն: Նույն թվականի հուլիսի 10-ին հրավիրված արտակարգ համագումարում ԺՁԿ նախագահ ընտրվեց Մասում Թյուրքերը, որն էլ շարունակում է ղեկավարել:

«Արդարություն և զարգացում» կուսակցություն (ԱԶԿ) – Adalet ve Kalkınma Partisi (AK Parti)

Իսլամամետ կուսակցություն է: Հիմնադրվել է 2001թ. օգոստոսի 14-ին: Հիմնադիրը Ռեջեփ Թայիփ Էրդողանն է: Հիմնադիր կազմի անդամներն են Աբդուլահ Գյուլը, Աբդուլաթիֆ Շեները, Իդրիս Նաիմ Շահինը, Բինալի Յըլդըրըմը և Բյուլենթ Արընչը: Բոլորն էլ եղել են Նեջմեթին Էրբաքանի իսլամական «Բարօրություն» կուսակցության ակտիվիստներ: Նրանք, ներկայացնելով կուսակցության մեջ նորարարական երիտասարդական թևը, պայքար են մղել պահպանողական ղեկավար կազմի դեմ: Պահպանողական-նորարարներ պայքարը շարունակվել է նաև Սահմանադրական դատարանի որոշմամբ լուծարված ԲԿ իրավաժառանգորդ «Առաքինություն» կուսակցության ներսում:

2001թ., սակայն, Սահմանադրական դատարանը լուծարման որոշում ընդունեց նաև «Առաքինություն» կուսակցության վերաբերյալ: Մինչ ավանդապահ ղեկավարությունն աշխատանքներ էր նախաձեռնում, որ կազմակերպության հենքի վրա ստեղծի «Երջանկություն» անվամբ նոր կուսակցություն, Էրդողանի գլխավորած երիտասարդական թևը, որ տանուլ էր տվել ներկուսակցական պայքարը, որոշում է ստեղծել իր կուսակցությունը: Նրանց են միանում նաև «Առաքինություն» կուսակցության բազմաթիվ այլ անդամներ: Շուտով ԱԶԿ շարքերը համալրվում է աջակենտրոն ՄՀԿ և ՃՌԿ նախկին անդամներով:

ԱԶԿ-ն արտասահմանում ստացավ չափավոր իսլամականի համարում: Կուսակցության ղեկավարները նախընտրում են ԱԶԿ-ն անվանել ժողովրդավար-պահպանողական: Սակայն որքան էլ ղեկավարները հայտարարեն, թե իրենց կուսակցությունը ԲԿ և ԱՌԿ իրավաժառանգորդը չէ, իրականում վերջիններիս ծրագրերին են համապատասխանում ԱԶԿ ծրագրի որոշակի հիմնադրույթները, հատկապես ներքին քաղաքականության հարցերում:

ԱԶԿ-ն դատապարտում է բանակի միջամտությունը քաղաքականությանը և հանդես է գալիս քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների ընդլայնման կարգախոսներով: Նա աշխարհիկությունը մեկնաբանում է որպես կրոնական քարոզչության ազատություն և դա ծառայեցնում է քաղաքական նպատակներին: Կուսակցությունը թուրք ազգի միասնականությունը պայմանավորում է ազգայինի հետ նաև իսլամական արժեքների պահպանմամբ, որի հիմքում դնում է կրոնական դաստիարակությունը: Նման մոտեցումը կուսակցության համար առաջնահերթ խնդիր է դարձրել կրոնական վարժարանների ցանցի ընդլայնումը երկրում, ինչին ձեռնամուխ է եղել իշխանության գալու օրից: Թեև կուսակցությունը հենվում է կրոնամետ հասարակության և մուսուլման հոգևորականների վրա, բայցևայնպես դեմ է շարիաթի կանոնների կիրառմանը պետության կառավարման մեջ:

Կուսակցությունը չի մերժում նաև Արևմուտքի հետ մերձեցման թուրքական պետության ավանդույթները: Ընդհակառակը, Եվրամիության հետ անդամակցության բանակցությունները 2005-ին Թուրքիան սկսել է հենց ԱԶԿ կառավարման օրոք: Դրանով հանդերձ, ակնհայտ են թուրքական պետության կախվածությունն Արևմուտքից նվազագույնի հասցնելու, տարածաշրջանային գերտերության հավակնություններով Թուրքիային Մերձավոր և Միջին Արևելքի առաջատար երկիր դարձնելու «Արդարություն և զարգացում» կուսակցության հավակնությունները: Դա ենթադրում է Թուրքիայի քաղաքական ու տնտեսական կախվածության շեշտակի թուլացում, ինչին կուսակցությունը ձգտում է հասնել տարածաշրջանի երկրների հետ մերձեցման և իսլամական աշխարհի հետ սերտաճման ճանապարհով: Այն կարևոր նշանակություն է տալիս Հարավային Կովկասի և Միջին Ասիայի թյուրքալեզու հանրապետությունների հետ համագործակցությանը, դրա հաստատման համար, ի տարբերություն մյուս կուսակցությունների, լայնորեն օգտագործում է իսլամական գործոնը: 2011թ. ընտրված խորհրդարանում ԱԶԿ-ն ուներ 327 պատգամավոր, նախագահը վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն էր:

«Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցություն (ԽԺԿ) - Barış ve Demokrasi Partisi (BDP)

Ձախակենտրոն քրդական կուսակցություն է, ունի սոցիալ-ժողովրդավարական ուղղվածություն: Դիտորդի կարգավիճակով մասնակցում է Սոցինտերնի համաժողովներին: «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցության հենքի վրա կազմավորվել է 2008թ. մայիսի 2-ին: Կուսակցության հիմնադիր նախագահը փաստաբան Մուսթաֆա Այգիթն է: Նա և մյուս հիմնադիրները եղել են «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցության ակտիվիստներ:

2005թ. նոյեմբերի 9-ին հիմնադրված այս կուսակցությունն, իր հերթին, 1994թ. Թուրքիայում ասպարեզ իջած քաղաքական քրդական առաջին կազմակերպության՝ Ժողովրդի ժողովրդավարական կուսակցության իրավաժառանգորդն էր: Մեղադրվել է ՔԱԿ քաղաքական կազմակերպության դերը ստանձնելու մեջ և 2009թ. դեկտեմբերի 11-ին Սահմանադրական դատարանի որոշմամբ լուծարվել է: Կուսակցության ակտիվիստները, նախապես հաշվի առնելով լուծարման հավանականությունը, քրդական այլընտրանքային կազմակերպություն ձևավորելու որոշում ընդունեցին, որն էլ հիմք հանդիսացավ «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցության հիմնադրման համար: Լուծարումից հետո «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցության նախկին գործիչների մեծամասնությունը նույն թվականի դեկտեմբերի 23-ին քրդաբնակ Դիարբեքիրում կազմակերպված հանդիսավոր արարողությամբ անցավ «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցության շարքերը:

ԽԺԿ-ն հանդես է գալիս Թուրքիայում ազգային փոքրամասնությունների, էթնիկ և կրոնական խմբավորումների սահմանադրական իրավունքների պահպանման համար: Կուսակցությունը ՔԱԿ-ը չի դիտարկում որպես ահաբեկչական կազմակերպություն, քրդական հարցի լուծումը Թուրքիայում պայմանավորում է ՔԱԿ-ի հետ իշխանությունների երկխոսությամբ: Ելնելով քրդերի իրավահավասարության սկզբունքից՝ ԽԺԿ-ն պաշտպանում է երկրում քրդերի ազգային ինքնության ճանաչման, մայրենի քրդերենով կրթության և տեղական ինքնակառավարման մարմինների շրջանակում ինքնուրույնության համար ծավալվող քրդական շարժումը: Կողմնակից է ՔԱԿ զինյալ պայքարի փոխադրմանը քաղաքական հարթություն:

2011թ. հունիսի 12-ի խորհրդարանական ընտրություններին ԽԺԿ-ն մասնակցեց միայն մեծամասնականով: Թեև հավաքեց ընտրողների ձայների 6,6 տոկոսը, սակայն որպես անկախ թեկնածու խորհրդարան մտած նրա պատգամավորները, ելնելով իրենց կուսակցական պատկանելությունից, այնտեղ ձևավորեցին խմբակցություն: Այսպիսով՝ ԽԺԿ-ն կարողացավ մուտք գործել ԹԱՄԺ: Ունի պատգամավորական 35 մանդատ, 2011թ. սեպտեմբերից կուսակցությունը ղեկավարում են համանախագահներ Սելահաթին Դեմիրթաշն ու Գյուլթան Քըշանաքը[33]:

33 2012թ. հոկտեմբերի 15-ին ձևավորվեց ժողովուրդների ժողովրդավարական կուսակցությունը՝ Halkların Demokratik Partisi (HDP), որին անդամակցեցին ԽԺԿ մի շարք անդամներ, այդ թվում պատգամավորներ:

2. ԱԶԴԵՑԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼ ԱԹԱԹՅՈՒՐՔ

Թուրքիայի Հանրապետության հիմնադիրը և առաջին նախագահը (1923-38թթ.) ծնվել է Սալոնիկում, մանր առևտրականի ընտանիքում: Մուսթաֆա Քեմալի ծննդյան ճշգրիտ ամսաթիվը հայտնի չէ. հետագայում ինքը՝ Քեմալը, իր ծննդյան ամսաթիվ ընտրեց մայիսի 19-ը՝ Թուրքիայի ազգայնամոլական շարժման սկսվելու օրը: 1934թ. ԹԱՄԺ-ը նրան շնորհեց Աթաթյուրք՝ «թուրքերի հայր» անունը:

Սկզբնական շրջանում սովորել է սալոնիկյան զինվորական ուսումնարանում, ապա՝ Մոնաստիրի ռազմական լիցեյում, իսկ 1902թ. ընդունվել է Ստամբուլի ռազմական ակադեմիա, որն ավարտելուց հետո ստացել է բանակի գլխավոր շտաբի կապիտանի կոչում և ուղարկվել ծառայության Սիրիա: 1906թ. Քեմալը փորձում է ստեղծել սեփական գաղտնի հեղափոխական «Հայրենիք և ազատություն» կոմիտեն, իսկ հետագայում ընդգրկվում է «Միություն և առաջադիմություն» երիտթուրքական կոմիտեի շարքերը: Երիտթուրքերի առաջնորդ Էնվեր փաշայի հետ հակասություններ ունենալուց հետո հեռացել է քաղաքական ասպարեզից, թեև չուներ իթթիհադական վերնախավի հետ

որևէ սկզբունքային քաղաքական տարաձայնություն: Նա մնում էր երիտթուրքական կուսակցության անդամ մինչև դրա ինքնալուծարումը 1918թ.:

Մասնակցել է իտալա-թուրքական (1911-12թթ.) և 2-րդ Բալկանյան (1913թ.) պատերազմներին: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ստացել է գեներալ-մայորի (mirliva) աստիճան, վարել հրամանատարական պաշտոններ Դարդանելի (Գալիպոլի) պաշտպանությունն ապահովող զորաբանակում, կովկասյան (1916-1917թթ.) և պաղեստինյան (1917-18թթ.) ռազմաճակատներում: Պատերազմի վերջին վերադառնում է Կոստանդնուպոլիս՝ դառնալով սուլթան Մեհմեթ VI-ի համհարզը: 1919թ. մայիսին, սուլթանից ստանալով կայսրության փոքրասիական տարածաշրջանում տեղակայված 9-րդ բանակի տեսուչի պաշտոնը, Մուսթաֆա Քեմալը մեկնում է Սամսուն և շուտով դառնում այնտեղ ծավալվող ազգայնամոլական շարժման առաջնորդը, որը հետագայում նրա անունով կոչվում է «քեմալական շարժում»:

1920թ. ապրիլից Մուսթաֆա Քեմալը գլխավորում է ԹԱՄԺ-ը և նրա կառավարությունը, նշանակվում բանակի գլխավոր հրամանատար, Սաքարյայի ճակատամարտից հետո ստանում է մարշալի կոչում: Իսկ 1923թ. հոկտեմբերի 29-ին Հանրապետության հռչակումից 15 րոպե անց Մուսթաֆա Քեմալը միաձայն ընտրվեց Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ: Այդ պահից սկսած՝ նրա իշխանությունը կարելի է համարել բացարձակ: Մուսթաֆա Քեմալի ձեռքում կենտրոնացած էր ամբողջ գործադիր և օրենսդիր իշխանությունը, նա միաժամանակ հանրապետության ցմահ նախագահն ու իշխող ՀԺԿ անփոփոխ նախագահն էր:

Քեմալը երեխաներ չի ունեցել կնոջից՝ Լաթիֆեից, սակայն որդեգրել է ութ զավակ, որոնցից մեկն էր Սաբիհա Գյոքչենը (Խաթուն Սեբիլջյան)՝ առաջին կին օդաչուն, ում անունն է կրում Ստամբուլի ասիական մասի օդանավակայանը: Քեմալը մահացել է 1938թ. նոյեմբերի 10-ին, լյարդի ցիրոզից, աճյունն ամփոփված է Անկարայի Անըթքաբիր դամբարանում:

ԻՍՄԵԹ ԻՆՅՈՆՅՈՒ

Թուրքիայի երկարամյա վարչապետը և երկրորդ նախագահը ծնվել է 1884թ. սեպտեմբերի 24-ին Զմյուռնիայում (Իզմիրում): Նախնական և միջնակարգ ուսում ստացել է Սեբաստիայում, այնուհետև՝ Կոստանդնուպոլսում: Ուսումը շարունակել է ռազմական ուսումնարանում՝ ստանալով հրետանավորի կրթություն: Ավարտելուց հետո որպես սպա ծառայության է անցել ռազմական համակարգում: Օսմանյան շրջանում հասել է մինչև գնդապետի աստիճանի՝ ծառայելով տարբեր ռազմական ստորաբաժանումներում: Առաջին համաշխարհային պատերազմում եղել է թուրքական բանակի կովկասյան ճակատի կորպուսի հրամանատար: Հենց այդ տարիներին էլ ծանոթացել և մտերմացել է Մուսթաֆա Քեմալի հետ: 1920թ. ապրիլի 9-ին Մուսթաֆա Քեմալի հրավերով մեկնել է Անկարա և միացել քեմալական շարժմանն ու մի քանի օր անց՝ ապրիլի 23-ին մասնակցել ԹԱՄԺ առաջին նիստին՝ որպես Էդիրնեի պատգամավոր: Այս ընթացքում Կ.Պոլսի իշխանությունների կողմից նա հայտարարվում է հանցագործ և հեռակա կարգով դատապարտվում մահապատժի: Ակտիվորեն մասնակցել և ղեկավարել է քեմալականների ռազմական գործողությունները և 1921թ. հունվարին ստացել գեներալի՝ փաշայի աստիճան: Քեմալական կառավարությունում զբաղեցրել է գլխավոր շտաբի պետի, ապա՝ արտաքին գործերի նախարարի պաշտոնները: Հենց Իսմեթ փաշան է գլխավորել թուրքական պատվիրակությունը Լոզանի բանակցություններում, և դա համարվում է նրա դիվանագիտական գործունեության ամենահաջողված փուլերից մեկը: Հանրապետության հիմնադրումից հետո նշանակվել է երկրի վարչապետ, ինչպես նաև ընտրվել է ՀԺԿ փոխնախագահ: Պարգևատրվել է «Անկախության մեդալով»[34]: 1927թ. զորացրվել է և ամբողջովին տրվել քաղաքական գործունեությանը: Համարվում է մինչ այժմ Թուրքիայի վարչապետի պաշտոնն ամենաերկար զբաղեցրած քաղաքական գործիչը. ընդհանուր առմամբ նա վարչապետ է եղել 16 տարի չորս ամիս: 1938թ. նոյեմբերի 11-ին Քեմալ Աթաթյուրքի մահից հետո ընտրվել է Թուրքիայի երկրորդ նախագահ և պաշտոնավարել մինչև 1950թ.: Հասարակական և քաղաքական ընկալումներում համարվել է Աթաթյուրքից հետո «երկրորդ մարդը»: 1950թ. հետո՝ ԺԿ իշխանության տարիներին, եղել է ընդդիմության առաջնորդ՝ գտնվելով բուռն քաղաքական իրադարձությունների հորձանուտում: 1960թ. ռազմական հեղաշրջումից հետո կրկին ստանձնել է վարչապետի պաշտոնը: 1970-ական թվականների սկզբին ՀԺԿ ներսում սկսվում են քաղաքական գծի վերաբերյալ բուռն քննարկումներ, կուսակցության գլխավոր քարտուղար Բյուլենթ Էջևիթի ու Իսմեթ Ինյոնյուի միջև ընթացող պայքարում նախկին նախագահը չի ստանում կուսակցականների մեծամասնության աջակցությունը և 1972թ. մայիսի 8-ին հրաժարվում է 34 տարի ղեկավարած ՀԺԿ նախագահի պաշտոնից: Նույն թվականի նոյեմբերի 4-ին Իսմեթ Ինյոնյուն դուրս է գալիս Հանրապետական ժողովրդական կուսակցությունից, ինչպես նաև հրաժարվում է պատգամավորական մանդատից՝ փոխարենը նախընտրելով դառնալ սենատոր, որի իրավունքն ուներ որպես նախկին նախագահ: Մահացել է 1973թ. դեկտեմբերի 25-ին, թաղված է Անըթքաբիր պանթեոնում՝ Աթաթյուրքի դամբարանի դիմաց:

34 «Անկախության մեդալը» Թուրքիայի բարձրագույն պարգևներից է, որը տրվել է քեմալական շարժմանը «ռազմաճակատում և թիկունքում մասնակցած ու նպաստ բերած մարդկանց»: Ընդհանուր առմամբ այդ մեդալին է արժանացել 95.261 անձ:

ՋԵԼԱԼ ԲԱՅԱՐ

Թուրքիայի վարչապետը և երրորդ նախագահը ծնվել է 1883թ. մայիսի 16-ին Բուրսայի Ումուրբեյ գյուղում՝ Բուլղարիայից ներգաղթյալների ընտանիքում: Ստացել է տնտեսագիտական կրթություն և ուսումն ավարտելուց հետո որպես պետական պաշտոնյա աշխատել պետական հիմնարկներում ու բանկային համակարգում:

1908թ. անդամակցել է երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը: Զմյուռնիայում «Հալքա Դողրու» ամսագրում Թուրգութ Ալփ կեղծանունով հանդես է եկել տնտեսագիտական հոդվածներով: Եղել է վերջին օսմանյան խորհրդարանի պատգամավոր Սարուխանի շրջանից: Այնուհետև միացել է քեմալական շարժմանը և ակտիվ գործունեություն ծավալել Այդընում ու շրջակայքում՝ ընդդեմ հույների, կրելով Գալիփ Հոջա կեղծանունը: Եղել է Սարուխանի առաջին ԹԱՄԺ պատգամավոր, ինչպես նաև զբաղեցրել է էկոնոմիկայի նախարարի պաշտոնը քեմալական առաջին կառավարությունում: Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից հետո ընտրվել է պատգամավոր Իզմիրից, իսկ 1924թ. Մուսթաֆա Քեմալի հանձնարարությամբ հիմնադրել և ղեկավարել է Թուրքիայի գործարար բանկը (Türkiye İş Bankası): 1932-37թթ. եղել է էկոնոմիկայի նախարար, 1937-39թթ.՝ Թուրքիայի վարչապետ, այնուհետև քաղաքական գործունեությունը շարունակել է որպես պատգամավոր:

1946թ. հիմնադրել և ղեկավարել է ԺԿ-ն, որի հաղթանակից հետո՝ 1950թ., ընտրվել է Թուրքիայի երրորդ նախագահ և պաշտոնավարել տասը տարի: 1960թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից հետո ձերբակալվել

է և դատապարտվել մահվան, սակայն առաջացած տարիքի պատճառով մահապատիժը փոխարինվել է ցմահ ազատազրկության: Պատիժն անցկացրել է Կեսարիայի բանտում, սակայն 1964թ. նոյեմբերի 7-ին վատառողջության պատճառով ազատ է արձակվել: Իսկ 1966թ. հուլիսի 7-ին նախագահ Ջևդեթ Սունայի հրամանով նրա հանդեպ կիրառվել է համաներում՝ հենվելով սահմանադրության 97-րդ հոդվածի վրա: Մահացել է 1986թ. օգոստոսի 22-ին, 103 տարեկան հասակում և թաղված է իր հայրենի Ումուրբեյ գյուղում:

ԱԴՆԱՆ ՄԵՆԴԵՐԵՍ

1950-60թթ. Թուրքիայի վարչապետը ծնվել է 1899թ. Այդընում, խոշոր հողատիրոջ ընտանիքում: Ավարտել է Զմյուռնիայի Ամերիկյան քոլեջը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եղել է պահեստազորային սպա, սակայն հիվանդության պատճառով անմիջականորեն չի մասնակցել ռազմական գործողություններին: Մասնակցել է քեմալական շարժմանը և պարգևատրվել Անկախության մեդալով: Հանրապետության հիմնադրումից հետո շարունակել է ուսումը և ավարտել Անկարայի համալսարանի իրավաբանության ֆակուլտետը: 1930թ. Այդընում կազմավորել և ղեկավարել է Ազատական հանրապետական կուսակցության տարածքային կազմակերպությունը, սակայն այդ կուսակցության լուծարումից հետո անդամակցել է ՀԺԿ-ին և 1931թ. ընտրվել Այդընի պատգամավոր: Լինելով խոշոր կալվածատեր՝ որոշակի խնդիրներ է ունեցել պետության վարած տնտեսական քաղաքականության հետ, որը հատկապես սուր դրսևորվել է Իսմեթ Ինյոնյուի նախագահության տարիներին: Եղել է ՀԺԿ իշխանությունների քաղաքականությունը քննադատող հայտնի «Զորսի հռչակագրի» հեղինակներից մեկը: 1945թ. դուրս գալով ՀԺԿ-ից՝ մի խումբ համախոհների հետ հիմնում է ԺԿ-ն, որը հաղթում է 1950թ. խորհրդարանական ընտրություններում: Ջելալ Բայարի Թուրքիայի նախագահ ընտրվելուց հետո նշանակվում է վարչապետ, ինչպես նաև ընտրվում է ԺԿ նախագահ: Տասը տարի զբաղեցնում է Թուրքիայի վարչապետի պաշտոնը: 1960թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից

հետո սկսված դատավարության արդյունքում դատապարտվում է մահվան և 1961թ. սեպտեմբերի 17-ին Իմրալը կղզում կախաղան է բարձրացվում: Սակայն 1990թ. ԹԱՄԺ որոշմամբ Մենդերեսը և նրա հետ մահվան դատապարտված արտաքին գործերի և ֆինանսների նախարարներն արդարացվել են: Այդ նույն որոշմամբ 1990թ. սեպտեմբերի 17-ին, այսինքն՝ Մենդերեսի մահվան 29-ամյակին, նրա աճյունն Իմրալը կղզուց տեղափոխվել և վերահուղարկավորվել է Ստամբուլում, Վաթան պողոտայում հատուկ իր համար կառուցված գերեզմանում: Թաղման արարողությանը մասնակցել է պետական վերնախավը՝ նախագահ Թուրգութ Օզալի գլխավորությամբ, ինչպես նաև հազարավոր քաղաքացիներ: Ի դեպ, 1994թ. Ստամբուլի այդ ժամանակվա քաղաքապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի առաջարկով այդ պողոտան վերանվանվել է Մենդերեսի անունով:

ԱԼՓԱՐՍԼԱՆ ԹՅՈՒՐՔԵՇ

Թուրքիայում պանթյուրքիստական շարժման առաջնորդը ծնվել է 1917թ. նոյեմբերի 25-ին Նիկոսիայում (Կիպրոս): 1930-ական թթ. սկզբներին ընտանիքով տեղափոխվել է Ստամբուլ, որտեղ ստացել է ռազմական կրթություն և ծառայության անցել թուրքական բանակում:



Պանթյուրքիստական գործունեություն ծավալելու համար 1944թ. Թյուրքեշը մի խումբ պանթյուրքիստների հետ դատապարտվել է տասը տարվա ազատազրկման: Սակայն երկու տարի անց ռազմական դատարանի որոշմամբ ազատ է արձակվել և վերադարձել զինվորական ծառայության: 1950-ական թթ. վերջերին ստացել է գնդապետի զինվորական աստիճան:

Ա. Թյուրքեշը մեծ դերակատարում է ունեցել 1960թ. ռազմական հեղաշրջման կազմակերպման գործում և հեղաշրջումից հետո դարձել է Ազգային միասնության կոմիտեի (ԱՄԿ) առանցքային անդամներից մեկը: Սակայն հեղաշրջումից ընդամենը մի քանի ամիս հետո՝ 1960թ. նոյեմբերի 13-ին, Թյուրքեշը ԱՄԿ 14 անդամների հետ միասին հեռացվեց ԱՄԿ-ից և նշանակվեց Դելիում Թուրքիայի դեսպանության ռազմական կցորդ: Թյուրքեշը Թուրքիա վերադարձավ միայն 1963թ. և սկսեց ակտիվ քաղաքական գործունեություն ծավալել: 1965թ. մտավ Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցության (Cumhuriyetçi Köylü Millet Partisi) մեջ և շուտով դարձավ նրա նախագահ՝ ամբողջովին վերափոխելով կուսակցության քաղաքական և գաղափարական ուղղությունները: 1969թ.

այն անվանափոխվեց «Ազգայնական շարժում» կուսակցության (ԱՇԿ), որը ներկայացնում էր պանթյուրքիստական ուղղությունը: 1970-ական թթ. Թյուրքեշի ղեկավարած կուսակցությունը «Ազգայնական ճակատ» իշխող կոալիցիայի մաս կազմեց, և նա ստանձնեց փոխվարչապետի պաշտոնը՝ ավելի խորացնելով իր ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում:

1980թ. ռազմական հեղաշրջումից հետո Թուրքիայում չորս գլխավոր կուսակցություններից ամենադաժան պատժամիջոցները կիրառվեցին հատկապես Թյուրքեշի կուսակցության նկատմամբ: Նա դատապարտվեց 11 տարի, մեկ ամիս և 10 օր ազատազրկման, սակայն մոտ 5 տարի անցկացրեց բանտում, ազատ արձակվեց և 1980-ական թթ. վերջերից վերադարձավ ակտիվ քաղաքականություն: Թյուրքեշը մահացել է 1997թ. ապրիլի 4-ին:

ԹՈՒՐԳՈՒԹ ՕԶԱԼ

Թուրքիայի վարչապետը և նախագահը ծնվել է 1927թ. Մալաթիայում ոչ շատ հարուստ, սակայն չափազանց հավատացյալ ընտանիքում: 1950թ. ավարտել է Ստամբուլի տեխնիկական համալսարանը՝ էլեկտրիկ-ինժեների մասնագիտությամբ: 1952թ. մեկնելով ԱՄՆ՝ ստացել է տնտեսագիտական կրթություն: Թուրքիա վերադառնալուց հետո նշանակվել է էլեկտրական էներգետիկայի ուսումնասիրությունների վարչության փոխտնօրեն:



1961-1962թթ. ծառայել է զինված ուժերում որպես ազգային պաշտպանության նախարարության գիտական խորհրդատվության խորհրդի անդամ, ներդրում է ունեցել Պետական պլանավորման կազմակերպության հիմնադրման գործում: Նույն ընթացքում դասավանդել է Անկարայի Մերձավորարևելյան տեխնիկական համալսարանում:

Որոշ ժամանակ աշխատելով որպես վարչապետի աշխատակազմի տեխնիկական մասնագետների խորհրդի անդամ՝ 1967-1971թթ. տարբեր ղեկավար պաշտոնների է նշանակվել Պետական պլանավորման կազմակերպությունում: 1971-1973թթ. Համաշխարհային բանկում եղել է խորհրդական: Թուրքիա վերադառնալուց հետո աշխատել է տարբեր արդյունաբերական կառույցներում, իսկ 1979թ. վերջերին նշանակվել է վարչապետի խորհրդական:

1980թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո կառավարությունում նշանակվել է տնտեսության ոլորտը համակարգող

փոխվարչապետ: 1982թ. հրաժարական է տվել, իսկ մեկ տարի անց հիմնադրել է «Մայր հայրենիք» (Anavatan Partisi - ANAP) կուսակցությունը: Նույն 1983թ. խորհրդարանական ընտրություններում կուսակցությունը հաղթանակ է տարել, իսկ նա դարձել է Թուրքիայի վարչապետ: 1987թ. խորհրդարանական ընտրություններում նույնպես նրա կուսակցությունը հաղթանակ է տանում, և նա կրկին դառնում է վարչապետ: 1989թ. հոկտեմբերի 31-ին ԹԱՄԺ-ի կողմից ընտրվում է երկրի ութերորդ նախագահ:

1993թ. ապրիլի 17-ին Օզալը հանկարծամահ է լինում: Ըստ պաշտոնական տվյալների՝ նա մահացել էր սրտի կաթվածից, թեև դեռ այն ժամանակ էլ դա կասկածների առարկա էր Թուրքիայում. լուրեր էին պտտվում, թե Օզալին թունավորել են:

ԲՅՈՒԼԵՆԹ ԷՋԵՎԻԹ

Հինգ անգամ Թուրքիայի կառավարությունը ղեկավարած Բյուլենթ Էջևիթը ծնվել է 1925թ. մայիսի 28-ին, Ստամբուլի Բեշիքթաշ թաղամասում: 1944թ. ավարտել է Ռոբերտ քոլեջը: 1944թ. որպես թարգմանիչ սկսել է աշխատել մամուլի և հեռարձակման գլխավոր խմբագրությունում: 1946-1950թթ. Լոնդոնում Թուրքիայի դեսպանատանն աշխատել է որպես մամլո կցորդ:



1954թ. անդամագրվել է ՀԺԿ-ին: 1957թ. ընտրվել է պատգամավոր: 1961-1965թթ. եղել է աշխատանքի նախարար: 1965թ. մշակում է «Ձախ կենտրոնի» գաղափարախոսությունը և ստանձնում այդ հոսանքի ղեկավարումը: 1966թ. ընտրվում է ՀԺԿ գլխավոր քարտուղար, իսկ 1972թ.՝ ՀԺԿ նախագահ: 1973թ. ընտրություններում հաղթելուց հետո 1974թ. հունվարին Էրբաքանի հետ ձևավորում է կոալիցիոն կառավարություն՝ ստանձնելով վարչապետի պաշտոնը: Նրա վարչապետությունը նշանավորվեց 1974թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում Կիպրոսի 37%-ի զավթմամբ: 1977 և 1979թթ. Էջևիթը ևս երկու անգամ կարճատև ղեկավարում է Թուրքիայի կառավարությունը: 1980թ. զինվորական հեղաշրջումից հետո գաղափարակիցների հետ հեռացվել է քաղաքական գործունեությունից, նրա նկատմամբ դրվել է 10-ամյա արգելք քաղաքական ասպարեզում գործունեություն ծավալելու համար: Սակայն 1987թ. հանրաքվեով նրա վրայից հանվեց այդ արգելքը, և նա դարձավ Ժողովրդավարական ձախ (Demokratik Sol) կուսակցության առաջնորդը՝ այդ պաշտոնը ժառանգելով կնոջից՝ Ռահշան Էջևիթից:

1997-98թթ. Մեսութ Յըլմազի կառավարությունում զբաղեցրել է փոխ-

վարչապետի պաշտոնը: 1998-1999թթ. Էջևիթը եղել է վարչապետի ժամանակավոր պաշտոնակատարը: 1999թ. ապրիլի 18-ի խորհրդարանական ընտրություններում նրա կուսակցությունը հաղթեց և Մեսութ Յըլմազի «Մայր հայրենիք» ու Դևլեթ Բահչելիի «Ազգայնական շարժում» կուսակցությունների հետ ձևավորեց կոալիցիոն կառավարություն: Էջևիթը նշանակվեց վարչապետ և ղեկավարեց կառավարությունը մինչև 2002թ.:

2002թ. նոյեմբերյան արտահերթ խորհրդարանական ընտրություններում Էջևիթի կուսակցությունը չկարողացավ հաղթահարել 10%-ի արգելքը և դուրս մնաց խորհրդարանից: 2004թ. Էջևիթը հեռացավ ակտիվ քաղաքականությունից: Մահացել է 2006թ. նոյեմբերի 5-ին:

ՆԵՋՄԵԹԻՆ ԷՐԲԱՔԱՆ

Նեջմեթին Էրբաքանը թուրք իսլամամետ քաղաքական գործիչ էր, համարվում է Թուրքիայում քաղաքական իսլամի առաջամարտիկներից մեկը: Նա Millî Görüş («Ազգային տեսակետ») շարժման հիմնադիրներից էր և երկարամյա ղեկավարը:

Էրբաքանը ծնվել է 1926թ. Սինոփ քաղաքում: Սովորել է Ստամբուլի տեխնիկական համալսարանում, այնուհետև, Գերմանիայում տեխնիկական գիտությունների դոկտոր-ինժեների աստիճան ստանալուց հետո, վերադարձել է Թուրքիա և դասավանդել նույն համալսարանում:

Էրբաքանը քաղաքական դաշտ մտավ 1969թ., երբ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր ընտրվեց Քոնիայից: 1970թ. հիմնեց Milli Nizam («Ազգային կարգ») կուսակցությունը, որը, սակայն, 1 տարի անց փակվեց՝ որակավորվելով որպես աշխարհիկությանը հակասող կուսակցություն: 1972թ. հիմնված Millî Selamet («Ազգային փրկություն») կուսակցությունը 1973 և 1977թթ. խորհրդարանական ընտրություններում հասավ որոշակի հաջողությունների: Էրբաքանը 1974թ. Էջևիթի ղեկավարած կառավարությունում և 1975 և 1977թթ. Դեմիրելի ղեկավարած «Ազգային ճակատի» կառավարություններում ստանձնեց փոխվարչապետի պաշտոնը: 1980թ. հեղաշրջումից հետո կուսակցությունը փակվեց, իսկ Էրբաքանին արգելվեց քաղաքականությամբ զբաղվել 10 տարի: 1987թ. սահմանադրությունում փոփոխություն կատարվեց, նրան թույլատրվեց քաղաքականությամբ զբաղվել, և նա ստանձնեց 1983թ. հիմնադրված

Refah («Բարօրություն») կուսակցության ղեկը: 1994թ. մարտին ՏԻՄ, ապա 1995թ. դեկտեմբերին՝ խորհրդարանական ընտրություններում Էրբաքանի կուսակցությունն առաջինն էր: 1996թ. հուլիսին նա գլխավորեց կոալիցիոն կառավարությունը՝ ընդամենը 1 տարի ժամկետով: Այդ ընթացքում նա բարելավեց հարաբերություններն արաբական երկրների հետ, մի շարք բարեփոխումներ իրականացրեց, որոնք բարձրացնում էին իսլամի դերը հասարակական-քաղաքական կյանքում: 1997թ. հունիսին, զինվորականների ճնշումների ներքո, Էրբաքան-Չիլեր կոալիցիոն կառավարությունը հարկադրված էր հրաժարական տալ, իսկ Էրբաքանի քաղաքական գործունեության վրա արգելք դրվեց: Արգելքի ժամկետն անցնելուց հետո նա հիմնեց Saadet («Երջանկություն») կուսակցությունը, որը և ղեկավարեց նախ՝ 2003-2004թթ., այնուհետև՝ 2010-ից մինչև մահը՝ 2011թ. փետրվարի 27-ը:

ՍՈՒԼԵՅՄԱՆ ԴԵՄԻՐԵԼ

Թուրքիայի կառավարությունը յոթ անգամ ղեկավարած և երկրի իններորդ նախագահ Սուլեյման Դեմիրելը ծնվել է 1924թ. նոյեմբերի 1-ին Իսլամքյոյում: 1949թ. ավարտել է Ստամբուլի տեխնիկական համալսարանը՝ ստանալով ինժեների մասնագիտություն: Նախ՝ 1949-1950, ապա՝ 1954-1955 թվականներին ԱՄՆ-ում մասնագիտացել է պատնեշների կառուցման, ջրամատակարարման և էլեկտրիֆիկացիայի ուղղություններով:



Դեմիրելն իր քաղաքական գործունեությունը սկսել է 1962 թվականին՝ ընտրվելով «Արդարություն» կուսակցության գործադիր մարմնի անդամ: 1964թ. նոյեմբերին ընտրվել է կուսակցության նախագահ: 1965թ. փետրվարից մինչև հոկտեմբեր կառավարությունում իրականացրել է փոխվարչապետի պարտականությունները: 1965 թվականի հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած ընտրություններում «Արդարություն» կուսակցությունը հավաքեց ձայների 53 տոկոսը, իսկ Դեմիրելը մինչև 1969թ. գլխավորեց միակուսակցական կառավարությունը: 1969թ. խորհրդարանական ընտրություններում ևս մեկ անգամ հաղթում և կրկին ստանձնում է վարչապետի լիազորությունները: 1971թ. մարտի 12-ի ռազմական միջամտությունից հետո նա հրաժարականի դիմում է ներկայացնում: 1975-1980թթ. ևս երեք անգամ ստանձնում է վարչապետի պաշտոնը՝ ղեկավարելով 2 կոալիցիոն կառավարություններ և մեկ փոքրամասնության կառավարություն: 1980 թվականի սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման ժամանակ Դեմիրելը կրկին զբաղեցնում էր վարչապետի պաշտոնը և զինվորականների ճնշման տակ ստիպված էր երկրորդ անգամ հրաժարական տալ ու հեռանալ իշխանությունից: Նրան 10 տարով արգելվեց քաղաքական գործունեություն ծավալել: 1987թ. անցկացված սահմանադրական փոփոխությունների հանրաքվեով Դեմիրելին թույլ տրվեց վերադառնալ քաղաքական ասպարեզ: 1987թ. սեպտեմբերի 24-ին նա ստանձնեց Doğru Yol («Ճշմարիտ ուղի») կուսակցության նախագահությունը, իսկ 1987թ. Սպարտայից ընտրվեց պատգամավոր: 1991թ. հոկտեմբերի 20-ին Դեմիրելի կուսակցությունը հաղթեց ընտրություններում և Սոցիալ ժողովրդավարական ժողովրդական կուսակցության հետ ձևավորեց կոալիցիոն կառավարություն: Նա նշանակվեց վարչապետի պաշտոնում:թ. Օզալի հանկարծամահ լինելուց հետո 1993թ. մայիսի 16-ին ընտրվել է նախագահ և պաշտոնավարել մինչև ժամկետի ավարտը՝ 2000թ. մայիսի 16-ը:

ՌԵՋԵՓ ԹԱՅԻՓ ԷՐԴՈՂԱՆ

Ռեջեփ Էրդողանը վերջին 20 տարիների Թուրքիայի ազդեցիկ քաղաքական գործիչներից մեկն է: Նա աշխատել է Ստամբուլի քաղաքապետի պաշտոնում, ապա երեք անգամ անընդմեջ նշանակվել է վարչապետ՝ դառնալով բազմակուսակցական համակարգին անցնելուց ի վեր ամենաերկար պաշտոնավարած վարչապետը:

Էրդողանը ծնվել է 1954թ. փետրվարի 26-ին Ստամբուլի թաղամասերից մեկում՝ Քասըմփաշայում, ուր նրա ընտանիքը տեղափոխվել էր Ռիզե նահանգից: Նրա մանկությունն անց է կացել Ռիզեի նահանգի Պոտոմիա (Գյունեյսու) գյուղում: Տասներեք տարեկանում ընտանիքի հետ միասին վերադարձել է Ստամբուլ: Զբաղվել է ֆուտբոլով: Էրդողանը նախնական կրթությունն ստացել է Ստամբուլի կրոնական ավագ դպրոցներից (imam-hatip) մեկում, իսկ 1981թ. ավարտել է Աքսարայի տնտեսագիտության և առևտրային գործի դպրոցը, որը հետագայում վերափոխվեց Մարմարայի համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի: Ուսումնառության տարիներին Էրդողանը զբաղվել է նաև քաղաքական գործունեությամբ: 1976թ. դարձել է «Ազգային փրկություն» կուսակցության Բեյօղլուի երիտասարդական թևի ղեկավարը: 1983թ. կուսակցությունների հիմնադրումից հետո Էրդողանը անդամագրվեց «Բարօրություն» կուսակցությանը՝ 1984թ. դառնալով վերջինիս Բեյօղլուի տարածքային կազմակերպության ղեկավարը, իսկ 1985թ.՝ Ստամբուլի կուսակցական պատասխանատուն:

1994թ. մայիսի 27-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման

ընտրությունների արդյունքում նա դարձավ Ստամբուլի քաղաքապետ և պաշտոնավարեց մինչև 1998 թվականը: 1998թ. Էրդողանը ենթարկվեց 10-ամսյա ազատազրկման՝ Զ. Գյոքալփի ստեղծագործությունից Սիիթ (Սղերթ) քաղաքում մեջբերում կատարելու համար, նրան արգելվեց նաև քաղաքական գործունեություն ծավալել, որի պատճառով չէր կարող մասնակցել ընտրություններին: 2001թ. օգոստոսին Էրդողանը, Գյուլը և մի շարք այլ համախոհներ հիմնադրեցին «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, որը հաղթեց 2002թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններում, սակայն քաղաքական արգելքի պատճառով նա չէր կարող ընտրվել պատգամավոր: 2002թ. դեկտեմբերին խորհրդարանը սահմանադրական փոփոխություն կատարեց, և Էրդողանի վրա դրված արգելքը հանվեց: 2003թ. մարտին Սղերթում կայացած լրացուցիչ ընտրություններում Էրդողանը հաղթեց, դարձավ պատգամավոր և նախագահ Ահմեթ Սեզերի կողմից նշանակվեց վարչապետ: 2004 և 2009թթ. տեղական ինքնակառավարման, ապա՝ 2007 և 2011թթ. խորհրդարանական ընտրություններում Էրդողանի ղեկավարած «Արդարություն և զարգացում» կուսակցությունը հաղթել է ձայների մեծամասնությամբ: 2007 և 2010թթ. նրա կուսակցության առաջարկած սահմանադրական փոփոխություններն արժանացել են հասարակության հավանությանը: 2014թ. օգոստոսի 10-ին կայացած նախագահական ընտրություններում Ռեջեփ Թայիփ Էրդողան ընտրվեց Թուրքիայի 12-րդ նախագահ:

3. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1914-1918թթ.	Օսմանյան կայսրության մասնակցությունը Առաջին աշխարհամարտին՝ Քառյակ դաշինքի կազմում:
1918թ. հոկտեմբերի 30	Մուդրոսում Օսմանյան կայսրության և Անտանտի երկրների միջև զինադադարի կնքումը (Mondros Mütarekesi):
1919թ. հունվարի 18	Փարիզի Խաղաղության վեհաժողովի բացումը:
1919թ. մայիսի 15	Հունական զորքերը ափ են իջնում Իզմիրում (Զմյուռնիայում): Հույն-թուրքական պատերազմի սկիզբը:
1918-1919թթ.	«Իրավունքների պաշտպանության միությունների» ստեղծումը Փոքր Ասիայի զանազան բնակավայրերում:
1919թ. մայիսի 19	Մուսթաֆա Քեմալը տեղափոխվում է Սամսուն որպես արևելյան շրջանների զինվորական տեսուչ: Քեմալական շարժման սկիզբը:
1919թ. հուլիսի 23 - օգոստոսի 6	Արևելյան վիլայեթների «Իրավունքների պաշտպանության միությունների» կոնգրեսը Էրզրումում (Կարին): Էրզրումի հռչակագրի ընդունումը: Ներկայացուցչական կոմիտեի ստեղծումը Քեմալի գլխավորությամբ:
1919թ. սեպտեմբերի 4-11	Սվազի (Սեբաստիա) կոնգրեսը:
1919թ. դեկտեմբերի 27	Քեմալական զինված ջոկատների առաջին հարձակումը Կիլիկիայի հայության վրա Մարաշում:
1919-1920թթ.	Քեմալականների կողմից Կիլիկիայի հայաթափումը:
1920թ. հունվարի 28	«Ազգային ուխտ»-ի (Misak-i Milli) ընդունումը Օսմանյան խորհրդարանում:
1920թ. մարտի 16	Դաշնակիցների դեսանտի իջեցումը Ստամբուլում: Օսմանյան խորհրդարանի ցրումը:
1920թ. ապրիլի 23	Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) գումարումը Անկարայում՝ Մ. Քեմալի նախագահությամբ:
1920թ. հունիսի 7	ԹԱՄԺ որոշումը՝ անվավեր ճանաչել սուլթանական կառավարության կողմից 1920թ. մարտի 16-ից ի վեր ստորագրած բոլոր պայմանագրերը:
1920թ. օգոստոսի 10	Սևրի հաշտության դաշնագրի ստորագրումը Օսմանյան կայսրության և Անտանտի երկրների միջև:

1920թ. սեպտեմբերի 23	Քեմալական բանակի հարձակումը Հայաստանի Հանրապետության վրա: Թուրք-հայկական պատերազմի սկիզբը:
1920թ. դեկտեմբերի 2	Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը (չվավերացված): Թուրք-հայկական պատերազմի ավարտը:
1921թ. մարտի 16	ՌԽՖՍՀ-ի և քեմալական Թուրքիայի միջև «եղբայրության և բարեկամության մասին» պայմանագրի ստորագրումը Մոսկվայում:
1921թ. օգոստոսի 23-սեպտեմբերի 13	Ճակատամարտ Սաքարիա գետի մոտ: Քեմալական զինված ուժերի հաղթանակը հունական բանակի դեմ:
1921թ. հոկտեմբերի 13	Կարսի պայմանագրի կնքումը Հայկական, Վրացական և Ադրբեջանական ԽՍՀ-ների և քեմալական Թուրքիայի միջև: Կարսի և Իգդիրի բռնակցումը Թուրքիային:
1921թ. հոկտեմբերի 20	Ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը: Կիլիկիայի վերջնական անցումը Թուրքիային:
1922թ. սեպտեմբերի 9	Թուրքական զորքերի մուտքը Իզմիր (Զմյուռնիա): Քաղաքի հույն և հայ բնակչության կոտորածը:
1922թ. հոկտեմբերի 11	Մուդանյայի հաշտության պայմանագրի կնքումը: Հույն-թուրքական պատերազմի ավարտը:
1922թ. նոյեմբերի 1	ԹԱՄԺ որոշումը սուլթանության վերացման մասին:
1923թ. հուլիսի 24	Լոզանի հաշտության պայմանագրի ստորագրումը:
1923թ. հոկտեմբերի 13	ԹԱՄԺ-ը Անկարան հռչակում է Թուրքիայի մայրաքաղաք:
1923թ. սեպտեմբերի 9	Ժողովրդական (հետագայում՝ Հանրապետական ժողովրդական) կուսակցության (Cumhuriyet Halk Partisi) ստեղծումը:
1923թ. հոկտեմբերի 29	Թուրքիան հռչակվում է հանրապետություն: Մ. Քեմալը դառնում է հանրապետության նախագահ:
1924թ. մարտի 3	Խալիֆայության վերացում, Օսմանյան դինաստիայի արտաքսում, Շարիաթի և վաքֆների նախարարության վերացումը:
1924թ. մարտի 8	Շարիաթի դատարանների վերացումը:
1924թ. ապրիլի 10	Թուրքիայի Հանրապետության առաջին սահմանադրության ընդունումը:
1924թ. նոյեմբերի 17	Առաջադիմական Հանրապետական կուսակցության (Terakkiperver Cumhuriyet Firkasi) ստեղծումը:
1924թ.	Հույն-թուրքական բնակչության փոխանակումը համաձայն Լոզանի հաշտության պայմանագրի:
1925թ. փետրվար-ապրիլ	Քրդերի ապստամբությունը Շեյխ Սայիդի գլխավորությամբ:

1925թ. հունիսի 3	Կառավարությունն արգելում է Առաջադիմական հանրապետական կուսակցության գործունեությունը: Փաստացի անցում միակուսակցական համակարգին:
1926թ. հունիսի 5	Անկարայի պայմանագրի կնքումը Թուրքիայի, Իրաքի և Մեծ Բրիտանիայի միջև: Մոսուլի շրջանի վերջնական անցումը Իրաքին:
1927թ. հոկտեմբերի 15-20	Քեմալի 36-ժամյա ճառը ԹԱՄԺ-ում (Nutuk):
1928թ. ապրիլի 9	Թուրքական սահմանադրությունից հանվում է «Իսլամը Թուրքիայի Հանրապետության պետական կրոնն է» արտահայտությունը:
1928թ. նոյեմբերի 1	Լեզվի մասին օրենքը: Արաբատառ գրից անցում լատինատառին:
1930թ. օգոստոս-նոյեմբեր	Ազատական հանրապետական կուսակցության (Serbest Cumhuriyet Firkasi) գործունեությունը:
1930թ. դեկտեմբեր	Մենեմենի իրադարձությունները:
1931թ. մայիս	ՀԺԿ III համագումարի ժամանակ ընդունվում են կուսակցության վեց սկզբունքները (Alti Ok) (1937թ. ավելացվում են թուրքական սահմանադրությանը):
1932թ. հունվարի 23	Իրան - Թուրքիա պայմանագրի ստորագրումը Թեհրանում:
1932թ. հուլիսի 18	Թուրքիան դառնում է Ազգերի լիգայի անդամ:
1931-1932թթ.	Թուրքական պատմագիտական ընկերության (Türk Tarih Kurumu) և Թուրքական լեզվաբանական ընկերության (Türk Dil Kurumu) հիմնումը:
1934թ. հունիս-հուլիս	Հրեա բնակչության հալածանքները՝ «Թրակիայի դեպքերը» (Trakya olaylari):
1936թ. հուլիսի 20	Ստորագրվում է Մոնտրյոյի համաձայնագիրը, որը հաստատում է Բոսֆոր և Դարդանել նեղուցների վերջնական կարգավիճակը:
1937-1938թթ.	Դերսիմի (Թունջելի) ապստամբությունը: Դերսիմի բնակչության կոտորածը քեմալական իշխանության կողմից:
1938թ. նոյեմբերի 10	Մ. Քեմալ Աթաթյուրքի մահը:
1938թ. նոյեմբերի 11	ԹԱՄԺ-ը Իսմեթ Ինյոնյուին ընտրում է նախագահ և ազգային ղեկավար (Milli Şef) (Աթաթյուրքը հռչակվում է «Մեծագույն առաջնորդ (Ulu Önder):
1939թ. հունիսի 29	Ալեքսանդրեթի սանջաքի (Հաթայ) բռնակցումը Թուրքիային:
1941թ. հունիսի 25	Թուրքիան հայտնում է ԽՍՀՄ և Գերմանիայի միջև պատերազմում իր չեզոքության մասին:
1941-1942թթ.	Քսան դասակարգի զորակոչ (20 kura askerlik):
1942-1944թթ.	Ունեցվածքի հարկ (Varlik Vergisi):

1945թ. փետրվարի 23	Թուրքիան պատերազմ է հայտարարում Գերմանիային և Ճապոնիային:
1945թ. հունիսի 7	Ջելալ Բայարի, Ադնան Մենդերեսի, Ռեֆիք Քորալթանի և Ֆուաթ Քյոփրյուլյուի կողմից «Հորսի հուշագրի» (Dörtlü Takrir) հրապարակումը ԹԱՄԺ-ում:
1945թ. հոկտեմբերի 24	Թուրքիան դառնում է ՄԱԿ անդամ:
1946թ. հունվարի 7	Ժողովրդավարական կուսակցության (Demokrat Parti) ստեղծումը: Փաստացի անցում բազմակուսակցական համակարգին:
1947թ. մարտի 12	Հրապարակվում է ԱՄՆ նախագահ Հ. Թրումանի դոկտրինը:
1948թ. հուլիսի 4	Թուրք-ամերիկյան համաձայնագրի ստորագրումը «Մարշալի պլանի» շրջանակներում:
1950թ. մայիսի 14	Ժողովրդավարական կուսակցությունը հաղթում է խորհրդարանական ընտրություններում: Ջ. Բայարը ընտրվում է հանրապետության նախագահ, Ա. Մենդերեսը՝ վարչապետ (ՀԺԿ քսանյոթամյա միակուսակցական կառավարման ավարտը):
1950թ. հոկտեմբեր	Թուրքական ՋՈՒ մասնակցում են Կորեական պատերազմին:
1952թ. փետրվարի 18	Թուրքիան դառնում է Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) անդամ:
1953թ. մայիսի 30	ԽՍՀՄ նոտան Թուրքիային՝ վերջինիս նկատմամբ տարածքային պահանջներից հրաժարվելու մասին:
1955թ. փետրվարի 24	Բաղդադի պակտի ստորագրումը Թուրքիայի և Իրաքի միջև:
1955թ. սեպտեմբերի 6-7	Ստամբուլի և Իզմիրի հույն և հայ բնակչության դեմ ջարդարարություններ (6-7 Eylül Olaylari):
1960թ. ապրիլ-մայիս	Հակակառավարական ցույցեր Ստամբուլում և Անկարայում:
1960թ. մայիսի 27	Զինվորական հեղաշրջում գեներալ Ջեմալ Գյուրսելի գլխավորությամբ: Իշխանությունն անցնում է Ազգային միասնության կոմիտեին (Milli Birlik Komitesi): Ժողովրդավարական կուսակցության անդամների ձերբակալությունը:
1961թ. հուլիսի 9	Ժողովրդական հանրաքվեով ընդունվում է Թուրքիայի նոր սահմանադրությունը:
1961թ. սեպտեմբեր	Վարչապետ Ա. Մենդերեսի, ֆինանսների և արտաքին գործերի նախարարների մահապատիժը:
1964թ. մարտի 16	Հույն-թուրքական պայմանագրի չեղյալ հայտարարում և ստամբուլաբնակ հույների արտաքսում:

1969թ. փետրվար	Ալփարսլան Թյուրքեշը հիմնադրում է «Ազգայնական շարժում» կուսակցությունը (Milliyetçi Hareket Partisi) և կուսակցության երիտասարդական կազմակերպությունները՝ Գաղափարապաշտների օջախներ:
1969թ. փետրվարի 16	Հարձակում Ստամբուլում ձախակողմյան երիտասարդական կազմակերպությունների ցույցի մասնակիցների վրա՝ «Արյունոտ կիրակի»:
1970թ. հունվար	Նեջմեթին Էրբաքանը հիմնադրում է Ազգային կարգի կուսակցությունը (Milli Nizam Partisi):
1971թ. մարտի 12	Ռազմական միջամտություն: Սուլեյման Դեմիրելի կառավարության պաշտոնաթողությունը:
1974թ. հուլիսի 20	Թուրքիայի զինված ուժերի ներխուժումը Կիպրոս («Աթիլա» գործողությունը):
1977թ. մայիսի 1	«Գորշ գայլերի» ահաբեկչական գործողությունը Թաքսիմում՝ «Արյունոտ երկրորդ կիրակի»:
1978թ. նոյեմբերի 27	Քուրդիստանի աշխատավորական կուսակցության (PKK) հիմնադրումը՝ Աբդուլլահ Օջալանի գլխավորությամբ:
1978թ. դեկտեմբեր	Սուննիների և ալևիների բախումներ Քահրամանմարաշում:
1979-1980թթ.	Ահաբեկչություններ և անարխիա Թուրքիայում:
1980թ. սեպտեմբերի 12	Ռազմական հեղաշրջում գեներալ Քենան Էվրենի գլխավորությամբ:
1982թ. նոյեմբերի 7	Թուրքիայի նոր սահմանադրության ընդունումը: Գեներալ Ք. Էվրենը դառնում է հանրապետության նախագահ:
1983թ. դեկտեմբեր	Ռազմական հեղաշրջումից հետո առաջին քաղաքացիական կառավարությունը՝ Թուրգութ Օզալի գլխավորությամբ:
1984թ.	Քուրդիստանի աշխատավորական կուսակցության զինված պայքարի սկիզբը թուրքական կենտրոնական իշխանությունների դեմ:
1984թ. նոյեմբերի 15	Այսպես կոչված՝ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության (Kuzey Kıbrıs Türk Cumhuriyeti) հռչակումը:
1987թ.ապրիլի 14	Թուրքիան դիմում է Եվրամիությանն անդամակցության համար:
1991թ. դեկտեմբերի 24	Թուրքիան ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունը:
1993թ. ապրիլի 4	Թուրքիան միակողմանի փակում է հայ-թուրքական սահմանը և Հայաստանին ենթարկում շրջափակման:
1996թ. հունիսի 28	Ն. Էրբաքանը դառնում է վարչապետ:

1997թ. փետրվարի 28	Զինվորականները Էրբաքանի կառավարությանն են ներկայացնում երկրի վիճակի բարելավմանն ուղղված «խորհուրդները»: «Հետմոդեռն» ռազմական հեղաշրջումը:
1999թ. փետրվարի 15	Ա. Օջալանի ձերբակալությունը:
2002թ. նոյեմբերի 3	«Արդարություն և զարգացում» կուսակցության (Adalet ve Kalkınma Partisi) անցումը իշխանության:
2003թ. մարտի 14	Ռեջեփ Թայիփ Էրդողանը դառնում է Թուրքիայի վարչապետ:
2007թ. հունվարի 19	«Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը Ստամբուլում:
2008թ. հուլիս	«Էրգենեքոն»-ի գործով դատավարության սկիզբը:
2009թ. մայիսի 1	Թուրքիայի արտգործնախարար է նշանակվում Ահմեթ Դավութօղլուն: «Զրո խնդիր հարևանների հետ» թեզի հռչակումը թուրքական արտաքին քաղաքականության մեջ:
2009թ. հոկտեմբերի 10	Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման և սահմանների բացման մասին արձանագրությունների ստորագրում Ցյուրիխում:
2010թ. հունվարի 20	«Մեծ մուրճ» (Balyoz) օպերացիայի գաղտնազերծումը և դատավարության սկիզբը:
2010թ. մայիսի 31	Mavi Marmara-ի իրադարձությունները Գազայի հատվածում: Թուրք-իսրայելական հակամարտության սրացում:
2010թ. սեպտեմբերի 12	ԱԶԿ առաջարկած սահմանադրական փոփոխությունների հանրաքվե:
2011թ. հունիսի 12	ԱԶԿ-ն երրորդ անգամ հաղթում է խորհրդարանական ընտրություններում:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բուհական դասագիրք

Սրբագրիչ՝
ԽՈՆԱՐԻԿ ՔԱՐԱՈՒՂԼԵՆՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝
ՀԵՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Կազմի ձևավորումը՝
ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՅԱՆԻ

Չափը՝ 70x100, 1/16: Ծավալը՝ 24.75 տպ. մամուլ:

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ. 28 54 28
E-mail: vmv_print@yahoo.com
www.vmv-print.am